

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

---

NIKOLAY HOVHANNISYAN

HISTORY  
OF THE ARAB COUNTRIES

I

*FROM VII CENTURY TO 1516*



---

YEREVAN 2003

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

ՆԻԿՈԼԱՅ ՅՈՎՐԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱԼԻ ԵՐԿՐՄԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

I

ԱՐԱԲՆԵՐԸ VII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1516 թ.



---

ԵՐԵՎԱՆ 2003

Դրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 93/99  
ԳՄԴ 63.3(5 Արար)  
Ն 854

190664  
3500117434

Խմբագիր՝ Վահան Բայրուրյան  
պատժ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Դաշտարական աշխատանքների մասին հայտնագիրը  
Հ 854 ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ: Դատոր I. Արաբները VII դարից մինչև 1516 թ.- Եր.: Զանգակ-97, 2003.- 416 էջ + 16 կավճ.:

VII դարում պատմության թատերաբեմում հայտնվեց Արարական իսլամիչայրյունը, որը մեծ դեր է խաղացել համաշխարհային պատմության մեջ:

Աշխատությունն առաջին փորձն է հայ ընթերցողին իր մայրենի լեզվով. Երեք հաստորով. մատուցելու մեր մերձավորարևելյան հարևանի՝ արար ժողովրդի պատմությունը մ.թ. VII դարից մինչև մեր օրերը:

Երահաստրոյակի սույն առաջին հատորն ընդգրկում է VII դարից մինչև 1516 թ. ընկած ժամանակականությամբ, մինչև արարական երկրների նվաճումն օսմանյան պետության կողմէ:

Այս մոտ ինհարյուրայայ ժամանակաշրջանը ներառնում է այնպիսի առանցքային հարցերի լուսաբանությունը. Խնչական Սուհամմադ մարզարեի հայտնությունը, համաշխարհային նոր կրոնի՝ խալաֆի առաջացումը, արարական խալիֆայության ծնավորումը. Օմայյան (661-750 թթ.) և Աբրասյան խալիֆայությունները (750-1258 թթ.), Ֆաթիմիյանները և Այյուբինները, մամլուքների հանդես գալը և այլն:

Պատշաճ ուշադրություն է դարձվել հայ-արարական պատմական հարաբերություններին. Խալիֆայության կազմում Արմինիա վարչական միավորի ծնավորնանը և հարակից այլ հարցերի:

Զգալի տեղ է գրավում նաև խալիֆայությունում. նշակութային կյանքի լուսաբանությունը:

Նախատեսված է արարագետների, արևելագետների, պատմաբանների, միջազգայնագետների և բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսների և ուսանողների համար:

Ն 0503000000  
0003(01)-2003 2003 թ.

ԳՄԴ 63.3(5 Արար)

ISBN 99930-2-725-1

© Ն. Դ. Դովիթաննեսյան, 2003 թ.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Արաբները աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկն են, որոնք ունեն հարուստ, հետաքրքիր և ուսանելի պատմություն: Նրանք հնագույն ժամանակներից ի վեր խաղացել և այսօր էլ շարունակում են խաղալ կարևոր դեր համաշխարհային պատմության մեջ:

Դեռևս վաղ միջնադարում արաբները ստեղծեցին իրենց պետությունը՝ Արաբական Խալիֆայությունը, որի տիրապետության ներքո հայտնվեցին Ասիայի և Աֆրիկայի բազում երկրներ և ժողովուրդներ: Դա մի հզոր և ընդարձակ կայսրություն էր, որը տարածվում էր Հնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոս և Վնուական դեր խաղում ժամանակի միջազգային հարաբերություններում:

Մեծ է արաբների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության բնագավառում: Նրանք եղան համաշխարհային ամենատարածված կրոններից մեկի՝ խլամի հիմնադիրը և մի նոր՝ արաբական այրութենի ստեղծողները, որը գործածվում է Ասիայի և Աֆրիկայի բազմաթիվ իսլամադավան ժողովուրդների կողմից: Նրանք մեծ զարկ տվեցին պատմագիտության, աշխարհագրության, փիլիսոփայության, քիմիայի, մաթեմատիկայի, աստղագիտության և այլ գիտությունների զարգացմանը: Արաբներն իրավամբ համարվում են նի հիմնատիպ քաղաքակրթության հիմնադիրը, որը հայտնի է արաբա-խլամական քաղաքակրթություն անվանումով:

Այս բոլորը խոր հետք է թողել մարկության պատմության մեջ:

Սեկանդ հեշտ ու խաղաղ չի եղել արաբների զարգացման պատմական ուղին: Դադանակների և նվաճումների քաղցրության հետ միասին նրանք ճաշակել են նաև պարտությունների և կորուստների դաշնությունը:

Արաբների համար ճակատագրական եղավ օսմանյան լծի տակ հայտնվելը: Մոտ չորսդարյա օսմանյան դաժան տիրապետությունը (1516–1918 թթ.) կասեցրեց արաբների քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային զարգացումը: Դա թերևս արաբների պատմության ամենամոռայլ ժամանակահատվածն էր:

1918 թվականից, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, արարները թևակոփեցին իրենց գարգացման նորագույն շրջանը, որն առանձնահատուկ տեղ է գրավում նրանց հազարամյա պատմության մեջ: Դա ճակատագրական նշանակություն ունեցող և իրադարձություններով հարուստ, հաղբանակների և պարտությունների, հույսերի և հիասքափությունների, բայց և վերջնթաց գարգացման դարաշրջան է:

Արաբական ժողովուրդներն իրենց գարգացման պատմական այս փուլում հասան իրենց դարավոր երազանքի իրականացմանը: Նրանք թոթափեցին օսմանյան 400-ամյա դաման լուծը, որը նրանց քաղաքական հետամնացության և տնտեսական թշվառության գլխավոր պատճառներից մեկն էր: Արաբական լուսավոր քաղաքական միտքն օսմանյան տիրապետությունից ազատագրվելու մեջ էր տեսնում արաբական զարթոնքի և վերածննդի նախադրյալները և հնարավորությունը: Ուստի և Օսմանյան կայսրության փլուզումն արաբները, նրանց տարրեր սոցիալական խավերը և բոլոր հասարակական-քաղաքական ուժերը դիմավորեցին խանդավառությամբ: Նրանք հավատացած էին, որ հասել է իրենց պատմության աստեղային ժամը՝ դառնալու իրենց սեփական ճակատագիրն ազատորեն տնօրինողներ և իրենց գարգացման ուղին ըստ իրենց պատմական ավանդույթների, պատկերացումների և աշխարհմբոնման ընտրողներ:

Սակայն դեռ հեռու էր այդ պահը: Արաբական երկրները դեռևս ուշի չեին եկել օսմանյան տիրապետության տապալումից և դեռևս ինչպես հարկն է չեին ընթոշինել երևակայական ազատության քաղցր պատուղները, երբ նրանք ընկան մեկ այլ օտար տիրապետության տակ, այս անգամ Անգլիայի և Ֆրանսիայի, որոնք 1920 թ. ստացան արաբական մի շարք երկրներ կառավարելու Ազգերի լիգայի մանդատը:

ճիշտ է, սխալ կլիներ հավասարության նշան դնել օսմանյան բարբարոսական լծի, որի վերջնական նպատակը կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների՝ արաբների, հույների, հայերի, քրդերի, ասորիների, սլավոնների բռնի թքացումն էր, և անգլիական և ֆրանսիական տիրապետության միջև: Սակայն փաստը մնում է փաստ, որ արաբներին չհաջողվեց այդ ժամանակ հասնել քաղաքական անկախության և ազգային ինքնուրույն պետության ստեղծման: Այդ կարևոր ազգային-քաղաքական իննդիրը նրանք կարողացան լուծել միայն երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած շրջանում, որը նրանց պատմության մեջ մտել է որպես ազգային-ազատագրական պայքարի դարաշրջան:

ջան: Այդ պայքարը հիմնականում ավարտվեց 1940–1970–ական թվականներին, երբ աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեց 18 անկախ արաբական պետություն:

Արաբները մշտական փայփայել են միասնական արաբական պետություն ստեղծելու, իսկ նրանց որոշ գաղափարախոսներ անգամ Արաբական խալիֆայության վերականգնման գաղափարը: Սակայն իրականությունն ավելի զորեղ գտնվեց, քան թե երազանքը: Մի շարք քաղաքական, տնտեսական, սոցիալական, ինչպես նաև արտաքին քաղաքական գործուների պատճառով, մեկ միասնական արաբական պետության փոխարեն ստեղծվեցին մոտ երկտասնյակ անկախ պետություններ:

Արաբների կողմից անկախության նվաճումը և ինքնիշխան ազգային պետությունների կազմավորումը կարևոր պատմական նշանակություն ունեցող երևույթ է, որն արմատապես փոխեց իրադրությունը և ուժերի փոխհարաբերությունն ամբողջ Մերձավոր Արևելքում: Արաբական երկրները միջազգային հարաբերությունների կրավորական ենթականներից վերածվեցին համաշխարհային պատմական գործընթացի ակտիվ մասնակիցների, որոնք այսօր նշանակալիուն ներգործուն են միջազգային հարաբերությունների և համաշխարհային քաղաքական մրնուրությունի ծևակորման վրա:

Անկախության ուղին ուժը դրած արաբական երկրների զարգացման ուղին հեշտ ու խաղաղ չի եղել: Դա նաքառումների, քաղաքական փորորիկների, բախումների, մեծ և փոքր պատերազմների, վրիպումների և սայթաքումների ուղի է եղել: Դա միաժամանակ եղել է հաղթանակների, ազգային անկախության անրապնդման, պետական շինարարության և սոցիալ-տնտեսական առաջընթացի ուղի:

Սակայն զարգացման հետ կապված դժվարությունները և բարդությունները բնորոշ են ոչ միայն արաբական երկրներին, այլև աշխարհի բոլոր երկրներին: Այդպիսին է կյանքը, այդպիսին են քաղաքական իրողությունները:

Ինչպես նշվեց, արաբական աշխարհը ծգվում է Հնդկական օվկիանոսից մինչև Աստվածաշնչական օվկիանոս, զբաղեցնելով հսկայական տարածքներ ասիական և աֆրիկյան մայրցանաքաներում:

Պայմանականորեն այն քաժանվում է Արաբական Արևելք՝ ալ-Մաշրիկ, և Արաբական Արևմուտք՝ ալ-Մաղրիբ:

Սովորաբար ալ-Մաղրիբի մեջ մտցնում են Յյուսիսային Աֆրիկայի թոլոր արաբական պետությունները՝ Սուուանը, Լիբիան, Թունիսը, Ալ-Ճիրը, Մարոկկոն և Մավրիտանիան:

Բացառություն է կազմում Եգիպտոսը, որը թեև գտնվում է Յյուսիսային Աֆրիկայում, սակայն ավանդաբար մասնագետներն այն համարում են Արաբական Արևելքի մի մասը, ենելով հավանաբար այն իրողությունից, որ Եգիպտոսը պատմականորեն, քաղաքական, տնտեսական և մշակութային առումով սերտորեն կապված է Եղել և այժմ էլ կապված է Արաբական Արևելքի հետ: Նա իր պատմաքաղաքական և հոգևորմշակութային ժառանգությամբ ավելի շատ մերձավորարևելյան, քան թե աֆրիկյան երևույթ: Մենք նույնպես, հետևելով այդ պահանջութին, նպատակահարմար ենք գտել Եգիպտոսը ներառնել ալ-Մաշրիկի մեջ:

Արաբների պատմության ուսումնասիրություն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հայերի համար: Արաբական երկրները Դայաստանի մերձավոր հարևաններն են և նրանք պատկանում են միևնույն՝ մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանին: Դայ ժողովովի պատմությունը սերտորեն կապված է Արաբական Արևելքի պատմության հետ թե՝ Արաբական խալիֆայության շրջանում, թե՛ օսմանյան տիրապետության ժամանակ, երբ արաբները և հայերը գտնվում էին միևնույն սուլթանական դաժան լծի ներքո և դարձել էին բախտակից ժողովուրդներ, և թե՛ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ի մասնավորին հայոց ցեղասպանության ընթացքում, երբ արաբները, որոնց գլխին նույնպես կախված եր ցեղասպանության իրական վտանգը, օգնության ծեռք մեկնեցին հայ տարագիրներին:

Արաբական Արևելքի երկրներում, առաջին հերթին Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Եգիպտոսում, Պորտանամում և այլն, հնուց ի վեր գոյություն են ունեցել հայ համայնքներ, որոնք որոշակի ներդրում ունեն հյուրընկալ արաբական երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային կանոնում: Նրանք ըստ երթյան կամքջի դեր են կատարում արաբական երկրների և Դայաստանի միջև:

Իսկ Դայաստանի անկախության նվաճումից հետո հայ-արաբական հարաբերությունները բարձրացվեցին միջպետական հարաբերությունների մակարդակի: Արաբական աշխարհը, մասնավորապես Արաբական Արևելքը, ստրատեգիական, ինչպես նաև տնտեսական կարսոր նշանակություն ունեն Դայաստանի համար, և հարաբերությունների

սերտացումը նրանց միջև կամրապնդի Դայաստանի միջազգային դիրքերը և կնպաստի նրա տնտեսական զարգացմանը:

Սակայն այս բոլորի համար անհրաժեշտ է լավ իմանալ մեր հարևան և բարեկան արար ժողովրդի ծշմարտացի պատմությունը:

Սույն աշխատության կարևոր խնդիրներից մեկն է հենց դա է:

Դեղինակը ծեռնամուլս լինելով արաբական երկրների պատմության ուսումնասիրությանը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, նպատակ է դրել լուսարանել այդ շրջանի հանգուցային հարցերը և զարգացման օրինաչափությունները՝ ըստ պատմական փուլերի:

Աշխատությունը կազմված է երեք հատորից:

Առաջին հատորն ընդգրկում է արաբների պատմությունը VII դարից, համաշխարհային թատերաբեմում նոր կրոնի՝ իսլամի և Արաբական խալիֆայության հայտնվելուց, մինչև 1516 թ., երբ սկսվեց արաբական երկրների նվաճումը օսմանյան թուրքերի կողմից:

Երկրորդ հատորը նվիրված է արաբական երկրների պատմության քննարկմանը օսմանյան տիրապետության տարիներին, որն ընդգրկում է չորսհարյուրամյա մի վիթխարի ժամանակաշրջան, 1516–1918 թվականները:

ԵՎ, վերջապես, երրորդ հատորն ընդգրկում է նորագույն շրջանը, 1918–2000 թթ., երբ արաբներին հաջողվեց նվաճել իրենց քաղաքական անակախությունը և ծնավորվեցին 18 սուվերեն պետություններ՝ Ալժիրը, Արաբական Միացյալ Եմիրությունները, Բահրեյնը, Եգիպտոսը, Եմենը, Թունիսը, Իրաքը, Լիբանանը, Լիբիան, Կատարը, Ջորջանանը, Սաուդյան Արաբիան, Սիրիան, Սուլյանը, Քուվեյթը, Օնանը, Սարոկը, Մավրիտանիան:

Սույն աշխատությունն առաջին փորձն է հայ իրականության մեջ ամփոփ կերպով ներկայացնելու արաբական երկրների պատմությունը հնագույն շրջանից մինչև մեր օրերը, թեև պետք է նշել, որ դա կատարվում է մեծ ուշացումով, քանի որ վաղուց եր զգացվում նման աշխատության կարիքը:

Դեղինակը ոչ մի հավակնություն չունի աշխատությունը համարել ամբողջական և անթերի: Թե՛ որքանով է դա հաջողվել նրան, որը քառասուն տարուց ավելի մասնագիտորեն ուսումնասիրում է արաբների պատմությունը, արաբական երկրների ներքին և արտաքին քաղաքականության հարցերը, թողնում ենք անաչառ ընթեցողի անկողմնակալ դատին:

## Գլուխի առաջին

# ԱՐԱԲՆԵՐԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ VII ԴԱՐԸ

## I. ԱՐԱԲՆԵՐԻ ԲՆՈՐՐԱՆԸ

### 1. Արաբական թերակղզին և նրա բնակչիմայական պայմանները

Արաբների բնօրրանը Արաբական թերակղզին է, որի տարածքը կազմում է 3 մլն. քառ. կմ.: Արևելքից նրա ափերը ողողում են Պարսից ծոցի, արևմուտքից՝ Կարմիր ծովի, իսկ հարավից՝ Արաբական ծովի ջրերը: Նրա բնությունը դաժան է և մարդու կյանքի և գործունեության համար ոչ այնքան բարենպաստ:

Թերակղզու կեսից ավելին կազմում են անապատները և կիսաանապատները: Դրանց մեջ իր մեծությամբ և անկենդան բնությամբ ամենահայտնին Ռուբ ալ-Խալի («Դատարկ քառորդ») անապատն է, որը գրավում է թերակղզու հարավ-արևելյան հատվածը: Մյուս անապատներից պետք է նշել Սիրիական անապատի մի մասը հյուսիսում, ան-Խաֆուդը, սպիտակագույն և կարմրավուն ավազաթմբերի մի խկական թագավորություն, Դահնան, որն անվանում են նաև Կարմիր երկիր նրա կարմրավուն ավազների պատճառով, որը ծգվում է հյուսիսում ան-Խաֆուդից մինչև Ռուբ ալ-Խալի՝ հարավում, և այլն:

Թերակղզու կենտրոնական մասը գրավում է ան-Խաջող սարահարթը, մի ջրազուրկ և կանաչազուրկ տարածք: Ընդհանրապես Արաբիայի տարածքի 1/6-ն անմարդաբնակ է:

Արարական թերակղզին այն եզակի տարածքներից է, որտեղ չկան մշտական գետեր: Կան միայն այսպես կոչված վարդիներ, չորացած գետահուներ, որոնցով հոսում են անձրևաջրեր հազվագյուտ անձրևներից հետո: Կարելի է ասել, որ թերակղզին ծածկված է վարդիների, չորացած կամ ցամաքած գետերի, գետակների և առվակների ցանցով, որոնցով հոսող սակավ անձրևաջրերը շատ կարճ ժամանակով «կյանք են պարզեւում» քոչվոր բեղվիններին և անցնող քարավաններին: Ընդհանրապես տեղումները շատ քիչ են, իսկ որոշ շրջաններում նրանք հանարյա չեն լինում: Ուրեմն ալ-Խալի անապատում տարեկան տեղումները կազմում են ընդամենը 10 մմ: Ուստի և ավագախազը քամիները՝ սանումները, խանսինները և այլն, անապատային կյանքի տիրակալներն են, որոնք մեծ վտանգ են ներկայացնում անապատներում պատահականորեն կամ անզգուշաբար հայտնված մարդկանց, ինչպես նաև քարավանների համար:

Թերակղզու բնապատկերը փոխվում է արևմտյան և հարավային մասերում, որոնք ավելի նպաստավոր են մարդկանց ֆիզիկական գոյության և տնտեսական զործումներության համար:

Արևմտյան մասում, Կարմիր ծովի ափերին, ծգվում են թիհամի հարավայրային և Յիջազի քարծրավանդակային շրջանները, որոնց շարունակությունն է կազմում ալ-Ասիրի լեռնային շրջանը: Ինչպես հնում, այնպես էլ մեր օրերում, այդ շրջաններում են գտնվում Արարական թերակղզու ամենաբարերեր հողերը և նրանք Արարիայի ամենակենսունակ տարածքներն են:

## 2. Բուսական աշխարհը

Արարիայի հարավային մասը զբաղեցնում է Եմենը՝ Յաղրամաութով: Այստեղ, շնորհիվ մուսոնային համեմատաբար հորդառատ անձրևների, գոյություն ունեն արևադարձային խոնավ գոտիներ փարթամ բուսականությամբ:

Դնում և վաղ միջնադարում Եմենի շատ լեռնազոտիներ պատված են եղել անգամ անտառներով, որոնք հետագայում վերացել են: Մերկացած սարալանջերում ենթացիները զարկ են տվել տերասային համակարգին, որն անձրևաջրերը ավելի երկար ժամանակով պահելու և հավասարապես բաշխելու շատ հարմար միջոց է և մեծապես նպաստել գյուղատնտեսության զարգացմանը:

Այս բոլորին պետք է ավելացնել նաև օազիսների գոյությունը: Օազիսները ցրված են ամրող Արարիայի տարածքով, թերակղու բոլոր մասերում: Նրանք գոյություն ունեն հիմնականում շնորհիվ ստորգետնյա ջրերի, որոնք համալրվում են անձրևաջրերով: Օազիսները սովորաբար յուրատեսակ կանաչ գոտիներ են, հարուստ բուսականությամբ, որտեղ տիրապետող է արնավենին, որին արաբներն անվանում են «Բույսերի թագուհի»:

Արարիայի կլիման չորային, արևադարձային է. ամառը սաստիկ շոգ է, իսկ ձմեռը չափավոր, մեղմ գլուխ է, թեև սարերում երթեմն նաև ձյուն է գալիս:

Արարիայի բուսական աշխարհը աղքատ է, սարերը և լեռները լերկ են, նրանք վաղուց կողցրել են իրենց անտառային ծածկություն, ցածրադիր վայրերում և սարահարթերում աճում են անապատներին բնորոշ փշատերև զանած բուսատեսակներ: Բացառություն են կազմում օազիսները, որտեղ աճում են արնավենիներ, իսկ բուսականությունն ավելի բազմատեսակ և փարթամ է:

Արնավենիներով հատկապես հարուստ է Յիթազը: Նրանց պտուղը՝ արնավը կամ արաբերեմ թամրը, դարեր շարունակ կաթի հետ միասին կազմել է թեղվին արարի հիմնական սնունդը: Նրա համար մշտական երազանք է եղել մշտապես ունենալ ջուր և արնավ: Մուտական մարգարեին են վերագրվում «Յարգիր քո հորաքրոջը՝ արնավենուն, որը ստեղծված է այն նույն կավից, ինչ որ Աղամազ» արտահայտությունը: Բույսերի թագուհու նման աստվածացումը հասկանալի կղամնա, եթե հաշվի առնենք թեղվինի կյանքի ծանր պայմանները և արնավենու կենսատու որակները:

Եմենում և օազիսներում մշակում են ցորեն, ինչպես նաև գարի, որն օգտագործվում է որպես անասնակեր ծինորդութամար: Առանձին վայրերում մշակում են նաև ըրինձ:

Զգալի են նաև սուլորի պլանտացիաները: Սուլորն արարական աշխարի, առաջին հերթին Յարավային Արարիա, մուտք է գործել **XIV** դարում Յարեշստանից և անմիջապես լայն տարածում գտնել արաբների մոտ, իսկ այնուհետև Արարիայի սահմաններից դուրս, թեև նրա մասին հիշատակումներ կան **VII** դարի արարական աղբյուրներում:

Սուլորը շատ հաճախ նաև անվանում են «Խոլամի գինի»:

ՀԻՆ ԱՐԱՐԻԱՆ

ՎԻ քառ



Ցածրադիր վայրերում, օազիսային գոտիներում և համեմատաբար անձրևառատ հարրավայրերում մշակում են ծիրապոլի, խաղողի, խնձորի, ծիրանի, նարնջի և այլ պտղատուայգիներ:

### 3. Կենդանական աշխարհը: Ուղտը

Աղքատ է նաև Արաբիայի կենդանական աշխարհը, թեև հնում, երբ բուսական աշխարհն ավելի հարուստ էր, բազմազան է եղել նաև ֆաունան: Նրա ամբաժան մասն են կրազմում ուղտը, քարայծը, աղվեսը, ջայլամը, բորենին, զայթ. Վայրի այծը, հովազը ն այլն: Եմենում հանդիպում են կապիկներ: Դատելով արաբական հինավուրց հեքիաթներից, հնում Արաբիայում տարածված է եղել նաև առյուծը, որը հետագայում, բնակչիմայական պայմանների և բուսական աշխարհի փոփոխությունների հետևանքով, անվերադարձ անհետացել է:

Ընտանի կենդանիներից պետք է նշել ուղտը, ծին, կատուն, ցյօք, ոչխարը և այլն: Բեղվինի կյանքում զգալի տեղ է գրավում ջորին, որը, ինչպես ենթադրում են, եզիպտոսից ներսութել է Մուհամմադը, որը նախընտրում էր նրան ծիուց: Այդուհանդերձ, ծին արաբներն են առաջինը VIII դ. տարածել Եվրոպայում՝ նրանց կողմից նվաճած Խապանիայից:

Արարի համար բացառիկ նշանակություն ունի ուղտը, որին նա սիրով անվանում է ջամալ: Նա համարվում է «անապատի նավ»: Դեռ ավելին, Կորանում գրված է, որ ուղտը Աստծո հատուկ պարզեն է:

Առանց ուղտի դժվար է պատկերացնել կյանքն անապատում: Նա բեղվին արարի «մյուս եսն ե»: Նա վաշկատուն արաբին կերակրողն է, նրա հիմնական և ամենահուսալի փոխադրամիջոցը: Նա հարսի օժիտն է, արյան վրեժի գինը, ցեղապետի հարստության չափանիշը և այլն, և այլն: Բեղվինն օգտագործում է ուղտի կաթը ջրի փոխարեն, որը նա մշտակես խնայում է, նրա մորթին՝ ավագից և ցրտից պատսպարվելու և տնային պետքերի համար է, իսկ մազերից թաղիք և վրաններ է պատրաստում:

Զինվորական մասնագետ-տեսաբաններն արաբների ռազմական հարցողությունների և նվաճումների գաղտնիքներից մեկը համարում են նրանց կողմից ուղտերի զանգավածային օգտագործումը, որն արաբական զորքերին արտակարգ շարժունակություն էր հաղորդում և դրանով գերազանցություն ապահովում հակառակորդի նկատմամբ:

Ուղտն անապատային դաժան պայմաններում, առանց ջրի և կերի կարող է դիմանալ 4–5 օր, օրեկան քայլելով 120–130կմ:

Ուղտը, սակայն, ոչ միայն վաչկատուն թեղվինի անփոխարինելի օգնականն է, այլև ծառայում է նստակյաց արարին: Վերջինս նրան օգտագործում է գյուղատնտեսական աշխատանքների մեջ՝ վարի ու ցանքի. ջրհորներից ջուր քաշելու և կենցաղային այլ նպատակների համար:

Պատահական չէ, որ մինչև օրս արաբների մոտ տիրապետում է ուղտի պաշտամունքը, որը միանգամայն պատճառարանված է:

Արարիայում տարածված թռչուններից են արծիվը, բազեն, աղավնին, մեծ արոսը, լորը, բուն և այլն:

Այսպիսով, Արարիայում հնուց ի վեր մարդը մշտապես մաքառել է բնության հետ, դաժան բնակիմայական պայմաններում իր գոյությունը և տնտեսական գործունեությունն ապահովելու համար:

## II. ԱՐԱԲՆԵՐԸ

### 1. Ինքնանվանումը և կազմավորումը

Արարիան համարվում է սեմական ընտանիքին պատկանող ժողովուրդների օրրանը:

Նրանք դեռևս հնագույն ժամանակներում դրւես գալուվ Արարական թերակղզուց, տարածվում են Բարեբեր Սահիկի՝ Միջագետքի և նրա հարակից տարածքներում, և հիմք դնում առանձին ժողովուրդների՝ ասուրների, քարելացիների, փյունիկների, արամեացիների, հրեաների կազմավորմանը:

Նրանց թվում եր նաև մի էթնոս, որի ինքնավանումն է «ալ–արաբ»:

Արաբները, աշխարհի այդ հնագույն ժողովուրդներից մեկը, ծևավորվել է բուն Արաբական թերակղզում, հնչպես ենթադրվում է, հնագույն սեմական ազգակից ցեղերի հիմքի վրա, հավանաբար մ.թ.ա. երկրորդ հազարամյակում:

Ասուրները, արամեացիները, քարելացիները և փյունիկները հետագայում ընդմիջտ հեռացան պատճության բնմից և տարածաշրջանում մնացին միայն երկու սեմական ժողովուրդ՝ արաբները և հրեաները: Այսօր արաբներն աշխարհի սեմակամ ընտանիքին պատկանող ամենամեծաթիվ ժողովուրդն են:

Արդեն մ.թ.ա. առաջին հազարամյակում կազմավորվել են նրանց առաջին պետական միավորումները՝ Թաղմորը, որն ավելի հայտնի է Պալմիրա անունով, Նարաթեան՝ Պետրա մայրաքաղաքով, որը հօչակված էր իր վարդագույն ժայռափոր շենքերով և այլն: Դետագայում, մ.թ. Վ-ՎI դարերում, կազմավորվեցին արաբական նոր պետություններ, ինչպես Ջուսիսային Արարիայում Ղասսանիների և Լախմի պետությունները. և Քինդահների պետությունը Կենտրոնական Արարիայում: Դրանք ըստ էության քոչվորական ցեղերի կամ ցեղային միությունների պետական կազմավորումներ էին:

Արաբական այս պետությունները ոչ միայն միավորված չեն, այլև շատ հաճախ պայքարում էին մինչյանց դեմ: Դրա հետևանքով նրանց թուլացան, ապա և քայքայվեցին. որը հանգեցրեց VI դարում Դիջազի դերի բարձրացմանը: Նրան իր երեք քաղաքներով՝ Մեքքա, Յասրիթ, որը հետագայում կոչվեց Մաղինա, և Թահիթ, Վիճակված էր պատմական կարևոր դեր խաղալ արաբների պատմական ճակատագրում:

Արաբական թերակղզու բնակչության արաբականացումը զնում էր արագ տեմպերով և արդեն V-VI դարերում արաբները կազմում էին թերակղզու բնակչության մեծամասնությունը: Արաբականացումն ավարտվեց խլամի ծնավորումից և արաբական միասնական պետության՝ խալիֆայության ստեղծումից հետո:

Սակայն պետք է նշել, որ այդ ժամանակ դեռ վաղ էր խոսել արաբների որպես միակուր ժողովրդի մասին: Նրանց մոտ շատ ուժեղ էին ցեղերը և ցեղային միությունները, որոնք շատ նախանձախնդիր էին իրենց «ցեղային ինքնությունը» պահպանելու հարցում: Նման միտումներ էին դրսնորում նաև ոչ բնիկ արաբական սեմական ցեղերը, որոնք թեև ուժացման էին ենթարկվել, սակայն նրանց մոտ դեռ ուժեղ էին անցյալի հիշողությունները:

Արաբական թերակղզու արաբականացումը և արաբների որպես ժողովրդի կազմավորումը, որը երկար պատմական պրոցես է, ավարտվեց հետագա դարերում, հատկապես խլամի ընդունումից և Արաբական խալիֆայության ծնավորումից հետո:

## 2. Արաբերեն լեզուն և արաբական գիրը

Արաբները երկար ժամանանակ չեն ունեցել իրենց սեփական գիրը: Արաբերենը պատկանում է աֆրոասիական լեզվաընտանիքի սեմա-

կան ծյուղին: Այդ նույն ընտանիքին են պատկանում մի շարք սեմական մեռած լեզուներ, ինչպես աքրաղերենը, ասուլերենը, արամերենը և այլն: Իսկ կենդանի խոսակցական լեզուներից այսօր ամենատարածվածը արաբերենն է, ապա եբրայերենը:

Արաբները մինչև իրենց սեփական գրի ստեղծումը երկար ժամանակ օգտվում էին սեմակամ այլ ժողովուրդների գրերից, մասնավորապես արամերենից: Դենց նրա հիմքի վրա V դարում առաջացավ արաբական այրութենք և գիրը:

Մինչև արաբական գրի ստեղծումը արաբների մոտ զարգացած էր բանավոր ստեղծագործությունը՝ բանաստեղծություն, ասք, հերիաթ, հերոսապատում և այլն, որն ավանդաբար բանավոր կերպով փոխանցվում էր սերնդից սերունդ: Յուրաքանչյուր շատ թե քիչ նշանակալի ցեղ կամ ցեղային միություն ուներ իր սեփական էպոսը, որը փառաբանում էր տվյալ ցեղին, նրա կատարած հերոսությունները և քաջագործությունները, նրան վերագրում անգամ զերբնական հատկանիշներ, պարսպում և ստորացնում հակառակորդ և թշնամի ցեղերին: Դրանով փորձ էր արվում բարձրացնել տվյալ ցեղի կարևորությունը և դերը հաշու արաբական մյուս ցեղերի:

Այդ գործում կարևոր դեր էին խաղում բանաստեղծները՝ շահրեները, որոնք շատ հաճախ ունեին հասարակական, անգամ դիվանագիտական դերակատարում, մանավանդ միջցեղային հակամարտությունների կամ բախումների ժամանակ, երբ հարգանք վայելող շահրեները հանդես էին գալիս որպես հաշտարարներ:

Դետագայում, VIII դ., այդ պատումները գրի են առնվել, պահպանվել և մեզ են հասել գրավոր ծևով և ստացել «Այյամ ալ-արաբ» («Արաբների օրեր») անվանումը: Դրանք ոչ միայն նշակութային արժեք են ներկայացնում, այլև նշանակալի հետաքրքրություն ներկայացնող պատմական աղյուր են, որոնց օգնությամբ հնարավոր է որոշակի գաղափար կազմել արաբների նախահսլամական շրջանի պատմական և քաղաքական գանագան իրադարձությունների մասին:

Արաբական գրի ստեղծումը պատմաքաղաքական կարևոր դեր է խաղացել արաբների ճակատագրում, մանավանդ եթե նկատի ունենանք, որ դա տեղի ունեցավ արաբների միջազգային ասպարեզ դուրս գալու, նոր կրոնի՝ իսլամի, և արաբական միասնական պետության ստեղծման նախօրեին:

Մյուս կողմից, արարական ինքնուրույն գրի շնորհիվ ծևավորվեց մի նոր, մինչ այդ անհայտ արարա-իսլամական մշակույթի անբաժանելի մասը:

Արարական նվաճումների և իսլամի տարածման շնորհիվ արարական գիրը լայն տարածում գտավ աշխարհում և դարձավ գործածական գիր մուսուլմանական բոլոր ժողովուրդների համար:

Արաբերենը միջին դարերում, ընդհուած մինչև նորագույն շրջանի սկիզբները, կատարում էր միջազգային լեզվի գործառույթ մուսուլմանական երկրների և ժողովուրդների համար, ինչպես լատիներենը միջնադարյան Արևմտյան Եվրոպայում:

Արաբերեն գիրն ունի իր յուրահատկությունները: Ի տարբերություն հնդերոպական լեզուների, նա գրվում է ոչ թե ձախից աջ, այլ, ընդհակառակը, աջից ձախ: Արաբերեն լեզվում գրվում են միայն երկար ծայնավորները, իսկ կարճ ծայնավորները բաց են թողնվում: Ուստի տվյալ բառը ծիշտ հասկանալու և ճիշտ արտասանելու համար պահանջվում են անհրաժեշտ գիտելիքներ. նախնական վարժանք, որոշակի փորձ և ուսումնառություն: Այս հանգամանքը որոշակի դժվարություններ է ստեղծում արաբերենին տիրապետելու ճանապարհին, հատկապես օտար, ոչ արաբ ընթերցողի համար:

Արարական այրութենք պարունակում է 28 տառ, 25 բաղաձայն և 3 ձայնավոր՝ ա, ի, ու:

Արարականի անվան տակ են հայտնի նաև թվական այն համակարգը և թվանշանները, որոնք այսօր գործածական են ամբողջ աշխարհում և որոնց օգնությամբ են կատարվում բոլոր հաշվարկները՝ 0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9: Իրականում դրանք ոչ թե արարական, այլ հնդկական ծագում ունեն: Դրանք ստեղծվել և շրջանառության մեջ են դրվել հնդիկների կողմից դեռևս V դ., սակայն Եվրոպացիներին հայտնի են դարունում միայն X–XIII դդ., շնորհիվ արաբ ճանապարհորդների և արարական տարարնույթ պատմագիտական և աշխարհագրական աղբյուրների, որոնց հետ ծանոթանալով, բարգամանում են Եվրոպական հետազոտողները և այդ թվանշանները կոչում արարական:

Պատմական այս դարաշրջանը, որը հարատևեց մինչև VII դ., մինչև արաբների կողմից հեթանոսությունից հրաժարվելը և իսլամի ընդունումը, արաբներն անվաճում են «ջահիլիայի»՝ անգիտության կամ տգիտության դարաշրջան:

### III. ԱՐԱԲՆԵՐԻ ՄԻՆՉԻՍԼԱՄԱԿԱՆ ՍՊԾԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԱԶԵՎԸ

#### 1. Տոհմ, ցեղ և ցեղային միություն

Արաբների մոտ տիրապետող էին արխայիկ, նահապետական, տոհմատիրական հարաբերությունները:

Արաբ բեղվինները բնակվում էին վրաններում և յուրաքանչյուր վրան հաճարվում էր մի ընտանիք: Մի քանի ընտանիքների միավորումից առաջանում էր տոհմը, իսկ արյունակից տոհմներից՝ ցեղը կամ կաբիլան: Բեղվինների սոցիալ-հասարակական կառուցվածքի հիմքը, ներ առումով, տոհմն էր, իսկ ավելի լայն առումով ցեղը և ցեղային միությունները:

Նրանց մոտ գոյություն ուներ անհատական և ընդհանուր-համայնքային սեփականություն: Վրանը և այն ամենը, ինչ որ կար նրանում հագուստ, անկողին, տնային օգտագործման իրեր և այլն, համարվում էր անհատական սեփականություն: Սակայն արտադրության հիմնական միջոցները, որոնցից կախված էր անապատաբնակ արարի գոյությունը՝ մշակելի հողատարածությունները, արոտավայրերը, ջուրը և այլն, համայնական սեփականություն էին:

Հաստ հստակ էին սահմանված հարաբերությունները տոհմի և ցեղի ներսում: Առօրյա խնդիրները, զանազան բնույթի վեճերը, հողային և գույքային հարցերը, ամուսնությունը և ամուսնալուծությունը, արյան վրեժի խնդիրը և այլն, կարգավորում էին սովորութական իրավունքի՝ ադարի հիմնան վրա:

Եթե, օրինակ, տոհմի անդամներից մեկը սպանություն էր կատարել տոհմի ներսում, ապա նրան ոչ ոք, անզամ հայրը, եղբայրը և այլն, չեր կարող պաշտպանել: Մարդասպանը չեր կարող փախչել, որովհետև նա կիայտարարվեր օրենքից դուրս. իսկ դա նահկանը հավասար դատավճիռ էր: Տոհմի անդամն պարտավոր էր ամբողջ կյանքում ամեն ինչ անել կազմ իր տոհմի հետ պահպանելու համար, որը նրան պաշտպանություն և գոյություն էր ապահովում, հակառակ պարագայում նա դառնում էր օտար և անօգնական:

Իսկ եթե մարդասպանությունը կատարվել էր տվյալ տոհմից դուրս, այսինքն սպանվել էր մեկ այլ տոհմի անդամ, ապա հրապարակ

Եր իշնում վենդետան՝ արյան վրեժի իրավունքը, ելնելով «արյունն արյուն է ուզում» սկզբունքից: Դա նշանակում էր, որ սպանվածի տոհմակիցներն իրավունք ունեին սպանել սպանողի տոհմի անդամներից յուրաքանչյուրին: Ընդ որում արյան վրեժի իրավունքը գործում էր տասնյակ տարիներ, մինչև որ վրեժն իրագործվեր:

Տոհմի արյունակցական–ազգակցական կապերի առաջին աստիճանը տվյալ ցեղապետի որդիները (բանու) լինելու հանգամանքն էր, ինչպես, օրինակ, «բանու Հասան» կամ «բանու Ասաղ» և այլն, որը նշանակում է «Հասանի որդիներ», «Ասաղի որդիներ»:

Տվյալ արյունակցական–ազգակցական խմբին պատկանող կաբիլաները կարող էին միավորվել և կազմել ավելի մեծ ցեղախումբ՝ աշխար և այլն:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ տոհմի և կաբիլայի կազմը կայուն չէր: Նրա մաս կարող էին կազմել այսպես կոչված «օտարները», որոնք արյունակցական կապերով կապված չէին տվյալ կաբիլային, սակայն ընդունում էին նրա գերակայությունը և հարմարվում նրա ադաբ-ներին և պահանջներին: Սովորաբար այդ քայլին էին դիմում թույլ տոհմերը, որոնք միավորվելով որևէ ուժեղ տոհմի և ընդունելով նրա գերակայությունը, դրանով ապահովում էին իրենց առավել անվտանգ գոյությունը:

Տոհմի անդամ կարող էին դառնալ նաև ազատություն ծեռք բերած ստրուկները, որոնք չին ցանկանում լրել տվյալ տոհմը և նրան անդամակցում էին ենթականավորյալի կարգավիճակով:

Կաբիլայի և զանազան ցեղային միությունների գլուխ կանգնած էին սեյյիդները, շեյխները և զահիմները (առաջնորդները): Այստեղ իսպառ բացակայում էր ընտրական որևէ սկզբունք, և չենք խոսում ընտրական հանձնարարի մասին: Ուստի ցեղախմբի սեյյիդ կամ զահին դառնում էին ոչ թե ընտրությամբ, այլ ըստ տվյալ անձի արժանիքների, գործունեության և հարստության: Դետագայում ցեղապետի պաշտոնը, մանավանդ շեյյիդ, շատ հաճախ դառնում է ժառանգական:

## 2. Վաչկատուն–քոչվորներ

Արարաները հնուց ի վեր բաժանված էին քոչվորների և նստակյացների:

Վաչկատուն քոչվորների՝ բեղավիճների տնօրինության տակ էր գտնվում Արարական տարածքների մեծ մասը, թեև նրանք չին կազմում

բնակչության մեծամասնությունը: Բեղվինները հնուց ի վեր, նախախուլամական շրջանից, բաժանված էին հյուսիսարարական՝ կայսիական, և հարավարաբական՝ կալբիական կամ յանանական ցեղախմբերի: Նրանք գտնվում էին մշտական մրցակցության և պայքարի մեջ, որը շատ հաճախ կործանարար էր լինում Դյուսիսային և Դարավային Արաբիայի համար:

Բեղվինների հիմնական գրադարձնությունը քոչվորական անասնապահությունն էր: Նրանք պահում էին զիսավորապես ոչխար, այժ և ուղտ, որը նրանց ապրուստի միակ միջոցն էր: Անասունների զիսաքանակը բեղվինի և ցեղապետի հարուստ լինելու գլխավոր չափանիշն էր:

Սակայն հարկ է նշել, որ քոչվոր բեղվինների և նստակյաց արաբների միջև բաժանարար գիծն այնքան էլ հստակ չէ: Իրականում առկա էին կիսաքոչվորներ և կարծեցյալ նստակյացներ կամ քաղաքարնակներ:

Երբ խոսք է գնում բեղվինների նասին, նրանց չափությունը շփոթել բափառող գնչունների հետ: Բեղվինական քոչվորությունն ապրելածն է, թելաղրված անապատային կյանքով, այդ կյանքին հարմարվելու և գոյատևելու պահանջով:

Բեղվինի հասկացողությամբ ոչխար և այժ պահելն ու բազմացնելը, որսորդությունը և ասպատակությունը տղամարդուն վայել միակ զրադանունքն է: Նա վերևից է նայում բոլոր նրանց վրա, ովքեր գրադպուտ են հողագործությամբ, առևտորվ և արհեստներով, այդ բոլոր համարելով իր արժանապատվությունից ցածր գործ:

Իր միջավայրից դուրս բեղվինը դադարում է բեղվին լինելուց: Այդ պատճառով ընդունված է ասել, որ բեղվինը, ուղտը, արմավենին և ավազը կազմում են մի ամրողություն, գոյության մի բացառիկ տեսակ:

Բեղվինի հագուստը նույնպես շատ պարզ է: Նա կրում է երկար շապիկ՝ գոտիով, գլուխը կապում է շալով՝ քուֆիյա, տարատ չի հագում, իսկ կոշիկ՝ հազվադեպ:

### 3. Նստակյացներ

Նստակյացները կազմում էին Արաբիայի բնակչության մյուս կարևոր հատվածը: Նրանք բնակվում էին գլխավորապես ոչ անապատային գոտիններում, հատկապես Արաբիայի հարավային մասերում՝ Եմենում, Հադրամատուրում, ինչպես նաև Կենտրոնական և Դյուսիսային Ա-

րարիայի համեմատաբար բարեբեր և օազիսային շրջաններում: Նրանք գրադպատման էին հողագործությամբ, ինչպես նաև անասնապահությամբ:

Բնակչության զգալի մասը գրադպատման էր արհեստներով, բավարարելով բեղվինների և նստակյացների հիմնականում կենցաղային պահանջները:

Նստակյաց վայրերում գյուղերի կողքին առաջանում էին նաև քաղաքներ և քաղաքատիպ բնակլավայրեր:

Նստակյացների, առաջին հերթին քաղաքների և խոշորատիպ գյուղերի բնակչության սոցիալական կառուցվածքի հիմքը կազմում էին շա՛րանները: Դրանք յուրատեսակ ինքնավար համայնքային մարմիններ էին: Սոցիալական-պետական կառուցվածքի այս ծնը հատկապես բնորոշ էր Եվենի, նրա տարածքում գոյություն ունեցած պետությունների համար:

Որոշ մասնագետների կարծիքով, շա՛րա-համայնքը ֆունկցիոնալ առումով նման էր անտիկ պոլիսներին կամ հինարևներան քաղաք-պետություններին: Դամենայն դեպք նրանք նման էին իրենց գործառությունը: Շա՛րանները, ինչպես պոլիսները և քաղաք-պետությունները, գրադպատման էին հասարակական շենքերի, ամրոցների, ուղղաման համակարգի կառուցումով, նրանց պահպանումով և այլն:

Սակայն հետագա դարերում, հատկապես VI դ.. շա՛րանների իրավունքները իսկան սահմանափակվում են և շատ վայրերում նրանց ինքնակառավարվող համայնք լինելը դառնում է ծևական: Դա բացասական հետևանքներ ունեցավ տնտեսական ոլորտի վրա՝ ողոգման համակարգերը շարժից դուրս եկան, դադարեցվեց հասարակական շենքերի կառուցումը և այլն:

Դա հարցի մի կողմն էր:

Դարձի մյուս կողմն էլ այն էր, որ բեղվինները և նրանց կարիլաները թշնամաբար էին վերաբերվում նստակյացներին, նրանց համայնքներին: Նրանք, ինչպես արդեն նշել ենք, վերևսից էին նայում նրանց վրա և նրանց գրադպատման համարում ցածր կարգի, հարզանքի ոչ արժան գործունեություն: Բեղվիններն իրենց նյութական և սննդամթերքի պահանջները բավարարում էին նստակյաց արարների հաշվին: Եվ դա նրանք իրականացնում էին երկու ճանապարհով՝ կամ հարկադրելով նրանց սրերըների փոխանակություն կատարել, կամ, որն ավելի շատ տարածված ծնն էր, քանությամբ, ասպատակության միջոցով: Ասպատակությունը շատ տարածված երևույթ էր: Բեղվիններն ասպատակում էին բոլորին:

Օճայյաների շրջանի (VII–VIIIդդ) արաք բանաստեղծ ալ–Քութամին իր մի բանաստեղծության մեջ ասում է. «Մեր գործն է ասպատակել մեր թշնամուն, մեր հարևանին և մեր սեփական եղբորը, այն դեպքուն, եթե մենք ուրիշ ոչ ոքի, քացի մեր եղբորից չենք գտնում ասպատակելու համար»:

Բեղմինների հարձակումներն իրենց նստակյաց ազգակիցների վրա, սովորական երևույթներ էին:

Այդպիսի պայմաններում նստակյաց արարները, ինչպես նաև թույլ քոչվոր ցեղերը, շատ հաճախ գնում էին իրենց սահմանակից ուժեղ բեղմական քոչվոր ցեղի հովանավորությունը և պաշտպանությունը, վճարելով նրան համապատասխան գին: Սա շատ տարածված երևույթ էր:

Բայց քանի դեռ շաբաններն ուժեղ էին, ունեին լայն լիազորություններ և ներկայացնում էին ինքնակառավարվող համայնք, բեղմինների հարձակումները հաջողությամբ հետ էին մնալու, հանդիպելով արժանի հակահարվածի: Շաբանների թուլացումից հետո Դարավային եմենն այլևս ի վիճակի չէր դիմակայել քոչվոր–բեղմիններին, որոնք վերջիվեջո իրենց քաղաքական տիրապեսությունը հաստատեցին Արարիայի այդ մասում:

#### 4. Առևտուրը

Նախախլամական Արարիայի տնտեսական կյանքում զգալի տեղ էր գրավում նաև առևտուրը, հատկապես քարավանային առևտուրը: Դնուց ի վեր քարավանային տարանցիկ առևտորի խոշոր կենտրոն էր Մեքքան, որն առևտրական ճանապարհներով արարական ծայրագույն հարավ Եմենը կապում էր արաբական հյուսիսային շրջանների՝ Պաղեստինի, Ասորիքի, Միջազգետքի և Եգիպտոսի հետ: Մեքքայում առևտրական գործունեության բնագավառում առանձնապես ազդեցիկ դիրքեր ուներ Կուրայշ ցեղը, որին շատ հաճախ անվանում էին «Վաճառականների ցեղ»: Այս ցեղի վերնախավի ծեռքում կենտրոնացվել էր հսկայական հարստություն, որը դարձել էր նրա քաղաքական հզորության աղբյուրը: Մեքքայի ազեցությանն ամբողջ Արարիայում նպաստում էր նաև այն հանգամանքը, որ հիջազյան այս քաղաքում էր գտնվում հերանուսական Արարիայի գլխավոր սրբավայր Կաարան:

Ազդեցիկ էին նաև Յասրիի Ալու և Խազրաջ ցեղերը, որոնք հաճախ մրցակցության մեջ էին մտնում Մեքքայի Կուրայշ ցեղի հետ, և Թախի քաղաքի Սակիֆ ցեղը, որի ծեռքում էր գտնվում քաղաքի կառավարումը: Սա-

կայն Սակիֆ ցեղը, ի տարբերություն Մեքքայի ախոյան Յասրիքի ցեղերի, նախընտրում էր համագործակցությունը Կուրայշ ցեղի հետ:

Տնտեսական, հատկապես առևտրի զարգացումը, առաջ թերեց դրամի գործածության պահանջ: Արաբիայում այդ դարերում շրջանառության մեջ էին գտնվում տեղական՝ Եմենում հատվող դրամը, ինչպես նաև բյուզանդական ոսկեդրամը և պարսկական արծաթյա դրամը:

Տնտեսական զարգացումն աստիճանաբար հանգեցրեց տոկիմատիրական կարգերի քայլայմանը, ցեղային հարաբերությունների թուլացմանը, մասնավոր սեփականատիրության հայտնվելուն և արաբական հասարակության, այդ թվում և կարիլայի ներսում, սոցիալական շերտավորմանը:

Սակայն տոկիմատիրական կարգերն արագորեն և խսպառ չվերացան: Նրանց մնացուկները պահպանվեցին նաև հետագա դարերում: Նույնը պետք է ասել նաև ցեղային հարաբերությունների մասին, որոնք պահպանվել և նինջն օրս էլ իրենց զգացնել են տալիս:

## 5. Կրոն

Արաբները մինչև VII դարի սկիզբները հեթանոսներ էին: Գրեթե յուրաքանչյուր ցեղ կամ ցեղային միություն ուներ իր կուռք-աստվածը, որի հզորությունը ուղղակի համենատական էր նրան պաշտող ցեղի հզորությանը: Դեքանոս աստվածների կամ քաղմաստվածության համակարգում ամենահզորը Ջիջազի գլխավոր աստվածն էր, որը կոչվում էր Ալլահ: Բազմաստվածությունը լինելով արաբական ցեղերի տարանցատվածության արտահայտություն, ավելի էր խորացնում արաբների քաժանվածությունը և լրցորեն խոչընդոտում նրանց միավորմանը և ազգային-երնիկական կոնսոլիդացիային:

Դեքանոսության հետ Արաբիայում մինչև մ.թ. VII դարը, տարածված էր նաև հուդայականությունը, քրիստոնեությունը, ինչպես նաև զրադաշտականությունը: Սակայն բնակչության ճնշող մեծամասնությունը, անշուշտ, հեթանոս էր:

VII-VIII դարերը որոշակի սահանաբաժան են հանդիսանում Արաբիայի պատմության մեջ: Դենց այս ժամանակահատվածում խիստ սրվեց քաղաքական և սոցիալ տնտեսական ճգնաժամը: Քանի զնում խորանում էր տոկիմատիրական կարգերի քայլայումը, համայնական սեփականության վերացումը, մասնավոր սեփականության ծնավորումը և

սոցիալական բնեօացումը: Սրվել էին միջցեղային հարաբերությունները, որոնք սովորաբար վերածվում էին արյունալի բախումների բարեբեր դաշտավայրերի, արոտավայրերի և ջրի աղբյուրներին տիրելու համար:

Արաբները, թեև ստեղծել էին առանձին պետություններ և պետական միավորումներ, բայց, և այնպես, նրանց չհաջողվեց ստեղծել մեկ միասնական պետություն, որն ի վիճակի լիներ կարգավորել քաղաքական, տնտեսական և սոցիալական հարաբերությունները, հաստատել կարգ ու կանոն, լուծել վեճերը և կանխեր արյունալի ընդհարումները հասարակության տարրեր հատվածների, առաջին հերթին ցեղերի միջև:

ճգնաժամի խորացնանը նպաստում էր նաև բազմաստվածությունը, որը փաստորեն սրբագրութում էր արաբական հասարակության ներքին տրոհվածությունը:

Երկիրը քաղաքական, սոցիալ-տնտեսական և գաղափարա-կրոնական լուրջ և արմատական վերափոխումների կարիք էր գգում և գտնվում էր դրա նախաշեմին:

## Գլուխ երկրորդ

# ՅԱՄԱՆԱՐՉԱՅԻՆ ՆՈՐ ԿՐՈՆԻ – ԽՍԼԱՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

## ✓ I. ՄՈՒՀԱՄՄԱԴ ՄԱՐԳԱՐԵՆ

### 1. ՄՈՒՀԱՄՄԱԴԻ ԿԵՐԱՆՑԸ և ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԹԵՐՅՈՒՆԸ

Վերափոխումները սկսվեցին մ.թ. VII դարի սկզբուն, որը կապված է Մուհամմադի անվան հետ: Նա հանդես եկավ որպես նոր մարգարեն նաբի. և դարձավ արաքններին միավորողը. նոր կրոնի՝ իսլամի ստեղծողը և արարական միասնական կենտրոնացված պետության հիմնադիրը:

Մուհամմադի կենսագրական տվյալները կցկտուր են, շատ բան հետագայում ավելացվել են նրա ժամանակակիցների վկայությունների և պատմությունների հիմնա վրա: Մուհամմադի առաջին համակարգված և կանոնակարգված կենսագրությունը՝ սիրան, պատկանում է VIII դ. հեղինակ Երն Խսիհակին: Քետագայում, IX դ., նրա կենսագրությունը հարստացվել է նոր տվյալներով:

Մուհամմադի կենսագրության համար յուրօրինակ աղբյուր են ծառայում նաև մուսուլմանների սուրբ գրքի՝ Կորանի մեկնությունները:

Դամենայն դեպք, չնայած առանձին տարրակարծություններին, անգամ վեճերին, մասնագետների կողմից այսօր կարելի է ընդհանուր գծերով ընդունված համարել Մուհամմադի ստորև բերվող կենսագրությունը:

Մուհամմադը ծնվել է 570 թ. «փղի տարում», Մեքքայում: Նա պատկանում էր Մեքքայում ամենաազդեցիկ Կուրայշ ցեղի Քաշիմի ոչ հարուստ տոհմին և զավակն էր Աբդալլահի և Ամինայի: Մուհամմադի

մանկությունը եղել է շատ դաշն: Դեռևս նա նոր էր ծնվել, երբ մահանում է հայրը, իսկ վեց տարեկանում զրկվում է մորից: Որբ մանուկի հոգսը սկզբում իր վրա է վերցնում նրա հորական պապը՝ Աբդ ալ-Մուտալիբը, իսկ երկու տարի անց, նրա մահվանից հետո, հորեղբայրը՝ Աբու Տալիբը: 12 տարեկան հասակում պատահի Մուհամմադն առաջին անգամ դրւում է գալիս Մեքքայից և հորեղբայրը ուղեկցությամբ մեկնում Սիրիա: Այստեղ նա, ըստ ավանդության, հանդիպում է քրիստոնյա հոգևորական Բահիրային, որի հետ ունեցած գրուցները, լեզենդի համաձայն, անգնդելի հետք են թողնում ապագա մարգարեի վրա:

Մուհամմադի հորեղբայրը տնտեսական վիճակն այնքան էլ նախանձելի չէր և երիտասարդը հարկադրված էր 15 տարեկանից հոգալ իր ապրուստը: Նա արածեցնում էր հարուստ մեքքացիների անասունների հոտը, երբեմն մաս կազմում քարավաններին, իսկ 590 թ., քսանամյա Մուհամմադը, մասնակցում է Ռևակայի մոտ տեղի ունեցած ճակատամարտին և Խիլֆ ալ-Ֆուդուլ ցեղի հետ Պաշիմիների կնքած դաշինքին:

Մուհամմադի անծնական կյանքում շրջադարձային եղավ 595 թ., երբ նա որպես գործավար-օգնական ծառայության մեջ մտավ Խաղիջա բինտ Խուլվայլիդի մոտ: Նա խելացի, հարուստ և այրի մի կին էր, որն աչքի էր ընկնում ծեռներեցությամբ և վայելում իր ցեղակիցների հարգանքը: Երիտասարդ, եռանդուն և աշխատասեր 25-ամյա Մուհամմադը դուր է գալիս նրանից 15 տարով մեծ Խաղիջային և նրանք ամուսնանում են: Դա ամրապնդում է Մուհամմադի տնտեսական և սոցիալական դրությունը: Նա այլևս նախկին կիսաաղքատ երիտասարդը չէր, որ հաճախ օրերը կիսաքաղց էր անցկացնում: Այժմ նա կարող էր անծնատուր լինել իր սիրած գրադարներին՝ մեդիտացիային: Նա հաճախ էր առանձնանում Մեքքայի մոտակայքում գտնվող Ջիրա սարի քարանձավներում և այնտեղ անցկացնում խորասուզված իր մտորումների մեջ:

Նրանք ունեցան հինգ զավակներ, մեկ որդի՝ ալ-Կասիմը (նա մահացել է Վաղ հասակում), այդ պատճառով էլ արաբական պահանջուրի համաձայն Մուհամմադը կոչվում է նաև Աբու ալ-Կասիմ (Կասիմի հայր), չորս աղջիկներ՝ Զայնարը, Ռուկայյան, Ումմ Կուլսումը և Ֆաթիման:

Շետագայում Մուհամմադը, համաձայն արաբական սովորույթի, որը թույլատրում էր պոլիգամիա՝ բազմակնություն, և որն իր զինանոցը վերցրեց նաև իսլամը, պաշտոնապես ունեցավ ևս երեք կին՝ Այշան, Արու Բաքրի 9-ամյա կրտսեր աղջիկը, որն ամուսնուն ներկայացավ իր խաղալիքներով հանդերձ, Խաֆսան՝ Օմարի աղջիկը, և Զայնարը՝ Շու-

զայնայի աղջիկը: Նրանց երկուսի ամուսիններն էլ գոհվել էին Բաղրի ճակատամարտում: Այսպիսով, Ալլահի առաջյալը պաշտոնապես ուներ չորս կին:

Դետագայում, առ այսօր, չորս կին ունենալու իրավունքից պաշտոնապես օգտվում են բոլոր մուսուլմանները:

## ✓ 2. Մուհամմադն իսլամի հիմնադիր

Մուհամմադը Խաղիջայի հետ ամուսնությունից հետո, քարավանային առևտորվ գրադպելու շնորհիվ, ճանապարհորդելու լայն հնարավորություններ և ստանում: Խև դա նրա առջև բացում է տարրեր մարդկանց հետ շփվելու, գրուցելու, զանազան կրոնական ուսմունքների հետ ժանորանալու, աշխարհը ճանաչելու դրությունը: Մուհամմադի գրուցակիցների մեջ առանձնանում էր քրիստոնյա վանական Բահիրան, որից նա, լեզենդի համաձայն, շատ բան է վերցրել:

Այդ բոլորն անհետանը չի անցնում Մուհամմադի համար: Նա ընդհանուր գծերով ծանորանում է քրիստոնեության և հուդայականության դրույթների հետ:

Սակայն դա նրան չի բավարարում և նա կմտրում է մեկ այլ, բոլորովին տարրեր բան: Եվ նա առանձնանում է առօրյա սին հոգսերից, ապաստանելով Յիրա սարի վրա գտնվող քարանձավում: Անջրաբատվելով արտաքին աշխարհից, Մուհամմադը խորասուզվում է ինըն իր մեջ, մտորում աշխարհի և նրա ստեղծման, կյանքի և մահվան, չարի և բարու, հանդերձալ աշխարհի, մարդկանց մեղքերի, պատժելիության, երանության և նմանատիպ այլ հարցերի մասին: Եվ ինչքան մտասուզվում է իրեն տանջող խնդիրների մեջ, այնքան ավելի է հավատում իր առանձնահատուկ առաջելությանը և վերուստ իրեն սահմանված կոչմանը:

Կենսագիրները հավաստում են, որ Մուհամմադը ինքնախորասուզման և հոգով վեր սավառնելու պահերից մեկի ժամանակ ինչ—որ ծայն է լսել, թերևս ներքին ծայն, որը նրան ոգեկոչել է քարոզի: Եվ Մուհամմադը 610 թ. սկսում է իր քարոզը, իիմք դնելով մի նոր կրոնի, որն ստացավ իսլամ անունը:

Մուհամմադն իր քարոզները սկսեց իր հայրենի Սեքքայում, ծեռք բերելով առաջին, ոչ մեծարիկ հետևորդները: Սակայն նա միանգամից ծեռք բերեց նաև զորեղ հակառակորդներ՝ ի դեմ Կուրայշ ցեղի Օմայյա տոհմի և նրա առաջնորդ Աբու Սուֆիանի: Դակասությունները նրանց

միջև խիստ սրվում են և աստիճանաբար ընդունում աօնակատնան բնույթ: Օնայյաները սաստկացնում են հալածանքները, ուղղված Մուհամմադի և նրա համախոհների դեմ, որոնց զգալի մասը նորահայտ մարգարեի հարազատները կամ տոհմակիցներն էին:

Ստեղծված սպառնալից պայմաններում, Մուհամմադն մոտ 200 համախոհներով, 622 թ. Մեքքայից հարկադրված գաղթում է Յասրիք, որը հետագայում անվանվեց Մաղինա ան-Նարի, այսինքն՝ Սարգարեի քաղաք: 622 թվականը՝ գաղթի, կամ ինչպես արաբներն են անվանում, հիջրայի տարին, ընդունված է համարել արաբական և համայն մուսուլմանական աշխարհի թվագրության և տարեգրության սկիզբը:

Պատահականություն չեր Մուհամմադ մարգարեի և նրա զինակիցների գաղթը Յասրիք: Մարգարեի ընտրությունը կանգ էր առել այդ քաղաքի վրա, որովհետև, ինչպես նշվել է, մաղինացիները՝ Յասրիքի բնակիչները, թշնամաբար էին տրամադրված մեքքացիների ցեղային վերնախավի նկատմամբ: Մուհամմադի քարոզներն այստեղ պարարտ հոդ գտան և շուտով Մուհամմադը Մաղինայում կազմակերպում է հավատացյալ մուսուլմանների առաջին հանայնքը՝ ուժման: Մուհամմադը դառնում է այդ համայնքի և Մաղինայի ղեկավարը, իր ծեռքը վերցնելով կառավարման քաղաքական, ռազմական, տնտեսական և կրոնական—հոգևոր բոլոր լծակները:

Մուհամմադի գործունեությունը Մաղինայում հանդիսանում է մի առանձին փուլ իսլամի դրույթների հետագա մշակման և զարգացման, մասնավորապես, միաստվածության, իրավունքի, քարոյախոսության, ծիսակարգի, և ընդհանրապես իսլամի համակարգման բնագավառում:

Դրա հետ գուգահեռաբար, Մուհամմադը և նրա համախոհները շարունակում են պայքարը մեքքացիների դեմ, ծգտելով իրենց վերահսկողությունը հաստատել ։ Ինչպիսի այդ ամենակարևոր կենտրոնի վրա, շատ լավ հասկանալով, որ հաղթանակը Մեքքայի նկատմամբ կարող է Վճռորոշ նշանակություն ունենալ նոր կրոնի՝ իսլամի հետագա ճակատագրում:

624 թ. տեղի է ունենում Մուհամմադի կողմանակիցների և մեքքացիների առաջին ճակատամարտը Բաղր վայրում, որն ավարտվում է Մուհամմադի զինված ջոկատների հաղթանակով: Նաջորդ տարի տեղի է ունենում երրորդ ճակատամարտը Ուհուլում, որը, սակայն, ավարտվում է մուսուլմանների պարտությամբ: Բայց 627 թ. կայացած երրորդ ճակատամարտը, երբ մեքքացիների և նրանց դաշնակիցների տաս հազար-

նոց գործը պաշարեց Մուհամմադի միջնաբերդը հանդիսացող Յասրիբը, կրկին ավարտվեց Մուհամմադի գործերի հաղթանակով: Դա մեծապես բարձրացրեց Մուհամմադի հեղինակությունը, ուժեղացրեց հավատը նրա քարոզած գաղափարների նկատմամբ, մի կողմից, և բռնացրեց Օմայյաների դիրքերը Մեծքայում, մյուս կողմից: Այստեղ ևս ավելի ու ավելի շատ մարդիկ դառնում էին Մուհամմադի համախոհ և դավանակից: Իրադրությունն արմատապես փոխվեց հօգուտ Մուհամմադի:

Ստեղծված քարենպաստ պայմաններում, Մուհամմադը 630 թ., իր տաս հազարամոց զորքի գլուխն անցած, մտավ իր հայրենի Սեքքա քաղաքը:

Դա Մուհամմադի և մուսուլմանների կատարյալ հաղթանակն էր, որն ունեցավ համաշխարհային պատմական նշանակություն:

## II. ԽԱՎԱՄԾ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՈԳՄԱՆԵՐԸ

Մերձավոր Արևելքը համաշխարհային կրոնների ծևավորման կարևոր բնօրրաններից մեկն է: Այստեղ են առաջացել, դեռևս մեր թվականությունից առաջ, հուդայականությունը և քրիստոնեությունը: VII դ., դարձյալ Մերձավոր Արևելքում, իրապարակ իջավ իսլամը, մի նոր համաշխարհային կրոն, որը կապված է Մուհամմադի անվան հետ:

Խսլամ նշանակում է հնագանդություն: Նա պահանջում է մուսուլմաններից հնագանդություն նախ և առաջ Ալլահին, նոր կրոնի բոլոր դոգմաների անշեղ կատարում, ենթակայություն հոգևոր առաջնորդներին՝ իմամներին, աստվածաբան–ուլեմներին և այլն: Խսլամը դավանողները կոչվում են մուսուլմաններ:

Դայ իրականության մեջ, այդ թվում և միջնադարյան պատմագիտական գրականության մեջ, «իսլամի» փոխարեն շատ հաճախ օգտագործվում է «մահմեդականություն» եզրը՝ կապված նրա ստեղծողի՝ Մուհամմադի անվան հետ: Խսկ այդ կրոնի դավանողը կոչվում է «մահմեդական»: Այս ավանդությը շարունակվում է ցայսօր: Կարծում ենք, որ երկու անվանումներն էլ հավասարապես կիրառելի են:

## 1. ԽԱԼԱՄԻ ԻԻՆԳ ԳԼԽԱՎՈՐ ԻԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ

Խսլամը խարսխված է իինգ իենասյուների վրա, որոնք արտահայտում են խսլամի բուն էռթյունը և նպատակաուղղվածությունը:

Առաջին իիմնասյունը միաստվածության սկզբունքի հաստատումն է, որը ելակետային և անկյունաքարային է խսլամի ուսմունքի և համակարգի մեջ: Այդ սկզբունքն արտահայտված է «Հա Ալլահ իլլա Ալլահ վա Մուհամմադ ռասուլ ուլլահ» բանաձևի մեջ: Այդ բանաձևը սովորաբար թարգմանվում է «Չկա Աստված բացի Ալլահից, իսկ Մուհամմադը նրա առաջյան է»: Դա հավատի հաստատումն է շահադա, առ միաստվածություն: Դրանով վերջ էր տրվում տարրեր ցեղերի և տոհմերի բազմաթիվ կուտքերի և աստվածների պաշտամունքին, և հաստատվում էր Ալլահի պաշտամունքը իրև միակ Աստված:

Բանաձևը միաժամանակ հաստատում է, որ միակ աստծո՝ Ալլահի վերջին առաջյալը Մուհամմադն է, որի միջոցով Ալլահը մարդկանց հասցնում է իր միակ ճշմարտացի խոսքը, որն ամփոփված է մուսուլմանների սուրբ գրքում՝ Կորանում:

Խսլամն ընդունում է, որ Մուհամմադից առաջ եղել են նաև այլ առաջյալներ, այդ թվում Մովսեսը, Յիսուսը և այլն, որոնք նույնպես մարդկանց բերել են աստծո խոսքը: Բայց, ըստ մուսուլմանական դոգմատիկայի, մարդիկ մեծ մեղք են գործել, մոռացության տալով այն ամենը, ինչ նրանց սովորեցրել են նախորդ մարգարեները: Ուստի և հայտնվել է վերջին մարգարեն՝ Մուհամմադը, որի առաքելությունն է մարդկանց վերջին անգամ նախազգուշացնելով, ինարավորություն տալ նրանց կանգնելու ճշմարիտ ուղղությունը վրա և դրանով փրկվելու: Այլապես կզա աշխարհի վերջը և ահեղ Դատաստանի վերջին ժամը, և մարդիկ կստանան ըստ իրենց արարքների, արդարներին դրախտավայր՝ ջանճաք, իսկ մեղավորներին՝ դժոխք՝ ջահնամ, այրվելու հավերժական կրակի վրա:

Խսլամը Ալլահին օժտել է ամենազոր, ամենակատարյալ, ամենաբարի, ամենաողորմած և այլ ամենաբարձր հատկանիշներով: Դա, իհարկե, նորություն չէ և հատուկ է բոլոր կրոններին, որոնք իրենց աստվածներին վերագրում են ամենաբարձր որակներ:

Խսլամն Ալլահին օժել է մի շարք ամենաբարձր մակդիրներով: «Ալլահու աքքար», «Ալլահն ամենամեծն է», «Ալ-մուլք լի-լլահ», «Թագավորությունն Ալլահինն է», նաև «Ռահմանի-ո-ռահիմը», «Գթառատը և գթասիրտը» և այլն: Խսլամական ավանդույթի համաձայն իսլամական

բոլոր կարևոր փաստաթղթերը, տեքստերը, պաշտոնական գեկույցները սկսվում են «Բիսմիլ-լլահի-ռ-ու-ահման-ռ-ու-ահմ»՝ «Դանուն գրառատ և գրասիրտ աստծո» բանաձևով: Բոլոր օրինապահ հավատացյալ մուսուլմանները պարտավոր են հետևել այս կարգին, որի խախտումը համարվում է ծանր մեղք:

Երկրորդ հիմնայունը աղոթքն է՝ սալաթ (հզն. սալավաթ): Խսամը սահմանում է յուրաքանչյուր օր աղոթել հինգ անգամ, արտոնելով աղոթքը կատարել տանը, աշխատատեղում, բացօթյա և մզկիթում: Մզկիթը՝ մասշիդ, և աղոթատեղի է, և կրոնական-պաշտամունքային կառույց: Այստեղ գտնվում են հոգևոր դպրոցներ՝ մադրասաներ, անց են կացվում քննարկումներ կրոնական զանազան հարցերի շուրջը, լսում աղոթքներ, կարդում Կորան և այլն:

Շատ կարևոր է ուրբաթօրյա՝ յառաւ ալ-ջումա, աղոթքը, որն անպայման կատարվում է մզկիթում՝ գյուղական, ավանային և քաղաքային: Այդ օրը գլխավոր մզկիթում հավաքվում են տվյալ վայրի բոլոր մուսուլմանները և կատարում կոլեկտիվ աղոթք:

Ամեն մի մզկիթ ունի իր միհրաբը, որմնախորշը, որն ուղղված է դեպի մուսուլմանների գլխավոր սրբատեղին, Մեքքայի Կաարան: Դավատացյալներն աղոթում են ունենալով դեպի այդ որմնախորշը, այսինքն հայացքն ուղղելով դեպի Մեքքա: Աղոթքը կատարում է ինամը, առջևուն կանգնածը, որը կարդում է Կորանից համապատասխան գլուխ և դեկավարում ամրող աղոթքը: Աղոթքը կարդացող ինամը կոչվում է ինամ խարիթ: Նա սովորաբար կանգնում է միհրաբի կողքը, մինքարի, ամքինի առջև: Յուրաքանչյուր մզկիթ ունի իր մինարեթը, աշտարակը, որտեղից մուեզզինը օրը հինգ անգամ հավատացյալներին կանչում է, հրավիրում (ազան) աղոթքի:

Մզկիթի հատակը սովորաբար ծածկված է լինում խսիրով, իսկ պելի հարուստները՝ թանկարժեք գորգերով: Մզկիթ նտնելուց առաջ բոլորը պարտադիր հանում են կոշիկները:

Մուսուլմանների կողմից ամենահարգված պաշտելի և հեղինակավոր մզկիթներն են ալ-Մասժիդ ալ-Ակսա (Դեռավոր մզկիթը) և Մասժիդ աս-Սախրա (Գմբեթավոր մզկիթը) Երուսաղեմում, որը հայտնի է նաև Օմարի մզկիթ ամվան ներքո, Մասժիդ ան-Նարի (Մարգարեի մզկիթը) Մադինայում, ալ-Մասժիդ ալ-Դարամ (Նվիրական մզկիթը) Մեքքայում և այլն: Այս վերջինը համարվում է մուսուլման հավատացյալների գլխավոր սրբավայրը:

Մասօդիդ ալ-Դարամն ունի մեծ ուղղանկյուն բակ, որի կենտրոնում գտնվում է Կաարան: Դա մի խորանարդածն կառույց է, որը դեռևս հեթանոս արաբների սրբատեղին էր: Մուհամմադ մարգարեն այն դարձրեց մուսուլմանների զիխավոր սրբատեղին, իրամայելով ոչնչացնել Կաարայի շուրջ-բոլորը դասավորված հեթանոսական արաբների բոլոր կուռք-աստվածների արձանները:

Կաարայի հարավ-արևնտյան մասում տեղադրված է «Սև քարը», որն ըստ մուսուլմանական հավատալիքների Ալլահն ուղարկել էր երկնութիւն՝ ի նշան իր գորության և բարեհաճության:

Կաարան կատարում է նաև կիբլայի՝ կողմնորոշման դեր: Ակզբում նուսուլմանները աղոթքի ժամանակ իրենց դեմքն ուղղում էին արևելք՝ Երուսաղեմ, այսինքն կիբլայի դերը կատարում էր Երուսաղեմն: Սակայն հիջրայի երկրորդ տարում, 624 թ., մարգարեն որպես կիբլա ընտրեց Կաարան, Մեքքան: Եվ բոլոր մզկիթներում որմնախորշները Մեքքահայաց են: Այդ օրվանից մինչև այսօր մուսուլմաններն իրենց աղոթքը կատարում են հայացքն ուղղելով դեպի Մեքքայի Կաարան:

Խսլամի երրորդ հիմնասյունը սառւմն է կամ ուրազան՝ ծոմը: Ծոմապահությունը պարտադիր է բոլոր օրինապահ մուսուլմանների համար, որի ընթացքում նրանք պետք է ծեռնպահ մնան սնունդ և հեղուկ ընդունելուց, զվարճալիքներից, ընթերցեն Կորան, աղոթեն, մտորեն Ալլահի և նրա ամենամեծը լինելու մասին և այլն: Ծոմապահության շարքում զիխավորը ռամադան ամսի ծոմն է, որը տևում է մեկ ամիս և պարտադիր է բոլորի համար, բացի հիվանդներից և ճանապարհորդներից: Սովորաբար ռամադան ամսվա ծոմն ավարտվում է թաթախման տոնով՝ իդ ալ-Ֆիտր:

Դարկ է նշել, որ ծոմապահության արգելվների կողքին կան նաև մի շարք այլ արգելվներ, որոնք պարտադիր են տարվա բոլոր օրերին: Խսլամն արգելում է գործածել ալկոհոլային խմիչքներ և խոզի միս, մոլեխալեր, ինչպես նաև վաշխառությունը՝ ոիքա և այլն:

Իհարկե, չպետք է կարծել, թե բոլոր մուսուլմանները անշեղորեն պահպանում են այդ արգելվները: Նրանցից շատերը օգտագործում են ալկոհոլ, հրապուրվում են թթախաղերով, տոկոսով փոխառություն են տալիս, ծգտում զանազան ծներով և հնարամտությամբ շրջանցնել ամեն տեսակի արգելվներ: Այդ պատճառով էլ մուսուլմանական որոշ երկրներում կան խսլամի պահանջների կատարմանը հսկող զանազան մարմիններ:

Իսլամի չորրորդ հիմնայունը հաջն է՝ ուխտագնացությունը Սեքրեա: Դա սովորաբար կատարվում է գուշ—հիջա ամսին: Դաջը պարտադիր է այն բոլոր մուսուլմանների համար, որոնց առողջական և ֆինանսական վիճակն ընծեռում է այդ հնարավորությունը: Ուխտագնացը հասնելով Մեքքա, հազնում է հատուկ սպիտակ զգեստ՝ իհրամ, կատարում է ծիսային լվացում, յոթ անգամ պտտվում Կաաբայի շուրջը, համբուրում «Սև քարը» և ջուր խնում Զանզամ սուրբ աղբյուրից: Դրան հաջորդում է ուխտագնացության հաջորդ կարևոր փուլը: Ուխտագնացները հանդիսավորությանը աղոթք են անում Մեքքայի մերձակա հովիտներում և բլուրներում: Դրանով նրանք հարգանքի տուրք են մատուցում նախահայր Նբրահիմ–Աքրահամին, որն ըստ ավանդության եղել է այդ Վայրերում:

Մեքքա ուխտագնացություն կատարողին կոչում են Դաջի, որը հարգալից կոչում է:

Դաջը կամ ուխտագնացությունը նույնպես ավարտվում է տոնակատարությամբ, որը կոչվում է հի ալ—աղիա կամ կուրբան—քայրամ: Դա մուսուլմանական ամենամեծ տոնն է: Այդ օրը ողջ մուսուլմանական աշխարհում կատարվում է զոհաբերություն, մարդիկ չեն աշխատում և վայելում են Ալլահի տված բարիքները, փառարանելով նրան և նրա զորությունը:

Վերջապես, իսլամի հինգերորդ հիմնայունը զաքարն է: Դա յուրահատուկ մի հարկ է, որը գանձվում է զիխավորապես հարուստների և ունարների գույքից և եկամուտներից, և հատկացվում իսլամական ումայի՝ համայնքի կարիքների բավարարման համար: Այդ եկամուտները նախատեսված են ումայի աղքատների և սակավ ունարների համար: Այդ հիման վրա զաքարը մուսուլմանական աստվածաբանությունը փորձում է ներկայացնել իսլամական ումայի շրջանակներում սոցիալական և նյութական հավասարության հաստատման միջոց և շատ հաճախ հակադրում անհավասարության վերացման կապիտալիստական և սոցիալիստական տեսություններին:

Միաժամանակ, իսլամը յուրաքանչյուր օրինապահ մուսուլմանի հորդորում է իր համահավատացյալին տալ սաղակա, կամավոր զոհաբերություն և ողորմություն:

Չնայած բարի նպատակներին, սակայն, ոչ զաքարը, և ոչ էլ սաղական, ի վիճակի չեն վերացնել սոցիալական անհավասարությունը: Սոցիալական բնեղացումը, գույքային–ֆինանսական անհավասարու-

թյունը, աղքատությունը և թշվառությունը բնորոշ են իսլամական հասարակության այնպիս, ինչպես մարդկությանը հայտնի բոլոր հասարակություններին:

### III. ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՍՈՒՐԲ ԳԻՐՁԸ – ԿՈՐԱՆԸ

#### 1. «ԱԼ-ԿՈՐԱՆ ԱԼ-ՔԱՐԻՄ»

Կորանը մուսուլմանների սուրբ գիրքն է և հավատի աղբյուրը, որն արարներն անվանում են «Ալ-Կորան ալ-Քարիմ» (արաբերենում «քարիմ» բառն ունի մի քանի նշանակություն՝ առատածեռն, ողորմած, ազնիվ, նեծահոգի և այլն): «Կորան» նշանակում է «այն, ինչը կարդում են, արտասանում են»: Խալամագետները այդ դարձվածքը մեկնում են որպես «այն, ինչ որ ասվել է Սուհամմադին և ինչ որ նա կրկնել է», այսինքն Կորանն ամբողջությամբ աստվածային հայտնություն է, իրագործված նարի՝ նարգարե Սուհամմադի միջոցով:

Կորանում արծանագրված են պաշտամունքի, երիկայի, իրավունքի, տնտեսության, անձնական կյանքի, ուժմայի, աշխարհի արարչի, մարզարեների, հանդերձայլ կյանքի, մեղքերի պատժելիության, անհավատների և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ իսլամի հիմնարար դրույթները, կանոնները և պահանջները: Նա նույն դերն է կատարում մուտքանակության կամքում, ինչ որ Թորան հրեաների և Աստվածաշունքը: Դին ու Նոր Կոտակարանները, քրիստոնյանների կյանքում:

Կորանում շատ մեծ տեղ է հատկացված մուսուլմանների անհատական կյանքի կարգավորման խնդիրներին, ինչպես ամուսնությանը, ապահարզանին, գույքի տնօրինմանը և բաժանմանը, ժառանգությանը և այլն: Այդ պատճառով էլ իսլամը համարվում է ոչ միայն կրոն, այլև ապրելածն: Դրանում է իսլամի կենսունակության աղբյուրներից մեկը:

#### 2. Կորանի կառուցվածքը

Կորանը բաղկացած է 114 սուրաներից՝ գլուխմերից, որոնք բաժանվում են այարների՝ ֆրազների կամ խոսքերի և արտահայտությունների:

Սուրահների դասավորությունը կատարվել է ըստ ծավալների, մեծից փոքր: Բացառություն է կազմում միայն առաջին տորիան, որը կոչվում է Ֆարիհ, այսինքն Բացող կամ Սկիզբ: Այս այն «Դանուն գրառատ, գրասիրտ Ալլահի:

**Փառ Ալլահին, աշխարհների Տիրոջը**

**գրառատ, գրասիրտ,**

**դատաստանի օրվա թագավորին:**

**Քեզ ենք մենք պաշտում և խնդրում օգնել:**

**Տար մեզ ուղիղ ճանապարհով,**

նրանց ճանապարհով, ում որ Դու բարերարություն ես արել, բայց ոչ նրանց, ովքեր գտնվում են զայրույթի ներքո, և ոչ մոլորայների:»

Կորանում ուղղակի գրված է, որ այն ուղարկված է Ալլահի կողմից «Մենք վերուստ ծեզ ուղարկեցինք գիրը... Փառ Ալլահին, զահակալին, ամենաքարծրալին: Նա այն է, ինչ նրան վերագրում են: Նրան չեն հարցնում այն մասին, թե Նա ինչ է անում, այլ նրանց են հարցնում»:

Կորանը շատ մեծ կարևորություն է տալիս ծշմարիտ ուղուց շեղվածների և կրկին բազմաստվածությանը վերադարձողների դեմ պայքարին, որին նվիրված է «Զղջուն» կամ «Ապաշխարանք» սուրիան: Այդ սուրահում գրված է, որ «Նրանք ոճրագործներ են: Մարտնչեք նրանց դեմ, նրանց Ալլահը կպատժի ծեր ծեռցերով, և կիսայտառակի նրանց և կօգնի ծեզ ընդդեմ նրանց և կրուժի հավատացյալների կուրծքը»: Բայց և նշվում է, որ եթե նրանք մեղա զան, ապաշխարեն և կրկին վերադարձնան ծշմարիտ ուղին և աղոթեն, ապա «Նրանք ծեր կրոնական եղբայրներն են»:

Կորանի 109-րդ սուրիան կոչվում է «Անհավատներ», որտեղ սահմանված են իսլամի հիմնական մոտեցումները ոչ մուսուլմանների նկատմամբ: Նրանում ասված է.

«Ասա. «Ո՛վ դուք անհավատներ.

Ես չեմ պաշտելու այն, ինչ որ դուք եք պաշտելու,

և դուք մի պաշտեք այն, ինչ որ ես եմ պաշտելու,

և ես չեմ պաշտում այն, ինչ որ դուք եք պաշտում,

և դուք մի պաշտեք այն, ինչ որ ես պիտի պաշտեմ:

Դուք ծեր հավատն ունեք, իսկ ես իմ հավատն ունեմ»:

Ուրեմն, ըստ Մոլիամմադի մարգարեի և Կորանի, բոլոր նրանք, ովքեր չեն դավանում իսլամ, համարվում են անհավատներ:

Սակայն, այդուհանդերձ, իսլամը տարբերակում է ժողովուրդների մի խումբ, որը նրանք անվանում են «ահլ ալ-Ճիթար», այսինքն «Գրքի ժողովուրդ»։ Դրա մեջ նրանք մտցնում են քրիստոնյաներին և հուդայականներին, որոնք ունեն իրենց սուրբ գիրքը՝ Աստվածաշունչը և Թորան։ Մուսուլմանական աստվածարանները և կրոնա-քաղաքական տեսությունը համարում են, որ Սուրբ Գիրք ունեցող ժողովուրդները գրադեցնում են ինչ-որ միջին տեղ իսկապես հավատացյալների, որպիսիք մուսուլմաններն են, և «անիրավների» կամ անհավատների միջև։ Նրանք, իբր, աղավաղել են սուրբ գրվածքը։ Այդ «Գրքի ժողովուրդները» կարող են ապրել իսլամական միջավայրում առանց իսլամ ընդունելու պարտադրանքի։ Դեռ ավելին, նրանք գտնվում են իսլամական պետության պաշտպանության ներքո, համարվելով նրա զինմին՝ ենթահովանավորյաները։

Իսլամական դրամատիկան հասկանալու առումով, ուշագրավ է 87-րդ՝ «Ամենաբարձրյալը» սուրիան, որտեղ ասված, որ Ալլահը կիշտացնի կյանքը բոլոր նրանց, ովքեր հավատում են նրան, իսկ ովքեր նրանից երես կրեքեն, «կայրվեն ամենամեծ կրակի մեջ։ Դետո նա այստեղ չի մեռնի և կենդանի չի լինի»։

Կորանի վերջին, 114-րդ սուրիան վերնագրված է «Մարդիկ», որտեղ Ալլահը բնութագրված է որպես «Մարդկանց Տեր, մարդկանց բագավոր, մարդկանց Աստված», որը նրանց պաշտպանում է չարից և չար հրահրողներից։

Կորանի կարևոր սուրիաներից են նաև «Կանայք», «Արգելքներ», «Չաջ», «Չափատացյալներ», «Լույս», «Դրեշտակներ», «Գթասիրտ», «Երեսապաշտներ», «Չարություն», «Օգնություն», «Արշալոյս», և այլն։

### 3. Կորանի կանոնակարգումը

Կորանը սկզբում գրավոր տեքստ չի ունեցել, այն եղել է բանավոր, որը Մուհամմադը և նրա շատ զինակիցներ և հավատացյալներ անգիր գիտեին և փոխանցում էին միմյանց։ Թեև եղել են առանձին մարդիկ, որոնք գրի են առել ինչ-որ պատահիկներ մարգարեի ասույթներից։

Մուհամմադի կենդանության օրոք ոչ միայն չի եղել Կորանի գրավոր տեքստ, այլև այն դեռևս կանոնակարգված չէր։ Այդ հարցը լուծվեց միայն նրա մահվանից հետո, երբ բնական մտավախություն կար, որ շատ բաներ կարող են անվերադարձ կերպով մոռացության մատնվել։

Մուհամմադի հայտնություններն առաջին անգամ առանձին թղթերի վրա գրի առավ Զայդ իբն Սաքիտը՝ Մուհամմադին անմիջականութեն հաջորդած առաջին խալիֆա Աբու Բաքրի ժամանակ (632–634 թթ.): Սակայն Մուհամմադի հայտնություններն ամբողջությամբ հավաքվեց և Կորանը գրավոր գրից տեսք ստացավ ավելի ուշ, երրորդ խալիֆա Օսմանի օրոք, 651 թ.: Դա համարվում է Մուհամմադ մարզարեի միակ լիակատար, իսկական և կանոնակարգված տեքստը, որն ըստ եւրյան, դրանից հետո չի ենթարկվել փոփոխության, և այսօր էլ օգտագործվում է որպես այդայիսին:

Քանի որ Կորանը շատ բարդ է և ոչ բոլորին հասկանալի, նույնիսկ ուսյալներին, ուստի ժամանակի ընթացքում հասունացավ նրա առանձին դրույթների, մարզարեի ասուլյների, արտահայտությունների և համեմատությունների, այսինքն Կորանի տեքստի բացատրման և մեկնաբանման՝ թափսիրների անհրաժեշտություն: Այսօր հրատարակված թափսիրները կազմում են տասնյակ հատորներ:

Յաստատվել է Կորանի ընթերցման յուրատեսակ ձև: Կորանն ընթերցում են ծայնը ծգելով, որը մոտենում է երգեցողությանը, հստակ առօգանությամբ, առանց շտապելու, կարճատև ընդմիջումներով, որը մեծ տպավորություն է թողնում ներկաների վրա, ներգործում ունկնդիրների զգացնումների վրա և ստեղծում յուրահատուկ տրամադրություն: Ի-հարկե, դա հատուկ պատրաստություն է պահանջում, որով գրադպում են բազմաթիվ մադրասաներ և մուսուլմանական համալսարաններ:

## IV. ՍՈՒՆՆԻՑՄ ԵՎ ԾԻՒՑՄ

VII դ. երկրորդ կեսերից սկսվեց իսլամի երկփեղկումը և նրանում ծնավորվեցին երկու հիմնական ուղղություններ՝ սուննիզմը և շիհազմը:

### 1. Սուննիզմ

Սուննիզմն առաջացել է արաբական սուննա եզրից, որը նշանակում է ուղի, օրինակ կամ նմուշ: Սակայն բովանդակության առումով նրա իմաստը հանգում է Մուհամմադի արարքներին, արտահայտություններին և այս կամ այն սկզբունքային հարցի վերաբերյալ նրա կողմից ընդունած որոշումներին, որոնք արձանագրված են հաղիսներում՝

պատմվածքներում: Չաղիսները ժամանակագրական առումով շատ հին են, Սուհամաղի և նրա զինակիցների ժամանակակիցները, որոնք սկզբնական շրջանում, ինչպես և Կորանը, եղել են բանավոր և փոխանցվել թերնե թերան: Միայն VIII–IX դդ. տեղի ունեցավ նրանց գրառումը, որոնց այսօր կազմում են մի քանի հատոր:

Սուննան և դրա հետ կապված հաղիսները Կորանի և մուսուլմանական իրավունքի, մուսուլմանական ումնայի սոցիալական կյանքի հիմնախնդիրների մեկնաբանության կարևոր աղբյուրներից մեկն են: Այն մուսուլմանները, ովքեր ընդունում են այս պարագան, համարվում են սուննիներ, սուննիզմի հետևորդներ, ճանաչվելով իրեն ուղղափառ մուսուլմաններ:

Սուննիները կամ ինչպես նրանք գերադասում են իրենց անվանել ահլ աս—սուննա՝ սուննայի ժողովուրդ, գտնում են, որ իրենց են հանդիսանում Սուհամաղ մարգարեի ուսմունքի և թողած ավանդների անաղարտ հետևորդները, համարելով շիաներին մարգարեի ուսմունքի խեղաթյուրողներ:

Սուննիզմը պահանջում է ընդունել Սուհամաղին անմիջականութեան հաջորդած առաջին չորս խալիֆաների օրինական լինելը և ճանաչել կանոնակարգված հաղիսների հավաստիությունը և կյանքում հետևել նրանց դրույթներին:

Կա նաև մի շատ կարևոր հանգամանք, որը սուննիզմը տարբերում և հակադրում է շիիզմին: Դա վերաբերում է աստվածաբանական և քաղաքական հայեցակարգին: Սուննիզմը, ի տարբերություն շիիզմի, բացառում է որևէ միջնորդավորված շիում կամ կապ աստծո և մարդկաց միջև Սուհամաղի մահվանից հետո: Դա բխում է Սուհամաղի որպես Ալլահի վերջին մարգարեն լինելու հանգամանքից:

Սուննիզմը միաժամանակ չի ընդունում շիաների առաջնորդ Ալիի հատուկ բնությունը, իրավունքը և առաքելությունը, ինչպես նաև նրանց այն տեսադրույթը, որ խլամական ումնայի, այսինքն հանայնքի դեկապար կարող են լինել միայն Ալիի անմիջական հետևորդ—շառավիդները:

Բացի այս սկզբունքային հարցերից, կան նաև այլ բնույթի տարբերություններ սուննիզմի և շիիզմի միջև կրոնական ծիսակատարությունների, քաղաքացիական իրավունքի, այլադավանների հանդեպ վերաբերնունքի, տոնակատարությունների և այլ հարցերում:

Նշենք, որ աշխարհի մուսուլմանների մեծամասնությունը սուննիզմի հետևորդներ են:

## 2. Շիհզմ

Շիհզմի առաջացումը կապված է Մուհամմադի հորեղբորորդի և նրա սիրատուն դատեր Ֆարիմայի ամուսնու՝ Ալիի անվան հետ: Նա մարգարեին հաջորդած չորրորդ խալիֆան էր, որը սպանվեց 661 թ.

Շիհզմն առաջացել է արաբական շաա քառից, որը նշանակում է կուսակից կամ միանալ որևէ մեկին: Ալիի կուսակիցները կամ շիաները, որոնց կոչում են նաև ալիակամներ, Ալիին համարում են Մուհամմադ մարգարեին միակ օրինական ժառանգորդը և գտնում, որ իմամները՝ ուսմայի քաղաքական և կրոնական բարձրագույն ղեկավարները, պետք է լինեն նրա ուղղակի ժառանգորդները: Այլ կերպ ասած, նրանք իմամների ժառագականության սկզբունքի կողմնակից են: Սուննիները նույնպես իմամներին ընդունում են որպես աշխարհիկ և հոգևոր առաջնորդ, սակայն նրանք գտնում են, որ իմամները պետք է բնտրվեն ժողովրդի կողմից և նրանց իշխանությունը չպետք է փոխանցվի մեկ իմամից մյուսին:

Շիաները կանգնած լինելով իմամատի ժառանգականության սկզբունքի պահպանման վրա, ճանաչում են միայն 12 իմամների՝ որպես նույնությամբ աշխարհիկ օրինական աշխարհիկ և հոգևոր առաջնորդներ: Ըստ որում Վերջին, 12-րդ իմամը, որն ավանդույթի համաձայն անհայտացել է խորհրդավոր պայմաններում, համարվում է «քաքանված իմամ», որը մի օր անպայման հայտնվելու է, Վերցնելու է իշխանությունն իր ծեռքը, և փրկելու է մարդկությանց: Ուստի նա համարվում է մահիդ՝ փրկիչ:

Շիաները, ինչպես սուննիները, մուսուլմանների միակ և գլխավոր սուրբ գիրքը ընդունում են Կորանը: Սակայն նրանք Կորանի 114 սուրահիններին ավելացրել են ևս մեկ գլուխ, որը չի ընդունվում սուննիների կողմից: Իսկ շիաները չեն ընդունում կամ ճանաչում սուննան՝ հաղիսներով հանդերձ: Սուննիների հաղիսների փոխարեն շիաներն ունեն իրենց ավանդույթները՝ տեղեկությունները կամ խարարները, որոնք, բնականաբար, մերժվում են սուննիների կողմից:

Շիաները սուննիների նման հավատարիմ են իսլամի և Կորանի կողմից սահմանված հիմնական պահանջներին և ծիսակատարություններին, ինչպես օրական հինգապատիկ աղոթքը, թլփատումը, ծոնը, ուխտագնացությունը և այլն: Դրա հետ միասին նրանք ունեն նաև իրենց յուրահատուկ սովորույթները և պարտականությունները: Դրանց թվին

Են պատկանում ուխտագնացությունը՝ բացի Մեքքայից, նաև, և, գլխավորապես, շիաների հիմնական և ամենահեղինակավոր սրբավայրեր ան-ևաջաֆ և Զերբելա, որոնք տեղակայված են Իրաքում, առանձնահատուկ սգո օրեր, որ միայն իրենք են նշում, և որոնք չեն ընդունվում սունիների կողմից, և այլն:

Այդ առօնով հատկանշական է նահատակների պաշտանութքը և նահատակների սգո օրերի նշումը, որը առանձնահատուկ տեղ է գրավում համայն շիաների կյանքում: Նրանց զիսավոր նահատակներն են Ալին, նրա որդին՝ Շուսեյնը, և իմամ ՈՒղամ: Նրանց հիշատակը նշվում է զանգվածաբար: Սովորաբար նրանց հիշատակին կազմակերպվում են կրոնական բազմամարդ բափորներ, որոնք ավելի հայտնի են «շախսեյ-Վախսեյ»: անվան ներքո, բարձրածայն ողբասացությամբ, ինքնածաղկումով, որի ժամանակ բափորի մասնակիցներն իրենք իրենց մտրակում են, իսկ ավելի մոլեռանդ հավատացյալներն անգամ իրենց հարկածում են դանակներով, սրերով և այլ սուր գործիքներով:

Ժամանակի ընթացքում շիհզմի ներսում առաջացան տարբեր աղանդներ, ինչպես զեյդերը, իմամականները, իսմահլականները, ալիականները, որոնք ավելի հայտնի են ալավիներ հորդորքումով, և այլն:

Դարաբերությունները սունիների և շիանների միջև միշտ չեն, որ հաշտ են, երբեմն դրանք լարված բնույթ են կրում, որոնք հաճախ վերածվում են արյունալի բախումների:

Ծիա աղանդներ կան բոլոր մուսուլմանական երկրներում: Սակայն նրանք մեծամասնություն են կազմում Իրանում և Իրաքում, բավականին ուժեղ են նրանց դիրքերը նաև Եմենում, Բահրեյնում և Լիբանանում:

## V. ԸԱՐԻԱԹ ԵՎ ՄԱԶԼԱԲ

Իսլամի տեսության և պրակտիկայի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում շարիաթի և մազհարի վերաբերյալ դրույթները, որոնք կրոնական-իրավական հիմքի վրա կարգավորում են փոխհարաբերությունները իսլամական ումբայի ներսում:

## 1. Շարիաթ

Շարիաթ արաբերեն նշանակում է նպատակին տանող ճիշտ ուղի: Նա միջնադարում և նոր շրջանում, որոշ մուսուլմանական երկրներում անգամ մեր օրերում, փոխարինում էր քաղաքացիական և քրեական օրենսդրությունը և կատարում իրավադատական համապարփակ գործառույթ: Շարիաթը Կորանի, հադիսների, սովորույթի՝ աղաթի և ազանդույթների վրա հիմնված իրավական նորմերի և վարչի մի կոմպլեքս է, որն ընկած է մուսուլմանական երկրների իրավադատական համակարգի և կառուցների հիմքում: Եվ քանի որ նա բխում է Կորանից և հադիսներից, ուստի և համարվում է «Աստվածային օրենք»:

Շարիաթը հստակ կերպով սահմանում և կարգավորում է պաշտամունքային համակարգը, այսինքն Ալլահ-մուսուլման հարաբերությունները, մասնավորապես միաստվածության անվիճելի և պարտադիր ընդունումը, հավատքն առ Ալլահ, մզկիթ հաճախելը և աղոթքը, ծոնը, թլիւթումը և այլն, և դրանց հետ կապված ամրող ծիսակատարությունը: Նրանց անշեղորեն հետևելը պարտադիր է յուրաքանչյուր հավատացյալի համար: Նրանցից դույզն ինչ շեղվելը համարվում է և աններելի մեղք, և՝ ծանր հանցանք, շեղում «Աստվածային օրենքներից»: Նման հանցանք կատարողի առջև փակ են դրախտի դոները և նա ենթակա է ծանրագույն պատժի:

Շարիաթը և նրա վրա հիմնված իրավական նորմերը կարգավորում են հարաբերությունները ումնայի՝ իսլամական հասարակության ներսում, անհատի և պետության, անհատի և հասարակության, և միմյանց՝ անհատների միջև իրավական, քաղաքական, տնտեսական, սեփականատիրական, աշխատանքային, ամուսնության և ամուսնալուծության, ժառանգության, կրթության և դաստիարակության, քարոյականության և քաղում այլ ոլորտներում: Իսլամական հասարակությունում չկա մի բնագավառ, որն ենթակա չլինի շարիաթին և նրա նորմերին: Եվ կաղիթի, մուսուլմանական դատավորի, շարիաթի օրենքներին համապատասխան ընդունված վճիռները, անվերապահորեն ենթակա են կատարման:

Շարիաթը և նրա նորմերը շատ հստակ կերպով սահմանում են պատիժների ողջ կողմերս օիրնազանցների համար: Դրանք երեքն շատ խիստ են, նույնիսկ դաժան: Հատ երկրներում, օրինակ, շարիաթը մինչև օրս էլ բույլատրում է ամրոխին անբարոյականության մեջ մեղադրվող

կնոջը քարկոծելով սպանել: Որոշ երկրներում շարիաթի օրենքների համաձայն բույսատրվում է գողության համար հանցագործին ենթարկել մարմնական խեղնան: Պատմության մեջ արծանագրված են ավելի սահմանեցուցիչ դեպքեր: 1990-ական թվականներին Սառույան Արարիայում սառույան ընտանիքի անդամներից մեկը մեղադրվեց պետական հեղարծում կատարելու և թագավորին տապալելու փորձի մեջ: Շարիաթական դատարանը վճիռ արծակեց նրան գյխատելու վերաբերյալ և վճիռ կատարումը հանձնարարվեց նրա հարազատ հորդ, որը և այն ի կատար ածեց: Դա նշան էր այն բանի, որ հայրն ընդունում է այդ որոշման իրավացի լինելը և ոխ չի պահում սառույան ընտանիքի հանդեպ:

Պակաս խիստ չեն նաև այն պատիժները, որոնք կիրառվում են քաղաքական և տնտեսական բնույթի հանցանքների, կենցաղային վեճերի, արյան վրիժառության, ժառանգության և այլ հարցերում:

## 2. Մազհար

Մազհարը կամ ֆիքիր առանցքային տեղ է գրավում իսլամական իրավունքի տեսության մեջ: Նա իսլամագետ աստվածաբանների կողմից սահմանվում է որպես կրոնա-իրավական դպրոց կամ իսլամական դոգմաների մեկնաբանման յուրահատուկ ուղղություն:

Յուրաքանչյուր մազհար մշակում է Կորանի և սուննայի օգտագործման, նրա հիմնարար դրույթների մեկնաբանման իր սկզբունքները:

Մազհարի համար աղբյուր են հանդիսանում Կորանը, սուննան և հադիսները: Նա լայնորեն օգտագործում է կիյասը՝ դատողություն ըստ անալոգիայի, իջման՝ համայնքի անդամների հավաքական կարծիքը կամ համաձայնությունը, և ռայյը՝ ազատ անհատական կարծիքը կամ դատողությունը:

Մազհարի կամ ֆիքիրի մեկնաբանումներն ունեն ոչ միայն տեսական բնույթ, այլև գործնական նշանակություն: Մազհարի, նրա մեկնաբանությունների հիմնա վրա մշակվում են իսլամական հասարակության կյանքի նորմերը և հիմնադրույթների օգտագործման կերպը մուսուլմանական հասարակության ներսում: Ի հավելումն, մազհար-ֆիքիր տեսականորեն հիմնավորում է շարիաթը, մուսուլմանական հասարակությունում նրա անշեղ կիրառման պարտադիր լինելու հանգամանքը:

Մազհարի գործունեության դաշտը ներառում և նրա իրավասությունը տարածվում է պետական, կրոնական և քաղաքացիական հարա-

բերությունների, անծնական կյանքի, ընտանիքի, ժառանգության, պաշտամունքային և այլ հարցերի վրա: Եվ այդ բոլորը՝ կրոնական նպատակառդղվածության տեսանկյունից: Այսինքն, մուսուլմանի անծնական-ընտանեկան և հասարակական կյանքը պարտադիր կերպով պետք է կրոնական-իսլամական կողմնորոշում ունենա:

VIII–IX դարերում ուժեղ վեճեր էին ընթանում իսլամական աստվածաբանների միջև Վերոնշյալ հարցերի շուրջը: Խորը տարածայնություններն ի վերջո IX–X դարերում հանգեցրին տարրեր մազհարների՝ կրոնա-իրավական դպրոցների ծնավորմանը:

Սուլննինների մոտ ծնավորակեցին չորս մազհարներ՝ խանաֆիական, շաֆիիհական, մալիթիհական և խանբալական:

Իրենց դպրոցներն ունեն նաև շիաները, գեյդիհականները և խարիզիականները:

### 3. Հանաֆիական մազհար

Նրա հիմնադիրն է Աբու Հանիֆան (IX դ.): Այս մազհարը հատկապես տարածված էր Իրաքում, Խորասանում և Մավրաննահրում, իսկ հետագայում այն Օսմանյան կայսրությունում հայտարարվում է պետական կրօն: Այդ երկրներում կադինները՝ մուսուլմանական դատավորները, կարող էին դատել և դատական վճիռներ, ֆետվաներ ընդունել հանաֆիական մազհարի, հանաֆիական իրավունքի և իրավական նորմների համաձայն:

Հանաֆիական մազհարի բնորոշ գիծն այն էր, որ նա համեմատաբար ավելի հանդուրժողական էր մյուս մազհարների ջատագովների նկատմանը, մեծ տեղ էր հատկացնում աղաթին, որը նրան գրավիչ էր դարձնում հատկապես քոչվորների համար:

Հանաֆիականների հանդուրժողականությունը տարածվում էր նաև քրիստոնյաների և իրեաների վրա, և այդ առօմնով նույնպես նա շահեկանորեն տարրերվում էր մյուս մազհարներից: Եվ վերջապես հանաֆիական մազհարն ավելի լայնորեն, քան մյուս մազհարները, տեղ էր տալիս ռայլին և կիյասին:

#### 4. Չաֆիական մազհար

Աբու Աբդալլահ Մուսամմադ իբն Իղրիս աշ-Շաֆին (767–820) հանդիսանում է մեկ այլ կրոնա–իրավական դպրոցի հիմնադիր, որը նրա անունով կոչվում է շաֆիական մազհար: Նա ուսուվ ալ–Ֆիքիր՝ արմատների մեթոդով գիտական հիմնադիրն է, որի շնորհիվ հնարավոր եղավ տալ մազհարների ծզրիտ սահմանումները՝ նրանց արմատների և աղբյուրների տեսակետից:

Շաֆիական մազհարը և ինքը՝ աշ-Շաֆին, մեծ տեղ էին հատկացնում իջմային՝ ումնայի, խլամական համայնքի հավաքական կարծիքին և դա, եթե ոչ հակադրում, ապա դրանով փորձում էին սահմանափակել ռայի՝ ազատ անհատական կարծիքի սկզբունքի անսահմանափակ օգտագործումը, որը, շաֆիականների կարծիքով, հասնում էր չարաշահումների աստիճանի:

Այդ պատճառով ընդունված է ասել, որ շաֆիական մազհարը գրավում է յուրատեսակ միջին կամ կոլարումիսային դիրք խանաֆիական և մալիքիական մազհարների միջև, և իջմայի միջոցով սահմանափակում կիյասի՝ անալոգիայի և ռայի գործողության շառավիղը:

Շաֆիական մազհարը տարածված էր Սիրիայում, Բերմանում, Բուխարայում և մուսուլմանարնակ այլ վայրերում: XI–XII դդ. ուժեղ պայքար էր գնում մի կողմից շաֆիականների, իսկ մյուս կողմից՝ խանրայիականների միջև Բաղդադում, և խանաֆիականների միջև Սպահանում: Եթե այդ ժամանակ շաֆիական մազհարը դառնում է պետական մազհար Եգիպտոսում: Նա տիրապետող դիրքեր է գրավում նաև մուսուլմանական աշխարհի հոգևոր կենտրոն Սեքքայում:

Չնայած հետագա դարերում տեղի ունեցած փուլուխություններին, շաֆիական մազհարն այսօր էլ տիրապետող դիրքեր ունի Եգիպտոսում, Բահրեյնում, Ինդոնեզիայում, Արևելյան Աֆրիկայում և այլն: Նրա հետևորդներ կան Սիրիայում, հարավային Արաբիայում, Ջոդերի մեջ և այլն:

#### 5. Մալիքիական մազհար

Խլամի երրորդ՝ Մալիքիական մազհարի հայտնվելը կապված է Մաղնայի իմամ Մալիք իբն Անասի (708/715–795) անվան հետ: Նա հեղինակն է մի քանի հազար ավանդություններ պարունակող «Ալ–Մուվատ-

տա» հաղիսների արժեքավոր ժողովածուի, որը մեծ ճանաչում ուներ մուսուլմանական աշխարհում:

Մալիթիական մազհարը տարբերվում է մյուս երեք մազհարներից նախ և առաջ իր անգիրում նվիրվածությամբ ավանդույթներին, համարելով դրանք նախնական մաքուր և անաղարտ վիճակում պահպանած տեղեկությունների աղբյուր:

Այս մազհարի Երկրորդ քնորոշ գիծը կայանում է նրանում, որ նա մերժում է մուսուլմանների սուրբ գոքի՝ Կորանի հայեցողական մեկնաբանությունը:

Եվ, վերջապես, մալիթիական մազհարն ընդունում է տրամաբանական եզրակացությունները և դատողություններն ըստ կիյասի՝ անալոգիայի:

Մալիթիական մազհարը տարածված էր Սաղինայում և Յիջազում, իսկ IX դ. սկսած նաև Սաղրիբում՝ Արաբական Արևմուտքում–Թունիսում, Ալժիրում, Մարոկկոյում, ինչպես նաև Աֆրիկայի խլանադավան ժողովուրդների շրջանում: Խսպանիայում արաբական տիրապետության շրջանում այս մազհարը համարվում էր պետական դավանանք:

### 6. Հանրալիական մազհար

Խանրալիական մազհարը հանդիսանում է խլանական չորրորդ կրոնա–իրավական դպրոցը: Նրա հիմնադիրն է իմամ Ահմադ իբն Հանբալը:

Մուսուլմանական ուղմները՝ աստվածաբանները, այս մազհարի հետևորդներին՝ հանրալիներին, համարում են ամենանոլեանդ մուսուլմաններ: Հանրալիական մազհարը Կորանը, խլանական դոգմաները, ինչից եկող ավանդույթներն ընկալում է բառացիրեն, այնպես, ինչպես նրանք հայտնվել և ծնակերպում են գտել խլամի ծագման շրջանում: Հավատարիմ այդ սկզբունքին, նա մոլեռանդորեն դեմ է և չի ընդունում որևէ նորամուծություն: Նա կանգնած է շարիաթի նորմերը և մուսուլմանական ծիսակատարություններն անշեղորեն կատարելու անզիջում դիրքերում:

Հանրալիական մազհարը կտրուկ դեմ է Կորանի և հաղիսների ազատ մեկնաբանությանը: Ալգրնական շրջանում հանրալիականներն անգամ դեմ էին կիյասին և իջմային: Միայն հետագայում նրանք համաձայնվեցին խիստ սահմանափակ ծևով օգտագործել կիյասի և իջմայի

սկզբունքները մեկնությունների և ֆետվանների՝ վճրոնների արծակման պարագայում: Սակայն այստեղ նույնպես հանրահական մագիստրուցարերեց յուրահատուկ մոտեցում: Նա ժխտում է իշխայի՝ հավաքական համաձայնության սկզբունքի ազատ օգտագործումը և ընդունում իջնան որպես միայն և միայն Սուհամնադ մարզարեի անմիջական գինակիցների միաձայն կարծիքը, գրկելով այդ իրավունքից նրանց հետագա աշակերտներին և կրոնական առաջնորդներին:

Դանբալիական մագիստրուց X-XV դդ. մեծ տարածում ուներ ամբողջ նույնության աշխարհում: Նա տարածված էր Իրանում, Արևիայում, Պաղեստինում և այլ Երկրներում: Սակայն Օսմանյան կայսրության բարձրացումով նրա ազդեցությունը թուլանում է: Նա իր ազդեցությունը պահպանեց Դիջազում և Նաջդում:

Դանբալիական մագիստրի սկզբունքների հիման վրա հետագայում ծևավորվեց վահարիզմը, որն այսօր տիրապետող է Սաուդյան Արաբիայում և նրա աջակցությամբ փորձ է արվում նա տարածել իսլամական այլ երկրներում:

## VI. ԻՍԼԱՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Արաբների կողմից ստեղծված և նրանց կրոն հռչակված իսլամը պատմական համեմատաբար կարծ ժամանակաշրջանում արագորեն տարածվեց աշխարհով մեկ:

### 1. Իսլամի վերածումը համաշխարհային կրոնի

Իսլամը արաբների ազգային կրոնից վերածվեց մի նոր համաշխարհային կրոնի, որն այսօր իր կանաչ դրոշի ներքո համախմբել է տարբեր երնիկական խնդերի, ազությունների և ռասաների պատկանող ավելի քան մեկ միլիարդ մարդ Ասիայում, Աֆրիկայում, ինչպես նաև Եվրոպայում և Ամերիկայում: Արաբներից հետո իսլամն ընդունեցին պարսիկները, թուրքերը և թրքախոս բոլոր ժողովուրդները, քրիստոնեաները, ինդոնեզիացիները, ալբանացիները, աֆրիկյան տարբեր ցեղեր և ժողովուրդներ: Նրանց թվաքանակն արագորեն աճում է շնորհիվ քարծր ծննդաբերության, որը խրախուսվում և թագալերվում է իսլամի կողմից: Դա ազդում է մեր մոլորակի մարդագրական հաշվեկշռի վրա, փոխելով

այն հօգուտ խլամաղավան ժողովուրդների: Եվ զարգացման այդ միտումը հավանաբար դեռ երկար ժամանակ կպահպանվի:

Խսլամի առաջացումը և տարածումն իր հետ թերեց «ումնա ալ-խւլամիյա»՝ «խլամական ազգի» հասկացողությունը: Դամածայն այդ ուսումնքի, բոլոր նրանք, բոլոր այն ժողովուրդները, որոնք դավանում են խլամ, անկախ նրանց ազգային, ռասայական, մարդաբանական պատկանելությունից, լեզվից, մաշկի գույնից և բնակավելու վայրից, կազմում են մի ազգ, որոնց շաղկապատճեն միևնույն հավատով, ընդհանուր նշակութային ժառանգությամբ, շարժվում են միևնույն ուղղությամբ և իրականացնում են մեկ առաքելություն անքորդ աշխարհում: Նրանք որպես մեկ ժողովուրդ մերժում են միանալ կամ դաշնակցել բոլոր այլ խմբավորումներին և զաղափարախոսություններին, ինչպես նաև անձնատուր լինել պառակտող, բաժանարար ազդեցություններին:

## 2. Խլամական պետությունների կազմավորումը

Խսլամի տարածումը մեծապես խթանեց միջին դարերում խլամական պետությունների կազմավորումը, առաջին հերթին Ասիայում և Աֆրիկայում: VII դ. ասպարեզ իջավ Արաբական խալիֆայությունը, որը շուտով վերածվեց մի անծայրածիր կայսրության: Խսլամական հզոր պետություններ հայտնվեցին Արևելյան Ասիայի տարածքներում, ինչպես Չինգիս խանի և նրա հետնորդների մոնղոլական կայսրությունը, ապա Լեռն Թենուրի պետությունը Միջին Ասիայում, օղուզների Օսմանյան կայսրությունը, շահական Պարսկաստանը և այլ մեծ ու փոքր մուսուլմանական պետական կազմավորումներ:

XX դ. նոր թափ առավ մուսուլմանական նոր պետությունների կազմավորման պրոցես: Այսօր աշխարհի մոտ 190 պետություններից 58-ը խլամական պետություններն են, որից 18-ը՝ արաբական:

Խսլամական պետությունները հիմնականում գտնվում են Ասիայում և Աֆրիկայում: Դրանց թվին են պատկանում արաբական երկրները՝ Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, Սիրիան, Իրաքը, Հորդանանը, Քուվեյթը, Արաբական Սիացիալ էմիրությունները, Լիբիան, Թունիսը, Մարոկկոն և այլն, Իրանը, Թուրքիան, Ինդոնեզիան, Բանգլադեշը, Պակիստանը, Աֆղանստանը, Մալայզիան, Նախկին խորհրդային միջինասիական հինգ հանրապետությունները, Ադրբեյջանը և այլ երկրներ Ասիայում, Գանան, Գվինեան, Սենեգալը, Գամբիան, Սոմալին, Զիրուտին, Մալին,

Նիգերը, Չաղը և մի քանի այլ Աֆրիկայում, Ալբանիան, Բոսնիան և Հերցեգովինան և Դարձյալ Թուրքիան Եվրոպայում:

Իսլամական պետությունների կազմավորումով իսլամը ճեռք բերեց ազդեցության հզոր լծակներ իսլամի ազդեցությունը և դիրքերն աշխարհում ամրապնդելու ուղղությամբ: Դա բնորոշ էր իսլամին ոչ միայն միջին դարերում, այլև մեր օրերում, երբ տեղի է ունենում իսլամի քաղաքականացում և քաղաքականության իսլամացում:

Իսլամական պետությունները և ընդհանրապես իսլամական գործունք կարևոր դեր են խաղում ժամանակակից միջազգային հարաբերություններում, աշխարհի քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում:

## Գլուխ երրորդ

### ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՑՈՒԹՅՈՒՆԸ

#### I. ԱՐԱԲԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

##### 1. Մուհամմադը և արաբական ուժնայի վերածումը արաբական խլամական աստվածապետության

Տարբեր արաբական ցեղերի և ցեղային միությունների և նրանց տնօրինության տակ գտնվող տարածքների միավորումը և արաբական միասնական կենտրոնացված պետության ստեղծումն անխզելիորեն կապված է Մուհամմադ մարգարեի անվան և գործունեության հետ: Պատմական նշանակություն ունեցող այդ գործընթացի հիմքում ընկած են մարգարեի տեսակետները, խլամի սկզբունքները և Կորանի դրույթները:

Նրա գործունեության և արաբական հասարակության խլամացման շնորհիվ, արաբական ուժնան, այսինքն համայնքը, աստիճանաբար վեր է ածվում պետության, որի գաղափարական հիմքը կազմում էր միաստվածության վրա խարսխված խլամը:

Կենտրոնացված պետության գաղափարն ուղղակի բխում է բազմաստվածության ժիւման և միաստվածության կենտրոնաձիգ գաղափարից, որ հետևողականորեն կիրառում էր մարգարեն:

Մուհամմադ մարգարեն սկզբնական շրջանում չուներ պետական կառավարման որևէ փորձ և անհրաժեշտ գիտելիքներ: Նա դրանք ծերը էր բերում աստիճանաբար, շատ հաճախ ելնելով կյանքի փորձից: Այդ հարցում նրա համար շատ օգտակար եղավ այն հանգամանքը, որ 622 թ. փախուստ տալով Սեքրայից և հաստատվելով Մադինայում, նա գլխավորեց այնտեղ ծեավորված ումման և սկսեց իրականացնել, թեկուզ

և սաղմնային ծնով, պետական կառավարման ֆունկցիաներ: Այդ նախնական փորձը Մուհամմադը հաջողությամբ օգտագործեց, երբ նա իրականացրեց արաբների իսլամացման, ցեղերի միավորման և ուժնայի ընդլայնման իր կրօնական և քաղաքական ծրագրերը:

Սեքքայից հետո մեկը մյուսից հետևից իսլամը սկսեցին ընդունել Արաբիայի բոլոր հեթանոս ցեղերը: Նրանց պատվիրակություններն այցելում էին մարզարեին և նրան հայտնում իսլամն ընդունելու և նրան հնազանդվելու մասին: Այդ շարժումը հատկապես մեծ թափ ստացավ հիջրայի 9 թվականին, այսինքն մեր թվականության 630 թ., որը պատմության մեջ նույն է «պատվիրակությունների տարի»:

Սակայն իսլամացումը և կենտրոնացված պետության ստեղծումը հեշտ ու խաղաղ չէր ընթանում: Տեղերին և ցեղապետերին իր կողմը գրավելիս, մարզարեն դրսորեց քաղաքական գործին վայել քարծ հատկանիշներ և դիվանագիտական մեծ հնտություն: Նա ոմանց սիրաշահում էր զանազան խոստումներով, ոմանց նվերներ էր մատուցում, իսկ առավել անզիջողների վրա, ի հարկին, բացահայտ ճնշում գործադրում: Ընորիկվ այդ հետևողական քաղաքականության ուժման աստիճանաբար վերածվում է պետության:

Սկսվում է, ժամանակակից տերմինալոգիայով ասած, պետական բյուրոկրատական ապարատի ստեղծումը: Մուհամմադը մտցնում է հարկի և հարկահավաքի ինստիտուտը, որը մինչ այդ ընդհանրապես բացակայում էր արաբական իրականության մեջ: Կարկահավաքը դառնում է նորաստեղծ արաբական պետական ապարատի առաջին պետական պաշտոնյան:

Սակայն հարկային ինստիտուտի նորամուծությունը հեշտությամբ չհաստատվեց: Նա առաջացրեց բազմաթիվ ցեղերի դժգոհությունը, որոնք իրամարդում էին հարկ վճարելուց, այն դիտելով ստորացուցիչ և վիրավորանք իրենց արժանապատվությանը: Այս հոդի վրա սակավ չին ուզումական ընդհարումները ցեղերի և հարկահավաքների միջև: Սակայն այս հարցում Մուհամմադը հետևողական էր և նա չէր խորշում ցեղերի դիմադրությունը ուժով ճնշելու քայլերից:

Այս բոլորի արդյունքում Մուհամմադը ոչ միայն հաստատեց Ալլահի առաքյալի և վերջին մարզարեի իր կարգավիճակը, այլև դարձավ Արաբիայի ամենահեղինակավոր և անառարկելի քաղաքական առաջնորդը:

Մուհամմադի հիմնած պետությունը վերցեղային համայնք—պետություն էր, որի շրջանակներում ապահովվում էր ցեղերի գոյությունը և նրանց որոշակի դերն ու կշիռը պետության ներսում, որի հետ միշտ էլ հաշվի են նատել արար կառավարողները:

Մուհամմադը չիասցրեց ստեղծել բազմաճյուղ պետական կառավարման համակարգ, համապատասխան և հստակ ֆունկցիաներով: Դա արեցին նրա հաջորդները: Սակայն նա դրեց հիմքը մի պետության, որն ընդունված է համարել թեոկրատիկ կամ աստվածապետական: Մուհամմադը իր ծեռքում էր կենտրոնացրել և մարմնավորում էր պետական, կրոնական, քաղաքական, ռազմական և դատական ողջ իշխանությունը: Պետական կառավարման այդ ծեր դարձավ օրինակելի և փոխանցվեց նրա հաջորդ կառավարողներին՝ խալիֆաներին:

Մուհամմադ մարգարեն վախճանվեց 632 թ., Սադինայում: Նա թաղված է իր անունը կրող այդ քաղաքի «Սասդիդ ան-Նաբի», «Մարգարեի Մզկիթում»:

## 2. Առաջին չորս բարեպաշտ խալիֆաները

Մուհամմադի մահը ցնցեց ողջ Արարիան, քոլոր հավատացյալներին և մեծ շփորություն առաջացրեց նրանց շարքերում: Ո՞վ պետք է փոխարիներ նրան և դառնար Արարիայի հոգնոր և քաղաքական առաջնորդը: Այս հարցը մտահոգում էր քոլորին:

Դարձը բարդանում էր նրանով, որ մարգարեն իշխանության փոխանցման հարցում չէր թողել որևէ բանավոր կամ գրավոր կարծիք: Ուրեմն նրա հետնորդներն իրենք պետք է լուծնին այդ կնքուտ հարցը: Ուստի և պատահական չէ, որ հայտնվեցին «գահի» մի շարք հավակնորդներ, որոնց միջև ծավալվեց սուր պայքար: Դադրող դուրս եկավ Արու Բաքրը:

**Արու Բաքրը** Մուհամմադի ամենանվիրված զինակիցներից էր, որն առաջիններից մեկը անվերապահորեն ճանաչեց Մուհամմադի աստծո առաքյալ լինելը. ընդունեց խլամը և պաշտպան կանգնեց նոր կրոնին և մեծապես նպաստեց նրա տարածմանը: Դրա համար Մուհամմադը նրան բարձր էր գնահատում: Պատահականություն չէր, որ վերջին շրջանում, երբ մարգարեն հիվանդ էր, ֆիզիկապես տկար և ի վիճակի չէր հավատացյալների աղոթքը ղեկավարել Սադինայում, նա շատ հաճախ մզկիթում աղոթքի ղեկավարումը հանձնարարում էր հենց Արու

Բաքրին, մի հանգամանք, որը բարձրացնում էր նրա հեղինակությունը հաշու մուսուլմանների: Նշենք նաև, որ Արու Բաքրը Սուհամմադի աներն էր. նրա Այշա դուստրը մարզարեի ամենասիրելի կինն էր և զգալի ազդեցություն ուներ նրա վրա:

Արու Բաքրից սկսած, Արարիայում մտցվեց կառավարման նոր՝ խալիֆայի ինստիտուտը, իսկ պետությունը կոչվեց խալիֆայություն:

Խալիֆա բառացիորեն նշանակում է փոխանորդ, փոխադիմուու: Տվյալ դեպքում նրա քաղաքական բովանդակությունը նշանակում է աստծո առաջալի, այսինքն Մուհամմադի փոխանորդը լինելը: Արարեցն հենց այդպես էլ հորջործվում է. «Խալիֆա ռասուլի-լ-Ղահ:»

Արու Բաքրը դարձավ առաջին խալիֆան և երկիրը կառավարեց ընդամենը երկու տարի՝ 632–634 թթ.:

Խալիֆան արդեն Սուհամմադի կողմից հաստատված ազանդույթի հանճանակ հանդիսանում էր պետության հոգեսոր և աշխարհիկ առաջնորդը:

Արու Բաքրը և նրան հաջորդած ևս երեք խալիֆաները՝ Օմանը (634–644), Օսմանը (644–656) և Ալին (656–661), պատմության մեջ մեջ են որպես բարեպաշտ, արդարամիտ կամ ուղղահավատ խալիֆաներ՝ ալ-խուլաֆա առ-ուաշխորւ:

Արու Բաքրն անմիջապես բախվեց վերին աստիճանի դժվար և վտանգավոր խնդրի հետ: Շատ ցեղեր, առնելով Սուհամմադի մահվան բորք, հայտարարեցին իսլամից իրենց հրաժարվելու և կրկին հերանությանը վերադառնալու մասին: Իսկ որոշ ցեղեր իսլամին իրենց հավատարմությունը պայմանավորում էին հարկերը վերացնելու հետ: Այս բոլորը վկայում էր այն նասին, որ իսլամը դեռ խոր արնատներ չէր զցել արարական հասարակության մեջ: Դասկանալի է, որ իսլամաներժ շարժումը լուրջ վտանգ էր նորահաստատ խալիֆայության հանար և պահանջում էր եռանդուն հակամիջոցներ:

Արու Բաքրը հստակ պատկերացնում էր ստեղծված վտանգի կործանար հետևանքները և արագորեն ծեռնարկեց անհրաժեշտ քայլեր իրադրությունը կայունացնելու համար: Նա կարողացավ իր շուրջը համախմբելով հավատարիմ կրոնական և գինվորական գործիչների, որոնք մեծ հեղինակություն էին վայելում, ծնշել ըմբուստ ցեղախմբերի, հատկապես քոչվոր անասնապահ բեղվինների ընդվզումները: Իսկ բազմաթիվ այլ դգործ ցեղապետների հաջողվեց համոզել հրաժարվել իրենց պահանջներից և կրկին վերադառնալ իսլամի կանաչ որոշի ներ-

քո: Դրա շնորհիվ իրադրությունն երկրում կայունացավ, իսկ իսլամի ռիդրերն էլ ամրապնդվեցին:

Դրանում է կայանում առաջին բարեպաշտ խալիֆայի պատմական ծառայությունը իսլամի և արաբական պետության հանդեպ:

Նրա մյուս ծառայությունը կայանում է նրանում, որ նրա կառավարման օրոք սկսվեց իսլամի հաղթարշավը: Իսլամը դուրս գալով Արարիայից սկսվեց տարածվել այլ երկրներ, առաջի հերթին հարևան երկրները:

Եվ, վերջապես, Արու Բաքրը, գիտակցելով իսլամի առանձնահատուկ և առաջնային կարևորությունը պետության կայացման և ներքին կայունության հաստատման գործում, և հաշվի առնելով նոր կրոնի տարածման խիստ կարևորությունը, կարգադրեց հավաքել, ի մի բերել և կազմել Սուլամանադի կողմից տարրեր ժամանակներում կատարած աստվածային հայտնությունների մատյանը: Նա հասկանում էր, որ պետք էր շտապել, քանի ներ կենդանի էր Սուլամանադի կողմնակիցների առաջին սերունդը, որն անգիր հիշում էր մարգարեի հայտնությունները, տարրեր առիթմերով նրա կատարած մեկնարանությունները և ասույթները:

Նրա օրոք կազմած այդ մատյանը հետագայում դրվեց խալիֆա Օսմանի կողմից կանոնակարգված կորանի հիմքում:

**Խալիֆա Օմարը:** 634 թ. մահացած Արու Բաքրին որպես խալիֆա փոխարինեց Օմարը: Այս երկրորդ բարեպաշտ խալիֆան նույնպես պատկանում էր Մուսամանադի ամենամերձավորների խմբին, որոնք իսլամի ծագման արջալուսին և ծնավորման ընթացքում բոլորանավեր թև և թիկունք կանգնեցին նորընծա մարգարեին, ապահովեցին նրա հաղթանակը և իսլամի հաղթարջավը:

Նրա կառավարման տաս տարիների ընթացքում (634–644 թթ.) զգալիորեն առաջադիմեց իսլամական պետությունը՝ իրավական-կառուցվածքային առումով: Մասնավորապես սահմանվեցին և իրավական ուժ ստացան խալիֆայության վարչա-իրավական հաստատությունները, այդ բվում և նի այնպիսի կարևոր բնագավառ, ինչպես հարկային համակարգը: Դա կարևորվում էր նաև այն առումով, որ Օմարի կառավարման տարիներին խալիֆայությունը սկսել էր վերածվել կայսրության և հպատակ կամ նվաճված երկրների կառավարման գործում առաջնային նշանակություն ունեն հարկահավաքությունը որպես խալիֆայության տնտեսական և ռազմական հզորության աղբյուրներից մեկը:

Օմարի կառավարման շրջանում, 638 թ., Երուսաղեմն անցավ խալիֆայության տիրապետության ներքո և դարձավ նրա կարևոր սրբակենտրոններից մեկը:

**Օսման իրն ալ-Աֆֆաս:** Բարեպաշտ չորս խալիֆաների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում երրորդ խալիֆա Օսման իրն ալ-Աֆֆաս, որն անմիջապես հաջորդեց Օմարին 644 թ. և կառավարեց երկիրը մոտ 12 տարի, մինչև 656 թ.: Նա, ինչպես իր երկու նախորդները, Սուլհամադի մերձավորագույն համախոհներից և աջակիցներից էր և իր գործունեությամբ ապացուցել էր իր նվիրվածությունը մարզարեին և հվամին:

Օսմանն ամուսնացած էր Մուհամմադի դստեր՝ Ռուկայիի հետ, իսկ վերջինիս մահվանից հետո՝ մարզարեի հաջորդ աղջկա՝ Ուման Կուլսումի հետ: Մարզարեին փեսա լինելը, անշուշտ, հատուկ փայլ էր տալիս և ամրապնդում նրա դիրքերը ումնայի ներսում և նույնականական աշխարհում: Պատահականություն չէ, որ նրան անվանում էին Չու-ն-Նուրայն, այսինքն Տեր Երկու Լուսատուների, նկատի ունենալով այն հանգամանքը, որ մարզարեի երկու դուստրերը եղել են նրա կինը:

Ենթունազարդ Օսմանի, որը խալիֆա ընտրվեց 70 տարեկան հասակում, ամենամեծ, կարելի է ասել պատմական ծառայությունը կայանում է նրանում, որ նրա հրամանով և անմիջական հսկողության ներքո, ստեղծվեց նույնական ներքի սուրբ գրքի՝ Կորանի վերջնականորեն կանոնակարգված և միասնական տեքստը: Կորանի այդ տեքստը, որը ներժում և անօրինական է համարում բոլոր այլ տարրերակները, անփոփոխություն է մինչև օրս:

Օսմանի ժամանակ արաբական խալիֆայությունը, դեռևս Աբու Բաքրի ժամանակ սկսված նվաճումների արդյունքում, որի մասին կխոսվի ստորև, արդեն դարձել էր արաբական կայսրություն: Դա պահանջում էր կայսրության հատվածների կառավարման հանապատասխան համակարգ: Խալիֆա Օսմանը մտցրեց և լայնորեն կիրառեց խալիֆայի տեղապահների կամ փոխարքա-կառավարիչների ինստիտուտը: Նա տեղերում մարզարեի և իր մերձավորներից, արաբական ցեղային ավագանու շարքերից տեղապահներ կամ կուսակալներ նշանակեց բոլոր նվաճված երկրներում:

Այդ քայլով նա ոչ միայն ուզում էր իր համար հուսալի հենարան ստեղծել տեղերում, այլև ավելի կենտրոնաձիգ դարձնել խալիֆայությունը:

Սակայն դա պարունակում էր մի վտանգ: Բանի որ տեղապահները երևելի մարդիկ էին, մեծահրուստ և պատկանում էին իսլամն ընդունած և տարածած առաջին սերնդին, ապա նրանք գործում էին անկախ և միշտ չեն, ոչ հաշվի էին առնում Մադինայում նստած խալիֆայի հրամանները. Կարգադրությունները և ցանկությունները: Դա հանդիսանում էր, անշուշտ, երկպառակության և հակամարտության աղբյուր, մանավանդ, որ այդ պվազանու ներկայացուցիչներից շատերը իրենք կարող էին հավակնել խալիֆայի գահին: Բացի դրանց, նրանց դուր չեր գալիս պետական կառավարման բոլոր լժակներն իր ծեռքում կենտրոնացնելու Օսման խալիֆայի քաղաքականությունը:

Եվ, իրոք, 650-ական թվականներին այդ ներքին հակասությունները վերածվեցին բացահայտ պայքարի իշխանության համար, որի առաջին զոհերից մեկը դարձավ խալիֆա Օսման իրն ալ-Աֆֆան: Նա սպանվեց 656 թ. Մադինայում, իր տանը, Եգիպտոսից և Իրաքից Մադինա ներխուժած մուսուլման ապստամբների կողմից:

Սակայն երրորդ բարեպաշտ և Կորանը կանոնակարգած խալիֆայի սպանությունը երկրին հանդարտություն չըերեց: Մուսուլմանական ուժմայի տարբեր առաջնորդների շուրջը համախմբվել էին մինչանց հակադիր ուժեր և ստեղծվել էին հակառակորդ ուժային կենտրոններ: Սկսվել էր բացահայտ պայքար, ըստ եռաթյան քաղաքացիական պատերազմ, իշխանության համար:

**Ալի իրն Արի Տալիբ:** Ողբերգական վախճան ունեցավ նաև չորրորդ բարեպաշտ խալիֆա Ալի իրն Արի Տալիբը, որը խալիֆա հոչակվեց 656 թ. Նա Մուհամմադ մարգարեի հորեղբորորդին էր և փեսան՝ անուսնացած էր նրա դստեր՝ Ֆարիմայի հետ:

Ալին խալիֆայությունն ստանձնեց շատ ժանր ժամանակներում, երբ արդեն խալիֆայությունն ընկղմվել էր քաղաքացիական պատերազմի մեջ: Ուստի նրա գլխավոր խնդիրը հաշտության հասնելն էր հակառակորդ կողմերի միջև, երկրում խաղաղության հաստատումը և այդ ուղիով իր դիրքերի և իշխանության ամրապնդումը: Սկզբնական շրջանում թվում էր, թե նա կարող էր լուծել այդ դժվարագույն խնդիրը:

Երբ նա հոչակվեց խալիֆա, ապա նրա պաշտպանությանը հանդես եկավ առաջին հերթին Եգիպտոսը, իսկ ապա նաև Իրաքը և շուտով նրանց միացան Մադինան և Մեքքան: Դա, անշուշտ, մեծ աջակցություն էր Ալիին:

Սակայն շուտով պարզվեց, որ Ալին ունի քավականին լուրջ հակառակորդներ, որոնք հրաժարվում էին նրան ճանաչել որպես օրինական խալիֆա: Նրա դեմ բացահայտորեն հանդես եկավ սպանված խալիֆա Օսմանի հորեղբորորդին, Սիրիայի կառավարիչ Մուավիան, որը պատկանում էր Օսմայյա հարուստ և ազդեցիկ ցեղախնմքին:

Մուավիային միացավ և Ալիի դեմ հանդես եկավ Մուհամմադ մարգարեի կինը՝ Այշան, որը, ինչպես նշվել է, առաջին բարեպաշտ խալիֆա Աբրի դուստրն էր: Այդ հանգանանքը նրան տալիս էր հատուկ հեղինակություն և ազդեցություն խլամական ունմայում:

Մուավիայի և Այշայի շուրջը համախնճվեցին նաև այլ երևելի և ազդեցիկ հոգևոր ու քաղաքական գործիքներ:

Միա մի կողմից Ալիի և նրա կողմնակիցների, իսկ մյուս կողմից Մուավիայի, Այշայի և նրանց կողմնակիցների միջև սկսվեց պայքար հշխանության համար, որի հետևանքով առաջացավ ոչ միայն քաղաքական, այլև կրոնական–դավանական պառակտում: Այդ պահից սկսած խլամք բաժանվեց ալիականների կամ շիաների, և սուննիների:

Քանի որ կողմերից և ոչ մեկը չէր ցանկանում զիջել և պատրաստ էր գնալ մինչև վերջ, ուստի և քաղաքական–դավանական հակամարտությունը վերածվեց ռազմականի:

Սկզբնական շրջանում հաջողությունն ուղեկցում էր Ալին, որը տարավ մի քանի ռազմական հաղթանակներ, որոնցից հիշարժան էր 656 թ. հարավային Երաբուն, Բասրայի մոտ կայացած «ուղտերի ճակատամարտը»: Սակայն դա դեռևս վերջնական հաղթանակ չէր: Մուավիան, որի մարդկային, տնտեսական և ռազմական պահուստային ուժերն ավելի շատ էին, քան ալիականներինը, պատրաստվում էր վճռական մարտի:

Ալին նույնպես պատրաստվում էր վճռական մարտի: Նա իր մայրաքածը Սադինայից տեղափոխեց Իրաք, ալ-Կուֆա, որն իր համար ավելի հուսալի միջավայր էր և որտեղ նա ուներ ավելի շատ պաշտպաններ, քան թե նրա նկատմամբ թշնամաբար տրամադրված Սիրիայում:

Վճռական ճակատամարտը նրանց միջև տեղի ունեցավ 657 թ. Սիրիայի տարածքում, Սիֆինի մոտ, Եփրատի աջ ափին: Պատերազմի թեժ պահին, երբ հաղթանակը կարծես թե թեքվում էր Ալիի կողմը, նրա հակառակորդները դիմեցին մի խորածանկ քայլի, որն, ըստ եռյան, ծուղակ էր Ալիի համար: Ծանր դրության մեջ հայտնված Մուավիայի զորքերը հանկարծ իրենց նիզակների վրա բարձրացրին Կորանի

թերթիկները: Դա իսլամական ավանդույթի և Կորանի դրույթների համաձայն նշանակում էր, որ նրանք կոչ են անում հարցը լուծել խաղաղությամբ՝ Կորանի սկզբունքների հիման վրա: Այխն որոշ Վարանումից հետո, ընդունեց այդ առաջարկությունը և հարցի լուծումը հանձնվեց իսլամական միջնորդական դատարանի քննարկմանը: Դատարանում Սույավիայի ներկայացուցիչը կարողացավ ապացուցել իրենց ճշնարտացի լինելը և հասավ այն բանին, որ դատարանում Ալիի ներկայացուցիչ Արու Սուսան համաձայնվեց տապալել Ալիին որպես խալիֆա:

Այսպես Ալին իր ծեռքից բաց թողեց հաղթանակը: Ստեղծված պայմաններում նրա համար դժվար էր վերսկսել պատերազմական գործողությունները, քանի որ դա կնշանակեր գնալ ընդդեմ Կորանի և իսլամի սկզբունքների:

Կար նաև մեկ այլ պատճառ: Եթե Ալին համաձայնվեց դադարեցնել ռազմական գործողությունները և հարցի լուծումը փոխանցել միջնորդական դատարանին, նրա շատ կողմնակիցներ, համաձայն չինելով նրա այդ քայլի հետ, լքեցին նրան և հեռացան պատերազմի դաշտից, որը խիստ թուլացրեց Ալիին: Դրանից հետո նա այլևս ի վիճակի չէր մղել լուրջ պատերազմական գործողություններ, մանավանդ որ նրանից հեռացածները, որոնց թիվը հասնում էր մի քանի հազարի և որոնք հորջորգվեցին խարիզիներ կամ խարիզիականներ, շարունակելով պայքարը Մուսավիայի դեմ, սկսեցին պայքարել նաև իրեն՝ Ալիի դեմ: Չենց խարիզիներից մեկի հասցրած հարված հարվածից, 661 թ., Ալին սպանվեց ալ-Կուֆայի մզկիթը մտնելու պահին:

Այսպիսով, չորս բարեպաշտ խալիֆաներից երկուսը՝ Օսմանը և Ալին, սպանվեցին իրենց հակառակորդների կողմից: Դա ծառայեց որպես նախադեալ և հետագա շրջանում մեկ անգամ չէ, որ այդ մերոդը կիրառվում է արաբական խալիֆայությունում քաղաքական հարցերը լուծելու համար:

## II. ԱՐԱԲԻԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ VII ԴԱՐԻ 30-50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Առաջին չորս խալիֆաները հիմնականում կարողացան իրագործել արաբական կենտրոնացված պետություն ստեղծելու Մուհամմադի գաղափարը: Նրանց ծառայությունը կայանուն է նրանում, որ նրանք

Իհմնեցին պետական կառավարման համակարգ և կանոնակարգեցին Կորանը, որով ստեղծվեցին լուրջ նախարդյալներ իսլամը Արարիայից դուրս գալու և այլ երկրներ տարածվելու համար:

Դրա հետ զուգահեռաբար առաջին չորս քարեպաշտ խալիֆաների ժամանակ սկսվեցին արարական նվաճումները և արարական խալիֆայությունը կայսրության վերածվելու գործընթացը, որն իրականացվում էր իսլամի դրոշի ներքո:

### 1. Բյուզանդիայի պարտությունը և Սիրիայի, Պաղեստինի ու Լիբանանի միացումը խալիֆայությանը


Արարական նվաճումների ճանապարհին կանգնած էին երկու եզրոր պետություններ՝ Բյուզանդական կայսրությունը և Սասանյան Իրանը, որոնց տիրապետության ներքո էին գտնվում Մերձավոր և Սիրին Արևելքի համարյա բոլոր երկրները: Ուստի և բախումն արարական խալիֆայության և այդ երկրների միջև անխուսափելի էր:

633 թ. արաբները սկսեցին Պաղեստինի, Սիրիայի և Լիբանանի նվաճումը, որոնք գտնվում էին բյուզանդական տիրապետության ներքո: Արարական երեք զորախումբ, մոտ ինը հազար մարդ, մտավ Պաղեստին և Մեռյալ ծովի հարավային հատվածում գտնվող Արաբի Արաբի մոտ տեղի ունեցած առաջին ճակատամարտում ջախջախնեց բյուզանդացիներին: Բյուզանդական զորքերի մնացորդները նահանջեցին և դիրքեր գրավեցին Մեռյալ ծովից արևմուտք գտնվող Աֆնադայն բնակավայրի մոտ: Այստեղ 634 թ. եռվկիսի 30-ին կայացավ երկրորդ ճակատամարտն արարական և բյուզանդական զորքերի միջև, որը դարձյալ ավարտվեց արաբների հաղթանակով:

Արարական զորքերի երկու հաղթանակները բյուզանդացիների նկատմամբ բարձրացրեցին նրանց բարոյական ոգին և հավատ ներշնչեցին սեփական ուժերի նկատմամբ:

Եարունակելով իրենց առաջխաղացումը երկրի խորքը, արաբները մոտեցան Ղանակոսին և կանգ առան նրա պարհապնդերի առջև: Նրանք դեռևս ծանոթ չէին ամրացված և պարսպապատված քաղաքաների գրավման ռազմական արվեստին և, բնականաբար, գուրկ էին համապատասխան ռազմական միջոցներից: Այդ պաօճառով էլ Ղանակոսի պաշարումը տևեց վեց ամսից ավելի: Միայն 635 թ. սեպտեմբերին արաբներին հաջողվեց մտնել Ղանակոս: Ղրանում մեծ դեր խաղաց այն

III Ապահով է առաջարկած աշխատավայրերի վերաբերյալ գործ



### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾ

Հայաստանի Հանրապետություն, Սամարացան  
պատվարակություն, Խոշոր ռոտ. 622-634 հ.

Հայաստանի Հանրապետություն, Օքտոբերի առաջնային օրենսդրություն  
օրենսդրության համար 10 հազար դրամ

Հայաստանի Հանրապետություն, Օքտոբերի առաջնային օրենսդրություն  
օրենսդրության համար 10 հազար դրամ



հանգանանքը, որ Վալիդ գորավարը խոստացավ Դամասկոսի բնակիչներին չքանոնել քաղաքի պարիսապները և եկեղեցիները, չբռնագրավել նրանց գույքն ու ունեցվածքը և այլն: Նա միայն մի պայման առաջադրեց՝ վճարել ջիզիա՝ զիխահարկ, որն ընդունվեց դամասկոսցիների կողմից: Այսար զորավարն ինքն նույնպես հարգեց իր տված խոստումը:

Բյուզանդացիները սկզբնական շրջանում հավանաբար ոչ այնքան լուրջ էին ընդունում արաբներին և առանձնակի նշանակություն չէին տալիս նրանց առաջին ուազմական հաջողություններին: Սակայն Դամասկոսի անկումը սրափեցրեց նրանց: Նրանք հասկացան, որ ի դեմս արաբական խալիֆայության, քաղաքական ասպարեզում հայտնվել է մի նոր ուժ, որը մահացու սպանալիք է ներկայացնում կայսրությանը, մասնավորապես նրա մերձավորարևեսան տիրույթներին, և հարցականի տակ դնում Բյուզանդիայի տիրապետությունը Սիրիայում:

Բյուզանդիան դիմեց վճռական քայլերի: Նա Եղեսչայում պատրաստեց հիսուն հազարանոց մի բանակ, որը Հերակլես կայսրի զիխավորությամբ շարժվեց Սիրիա՝ արաբներին դեմ ռանդիման: Արաբներին դուրս մղելով նրանց կողմից գրաված մի շարք վայրերից, նրանք շարժվեցին Դամասկոսի ուղղությամբ: Արաբները տակտիկական նկատառումներով թողեցին Դամասկոսը և հետո քաշվեցին Յարմուկ գետը, որը Հորդանանի վտակն էր: Մյուտեղ 636 թ. օգոստոսի 20-ին տեղի ունեցավ վճռական ճակատամարտը արաբական ու բյուզանդական գործերի միջև: Այն ավարտվեց արաբների հաղթանակով: Բյուզանդացիներն ընդմիշտ հեռացան Սիրիայից և Հերակլես կայսրին ոչինչ չեր մնում անել, քան ասել. «Մնաս բարով Սիրիա, ինչպիսի գեղեցիկ երկիր մեր թշնամիների համար»:

Այդ հաղթանակից հետո արաբները կրկին մտան Դամասկոս, այնուհետև գրավեցին Սիրիայի այլ տարածքները: 638 թ. նրանք գրավեցին Հոմսը, Հալեբը և Անտիոքը: Նույն 638 թ. նրանց տիրապետության տակ անցավ Երուսաղեմը, որի մեծամեծները խալիֆա Օմարին հանձնեցին քաղաքի բանալիները: 640 թ. ընկավ նաև Պաղեստինի Կեսարիա կարևոր բնակավայրը:

Այսպիսով, արաբները մի շարք ուազմական հաջող գործողությունների շնորհիվ գրավեցին ամբողջ Սիրիան, Պաղեստինը և Լիբանանը:

## 2. Սասանյան Պարսկաստանի նվաճումը

633 թ. արաբները ռազմական գործողություններ սկսեցին Սասանյան Պարսկաստանի դեմ, որի տիրապետության տակ էր գտնվում Միջազգետքը: Արաբական մի ռազմագորկատ խալֆաթբն Վալիդի հրամանատարությամբ ներխուժեց Հարավյային Իրաք և գրավեց Դիրա քաղաքը: Նա այդ ռազմական գործողությունը հաջողությամբ իրականացրեց Դյուսիս-Արևելյան Արարիայի բեղկինների ակտիվ աջակցության շնորհիվ:

Այսպիսով, արաբները, փաստորեն, մարտնչում էին երկու ճակատներում ընդդեմ Բյուզանդիայի և Պարսկաստանի:

Արաբական գործերի առաջնաղացումը պարսկական ռազմաճակատում որոշ չափով հապաղեց, քանի որ Խալիդի իրն Վալիդը Օմար խալիֆայից 634 թ. հրաման ստացավ օգնության հասնել բյուզանդական ճակատում գտնվող արաբական գործերին, որոնց առջև կանգնած էր Դամասկոսը գրավելու պատասխանատու խնդիրը: Զորավար Վալիդը կարողացավ փայլուն կերպով իրագործել Դիրայից, Հարավյային Միջազգետքի վրայով, ոժվարագույն անցումը և, ինչպես նշվեց, 635 թ. գրավել Դամասկոսը:

Դրանից հետո Խալիֆայությունը կրկին իր ուժերը կենտրոնացրեց պարսկական ռազմաճակատում: Այստեղ տեղի էին ունեցել որոշ փոփոխություններ Վալիդի և նրա զրախմբի Դիրայից բյուզանդական ռազմաճակատ մեկնելուց հետո: Պարսկական գործերին հաջողվել էր մի շարք հաղթանակներ տանել արաբական համեմատաբար փոքրարիվ գործերի նկատմամբ և իր տիրապետությունը վերականգնել կորցրած տարածքների մեջ մասի վրա:

Արաբները կենտրոնացմելով լրացուցիչ ուժեր, վերսկսեցին հարձակողական գործողությունները: Առաջին կարևոր ճակատամարտը արաբական և պարսկական գործերի միջև տեղի ունեցավ 637 թ. ամռան սկզբներին Կաղիսիայի մոտ: Արաբական գործերը նրանց գլխովին պարտության մատնեցին: Պարսիկները փախուստի դիմեցին, արաբներին թողնելով Քավեհի դրոշը, որը նրանց համար հատուկ, սրբազն նշանակություն ուներ:

Ծարունակելով հարձակումը, արաբները գրավեցին Սասանյան Պարսկաստանի մայրաքաղաք Տիգրանը և ավերեցին այն: Պարսկաստանի երիտասարդ, 13-ամյա թագավոր՝ Հազկերտ III-ի համար սկսվեց թափառական կյանքի շրջան: Կաղիսիայի պարտությունից հետո նա

հաստատվեց Երկրի հարավում, Դոլյապանում: Սակայն երբ արաքական գործը 640 թ. մտավ Պարսկաստանի հարավային եռագիտաման նահանգը, թագավորը Դոլյուանից մենքն Երկրի կենտրոնական Պարս նահանգը: Դետապնդելով նրան, արաքական գործերը հաղթահարեցին Զազորսկի լեռները և հայտնվեցին Ներքավանդի մոտ: Դենց այստեղ 642 թ. տեղի ունեցավ Երկրորդ և վճռական ճակատամարտը, որը դարձյալ ավարտվեց պարսիկների պարտությամբ: Դրանից հետո արաբների առջև այլևս չկար պարսկական կազմակերպված ռազմական ուժ, որն ի վիճակի լիներ շատ թէ քիչ լուրջ դիմադրություն ցույց տալ արաբներին: Այդ հանգամանքը կանխորոշեց Պարսկաստանի հետագա քաղաքական ճակատագիրը: Արաբները մինչև 651 թ. գրավեցին ամրող Ասսանյան Պարսկաստանը և մինչև Անրու Դաքարնկած տարածքները, որոնք մտան Մրաբական խալիֆայության մեջ, որպես նրա նահանգներից մեկը:

### 3. Եգիպտոսը Խալիֆայության կազմում

640-ական թվականներին արաբները իրականացրին Եգիպտոսի գրավումը, որը գտնվում էր Բյուզանդիայի տիրապետության ներքո: Առաջին արաբական ռազմական միավորումը Եգիպտոսում հայտնվեց 639 թ. Այր իրն ալ-Ասի հրամանատարությամբ: 640 թ. նրանք գրավեցին Խարաման-Շիլքիսը, իսկ 641 թ., յոր ամսվա պաշարումից հետո, նաև Նեղոսից ոչ հեռու տեղադրված Բաթումը կառույց ամրոցը:

Բյուզանդական կայազորներն այլևս ի վիճակի չեն դիմադրել արաբներին և Եգիպտոսը պահել իրենց տիրապետության տակ: Դերակես կայսրի մահից հետո, որ տեղի ունեցավ 641 թ., դեռևս նրա կողմից Եգիպտոսի պատրիարք և կառավարիչ նշանակված Կյուրոսը բանակցություններ սկսեց Անրի հետը: Նրանք կնքեցին պայմանագիր, որի համաձայն Եգիպտոսը հնատակվում էր Արաբական խալիֆայությանը և պարտավորվում վճարել թիգիա՝ գլխահարկ. ինչպես նաև ընահարկ: Այդ պայմանագրի համաձայն, արաբները 642 թ. սեպտեմբերին մտան Եգիպտոսի քաղաքական և մշակութային կննտրում Ալեքսանդրիա քաղաքը:

### 4. Արաբների հետագա նվաճումները

Արաբները, շարունակելով իրենց նվաճումները Դյուսիսային Աֆրիկայում, 642–643 թթ. իրագործեցին մի քանի արշավանքներ, իհմնա-

կանում հեծելազորային, և մտան Ըարդեա-~~և~~ Տօհպոլիտանիա. Նրանց ի վիճակի չեղան դիմադրել տեղական քերերական ցեղերը, որոնք հարկադրված էին ենթարկվել նվաճողներին:

Իսկ 648 թ. նրանց տիրապետության տակ անցավ Կիպրոսը, որը դարձած Առաջնարշարա համար շատ կարևոր ռազմավարական հեմմատան Միջերկրականում:

640 թ. արաբներն իրագործեցին իրենց առաջին արշավանքը Անդրկովկաս, Դայաստան և Վրաստան: 654 թ. նրանց անձնատուր եղավ թբրիխիսին:

650-ակամ թվականների կեսերին ավարտվեց արաբական նվաճումների առաջին փուլը, որին հաջորդեց ժամանակավոր դադար: Դարկադրական դադարը պայմանավորված էր այն հանգամանքով, որ խալիֆայության ներսում սկսվել էին երկպառակություններ, պայքար իշխանության համար Ալիի և Սուլավիայի միջև, որսնորվեցին դժգոհություններ Ալիի կողմնակից շիա խարիֆիների շարքերում, որոնք վերածվեցին ապաստամբության և այլն:

Այսպիսով, պատմական շատ կարճ ժամանակամիջոցում, արաբները դուրս գալով Արաբական թերակղզուց, ռազմաքաղաքական հաղթանակներ տարան երկու հզոր պետությունների՝ Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի դեմ:

## 5. Արաբների հաղթանակների պատճառները

Բնականաբար հարց է առաջանում, ինչպես կարելի է բացատրել արաբների ռազմաքաղաքական հաղթանակները այնպիսի հզոր պետությունների նկատմամբ, ինչպես Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդական կայսրությունը: Հարցն առավել ևս տեղին է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ երկուսն էլ վաղուց կայացած և հզոր պետություններ էին, ունեին լայնածավալ պատերազմներ վարելու հարուստ փորձ և հնուտ ռազմական հրամանատարներ, տիրապետում էին ռազմական քարոզ և նրին արվեստին, անհամեմատ ավելի լավ էին գինված, քան թե արաբական քանակը:

Դա բացատրվում է մի քանի պատճառներով:

Առաջին, քաղաքական ասպարեզում Արաբական խալիֆայության հայտնվելու ժամանակ, Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդական կայսրությունը բուլացել էին միմյանց դեմ երկարատև, հյուծիչ և

հոգնեցուցիչ պատերազմների հետևանքով: Նրանք չունեին նախկին տնտեսական և ռազմական ներուժը և մարդկային ռեսուլրսները: Եթե հաշվի առնենք նաև այն պարագան, որ Բյուզանդական կայսրությունը և Սասանյան Պարսկաստանը մարտնչում էին ոչ միայն միջյանց դեմ, այլև պատերազմական գործողություններ մղում նաև այլ շրջաններում, ապա պատկերն ավելի կատարյալ կղանան:

Այս հանգամանքը, անշուշտ, հեշտացնում էր արաբների գործը, որոնք այլ պարագաներում հազիկ թե այդպես ոյուրին կերպով հասնեին նման ռազմական հաջողությունների:

Երկրորդ, իր դերը խաղաց այն հանգամանքը, որ արանքերը հանդես էին գալիս նոր կրոնի՝ խլամի դրոշի ներքո: Նրանք, խանդավարված խլամի խոստումներից, նեծ ոգևորությամբ էին մարտնչում «անհավատների» դեմ: Նրանց բարձր բարոյական ոգին և խանդավառությունը գալիս էին լրացնելու նրանց ռազմական արվեստին և մարտավարության նրբին օրենքներին տիրապետելու պակասը:

Երրորդ, սկզբունքային նշանակություն ունեցավ արաբների քաղաքանությունը Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների նկատմամբ: Այդ պետությունների հպատակ տարալեզու ժողովուրդները ենթարկվում էին էրեմիկական, կրոնական, տնտեսական-հարկային և այլ բնույթի հալածանքների և բռնությունների, որի պատճառով նրանց մոտ, բնականաբար, կուտակվել էր խոր ատելություն իրենց բռնակալների և հարստահարիչների նկատմամբ: Յետևաբար, նրանք շահագրգոված չեն նեծ եռանդ դրսնորել իրենց թշնամինների թշնամիններին դիմադրնուու և հանուն դրա իրենց կյանքը գոհաբերելու: Այս պարագան սկզբից նեթ Բյուզանդիայի և Պարսկաստանի դիրքերը դարձնում էր խոցելի, որից փայլուն կերպով օգտվեցին արաբական խալիֆաները:

Վերջիններս սովորաբար ռազմական գործողություններից առաջ դիմում էին Պարսկաստանին և Բյուզանդիային ենթական ժողովուրդներին, քաղաքների և գյուղերի բնակչությանը, նրանց կյանքը խնայելու, ունեցվածքը պահպանելու, հարկերը թթվացնելու և այլ խոստումներով, որը շատ հաճախ, մանավանդ սկզբնական շրջանում, նրանք ընդհանուր առմանք պահպանում էին: Դա դրական ներգործություն էր ունենուու նրանց վրա, որոնք հաճախ նրանց ընկալում էին որպես Պարսկաստանի և Բյուզանդիայի լծից իրենց ազատարարների:

Ահա այստեղ պետք է փնտրել արաբների հաջողության գաղտնիքը:

Արաբական Խալիֆայությունը, շնորհիվ իր նվաճողական քաղաքականության, գուտ արաբական պետությունից վերածվեց Երևանիկական առումով խայտարդետ կայսրության և Միջազգային հարաբերություններում առաջատար դիրքեր գրավելու շատ լուրջ հայտ ներկայացրեց:

## Գլուխ շորրորդ

# ԱՐԱԲՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆ (640–650–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

## I. ԱՐԱԲԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂՆՁԱԿԱՆ ԾՓՈՒՄՆԵՐԸ

### 1. Շփման ոլորտները

Յայերի շփումներն արաբա-սեմական աշխարհի հետ ունեն բազմադարյան պատմություն և իրենց արմատներով գնում են դարերի խորքերը: Արաբիան, ինչպես նշվել է, սեմական ժողովուրդների, այդ թվում և արաբների օրրանն է եղել: Նրանց մի մասը դուրս գալով Արաբական թերակղզուց, տարածվում է հարևան շրջաններում, կազմավորելով տարբեր ժողովուրդներ՝ ասուրներ, բաբելացիներ, արամեացիներ, հրեաներ և այլն: Այդ ժողովուրդները հյուսիսից անմիջականորեն սահմանակցել են Յայկական լեռնաշխարհին, շփման մեջ մտնելով նրա բնակչության՝ հայերի, և հայկական զանազան պետական կազմավորումների հետ:

Նրանց միջն գոյություն են ունեցել աշխույժ առևտրական կապեր, ըստ որում ոչ միայն ցամաքային, այլև ջրային ուղիներով՝ Յայկական լեռնաշխարհում սկիզբ առնող Եփրատ և Տիգրիս գետերով, որոնք արաբական Միջագետքի հարավում միանալով կազմավորում են Չատալ-Արաբ գետը:

Նշանակալի են եղել նաև մշակութային կապերը, որոնց վկայությունն են նյութական մշակույթի տարատեսակ նմուշները՝ արվեստի և կենցաղային օգտագործման իրերը, խեցեղենը, զանազան նշանակու-

թյան կառուցքները, նրանց ճարտարապետական-շինարարական սկզբունքները և այլն:

Եվ, իհարկե, իհշատակության են արժանի տարբեր մակարդակի քաղաքական հարաբերությունների առկայությունը նրանց միջև:

Դրանք իրենց արտացոլումն են գտել հայոց պատմահոր՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» անզերազանցելի, կորուային աշխատության մեջ, մասնավորապես Հայկի ապստամբությանը, Հայկի և Բելի պատերազմին, Արա Գեղեցիկի և Ծամիրամի հարաբերություններին, ասիրիացիների հետ պատերազմին, Ասորեստանի թագավոր Սենեքարիմի սպանությանը նրա որդիներ Ադրամելիքի և Սանասարի կողմից, որոնք փախչելով ապաստան են գտնում Հայաստանում, և բազում այլ իրադարձություններին նվիրված պատումներում: Հավաստված է, որ Ասորեստանից երկու եղբայրների փախուստը և հաստատվելը Հայաստանում հետագայում փոխակերպված ծևով իր արտացոլումն է գտել «Սասնա ծոեր» հայկական էպոսում, որտեղ նրանք հանդես են գալիս Սանասար և Բաղդասար անուններով:

Հայերի և արաբների ու սենական մյուս ժողովուրդների շփումների մասին են վկայում բազմաթիվ լեզվական փոխառությունները, որոնք հնարավոր են միայն նրանց երկարատև և անմիջական հաղորդակից լինելու պայմաններում: Այդ փոխառությունները վերաբերում են հանարոյա բոլոր բնագավառներին՝ պետական, քաղաքական, տնտեսական, իրավական և կենցաղային ոլորտներին, քուսական և կենցանական աշխարհին, արհեստներին, արքեստին և այլն:

## 2. Հայկական և արաբական պատմագրությունը

Հայ-արաբական նախասկզբնական հարաբերությունների մասին հուսալի աղբյուր է հանդիսանում Ժամանակի հայկական և արաբական մատենագրությունը:

Սկսած VII դարից հայ պատմիչները, իսկ IX դարից, արաբական դասական պատմագրության ծևավորումից հետո, նաև արաբ պատմաբագիրները և աշխարհագիրները, թողել են շատ հարուստ գրավոր ժառանգություն, որոնք արժեքավոր աղբյուր են հայերի և արաբների վաղ միջնադարյան պատմության ուսումնասիրության համար:

Հայ միջնադարյան պատմիչներից արաբական թեմային բավականին հանգանանողեն անդրադարձել են Սեբեոսը, Ղևոնդը, Թովմա

Արծրունին, Դովիաննես Դրասխանակերտցին, Մովսես Կաղանկատվացին, Մինթար Անեցին, Վարդան Արևելցին, Գրիգոր Տաթևացին և այլ մատենագիրներ:

Ընդ որում, Սեբեոսն առաջին ոչ արար, օտարազգի հեղինակն է, որ գրավոր երկով անդրադարձել է Մուհամմադին և իսլամի ծագումնաբանական հարցերին, տալով իր ուրուց մեկնաբանությունները:

Դայ պատմիչների անդրադարձն իրենց մերձավոր հարևանների՝ արաբների պատմությանը, քաղաքական իրադարձություններին և հոգևոր-կրոնական հարցերին, որոնք նրանց համար ունեցել են շրջադարձային նշանակություն, միանգամայն օրինաչափ է: Դայերը եղել են այդ կարևոր իրադարձությունների ժամանակակիցները և ականատեսները: Շատ բան տեղի է ունեցել նրանց աչքերի առջև:

Մյուս կողմից, Դայաստանին մոտիկ հարևանությամբ մի նոր հզոր կայսրությամ՝ Արարական խալիֆայության հանդես գալը, ինչպես նաև միաստվածության սկզբունքի վրա խարսխված համաշխարհային նոր կրոնի՝ իսլամի առաջացունը, ստեղծում էր ուժերի նոր վերադասավորում և աշխարհաքաղաքական իրադրություն Սուազավոր Սսիայում, որը քաղաքական և կրոնական առունով չէր կարող չափարարեանալ և, իրոք, անդրադարձակ Դայաստանի հետագա ճակատագրի վրա:

Միա այսպիսի հանգամանքներով էր պայմանավորված հայ պատմիչների հետաքրքրությունը արաբների և նրանց նորաստեղծ կրոնի՝ իսլամի նկատմամբ, և նրանց պատմության հանգուցային շատ հարցերի ներգրավումն իրենց գիտական որոնումների ոլորտը:

Նրանցում զգալի տեղ են գրավում Մուհամմադի գործունեության և իսլամի հետ կապված զանազան հարցերի մեկնությունը:

Այստեղ հարկ է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք: Ալլահի առաքյալին և իսլամին հայ պատմիչների տված գնահատականների վրա խիստ նկատելի է դարաշրջանի կնիքը և արևելաքրիստոնեական պատկերացումների ազդեցությունը: Եվ դա միանգամայն հասկանալի և բացատրելի է: Նրանք չեն կարող տուրք չտալ իրենց ժամանակաշրջանի պատկերացումներին, հասկացողություններին և ըմբռնումներին:

Դա հատկապես ցայտուն կերպով դրսնորվում է Մուհամմադի աստծո առաքյալ լինելու հարցում: Նետսելով համընդհանուր քրիստոնեական պահանջութին, հայ պատմագիրները, առաջին հերթին Սեբեոսը, ևս արտահայտել են այն տեսակետը, որ Մուհամմադը կեղծ մարգարե է: Դավանաբար այստեղ իր դերն է խաղացել այն հանգամանքը, որ

Կորանը թեև Մուհամմադին նախորդած մարգարեների շարքում հիշատակում է նաև Խսային՝ Քիսուս Քրիստոսին, այնուհանդեռձ, Վերջին մարգարե հաճարում է Մուհամմադին: Քրիստոնեության գաղափարախոսությունը, հասկանալի է, չեր կարող ընդունել, առավել ևս հաշտվել նման հիմնադրույթի հետ: Եվ հայ պատմիչները, լինելով քրիստոնեության ջատագովներ, բանավիճում են Մուհամմադի մարգարե լինելու հարցի շուրջը, ելակետ ունենալով քրիստոնեական աշխարհում տիրապետող նրա կեղծ մարգարե լինելու տեսակետը:

Սիջնադարյան հայ պատմիչների գրություններում երկրորդ կարևոր վիճելի հարցը Կորանի և խալամի առաջացման և եռթյան, նրանց հիմնարար դրույթների հարցն է:

Ծանոթությունը իսլամի դրույթների հետ, հայ պատմիչներին հանգեցրել է այն եզրակացության, որ իսլամն ինքնուրույն կրոն չէ, որ Մուհամմադը դա ստեղծել է հուդայականության և քրիստոնեության աղավաղված, զանազան աղանդավորական հիմնադրույթների համադրման հիման վրա: Կարծում ենք, որ նման նեկանքանության համար հիմք է ծառայել այն սուր պայքարը, որ դրսնորվում էր երկու կրոնների միջև և որը սովորական երնույթ էր միջնադարի համար:

Դայ պատմիչների գրությունները հետաքրքիր, շատ հաճախ եզակի տեղեկություններ են պարունակում Մուհամմադ մարգարծի և նրա ուսուցիչը համարվող, աղանդավորական Բահիրայի հետ ծանոթության, հանդիպումների և գրույցների մասին: Ենթադրվում է, որ ապագա մարգարեն շատ բան է քաղել այդ գրույցներից, որոնք նա հետագայում օգտագործել է իր նոր կրոնական ուսմունքը ծնավորելու ժամանակ:

Դայ պատմիչների գործերը նրան շատ հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ են պարունակում արաբների երկրի, կյանքի և կենցաղի, քաղաքականության, տնտեսության և ռազմական նվաճումների, կրոնի և հավատալիքների, անշուշտ, հայ-արաբական փոխհարաբերությունների և Դայաստանի հանդեպ Արաբական խալիֆայության վարած քաղաքականության և այլ հարցերի վերաբերյալ:

Մի ուշագրավ հանգամանք ևս: Դայ որոշ պատմիչների, մասնավորապես VIII դ. հեղինակ Ղևոնդ Վարդապետի Պատմության, IX-X դդ. պատմիչ Ջովհաննես Ղրասխանակերտոցու Դայոց պատմության մեջ և այլն, բացակայում է «Արաք» երմոնիմի օգտագործումը: Դրա փոխարեն նրանք օգտագործում են «Խսմայելի որդի», «Խսմայելացի», «Դագարացի», ինչպես նաև «Տաճիկ» անվանումները: Դա հավանարար պետք է

բացատրել այն հանգամանքով, որ քրիստոնյա հայ պատմիչները տուրք են տվել Աստվածաշնչին, նրանում արարների ծագման վերաբերյալ շարադրանքին:

Աստվածաշունչը, ինչպես հայտնի է, տալիս է արարների ծագման հետևյալ պատմությունը: Աբրահամը, որը համարվում է արարների և հրեաների նախահայրը, ամուսնացած էր Սառայի հետ, որը տարիքով էր և երեխա չէր կարող ունենալ: Սառան, որն ուներ Հագար անունով մի աղախին, առաջարկում է իր ամուսնուն՝ Աբրահամին, երեխսա ունենալ Հագարից: Սառայի առաջարկության հետ երկուսն էլ, Աբրահամը և Հագարը, հաճածայնվում են, և Հագարը ծննդաբերում է մի արու զավակ, որին կոչում են «Իսմայել», այսինքն «Աստված լսեց»: Հաճարվում է, որ արարները սերել են այդ «Իսմայելից» և այդ պատճառով էլ հայերը, և ոչ միայն նրանք, այլև մյուս ժողովուրդները, նրանց կոչում են «Իսմայելի որդիներ», կամ «Հագարացիներ». Նրա մոր անունից:

Սակայն Աստված, դարձյալ ըստ Աստվածաշնչի, խղճահարվելով, Սառային երեխսա քերելու ունակություն է շնորհում և նա Աբրահամին պարզեցում է նույնական մի արու զավակ, որին անվանում են Խսահակ: Նրա հետնորդները համարվում են հրեաներ:

Այսպիսով, հրեաների և արարների նախահայրը նույն Աբրահամն է և նրանք դիտվում են երկու եղբայրներ, որոնցից ավագը Խսայելն է, նրա շառավիղները: Սակայն այստեղ կա մի կարևոր հանգամանք: Քանի որ հրեաների մայրը Աբրահամի օրինական կինն էր, այսպես ասած, տիրուիի, իսկ արարների մայրը այդ տիրուիի աղախինը, ապա նրանց ծագումնաբանության հենց սկզբից հրեաները վերսից էին նայում արարների վրա, իրենց համարելով օրինական և բարձր:

Դայ աղբյուրները, չնայած այն հանգամանքին, որ նրանք պարունակում են որոշ վիճելի տեսակետներ, որոնք, հասկանալի է, կարող են անընդունելի համարվել արարական-իսլամիստական պատմագրության կողմից, այդուհանդերձ, կարևոր են արարների միջնադարյան պատմության տարատեսակ հարցերի լուսաբանության տեսանկյունից:

Դայ-արարական առնչությունների, ինչպես նաև Դայաստանի միջնադարյան պատմության ուսումնասիրության տեսակետից, արժեքավոր են և մեծ հետաքրքրություն են ներկայացմուն արարական միջնադարյան աղբյուրները:

Սկսած IX դարից, արարական դասական պատմագրության ծևավորումից, արար պատմիչները՝ Բալագուրին, Թարարին, Մասուդին,

Սաքրիզին, Իրն Ասիրը, Իրն Շաղդաղը, Աբուլ Ֆիդան և ուրիշներ, աշխարհագիրներ՝ Խարակորին, Իրն Դաուքալը. Յակուտ ալ-Դամավին, Իրն Բատուտան և այլն, մեզ հասած իրենց ծեռագիր մատյաններում և ճանապարհորդական ուղեգրություններում մշտապես անդրադառնում են հայկական թեմային: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ նրանցից ունանք իրենց ճանապարհորդական ուղեգրությունների ժամանակ այցելել են Դայաստան և գրի առել իրենց աչքով տեսածը և ականջով լսածը:

Արար հեղինակները շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Դայաստանի բնության և կլիմայի, լեռների, գետերի, լճերի և ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, բնակչության կյանքի և սովորությունների, կրոնի, տնտեսության, քաղաքական կյանքի և այլ կարևոր ոլորտների մասին:

Դաշվի առնելով դրանց կարևորությունը, արաբակամ աղբյուրների մի մասն ամբողջությամբ (Իրն ալ Ասիր և այլն), իսկ մի մասն էլ հատվածաբար (Իրն Բատուտա, Յակուտ ալ-Դամավի, Իրն Շաղդաղ, Աբուլ Ֆիդան և այլն) թարգմանվել և հրատարակվել է հայերեն:

Արաբական պատմագրության առվակը, միահյուսվելով հայ պատմագրության հրորառատ գետին, գալիս է հարստացնելու հայ ժողովոյի պատմության աղբյուրագիտական հիմքը և մեր պատկերացումները Դայաստան աշխարհի և նրա պատմության վերաբերյալ:

### 3. Արաբական երկրները Տիգրան Մեծի հայկական կայսրության կազմում

Պատմությանը հաճո է եղել, որ պատմական տարբեր դարաշրջաններում արաբները և հայերը, հանգամանցների բերումով, երբեմն հայտնվեին միևնույն պետության՝ հայկական կամ արաբական, տիրույթներում:

Նրանց առաջին ննան համակեցությունն արձանագրված է մ.թ.ա. I դարում, որը կապված է Դայաստանը Առաջավոր Ասիայի հզորագույն պետություններից մեկին վերածվելու իրողության հետ: Դայոց արքա Տիգրան Մեծը, մ.թ.ա. 89–85 թթ. համար պատերազմների ընթացքում պարտության է մատնում պարթևներին, որից հետո Դայաստանին հարևան, նախկինում Պարսկաստանից վասալական կախման մեջ գտնվող բոլոր պետություններն ընդունեցին Դայաստանի գերիշխանու-

թյունը: Աղիաբենի, Կորդուքի և Աստրատականի թագավորները առիալ-ված էին Ենթարկվել հայոց արքային: Պարտված պարթևները Դայաս-տանին զիջեցին նաև Միջազգետը: Պարթևների թագավորը հարկադր-ված էր իրաժարվել նաև «Արքայից արքա» տիտղոսից, որը կրելու իրա-վունքն անցավ հայոց արքա Տիգրան Մեծին: Ընդարձակելով իր տի-րույթները և սահմանները, Տիգրան Մեծի թագավորության օրոք Դայաս-տանը վերածվում է կայսրության:

Միջազգետի գրավունը Դայաստանի առջև բացեց Միրիան նվաճե-լու լայն հնարավորություններ, որին նայաստեցին նաև Սելևկյան թագա-վորության ներսում ծագած երկպառակությունները: Դրությունից ելք փնտրելու համար Միրիայի ավագանին որոշեց դրսից թագավոր իրավի-րել: Այդ կապակցությամբ Հուստինիանոսը հետևյալ հետաքրքիր տեղե-կությունն է հաղորդում. «Երբ Եղբայրների փոխադարձ ատելության և ծնողների քշնանությունների պատճառով, որը շարունակում էին նաև որ-դինները, Ասորիքի և՝ թագավորները, և՝ թագավորությունը ուժասպառ ե-ղան համառ կոհիվներում, ժողովուրդն ապավիճեց դրսի օգնությանը և սկսեց փնտրել իր համար օտարերկրյա թագավորներ: Արդ, ժողովրդի մի մասը կարծում էր, որ պետք է իրավիրել Միհրդատ Պոնտացուն, մի մասն էլ՝ Եզիատոսից Պոտոմենոսին, իսկ ոմանք առարկում էին, որ Միհրդատը խճվել է հոռմեական պատերազմի մեջ և որ Պոտոմենոսը միշտ քշնամի է եղել Ասորիքին: Բոլորը, սակայն, հաճածայնության եկան Դայաստանի Տիգրան թագավորի նկատմամբ, որն ուներ իր սեփական ուժերը և միա-ժամանակ պարբեների դաշնակիցն էր և Միհրդատի փեսան էր»:

Ս.թ. 84–83 թթ. Տիգրան Մեծը գրավում է Հյուսիսային Ասորիքը՝ Անտիոք քաղաքով: Սելևկյանների այդ մայրաքաղաքը դառնում է Տիգ-րան Մեծի գլխավոր գահանիստ քաղաքը նրա կայսրության հարավա-յին մասում: Սակայն եթե Հյուսիսային Ասորիքի միացումը տեղի ունե-ցավ առանց դիմադրության, կամովին, հաճածայն ժողովրդի և կառա-վարող ավագանու ցանկության, ապա հարավային Ասորիքի, Դամասկո-սի շրջանի գրավումը իրագործվեց գենքի օգնությամբ: Այդ մասին է Վկայում Ստրաբոնը, նշելով, որ Տիգրան Մեծն «անցնելով Եփրատ գե-տը, նվաճեց բռնությամբ Ասորիքը և Փյունիկիան»:

Դայոց արքայի դեմ դիմադրության ոգեշնչողն եղել է Սելևկյան Սե-լեն թագուհին: Հովսեփիոս Փլավիոսը վկայում է, որ «Սելենն թագու-հին, որի անունն էր նաև Կլեոպատրա և որն իշխում էր Ասորիքում. գրգ-ռում էր բնակիչներին, որ դիմադրեն Տիգրանին»: Սակայն Տիգրան Մե-

ծը երեք հարյուր հազար գործով ճնշում է Սելենի դիմադրությունը և ավարտում Դամասկոսի և Փյունիկիայի գրավումը:

Նրա տիրապետության տակ են անցնում նաև Սիցերկրական ծովի ափին գտնվող Լառողիկեա (Լաթակիա), Բերիք (Բեյրութ) և այլ կարևոր նշանակություն ունեցող քաղաքները:

Սելևկյան Սելենի թագուհին գերի է ընկնում և Տիգրան Մեծի հրամանով գլխատվում: Այդ առթիվ Ստրաբոնը նշում է, որ «հայերը Սելևկյան թագավորների հզորությունը խորտակեցին»:

Սիրիան վերածվում է հայկական կայսրության կուսակալության, որի կուսակալ նշանակվում է Բագարատ գորավարը:

Այսպիսով, ամրող Սիրիան, Սիցագետքը, Փյունիկիան և Պաղեստինն անցնում են Տիգրան Մեծի տիրապետության տակ: Պետք է ենթադրել, որ Հայաստանից կախման մեջ է ընկել նաև Հրեաստանը: Առաջավոր Ասիայի հանարյա ողջ տարածքը, ընդուած մինչև Եգիպտոսի սահմանները, ենթակա էին հայոց արքայից արքա Տիգրան Մեծին:

Այդ տարածքները Հայկական կայսրության կազմում մնացին մինչև մ.թ.ա. 66 թ.: Հռոմի և Տիգրան Մեծի միջև Արտաշատում մ.թ.ա. 66 թ. կնքված պայմանագրով Հայաստանն այդ տարածքները գիշեց Հռոմին:

#### 4. Ուրֆայի (Եղեսիայի) հայ—արաբական թագավորությունը

Գոյություն ունի մի ուշագրավ վարկած հայ—արաբական միացյալ եմիրության (թագավորության) մասին, վկայված հատկապես արար հեղինակների կողմից: Եգիպտացի ուսումնասիրող Ֆուադ Համան Հաֆզն իր «Հայ ժողովորի պատմությունը սկզբնավորումից մինչև մեր օրերը» ստվարածավալ արժեքավոր աշխատության մեջ նշում է, որ «Մ.թ.ա. 136–216 թթ. մ.թ. գոյություն է ունեցել Ուրֆայի հայ—արաբական եմիրություն»: Այդ միացյալ թագավորության արքաներից նույն հեղինակը հատկապես առանձնացնում է «հայ թագավոր Արգար Հինգերորդին», որը, ըստ Հաֆիզի, թագավորել է մ.թ. 13–51 թթ.: Այդ մասին որոշ վկայություններ կան նաև Հովհաննես Դրասխանակերտցու Հայոց պատմության մեջ և այլ աղբյուրներում:

Անկախ այդ փաստի հավաստիության աստիճանից, դա ինքնին հետաքրքիր է որպես մի գաղափար, որը միանգամայն ընդունելի և նորմալ է համարում հեռավոր անցյալում հայ—արաբական միասնական պետության ստեղծման և գոյության հնարավորությունը:

Իսկ հետագայում, VII դ., արդեն Դայաստանը հայտնվեց արաբական պետության կազմում, մոտ երկու դար մաս կազմելով այդ նորահայտ կայսրությանը:

## II. ՀԱՅԱՏԱՆՑ ԱՐԱԲԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ՆԱԽՕՐԵՒՆ

### 1. Դայաստանը մասնատված երկիր

Դեռևս V դ. սկզբներին, Դայաստանը կորցրել էր իր պետականությունը: Պարսկա-բյուզանդական 387 թ. և 591 թ. պայմանագրերով, Դայաստանը բաժանվել էր այդ երկու հզոր պետությունների միջև: Դայաստանի երկու հատվածներում էլ վերացվեց Արշակունիների դինաստիայի տիրապետությունը, որը Դայաստանը կառավարում էր 66–428 թթ.:

Սակայն Դայաստանը չկցվեց այդ պետություններին որպես նրանց ենթակա սեփական կառավարումից զուրկ ինչ–որ տարածք, ինչ–պես սովորաբար լինում էր: Դայաստանի թե՛ պարսկական և թե՛ բյուզանդական հատվածներում հաստացվեց կառավարման մի յուրահատուկ ձև, որը իրավական առումով կարելի է բնութագրել որպես ինքնավարություն կամ ինքնավար կառավարում:

### 2. Արևելյան Դայաստանի կարգավիճակը

Դայաստանի պարսկական տիրապետության տակ անցած մասը կամ Արևելյան Դայաստանը, Վերածվեց մարզպանության: Իրավական առումով նա Սասանյան Պարսկաստանի մասն էր կազմում և ենթակա էր պարսկական շահին: Սակայն նրա անմիջական կառավարիչը մարզպանն էր: Նա նշանակվում էր շահի կողմից, իանդիսանալով նրա ներկայացուցիչը, և օժտված էր կառավարման բավականին լայն լիազորություններով: Մարզպանը, մյուս կողմից, ներկայացնում էր Դայաստանին և նրա շահերը պարսկական արքունիքում: Ըստ հաճախ պարզպան նշանակվում էին հայ նախարարներից:

Դայ նախարարները պահպանեցին իրենց ժառանգական իրավունքները, համապատասխան տեղը կառավարման համակարգում և տիրությունները: Փաստորեն նրանց դերը բարձրացավ, որը հիմք է ծառա-

յել այն տեսակետի համար, որ Արշակունիների անկումից հետո թագավորական իշխանությունն անցել էր նախարարներին:

Հօգուտ այդ տեսակետի էր խոսում նաև այն հանգամանքը, որ հայկական ռազմական ուժերը չլուծարվեցին կամ չտարրալուծվեցին պարսկական ռազմական ուժերի մեջ: Նրանք մտան պարսկական զինված ուժերի մեջ որպես մեկ ինքնուրույն ամբողջություն իրենց սեփական հրամանատարությամբ: Նրանց գլուխ էր կանգնած հայոց սպարապետը, որի հրավորությունը պատկանում էր Մամիկոնյան նախարարական տանը և այդ հրավորությունը նարզապանության շրջանում պահպանվեց: Ուշագրավ է նաև այն պարագան, որ հայկական այրուծին պատրազմին նաևնակցում էր հայ նախարարների հրամանատարության ներքո, ինչպես նախկինում, և կատարում էր միայն նրանց հրամանները: Նրանք պահպանեցին նաև իրենց երնիկական միտարրությունը:

Պահպանվեց նաև դեռևս Արշակունիների ժամանակ ծևավորված վարչակառավարական, հասարակական և տնտեսական կարգը: Այստեղ միայն մի կարևոր փոփոխություն տեղի ունեցավ: Նախկինում հօգուտ Արշակունիների գանձվող հարկը, պարզպանության շրջանում արդեն մտնում էր շահի գանձարանը:

Յիմնականում իր ոիլքերը և կարուղ ազգապահպան դերակատարությունը պահպանեց նաև հայ եկեղեցին:

Այսպիսով, ստեղծվել էր կառավարման ինքնատիպ մի համակարգ: Արևելյան Հայաստանը, մի կողմից, այևս սուվերեն պետություն չէր, սակայն, մյուս կողմից, նա ներքին կառավարման համակարգում պահպանել էր ինքնավարության անվիճելի գործառութներ:

### 3. Արևմտյան Հայաստանի կարգավիճակը

Բյուզանդիայի տիրապետության տակ անցած Արևմտյան Հայաստանում իրավիճակն այլ կերպ դասավորվեց:

Արևմտյան Հայաստանը չպահպանվեց որպես մեկ վարչակառավարական ամբողջություն: Դյուսիսային մասը քածանվեց 11 կանոնների՝ կարին կենտրոնով, որի գլուխ կանգնած էր քաղաքացիական կառավարիչը, իսկ հարավային շրջաններում ստեղծվեցին այսպես կոչված սատրապություններ, որոնք ըստ եւթյան նախարարական տիրություններն էին: Այս վերջինները սկզբնական շրջանում վայելում էին սահմանափակ ինքնավարություն: Նախ, նրանք դիտարկվում էին ոչ թե որպես

նվաճված շրջաններ, այլ շրջաններ, որոնք կայսրության մեջ էին մտել պայմանագրային հիմունքներով: Այնուհետև, բյուզանդական կայսերական զորքերն այդ տարածքները չնտան և նախարարները պահպանեցին սեփական զորք ունենալու իրենց իրավունքները:

Սկզբնական փուլում կայսրությունը գգուշավոր քաղաքականություն էր կարում Արևմտյան Հայաստանում և չէր ծգտում արագածված տեսնպերով կիրառել բյուզանդականացման իր սովորական քաղաքականությունը:

Դրությունը կտրուկ փոխվեց VI դ. Հուստինիանոս կայսրի «բարեփոխումների» հետևանքով: Նրա 536 թ. հրամանով, Արևմտյան Հայաստանի ամբողջ տարածքը վերակազմավորվեց, բաժանվելով Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայաստանների, որոնց կառավարման համար ստեղծվեց հատուկ պաշտոն, որը կոչվում էր Արևելի գին Կորական մագիստր: Կայսրի հրամանում ասված էր, որ այսուհետև հայերը ևս ամեն ինչում պետք է հետևեն բյուզանդական օրենքներին և նրանք բացի այլ օրենքներից չպետք է ունենան այլ օրենքներ:

Այստեղ որոշ փոփոխություններ տեղի ունեցան Հայաստանի երկրորդ բաժանումից հետո, որը տեղի ունեցավ Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև 591 թ.:

Արևմտյան Հայաստանում Բյուզանդիան մտցրեց նոր՝ Հայաստանի իշխանի ինստիտուտը: Նա բարձր էր կանգնած մյուս բոլոր իշխաններից և գործառույթի իմաստով մոտ էր Արևելյան Հայաստանում մարզպանի բարձր պաշտոնին: Հայաստանի իշխանի պաշտոնը, լինելով առանձնահատուկ բարձր պաշտոն, բարձրացնում էր Հայաստանի դերն ու նշանակությունը համայն կայսրությունում, շեշտելով նրա առանձնահատուկ կարգավիճակը:

Մյուս կողմից, ի դեմս Հայաստանի իշխանի, ասպարեզում հայտնվեց մի այնպիսի բարձրաստիճան պաշտոնյա, որի միջոցով էր կայսրն անմիջականորեն իրականացնում կապերը Արևմտյան Հայաստանի հետ, ամրապնդում և ավելի հուսալի դարձնում նրա շփումերը հայ նախարարական տների հետ, իսկ իշխանն էլ, իր հերթին, ներկայացնում էր հայության հավաքական կամքը, ցանկությունները և պահանջներն անմիջապես կայսրին:

Այսպիսին էր ընդհանուր գծերով իրավիճակը Արևմտյան և Արևսյան Հայաստանում արաբական արշավանքների վաղորդայնին:

### III. ԱՐԱԲՆԵՐԻ ՆԵԽՈՒԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆ

#### 1. Արաբական առաջին արշավանքները

Արաբների ներխուժումը Դայաստան անխուսափելի դարձավ այն բանից հետո, երբ նրանք նվաճեցին Պարսկաստանը և մի քանի տպավորիչ հաղթանակներ տարան Բյուզանդական կայսրության նկատմամբ: Դրանից հետո նրանց առջև այլևս բաց էին Կովկասի հարավային դարպանները: Խոկ Կովկաս հարավից կարելի էր մտնել Դայաստանից:

Դայաստանում VII դարի 20-ական թվականների վերջերին և 30-ական թվականներին տեղի ունեցան կարսոր իրադարձություններ, որոնց հետագայում իրենց դրական անդրադարձն ունեցան դեպքերի զարգացնան և հայ-արաբական փոխհարաբերությունների վրա:

Թեոդորոս II շտումին, որը դեռևս 628 թ. հայոց սպարապետն էր, 634 թ. դառնում է նաև Դայաստանի մարզպան: Արևելյան և Արևմտյան Դայաստանի այդ երկու կարսոր պաշտոնների միավորումը մեկ անձի ծեղում նշանակում էր, որ Թեոդորոս II շտումին դառնում էր Դայաստանի երկու հատվածների դեկավարը, փաստորեն իրականացնելով Արևելյան և Արևմտյան Դայաստանի միավորումը և Դայաստան իշխանապետության հաստատումը: Այդ պատմական կարսոր իրադարձությունը տեղի ունեցավ 639 թ.:

Անշուշտ, դա չէր նշանակում հայոց պետականության վերականգնում, սակայն, մյուս կողմից, դա այլևս նախկին տրոհված Դայաստանը չէր, իր երկու առանձին դեկավարներով՝ մարզպանով և իշխանով:

Այսպիսով, Դայաստանն արաբական արշավանքները դիմավորեց որպես մի իշխանապետություն, որի գլուխ կանգնած էր հմուտ քաղաքական և ռազմական գործիչ, դիվանագիտական մեծ շնորհներով օժոված, լայնախոհ և հեռատես Թեոդորոս II շտումին: Իշխանապետության մայրաքաղաքն էր Դվինը:

Արաբական արշավանքները Դայաստան սկսվում են 640 թվականից: Դեռևս 638 թ. Օմար խալիֆան հանձնարարում է իր գորավարներից մեկին՝ Իյադ իբն Ղանմին, նվաճել Ասորիքը, ապա նաև Վերին Սիծագետքը և դուրս գալ հարավից տարածքները: Իյադը, նվաճելով Ասորիքը, 639 թ. անցնում է Եփրատը և իրեն ներարկում Վերին Սիծագետքը: Նրա տիրապետության տակ են անցնում Եղեսիան, Դարրանը, Սամոսա-

տը, Մծրինը, ապա նաև Թուր Աբդինը, Մարդինը և Ամիղը: Արարական գործերն ընդուլուած մտացան Դայաստանին: Եվ Իյազը չհապաղեց Նփրկերտի նվաճումից հետո իր գործերը շարժել հյուսիս՝ Դայաստան:

Արարական գործերը Դայաստան մտան 640 թ. Աղձնիքից, որը, ինչպես նաև Արգանն ու Բաղեցը գրավելով, նրանք Զորա պահակ լեռնանցքով մտան բուն Դայաստանի հշխանապետության տարածքը:

Ասպիսով, պատմության մեջ առաջին անգամ արարական և հայկական ուժերը դեմ առ դեմ հանդիպեցին միմյանց:

Սկզբից ևեթ առավելությունն արաբների կողմն էր, քանի որ նրանք ներկայացնում էին ուժեղ պետություն, բազմանարդ էին և ի վիճակի էին մեծաքանակ զորք դուրս բերել: Խսկ Դայաստանը, հյուծված երկարատև պարսկա-բյուզանդական կորվներից, որոնք շատ հաճախ ընթանում էին Դայաստանի տարածքներում, ի վիճակի չեր լուրջ դիմադրություն ցույց տալ, մանավանդ եթե նկատի ունենանք այն պարագան, որ այդ շրջանում, ինչպես նշում է Հովհաննես Ղրասիսանակերտոցին, հայ նախարարները միաբան չեն և միասնական ճակատով հանդես չեն գալիս:

Արարական 18 հազարանոց զորքը խորանում է Դայաստան և մտնում Տարոն և պահանջում նրա տեր Տիրան Մամիկոնյանից հարկ վճարել: Վերջինս մերժում է բավարարել արաբների պահանջը և իր 8 հազարանոց զորքով Գրգուռ լեռան ստորտում հարձակվում է արարական զորքերի վրա, որոնք պարտություն կրելով, փախուստի են դիմում: Բայց հայ նախարարը հերոսի մահով զոհվում է մարտի դաշտում:

Տարոնում կրած պարտությունը, սակայն, արաբներին չի ստիպում հրաժարվել իրենց ռազմաքաղաքական նպատակներից: Իյազի զորքերը շարունակում են խորանալ Դայաստան: Նրանք մտնում են Խլաթ, որի հշխանի՝ պատրիկի հետ հաշտության պայմանագիր կնքելով, շարունակում են առաջանալ և հայտնվում Կարինի մերձակայքում, առանց սակայն քաղաքը մտնելու:

640 թ. ընթացքում արաբները, ինչպես վկայում է հայ պատմիչ Սեբեոսը, գրավելով Տարոնը, Բգնունյաց երկիրը և Աղձնիքը, Բերկրիի ծորով և Կոգովիտով մտան Այրարատ:

Արարական արշավանքների սկզբին, երբ Դայաստան նրանց ներխուժման լուրջը հասավ Թեոդորոս Ռշտունյուն, որի նստոցը Ախրանար կղզին էր Կանա լճում, իր զորքերով շտապեց Զորա պահակ՝ փակելու կիրճի մուտքը և կանգնեցնելու արաբների հետագա խորանալը Դայաս-

տան: Սակայն նա ուշացել էր: Երբ նա մոտեցավ Շորա պահակին, ապա արարմերն այլևս այնտեղ չէին, նրանք կիրճով արդեն անցել էին:

## 2. Դվինի պաշարումը և գրավումը

Շուտով արարական զորքերը հայտնվեցին Դվինի մատուցներում: Սակայն Թեոդորոս Վահանունի, Խաչյան, Արավելյան և Շապուհ Ամատունի հայ իշխանները կանխում են արարմերին, նտնում հայոց մայրաքաջաքը և, արարմերի մուտքը կասեցնելու նպատակով, ավերուն Դվին տանող Սեծամորի կամուրջը: Միաժամանակ նրանք քաղաքից դուրս գտնվող, ինչպես նաև գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվող բոլոր հայ գեղօրուկներին, անվտանգության նպատակներով, հավաքում են քաղաքի պարհապներից ներս:

Դեահ Դվին իր զորքերով շուապում էր նաև Թեոդորոս Ռշտունին, սակայն նա կարողացավ հասնել միայն Նախիջևան:

Արարմերը, որոնք բանակել էին Դվինի մերձակայքում և, ըստ Էռլեյան, պաշարել Դվինը, հինգերորդ օրն անցան հարծակման:

Արարմերը, որոնք սկզբնական շրջանում իրենց արշավանքների ժամանակ չէին տիրապետում պարսպապատ քաղաքների գրավման ռազմական արվեստին, այդ ժամանակ արդեն ծեղոք էին բերել որոշակի փորձ, որը և նրանք օգտագործեցին Դվինը գրոհելու ժամանակ: Անընդհատ գրոհներով հետ մղելով Դվինի պարհապները պաշտպանող հայ մարտիկներին, նրանք սանդուղքներով կարողացան բարձրանալ պարհապները և ներխուժել Դվին: Դա տեղի ունեցավ 640 թ. հոկտեմբերի 6-ի ուրբաթ օրը:

Քաղաքը կողոպուտի ենթարկվեց, իսկ 12 հազար մարդ գոհվեց: Այնուհետև արարմերը հեռացան Դվինից, իրենց հետ տանելով 35 հազար հայ գերիների:

Թեոդորոս Ռշտունին իմանալով այդ մասին և տեղյակ լինելով արարական զորքի հետդարձ երթուղու վերաբերյալ, դարանակալում է նրանց կոգովիտ զավառում: Նրա նպատակն էր հանկարծակի հարծակումով փախուատի մատնել արարմերին և ազատագրել հայ գերյալներին: Սակայն նրա հարծակումը ծախողվեց և արարական բանակը վերադարձավ Վերին Միջագետք, իր հետ տանելով հայ գերիներին, որոնք այնուհետև վաճառվում էին շուկաներում որպես ստրուկներ:

### 3. Թեոդորոս Ոշտունին Հայաստանի իշխան

Թեոդորոս Ոշտունին շատ լավ էր գիտակցում, թե ինչ մեծ վտանգ է կախված Հայաստանի գլխին: Նա ծեռնարկում է մի շարք անհետաձգելի քայլեր երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու ուղղությամբ՝ ամրապնդում է բերդերը, ստվարացնում և ուժեղացնում հայոց հեծելազորը՝ այրուծին, ծգում հանախմբել նախարարներին և նրանց զինական ուժը և այլն: Այս վերջին հաճամանքը շատ կարևոր էր, քանի որ արարական ասպատակությունները ցույց տվեցին հայ նախարարների անմիաբանությունը և դրա ժանր հետևանքները հայության համար:

Դայ նախարարներին միարանելու գործում Թեոդորոս Ոշտունուն սատար կանգնեց հայոց կաթողիկոս Ներսես Տայեցին: Նրան հաջողվեց հանգել մի շարք հայ նախարարների Թեոդորոս Ոշտունուն ճանաչելու Հայաստանի իշխան և հանախմբվել նրա շուրջը: Ստանալով հայ նախարարների համաձայնությունը, կաթողիկոսը դիմում է բյուզանդական կայսր Կոստանդ II-ին Թեոդորոս Ոշտունուն ճանաչել որպես Հայաստանի իշխան: Կայսրն ըմբռնելով Հայաստանի կարսորությունը կայսրության շահերի տեսանկյունից, ընդառաջում է Ներսես Տայեցի կաթողիկոսի խնդրանքին և Թեոդորոս Ոշտունուն պաշտոնապես ճանաչում Հայաստանի սպարապետ և պատրիկ, այսինքն իշխան:

Այսպիսով, Թեոդորոս Ոշտունին դառնում է ամբողջ Հայաստանի ռազմական, քաղաքական և վարչական ղեկավարը:

Բյուզանդական կայսրը նաև բյուզանդական մի զորախումբ է ուղարկում Հայաստան Պրոկոպիոս զորավարի հրամանատարությամբ, որը պետք է համագործակցեր հայոց իշխանի հետ:

Այս փոփոխությունները տվեցին իրենց դրական արդյունքները: 642 թ. հայ-բյուզանդական զորքերը Թեոդորոս Ոշտունու և Պրոկոպիոսի հրամանատարությամբ հարձակողական գործողություններ են ծավալում արարական զորքերի դեմ և տանում մի շարք հաղթանակներ: Նրանք գրավում են Բատնա-Սարուց քաղաքը, ավերում այն և ավարով վերադառնում Հայաստան: Դրանից հետո արարական զորքերը մոտ մեկ տասնամյակ չեն փորձում Ասորից կողմից ներխուժել Հայաստան:

Արարական զորքերը փոխում են Հայաստան ներխուժելու երթուղին, որը կապված էր նաև նրանց արշավանքների գլխավոր ուղղության փոփոխության հետ: Այդ ժամանակ գլխավորը դառնում է պարսկական ուղղությունը: 642 թ. Նիհավանդի ճակատամարտից հետո, որը ուղարձավ

վեռական Սասանյան Պարսկաստանին վերջնականապես պարտության մատնելու գործում, արաբները գրավում են նաև Ատրպատականը:

Դրանից հետո խալիֆա Օմարն առանձին զորախմբեր է ուղարկում դեպի Մուղան, Տփոհս. Ալանաց լեռներ: Ահա այս արշավանքի շրջանակներում արաբները 642–643 թթ. ասպատակում են նաև Դայաստանը: Նրանք գրավեցին Գորեն գավառը, Նախիջևանը և հարակից տարածքները: Զորքի մի մասը գերիներով անցնում է Երասխը և վերադառնում իր երկիրը: Սակայն մի զորախումբ շարունակում է մնալ գրաված վայրերում, անհանգստություն պատճառելով հայերին:

Թեոդորոս Շշտունին հասկանում էր, որ նման իրադրության հետագա պահպանումն ի նպաստ հայերի չեր և անհրաժեշտ է գտնում հակահարձակման անցնել: Նա փորձում է դրանում համոզել նաև բյուզանդական Պրոկոպիոս գրավարին, սակայն ապարդյուն: Վերջինս դա նպատակահարձար չի գտնում: Ստեղծված պայմաններում Թեոդորոս Շշտունին հարկադրված էր գործել միայնակ և հրամայում է հայոց գորքին անցնել հարձակման: Դայկական զորքի հարձակումը պսակվում է հաջողությամբ: Նրանք հաղթում են արաբներին և կայանում Վասպուրականի Գառնի գավառում:

Ի տես հայերի փառավոր հաղթանակի, Պրոկոպիոս հրաման է արձակում իր զորքերին նույնպես հարձակման անցնել արաբների դեմ: Սակայն նրա 80 հազարանոց բանակը պարտություն է կրում արաբներից, որոնց զորքերի թվաքանակը չեր անցնում 10 հազարից: Դրանից հետո արաբները նեծքանակ ավարով հեռանում են Դայաստանից և վերադառնում Աստրատական: Դայ պատմիչ Ղևոնդի Վկայությամբ դա տեղի է ունեցել հիջրի քսաներկուերորդ տարում, որը համընկնում է մեր թվագրության 642–643 թթ.:

Դրան հաջորդած տարիներին, մասնավորապես Պրոկոպիոսի կրած պարտությունից հետո, որի համար բյուզանդական զորավարը փորձում էր մեղքը բարդել հայերի և անձամբ Թեոդորոս Շշտունու վրա, որոշակիորեն սրվում են հայ–բյուզանդական հարաբերությունները: Գործն անգամ հասավ այնտեղ, որ Թեոդորոս Շշտունին ծերրակալվեց և այդ վիճակում ներկայացվեց Կոստանդ կայսրին: Վերջինս զգալով, որ շատ հեռու են գնացել, նրան ազատ է արձակում և կրկին նրան հաստատում որպես Դայաստանի պատրիկ՝ իշխան: Թեոդորոս Շշտունին 649 թ. վերադառնում է Դայաստան:

Իշխանի վերադարձը Հայաստան ճիշտ ժամանակին էր: 650 թ. սկսվեց արաբների նոր ներխուժումը Հայաստան: Անտիռքի և Վերին Միջազգետքի կուսակալ Սուլավիայի հրամանով արաբները հարձակումը կրկին սկսեցին Աստրապատականից: Նրա գործը բաժանվեց երեք գորախմբի: Մի խումբը ներխուժեց Սյունիք, երկրորդ՝ Վասպուրական, իսկ երրորդը՝ Աղվանք: Արաբական գործերը մեծ ավերածություններ գործեցին Վասպուրականի մարզում, հասան Կոգովիտ և պաշարեցին Արծափ ամրոցը: Գրավելով ամրոցը, նրանք կողոպտեցին այն, շատերին սպանեցին և շատերին էլ գերի վերցրեցին: Սակայն իր գործով վրա է հասնում հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին և պարտության մատնում արաբներին: Նրանք տալիս են 3 հազար զոհ և նահանջում: ճակատամարտում զոհվում են նաև արաբական երկու գորահրամանատարներ՝ Օսմանը և Ուկրան: Ռազմական այդ փայլուն գործողության շնորհիկ ազատագրվեցին բազում հայ գերիներ:

Այդ հաղթանակի շնորհիկ բարձրացավ Թեոդորոս Ռշտունու հեղինակությունը և հայոց բանակի օգին:

#### 4. Արաբա-հայկական 652 թ. պայմանագիրը

Արաբական երեք արշավանքները և պարբերաբար կրկնվող ներխուժումները Հայաստան, ստիպում են Թեոդորոս Ռշտունուն և հայոց ավագանուն խորին արաբական խալիֆայության հետ հետագա փոխհարաբերությունների մասին և ուղիներ փնտրել երկրի անվտանգությունն ապահովելու համար:

Դա էր պարտադրում նաև Բյուզանդիայի հետ ունեցած հարաբերությունների բնույթը:

Հայաստանում չեն նոռացել հայոց իշխանի նվաստացուցիչ ծերբակալությունը բյուզանդացիների կողմից և նրա գերեվարությունը Կոնստանդնուպոլիս: Թեոդորոս Ռշտունուն մտահոգում էր նաև այն պարագան, որ արաբների 650 թ. հարձակման և Հայաստան ներխուժելու նախօրեին, բյուզանդական գործերը, առանց հայերին նախօրոց տեղյակ պահելու, հանկարծակի հեռացան Հայաստանից, մեն-մենակ թողնելով հայերին արաբների դեմ-հանդիման: Այս բոլորին գումարվում է նաև Կոստանդ Ա կայսեր որոշումը՝ ստիպել հայերին ընդունել քաղկեդոնությունը, որը մեծ հարված էր լինելու հայության ինքնության պահպանման հենասյուներից մեկին՝ հայոց եկեղեցուն:

Այսպիսով, Բյուզանդիան դադարեց հայերի աչքում հուսալի դաշնակից լինելուց: Դեռ ավելին. կայսրն ամեն ինչ անում էր արաբների հետ հաշտության եզրեր գտնելու համար, որը նրան հաջողվում է իրականացնել 650–651 թթ.:

Ստեղծված պայմաններում, Թեոդորոս Ռշտումին, այդ հեռատես և ճկուն պետական այրը, ճտահոգ Հայաստանի ապագայով և անվտանգության խնդիրներով, նոր ռազմավարություն է որդեգրում:

Տա որոշում է պայմանագիր կնքել արաբական խալիֆայության հետ և կարգավորել Երկու Երկրների փոխհարաբերությունները: Թեոդորոս Ռշտումին, նաև, հարաբերությունները խզում է Բյուզանդական կայսրության հետ, ապա բանակցություններ սկսում Ասորիի կուսակալ Մուավիայի, խալիֆայության ամենաազդեցիկ գործիչներից մեկի հետ, որը մի քանի տարի անց նստեց խալիֆաների գահին:

Դարաբերությունների հստակեցումը համապատասխանում էր նաև արաբական խալիֆայության շահերին:

Այստեղ պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք: Չնայած արաբական ասպատակություններին և ներխուժումներին Հայաստան, առանձին քաղաքների և բնակավայրերի գրավմանը, ավարառությանը և գերեվարությանը, այդուհանդեռ, Հայաստանը չէր համարվում խալիֆայության կողմից նվաճված Երկիր: Արաբական զորքերն ամեն անգամ անհաջող են հայաստանում, այլ կրկին հեռանում են և վերադառնում իրենց Երկիրը: Այդ պատճառով էլ, արաբական առաջին արշավանքները Հայաստան VII դ. 40–50-ական թվականներին, համարվում են հետախուզական բնույթի:

Դասկանալի է, որ Երկար այդպես չէր կարող շարունակվել: Երկու կողմերին էլ անհրաժեշտ էր կարգավորել իրենց փոխհարաբերությունները, հաշվի առնելով ուժերի փոխհարաբերությունը նրանց միջև և տարրածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը:

Այդ իրողության արտացոլումը հանդիսացավ 652 թ. արաբա–հայկական պայմանագիրը:

Դա Երկու Երկրների միջև կնքված առաջին դիվանագիտական պաշտոնական փաստաթուղթն էր, որը որոշում էր Հայաստանի քաղաքական կարգավիճակը և սահմանում Երկու կողմերի հարաբերությունների բնույթը, նրանց իրավունքները և պարտականությունները:

Սեբեոսի կողմից բերված տեքստում պայմանագիրը բնութագրված է որպես հաշտության պայմանագիր՝ «Այս լիցի ուխտ հաշտութեան

ինոյ ընդ իս և ընդ ծեզ»: Դայաստանը ճանաչում է Արաբական խալիֆայության գերիշխանությունը, որը, սակայն, երաշխավորում է Դայոց իշխանապետության քաղաքական գոյավիճակը. ընդունում նրա ներքին ինքնուրույնությունը: Իշխանապետությունը երեք տարի ժամանակով ազատվում էր հարկ վճարելուց, որից հետո վճարելու էր այնքան, որքան կամենար:

Պայմանագրի կարևոր մասերից էին հայկական գինական ուժին և երկու երկրների միջև ռազմական համագործակցությանը վերաբերող հատվածները: Դայոց իշխանապետությունն իրավունք էր ստանում ունենալ իր սեփական ռազմական ուժերը՝ 15 հազարանոց այրուծի, որի ծախսերը հոգալու էին հայ նախարարները: Արաբական կողմը պարտավորվում էր հայոց հեծելագումն չօգտագործել Ասորիքում, որի կառավարիչն էր պայմանագիրը ստորագրած Մուավիան: Բայց պարտավոր էր խալիֆայի հրամանով մասնակցել նրա պատերազմական գործողություններին, այնտեղ, ուր և երբ նա կիրանայեր:

Արաբական կողմը պարտավորվում էր հայկական թերդերում չտեղակայել արաբական ռազմական ուժեր:

Եվ, վերջապես, պայմանագրի կարևոր կետերից մեկն էլ վերաբերում էր փոխառարձ օգնությանը: Այնտեղ ուղղակի ասկած էր, որ եթե Դայաստանը ենթարկվի ռազմական հարձակման, այդ թվում և Բյուզանդիայի կողմից («եթե զայ Դոռուն ի վերայ ծեր»), ապա հայերի պահանջով խալիֆայությունը պարտավորվում էր հայերին որպես օգնություն այնքան զորք ուղարկել, որքան նրանք կկամքնան:

Խալիֆայի անունից պայմանագիրը ստորագրած Մուավիան երդվում էր «մեծն Աստծով, որ չի ստում», այսինքն ուխտադրութ չի լինի, հավատարիմ կմնա սույն պայմանագրին և նրանով վերցված պարտավորություններին:

Դժվար չէ կռահել, որ Դայաստանը, շնորհիվ այս պայմանագրի, ի դիմաց ոչ մեծ հարկի, որի չափաբաժնն ինքն էր որոշելու, և ռազմական գործողությունների մասնակցության, ստացավ ներքին լայն ինքնավարությամբ օժտված կիսանկախ պետության կարգավիճակ:

652 թ. պայմանագիրը հայ քաղաքական մտքի, կամքի, հեռատեսության և դիվանագիտական արկեստի խոշորագույն նվաճումն էր. Դայոց սպարապետ և իշխան Թեոդորոս Շատունու որպես պետական գործչի պատմական հաղբանակը:

Դայոց իշխանի անձնագոհության աստիճանի հասնող անձնական ներդրումն ավելի հասկանալի կրաօնա, եթե նշենք, որ նա, Մուավիայի հետ պայմանագիրն ստորագրելուց հետո, որպես պայմանագրին հավատարիմ մնալու երաշխիք, իր հարազատ որդուն պատանդ տվեց արաբներին:

Դետագա դեպքերը, կապված արարա-հայկական պայմանագրի նկատմամբ Բյուզանդիայի գրաված անբարյացակամ դիրքորոշման հետ, ցույց տվեցին, որ արարական կողմը պատրաստ էր կատարելու Դայաստանի հանդեպ ըստ այդ պայմանագրի ատանձնաժ իր պարտավորությունները: Նույնպիսի հաստատակամություն դրսնորեց նաև Դայաստանը և նրա իշխանը Արաբական խալիֆայության հանդեպ:

Բյուզանդիայի կայսր Կոստանդ Ⅱ սկզբում փորձեց սիրաշահելով թեոդորոս Ոշտունուն և հայ նախարարներին, ստիպել նրանց հրաժարվել արաբների հետ կնքված պայմանագրից և համագործակցությունից: Նա երկու անգամ նրանց հրավիրեց իր հետ հանդիպման, սակայն հայ նախարարները թեոդորոս Ոշտունու գլխավորությամբ մերժեցին կայսրի հրավերը, շատ լավ հասկանալով նրա նպատակները:

Կայսրը, անսալով հայերին պատելու և նրանցից վրեժինորի լինելու իր գորահրամանատարների համերաշխ պահանջին, 652 թ. աշնանը 100 հազարանոց զորքի գլուխն անցած շարժվեց Դայաստան:

Արաբական խալիֆայությունը, իմանալով այդ մասին, փորձեց հետ կանգնեցնել նրան Դայաստանի վրա արշավելու մտադրությունից: Մուավիայի երկու ներկայացուցիչներ հանդիպեցին Կոստանդ Ⅱ հետ Պերջանուն և դիմելով նրան, ուղղակի ասացին. մի գնացեք այնտեղ, այսինքն Դայաստան: Նրանք նույնիսկ սպառնացին բյուզանդական կայսրին, որ դա կարող է նոր պատերազմի հասցնել Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության միջև:

Բայց կայսրը մնաց անդրդպելի: Դավանաբար լուրջ չընդունելով արաբների սպառնալիքները և հայերին օգնելու նրանց պատրաստակամությունը, կայսրն ավելի խորացավ և մտավ Կարին քաղաք:

Թեոդորոս Ոշտունին, կատարելով սպառապետի և իշխանի իր պարտականությունները, դիմեց մի շարք քայլերի Դայաստանի պաշտպանությունն ուժեղացնելու և բյուզանդացիների հարձակմանը դիմակայելու համար: Նա ամրացավ Վանա լին Ախսամար կղզում, որը, ինչպես նշվել է, նա դարձրել էր իր նստոցը: Այդ քայլով նա ցանկանում էր ապահովել իր գործողությունների ազատությունը և հայոց զորքի ռազ-

մական գործողությունները դեկավարելու հնարավորությունը: Նա միաժամանակ հայկական գորքեր տեղադրեց գավառներում, համարելով դրանք նոր և բարձ մարտիկներով և համապատասխան զենքերով:

Բյուզանդական գորքերին դիմադրելու թեոդորոս Ռշտունու վճռականությունը պաշտպանության արժանացավ նաև Սյունիքի, Վիրջի և Աղվանքի կողմից:

Տափոք սրտի, մի շարք հայ նախարարներ, որոնք մինչ այդ համերաշխ էին թեոդորոս Ռշտունու հետ և պաշտպանում էին արաբների հետ մերձենալու նրա քաղաքականությունը, հեռացան նրանից և ներկայանալով Կոստանդ Ա-ին, համերաշխվեցին նրա հետ:

Օգտվելով այդ ընծեռնված հնարավորությունից, կայսրը թեոդորոս Ռշտունուն նզովի ենթարկեց, ապա և իր գորքերի և գորապետների հավանությամբ, նրան զրկեց Դայոց իշխանի պաշտոնից: Նշանակվեց նոր իշխան, որին կայսրը 40 հոգու ուղեկցությամբ ուղարկեց Դայաստան:

Թեոդորոս Ռշտունին, որ հետևում էր կայսրի և որոշ հայ նախարարների այս քայլերին, ծերբակալեց այդ ամկոչ «հյուրերին», մի մասին բանտարկելով Բաղեշի ամրոցում, իսկ մյուս մասին՝ Կանա լճի կղզիներում:

Բյուզանդիայում գարգացող իրադարձությունները հարկադրեցին կայսրին վերադառնալ իր մայրաքաղաքը: Սակայն նա մինչև մեկնելը Դայոց իշխան նշանակեց հույն Մավրիանոսին, նրա տրամադրության տակ բողնելով 20 հազարանոց լավ գինված մի գորաբանակ: Դա, անկասկած, նույնպես մեծ սպառնալիք էր Դայաստանին:

Թեոդորոս Ռշտունին, ստեղծված պայմաններում, հանաձայն 652 թ. արաբա-հայկական պայմանագրի որույթների, օգնություն խնդրեց Սուլավիայից: Վերջինս բավարեց Դայոց իշխանի խնդրանքը և նրան որպես օգնություն 7 հազարանոց մի բանակ ուղարկեց:

Արաբական օգնական գորքը թեոդորոս Ռշտունու հրամանով բանկեց հայոց Բգնունիք և Աղիովիտ գավառներում:

Դիմնական գործողությունները ծավալվեցին 653 թ. գարնանը: Դայ-արաբական միացյալ գորքը հայոց սպառապետ և իշխան թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ, ջախջախեց հունական բանակը և նրան դրւու շպրտեց Դայաստանից:

Այդ փայլուն հաղթանակից հետո, թեոդորոս Ռշտունին մեկնեց Ասորիքի և Վերին Միջագետքի կուսակալ Մուլավիայի մոտ՝ Դամասկոս: Նրանց հանդիպումը շատ ջերմ էր: Մուլավիան շատ բարձր գնահատեց

Թեոդորոս Ռշտունու հավատարմությունը արաբա-հայկական պայմանագրին և նրա դրսերած զինվորական մեծ հմտությունը, որի շնորհիվ ձեռք բերվեց երկու կողմերի համար այնքան կարևոր հաղթանակը:

Սուլավիան Ռշտունուն նվիրեց ոսկեթել հանդերձներ, որ արաբները սովորաբար նվիրում էին մեծ հեղինակություն վայելող գորավարներին և բարձրաստիճան պետական գործիչներին:

Թեոդորոս Ռշտունին ոչ միայն վերահաստատվեց Յայոց իշխանի իր պաշտոնում, այլև հանուն խալիֆայի. Սուլավիայի կողմից նշանակվեց նաև Վիրջի և Աղվանքի իշխան: Նրա իշխանության ներքո հայտնվեցին Յայաստանը, Վրաստանը, Աղվանքը. Կովկասը մինչև նորա պահակ:

Թեոդորոս Ռշտունին մահացավ 654 թ.:

Նա իր խելամիտ պետական քաղաքականությամբ, հայ ժողովրդի անվտանգ գոյությունը ապահովելու և ազգային ինքնությունը պահպանելու գործադրած ջանքերի շնորհիվ, խոր հետք է թողել հայերի պատմական հիշողության մեջ և դարձել Սասնա ծռեր եպոսի վիպական կերպարներից մեկի՝ Քեոփ Թեոփ (Թեսա Թորոսի) նախատիպը:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք Յայաստանի անցած ուղին և նրա քաղաքական գոյավիճակն այդ պատմական ոչ մեծ ժամանակահատվածում, ապա տեսնում ենք, որ Արևելյան Յայաստանը, Յայաստանի 591 թ. բաժանումից հետո, ունեցավ միայն հայ կառավարիչներ՝ ի դեմք հայ նախարարական տներից նշանակված մարզպանների, Արևմտյան Յայաստանում նտցվեց իշխանի նախատիտուոր որպես քարձրագույն կառավարիչ, որը նույնպես նշանակվում էր հայկական նախարարական Ռշտունի, Մամիկոնյան, Բագրատունի տներից:

Արաբական արշավանքների նախօրյակին, 639 թ. հաջողվեց Յայաստանի երկու մասերը միավորել և ստեղծել Յայոց իշխանապետություն, որն արաբներն այդ ընթացքում այդպես էլ չկարողացան նվաճել և կցել Արաբական խալիֆայությանը: Դա մի պետական կազմավորուներ էր, որը փայլուն կերպով խուսանավելով Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆայության միջև, կարողացավ պահպանել իր քաղաքական ինքնուրույնությունը և դառնալ տարածաշրջանային հարցերում իր դերակատարությունն ունեցող որոշակի քաղաքական գործոն. որը հաշվի էին առնում VII դ. այդ երկու հզոր պետությունները:

Դեռ, ավելին, հետագայում, պատմական մի կարճ ժամանակահատվածում՝ 680–688 թթ., Յայաստանը ծեռեց լրիվ անկախություն:

## 5. Դայերը Երուսաղեմում

Դայերը Երուսաղեմում հաստատվել են վաղնջական ժամանակ-ներից: Նրանց ներկայությունը վկայված է պատմական հեռավոր անցյալում, քրիստոնեական դարաշրջանի սկզբներին: Եվ, որ շատ կարևոր է, հայ համայնքը գոյություն է ունեցել նշտապես, առանց ընդհատումների: Սկզբնական շրջանում դրանք եղել են ուխտագնացներ, հոգնորականներ, որոնք այցելել են Տիրոջ գերեզմանը, ուսանողներ, որոնք ուսանելու կամ կատարագործվելու նպատակով մեկնել են Երուսաղեմ, ինչպես նաև առևտրականներ և այլ խավերի ներկայացուցիչներ: Նրանց գգալի մասն այնուհետև նշտական բնակություն է հաստատել այդ սուրբ համարվող քաղաքում:

Դայերը Երուսաղեմում և նրա շրջակայրում կառուցել են եկեղեցներ և վանքեր, որոնց թիվն ըստ Վարդապետ Անաստասի, որը Երուսաղեմ է այցելել VI դարի կեսին, հասնում էր յոթանասունի:

Դավանաբար IV կամ V դարում, ինչպես հաստատում է Վիկտոր Ազարիյան իր «Երուսաղեմի Դայկական քաղամասը» հետաքրքիր ուսումնասիրության մեջ, հայերն արդեն ունեցել են իրենց հատուկ քաղամասը Հին քաղաքում: Դայկական քաղամասը Հին քաղաքի չորս քաղամասերից մեկն էր: Մյուս երեքը քրիստոնեական, Մուսուլմանական և Հրեական քաղերն էին:

Այստեղ հայ եկեղեցու անբաժան տնօրինության տակ են եղել, և այժմ էլ շարունակում են մնալ, Երուսաղեմի մի շարք ամենակարևոր սրբավայրեր, ինչպես Սուրբ Հակոբի վանքը, Անայի և Կայաֆայի տները: Նա քրիստոնյա մյուս եկեղեցիների հետ միասին վերահսկում է Տիրոջ Սուրբ Գերեզմանը, Մարիայի գերեզմանը Գերսեմանում, Դամբարձման եկեղեցին Զիթենեաց սարի վրա և Բեթղեհեմի եկեղեցին:

Երուսաղեմի սրբավայրերի վերահսկողության աստիճանակարգով, Դայ եկեղեցին գոավում է Երրորդ տեղը Հունական և Հոռնեական եկեղեցիներից հետո, առաջ անցնելով ավելի մեծ եկեղեցիներից, ինչպես Ուսական ուղղափառ և տարրեր բողոքական եկեղեցիները:

Արաբական նվաճումներից հետո Երուսաղեմում ստեղծվեց նոր իրադրություն, որն ընդհանուր առմամբ ավելի բարենպաստ եղավ Դայ եկեղեցու հանար, քան էր Բյուզանդիայի տիրապետության շրջանում: Դայ եկեղեցին իր միաբնակ լինելու պատճառով անընդհատ ճնշման էր ենթարկվում Հունական եկեղեցու կողմից: Արաբները, որոնց համար

Բյուզանդական կայսրությունն այդ ժամանակ նրանց գլխավոր հակառակորդն էր, ավելի հանդուրժող քաղաքականություն են որդեգրում բոլոր այն ժողովուրդների և նրանց հաստատությունների նկատմամբ, որոնք հալածանքների էին ենթարկվում բյուզանդացիների կողմից:

Վիկտոր Ազարիյան նշում է, որ Դայ Եկեղեցու ղեկավարը, կանխատեսելով արաբների մոտակա նեխուժումը Երուսաղեմ, ճանապարհորդում է Մեջքա և Մուհամմադ մարգարեից ստանում հրովարտակ, որն Երաշխավորում էր Երուսաղեմում բնակվող հայերի կյանքի և գույքի ապահովությունը: Միաժամանակ մարգարեն ճանաչում է Դայ Եկեղեցու իրավունքները Երուսաղեմի բոլոր այն սրբատեղերի վրա, որոնք գտնվում էին նրա վերահսկողության տակ:

Երբ խալիֆա Օմարը 638 թ. գրավում է Երուսաղեմը, ապա նա իր նոր հրովարտակով հաստատում է բոլոր այն երաշխիքները, որ Մուհամմադ մարգարեն տվել էր Երուսաղեմի Դայ Եկեղեցուն: Դետազայում Սալահ աղ-Ղինը նույնպես ճանաչում է Երուսաղեմի Դայ Եկեղեցու բոլոր այն իրավունքները, որ նրան տվել էին իր նախորդները:

## Գլուխի հինգերորդ

### **ՕՄԱՅՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ (661–750 թթ.)**

#### **I. ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱԿԱՆ-ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ**

##### **1. Մուավիա I Օմայյան դինաստիայի հիմնադիր**

Օմայյան առաջին խալիֆան հանուխացավ Սիրիայի (հաճախ ասվում է Ասորիքի և Զազիրայի կամ Վերին Սիրազետքի) կուսակալ Մուավիա I: Նա պատկանում էր Կուրայշ ցեղի Օմայյա տոհմին:

Ինչպես նշվել է, այդ նույն Կուրայշ ցեղից էր Մուհամմադ մարգարեն, սակայն նա պատկանում էր նրա Դաշիմի տոհմին: Օմայյաների և Դաշիմիների միջև մշտապես եղել է հակադրություն, որը երբեմն վերածվել է քացահայտ թշնամանքի: Դիշենք, թեկուզ, Օմայյաների առաջնորդ Աբրու Սուֆիամի թշնամական դիրքորոշումը Մուհամմադ մարգարեի նկատմամբ, երբ վերջինս սկսեց նոր կրոնի՝ խալամի քարոզումը: Նա շատ մեծ ուշացումով միայն ընդունեց խսլանը, երբ այդ նոր կրոնի հաղթանակն անկասելի էր:

Պայքարը երկու ճյուղերի միջև նոր կրօնվ բորբոքվեց 656 թ., երբ սպանված Օսմանի փոխարեն, որը պատկանում էր Օմայյաներին, խալիֆա հոչակվեց Մուհամմադ մարգարեի հորեղբորորդի Ալին, որը Դաշիմիներից էր:

Մուավիան, ինչպես արդեն նշվել է, չընդունեց Ալիին որպես խալիֆա և քացահայտ պայքար սկսեց նրա դեմ, որը, ի վերջո, ավարտվեց Օմայյան Մուավիայի հաղթանակով:

Մուավիան դեռևս 660 թ., Ալիի կենդանության օրոք, իրեն Երուսաղեմում հայտարել էր խալիֆա: Դրա հետևանքով Եղավ մի պահ, երբ արաբական պետությունն ուներ Երկու խալիֆա՝ Ալին, որի նստավայրը Կուֆան էր Իրաքում, և Մուավիան, որը նստում էր Դամասկոսում, Սիրիայում:

Մուավիան Ալիի դեմ մղած պայքարում գործում էր մեծ վարպետությամբ, օգտագործելով ամեն մի հնարավորություն նրան վարկարեկելու համար: Այսպես, օրինակ, երբ 656 թ. սպանեցին Օսման խալիֆային, Մուավիան, որ արդեն սկսել էր պայքարը Ալիի դեմ, Դամասկոսի նզկիթում հավաքված մեծաթիվ հավատացյալների առջև ցուցադրեց սպանված Օսման խալիֆայի արյունաշաղախ շապիկը և նրա կնոջ՝ Նահլահի ծեռքի կտրված մասերը, որ նա կորցրել էր, երբ փորձել էր իր ծեռքով պաշտպանել ամուսնուն: Մուավիան, դիմելով այդ արարքին, փաստորեն Ալիին էր մեղադրում Օսման խալիֆայի սպանության մեջ: Դա ենցինալ մեծ ազդեցություն բռնեց հավաքվածների, և ոչ միայն նրանց վրա, և նպաստեց նոր համակիրներ շահելուն:

Ալին սպանվեց 661 թ. հունվարի 24-ի վաղ առավոտյան, երբ գնում էր մզկիթ առավոտյան իր ադոքքն անելու: Դրանից հետո Մուավիան խալիֆայի գահի համար այլևս ոչ մի ախտյան չուներ և ամարգել դարձավ Արաբական կայսրության նոր ղեկավարը՝ խալիֆան:

Մուավիայի խալիֆա դառնալը հերթական սովորական փոփոխություն չէր նշանակում: Նրա գալով տեղի ունեցան սկզբունքային փոփոխություններ արաբական խալիֆայության համակարգում:

Առաջին անգամ հաստատվեց կառավարող դիմնական՝ հիմնված ժառանգականության սկզբունքի վրա, երբ իշխանությունը հորից անցնում է որդուն և իշխանափոխությունը կարող է իրականացվել կտակով: Լեզվահիմության այս նոր սկզբունքը մինչ այդ անծանոթ էր արաբներին և, բնականաբար, Մուհամմադի մահից հետո երեք չեղ կիրառվել:

Երբ Մուհամմադը մահացավ, նրա շփորված գինակիցները և նվիրված հետևորդները, որպես ելք գտան Ալլահի առաքյալին փոխանորդ՝ խալիֆա ընտրելու ծնը, որն ավելի շատ պաշտոնի նշանակում էր հիշեցնում: Երևի այդ ժամանակ դա հեշտ և անենանպատակահամար ծնն էր, քանի որ Մուհամմադն արու զավակ չուներ, որն հավակներ նրան անմիջականորեն փոխարինելու:

Մյուս կողմից պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս: Այդ ժամանակ կենդանի էին և բոլորի աշքի առջև էին այն բոլոր գոր-

ծիչները, որոնք առաջին օրվանից եղել էին Մուհամմադի հետ, հավատացել նրա ուսմունքին և նրա հետ միասին, ուս-ուսի տված, նարունչել խլամի հաստատման և հաղթանակի համար: Եսկ դրանց թիվը շատ չէր և բնակ էլ դժբար չէր նրանց միջից ճիշտ ընտրություն կատարել և ամենաարժանավորին վստահել խալիֆայի պաշտոնը, այսինքն երկրի կառավարման ղեկը:

Առաջին չորս խալիֆաները, Աբու Բաքրը, որին համարում են Մուհամմադի «երկրորդ նս», Օմարը, Օսմանը և Ալին, որոնք ընդունվում են որպես ուղղափառ խալիֆաներ, խալիֆաներ դարձան հենց այդ սկզբունքների հիման վրա՝ ընտրությանք և Սուլիհամմադին ու իսլամին ցուցաբերած բացառիկ ժառայությունների համար:

Արաք պատմաբան Ֆ. Դիբբին առաջին չորս ուղղափառ (ռաշիդուն) խալիֆաների կառավարման ժամանակաշրջանը համարում է «խալիֆայության հանրապետական շրջան»: Թերևս սույն բնութագրությունը չափազանց մոդեռնացված է քաղաքական տերմինոլոգիայի առումով, սակայն կառավարման համակարգը բնութագրելու տեսակետից, նկատի ունենալով խալիֆայի ընտրությունը և ոչ թե ժառանգականությունը, այնքան էլ տարօրինակ և հեռու չէ իրականությունից:

Սակայն այդ սկզբունքը շատ շուտ սպառեց իրեն և կորցրեց իր կենսունակությունը: Յսկայական կայսրության կայուն, անխափան և առանց ցնցունների կառավարումը պահանջում էր նոր մոտեցում և սկզբունքորեն նոր մոդելի կիրառում: Այդպիսին հանդիսացավ ժառանգականության վրա հիմնված դիմաստիական կառավարման մոդելի ներմուծումը խալիֆայության պետական-քաղաքական համակարգում:

Այդ ծնը, հարկավ, նորություն չէր աշխարհում և վաղուց կիրառվում էր տարբեր երկրներում: Կարելի է ասել, որ կառավարման ծնի ընտրության հարցում Մուավիան թեև գնաց տրորված, սակայն ժամանակի ոգուն, ըմբռնումներին և ավանդությներին համապատասխան ճանապարհով:

661 թ. Մուավիա I-ը խալիֆա դառնալուց հետո, խալիֆայությունում որպես կառավարող դիմաստիա հաստատվեց Օմայյաների դիմաստիան: Եվ նա, ի կենսագործումն իր իսկ կողմից հռչակած ժառանգականության սկզբունքի, պաշտոնապես ժառանգորդ նշանակեց իր որդուն՝ Յազիդին, որն իր հորը փոխարինեց նրա նահկանից հետո՝ 680 թ. և որպես խալիֆա կայսրությունը կառավարեց մինչև 683 թթ.:

Դրանից հետո դիմաստիական-ժառանգական սկզբունքը դարձավ արաբական բոլոր պետությունների կառավարման միակ ծևը: Օմայյան խալիֆայությանը, որը գոյություն ունեցավ 661–750 թթ., հաջորդեց Աբբասյան խալիֆայությունը՝ 750–1258 թթ.: Եգիպտոսում հաստատված Ֆարիմյան խալիֆայությունը գոյություն ունեցավ 909–1171 թթ., իսկ Կորդովայի Օմայյան խալիֆայությունը՝ 929–1031 թթ.:

## 2. Երկարառակություն արաբական վերնախավում դիմաստիական կառավարման հարցի շուրջ

Օմայյանների դիմաստիայի հաստատումը հարթ չընթացավ: Օմայյաններն ընդհանրապես, և Սուլավիան մասնավորապես, ունեին շատ հակառակորդներ, որոնք հենց սկզբից վիճարկեցին Օմայյանների դիմաստիական իրավունքները: Դրանք բազմազան էին և շատ ազդեցիկ:

Ընդդիմության մեջ առաջնության դափնին պատկանում էր շիաներին, Ալիի կողմնակիցներին, որոնք գտնում էին, որ իշխանությունը խալիֆայությունում օրինականորեն պատկանում է իրենց: Նրանք Սուլավիային հայտարարեցին բռնատիրող (ուղուապատոր) և կոչ արեցին չենթարկվել նրան: Նրանք մեծ հույսեր էին կապում Ալիի և Ֆարիմյայի երկու որդինների՝ Սուլամնադ մարզարեի բոռներ Շասանի և Շուսեյնի հետ, որոնք հենց այդ հանգանքով մեծ վտանգ էին ներկայացնում նորընծա խալիֆային Սուլավիային:

Սուլավիան գործեց շատ արագ և վճռական: Նրա գործերը պարտության մասնեցին շիաններին և նրան հաջողվեց առժամանակ հնագանեցնել և իրեն ենթարկել իրացը:

Իր ուժոր խաղաց նաև Սուլավիայի քաղաքականությունը Ալիի որդինների նկատմամբ: Ալիի որդիններից գահի հավակնորդ էր հանդիսանում ավագը՝ Շասանը: Սուլավիան նրան «գնեց» շատ մեծ գումարով: Աղյուրները հավաստում են, որ Սուլավիան Շասանին ուղարկել է մի նազարաթ, առաջարկելով նրան դրա վրա գրել ցանկացած թիվը: Շասանը դրանից հետո Մուլավիային ընդունեց որպես խալիֆա: Նույն կերպ վարվեց նաև նրա եղբայրը՝ Շուսեյնը:

Օմայյաններին ընդդիմության երկրորդ կենտրոնը հանդիսացան խարիֆները, որոնք անրացել էին Իրաքում և Խուզիստանում: Նրանք տարված էին հավասարության գաղափարներով, որոնք գրավիչ էին իսլամական Ծննդված խավերի համար, և կողմնակից էին խիստ ծայրահեղ

միջոցների կիրառնան՝ իրենց նպատակներին հասնելու համար: Դավասարության վերաբերյալ գաղափարների տարածումը կարող էր լուրջ մարտահրավեր հանդիսանալ այլ սկզբունքների վրա խարսխված Օմայյաների համար: Խարիֆիների ելույթները, մասնավորապես 670 թ. ելույթը Բասրայում, Մոււավիան նույնպես ճշշեց մեծ դաժանությամբ:

Դինաստիայի հարցում Օմայյաների համար երրորդ և վտանգավոր կենտրոնը բուն Արարիան էր, իսլամի և խալիֆայության ծեսավորնան բնօրրանը, որտեղ գտնվում էին իսլամի երկու ամենահեղինակավոր սրբավայրերը՝ Մեքքան և Սադրիան: Արարիայի արհստոկրատիան գտնում էր, որ ամենից շատ իրավունք խալիֆայության հարցում նա ուներ, ինչպես եղել էր մինչ այդ: Մուհամմադի հին զինակիցները, անսարները, որոնք մարզարեի հետ միասին հանդիսացել էին ոչ միայն նոր կրոնի, այլև նոր պետության՝ Արաբական խալիֆայության հիմնադիրները, իրենց էին առաջին հերթին համարում խալիֆայի գահի արժանի հավակնորդներ:

Նրանք լավ էին հասկանում, որ ժառանգականության սկզբունքի վրա հիմնված Օմայյան դինաստիայի հաստատումը նշանակում էր, որ նրանք պետության կառավարման բոլոր լծակները կորցնում են, անցնում հետին պլան և դառնում լուսանցքային: Բնականարար, Մեքքայի և Սադրիայի արհստոկրատիան չեր ուզում հաշտվել նման իրողության հետ:

Նրանց դժգոհությունն էր հարուցում նաև այն հանգամանքը, որ Մուավիան արաբական պետության մայրաքաղաքը դարձեց Դամասկոսը: Իսկ դա նշանակում էր, որ խալիֆայության քաղաքական կենտրոնը Արարիայից տեղափոխվում էր Սիրիա, և Սիրիան էր դառնում խալիֆայության առանձնաշնորհյալ, այսպես կոչված թագավորական նարզը, որտանից բխող բոլոր քաղաքական և տնտեսական առավելություններով:

Զանքերի մեծ լարումով Մուավիային հաջողվեց հարաբերությունները կարգավորել Արարիայի ավագանու հետ, մշտապես շեշտելով, որ բոլոր նույնության ներք, խոնարիվում են Մեքքայի և Սադրիայի սրբությունների առջև և ընդունում նրանց ամենաբարձր և անառարկելի հեղինակությունը նույնությանական աշխարհում: Այդ ավագանուն նա կարողացավ ժամանակավորապես իր կողմը գրավել զանազան խոստումներով, թանկարժեք նվերներով, և այլն:

Մուավիային ըստ երթյան հաջողվեց վերացնել ընդդիմությունը, գոնե առերես, Օմայյաների կառավարող դինաստիա դառնալու դեմ:

Իսկ դա նշանակում էր, որ արարական պետության մեջ ճանաչվում էր կառավարման սկզբունքորեն այդ նոր ծևը:

Դրանից հետո նա ծեռնամուխ եղավ իր քաղաքական ծրագրի երկրորդ մասի՝ ժառանգականության հարցի լուծնանը: Մուավիան լավ էր հասկանում, որ միայն այդ ուղիով կարելի կիմներ ապահովել և կայուն դարձնել Օմայյաների դինաստիայի հարատևությունը:

Դա պատճառ հանդիսացավ, որ պայքարը նոր ուժով ծավալվի և քաղաքական երկապառակությունը ավելի խորանա: Պայքարի վերսկումը մի կողմից Մուավիայի և մյուս կողմից նրան հակառակորդ տարաշերտ ուժերի միջև ցուց տվեց, թե որքան փխրուն էր կարծեցյալ հաշտությունը և համագործակցությունը նրանց միջև:

Մուավիան պաշտոնապես իր ժառանգորդ նշանակեց իր որդուն Յազիդին, որը կփոխարիներ նրան որպես խալիֆա՝ նրա մահվանից հետո: Կարելի է ասել, որ դա խսկական քաղաքական փորորիկ առաջացրեց:

Մուավիայի այդ քայլի դեմ բացահայտորեն հանդես եկան Իրաքի երեխները: Մուավիայի հետ հանդիպման ժամանակ նրանց պատվիրակներն ուղղակի հայտարարեցին, որ նրանք դեմ են Յազիդին հաստատել որպես զահաժառանգ: Մուավիային մեծ դժվարությանք հաջողվեց ստիպել նրանց համաձայնվել իր առաջարկության հետ, օգտագործելով սպառնալիքների և սիրաշահելու լեզուն:

Ավելի դժվար էր գործը Արաբիայի, մանավանդ Սադինայի կառավարող վերնախավի հետ: Այստեղ էին կենտրոնացված Արարական խալիֆայության ամենաերեսելի դեմքերը, որոնք կամ նրանց նախնիները մեծ ծառայություններ էին մատուցել խալամին և խալիֆայությանը: Դա նրանց ապահովում էր մեծ հեղինակություն և իրավունք՝ հավակնելու խալիֆայի իշխանությանը: Բավական է դրանց շարքերում նշել այնպիսի անուններ, ինչպես խալիֆա Ալիի որդիներ Ջասանին և Ջուսեյնին, Աբու Բաքր, Օմար և Օսման խալիֆաների որդիներին և ուրիշների, որոնք գտնում էին, որ իրենք ավելի շատ իրավունք ունեն դառնալու խալիֆա, քան թե Յազիդը:

Դակամուավիական և հակայագիրական տրամադրությունների առաջացման մեջ մեծ դեր խաղաց իրեն՝ Յազիդի անծը և նրա մասին ծևապորված կարծիքը: Իսկ դա ի նպաստ զահաժառանգի չէր:

Նրա դաստիարակն է եղել բանաստեղծ, քրիստոնյա ալ-Ախտալը, որը մեծ ազդեցություն է ունեցել կյանքի, կորոնի և հավատի նկատմամբ Յազիդի պատկերացումների ծևակորման վրա:

Յազիդը կրոնամոլ չէր և բնավ չէր փայլում Կորանի պատվիրան-ները հետևողականորեն կատարելու մեջ: Դեռ ավելին, նա չէր թաքցնում իր, մեղմ ասած, ոչ հարգալից վերաբերմունքը Սեքքայի և Մաղինայի բնակիչների նկատմամբ, որոնք այդ սուրբ քաղաքների բնակիչներ լինելու հանգամանքը հակված էին օգտագործել իրենց առանձնահատուկ և մենաշնորհյալ կարգավիճակը պահպանելու և հանապատասխան օգուտներ քաղելու համար: Նա վարում էր ցոփի և շվայտ կյանք, տարված էր գինենոյլությամբ, խաղամոլ էր, որը Կորանը խստիվ արգելում էր, երգարվեստի և պարարվեստի մեջ սիրահար: Լուրջ աշխատանքի հակում չուներ և ժամանակի մեջ մասն անց էր կացնում որսորդությանը:

Մի հանգամանք ևս: Խալիֆաները և արաբական ավագանին քաղաքներում հաստավելուց հետո սովորաբար կապը չէին խզում անապատներում բնակվող իրենց քոչվոր քեղվին ցեղակիցների հետ: Յազիդը, ի տարբերություն նրանցից, անապատի մասին հիշում էր միայն այն ժամանակ, երբ հայտնվում էր ժանտախտը, որից փրկվելու համար նա, ինչպես ընդունված էր արաբների մոտ, ապաստան էր գտնում ավագուտներում:

Այս բոլորը նպաստել էր Յազիդի բացասական կերպարի ծնավորմանը, որն առաջացնում էր մեքքացիների և մաղինացիների խոր վրորվունքը, մանավանդ, որ նրանք իրենց համարում էին իսլամական նորմերի և Կորանի պահանջների անշեղ պաշտպաններ: Յազիդի նկատմամբ մաղինացիների կարծիքի լավագույն արտահայտությունն է հանդիսանում Օնար խալիֆայի որդու կարծիքը. «Եվ մենք պետք ենք դուք ու առաջապես շրջապատված են կապիկներով և շներով, խմում են գինի և հաճախ կատարում ամենաամորթալին»:

Յազիդի թեկնածության նկատմար եղած ընդդիմությունը Մուավիային հետ չպահեց իր մտադրությունից ստիպել բոլորին իր որդուն ճանաչել գահաժառանգ: Նա հասկանում էր, որ առաջին հերթին անհրաժեշտ է կոտրել մաղինացիների դիմադրությունը, կանգ չառնելով բռնությունների առջև:

676 թ. նա իր հեծելազորով մտավ Սեքքա, որտեղ այդ ժամանակ ապաստան էին գտել խալիֆայի գահի ապագա հավակնորդները: Նա այստեղ կատարեց մի ծիսակատարություն, որն ապշեցրեց բոլոր ներկաներին: Մուավիան Կաաբայի սուրբ քարի մոտ, սրերը մերկացրած իր հեծյալների ներկայությամբ, հավատարմության երդում տվեց իր որդուն՝ Յազիդին:

Մուավիան սպառնալիքներով և կաշառքով ի վերջո «կարողացավ» հաստատել Յագիթին որպես գահաժառանգ: Խսկ որա նշանակում էր, որ ժառանգականությունը դառնում էր դինաստիական կառավարման ամենաեական բաղադրատարրը:

Դարկ է նշել, որ իր քաղաքականությունը կիրառելիս և ընդդիմությանը անողոք ճնշելու ժամանակ, Մուավիան հենվում էր Սիրիացիների, նրանց կառավարող վերնախավի աջակցության վրա: Նրանք քաղաքական և տնտեսական առումով շահագրգոված էին, որ Սիրիան պահպանի Արարական խալիֆայության քաղաքական կենտրոնի հանգամանքը: Դա նրանց տալիս էր որոշակի առավելություններ, որոնք պահպանելու մեջ նրանք կենսականորեն շահագրգոված էին:

Խալիֆա Մուավիան մահացավ 680 թ. և նույն թվականին, ժառանգականության իրավունքով, գահին անցավ նրա որդուն՝ Յագիթին: Դրա դեմք ըմբուտացան խալիֆայության տարբեր, քավականին զորավոր ուժեր, որը վկայում էր այն մասին, որ նրանք թեև Մուավիայի ճնշման ներքո ժամանակին հարկադրված ընդունել էին Յագիթի քագածառանգ լինելը, բայց իրականում չէին հաշտվել այդ մտքի հետ: Յագիթի դեմ ծառավորվեցին երկու հիմնական կենտրոններ: Մեկը Իրաքում՝ շահները կամ ալիականները, իսկ մյուսը՝ Արարիայում՝ Մեքքայում և Մարինայում, որը գլխավորում էր Արդուլիա իրն Զուբեյրը, Մուհամմադ մարդարեի հորեղբորորդու տղան:

Ծիաները գտնելով, որ հարմար պահ է ստեղծվել գահի վրա նստեցնել Ալիի անմիջական շառավիղին, գաղտնի կապերի մեջ մտան Ալիի և Ֆարիմայի կրտսեր որդու, Մուհամմադ մարզարեի՝ կրտսեր թռուան՝ Շուսեյնի հետ (ավագ թոռը՝ Ջասանը մահացել էր դեռևս 669 թ., ենթադրում են, որ նրան բունավորել էին Մուավիայի իրամանով), որդելով նրան միանալ իրենց և բացահայտորեն հանդես գալ Յագիթի դեմ, խոստանալով նրան ամենալայն օգնություն: Որոշ տատանումներից հետո Շուսեյնը ընդունեց նրանց առաջարկությունը և վճռեց միանալ նրանց: Նա Մեքքայից, որտեղ բնակվում էր, ուղևորվեց Իրաք, դեպի Կուֆա, որտեղ կենտրոնացված էին շիաների ուժերը: Նրան ուղեկցում էին հարազատները և կողմնակիցների մի ոչ մեծ խումբ, ընդամենը 300 մարդ:

Սակայն Յագիթը և նրա թիկունքում կանգնած սիրիական ավագանին ևս քնած չէին և աշալուրը հետևում էին իրենց հակառակորդների գործողություններին: Խալիֆային հավատարին մի զորախումբ, բաղկացած 4 հազար հոգուց, 680 թ. հոկտեմբերի 10-ին Իրաքի Քերքելա

բնակավայրի մոտ շրջապատեց Շուսեյնին և նրա ուղեկիցներին: Նրանք, հասկանալի է, չէին կարող դիմադրել խալիֆայական գործին, իսկ շիամերի խոստացած օգնությունն ուշանում էր: Արդյունքում նրանց բոլորը ոչնչացվեցին: Սպանվածների մեջ էր նաև Շուսեյնը:

Շուսեյնը դրանից հետո դարձավ շիամերի սուլը նահատակը, իսկ Զերելան շիամերի կարսոր սրբակնտրուներից մեկը:

Դաշվեհարդար տեսնելով շիամերի և նրանց առաջնորդ Շուսեյնի հետ, Յազիդը ծեռնամուխ եղավ Մեքքայում և Մադինայում ամրապնդված իր հակառակորդների վերացմանը: Յազիդը սկզբում փորձեց խնդիրը լուծել բանակցությունների միջոցով, ծգտելով զանազան խոստումներով նրանց ենթարկել իրեն: Այդ նպատակով նա նույնիսկ մի պատվիրակություն հրավիրեց Մադինայից Դամասկոս: Բայց այն, ինչ պատվիրակությունը տեսավ և լսեց Դամասկոսում Յազիդի և նրա աշխարհիկ կյանքի և վայելքների մասին, ապշեցրեց նրա անդամներին:

Պատվիրակությունը վերադարձավ Մադինա և մանրամասն պատմեց այդ նասին, որը դժգոհության նոր ալիք բարձրացրեց Յազիդի և ընդհանրապես Օմայյաների ընտանիքի դեմ: Մադինայի գլխավոր մզկիթում հավաքված բնակչությունը և երևելիները Յազիդին հայտարարեցին իսլամի սուլը կանոններից շեղված և հավատը ուրացող, որը նշանակում էր, որ նա չի կարող լինել խալիֆ, և որ նրան որպես խալիֆ չեն ընդունում: Ի հավաստումն դրա, նրանցից յուրաքանչյուրը, իսլամական ավանդությի համաձայն, իր հագուստի որևէ կտորը նետում էր և հայտարարում: «Այսպես, ես չեմ ընդունում Յազիդ խալիֆային»:

Ապստամբած Մադինայի դեմ Յազիդի ուղարկած գործերը, որի միջուկը կազմում էին սիրիացիները, տարան կատարյալ հաղթանակ:

Դերբ հասավ Մեքքային, որը Յազիդի գործերը պաշարեցին 683 թ. սեպտեմբերին: Նա անողոք քարկոծնան ենթարկեց քաղաքը, մեծ ավերածություններ պատճառելով նրան: Քաղաքում հրդեհ բռնկվեց, որից տուժեց նաև Կաարան: Սակայն նա չհասցրեց գրավել սուլը քաղաքը: Նա մահացավ 683 թ. նոյեմբերին և ռազմական գործողությունները Մեքքայի դեմ դադարեցվեցին:

Յազիդի մահը պատճառ հանդիսացավ իշխանության համար պայքարի նոր ալիքի բարձրացմանը: Օմայյաների հակառակորդները խալիֆա հոչակեցին Արդուլլա իրն Զուբեյրին, որին անմիջապես հավատարմության երդում տվեցին Իրաքը, Դիջազը և Դարավային Արարիան:

Դա շատ լուրջ աջակցություն էր նրան՝ գահի համար մղվող կատաղի պայքարում:

Դրությունն ավելի բարդացավ, եթե հայտնի դարձավ, որ նրան պաշտպանում է նաև Սիրիայի մի մասը: Սիրիան ավանդաբար հանդիսանում էր Օմայյաների միջնաբերդը, ուստի նրա մի հատվածի անցնելը Արդուլլա իրն Զուբեյրի կողմը, Օմայյաների վիճակը դարձնում էր օրինական, թեև պետք է նշել, որ Սիրիայի մեծ մասը շարունակում էր հավատարիմ մնալ Օմայյաներին:

Իսկ ի՞նչ էր տեղի ունենում Օմայյաների ճամբարում:

Այստեղ սկզբնական շրջանում կատարյալ խառնաշփոթ էր տիրում: Յազիդի անսպասելի մահվանից հետո խալիֆայության գահը, ըստ ժառանգականության օրենքի, անցավ նրա որդուն՝ Մոււավիա II: Սակայն նա չհասցրեց իր դիրքերն ամրապնդել և երկիրը կառավարել: Իր հոր՝ Յազիդի մահվանից 40 օր անց, նա ժանտախտի գոհ դարձավ և խալիֆայի գահը մնաց թափուր:

Օմայյաները կամքնեցին իրենց դինաստիայից նոր խալիֆա ընտրելու անհրաժշտության առաջ: Նրանց ընտրությունն ընկավ Մրվան իրն ալ-Ղաքիմի վրա:

Նրա խալիֆա դառնալով խալիֆայի գահը Օմայյաների Արու Սուֆիանի ճյուղից, որի ներկայացուցիչներն էին Մոււավիա I, Յազիդը I և Մոււավիա II, անցավ Օմայյաների Մրվանյան ճյուղին:

Մրվան I դիմեց եռանդուն քայլերի իր իշխանությունը ամբողջ խալիֆայության մեջ հաստատելու համար: Նրան հաջողվեց կրկին Օմայյաների կողմը գրավել սիրիացիների այն մասին, որը Յազիդի մահվանից հետո անցել էր Արդուլլա իրն Զուբեյրի կողմը: Նրա մեծագույն հաջողությունը պետք է համարել և այն, որ նա կարողացավ ստանալ Եգիպտոսի աջակցությունը, որը նրան ճանաչեց որպես խալիֆա:

Սակայն ավելին նրան չհաջողվեց: 685 թ. նրան խեղդամահ արեց իր կինը, որը Յազիդի այրին էր: Նա ցանկանում էր, որպեսզի Մրվան I գահաժառանգ հայտարարի հանգուցյալ Յազիդի և իր որդուն՝ Խալիդին: Սակայն Մրվանը չէր ցանկանում դա անել, քանի որ ինքն ուներ որդի և նա, բնականաբար, կուզենար գահը փոխանցել իր հարազատ որդուն՝ Աբդ ալ-Մալիքին: Նա խալիֆա դարձավ 685 թ. և զահակալեց մինչև 705 թ.:

Աբդ ալ-Մալիքը կարողացավ իրեն ենթարկել Իրաքը, հեշտությամբ գրավել Մաղրինան և երկարատև պաշարումից հետո նաև Սեր-

քան: Մեջքայի համար մարտերում 692 թ. գոհվեց ինքնաքնչոչ խալիֆա Աբրուլլա իբն Չուբեյրը: Նրա գլուխը որպես ընծա ուղարկվեց Դամասկոս Արդ ալ-Մալիք խալիֆային, իսկ մարմինը ցուցադրվեց Մեջքայի պարիսպների վրա:

Իրաքի և Արարիայի հնագանդեցումով ամրապնդվեց Օմայյաների տիրապետությունն Արարական խալիֆայությունում:

Հետագայում, խալիֆաներ դարձան նաև Արդ ալ-Մալիքի չորս որդիները ևս, որի պատճառով Արդ ալ-Մալիքը պատմության մեջ նտել է որպես «քաջավորների հայր»:

### **3. Խալիֆայի կրոնական և աշխարհիկ կառավարման գործառույթների ծզդրտումը և կոնկրետացումը**

Սուլավիան և նրան հաջորդած Օմայյան խալիֆաները որոշակի հստակություն և կոնկրետություն մտցրին խալիֆայի իրավասությունների և պարտականությունների մեջ: Նրանք, հարկավ, չին կարող անտեսել գոյություն ունեցող ավանդությունը և չիննվել նրանց վրա: Այդուհանդեռձ, Վիթխարի չափերի հասնող կայսրության կառավարման բարդ խնդիրները պահանջում էին դեկավարման նոր մոտեցումներ՝ որանց կատարելագործման և հստակեցման առումով:

Նախ ծշտվեց «խալիֆան որպես Մուհամմադի փոխանորդ» լինելու հասկացողությունը: Խալամական աստվածաբան—տեսարաններն այդ բանածեց մեկնաբանեցին այն կերպ, որ Մուհամմադի խալիֆա, այսինքն փոխանորդ լինել չի նշանակում ուստուին՝ առաջքալին փոխանորդ լինել, քանի որ Ալլահի առաջքալին (ռասուլին) փոխանորդ լինել հնարավոր չէ, մանավանդ, որ Մուհամմադը համարվում էր վերջին առաջքալը: Ուստի վերոնշյալ բանածեց՝ «խալիֆան որպես Մուհամմադի փոխանորդ», մեկնաբանվեց հետևյալ կերպ: «Մուհամմադին հաջորդելը նշանակում է պետական սուվերենության հաջորդում»: Այլ կերպ ասած, խալիֆան մի անձնավորություն է, որը Մուհամմադին փոխարինում է ոչ թե որպես առաջքալի, այլ որպես պետության դեկավարի, պետության սուվերենի:

Դա շատ կարևոր և սկզբունքային բնույթի ծզդրտում էր:

Ելնելով դրանից, ընդգծվեց այն հանգամանքը, որ խալիֆայի ինստիտուտը գուտ կրոնական հնստիտուտ չէ: Կրոնական գործոնը, անշուշտ, խալիֆայի գործառույթներում շատ մեծ տեղ էր գրավում և շատ

ուժեղ էր ներկայացված: Խալիֆան որպես իմամ կատարում էր որոշակի կրոնական-հասարակական պարտականություններ, ինչպես համբող-հանուր (հասարակական) աղոթքի դեկավարումը, Ուրբաթօրյա խուս-քան՝ գլխավոր աղոթքի ծիսակատարության դեկավարությունը և հավա-տացյալներին ուղղած խոսքը, խալամի, հավատի և նրա օրենքների պաշտպանությունը և երաշխավոր լինելը և այլն: Դրա մեջ մտնում էր նաև պայքարն անհավատների, հերետիկոսների և ճշմարիտ ուղղուց շեղ-վածների, աղանդների, կեղծ մարգարեների և մահիների դեմ և այլն:

Բայց դրա հետ միասին սկսվում է ավելի շեշտվել խալիֆայի «Ե-միր ալ-Մո'ւմինին», այսինքն «Յավատացյալների Եմիր»: լինելու հան-գամանքը: «Եմիրը» այս պարագայում հասկացվում է որպես «հրամա-յող», անգամ «հրամանատար» լինել. թեև ավելի լայն առումով նա օգ-տագործվում է «տեր», «Վեհապետ» և «տիրակալ» իմաստներով: Այ-սինքն, խալիֆան կրոնի ուժն օգտագործում է որպես զենք խալիֆայու-թյան աշխարհիկ խնդիրների լուծման, այդ թվում և Դար ալ-Խալամի՝ Խ-լամի հայրենիքի տարածքների և սահմանների ընդարձակման համար: Եվ այդ խնդրի կատարման համար խալիֆան կարող էր հրամայել բռնոր հավատացյալներին՝ կատարելով գլխավոր հրամանատարի իր գինվո-րական ֆունկցիաները: Խսկ հավատացյալներն իրենց հերթին պարտա-վոր են անվերապահորեն ենթարկվել Եմիրին՝ իրենց հրամանատարին:

Մուավիայի և նրան հաջորդած խալիֆաների ժամանակ խալամա-կան աստվածաբանների կողմից մշակվեց և վերջնական տեսք ստա-ցավ խալիֆայի որպես անձի և հավատացյալների Եմիրի կերպարը: Սուլննի տեսաբանների մշակած կողեցսի համաձայն խալիֆան պետք է օժտված լիներ հետևյալ հատկանիշներով և բարեմասնություններով: Նա նաև և առաջ պետք է պատկաններ կուրայշ ցեղին, որից սերում էր Մուհամմադ առաքյալը: Ուղղափառ տեսության համաձայն, նա, ով չէր սերում կուրայշ ցեղից, չէր կարող նստել խալիֆայի գահին և կրել Մու-համմադի փոխանորդի տիտղոս:

Խալիֆա լինելու մյուս պայմաններն էին նրա արական սեօի պատկանելությունը և հասուն տարիք ունենալը. Ֆիզիկական և մտա-վոր առողջությունը, խիզախությունը, եռանդուն լինելը, որոնք համար-վում էին անհրաժեշտ հատկանիշներ խալիֆայության պաշտպանու-թյան համար:

Խսկ ինչ վերաբերում է խալիֆայի ֆունկցիաներին, ապա սուլննի-ների աստվածաբանական դպրոցի հիմնադրույթների համաձայն, խա-

լիֆան պարտավոր էր պաշտպանել և պահպանել իսլամական հավատը և խալիֆայության տարածքներն ու սահմանները, առանձնացնելով Սեքքայի և Մաղինայի պաշտպանության խնդիրը, և, ի հարկին, հայտարարել ջիհադ՝ սրբազն պատերազմ։ Նրա իրավասության շրջանակներում էր գտնվում պետական պաշտոնյաների նշանակումը, հարկերի հավաքը, որն արտակարգ կարևոր գործառույթ էր խալիֆայությունում բոլոր ժամանակներում, ինչպես նաև, այսպես կոչված, հասարակական ֆոնդի գլխավորումը։ Խալիֆայի կարևոր գործառույթներից էր արդարադատության իրականացումը և մեղավորներին ու հանցագործներին պատժելը։

Խալիֆան միաժամանակ վայելում էր այնպիսի արտոնություններ, որոնցից ուրիշ ոչ ոք չէր կարող օգտվել։ Նրա անունը պարտադիր պետք է հիշվեր ուրբաթօրյա աղոթքի՝ խուտբայի ժամանակ, միայն նա կարող էր կուել Մուհամմադի թիկնոցը՝ բուրդահը, պետական կարևոր պաշտոնական ծիսակատարությունների ժամանակ։ Նա էր Մուհամմադ մարգարեի մասունքների՝ իշխանության խորհրդանշից մականի, Կնիքի, կոշիկի, ատամների և մագերի խնամակալ-պահպանիչը։

Կարելի է ասել, որ խալիֆան իր լայն լիազորություններով և անսահմանափակ իշխանությանը հանդիսանում էր ուշ միջնադարյան Եվրոպայի բացարձակ միապետների նախակարապետը։

Խալիֆայության վերաբերյալ սուննի ուղղափառ աստվածաբանական տեսությանը զուգահեռ մշակվեց և հրապարակ իջավ նաև շիաների ասվածաբանական դպրոցի տեսությունը, որը մի շարք սկզբունքային հարցերում տարբերվում կամ հակառակ էր սուննի դպրոցին։

Շիաների դպրոցը գտնում էր, որ երկիրը պետք է կոչվի ոչ թե խալիֆայություն, այլ իմանաբ՝ իմամություն, նախապատվությունը տալով իմամների ինստիտուտին, որը անկյունաբարային է ընդհանրապես շիկազն ուսմունքում։ Այնուհետև, ըստ շիա թեոլոգների, խալիֆան (կամ իմամը) պետք է լիներ Ալիի ընտանիքից, նրա ուղղակի ժառանգներից։ Նրանց իրենց այդ տեսակետը հիմնավորում էին, ելնելով այն տեսադրությունց, որ, իբր, Մուհամմադն է Ալիին նշանակել իր անմիջական հաջորդ և ժառանգորդ։

Երկու աստվածաբանական դպրոցների տեսակետների տարբերությունը երկրի միապետի հարցում ավելի խորացրեց այն հակասությունները, որոնք մինչ այդ արդեն առկա էին նրանց միջև։ Այդ հակասությունը գործնականում այդպես էլ չհարթվեց նրանց միջև մինչև խալի-

ֆայության անկումը և ցարդ շարունակվում է արդեն որպես տեսական վեճ, որն անլուծելի է թվում:

Սուավիա I, հաշվի առնելով սուննի-շիա հակամարտությունը, իր մայրաքաղաքը հաստատեց Ղանասկոսում: Մինչ այդ, Ալիի օրոք, մայրաքաղաքը Կուֆան էր՝ Իրազօւմ: Օմայյան խալիֆա Մուավիան չէր կարող իր նստոցը թողնել Կուֆայում, Ալիի և նրա կողմնակիցների միջնաբերդում, որը նրա համար թշնամական միջավայր էր. որտեղ նա, բնականաբար, իրեն ապահով չէր զգում:

## II. ԱՐԱԲԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ

Արաբական նվաճումները, որոնք իրականացվեցին չորս բարեպաշտ, ուղղափառ խալիֆաների կողմից, և որոնց շնորհիվ Արաբական խալիֆայությունը դուրս եկավ Արաբիայի սահմաններից և աստիճանաբար վերածվեց ընդարձակ կայսրության, մի որոշ ժամանակ դադարեցվել էին: Դրա հիմնական պատճառը ոչ թե այն էր, որ խալիֆայությունը հրաժարվել էր նորանոր տարածքներ գրավելուց, նրանց խլամացումից և արաբականացումից, այլ այն, որ սկսվել էր ուժեղ մրցակցություն Ալիի և Մուավիայի, նրանց կողմնակիցների միջև իշխանության համար:

Պայքարն իշխանության համար ամբողջովին կլանել էր նրանց և նրանց մարդկային ու նյութական ռեսուրսները, որի պատճառով հնարավոր չէր ծավալել լուրջ ռազմական գործողություններ նոր տարածքներ նվաճելու համար:

Մուավիան դրականորեն լուծելով Օմայյան դինաստիան կառավարող դինաստիա և իր որդուն գահաժառանգ հաստատելու դժվարագույն խնդիրները, և այս կամ այն չափով իր իշխանությունը տարածելով նաև Իրաքի և Արաբիայի վրա, հնարավորություն ստացավ Վերսկսել իր նախորդների անավարտ թողած նվաճողական քաղաքականությունը:

Արաբական նվաճումները ծավալվում են երեք ուղղություններով՝ արևմտյան, արևելյան և հյուսիսային:

### 1. Արևմտյան ուղղություն

Այս ուղղությունը ներառնում էր Բյուզանդիան և Պյուտիսային Աֆրիկան, իսկ ապա նաև Արևմտյան Եվրոպան:

Արարական խալիֆայությունն այդ ժամանակ շարունակում էր Բյուզանդական կայսրությունը համարել իր գլխավոր մրցակիցը և թշնամին: Նրան ջախջախելը և նրա ժառանգությանը տիրանալը հանդիսանում էր Օմայյան խալիֆայության գլխավոր ռազմավարական խնդիրը:

Արաբները Բյուզանդիայի ղեն պայքարում մտցրին տակտիկական փոփոխություն: Եթե նախորդ խալիֆաները հիմնական շեշտը դնում էին ցամաքային գործողությունների վրա, Մուտավիան զարկ տվեց արարական հզոր նավատորմի ստեղծմանը, նպատակ ունենալով Բյուզանդական կայսրությունը պարտության մատնել ծովային մարտերում: Եվ, իրոք, նրան հաջողվեց ստեղծել մարտունակ ռազմական նավատորմ, որը հարձակումներ էր կատարում Բյուզանդական կայսրության փոքրասիական ափերի վրա:

**663–665 թթ. արաբական նավատորմն** իր առաջին փորձն է անում գրավելու Կոնստանդնուպոլիսը, որը, սակայն, ավարտվում է անհաջողությամբ: Հետագայում էլ նրանք մի քանի անգամ կրկնում են մայրաքաղաքը գրավելու իրենց փորձերը, բայց ապարոյում: Բյուզանդացիները կարողանում են պաշտպանել իրենց մայրաքաղաքը և հետ մղել արաբներին:

Բյուզանդացիների համար հատկապես մեծ վտանգ էր ներկայացնում արաբների հարձակումը 672., երբ նրանց հաջողվեց պաշարել Կոնստանդնուպոլիսը, որը տևեց յոթ տարուց ավելի, մինչև 679 թ.: Սակայն արաբներին այդպես էլ չհաջողվեց խորտակել պարհսպները և ներխուժել քաղաքը: Դրանում իր կարևոր դերը խաղաց այն պարագան, որ բյուզանդացիներն իրենց մայրաքաղաքը պաշտպանելիս արաբների ղեն առաջին անգամ կիրառեցին «հունական կրակը»: Դա քիմիական ոչ բարդ բաղադրություն ունեցող իրդեհածին հեղուկ էր, որ բյուզանդացիները նետում էին արաբական նավերի վրա և իրդեհ առաջացնում, որը խուճապի էր մատնում արաբական նավաստիներին: Արաբական շատ ռազմանավեր իրդեհի ճարակ դարձան: Կոնստանդնուպոլիսի յոթամյա պաշարումն ավարտվեց անհաջողությամբ և արաբները նահանջեցին:

Անհաջողություն կրեցին նաև արաբների ցամաքային զորքերը:

Ստեղծված պայմաններում խալիֆա Մուտավիան հարկադրված էր 679 թ. 30 տարի ժամանակով հաշտություն կնքել բյուզանդական Կոնստանտին կայսրի հետ, պարտավորվելով Բյուզանդիային հարկ վճարել:

Այսպիսով, թե՛ Սոււավիա I, և թե Յազիդ I որևէ հաջողության չարձանագրեցին Բյուզանդիայի դեմ մղած պատերազմական գործողություններում:

Դաշտության պայմանագիրը պարբերեբար խախտում էին երկու կողմերն էլ: Թեև լայնածավալ ռազմական գործողություններ Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության միջև այդ ժամանակահատվածում տեղի չունեցան, այդուհանդերձ, նրանք հարձակումներ էին գործում սահմանամերծ տարածքների վրա, գլխավորապես ավար ծեռց բերելու, թալանելու, հրկիզելու և ավերածություններ գործելու նպատակով:

Իրադրությունը փոխվեց VIII դ. սկզբներին: Խալիֆա Սուլեյմանը (715–717 թթ.), օգտվելով Բյուզանդական կայսրությունում մոտ 20 տարի տևած ներքին երկպառակություններից և անկայունությունից, կապված իշխանության համար պայքարի հետ, պատրաստեց մեծ նավատորմ և 716 թ. օգոստոսին, մոտ քառասունամյա ընդմիջումից հետո, կրկին պաշարեց Կոնստանդնուպոլիսը:

Դաշվի առնելով նախորդ տարիների անհաջողությունների փորձը, Սուլեյմանը մեծ քանակությամբ իր զորքերի տրամադրության տակ էր որեւ տարբեր տեսակի պաշարողական գեներ, գործիքներ և սարքեր, որոնց օգնությամբ նա հույս ուներ խորտակել կայսրության նայրաքաղաքի պարիսպները:

Բայց դա նրան չհաջողվեց: Կրկին իր դերը խաղաց «հունական կրակը», որի դեմ արաբները՝ «ալթիմիայի» հայրերը, այդպես էլ չկարողացան հակաբույն գտնել: Արդյունքն եղավ այն, որ արաբական նավատորմը շատ մեծ կորուստներ ունեցավ և այլևս ի վիճակի չեր որևէ լուրջ ռազմական գործողություններ կատարելու: Ուղիղ երկու տարի անց՝ 718 թ. օգոստոսին, արաբները վերացրին պաշարումը և տուն վերադաբան:


Արևմտյան ուղղությամբ արաբները մեծ հաջողություն ունեցան Ջուսիսային Աֆրիկայում, որն այդ ժամանակ Բյուզանդական կայսրության նահանգներից էր:

Արաբները Աֆրիկայի յուրացումը սկսեցին VII դ. 60–ական թվականների վերջերից: Այդ ժամանակ «Աֆրիկա» (արաբերեն հնյունաբանությամբ «Էֆրիկյա») ասելով դեռևս հասկանում էին Թունիսը: Արաբական տասհազարանոց գործը Օկրա զորակրամանատարի գլխավորությամբ Աֆրիկա ներխուժեց 667 թ., խալիֆա Մուավիայի օրոք: Նա

contournement 661-750 m.

contournement

contournement



բավականին արագ գրավեց մեծ տարածքներ և 670 թ. հիմնեց Կայրավան քաղաքը: Սկզբում դա մի ուսագմական ամրություն էր, որը հենակետ էր ծառայում արարների համար երկրի խորքը հետագա ներխուժման համար, բայց այնուհետև նա վերածվում է քաղաքի:

683 թ. արարները հասան արդեն Սավրիտանիա: Չորահրամանատար Օկրան, ինչպես վկայում է արարական լեգենդը, Տանժերի մոտ իր նժույգի վրա նստած փորձում է նտնել օվկիանոս: Սակայն նրա նժույգը ալիքների առջև վրնջալով, ընկրկում է, և Օկրան, սուրբ հանելով պատյանից, բացականչում է. «Թող Ալլահը Վկա լինի, որ ավելի հեռու գնալ չի լինի»: Նա այն կարծիքին էր, որ այլևս ցամաք, այսինքն երկիր չկար, որ նվաճեր:

Աֆրիկայի նվաճումն արարներն իրականացնում էին ոչ միայն բյուզանդացիների, այլև տեղական բնակչության՝ բերբերների դիմադրությունը հաղթահարելով: Դատկապես ուժեղ էր բերբերների դիմակայությունը: Արարների առաջխաղացումը կասեցնելու նպատակով, նրանք դիմում էին ամեն ինչի՝ ոչնչացնում էին ցանցատարածությունները, այգիները, ավազներով լցնում և փակում ջրհորները և այլն: Բայց, ըստ երևույթին, նրանք վաստ էին նանաչում արարներին, որոնց գործի մեջ մասը կազմված էր բերմիններից: Իսկ նրանց համար օրերով կտրել-անցնել մեծ տարածություններ առանց ջրի, անգամ սնունդի, սովորական երևույթ էր: Ուստի նրանք, չնայած համար դիմադրությանը, շարունակում էին իրենց հաղթարշավը: 698 թ. արարները խալիֆա Արդալ-Մալիքի հրանանով, վերջնականապես գրավում են Կարթագենը, որը համարվում էր բյուզանդական Աֆրիկա նահանգի մայրաքաղաքը:

VIII դ. սկզբին արարները հիմնականում ավարտեցին Աֆրիկայի նվաճումը: Նրանց տիրապետության տակ հայտնվեց ամբողջ Հյուսիսային Աֆրիկան՝ Եգիպտոսից մինչև Աստվածաշատ Հայոց:

Այս տարածքը արարները կոչեցին «Մաղրիբ», այսինքն Արևմտյան կողմն կամ երկրներ, ի տարբերություն «Մաշրիկի»՝ արևելյան երկրների:

Մաղրիբի առաջին կառավարիչ կամ խալիֆայի տեղապահ (փոխարքա) նշանակվեց Մուսա իբն Նուսեյրին, Օմայյան խալիֆայության ամենաերևելի զորահրամանատարներից մեկը: Նենց նրա հրամանատարությամբ արարական զորքերը 709 թ. հասան Աստվածաշատ Հայոցի ավերը:

Եարունակելով իրենց հաղթարշավը արևմտյան ռազմավարական ուղղությամբ, արարական գործեղջ Թարիքի գլխավորությամբ, որը ծագումով իսլամ ընդունած բերրեր էր, 710 թ. անցան Խսանիան Հյուսային Աֆրիկայից քաժանող նեղուցը և ներխուժեցին Պիրենյան բերակղզի Ալխեսիրասի շրջանում։ Սակայն դա հետախուզական բնույթ էր կրում։ Խսանիայի նվաճումը սկսվեց 711 թ., երբ արարական 12 հազարանց քանակը նույն Թարիքի հրամանատարությամբ մտավ Խսանիայի հարավային այն շրջանը, որը հետագայում նրա անունով, աղավաղված ծնով կոչվեց Գիրրալտար (արաբերեն ճիշտը կլինի «Զարալար-Թարիք» – «Թարիքի լեռ»)։

Խսանիայում կազմավորված Վեստգորեի թագավորությունն ի վիճակի չեղավ կասեցնել արաբների առաջնապացումն երկրի խորքը։ 711 թ. Բարբար գետի մոտ տեղի ունեցավ Թարիքի առաջին ճակատամարտը Վեստգորեի թագավոր Ռողրիգոյի հետ, որն ավարտվեց արաբների հաղթանակով։ Դա վճռական նշանակություն ունեցավ ամբողջ Խսանիան գրավելու մեջ։

Եռտով իր գործերով Խսանիա մտավ նաև Մուսա իբն Նուսեյրին, որն արագացրեց Խսանիայի նվաճումը։ Արաբները գրավեցին Կորորվան, Տոլեդոն, Սևիլիան և այլ քաղաքներ ու բազմաթիվ բնակավայրեր։

Խսանական շատ քաղաքներ և բնակավայրեր իրենք էին անցնում արաբների կողմը և օգնում նրանց ազատագրվելու վեստգորեի ատելի լծից և խոշոր ֆեոդալ-հողատերերի բռնություններից ու կամայականություններից։ Նրանք արաբներին ընկալում էին որպես ազատարարներ։

Պատմության մեջ շատ հաճախ են ժողովուրդները մոլորվում և իրենց հարստահարիչների և բռնակալների հակառակորդներին ընդունում իրենց բարեկամներ կամ ազատարարներ, անցնում նրանց կողմը։

718 թ. ավարտվեց համարյա ամբողջ Խսանիայի նվաճումը, որն արաբները կոչեցին Անդալուս։

## 2. 732 թ. Պուատիեյի ճակատամարտը

Խսանիա-Անդալուսի նվաճումը հետագա նվաճումների նոր հնարավորություններ բացեց արաբների համար մայրցամաքային Եվրոպա ներխուժելու համար։ Եվ արաբները չհապաղեցին։ Նրանք սկսե-

ցին Խսպանիային անմիջականորեն սահմանակից Գալլիայից, Ֆրանկ-Ների թագավորությունից (այժմյան Ֆրանսիան):

Այդ շրջանում Ֆրանկների թագավորությունը ծանր ժամանակներ էր ապրում, որի գլխավոր պատճառներից մեկը ֆեոդալական տեղական իշխանների կենտրոնախույս ծգտումները և կենտրոնական կառավարությունից նրանց կախվածությունը նվազագույնի հասցնելու համար նրանց պայքարն էր:

Արաբների առաջին ներխուժումը Գալլիա տեղի ունեցավ 720 թ.: Նրանք մտան նրա Սեպտիմանիա շրջանը և գրավեցին Նարբոննա քաղաքը: Արաբները կարծում էին, որ իրենց հեշտ հաղթանակներ են սպասում: Սակայն ֆրանկների ցուցաբերած ուժեղ դիմադրությունը Տուլուզում, ստիպեց նրանց իրենց նոր հակառակորդների նասին այլ կերպ մտածել և ավելի լուրջ մոտենալ նրանց:

Յավանաբար դա այն պատճառներից մեկն էր, որ արաբական երկրորդ ներխուժումը տեղի ունեցավ 732 թ., խալիֆա Դիչամի (724–743 թթ.) օրոք: Նրանք առաջ շարժվեցին Գարոննա գետի հովտով, Ակվիտանիայով, գրոհով վերցրեցին Բորդոն, այնուհետև Լիոնից ուղղվեցին դեպի հյուսիս-արևմուտք: Տուրից ոչ հեռու, Պուատիեյի մոտ արաբական գործերի դեմ դուրս եկավ ֆրանկների աշխարհազորը թագավոր Կարլ Մարտելի հրամանատարությամբ:

Երկու կողմերն էլ հասկանում էին, որ այդ ճակատամարտի ելքից շատ բան է կախված: Արաբների և ֆրանկների գորաբանակները յոթ օր շարունակ կանգնած էին դեմ-դիմաց և չին շտապում սկսել հարձակումը, վստահ չլինելով հաղթանակի հարցում: Ի վերջո, արաբների նյարդերով չփառացան և նրանք 732 թ. հոկտեմբերի 4–ին անցան գրոհի: Այս անգամ ճակատագիրը երես էր թերել նրանցից: Արաբական հեծելազորը, որը սովորաբար ահ ու սարսափ էր տարածում և հանդիսանում էր արաբների ամենասարսափազու գենքը, հենց սկզբից անհաջողության նատնչեց: Նա տանու տվեց մարտը ֆրանկների հեծելազորին, որը բախտորոշ եղավ ճակատամարտի ելքը հօգուտ ֆրանկների վճռելու հարցում:

Պուատիեյի ճակատամարտուն ավարտվեց արաբների պարտությամբ: Դա պատմական նշանակություն ունեցող ճակատամարտ էր: Ընորիկվ նրա, կասեցվեց արաբների հետագա առաջխաղացումը Եվրոպա: Այդ գործն իր հաղթական ավարտին հասցեց ֆրանկների թագավոր Պիապին Կարճահասակը, որը 759 թ. արաբներին դուրս նղեց Նարբոնից և Սեպտիմանիայից:

Դրանից հետո արաքներն այլս չեն մտածում Եվրոպայում նոր տարածքներ նվաճելու մասին և այդ ուղղությամբ որևէ փորձ չկատարեցին:

### 3. Արևելյան ուղղությունը: Միջին Ասիայի նվաճումը

Արևելյան ուղղությունն արաքների նվաճողական քաղաքականության երկրորդ ռազմավարական ուղղությունն էր:

Այն տարածքը, որ այժմ անվանում ենք Միջին Ասիա, հնում կազմված էր միանգամայն տարրեր շրջաններից և ոչ մեծ պետական կազմավորումներից, որոնք չունեին մեկ հավաքական անվանում և կրում էին տարրեր անուններ, ինչպես Սողո, Ֆերգանա, Խորեզմ, Թուխարստան և այլն: Դրանց մեջ առանձնանում էր Սավարաննահրը (արաքներն «Մավրանան և ահր», այսինքն «Այն, ինչ որ գետի այն կողմն է»): Գետ ասելով արաքները նկատի ունեին Ամու Դարյան: Սավարաննահրը Ամու Դարյայից այն կողմ ընկած տարածքն էր՝ մինչև Սիր Դարյա գետը:

Սավարաննահրը նշանակալի էր նաև մեկ այլ առօնով: Նա հանդիսանում էր Իրանի և Թուրքանի սահմանաբաժնը, երկու միանգամայն տարրեր երնունշակութային աշխարհների սահմանագիծը:

Արաքները Մավրաննահրին ընդիուած մոտեցան 661 թ., երբ Սուավիան արդեն դարձել էր խալիֆա և զահի Վրա իրեն համեմատաբար անուր էր գգում: Սակայն այս դեպքում ևս, ինչպես ընդունված էր արաքների մոտ, նրանց առաջին արշավանքները հետախուզական բնույթ էին կրում: Սովորաբար նրանք ներխուժում էին տվյալ երկիրը կամ տարածքը, ժամանակավորապես գրավում այն, ծանրանում իրադրությանը, և մեծ քանակությամբ ավար և գերիներ վերցնելով, հեռանում: Պատահում էր այդ տակտիկան կիրառվում էր մի քանի անգամ:

673 թ. արաքական զորքերն անցան Ամու Դարյա գետը: Նրանց հրամանատարն էր Իրաքում արաքական փոխարքա Ուրեյդուլլա իրն Զիյյաղը: Նրանք հասան մինչև Բուխարայի մոտերքը: Արաքական զորքերին ուժեղ դիմադրություն ցույց տվեց թուրքական և բուխարական միացյալ զինուժը: Դա ստիպեց Ուրեյդուլլային հաշտություն կնքել Բուխարայի թագուհու հետ և 674 թ. վերադառնալ խորասան. իր հետ տանելով մեծ քանակությամբ ուսկյա և արծաթյա դրամ, ոսկյա և արծաթյա ամանեղեն, մետաքսյա կտոր, զենք և 4 հազար գերի, որոնք դաշտապարտված էին ստրկության:

Արաբները 676 թ. կրկին անցնելով Ամու Դարյան, ներխուժեցին Սավարաննահր, դարձյալ նպատակ ունենալով գրավել Բուխարան: Նրանք, իրոք, ընդհուպ մոտեցան Բուխարային: Նրա թագուհին այս անգամ հարկադրված էր 300 հազար դիրիեմ փրկագին վճարել իր երկրության հետագա ասպատակությունից ազատելու համար: Սակայն արաբական զորավարը վերցնելով այդ գումարը, միաժամանակ որպես պատանդ վերցրեց բուխարական մեծահարուստների գավակներից մի մեծ խումբ և նրանց ուղարկեց Արաբիա:

Նետախուզական և ավարառության նպատակներով կատարվող արշավանքներին, VIII դ. սկզբներին հաջորդեցին արաբների լուրջ ռազմաքարական նպատակներ հետապնդող արշավանքները: Սավարաննահրի նվաճումն սկսվեց 705 թ. Կալիդ I (705–715 թթ.) խալիֆայության օրոց, որը խալիֆան հանձնարարեց Խորասանի փոխարքա, տաղանդավոր զորավար Քուտեյր իբն Մուսլիմին: Նա 10 տարվա ընթացքում նվաճեց Սավարաննահրը՝ Թուխարստանը Բալս (Բակտրա) մայրաքաղաքով, Բուխարան և նրա շրջակա տարածքները Սողորում, Խորեզմը և այլն: 712 թ. Քուտեյրի զորքերը սկսեցին Սամարղանդի՝ Սողոյի մայրաքաղաքի պաշարումը: Սողոյի թագավոր Գուրեկը օգնության խնդրանքով դիմեց թուրքական կազանին, Ֆերգանային և Չաշի (Տաշքեն) պետությանը, նրանց նախազգուշացնելով, որ «Եթե արաբները նվաճեն Սողոյը, ապա հերթը կիասնի նաև ծեզ»: Ֆերգանան և Չաշը, գիտակցելով իրենց զիլին կախված վտանգը, օգնական զորք ուղարկեցին Սողոյին, փրկելու պաշարված Սամարղանդը: Արաբները ջախջախեցին Սողոյին օգնության շտապող այդ զորախմբերը, որից հետո Սամարղանդի անկումը դարձավ անխուսափելի:

Զարգացնելով իրենց հաջողությունները, արաբները 713–715 թթ. ներխուժեցին Ֆերգանա և իրենց տիրապետությունը հաստատեցին այս հարուստ և կարևոր երկրանասի վրա: Խակ Չաշի նվաճումն իրականացվեց 751 թ., արդեն Աբրասյան խալիֆայության կողմից, որով ավարտվեց Ամու Դարյա և Սիր Դարյա գետերի միջև ընկած, քաղաքական և տնտեսական մեծ կարևորություն ներկայացնող տարածաշրջանի՝ Սավարաննահրի նվաճումը:

Այդ տարածաշրջանի նվաճումը և միացումը Արաբական խալիֆայությանը միայն դրանով չի սահմանափակվում: Դրա հետևանքով անմիջական շփման մեջ մտան երեք տարբեր երնորասայական և լեզ-

վամշակութային աշխարհներ՝ սեմական–արաբական, իրանական–հնդւրոպական և մոնղոլա–թուրքական:

#### 4. Ներխուժում Աֆղանստան և Ղնդկաստան

Արաբական նվաճողական քաղաքականությունն արևելյան ուղղությամբ չսահմանափակվեց Միջին Ասիայի գրավումով: Նա ունեցավ իր տրամաբանական ճյուղավորումները դեպի Աֆղանստան և Ղնդկաստան:

Խալիֆայության արևելյան տարածքների կառավարիչ Շաջագի նախաձեռնությամբ և իրամանատարությամբ VIII դ. սկզբներին արաբների նվաճողական քաղաքականությունը տարածվեց Աֆղանստանի, Արևելյան Իրանի և Ղնդկաստանի վրա: Արաբները բավականին հեշտությամբ գրավեցին Աֆղանստանի հարթավայրային շրջանները և մտան Քարուլ:

Շաջագի իրամանով կազմավորվեց մի գորախումբ, բաղկացած գլխավորապես 6 հազար սիրիացի զինվորներից, որի հրամանատարությունը կատարում էր Բերնանի կառավարիչ Սուլհամմադ իրն ալ–Կասիմին: Այս գորաբանակը 710 թ. ներխուժեց Ղնդկաստան: Գրավելով Մուկրանը, ալ–Կասիմն անցնելով Բելութիստանով, 711–712 թթ. մտավ Մինդ և Ղինդոսի գետահովտուր: Այստեղ նա գրավեց մի քանի քաղաքներ, ինչպես Դայրուլը, Նիրունը (ժամանակակից Շայդարաբաղը) և այլն:

Արաբական զորքերը համար դիմադրության հանդիպեցին Սինդում, որի կառավարիչ Դահիրը իր բանակի գլուխն անցած համարձակուրեն դեմ դուրս եկավ արաբներին: Սակայն նա պարտություն կրեց և ինքն էլ ընկավ մարտի դաշտում:

Արաբները շրջապատեցին Մինդում գտնվող Ուակար ամրոցը: Նրա կայագործ, որը բաղկացած էր 15 հազար մարտիկներից, համառորեն պաշտպանվում էր: Բայց ի վերջո ամրոցն ընկավ և անճնատուր եղավ հաղթողների ողորմածությանը: Բայց ոչ բոլորն այդպես վարվեցին: Պաշտօնան մեջ գտնվող, մարտի դաշտում գործած Մինդի կառավարիչ Դահիրի կինը և շատ ուրիշներ, գերադասեցին ինքնակիզվել, քան թե զերության մեջ հայտնվել, որը նրանք համարում էին անպատճերելություն:

Ալ–Կասիմը շարժվելով հյուսիս, մտավ հարավային Փենջար և տիրեց Մուլտան քաղաքին: Դա հանդիսացավ այն վերջին սահմանագիծը, որից այն կողմ արաբները չանցան և արաբական նվաճումներն հետագա գարգացում չունեցան:

Արևելյան ուղղությամբ ծեզք բերված նվաճումների շնորհիվ, Արարական խալիֆայության կազմում հայտնվեցին նոր ընդարձակ տարածքներ, բազմաթիվ տարալեզու և տարբեր դաշտաների տեր ժողովուրդներ, և խալիֆայությունը, իրոք, ձգվեց Դնիկաստանից մինչև Ատլանտյան օվկիանոսի ափեր և Արևմտյան Եվրոպ:

### 5. Հյուսիսային ուղղություն

Արևմտյան և արևելյան ռազմավարական ուղղությունների հետ միասին արաբական նվաճումների երրորդ ռազմավարական ուղղությունը, ինչպես նշվեց, հյուսիսային ուղղությունն էր: Արարական խալիֆայությունը ծգտելով ծավալվել դեպի հյուսիս, նպատակ ուներ նվաճել Կովկասը:

Արաբներն արդեն մի քանի անգամ հայտնվել էին կովկասյան տարածքներում՝ Հայաստանում, Վիրքում և Աղվանքում: Սակայն որպես կանոն դրանք հետախուզական բնույթ էին կրում և շատ հաճախ ավարառության նպատակներ հետապնդում: Իրադրությունն արմատապես փոխվեց VII դ. վերջերին և VIII դ. սկզբներին, որը կապված էր արաբական ընդիհանուր քաղաքականության փոփոխության հետ, երբ Օնայյան դինաստիան անրապնդելով իր դիրքերը խալիֆայությունում, անցավ բացահայտ նվաճողական քաղաքականության թե՛ արևմուտքում, թե՛ արևելքում և թե՛ հյուսիսում:

Օնայյան խալիֆայության նվաճողական քաղաքականությունը հյուսիսային ուղղությամբ սկսվեց Հայաստանից:

Հայաստանի վիճակը, ինչպես ցույց տրվեց նախորդ գլխում, յուրահատուկ էր: Դա մի իշխանապետություն էր, օժտված ներքին ինքնավարությամբ, համեմատաբար տանելի պայմաններով: Մուավիա I, դառնալով խալիֆա, 661 թ. Հայաստանի իշխան նշանակեց Գրիգոր Սամիկոնյանին, որն այդ պաշտոնում մնաց մինչև 685 թ.: Դրանք համեմատաբար խաղաղ տարիներ էին, որը զգալիորեն պայմանավորված էր այն հանգամանքով, որ Օնայյան խալիֆայությունը և Բյուզանդական կայսրությունը անընդմեջ պատերազմներ էին մղում միմյանց դեմ: Երկուսի համար էլ կարևոր էր Հայաստանի դիրքորոշումը իրենց թիկունքն ապահովելու տեսակետից: Ուստի նրանք մտադիր չէին և իրականում ի վիճակի չէին Հայաստանի դեմ լայնածավալ ռազմական գործողություննե-

որ դիմել: Դա նպաստավոր քաղաքական իրավիճակ էր ստեղծել Դայաստանի համար, որից նա օգտվում էր հմտությամբ:

Կարելի է ասել, որ համենատարար մեղմ պայմաններ գոյություն ունեին նաև Վիրքում և Աղվանքում:

## 6. Արմինիա վարչական միավորի ստեղծումը

Դայաստանի համար այդ բարենպաստ վիճակը պահպանվեց նաև Սուավիա I մահվանից հետո, Յազիդի խալիֆայության տարիներին: Դեռ ավելին, եթե Մուավիայի ժամանակ Դայաստանը խալիֆայությանը վճարում էր ոչ մեծ, կարելի է ասել խորհրդանշական հարկ, ապա նոր խալիֆայի ժամանակ նա դադարեց ընդհանրապես հարկ վճարելուց:

Դայաստանի նվաճումը սկսվեց խալիֆա Աբդ ալ-Մալիքի ժամանակ, որն ամրապնդելով իր գահը և իրեն հնազանդեցնելով խալիֆայության բոլոր մասերը, անցավ ակտիվ նվաճողական քաղաքականության: Աբդ ալ-Մալիքը դեռևս 693 թ. Ալտրպատականի, Դայաստանի և Զագիրայի (Միջագետքի) փոխարքա էր նշանակել իր եղբորը՝ Մուհամմադի իբր Սրվանին, որը 701 թ. իրականացրեց Դայաստանի գրավումը: Նա այդ նույն թվականին նվաճեց նաև Վիրքը, Աղվանքը և մերձկասպայան տարածքները: Այսպիսով, Դարավային Կովկասն ամրողությամբ անցավ խալիֆայության տիրապետության տակ:

Դարավային Կովկասի նվաճումից հետո, արաբական զորքերը շարունակելով հարձակումը, հասան նորա (Չողա) երկիր և իրենց տիրապետությունը տարածեցին նաև Ղերբենդի վրա: Սակայն այսուեղ նրանց տիրապետությունն երերուն էր և արաբները հետագայում նույնականացրեցին մի քանի անգամ վերանվաճել Ղերբենդը նրա հարակից տարածեների հետ միասին: Իրենց տիրապետությունը հաստատ դարձնելու համար, խալիֆա Վալիդը 734 թ. նոյնիսկ դիմեց մի այնպիսի աննախաղեա քայլի, ինչպես 24 հազար սիրիացիների վերաբնակեցումը Ղերբենդում և նրա շրջակայքում, որը պետք է դառնար հուսալի հենարան խալիֆայության համար:

Արաբական խալիֆայությունը նվաճված տարածքներից 701 թ. ստեղծեց նոր վարչական տարածք, որը կոչվեց Արմինիա: Նրա մեջ մտնում էին Դայաստանը, Վիրքը (Զուրզան), Աղվանքը (Առանց), մերձկասպայան շրջանները, որոնց հիման վրա հետագայում ծնավորվեց Շիրվանը և Ղերբենդը (Բար ալ Արվար):

Նորաստեղծ Արմինիա վարչատարածքային միավորը, քանի որ մտնում էր Աստղապատականի, Դայաստանի և Զագիրայի կուսակալության մեջ և Ենթարկվում նրա կուսակալին, ապա վերջինիս իրավասության շրջանակներում էր նրա կառավարչին նշանակելը, որը կոչվում էր ոստիկան: Ոստիկան կարող էր լինել միայն բարձրաստիճան արաբ: Նրա նստավայրը հայոց Ղվին քաղաքն էր:

Կուսակալը, Մուհամմադ իրն Մրվանը, Արմինիայի առաջին կառավարիչ կամ ոստիկան նշանակեց իր զինակիցներից մեկին՝ Արդալլահին:

### 7. Դայերի 703 թ. ապատամբությունը և Վարդանակերտի ճակատամարտը

Արդալլահը որդեգրեց դաժան քաղաքականություն Արմինիայի ողջ տարածքում: Նա վերացրեց ինքնավարության ամեն մի դրսնորում, խստությամբ սկսեց հավաքել հարկերը, առաջին հերթին քրիստոնյաներից գանձվող գլխահարկը՝ ջիզիան, մեծ չափերի հասան անտեղի պատիժները և կամայականությունները: Կուսակալ Մուհամմադ իրն Մրվանն անգամ արգելեց ծկնորսությունը Վանա լճում: Դայ շինականները գրկվեցին ծկնորսության իրավունքից, որը ծանր տնտեսական հարված էր նրանց համար: Նրա կարգադրությամբ նշանակվեց հատուկ արաբ պաշտոնյա, որին վերապահվեց ծկնորսության և ծկնավաճառքի արտոնությունը:

Կուսակալը և նրա կամակատար ոստիկանը նոր և շատ վտանգավոր քաղաքականություն սկսեցին կիրառել հայ նախարարների նկատմամբ: Նրանք որդեգրեցին հայ նախարարական տները ոչնչացնելու և նրանց հողային կալվածքներին տիրանալու քաղաքականություն: Նրանք մտորում էին հայոց այրուծին վերացնելու ծրագիր, որը զինաթափ կաներ և անպաշտապան կթողներ հայությանը: Արաբ ոստիկանը ծերբակալեց և Դամասկոս ուղարկեց Դայոց իշխան Սմբատ Բագրատունուն և հայոց Սահակ կաթողիկոսին: Իր դաժան քաղաքականության համար ոստիկան Արդալլահին ժամանակակիցների կողմից տրվել են «անողոք, անզգամ, լիրը, չարաբարո» մականունները:

Այս անհեօտես և դաժան քաղաքականությունը առաջացրեց հայերի, բոլոր սոցիալական խավերի՝ շինականների, ազնվականության և հոգնորականության խոր վրդրվմունքը:

Օգտվելով 702 թ. Խալիֆայության ներսում կրկին ծայր առաջ խառնակությունից, Դայոց սպարապետ Սմբատ Բագրատունուն և Սահակ կաթողիկոսին մեծ դժվարություններով հաջողվեց Սիրիայից Վերադառնալ Դայաստան: Դայոց ռազմաքաղաքական և հոգևոր առաջնորդ ների Վերադարձը և ներկայությունը հայրենիքում մեծ ոգևորություն առաջացրեց Դայաստանի բնակչության մեջ:

Դայերն այլևս չեն կարող տանել ծանր լուծը և դիմանալ անողոք բռնություններին: Ահա այսպիսի լարված մթնոլորտում 702 թ. Վերջերին սպանվեց Արմինիայի ոստիկանը:

Բայց դա չփոխեց և չեր էլ կարող փոխել դրությունը դեպի լավը Դայաստանում: Ոստիկան Արդաշակը լոկ կուսակալ Մուհամմադ իրն Մրվանի քաղքականության կիրառողն էր, իետևարար նրա վերացումը չհանգեցրեց լիցքաբափման:

Այդ բանը լավ էին ընթանում հայոց աշխարհիկ և հոգևոր առաջնորդները և նրանք ելք էին փնտրում ստեղծված ծանր դրությունից դուրս գալու համար: Այդ նպատակով Սմբատ Բագրատունին իր մոտ, Դարրույնքում, հրավիրեց հայ նախարարների գաղտնի ժողով, որին նաև նակացում էին Բագրատունի Աշոտ իշխանի որդի Սմբատը, Թեոդորոս Ռշտունու որդի Վարդը, իր եղբայրը՝ Աշոտը, Կասպուրականի և մյուս հայ նախարարները:

Դանգամանորեն քննարկելով ստեղծված իրավիճակը և քաղաքական հեռանկարները, նախարարները որոշեցին չապստամբել արաբների դեմ, բայց հեռանալ և կենտրոնանալ հայկական Տայք նահանգում: Խսկ հ՛չու հատկապես Տայքում: Դա բացատրվում է նրանով, որ նա գտնվում էր Բյուզանդիայի ազդեցության ոլորտում, որը որոշակի դժվարություններ կարող էր ստեղծել արաբների համար, եթե նրանք որոշեին հայ նախարարաններին ոչնչացնելու համար մտնել Տայք:

Բացի այդ, հայերը հույս ունեին որոշ ժամանակ մնալ Տայքում, այնտեղից հետևել դեպքերի զարգացմանը և առաջին խսկ հնարավորության դեպքում կրկին Վերադառնալ Դայաստանի ներքին նահանգները:

Պետք է նշել, որ ապստամբությանը դեմ էին Սահակ կաթողիկոսը և մյուս հոգևոր առաջնորդները:

Ի կատարումն Դարրույնքում ընդունված որոշման՝ ապստամբություն չբարձրացնել, բայց տեղափոխվել և ամրանալ Տայքում, հայ նախարարներն իրենց գնուերով և Սմբատ Բագրատունու գլխավորությամբ, անցնելով Արարատ լեռը, որւրա եկան Ավորի հայկական պատ-

ճակը, քանի որ բնակչության դեկավարումն իրականացվում էր հարկերի, մաքսային տուրքերի, տուգանքների հավաքման, պատերազմների ժամանակ ծեռք բերած ավարի և թալանի հաշվառման և բաժանման միջոցով: Իսկ պետական կառավարման այդ կարևոր բնագավառը այլևս չէր կարելի թողնել օտարների ծեռցում:

Կարելի է ասել, որ արաբական լեզվի կիրառումը պետական գործավարության, վարչաֆինանսական կառավարման մեջ, նշանակում էր, որ արաբական կառավարող վերնախավը լուրջ հայտ էր ներկայացնում ընդհանրապես դեկավարելու խալիֆայության պետական կառավարման ապարատը: Նա լիովին վերահսկողություն էր սահմանում ֆինանսական-հաշվառման ամբողջ ոլորտի վրա:

Նոր նոտեցումը կառավարման պետական ապարատին և գործավարությունը արաբերեն լեզվով վարելու որոշումը, սակայն, չէր նշանակում, որ նախկին աշխատակիցները, օտար հպատակներն ազատ արձակվեցին և փոխարինվեցին արաբ պաշտոնյաներով: Այդպիսի երևույթ զանգվածարար տեղի չունեցավ: Ոչ արաբ հպատակներն այդ ժամանակ նեկ դար էր, ինչ գտնվում էին արաբների տիրապետության տակ և առնվազն երկու սերունդ էր աճել, որը բավականին յուրացրել էր արաբական բարերը և սովորությունները, և նրանց մեջ քիչ չին այնպիսի մասնագետներ, այդ թվում և գրագիրներ, հաշվառողներ, ֆինանսիստներ և այլ գործավար-մասնագետներ, որոնք տիրապետում էին արաբերեն լեզվին և ի վիճակի էին գործավարությունը վարել արաբերեն: Նրանք մնացին իրենց տեղերում, գործավարությունը վարելով արաբերեն: Իսկ մի մասն էլ սկսեց արագացված տեմպերով սովորել արաբերեն:

Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ արաբները, անզամ երեկով թեղվինները, որոնք տեղափոխվել էին քաղաքներ և քաղաքատիա բնակավայրեր, ոչ մի հակում և ցանկություն չունեին նստել գրասենյակներում և հաշվառում կատարել: Դա նրանք հանրություն էին ոչ միայն տաղտկալի, այլև իրենց համար ոչ արժանապատիկ գործ: Դրա փոխարեն, նրանք իրականացնում էին ընդհանուր, և պետք է ասել, խիստ վերահսկողություն ամբողջ գործավարության, որպես պետական կառավարման համակարգի ամենաէական օղակի, վրա:

Դպրատակ և նվաճված մուսուլման ժողովուրդներին արաբերեն լեզվի պարտադրմանը նպաստում էր մի կարևոր հանգամանք ևս: Սուսուլմանների սուրբ գիրք՝ Կորանն արգելվում էր թարգմանել այլ լեզուների: Ուստի նրանք Կորանը կարուալու համար ունեին միայն նեկ եւը՝

սովորել և տիրապետել արարերենին: Եվ ջերմեռանդ ու աստվածավախ մուսուլմանները զանգվածարար ընտրեցին այդ ուղին. նրանք սկսեցին սովորել արարերեն:

### 3. Ազգային արարական դրամի ստեղծումը

Աբդ ալ-Մալիքի կարևոր նորամուծություններից էր ազգային արարական դրամի ստեղծումը: Խալիֆայությունում մինչև VII դ. Քերօները շրջանառության մեջ էին բյուզանդական ոսկյա և պարսկական արծաթյա դրամները, ինչպես նաև, սահմանափակ ծավալներով. Յինյարիների արծաթյա մետաղադրամները: Ֆիշտ է, առաջին խալիֆաներ Օմարը, Մուտավիան և մյուսները, այդ մետաղադրամների վրա դրոշմում էին Կորանից վերցրած առանձին արտահայտություններ և դարձվածքներ, սակայն դրանով ազգային դրամի ստեղծման հարցը չէր լուծվում: Այդ կարևոր հարցը պահանջում էր արմատական փոփոխություն:

Եվ Աբդ ալ-Մալիքը եղավ այն խալիֆան, որին վիճակված էր կատարելու այդ քայլը: Նրա հրամանով շրջանառությունից հանվեցին բյուզանդական ոսկյա և պարսկական բոլոր մետաղադրամները: Ամբողջ խալիֆայության մեջ մտցվեց արարական ազգային դրամ՝ ոսկյա դինարներ և արծաթյա դիրհեմներ: Խալիֆայությունն անցավ միասնական դրամական համակարգի: 695 թ. Դամասկոսում հատվեցին առաջին ոսկյա դինարները:

Դրամահատարաններ ստեղծվեցին ոչ միայն մայրաքաղաքում, այլև առանձին քաղաքներում: Բայց պահպանվեց մի եական տարրերություն: Ուսկյա դինարներ հատելու քացառիկ հրավունքը պատկանում էր խալիֆային, իսկ մնացած կուսակալները կարող էին հատել միայն արծաթյա դիրհեմներ: Սովորաբար այդ մետաղադրամների վրա գրվում էին իսլամին և Ալլահին վերաբերող ասույթներ, դրոշմում էր խալիֆայի պատկերը, որի ժամանակ այն հատվել էր, հատման տարեթիվն ու վայրը:

Ազգային դրամի ներմուծումը շրջանառության մեջ վկայում էր երկու քանի մասին, առաջին, որ խալիֆայության տարրեր մասերի միջև արդեն քավականին քարծր մակարդակի էին հասել առևտրական և տնտեսական կապերը, որն անհրաժեշտ էր դարձող միասնական ազգային դրամի ստեղծումը և օտար դրամի դուրս մղումը տնտեսական ոլորտից, և, երկրորդ, խալիֆայության կառավարող վերնախավը որդեգրել էր կառավարման համակարգի հետագա կենտրոնացման և խալիֆայու-

թյան համար կենսական նշանակություն ունեցող հարկային ապարատի գործունեությունը կարգավորելու և նոր հիմքերի վոա դնելու քաղաքականություն:

Ուշագրավ է, որ Բյուզանդիան բացահայտ թշանամանքով ընդունեց արարական ազգային դրամի ստեղծումը ու շրջանառության մեջ դնելը և բյուզանդիական դրամի շրջանառությունից դուրս մղումը, հերթական պատերազմական գործողությունները սկսելով խալիֆայության դեմ:

Սակայն դա դույզն իսկ չսասանեց խալիֆաների դիրքորոշումն ազգային դրամի հարցում:

#### 4. Արաբական ազգային գինված ուժերը

Օնայյան խալիֆայության պետական և վարչական կառավարման համակարգի բաղկացուցիչ մասն էին կազմում երկրի գինված ուժերը: Նրանք կատարում էին ներքին և արտաքին բնույթի բազմակի ֆունկցիաներ:

Կառուցվածքային առումով խալիֆայական բանակը շատ բան վերցրել էր բյուզանդիական բանակային կառուցվածքից: Նա բաժանվում էր հիմնական բանակային կորպուսների, որոնք ունեին իրենց մնայուն տեղակայումը՝ կենտրոնում, աջ և ձախ թևերում, առաջապահ և վերջապահ: Այսպիսի բաժանումը պահպանվեց ընդհուպ մինչև վերջին խալիֆան՝ Մրվան II (744–750 թթ.):

Մրվան II գոյություն ունեցող բանակային կառուցվածքը համարելով արդեն հնացած և իր դարն ապրած, հրաժարվեց նրանից և լուծարելով կորպուսները, անցավ նոր ձևի: Նախ, նա գգալիրեն կրնատեց զորքերի քանակը, ապա ստեղծեց համեմատաբար փոքր, սակայն հավաք, կոնպակտ մի ռազմական օրգանիզմ, որը նա անվանեց կուրորուս՝ կոհորտա: Նա աչքի էր ընկնում իր արագաշարժությանը և մաներելու մեծ հնարավորություններով:

Արաբական գինված ուժերը կազմված էին հետևակից, հեծելազորից, նավատորմից և ուղտերի գնդերից: Ենշտ է, ուղտերը երբենն ուլյն պես մասնակցում էին ճակատամարտերին, սակայն, նրանք հիմնականում օգտագործվում էին որպես փոխադրամիջոց ամրոցների պաշարման և գրավման համար սարքերը, բանակի կենսագործունեությունն ապահովող տարբեր բեռները: և այլ անհրաժեշտ իրեր տեղափոխելու հա-

մար: Այդ պատճառով էլ նրանց տեղը բանակի հետնամասում էր, նրանք սովորաբար զնում էին գործերի հետևից:

Օնայյան բանակի ներքին ֆունկցիաների մեջ առաջնայինը տիրապետող դինաստիայի և տվյալ խալիֆայի իշխանության անվտանգության ապահովումն էր: Զինված ուժերն էին հանդիսանում խալիֆաների հենարանը և այդ ինաստով արաբական հասարակության մնացած բոլոր խավերը գիշում էին նրանց: Զինված ուժերի օգնությամբ էին խալիֆաները ճնշում ժողովրդական ելույթները և վերացնում գահի նկատմամբ այլ հավակնորդների ոտնձգությունները, լինեին որանք կառավարող դինաստիայից, թե այլ, օտար ցեղախմբերից:

Երկար ժամանակ արաբական զինված ուժերի միջուկը կազմել են արաբական տարբեր ցեղերի աշխարհազորները: Սակայն խալիֆայության անընդհատ ընդարձակումը, նորանոր նվաճումները և դրանց հետ կապված նվաճած երկրների բնակչությանը հնագանդ պահելու խնդիրները, ակնհայտ դարձեցին, որ ցեղային աշխարհազորներն ի վիճակի չեն խալիֆայության առօն կանգնած քարդ խնդիրները լուծելու համար: Անհրաժեշտ էր որոշակի փոփոխություններ կիրառել զինված ուժերի համակարգում և կառուցվածքում:

Եվ Օմայյաններն այդ փոփոխությունն իրականցրին: Նրանք սկսեցին զորքը հանալու կամ ժամանակակից տերմինալոգիայով ասած, զինակոչել քաղաք-ճամբարների բնակիչներից:

Սակայն բոլորը չեն, որ կարող էին զորակոչվել և ծառայել քանակություն: Զինված ուժերում ծառայելու պարտականությունը դրված էր առարների վրա, որը միաժամանակ նրանց համար համարվում էր առանձնաշնորհում: Ընդորում զորակոչվում էին ոչ միայն մուսուլման, այլև քրիստոնյա արաբները, որոնց թիվը բավականին շատ էր հատկապես Սիրիայում և Պաղեստինում:

Զինված ուժերի մյուս հատվածը խալիֆայության տարբեր քաղաք-ճամբարներում տեղակայված արաբական կայազորներն էին: Արաբական կայազորներ կային Ֆուստառում (Կահիրե), Բասրայում, Կուֆայում, Դվինում, Նախիջևանում, Թրիլիսում, Ղերբենդում, Սամարդանում, Կորդովայում, Մուլտանում և այլ կենտրոններում: Կայազորների զինվորները և նրանց ընտանիքի անդամները պահպում էին տվյալ քաղաքի և նրա շրջակա բնակավայրերի տեղական բնակչության հաշվին:

Դրա հետ միասին զինվորները ստանում էին ոռնիկ և նյութական այլ օգնություն պետական գանձարանից, որը բավականին բարձր էր և

նրանց ապահովում էր բարեկեցիկ կյանք: Սակայն այստեղ հավասարություն չկար: Սիրիացիները, որոնց կազմում էին խալիֆայական գվարդիայի կորիգօր, ավելի բարձր էին վճարվում և օգտվում էին զանագան արտոնությունները, քան թե մյուսները:

Սակայն թող այն տպավորությունը չստացվի, թե ցեղերի գինուժը կորցրեց իր նշանակությունը: Բնավ: Խոսքն այդ մասին չէ, այլ այն, որ ցեղային աշխարհազորները սկսեցին ավելի ու ավելի մոտենալ կանոնավոր և կարգապահ գործերին և ավելի մեծ արդյունավետությամբ կատարել նրանց վրա դրված պարտականությունները:

Այս բնագավառում կատարվեց մի փոփոխություն ևս: Քաղաք-ճամբարներում գործերը և նրանց ուղեկցող բնակչությունը տեղակայվում էին ոչ թե խառը, այլ ըստ ցեղային պատկանելության: Փաստութեան տեղի էր ունենուն ցեղերի սահմանազատում: Դա կատարվում էր նկատի ունենալով երկու հանգամանք: Նախ, կանխել բախումները տարբեր ցեղերի միջև, որը սովորական երևույթ էր Արաբիայում: Դասկանալի է, որ միջցեղային բախումները կրուլացնենին բանակը և խալիֆայությունը, ընդհանրապես: Ցեղերի սահմանազատումը կոչված էր կանխել այդ վտանգավոր միտումները:

Երկրորդ, դա կարող է պարագանել թվական ցեղերի գինուժը պահելով միմյանցից անջատ և չթողնելով նրանց շփվել միմյանց հետ, դրանով խալիֆաները պահպանում էին ցեղերի միջև գոյություն ունեցող թշնամական հարաբերությունները, որը նրանց հնարավորություն էր տալիս հարկ եղած դեպքում ցեղերին լարել միմյանց դեմ, թույլ չտալ նրանց միավորվել ընդդեմ իշխանությունների, և այդ կերպ նրանց օգտագործել իրենց նպատակների համար:

Խալիֆայության բանակում ծառայում էին նաև ստրուկներ, բայց նրանց չէին վստահում ռազմական գործողություններ, այլ իրմանականում օգտագործում էին օժանդակ աշխատանքների մեջ:

Բանակ էին գորակոչվում նաև այսպես կոչված մավաները: Դրանք իրենց նախկին հավատից հրաժարված և խլամ ընդունածներն էին, որոնց հաճախ անվանում էին կլիենտներ: Նրանք պարտադիր դառնում էին այս կամ այն արաբական տոհմիկ խլամական ցեղի կլիենտը: Ֆ. Շիթբերն և Ե. Բելյասը գերադասում են նրանց անվանել նեղութևումանները: Ծասկանորեն նրանց իրավահավասար էին արաբ բնիկ մահմեդականներին, սակայն իրականում այդպես չէր: Նրանց նկատմամբ գործում էին մի շաղը սահմանափակումներ և միշտ չէր, որ նրանց լրիկ վստահում էին:

Դա դրսնորվում էր նաև բանակում: Օրինակ, արաք զորապետերը լրիվ չին վստահում նեղոմուսուլմաններին հատկապես մարտի ժամանակ և միշտ ապահովագրական միջոցառումներ էին նախատեսում:

Օմայյան խալիֆայության ժամանակ արաբական զինված ուժերին կառուցվածքային առումով քննորոշ էր ևս երկու առանձնահատկություն:

Առաջին, զիմնիներին թույլատրվում էր ունենալ իրենց առանձին ռազմական ջոկատներ, որոնք մասնակցում էին ռազմական գործողություններին:

Երկրորդ, Օմայյաններն իրենց մեծածավալ կայսրության առանձին շրջաններում կամ երկրամասներում թույլատրել էին պահպանել տեղաբնիկների տեղական զորքերը՝ իրենց իշխանների հրամանատարության ներքո: Պահպանվել էր, օրինակ, հայոց այրուծին որպես առանձին միավոր: Նա մարտի էր գնում Հայոց իշխանի հրամանատարությամբ, սակայն չէր տարրալուծվում արաբական բանակում: Նույնպիսի կարգավիճակ ունեին նաև պարսկական առանձին ֆեռայլական զինված ջոկատներ, թարթի իշխանները և այլն, որոնք պարտավոր էին խալիֆայի կամ փոխարքայի հրամանի դեպքում անմիջապես իրենց զորքերը դնել խալիֆայի տրամադրության տակ և մասնակցել ռազմական գործողություններին:

Ինչ վերաբերում է արտաքին ֆունկցիաներին, ապա խնդիրն այստեղ պարզ էր: Արարական բանակի գլխավոր խնդիրն էր Օմայյան դինաստիայի նվաճողական քաղաքականության իրագործումը և նոր երկրների նվաճումը, մի կողմից, և արաբական կայսրության տարածքային ամբողջականության պահպանումը և խալիֆայության վրա այլ պետությունների հարձակումների կանխումը, մյուս կողմից:

Այսպիսին էր ռազմական ուժերի կառուցվածքը Օմայյանների տիրապետության շրջանում:

Ինչպես տեսնում ենք, նա բազմաստիճան էր և ուներ բավականին քարդ կառուցվածք, սակայն հարմարեցված էր արաբական մտահայեցողությանը, սոցիալական կառուցվածքին, խալիֆայության կազմում գտնվող երկրների և նախկին պետությունների կարգավիճակին ու խալիֆայության առջև կանգնած ներքին և արտաքին խնդիրների կատարմանը:

Այդ խնդիրների իրագործումը համընկնում էր կենտրոնական իշխանության պահպանման և ամրապնդման առանցքային խնդրի հետ, որը բանակը միշտ համարել է իր կարևոր մենաշնորհը:

Չնայած վերոնշյալին, Օմայյան խալիֆայության ժամանակ պետական կառավարման համակարգում չստեղծվեց առանձին գինվորական ծառայություն, ինչպես հարկային և փոստային ծառայությունները: Դավանաբար դա բացատրվում է այն կարևոր դերով, որ բանակը խաղում էր խալիֆաների իշխանության պահպանման և ընդհանրապես պետության կանոնադրության: Խալիֆաները, քնականաբար, այդ կարևոր ուժը ցանկանում էին պահել իրենց անմիջական կառավարման ներքո ու հսկողության տակ և չին վստահում դա փոխանցել ուրիշներին:

## 5. Ագրարային հարաբերությունները

Մուսուլմանական իրավունքի համաձայն հողը պատկանում է Ալլահին, նա է գերազույն սյուլքերները: Պա նշանակում է, որ մուսուլմանական իրավունքը մերժում է հողի մասնավոր սեփականությունը: Սակայն դա տեսական հիմնադրույթ է: Իրականում հողօգտագործման տարրեր ծեների անվան տակ գոյություն ունեին սեփականության տարրեր տեսակներ:

Դրանց մեջ ամենահինը համայնքային հողատիրությունն էր, որն այդ շրջանում կար ինչպես նստակյաց և քոչվոր արաբների, այնպես էլ նվաճած երկրների գյուղացիների մոտ:

Սակայն համայնքային հողերը քանի գնում այնքան պակասում էին և չին կարող բավարարել համայնքների անդամների հողային պահանջները: Դրանց նվազումը կապված էր համայնքային բնակչության աճի հետ այն պայմաններում, երբ համայնքային հողատարածքները ոչ միայն չեն աճում, այլև, ընդհակառակը, պակասում էին: Հատ հարուստ և ազդեցիկ հողատերեր աստիճանաբար յուրացնում էին հանայնքներին պատկանող հողերը և այն օգտագործում որպես մասնավոր սեփականություն:

Հողասակավ կամ հողագուրկ գյուղացիներն իրենց ապրուստը և գոյությունն ապահովելու համար հարկադրված էին դիմել հարուստ հողատերերին:

Ինչո՞ւ:

Գոյություն ունեցող սովորույթի համաձայն հողատերեն իրենք անձամբ անմիջապես չեն զբաղվում հողագործությամբ, այլ նախընտրում էին հողը վարձակալման տակ հողագուրկ գյուղացիներին, որոնք դրա պահանջը զգում էին: Կային վարձակալության տարրեր չափաբա-

ԺԻՆՆԵՐ՝ Կիսրար, երբ գյուղացին հողատիրոջը տալիս էր ստացված քերքի Կեսը, սակայն ավելի շատ տարածված էր բերքի մեկ երրորդի կամ մեկ քառորդի վճարումը:

Չափաբաժնի սահմանումը կախված էր այն հանգամանքից, թե կողմերից ով ինչ էր տալիս կամ կատարում: Վարձակալի չափը նվազում էր, եթե հողատերը հողի հետ միասին գյուղացուն տալիս էր նաև, ասենք, սերմացուն, գյուղատնտեսական գործիքներ և այլն:

Վարձակալ գյուղացին, այդուհանդերձ, չէր կարողանում դուրս գալ աղքատության ճիրաններից: Նրա և նրա բազմանդամ ընտանիքի տնտեսական վիճակը շարունակում էր մնալ շատ ծանր:

Օմայյան դինաստիայի կառավարման ժամանակաշրջանում հողային տիրապետության գլխավոր ծեր դարձավ պետական հողատիրությունը: Նկատի ունենք այն հանգամանքը, որ հողերի, ինչպես նաև ոռոգնան համակարգի հիմնական մասը կենտրոնացված էր պետության ծեղզում: Նա էր տնօրինում այդ վիրխարի զանգվածը խալիֆայության անծայրածիր տարածքներում, ինչպես բուն Արաբիայում, այնպես էլ նրա կազմի մեջ մտնող նվաճած երկրներում:

Օմայյան խալիֆաներն իրենք էին հանդիսանում մեծ հողատեր, որոնք տնօրինում էին պետական հսկայական հողատարածքներ: Մեծ հողատարածքներով էին օժտվում խալիֆաների ազգականները, ցեղակիցները, հարազատները և այլ մերձավորներ, որոնց թիվը հասնում էր մի քանի հազարի:

Խալիֆաները մեծ հողակտորներ էին շնորհում արաբական հողային ավագանում: Նա անընդհատ ընդարձակում էր իր հողային տարածքները, որը փաստորեն օգտագործում էր որպես սեփականություն:

Արաբական հողային արիստոկրատիայի համար իր հողային ումեցվածքի ընդարձակման մյուս աղբյուրը նվաճած երկրներում հողերի բռնագրավումն էր, ինչպես նաև հողերի գնումը, որը նրանք պարտադրում էր իրենց կողմից գրաված երկրների հողատերերին: Տիպարանորեն դրանք պատկանում էին պայմանական նամանավոր հողատիրության ծափն:

Պետությանը պատկանող հողերը, անվանապես մնալով պետական, իրականում, օգտագործվում էին որպես նամանավոր սեփականություն:

Բայց կար նաև մասնավոր հողատիրություն՝ մուլք, որն առաջացել էր երկու ճանապարհով: Առաջին, արաբական նվաճումների ժամանակ խալիֆայության կազմում հայտնվեցին գագալի թվով բյուզանդական և պարսկական ֆեոդալ-հողատերեր, որոնց պատկանող հողերը

մասնավոր սեփականություն էին հանդիսանում: Դրանց թվում էին այն ֆեռագները, որոնք կենդանի էին մնացել, պահպանել էին իրենց սեփականատիրական իրավունքներն իրենց այդ հողերի նկատմամբ:

Սասանավոր հողային սեփականության ծևավորման երկրորդ ճանապարհը արարների կողմից տարրեր ուղիներով՝ բռնությամբ կամ պարտադրված վաճառքով ծեռք բերած հողերն էին:

Ի տարրերություն հողատիրության մյուս ծների, մուլք հանդիսացող հողերը ժառանգաբար հորից անցնում էին որդուն: Մինչդեռ հողատիրության մյուս ծների դեպքում, հողատերերը չէին օգտվում այդպիսի իրավունքից: Խսկ եթե մուլքատերը մահանում էր և չուներ ժառանգորդ, ապա նրա հողերն անցնում էին պետության տօնօրինության տակ:

Այսպիսով, Օմայյան խալիֆայության ժամանակ գոյություն ունեին հողատիրության երեք ծև՝ համայնքային, պետական և մասնավոր, որոնք և ընկած էին ազրարային հարաբերությունների հիմքում:

Օմայյան խալիֆայությունում գոյություն ուներ նաև ստրկություն: Ստրուկների հիմնական աղբյուրը պատերազմներն էին և նրանց ընթացքում գերի ընկածները, որոնց այնուհետև տեղափոխում էին Ղամակոս և արաբական այլ կենտրոններ ու վաճառում շուկաներում: Ղաշատ եկամտաբեր գործ էր, ուստի և ոչ ոք խորշում նման գործունեությունից:

Մյուս աղբյուրը պարտապաններն էին, որոնք ի վիճակի չէին վճարել իրենց պարտքերը և դրա համար նրանք ստրկացվում էին և վաճառվում պարտքի դիմաց:

Ստրուկների աշխատանքի կիրառման ոլորտը հիմնականում շինարարական ոլորտն էր՝ ճանապարհների և ամրությունների կառուցումը: Նրանց օգտագործում էին նաև գյուղատնտեսության ոլորտում, ոռոգման համակարգում, երթեմն նաև հողերի մշակման համար:

Խալիֆայությունում կարևոր տեղ էին գրավում հարկերը և նրանց գանձումը: Դարկահավաքը խալիֆայության գոյության և հզորության գլխավոր աղբյուրներից մեկն էր: Գոյություն ուներ հիմնականում հարկի երկու տեսակ՝ հողահարկ և գլխահարկ:

Հողահարկը՝ խարած, կարելի է ասել գլխավոր հարկատեսակն էր: Նա գանձվում էր բոլորից, և՝ մուսուլմաններց, և՝ ոչ մուսուլմաններից: Պետական հողերից գանձվող խարածը վճարում էին այն համայնքները, որոնք մշակում էին այդ հողերը: Նրա չափերը, կախված զանազան հանգամանքներից, տարբեր էին: Սովորաբար նա կազմում էր բեր-

քի կեսից մինչև երկու հինգերորդը: Խարածի այդ տեսակը կոչվում էր խարած մուկասամա: Կար նաև նրա մեկ այլ տեսակը՝ խարած միսախա, երբ հարկը վճարվում էր խաղը՝ բնամթերքով և դրամով: Դրանց համաձանությունը կախված էր հողի բարեբրությունից, հողատարածության չափերից և այլ գործոններից:

Իսկ այն հողերը, որ պատկանում էին անհատ մուսուլմաններին, նրանցից գանձվում էր տասանորդ, թերքի մեկ տասերորդը՝ ուշը:

Դարկերի գանձման հարցում իշխանությունները վերին աստիճանի հետևողական և դաժան էին: Իսկ խալիֆա Դիշամի ժամանակ (724–743 թթ.) պատժամիջոցների կիրառումն ընդունեց ամենաայլանդակ և սարսափելի ծևեր: Պարտապաններին ծերակալում և բանտ էին նետում: Բանտերը լիբն էին այնպիսի գուշացիներով, որոնք ուշացրել կան ի վիճակի չեին վճարել հարկերը: Նրանց նկատմամբ կիրառում էին կտտանքներ, որը վկայված է արաբական և օտար միջնադարյան աղբյուրներում: Դարկը չվճարողին գանձում էին անարգանքի սյունին և ժամերով պահում արևի կիզիչ ճառագայթների տակ, մինչև ուշագնացության աստիճան: Սակայ չեին այն դեպքերը, երբ պարտապանի գլխին եռացող յուղ էին լցնում և այլն:

Կիրառվում էր նաև մեկ այլ, մարդու արժանապատվությունը ուժնահարող մեթոդ: Դողագործը պարտավոր էր վզից կրել արճիճյա հաշվեպիտակ, որը վկայություն էր այն բանի, որ նա վճարել է խարածը, եթե մուսուլման է, և խարածն ու գլխահարկը, եթե ոչ մուսուլման՝ քրիստոնյա, բուդյայական, կրակապաշտ, հրեադավան է: Այդ հաշվեպիտակի վրա սովորաբար գրված էր լինում նրա կրողի անունը և բնակավայրը, որն նա իրավունք չուներ լրել, հակառակ դեպքում նա կիամարվեր շոշոնիկ, որանից բխող ամենածանր հետևանքներով:

Դարկի մյուս տեսակը գլխահարկն էր՝ ջիզիա, որը գանձվում էր միայն ոչ մուսուլմաններից քրիստոնյաներից և այլ կրոնների հետևողներից: Եթե, օրինակ, քրիստոնյան հավատափոխ էր լինում և ընդունում էր իսլամ, ապա նա ազատվում էր ջիզիա վճարելուց:

Իսլամի տարածման և խալիֆայության կազմավորման սկզբնական շրջանում, իսլամը տարածելու նպատակով, խրախուսվում էր դավանափոխությունը և իսլամ ընդունելը: Եվ պետք է նշել, որ դա մեծ տարածում ստացավ: Շատ–շատերը, ոչ միայն անհատներ, այլև ամբողջ ժողովուրդներ, գլխովին իսլամ ընդունեցին:

Բայց դա ունեցավ նաև իր բացասական հետևանքները: Խիստ պակասեցին մուտքերը պետական գանձատուն, որը լրջորեն անհանգստացրեց խալիֆայության կառավարող վերնախավին: Դա ստեղծեց բարդություններ նվաճողական քաղաքականություն վարելու, գինվորների օռմիկը վճարելու, որոգման համակարգն աշխատանքային վիճակում պահելու, և ընդհանրապես խալիֆայության տնտեսական զարգացման և այլ հարցերում:

Այդ պատճառով դավանափոխությունը և խլամ ընդունելու այլևս այնպիսի ջերմեռանությամբ չէր քաջալերվում, ինչպես դա կատարվում էր խլամի ծնավորման արշալույսին:

Դեռ ավելին, քիչ չին այն դեպքերը, հատկապես մայրաքաղաքից դուրս, կուսակալություններում, երբ կուսակալները կոպտորեն խախտելով հալամական կանոնները, շարունակում էին ջեզիա գանձել նրանցից, ովքեր դավանափոխ լինելով ընդունել էին խլամ: Դա հատկապես վերաբերում էր մավալներին՝ նեօնուսումաններին, որն առաջ էր բերում նրանց խիստ բողոքը: Խալիֆաները, վախենալով հետագա բարդություններից, ստիպված էրի լինում «կարգի հրավիրել» կուսակալներին և վերականգնել մավալների հրավունքները:

Օմայյան խալիֆայությունը զարգացման առումով գտնվում էր անցումային շրջանում՝ նախնադարյան տոհմատիրական–համայնքային հասարակությունից, որի շրջանակներում գոյություն ուներ յուրահատուկ ստրկատիրություն, դեպի ավատատիրական հարաբերությունների նախնական փուլ, դեռևս պահպանվող տոհմատիրական–ստրկատիրական հարաբերությունների բավականին շոշափելի մնացուկներով հանդերձ:

## 6. Օմայյան արքունիքը

Օմայյան խալիֆայության կառավարման համակարգում բացառիկ դերակատարում ուներ արքայական պալատը և արքունիքն ընդհանրապես: Դա միանգանայն համահունչ էր ժամանակի ոգուն և կառավարման բնագավառում Արևելքում գոյություն ունեցող ավանդույթներին: Սակայն դա լոկ դրամով չի բացատրվում:

Պալատի բացառիկ դերակատարումը բացատրվում է նաև նրանով, որ այդ ժամանակ դեռևս չկար իշխանական ֆունկցիաների բաժանում և կառավարություն՝ իր համապատասխան նախարարություններին:

րով: Այդպիսի պայմաններում խալիֆան և նրա մերձավորագույն շրջապատը, պալատը, մնում էին միակ բարձրագույն կառավարող մարմինը, որը նրանք ոչ ոքի հետ չէին կարող և, իրոք, չէին կիսում:

Խալիֆայի ծեռքում էր կենտրոնացված ամբողջ գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունը: Եվ եթե դրան ավելացնենք, որ նա խալիֆայության կրոնական առաջնորդն էր՝ ևմիր ալ-Մումինին, այսինքն բոլոր հավատացյալների ևմիրը, վեհապետը, ապա պարզ կդառնան խալիֆայի իշխանության վիթխարի ժավալները:

Խալիֆան, հարկավ, միայնակ ի վիճակի չեր կատարել երկրի կառավարման չափազանց բարդ խնդիրները, մանավանդ, երբ Օմայյանների նվաճողական քաղաքականության հետևանքով խալիֆայությունը վերածվեց վիթխարի կայսրության: Նա օգնականների կարիք ուներ: Եվ, իրոք, կային օգնականներ: Սակայն դրանք պաշտոնաթես չէին հաստատված և չունեին համապատասխան կարգավիճակ և անվանակոչումներ: Դա տեղի ունեցավ հետագայում, արդեն Աբբասյան խալիֆայության ժամանակ, երբ ստեղծվեցին վազիրների և խորհրդատունների պաշտոնները:

Օմայյանների ժամանակ խալիֆանները նախքան կարևոր որոշումներ ընդունելը խորհրդակցում էին հիմնականում իրենց ընտանիքի պատկանածին, առանձին դեպքերում նաև ամենամոտ և մտերիմ ցեղակից ազգականների հետ: Սակայն վերջին խոսքը պատկանում էր խալիֆային:

Խալիֆան և արքունիքն էին խալիֆայության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների որոշողները և կենսագործողները:

Այսպիսի կառուցվածքի պայմաններում, երբ գոյություն չուներ առանձին, հատուկ կառավարություն, չափազանց մեծ էր փոխարքանների դերը, որոնց իրենց տրված փոխարքայության սահմաններում երեքն գործում էին որպես փոքրիկ քաջավորներ: Ուստի խալիֆանները և արքունիքը մշտապես իրենց ուշադրության կենտրոնում էին պահում փոխարքաններին և նրանց գործունեությունը:

Արքունիքը, բնականաբար, խիստ թշնամի էր փոխարքայի թեկնածուի ընտրության և նշանակման հարցում: Փոխարքայի պաշտոնում սովորաբար նշանակում էին Օմայյան դինաստիայից կամ նրան հավատարին և նվիրված ցեղակիցներից: Նավատարմությունը խալիֆային և դինաստիային, փոխարքա դառնալու առաջին պայմանն էր:

Բայց նույնիսկ այդ դեպքում բացահայտ և գաղտնի հսկողությունը փոխարքայի գործունեության վրա, պալատի կարևոր խնդիրներից մեկն էր: Պատահականություն չէր, որ Օմայյաները շատ լայն լիազորություններով օժտեցին տեղերում փոստային ծառայությունների ղեկավարներին: Նրանց պարտականությունների մեջ էր մտնում հետևել փոխարքաների գործունեությանը և այդ մասին կանոնավոր կերպով տեղեկություններ ուղարկել անձամբ խալիֆային կամ պալատին:

Պալատն առաջնային նշանակություն տալով դիմաստիական շահերին և երկրի ներսում կայունությունը պահպանելու և ամրապնդելու հարցին, կարևոր տեղ էր հատկացնում ամուսնական–խնամիական կապերին:

Դրա փայլուն օրինակն են հանդիսանում այն փոխահարաբերությունները, որ Օմայյաները հաստատեցին բանու կալբ ցեղի հետ: Օմայյաներին, որոնք ծագումնաբանորեն պատկանում էին կուրայշ տոհմին, ավելի մոտ էր բանու կայսի ցեղախումբը: Այդ երկու ցեղախմբերի միջև մշտապես գոյություն ուներ թշնամնոց, դիմակայություն, բախումներ և այլն: Չնայած այդ հանգամանքին, Օմայյան դիմաստիայի հիմնադիր Սուլավիան ամուսնացավ բանու կալբ ցեղախմբին պատկանող կնոջ հետ, որն ազդեցիկ ընտանիքից էր: Սուլավիայի այդ քայլը նիհանգամայն նտածված քաղաքական քայլ էր: Դրանով նա շահեց այդ ցեղախմբի աջակցությունը, պահպանելով սերտ հարաբերություններ իրեն հարազատ բանու կայսիների հետ:

Նույն քայլին դիմեց նաև Սուլավիայի որդին՝ Յազիդը, իսկ ապա նաև Աքր ալ-Մալիքը, որը Յազիդի մահվանից հետո ամուսնացավ Յազիդի այն այրու հետ, որը բանու կալբի ցեղից էր: Այս բոլոր ամուսնությունները քաղաքական բնույթ էին կրում և Օմայյաների դիրքերի ամրապնդման նպատակ հետապնդում:

Օմայյան արքունիքը, ինչպես աշխարհի բոլոր արքունիքները, ոչ միայն քաղաքական կենտրոն էր, այլև ազդեցության համար տարրեր խնդրավորումների պայքարի թատերաբեմ, բանսարկությունների, գեխուու ցոփի կյանքի, խալիֆաների քնահաճույքների կենտրոն: Սակայն կոնկրետ յուրաքանչյուր խալիֆայի անձից, նրա ուժեղ կամ թույլ բնակորությունից և հակումներից էր կախված արքունիքի դերակատարումը և նրա մասին համապատասխան կերպարի ծևավորումը:

Լայն տարածում ունի այն տեսակետը, թե, իբր, խալիֆաները, որոնք համարվում էին իսլամի օրենքների անշեղ պաշտպան–պահա-

պաններ և կիրառողներ, վարել են ասկետիկ, ճգնավորին վայել զուսպ կյանք և կենցաղում եղել սակավապես: Օմայյան խալիֆաների շարքում ընդունված է հատկապես այդպիսին համարել Օմար II խալիֆային (717–720 թթ.), որին անվանում են բարեպաշտ: Սակայն նրա կյանքը բաժանվում է երկու փուլի, որոնք միմյանցից տարբերվում են արմատականորեն:

Առաջին փուլն ընդգրկում է նրա կյանքի մինչև խալիֆա դառնալու ժամանակաշրջանը: Այդ փուլում նրա պահվածքը վկայում է, որ նա շատ հեռու է եղել բարեպաշտ լինելուց, իսկ նրա ապրելածնը ոչ մի կերպ հնարավոր չէ համարել ասկետիկ: Նա վարել է շվայտ կյանք, մեծ գումարներ ծախսել զանազան հաճույքների, հագուստի, օծանելիքի, նժույգների և այլ զվարճալիքների վրա: Նրա կյանքում շատ մեծ տեղ են գրավել բազմաթիվ կանայք: Դայտնի է, որ նա իր ամենասիրելի տարփութիւն ստրկուելու ունեցել է ինը երեխա, իսկ ընդհանրապես նրա բողոքած երեխաների թիվը հասել է տասնվեցի:

Նա աչքի է ընկել նաև արտակարգ դաժանությամբ, հատկապես երբ նա Մադինայի փոխարքան էր Կալիդ I խալիֆայի ժամանակ: Նրա իրանանով, խալիֆա Կալիդի I հասցեին քննադատաբար արտահայտված Մեքքայի նախկին խալիֆա իրն ազ-Զուլեյհի որդուն ծանր պատժի ենթարկեցին: Նրան մտրակի 100 հարված հասցրեցին և նրա արնաշղղական նարմնի վրա ցուրտ ծնոանը սառը ջուր լցնելով, մերկ փողոց նետեցին, որտեղ և նա իր շունչը փշեց:

Սակայն, ըստ աղբյուրների, Օմարը խալիֆա դառնալով, բոլորովին կերպարանափոխվում է: Իրոք, նա դառնում է զուսպ և հեռու աշխարհիկ կյանքի հաճույքներից, աստվածավախ և բարեպաշտ: Նա և շատ պալատականներ հազնում էին հասարակ կտորից ևս սգո զգեստներ: Եվ երբ մի անգամ նա մի քանի պալատականների հետ միասին ընդունում է մի պատվավոր հյուրի, ապա վերջինս չի կարողանում որոշել, թե նրանցից ովք է խալիֆան, քանի որ նա այնպես պարզ ու հասարակ էր հագնված, ինչպես մյուսները, և նա նրանցից ոչնչով չէր տարբերվում:

Օմար խալիֆայի ժամանակ պալատից դուրս նղվեցին բոլոր տեսակի պարերը, երգերը, ծիառշավները և ամեն տեսակի այլ հաճույքներ:

Խալիֆայական պալատի նման կենսածնը, անշուշտ, իր ազդեցությունն էր գործում ամբողջ խալիֆայության վրա: Մասնավորապես, տեղերում շատերը նույնպես փորձում էին ամեն բանում նմանվել խալիֆայի ապրելածնին:

Նման խալիֆաների թիվն այնքան էլ շատ չէր: Ավելի շատ են եղել Օմայյան դինաստիայից այնահին խալիֆաներ, որոնք անծնատուր են եղել կյանքի հաճույքներին և վարել են շվայտ աշխարհիկ կյանք:

Օմայյան խալիֆայությունում այդ բնագավառում առաջնության դափնին պատկանում է երկրորդ խալիֆա Յազիդ I (680–683 թթ.): Նա գինեմոլ էր, որի պատճառով նրա ժամանակակիցներն են արդեն նրան անվանել «Գինեմոլ Յազիդ»: Նրա սիրած զրադալունքը, հարթեցողության հետ միասին, որսորդությունն էր: Նա չէր հոգնում պալատում կազմակերպել խրախճանքներ գինարբուցով, երգեցողությամբ, պարերով և այլն: Գինարբուքի նրա անբաժան մասնակիցն ու «գործընկերն» էր նրա վարժեցրած կապիկը, որին նա անվանում էր Արու Թայս: Այդ պատճառով նրա ժամանակակից աստվածարան խլամագետները նրա ապրելածը համարել են աններելի շեղում խլամի հիմնադրույթներից, և դեմ արտահայտվել նրան զահաժառանգ հոչակելու նրա հոր, Օմայյան դինաստիայի հիմնադիր Մուավիա թաղաքականությանը:

Գինի օգտագործելու հարցը շատ կարևոր է խլամի մեջ: Կորանն արգելում է ոգելից խմիչքներ օգտագործել: Սակայն այդ կարևոր պատճառը մշտապես խախտվել է, այդ թվում և խալիֆաների կողմից:

Ըստ գինի օգտագործելու հաճախականության, խալիֆաները բաժանվել են չորս կատեգորիայի՝ ամենօրյա խմողներ, ինչպես խալիֆա Յազիդ I, օրմեջ խմողներ՝ Վալիդ I խալիֆան, ուրբաթօրյա աղոթից հետո խմողներ, որի դասական ներկայացուցիչն էր Արդ ալ-Մալիք խալիֆան: Այդ օրը նա սովորաբար այնքան էր խմում, որ հաջորդ օրը հազիկ էր հաջողվում հետ թերել նրան:

Գինարբույթները և դրա հետ կապված այլ «զվաճալիքները» իզական սերի մասնակցությամբ, երբեմն պալատում ընդունում էին ամենաայլանդակ ձևեր, որի կազմակերպիչներն ու ոգեշնչողները շատ հաճախ իրենք խալիֆաներն էին լինում: Այդ բնագավառում հատկապես փայել է խալիֆա Վալիդ II (743–744 թթ.), որը սովորություն ուներ լողալ և սուզզել գինով լցված ավագանում, անծնատուր լինել մարմնական հաճույքներին:

Արքունիքում համեմատաբար ազատությամբ էին օգտվում քարձրաստիճան կանայք և զգալի դեր խաղում պալատական կյանքում: Նրանցից ոմանք օգտվել են որոշակի ազդեցությամբ խալիֆաների վրա, անգամ հակառակել իրենց խալիֆա ամուսնուն:

Պատմությունը սերունդներին է թողել նման բազմաթիվ դեպքեր, որոնցից առժե հիշատակել ստորև բերվող օրինակը:

Խալիֆա Արդ ալ-Մալիքի կինն էր խալիֆա Սուլավիայի ծոռը, գեղեցկուիի Աստիկան, որը չափազանց մեծ ազդեցություն ուներ նրա վրա, անգամ կարող էր հակադրվել նրան, վիճել հետո, զայրանալ, որը դառնում էր արքունիքի խոսակցության թեման: Աստիկան մի անգամ զայրանում է Արդ ալ-Մալիքի վրա և փակվում իր առանձնասենյակում: Խալիֆայի բոլոր խնդրանքները և աղաքանքները գուր են անցնում, նա դուռը չի բացում և նրան ներս չի թողնում իր առանձնասենյակը: Դուսահատ խալիֆան դիմում է խորամանեցության: Նրա հանձնարարությամբ Աստիկայի մոտ է գնում պալատական մի բարձրաստիճան կին, որը հեկեկալով Աստիկային հայտնում է, որ նրա երկու տղաներից մեկը սպանել է մյուսին նրա ամուսինը, խալիֆա Արդ ալ-Մալիքը մտադիր է նրան մահապատժի ենթարկել եղայրասպանության համար: Միայն դրանից հետո է Աստիկան դուռը բացում իր խալիֆա ամուսնու առջև:

Օնայյան խալիֆաների ժամանակ ոչ բոլոր ազնվական կանայք էին համաձայնվում քողով ծածկել իրենց դեմքը և նարմինը: Երբ Սուլիամնադ մարզարեին հաջորդած առաջին ուղղափառ խալիֆա Աքրու Բաքրի թոռանը, որը փայլատակում էր արտակարգ գեղեցկությամբ, նրա ամուսինն առաջարկում է ծածկել իր դեմքը, ապա վերջինս հրաժարվում է նրա կամքը կատարելուց, պատասխանելով նրան հետևյալ կերպ: «Քանի որ Ալլահը, թող օրինյալ լինի նա, ինձ դրոշմել է գեղեցկություն, ին ցանկությունն է, որ հասարակությունը տեսնի այդ գեղեցկությունը և դրանով ճանաչի նրա բարեհանությունը իր վրա: Ուստի ոչ մի պայմանով ես ինձ քողով չեմ ծածկի»:

Խալիֆան և ավագանին ունեին իրենց հարեմները: Սակայն սկզբնական շրջանում նրանք անկազմակերպ էին և կանոնակարգված չէին: Սասնավորապես բացակայում էր ներքինի ինստիտուտը: Միայն հետագայում, Վալիդ II ժամանակ, կանոնակարգվում է հարեմը, բյուզանդականի ընդօրինակությամբ: Եվ Օնայյան արքունիքում հայտնվում են հարեմների առաջին ներքինիները, որոնց իմանականում հույները եղան:

## IV. ՄՏԱՎՈՐ-ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՑԱՆՔԸ

### 1. Արարերեն լեզվի դերը

Օմայյան խալիֆայության շրջանում սկսեց ծնավորվել և զարգանալ նաև մտավոր-մշակութային կյանքը: Իհարկե, դա դեռևս զարգացման այնպիսի բարձր մակարդակի վրա չէր գտնվում և այնպես տպավորիչ չէր, ինչպես հետագա դարերում, այդուհանդերձ, այն ինչ տեղի ունեցավ այդ ժամանակաշրջանում, բնակ էլ արհամարհելի չէ և, որ շատ կարևոր է, նա հանդիսացավ այն իհմքը, որի վրա հետագա դարերում մեծ ծաղկում ապրեց արարական գիտությունը, մշակույթը և արվեստները, որպես համաշխարհային քաղաքակրթության յուրօրինակ երևույթ:

Արարական մշակույթի ծնավորման և զարգացման հիմքում ընկած էր նախ և առաջ արարական լեզուն: Ի տարրերություն միջնադարում նույնպես միջազգային լեզու համարվող լատիներենի, որն ընտրյալների և կրթվածների, այսինքն սոցիալական համեմատաբար նեղ շրջանակի լեզու էր, և այդ առումով սկզբից նեթ պարունակում էր մեռյալ լեզու դառնալու նախադրյալներ, արարերենը կենդանի խոսակցական լեզու էր, որով խոսում էին բոլորը, ոամիկը թե ազնվականը, ուսայալը թե անգրագետը:

Սստիճանաբար նա հարստացավ նաև նվաճված ժողովուրդների լեզուների հաշվին, նրանցից վերցնելով կյանքին, պետական գործունեությանը, արվեստներին, գիտությանը և այլ բնագավառներին վերաբերող բազմաթիվ փոխառություններ: Դրա շնորհիվ նա ավելի հարստացավ և ճոխացավ:

Միաժամանակ որոշակի նվաճումներ արծանագրվեցին արարական քերականության կատարելագործման և գրական լեզվի ծնավորման բնագավառում: Ու թեև պահպանվեցին մեծաքանակ արարական բարբառները, իսկ նրանք պահպանվել են մինչև օրս, այդուհանդերձ, արարական գրական լեզվի ծնավորումը հուսալի և անհրաժեշտ հիմք հանդիսացավ արարական միասնական մշակութային և գիտական դաշտի առաջացման համար:

Եվ երբ ծնավորվեց արարական խալիֆայությունը և Օմայյաների շրջանում արաբերեն լեզուն հայտարարվեց պետական լեզու, որով տարվում էր գործակարությունը, ապա նա արդեն գտնվում էր զարգացման բավականին բարձր մակարդակի վրա և նրանով միանգամայն

հնարավոր էր արտահայտել քարդ գիտական հասկացությունները և ամենանրին զգացնունքները, որը արաբական մշակույթի և գիտության զարգացման առջև մեծ հնարավորություններ ստեղծեց:

## 2. Գրականությունը

Օմայյան շրջանում մշակութային կյանքի և արվեստների զարգացման վրա որոշակի ազդեցություն են բռնել Երկու կարևոր երևույթ:

Առաջինը նախախսանական շրջանի՝ ջահիլիյայի, շատ հարուստ և ինքնատիպ գրականությունն էր, ծագումնաբանական կապը նրա հետ, իսկ երկրորդը՝ Կորանը: Մուսուլմանների տուրք գիրքը արաբական մշակույթը, փիլիսոփայությունը, իրավագիտությունը և արվեստը սնել է ոչ միայն գաղափարական առումով, այլև ինքն է համարվում փիլիսոփայական և գրական գործ: Առանց այս կապը տեսնելու, շատ դժվար է ճիշտ հասկանալ և գնահատել արաբական մշակույթը, գիտությունը և արվեստը, նրա զարգացման ուղիները և առանձնահատկությունները:

Օմայյանների շրջանում մտավոր կյանքի ամենապայծար դրսուրումը հանդիսացավ պոեզիան, որն աննախաղեա վերելք ապրեց: Ակզբանական շրջանում նրանում մեծ տեղ էր գրավում իսլամի, որպես կորոնի, Ալլահի և նրա մարգարեի՝ Մուհամմադի փառաբանումը: Այդ բնույթի գրողներից, որոնք զախավորապես բանաստեղծներ էին, ոմանք սկսել էին ստեղծագործել դեռևս մարգարեի կենդանության օրոք և արժանացել նրա գոհունակությանը: Նրանց շարքում աչքի են ընկել Կաաբա իրն Զուլեյյը (մահ. 662 թ.) և Դասան իրն Սաբիտը (մահ. 674 թ.): Նրանք փառաբանելով Մուհամմադին, նշում են, որ Ալլահի մարգարեն հայտնվեց այն ժամանակ, երբ բոլորը հուսահատված էին և Երկրի վրա թագավորում էին կուռքերը: Նրա հայտնությունը նրանք համեմատում էին փայլատակող սրի հետ, որը լուսավորեց ճշմարտության ուղին:

Մի շարք պոետներ իրենց արվեստը ծառայեցրել են Օմայյան դինաստիան և նրա ականավոր խալիֆաներին փառաբանելուն: Այդ բնագավառում առանձնահատուկ տեղ են գրավում ալ-Ախտալ (640–710 թթ.), ալ-Ֆարածակ (640–732 թթ.) և Զարիր (մահ. 729 թ.) պոետները, որոնք հայտնի են «Օմայյան եղյակ» հորդորքումով: Նրանց պոեզիան իր բնույթով ներբողական էր: Նրանք գովերգում էին ոչ միայն խալիֆաներին, այլև նրա շրջապատը, պալատի և արքունիքի երևելի դեմքերին: Նրանք խալիֆաներին ներկայացնում էին որպես Ալլահի ընտյաներ:

Տման ներբողումը, հասկանալի է, ախորժալուր էր խալիֆաների ականջներին: Ուստի նրանք, լինելով պալատական պոետներ, վայելել են խալիֆաների հովանավորությունը, բարոյական և նյութական բարեհաճությունը և արժանացել բարձր գովասանքների և պարզների: Ալ-Ախտալին, որը եղել է երեք խալիֆաների՝ Մուլավիայի, Յազիդի և Աբր ալ-Մալիքի պալատական պոետը, վերջինիս կողմից արժանացել է «Օմայյաների պոետ» կոչմանը, որն իր ժամանակի համար թերևս ամենաբարձր տիտղոսն էր:

Օմայյան շրջանում պոետական արվեստի մեջ իր արժանի տեղն ուներ նաև քնարական պոեզիան, պլատոնիկ և մարմնական սիրո գովերգումը, որը գալիս էր դեռևս ջահիլյայի դարաշրջանից: Դրա կարկառուն ներկայացուցիչն էր Օմար իբն Աբի Ռաբիհան (մահ. 719 թ.), որը համարվել է «Էրոտիկ պոեզիայի իշխան»: և «Արարիայի Օվիդիոս»:

Ժանրային առունով շատ տարածված էր նաև հերոսապատումը, արար զինվորի քաջության, խիզախության և հերոսության, արաբական նվաճումների փառաբանումը և այլն:

Օմայյաների ժամանակ լայնորեն կիրառվում էր պոետների մրցությունը, որը խալիֆաները կազմակերպում էին մեծ հաճություն: Պոետների միջև ննան մրցույթներ էին տեղի ունենում նաև մեյլաններում՝ հրապարակներում, սուկերում (շուկաներում) և հասարակական այլ վայրերում, ինչ բազմության ներկայությամբ:

Այդ մրցույթների ժամանակ հաճախ տվյալ բանաստեղծությունը կարդում էր ոչ թե ինքը հեղինակը, այլ մշտապես նրան ուղեկցող ասմունքողը, որը կարողանում էր դերասանական գրավիչ արվեստով ներկայացնել տվյալ բանաստեղծությունը: Դրա շնարիկվ ասմունքի արվեստը հասել էր բարձր մակարդակի, իսկ ասմունքողը վայելում էր մեծ հարգանք: Գեղարվեստական ասմունքը արաբական մշակույթի անբաժան տարրը էր, որը մինչև այսօր էլ մեծ համարում ունի արաբական երկրներուն:

Արաբական պոեզիան Օմայյաների շրջանում տիպարանորեն կարելի է բաժանել ներողական, սիրային-էրոտիկ, քնարական, հայրենասիրական-հերոսական, բարոյախոսական և երգիծական պոեզիայի:

Դամենատարար թույլ էր զարգացած արձակը, համենայն դեպք նրանից Օմայյան շրջանից շատ քիչ բան է հասել: Սակայն հավաստի է, որ արձակի ժամրում հատկապես տարածված են եղել պատմական բնույթի պատմվածքները և հերոսական ասթերը, նվիրված արարների

անցյալի պատմության հերոսական էջերին, իրական և առասպելական հերոսների քաջագործություններին, որը սիրելի ժամր էր ոչ միայն հասարակ արարների, այլև խալիֆաների համար:

Դրա նվիրյալ երկրպագուն էր խալիֆա Մուավիա I, որը իր պալատում հավաքել էր պատմության բանինացների և հիանալի ասքասացների: Նա սովորություն ուներ երեկոները մինչև ուշ գիշեր, բազմած իր գահավորակին, իր ծեռքի տակ ունենալով իր նախընտրելի խնիշը՝ վարդի օշարակը, լսել ննան պատմվածքներ, հատկապես այնպիսիները, որոնք վերցված էին Պարավային Արաբիայի իրականությունից: Մուավիան այնքան էր իրապուրված այդ պատմվածքներով, որոնք իրենց բնույթով հերոսապատումներ էին, որ ենենից պալատ իրավիրեց այդ ժամանակ մեծ հոչակ վայելող բանասաց Արդ իրն Սարայահին, որն անցյալի հերոսական էջերից վերցրած էր իր հիասքանչ պատվածքներով զարդարում էր խալիֆայի անքուն գիշերները:

### 3. Հռետորությունը

Օմայյաների ժամանակ իր գագաթնակետին հասավ հռետորական արվեստը, որը հետագայում այդպես էլ մնաց չգերազանցված: Հռետորական արվեստը խիստ անհրաժեշտ էր մզկիթներին և իմամմերին, մանավանդ Խաթիբ ինամին, որը սովորաբար ուրբաթօրյա աղոթքն անցկացնողն էր:

Բարձրակարգ հռետորությունը և ճարտասանությունը մի խւական արվեստ էր, որը գերում և իրապուրում էր հավատացյալներին, նրանց մեջ բորբոքում հավատքի կրակն առ Ալլահ, ինչպես նաև նպաստում խւամի տարածնանը: Դրանով խսկ հռետորությունը որպես արվեստ կատարում էր նաև քաղաքական ռազմելություն: Դրա փայլուն ներկայացուցիչն էր Ալին, որի իմաստուն խոսքերը, թևավոր դարձվածքները, համեմատությունները և զգայացունց խոսքերը ուժեղ ներգործություն էին ունենում շրջապատի վրա:

Հռետորության այդ ֆունկցիան ավելի ցայտունորեն էր դրսորվում գինվորական գործում: Օմայյան խալիֆայությունում ընդունված էր ուազմական գործողություններից և վճռական ճակատամարտերից առաջ հրավիրել ճարտասան հռետորների, ինչպիսին էր Զիյադ իրն Արիկը, որոնք հանդես գալով արարական գինվորների առջև, ոգևորում էին նրանց, արթնացնում արիության ոգին, փառարանում հերոսներին և ա-

նարգանքի սյունին գամում երկչոտներին և տմարդիներին, հերոսության կոչում նրանց:

Դուտորներ կային, որոնք հանդես էին զալիս բարոյական-էթիկական հարցերի շուրջը, հանդիսանալով մաքրության, անաղարտության, հավատարմության, իսլամի պատգամներին անմնացորդ նվիրված լինելու ջատագովներ: Բարեքախտաքար պատճությունը մեզ է թողել նման մի ականավոր հոետորի անուն՝ Շասան ալ-Բասրի (մահ. 728 թ.), որն անգամ իրավունք էր նվաճել իր հոետորական արվեստը ցուցադրելլ Օմար խալիֆայի ներկայությամբ:

Նրանց վառ և խորինաստ ճարտասանությունները սերունդներին թողած արարական գրական և գիտական լավագույն գանձերից են:

#### 4. ճարտարապետությունը

Արաբները Օմայյաների ժամանակ ստեղծել են ճարտարապետական հիմնալի հուչարծաններ, որոնք արվեստի խսկական գլուխգործոցներ են: Նրանց զալի նասը կանգուն է մինչև օրս:

Նրանք, բնականաբար, սկզբնական շրջանում, ինչպես այլ ժողովուրդների մոտ, եղել են պաշտամունքային կառուցներ, որոնք ծառայել են տիրապետող կրոնին: Տվյալ դեպքում խոսքն իսլամի և մզկիրների մասին է: Նշենք նրանցից մի քանիսը:

Խալիֆա Աբդ ալ-Մալիքը՝ 691 թ. Երուսաղեմում կառուցում է Կուռսար աս-Սախրա մզկիրը, որը համարվում է սրբավայր և մուսուլմանական աշխարհի չորս ամենակարևոր մզկիրներից մեկը: Այդ տպավորիչ կառուցը զարդարում են նախշեր հիշեցնող կուֆիական գրչածով զրկած կորանական ասուլեները: Արարական այդ գրելածնն ինքնին մի խակական արվեստ է իրենից ներկայացնում:

Այդ նույն խալիֆայի ժամանակ է կառուցվել մուսուլմանական աշխարհի ճարտարապետական մյուս հիասքանչ ստեղծագործությունը Մասջիդ ալ-Ակսան՝ Շեռավոր մզկիրը: Նրա կառուցման վայրը պատահական չէր ընտրված: Այդ վայրը նշված է Կորանում, որը գտնվում է Երուսաղեմի հարավային մասում: Մուհամմադ մարգարեն, նախքան համբարձվելն առ Ալլահ, իր Բուրակի վրա տեղափոխվել է այդտեղ: Եվ Աբդ ալ-Մալիքը որոշում է հենց այդտեղ, Կուրբաք աս-Սախրայից ոչ հեռու, կառուցել այդ մզկիրը, որը ստացել է Մասջիդ ալ-Ակսա անունը:

Երուսաղեմի Կուրքաթ աս—Սախրան և Մասդիդ ալ—Ակսան, Մեք-քայի Մասդիդ ալ—Դարամի, որի կենտրոնում գտնվուն է Կաարան, և Սա-դինայի Մասդիդ ան—Նարիի, որի բակուն բաղված է մարգարեն, հետ միասին մուսուլմանական աշխարհի չորս ամենահեղինակավոր մզկիթ-ներն են, որոնք համարվում են սրբավայրեր:

Դրանց կողքին ճարտարապետական և պաշտամունքային կարևորության առումով պետք է նշել Օմայյան մզկիթը Դամասկոսում: Դա նախկինում Դուկիաննես Ակրոտիչ եկեղեցին էր, որը Կալիփան 705 թ. ~~վերանույցմակարդ~~, որը մինչև օրս գոյություն ունի, և իր ճար-տարապետական գեղեցկությամբ և ծավալներով հիացնում է այցելու-ներին:

Սուսուլմանական աշխարհում ցրված են նաև մեծաքանակ այլ մզկիթներ, որոնք օգնում են որոշակի պատկերացում կազմելու Օմա-յյան շրջանի արարական ճարտարապետական և կառուցողական ար-վեստի մասին:

Բացի պաշտամունքային կառուցներից, Օմայյանների ժամա-նակ իրականացվել են նաև քաղաքացիական կառուցներ՝ պալատներ, ամրոցներ, անգամ ամբողջ քաղաքներ: Վալիդ և վերակառուցել է Սադի-նան, կառուցել հատուկ և առանձին շինություններ բորոտների, կաղերի և կույրերի, հիվանդանոցներ խրոնիկական հիվանդություններով տա-ռապող հիվանդների համար, իսկ նրա եղբայրը, Խալիֆա Սուլեյմանը, որը կառավարել է 715–717 թթ., նրանից անմիջապես հետո, կառուցել է Ումալլահ քաղաքը Պաղեստինում, որը գոյություն ունի և այսօր, և այն-~~ներկայացնել~~ իր նստոցը:

Մեծ տեղ է հատկացվել նաև ուսումնական ճամբարների շինարա-րությանը, որոնց հիմքի վրա հետազայում առաջացել են քաղաքներ, ինչպես Կայրավանը և այլն: Դրանց կառուցման ժամանակ օգտագործ-վել են ճարտարապետական և քաղաքաշինական շատ ինքնատիպ սկզ-բունքներ:

## 5. Այլ արվեստներ

Օմայյան խալիֆայության մեջ գարգացման բարձր նակարդակի վրա են գտնվել երգարվեստը և պարարվեստը: Նա լայնորեն կիրառվել է պալատներում, խալիֆաների և արարական տոհմիկ ավագանու ժա-

մանցի, գինարբութի և բարձրաստիճան հյուրերի պատվին կազմակերպված պաշտոնական ընդունելությունների ժամանակ:

Արվեստի այդ երկու տեսակները, որոնց արնատները ժողովրդական են, մշտապես ուղեկցել են հասարակ արարին, կազմելով նրա առօրյա կյանքի ուրախություններից մեկը: Արաբները սիրում են երգել և պարել, իրենց խոսքը և ասքը համեմելով իրադարձությանը պատշաճ երաժշտությամբ, երգով և պարով:

Իր ուրույն տեղուն ուներ կիրառական արվեստը: Լայն տարածում էր ստացել մետաքսյա կտորի պատրաստումը՝ համապատասխան նուրբ և ճաշակավոր ծաղկամախչերով, կաշվեղենից պատրաստված իրերը, կահույքը և այլն, որոնցից շատերն արվեստի իսկական գործեր էին:

Բարձր մակարդակի էր հասել մետաղագործությունը, այդ քում և գենքի՝ տարատեսակ սրերի, նիզակների, տեգերի, վահանների և սաղավարտների արտադրությունը, որոնց զարգացումը խթանում էին խալիֆաների անվերջ թվացող պատերազմները: Դատկապես պետք է նշել աշխարհական դամասկոսյան պողպատից, որի ստացման գաղտնիքը հայտնի էր միայն արաբներին, պատրաստված զենքերը, որը սիրում էին կրել խալիֆաները, արաբական զորապետները և ցեղային ու ռազմական ավագանին: Տուանցից շատերը, մանավանդ նրանց պատրաստները, կատարյալ գեղարվեստական գործեր էին:

Կատարյալ արվեստի գործեր էին ուկուց և արծաթից պատրաստված սպասքը, որից օգտվում էին խալիֆաները, պալատականները և արաբական մեծահարուստները: Նրանք սիրում էին ուտել արծաթյա ամանեղենից և խմել ուկյա գավաթներից, որոնք նորին գեղարվեստական գործեր էին:

Արաբական մեծահարուստ տոկմիկ կանայք մեծ թուլություն էին տածում ազնիվ մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված զարդերի նկատմամբ, դրանով իսկ խրախուսելով ուկերչության և ակնագործության զարգացումը, որը շատ հաճախ արհեստի նակարդակից բարձրանում էր արվեստի մակարդակին:

## 6. Կրթությունը

Օմայյան խալիֆայության շրջանում կրթություն հասկացողությունն օգտագործվում էր ոչ միայն դպրոցական կրթության, այլև ավելի լայն առումով:

Կորական կենտրոններ էին մզկիթները, որտեղ գործում էին դպրոցներ: Պատարամներում հիմնական առարկան Կորանն էր: Աշակերտներին սովորեցնում էին կարդալ Կորանի սուրահները և հաղիսները, ըստ այդմ էլ որոշվում էր աշակերտների առաջադիմության աստիճանը: Դպրոցում կենտրոնական դեմքը Կորան կարդալ սովորեցնողն էր, որը կոչվում էր կուրա՛ա: Իսկ դա որոշակի հմտություն, նույնիսկ արվեստ էր պահանջում:

Այդ գործին տալով պետական կարևորություն, խալիֆա Օմարի հրամանով խալիֆայության բոլոր շրջաններ ուղարկվեցին ննան ուսուցիչներ, որոնք տեղերում, մզկիթներում բացում էին հատուկ դասարաններ երեխաններին Կորան և հաղիսներ կարդալ սովորեցնելու համար: Նա միաժամանակ հրամայեց, որ ոչ միայն երեխանները, այլև մեծահասկ մարդիկ ուրբաթ օրերը մզկիթներում պարտադիր հանդիպեն այդ ուսուցիչներին և ներկա գտնվեն Կորանի ընթերցումներին:

Ուսուցիչները, իհարկե, բացի ընթերցելուց, տալիս էին նաև համապատասխան բացատրություններ, քանի որ Կորանը շատ բարդ գրվածք է և նրա հմաստն անհասանելի է առանց հանապատասխան բացատրությունների: Կուտաքար, Կուֆայում անվճար բացել է ոմն Դահիկակ իր Սուլահիմը (մահ. 746 թ.): Եղել են նաև վճարովի դպրոցներ, ինչպես Բասրայում:

Կորությունը Օմայյան խալիֆայությունում բացվել են առաջին տարրական դպրոցները, թեև դրանց թիվը շատ չի եղել: Դայտնի է, որ ննան դպրոց՝ կուտաքար, Կուֆայում անվճար բացել է ոմն Դահիկակ իր Սուլահիմը (մահ. 746 թ.): Եղել են նաև վճարովի դպրոցներ, ինչպես Բասրայում:

Կորությունը Օմայյան խալիֆայությունում, ինչպես նշվեց, միայն դպրոցական–ուսումնական կրթությունը չի համարվել: Լավագույն դպրոց է հանդիսացել անապատը: Օմայյան խալիֆաներն իրենց որդիներին և ընդհանրապես իշխաններին փոքր տարիքում ուղարկում էին բաղիյա՝ անապատ, մասնավորապես Սիրիական անապատ, մաքուր արաբական լեզվին տիրապետելու և պոեզիայի արվեստում վարժվելու համար, խառնվելով տեղական բեղվինների հետ: Դրա օրինակն առաջինը ցույց է տվել դինաստիայի հիմնադիր Մուավիա Դախիֆան, իր որդուն, ապագա խալիֆա Յազիդ I ուղարկելով անապատ:

Ուղղակի զարմանալ կարելի է, թե արաբական խալիֆաներն ինչքան մեծ նշանակություն են տվել լեզվի մաքրությանը և պոեզիային: Դրա նաև կապահանձնում է պատմությունները, որ Օմար II խալիֆան խստորեն պատժում է իր որդուն արաբերեն քերականության կանոնները խախ-

տեղու համար: Եվ դրանից հետո նման «մեղքերի» համար պատժելը դառնում է սովորական երևոյթ խալիֆայությունում:

Ընդունված տեսակետի համաձայն, կրթված էր համարվում նա, ով կարող էր կարդալ և գրել իր լեզվով, օգտագործել նիզակ ու նետ, և լող տալ: Այդպիսի մարդուն կոչում էին քամիլ՝ կատարյալ: Դրա համար պահանջվում էր նաև լինել խիզախ, դիմացկում, առատածեոն, հյուրասեր, կնամնեար, հարգել տված խոսքը և այլն:

Դաստիարակության հարցը կանոնավորելու համար, Արդ ալ-Մալիքը նոցրեց դաստիարակի իմստիտուտը, որը մինչ այդ բացակայում էր: Այդ պահից դաստիարակը դառնում է որոշակի դեմք արքայական պալատում: Արդ ալ-Մալիքն իր որդիներին կրթության և դաստիարակության համար նրանց դաստիարակին հրահանգում է: «Սովորեցրու նրանց լող տալ և վարժեցրու, որ նրանք քիչ քննեն»: Խալիֆաների կողմից դաստիարակներին տրվող հրահանգներից կարնոր էր նաև հետևյալը. «Թող առաջին դասը, որը պետք է տպավորություն բողնի նրանց վրա, լինի ատելությունը հաճույքների նկատմար, որի նախաձեռնողը շեյքանն է, և որի հետևանքը Ալլահի զայրույթն է»:

Օմայյաների կրթական հայեցակարգը խարսխված էր արաբի մտավոր և ֆիզիկական համաշափ զարգացման գաղափարի վրա:

## 7. Գիտությունը

Գիտությունը Օմայյաների ժամանակ գտնվում էր խանձարուրում, նա դեռևս չէր ծնավորվել որպես ինքնուրույն ուղղություն: Լուրջ գիտության բնագավառում միայն առաջին քայլերն էին կատարվում և միայն առաջին ծիլերն էին նշնարվում:

Տիրապետող էր հանդիսանում Մուհամմադ մարգարեի այն տեսակետը, որ գիտությունն «այն է, ինչ վերաբերում է կրոնին և այն, ինչ վերաբերում է մարմնին»: Այս վերջինի, մարմնի տակ, նկատի ունեին բժշկությունը:

Եվ, իրոք, արաբական իրականության մեջ երկար ժամանակ անբաժանորեն տիրապետում էր աստվածաբանությունը, կրոնի վերաբերյալ գիտությունը: Լավագույն ուղեղները գրադաստ էին Կորանը մեկնաբանելով, սուննայի և հաղիսների եւթյունը բացատրելով, խորամուս լինելով մարգարեի ասույթների ներքին ծալքերն ըմբռնելու և մեկնելու մեջ: Նրանց այդ աշխատանքը, հարկավ, արժանի է բարձր գնահատա-

կանի: Բավական է նշել Կորանի մեկնությանը նվիրված այն տասնյակ հաստորները, որոնք մեծապես օգնում են ծիշտ հասկանալու և բացատրելու Կորանը և իսլամի հիմնադրույթները:

Ենորիհիկ մուսուլման ուլեմների աստվածաբանական տրակտատների, իսլամագիտությունը բարձրացավ համաշխարհային աստվածաբանության մակարդակին, դառնալով նրա օրգանական մասը:

Ինչ վերաբերում է բժշկությանը, ապա նա գտնվում էր շատ ցածր մակարդակի վրա: Սկզբնական շրջանում բացարձակապես տիրապետում էր պարզունակ տնային բժշկությունը, հիմնված հնայիլիքների, երազների մեկնության և ոչ հարուստ տնային բուժման պրիմիտիվ փորձի վրա: Արաբական հոչակավոր գիտնական Նբն Խալդունը նշում է, որ Սուլամանադն Ալլահի կողմից ուղարկված էր ավելի շատ կրոնական օրենքներ և սկզբունքներ սովորեցնելու, քան թե բժշկություն:

Արաբական բժշկագիտության բնագավառում արմատական փոփոխություններ տեղի ունեցան, երբ Օմայյաները իրագործեցին ծավալուն նվաճողական քաղաքականություն և խալիֆայության կազմում հայտնեցին զարգացման բարձր մակարդակի վրա գտնվող մի շարք ժողովուրդներ, հույները, պարսիկները, հնդիկները, հայերը և այլն: Դեմ առ դեմ շփվելով նրանց հետ, արաբները նրանցից շատ բան սովորեցին և վերցրեցին գիտության տարրեր բնագավառներում, այդ թվում և բժշկագիտության:

Արաբները մի կողմից ընդօրինակեցին նրանց փորձը և բուժման մեթոդները, իսկ մյուս կողմից սկսեցին հունարենից, ինչպես նաև ասորերենից և պարսկերենից արաբերեն բարգմանել բժշկագիտության վերաբերյալ նրանց գիտական աշխատությունները: Դա նոր հեռանկարներ բացեց արաբական բժշկագիտության առջև, խթանեց նրա զարգացումը, որի պտուղներն արդեն երևացին Աբրասյան խալիֆայության շրջանում և հետագա դարերում:

Ըստ այդմ, առաջին ոչ թե հեթիմները, այլ իսլամական բժիշկները, եղել են օտարերկրացիները, գլխավորապես քրիստոնյաները, թեև արաբների մոտ էլ հայտնվել են այդպիսիները: Դրանց թվին է պատկանում Դարիս իբն ալ-Խալաղահը Թաիֆից, որը գործել է VII դ. և կրել «Արաբների բժիշկ» պատվավոր կոչումը:

Օմայյան խալիֆաներն եղան առաջին արաբ կառավարողները, որոնք սկսեցին կյանքում կենսագործել գիտական բժշկության տվյալները: Արդեն նշվեց, որ Վակիր I խալիֆան հատուկ և առանձին հիվան-

դանոցներ կառուցեց խրոնիկական հիվանդությունների բուժման համար: Խակ Օմար II խալիֆան Ալեքսանդրիայում գտնվող բժշկական հպարոցները տեղափոխեց Անտիոք և Դարրամ, խալիֆայության կենտրոնական մասը, հաշվի առնելով բնակչության ավելի մեծ կուտակումներն այս տարածքներում:

Արաբները որոշակի հետքքրություն են ցուցաբերել նաև այլ գիտությունների նկատմամբ, մասնավորապես փիլիսոփայության, աստղագուշակության, որն այդ ժամանակ մեծ համարում ուներ, մաթեմատիկայի, բուսաբանության կապված դեղաբույսերի հետ, և այլն:

Արաբական գիտության մեջ բացառիկ կարևորություն է տրվել ալ-Քիմիային, որը երկար ժամանակ եղել է արար հետազոտողների ուշադրության կենտրոնում: Գիտության այդ ճյուղի անվան հիմքում քիմիա բառն է, որին պարզապես ավելացվել է արաբական լեզվին բնորոշ «ալ» հոդը և ստացվել է ալքիմիա եզրը, դույզն ինչ չփոխելով այն իմաստային առումով:

Ալքիմիան ելակետ ունենալով իր համար ընդունելի այն թեզը, որ քիմիական ռեակցիաների միջոցով մի մետաղից կարելի է ստանալ մի այլ մետաղ, մի մետաղը կարելի է վերածել մեկ այլ մետաղի, փորձում էին ոչ ազնիվ մետաղները վերածել ազնիվ մետաղների և այդ ճանապարհով ստանալ ուսկի և արծաթ: Դա է կազմում ալքիմիայի էռւեյունը:

Մի մետաղը մի այլ մետաղի վերածելու տեսությունը չի պատկանում արաբներին: Այդ տեսակետի ջատագովներն են եղել դեռևս անտիկ աշխարհի, մասնավորապես հին Չունաստանի գիտնականները: Բայց թվում եր, թե այդ տեսակետը մոռացության էր մատնվել: Արաբների ծառայությունը կայանում է նրանում, որ նրանք, տուրք տալով հարստանալու և ուսկի ու արծաթ ծեռք բերելու անհաջողությունը տեսնչին, նոր շունչ հաղորդեցին նրան և փորձեցին վերակենդանացնել մահվան դատապարտված այդ վարկածը:

Արաբները, անվիճելի է, ունեն որոշակի ներդրում ալքիմիայի զարգացման բնագավառում: Այստեղ առաջինը պնտը է հիշատակել Օմայյան երկրորդ խալիֆայի որդու, իշխան խալիֆի անունը (մահ. 704 կամ 708 թ): Նա իր ժամանակի զարգացած մարդկանցից մեկն էր, որը սիրում էր կարդալ և քարզմանել օտարերկրյա հեղինակների գիտական աշխատությունները: Նա բնագործ քարզմանել է հունարեն և ղպտերեն գրված գրքեր, որոնք վերաբերել են ալքիմիային, ինչպես նաև բժշկությանը և աստղագուշակությանը: Դրապարակի վրա նման գրքերի հայ-

տնվելը, թնականաբար, խթանել է հետաքրքրությունը գիտության Ծկառմանը, ի մասնավորին, ալքիմիայի:

Այս իշխանի անվան հետ է կապված նեծ հոչակ ձեռք բերած Զարը իբն Ջայյանի գործունեությունը, որը ալքիմիային և աստղագուշակությանը նվիրված տրակտատների ճանաչված հեղինակ է: Նա իր գիտական գործունեությունը սկսելով Օմայյաների շրջանում, առանձնակի հաջողության հասավ արդեն նրանց հաջորդների՝ Արքայանների օրոք:

Արաբական ալքիմիկոսները, ինչպես և պետք էր սպասել, հաջողության չհասան և չէին էլ կարող հասնել իրենց գիտական որոնումների մեջ: Սակայն նրանց պատմական ծառայությունը կայանում է նրանում, որ նրանք աննախաղեա կերպով զարգացրին փորձագիտությունը, հաստատեցին գիտական փորձի անհրաժեշտությունը, որպես գիտական պրոցեսի անհրաժեշտ բաղադրատարր, և մեծապես բարձրացին գիտական փորձի հեղինակությունը, որից գիտնականների հետագա սերունդներն այլևս չէին կարող նահանջել:

Արաբական աշխարհում գիտությունը նեծ համարում ուներ և վայելում էր բարձր հեղինակություն և հարգանք: Միայն այդպիսի միջավայրում կարող էր գիտնականին և գիտությունը մեծարող այնպիսի խորիմաստ ծոն ծնվել, որպիսին «Գիտնականի բանաքը պետք է նահատակի արյանը հավասար գնահատվի» սքանչելի դարձվածքն է: Իսկ եթե նկատի ունենանք, որ արաբների մոտ նահատակը կամ շահիդը սուրբ է համարվում, արժանի պաշտամունքի, ապա լրիվ հասկանալի կղանա այդ դարձվածքի ամբողջ խորությունը: Դա է հաստատում նաև արաբների մոտ համոզմունքի ուժ ծեռք բերած «Մարդու մեծագույն զարդը իմաստությունն է» կարևոր բանաձևը:

Անփոփելով, կարելի է ասել, որ Օմայյաների շրջանում ուազմական թատերաքենում փայլուն հաղթանակների կողքին նշանակալի են եղել նաև արաբների նվաճումները մշակույթի և մտավոր կյանքի թատերաբեմում: Ու թեև հանուն արդարության պետք է ընդունել, որ որանք անհամենատելի նվաճումներ են և ծանրության նժարը թեքվում է ուազմականի կողմը, այդուհանդերձ, մշակույթի ասպարեզում ծեռք բերածն էլ փոքր չեր:

Օմայյանների ժամանակ ցանած մշակույթի և գիտության սերմերը բերքաբեր եղան հետագա դարերում:

## Գլուխ վեցերորդ

### **ՕՄԱՅՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ (750 թ.)**

#### **I. ԽԱԼԻՖԱԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ**

##### **1. Խակասությունների հանգույցը**

Օմայյան խալիֆայությունն իր հզորության գագաթնակետին հասավ խալիֆա Վալիդ I տիրակալության օրոք. VIII դարի առաջին քսանամյակում: Դրանից հետո սկսվում է խալիֆայության աստիճանական թուլացումը, ապա և ճգնաժամը:

Արտաքին փայլը և արքունիքի անվերջ խրախնանքներն այլևս չեն կարող սքողել խալիֆայության ներքին թուլությունը:

Խալիֆայության սկսված ճգնաժամը համակարգային բնույթ էր կրում: Նա համակել էր պետության բոլոր ոլորտները՝ տնտեսական, քաղաքական, կառավարման, ռազմական, միջցեղային հարաբերությունների և այլն, որի տրամաբանական վախճանը հանդիսացավ Օմայյանների անկումը:

VIII դ. 20–30-ական թվականներից սկսվում է խալիֆայության տնտեսական վիճակի վատթարացումը. որն իր հանապատասխան անդրադարձն ունեցավ բնակչության տնտեսական վիճակի վրա: Խիստ պակասել էր եկամուտների ծույթը պետական գանձարան, որն արդյունք էր երկու կարևոր հանգամանքների:

Առաջին, արաբներն ինչ որ հնարավոր էր նվաճել, արդեն նվաճել էին: Իսկ դա նշանակում էր, որ եկամուտների նոր աղբյուրների հայթյունը պատերազմների և նվաճված երկրների հաշվին, սպառվել էին:

Երկրորդ, չնայած այդ հանգամանքին, մեկը մյուսին հաջորդող ապաշնորհ խալիֆաները ոչ մի կերպ չեին ցանկանում սահմանափակել ծախաերը, նախնինի պես շարունակում էին իրենց ցոփ կյանքը, Վիթսարի գումարներ մսխելով իրենց և պալատականների հաճուքների վրա: Օմայյաների ընտանիքի անդամների, որոնց թիվն անընդհատ աճում էր, արգունիքի, փոխարքաների, կառավարող ավագանու և գորապետերի ագահությունը չափ ու սահման չուներ: Նրանք ոչնչի առջև կանգ չեին առնում իրենց պահանջները բավարարելու և անձնական հարստությունը բազմապատկելու համար: Մեծ ծախսեր էր պահանջում նաև բանակը:

Իսկ քանի որ դրա համար այևս չկային այլ աղբյուրներ, ապա միակ աղբյուրը մնում էր ժողովրդի շահագործան խորացումն ու ուժեղացումը: Օմայյաները չգտան որևէ այլ բան, քան հարկային նամկիչի ուժեղացումը: Նրանց քաղաքական իշխանության դարձավ այսպես կոչված «Վարչական օրինակելի ապարատի» ստեղծումը, որի օգնությամբ փորձում էին լուծել տնտեսական հարցերը, կրկին հարստացնել պետական զանձարանը և այլն:

Դարկերի մեծացումը, խստացումը և գանձման ժամանակ թույլ տրվող ամեն տեսակի անօրինականություններն ուղղակի պատուհաս դարձան խալիֆայության բնակչության, և՝ արաբների, և՝ նվաճված ժողովուրդների, գլխին: Օմայյանները, թվում էր, թե ամեն ինչ անում էին ժողովուրդներին, հասարակ աշխատավորներին իրենցից վանելու համար:

Սակայն հարկերի գանձման ուժեղացումը, պարտապաններին հարկերը չվճարելու համար ամենասարսափելի պատիժների ենթարկելը, հասկանալի է, եթե չեր տնտեսական դժվարությունները հաղթահարելու համար: Տնտեսական խնդիրներն այդպես չեն լուծվում: Փոխարենը, այդ քաղաքականությունը հարուցեց բնակչության ամենալայն զանգվածների խորը դժգոհությունը, որն իր հերթին հանգեցրեց Օմայյանների սոցիալական հենարանի՝ թուլացմանը:

Ահա, այսպես, տնտեսական ոլորտում ծնավորվեց հակասությունների առաջին և թերևս ամենավտանգավոր հանգույցը:

Դակասությունների մյուս հանգույցը ծնավորվեց միջքեղային հարաբերությունների ոլորտում: Դրանում իր դերն ունեցավ Օմայյան խա-

լիժաների նոր քաղաքականությունը, որ նրանք սկսեցին կիրառել VIII դ. 20-ական թվականների Վերջերին–30-ական թվականների սկզբներին:

Օմայյանները, ինչպես նշվել է, ծագումնաբանորեն մոտ էին հյուսային քանու կայսի ցեղին: Սակայն Մուավիա և խալիֆայից սկսած, Օմայյանները հենվում էին հարավյային քանու կալրի ցեղի վրա: Այս վերջինը, շնորհիկ մշտական շփումների բյուզանդացիների հետ, ավելի զարգացած և առաջադիմած էր, քան թե քանու կայսի ցեղը, որի մոտ ավելի ուժեղ էր նահապետական կացութածը: Մյուս կողմից, կալրիները մեծամասնություն էին կազմում Սիրիայում, որը դարձել էր արոռանիստ նահանգ Օմայյանների համար: Այստեղ էր գտնվում խալիֆայության մայրաքաղաք Դամասկոս:

Օմայյանները կալրիներին սիրաշահելու համար իրենց կին էին վերցնում նաև այդ ցեղախնմի ավագանու ընտանիքների աղջիկներից, դրանով իսկ իրենց ամուսնություններին տալիս էին քաղաքական գունավորում, ամրապնդելով իրենց քաղաքական դիրքերը երկրի ներսում:

VIII դ. 20-ական թվականների վերջերից, սակայն, Օմայյանները վերակողմնորոշվում են դեպի իրենց արմատները և հանագործակցության առանցքը դարձնում կայսիներին: Իսկ դա առաջացրեց կալրիների խորը դժգոհությունը, քանի որ նրանց կողքնում էին այն առավելությունները, որ նրանց տալիս էր խալիֆաների նախկին քաղաքականությունը:

Կալրիները դադարեցրին աջակցել Օմայյաններին և բացահայտ ընդհարումներ սկսվեցին քանու կալրի և բանու կայսի հզորագույն ցեղայինքների միջև: Իսկ դա դարձավ իրադրությունն ապակայունացնող գործոն և նպաստեց Օմայյանների դիրքերի հետագա թուլացմանը: Նույնիսկ քանը հասավ այնտեղ, որ Օմայյաններն իրենց այլևս ապահով չէին զգում Դամասկոսում և հեռացան այնտեղից: Խալիֆա Սուլեյմանն իր արքունիքը հաստատեց Ռամալլահում, Պաղեստին, խալիֆա Շիշամը Ուստաֆում, Եփրատի վրա, իսկ Մրվան II Հարրանում, որը գտնվում է Միջագետքում:

Միջեղեղային համերաշխության խարխլումը, ապա նաև քացահայտ առճակատումները տարբեր ցեղերի և ցեղախնմբերի միջև, ճակատագրական հետևանքներ ունեցան Օմայյանների համար: Դա նույնպես թուլացրեց Օմայյանների սոցիալական հենարանը և խորացրեց ճգնաժամը խալիֆայությունում:

Այսպիսի մթնոլորտը չէր կարող չանդրադարնալ խալիֆայության գինված ուժերի վրա: Նրանց նույնպես ներգրավեցին ճգնաժամի ոլոր-

տը, որն, իր հերթին ավելի խորացրեց այն: Գանձարանի աղքատացման հետևանքով գինվորները նախկինի պես այլևս կանոնավոր և նույն չափերով ռոճիկ չեն ստանում, որը չլսված բան էր: Դա առաջացրել էր գինվորների խորը վրդովնունքը և նրանք պատրաստ էին ամեն տեսակ գործողությունների, այդ թվում և իշխանությունների դեմ, իրենց շահերը պաշտպանելու համար:

Ռազմական ոլորտում, գինված ուժերի անբավարպածության արդյունքում, ծևավորվեց հակասությունների մյուս կարևոր համգույցը:

Օնայյաններից վերջնականապես երես թեքեց Սեքրայի և Սարհնայի արարական վերնախավը, բոլոր նրանք, ովքեր իրենց համարում էին Սարգարեի գինակիցների ժառանգորդներ և հաջորդներ:

Նրանց և Օնայյանների միջև հարաբերությունները մշտապես լարված են եղել: Արարիայի վերնախավը Օնայյաններին ներել չեղ կարողանում այն հանգանանքը, որ վերջիններս իշխանության գլուխ գալով, «մոռացության» տվին, լրիվ անտեսեցին ու գրկեցին նրանց որևէ կերպ երկրի կառավարմանը մասնակցելու հնարավորությունից և ոչ մի կերպ հաշվի չեն նստում նրանց հետ:

Երբ Օնայյանները դեռևս ուժեղ էին, նրանք կարող էին իրենց թույլ տալ նման քայլեր: Բայց այժմ, երբ նրանց դիրքերը թուլացել էին և նրանք այլևս նախկինները չեն, Արարիայի վերնախավի հակաօնայյական դիրքորոշումը մեծ վտանգ էր ներկայացնում նրանց համար, նկատի ունենալով այն պարագան, որ նրանք դեռևս մեծ հեղինակություն էին վայելում և օգտվում էին բարոյական ազդեցիկ լծակներից:

Օնայյանների դեմ ուղղված նրանց նախկին մեղադրանքներին առ այն, որ նրանք հեռացել են Սարգարեի ավանդներից ու պատգամներից և հետևողական չեն իսլամի հիմնադրույթներին հետևելու և կիրառելու հարցում, ավելացան նոր, ավելի ծանրակշիռ մեղադրանքներ:

Արարիայի վերնախավը և նրանց միացած աստվածաբանները Օնայյաններին բացեկրաց սկսեցին մեղադրել այն բանում, որ նրանք դավաճանել են աստվածապետության սկզբունքներին, որպիսին եղել է Մարգարեի և նրան հաջորդած չորս բարեպաշտ խալիֆաների կողմից հաստատած արարական պետությունը: Նրանք կառավարող դինաստիային մեղադրում էին խալիֆայությունը աշխարհիկ պետության վերածելու մեջ, որը հակասում է Մուհամմադի ավանդույթներին, Կորանի և սուննայի սկզբունքներին:

Նման մեղադրնքներ ներկայացնելուն նպաստում էր առանձին խալիֆաների անվայելուչ պահպաժը: Մենք արդեն նշել ենք խալիֆաների և արքունիքի աշխարհիկ հաճույքներին անծնատուր լինելու մասին: Այստեղ հարկ է ավելացնել Օմայյան վերջին խալիֆաներից մեկի՝ Վալիդ II (743–744 թ.) արարքների մասին, որոնք ցնցող տպավորություն են թողել շրջապատի վրա: Հարունակելով իր նախորդների ավանդույթները որսորդության, գինարորդի և այլ աշխարհիկ հաճույքների բնագավառում, նա այնքան հետուն զնաց, որ Կորանի թերթիկները դարձրել եր թիրախ և նետահարում եր դրանք, ծգտելով վարպետանալ նետածգության ասպարեզում: Սուսուլման ովենաները խալիֆայի այդ արարքը գնահատեցին որպես սրբապղծություն: Նույն կերպ որակվեց Վալիդ II հանդգնությունը, երբ նա, որպես իմամ, ուրբաթօրյա աղոթքն անցկացնելու համար իր փոխարեն մզկիթ ուղարկեց իր հարժերից մեկին:

Եվ, վերջապես, Վալիդ II հեռացավ մայրաքաղաքից և բնակություն հաստատեց անապատում հատուկ նրա համար կառուցված որսորդական տնակ-պալատում, ամբողջապես նվիրվելով որսորդությանը, հարթեցողությանը և մարմնական հաճույքներին:

Սեքքայի և Սադինայի վերնախավը, աստվածաբան իրավագետները, ստեղծված վիճակից դուրս գալու ելքը տեսնում էին իսլամի սկզբունքներին վերադառնալու մեջ: Սակայն նրանք այլևս համոզված չէին, որ Օմայյաներն ի վիճակի էին կատարել դա, քանի որ նրանք շատ էին խորացել իրենց մեղքերի մեջ:

Արարիայի վերնախավի նման դիրքորոշումը ծանր հարված էր Օմայյաների հեղինակությանը, որն ավելի բուլացրեց նրանց դիրքերը և ավելի խորացրեց ամրող խալիֆայությանը հանակած ճգնաժամը:

Դիմակայությունը արաքական տոհմիկ ավագանու, որն իր արմատներով ուղղակի կապված էր Սուհամբադ մարգարեի հետ, և Օմայյան վերնախավի միջն, դարձավ հակասությունների մեկ այլ կարևոր հանգույց:

Խալիֆայությունում անկայունության հաստատմանը և քաղաքական ճգնաժամին նպաստում էր Օմայյան դինաստիայում տիրող, կարելի է ասել, քառսային վիճակը:

Դինաստիայի շրջանակներում գահի և ազդեցության համար բացահայտ և թաքնված պայքար էր գնում խալիֆաների բազմաթիվ որդիների, եղբայրների, հորեղբորորդիների, հեռու ու մոտիկ ազգականների միջև: Շատ խալիֆաներ մահանում էին հանելուկային և խորհրդավոր

պայմաններում, հավանաբար ոչ առանց ոմանց օգնության: Այդպիսի ճակատագրի ի վերցո ունեցավ արդեն իշխատակված Վալիդ II, որը սպանվեց իր ազգականների ձեռքով:

Խալիֆաներն արագործեն հաջորդում էին մեկը մյուսին: Բավական է նշել, որ միայն 744 թ. խալիֆայության գահի վրա եղել է չորս խալիֆա՝ Վալիդ II (743–744 թթ.), Յազիդ III (744 թ.), Իբրահիմը (744 թ.) և Վերջապես Օմայյան վերջին խալիֆա Մրվան II, որն իշխանության գլուխ գալով 744 թ., գահակալեց մինչև 750 թ.:

Այսպիսի խառնաշփոր իրավիճակում քիչ չէին այն դեպքերը, երբ մերթ այստեղ, մերթ այնտեղ հայտնվում էին ինքնակոչ խալիֆաներ, այդ թվում և Օմայյան էմիրների շարքերից, որը վկայում էր բուն Օմայյան դինաստիայուն տիրող ճգնաժամի մասին:

Խալիֆաների գլխապտույտ փոփոխություններն անդրադառնում էին նաև փոխարքաների ճակատագրի վրա: Նրանք շնորհագրկվում և կողցնում էին ոչ միայն իրենց գրադեցրած պաշտոնները, այլև կյանքը: Այդպիսի ճակատագրի արժանացավ Միջին Ասիայի փոխարքա Կուտեյրը. որը պաշտոնանկ արվեց և սպանվեց խալիֆա Սուլեյմանի հրանանով: Տանջանահա արվեց նաև արևելյան շրջանների կառավարիչ Սուհամմատ իբն Կասիմը: Իսկ Շյուսիսային Աֆրիկայի փոխարքա Մուսայի «բախտը բերեց»: Նա թեև շնորհագրկվեց, սակայն կյանքից չգրկվեց:

Այս բոլորն, անշուշտ, բոլացնում էր Օմայյանների դիրքերը և խորացնում ճգնաժամը խալիֆայությունում, առաջացնելով հակասությունների մեկ այլ, բավականին յուրօրինակ հանգույց:

Օգտվելով խալիֆայությունում ծագած ներքին դժվարություններից, քաղաքական անկայունությունից և համընդհանուր դժգոհությունից, կրկին գլուխ բարձարացրին և ակտիվացան շիաները և Օմայյաններին թշնամի այլ մեծ ու փոքր ուժեր:

Շիաների պահանջների և դժգոհության պատճառը մնացել էր նույնը: Նրանք գտնում էին, որ Օմայյանները խալիֆայության ոչ լեզինմ, անօրինական կառավարողներն են, իշխանության բռնազարիչներ, և պետք է իրենց տեղը զիջեն Ալիի հետնորդներին՝ շիաներին: Նրանց այս պահանջները նոր բափով առաջադրվեցին VIII դ. 40-ական թվականներին, որն ավելի սրեց ներքաղաքական պայքարը խալիֆայությունում:

Հիաների, խարիզիների, իսկ ապա նաև Աքքասյանների կողմից Օմայյանների դիմաստիայի լեգիտիմության վիճարկման ֆոնի վրա ծեալորվեց հակասությունների, կարելի է ասել, հաջորդ հանգույցը:

Այսպիսով, տարատեսակ հակասությունների առաջացումը և նրանց սրվելը, հիրավի, վկայում էր, որ ճգնաժամը համակել էր խալի-ֆայության բոլոր խավերին, տարածվել վերևից ներքև, ուստի և կրում էր համակարգային բնույթ:

Օռակարգի հարց էր դարձել Օմայյան խալիֆայության հետազա ճակատապահը, նրա լինելու չինելու խնդիրը:

## **2. Հակաօմայական ապստամբությունները և ելույթները**

Դամակ դժգոհության այս ընդիւնուր ֆոնի վրա խալիքայության տարբեր մասերուն ծայր առան Օնայյաների տիրապետության դեմ ուղղված ապստամքություններ և զինված ելույթներ:

Յակաիշխանական ելույթներ խալիֆայությունում հաճախ են եղել: Սակայն այս փուլում ծավալված ելույթների յուրահատկությունը և վտանգավորությունը կայանում էր նրանում, որ նրանց դրսնորպեցին Օմայյան դինաստիայի դիրքերի թուլացման ժամանակ, երբ խիստ նեղացել էր նրա սոցիալական հենարանը և պակասել էին այն ուժեղը, որոնք հավատարիմ էին նրան, և որոնց վրա Օմայյան վերջին խալիֆաները կարող էին հենվել:

Օմայյան վերջին խալիֆա Մրգան II իր զահակալումից անմիջապես հետո արդեն հարկադրված էր գործ ունենալ զյուղական և քաղաքային բնակչության ելույթների հետ, որոնք դրսնորկեցին Իրաքում և Սիրիայում:

Նոր խալիքան իր նստոցը հաստատել էր Սիրայից դուրս, Դարրանում, որը զտնվուն է Միջագետքում: Բացի այդ, նա սկսեց հենվել քանու կայսի ցեղի վրա, որը դժգոհություն առաջացրեց հիմնականում քանու կայրի գեղերից կազմված Իրաքի և Սիրիայի կայազորներում:

Զինված ապստամբություն բարձրացրին Սիրիայի բնակչության լայն խավերը, որոնց համար այլևս անտանելի էին հարկերը: Եվ Մրգան II Սիրիայի բնակչության դեմ, որը երկար ժամանակ եղել էր Օմայյան դինաստիայի քաղաքական կենտրոնը և հուսալի հենարանը, հանեց իր քանակը: Տա զրավեց ապստամբության կենտրոն Յիմսը (Յոմսը), քան-

դեց նրա և Սիրիայի մյուս խոշոր քաղաքների պարիսպները և խստորեն պատճեց ապստամբության մասնակիցներին:

Իրաքում նա հարկադրված էր ծանր մարտեր մղել խարիչների դեմ, որոնք բավականին ամրապնդել էին իրենց դիրքերը և կատարելագործել իրենց մարտավարական արվեստը: Նրանց հակաօմայյական քարոզչությունը, որը պարունակում էր սոցիալական հավասարության տարրեր, մեծ համակրանք էր նվաճել Իրաքի ժողովրդի մոտ: Նրանց պաշտապանությամբ հանդիս եկան անգամ Իրաքում տեղակայված առանձին կայազորներ, որոնք համալրված էին կալրի ցեղից, որն ավելի էր դժվարացնում խալիֆային դեռևս հավատարիմ գործերի գործողությունները: Նրանց դժվարությամբ և մեծ գործողությունների գնով էր հաջողվում ժամանակավորապես ճնշել այդ ելույթները:

Դատկանշական է, որ խարիչների ազդեցությունը և գործունեությունը դուրս եկավ Իրաքի շրջանակներից և տարածվեց նաև Արարիայում: Սակայն այստեղ խալիֆան այլևս ի վիճակի չեր նրանց դեմ լուրջ մարտական գործողություններ ծավալել, քանի որ նրա բանակն այլևս նախկինը չեր: Նա արդեն դարձել էր փոքրաքանակ, մի կողմից, և հոգնած ու տկարացած Իրաքում խարիչների և Սիրիայում ապստամբ քնակչության դեմ երկարատև և հյուծիչ պատերազմներից հետո, մյուս կողմից:

Անհանգստության մշտական կենտրոն էին Խորասանը և Միջին Ասիան, մասնավորապես Մավրաննահրը: Այստեղ մեծ ազդեցություն ունեին շիանները, ինչպես նաև խարիչները, որոնք բացահայտորեն հանդիս էին գալիս Օմայյանների իշխանական իրավունքների դեմ, նրանց համարելով բռնատերեր:

721 թ. հումկու ապստամբություն բռնկվեց Սողորում, որին մասնկցում էր 10 հազար մարդ: Նրանց ապստամբությունը ճնշվեց դաժանությամբ և բոլոր ապստամբները սրի քաշվեցին:

Սակայն 728 թ. Սողորում բռնկվեց նոր ապստամբություն: Այս անգամ ապստամբները, դաշանակիցներ ծեռք բերելու նպատակով, հրաժարվեցին խւլամից, և օգնության խնդրանքով դիմեցին տեղաբնակ քուրքերին: Վերջիններս, ինչպես նաև Ֆերգանայի և Շաշի (Տաշքենդ) քուրք բնակչության գինված ջոկատները օգնության եկան ապստամբներին: Նրանց միացան նաև Սողորի դեկաններ՝ հողատերերը: Նրանց միացյալ ուժերը պարտության մատնեցին օմայյական գործերին և, ի վերջո, Մավրաննահրը բոթափեց արարական տիրապետությունը:

734 թ. ապստամբություն սկսվեց Խորասանում Դարիսա իրն Սուրեյջի գլխավորությամբ, որին մասնակցում էին նաև արաբները: Ապստամբները պահանջում էին հավատարմություն Կորանի դրույթներին և Սուհամադ մարգարեի պատգամներին, քրիստոնյաների և այլ գինմիների իրավունքների հարգում, մուսուլմաններից խարացի գանձման դադարեցում և այլն:

Բանի որ խալիֆայության գործերը գրաղված էին Խորասանի ապստամբությունը ճնշելով. 736 թ. ապստամբության դրոշը նորից բարձրացվեց Սողորում: Ապստամբներին հաջողվեց գրավել Սամարդանոց, որի կորուստը ծանր հարված էր խալիֆայությանը:

Անհանգիստ էր նաև Արմինիայում, որտեղ տեղի էին ումենում սոցիալական խնդրումներ, իինք դառնալով ապստամբական շարժում ծավալման համար: Երկրանասում, Դայաստանում, Վիրքում, Աղվանքում, Դաղստանում և հարակից տարածաշրջաններում նույնպես Վիճակը ծանր էր, ժողովուրդը տնքում էր ծանր հարկերի տակ:

Չնայած այդ հանգամանքին, 725 թ. անցկացվեց բնակչության հաշվառում, որի հետևանքով սաստկացավ հողահարկի և գլխահարկի գանձումը: Արմինիայի բնակչության մոտ կուտակվում էր խոր դժգոհություն, տեղի էին ունենում տեղական բնույթի բահումաներ բնակչության և արաբական ոստիկանների զորքերի միջև, որոնք, ի վերջո, վերաճեցին խոշոր ապստամբության: Նրա կենտրոնը դարձավ Դայաստանը:

Դայ իշխանները 748 թ. որոշեցին ապստամբվել, նպատակ ունենալով ազատագրվել արաբական տիրապետությունից: Ապստամբությունը գլխավորեց նորընտիր Դայոց իշխան Մուշեղ Մամիկոնյանը: Ընդհանրապես այդ ապստամբության վճռական կողմնակիցները Մամիկոնյաններն էին, որոնք կանգնած էին Երկրի ազատագրության հարցը գենքի միջոցով լուծելու տեսակետի վրա:

Դայ իրականության մեջ մյուս ազդեցիկ նախարարական տունը՝ Բագրատունիները, ավելի զգույշ քաղաքականության կողմնակից էին: Այդ հանգամանքը, ինչպես նաև դաշնակիցների բացակայությունը և դրսից որևէ ռազմական օգնություն ստանալու հեռանկարի բացակայությունն իրենց բացասական դերը խարացին ապստամբության ընթացքի վրա: 750 թ. խալիֆայական զորքերին հաջողվեց ճնշել այդ ապստամբությունը:

Օմայյաններին մեծ գլխացավանք պատճառեց Դյուսիսային Աֆրիկան: Այստեղ հակածայական լայնածավալ քարոզչություն էին անում

իսրահիները, որը քարենպաստ հող գտավ տեղի բնակչների, մասնաւորապես բերբերների մոտ: Դա ունի իր քացալությունը:

Բերբերները համարվում էին նեոմուսուլմաններ, մավալիներ: Նրանցից սկսեցին գանձել այնպիսի հարկեր, որ սովորաբար գանձում էին ոչ մուսուլմաններից, և դա, բնականաբար, առաջացրեց իրենց մարտական բնակությամբ աշջի ընկնող բերբերների դժգոհությունը: Մյուս կողմից, իսլամը բերբերների մոտ դեռևս խոր արմատներ չեր գցել: Այդ կրոնը նրանց համար շարունակում էր մնալ օտար, որին նրանց արտաքուստ ցույց էին տալիս, թե, իբր, հավատում էին, սակայն, իրականում նրանք գաղտնի կերպով շարունակում էին երկրպագել իրենց հեթանոս աստվածներին:

Յարկային ահավոր մամլիչին այլևս անկարող դիմանալու, բերբերները 740 թ. ապստամբեցին: Ապստամբությունն ընդունեց համընդհանուր բնույթ և տարածվեց ամբողջ Հյուսիսային Աֆրիկայում, որը գտնվում էր արաբների տիրապետության տակ: Ապստամբությունը ճնշելու նպատակով խալիֆա Ջիշամի Սիրիայից ուղարկված 30 հազարանոց բանակը 741 թ. զլսովին ջախջախվեց ապստամբ բերբերների կողմից: Դրա հետևանքով բերբերները մի կարծ ժամանակամիջոց ազատագրվեցին արաբական տիրապետությունից, իսկ Անդալուսը (Խսանիան) կտրվեց խալիֆայությունից: Բերբերները Անդալուսում նույնպես ապստամբվեցին:

Յաջորդ տարի Ջիշամը, հավաքելով ավելի մեծաքանակ զորք, կարողացավ Կայրոավանի մոտ տեղի ունցած ճակատամարտում հասնել հաղթանակի ապստամբների նկատմամբ: Սակայն արաբների տիրապետությունն այդպես էլ չամրապնդվեց և երբեք էլ չվեկանգնվեց նախկին կայուն վիճակը: Օճայյանների տիրապետությունը Հյուսիսային Աֆրիկայում շատ երերուն էր, իսկ որոշ մասերում անգամ ծնական:

Այսպիսով, կարծի է ասել, որ ամբողջ խալիֆայությունը հանակված էր ապստամբական շարժումներով: Եվ չնայած այն հանգանանքին, որ որոշ շրջաններում խալիֆաներին դեռևս հաջողվում էր ճնշել այդ ելույթները, այդուհանդերձ, հողմն այրվում էր Օմայյանների ուժը տակ: Նրանց տապալելու համար անհրաժեշտ էր մի վճռական հարված: Այդ հարվածը հասցնողները եղան Աբբասյանները:

### 3. Արու Մուսլիմի ապստամբությունը և Օմայյան դինաստիայի տապալումը

Խալիֆայությունում ստեղծված այս վերին աստճանի ծանր պայմաններում, որը կարելի է անզամ բնութագրել որպես անելանի, քաղաքական խաղի մեջ նտավ մի նոր ուժ՝ Աբբասյանները:

Այդ անվան ծագումը կապված է Սուլհանմաղ մարզարեի հորեղբայրներից մեկի՝ Աբբասի անվան հետ: Սարգարեի հայրը, Աբդալլահը, ուներ Երկու եղբայր՝ Աբբասը և Արու Տալիբը: Այս վերջինը Ալիի հայրն էր: Ուրեմն Աբբասյանները Սուլհանմաղ մարզարեի հորեղբոր, Աբբասի հետնորդներն էին, իսկ ալիականները կամ շիաները, ինչպես նշվել է, նրա մյուս հորեղբոր, Արու Տալիբի որդու, Ալիի հետնորդներն էին:

Աբբասյանները, նախքան Օմայյաններին մարտահրավեր նետելը, փորձեցին իրավական և գաղափարական հիմնավորում տալ իրենց հավակնություններին խալիֆայության գահի նկատմամբ:

Նրանք չեն ժիտում, որ Օմայյանները որպես տոհմ նույնականություն էին կուրայշ ցեղին: Սակայն նրանք չեն սերում կուրայշ ցեղի Սուլհանմաղի տոհմից: Ավելին, Օմայյան դինաստիայի հիմնադրի՝ Սուլիմիայի և հայրը, Արու Սուլիմանը, եղել է Սուլհանմաղ մարզարեի հակառակորդը և չեր ընդունում նրան, երբ Վերջինս սկսել էր նոր կրոնի քարոզությունը Մեքքայում: Կրու Սուլիմանը շատ մեծ ուշացումով հարեց Սուլհանմաղին և ընդունեց իսլամ: Աբբասյան գաղափարախոսները, ելնելով այս հիմնադրությունը, գտնում էին, որ նման մարդու հետնորդները իրավական հիմք չունեն դառնալու խալիֆաներ, ուստի և Օմայյանների կառավարումը լեզիտիմ, օրինական չէ:

Ժխտելով Օմայյանների իրավունքները գահի նկատմանը, Աբբասյանները կատարեցին հաջորդ քայլը: Նրանք առաջ քաշեցին այն տեսադրությը, որ արաբական խալիֆայության օրինական կառավարողներ կարող են լինել միայն Սուլհանմաղ մարզարեի մերձավորագույն հարազատների ներկայացուցիչները: Իսկ այդպիսին նրանք տեսնում էին միայն Աբբասյաններին, Սուլհանմաղի հորեղբայր Աբբասի սերունդի ներկայացուցիչներին:

Աբբասյաններն իրենց հակաօնայյական շարժումը սկսեցին արդարությունը և օրինականությունը վերականգնելու կարգախոսի ներքո:

Աբբասյանները համբերատարորեն և գաղտնապահորեն պատրաստվում էին հանդես գալ Օմայյանների դեմ: Դուսս VIII դ. 20–30–ա-

կան թվականներին նրանք ստեղծել էին գաղտնի խմբավորում, որի ներկայացուցիչները խալիֆայության տարբեր շրջաններում տարածում էին Արքայանների գահի օրինական հավակնորդներ լինելու գաղափարները և բնակչության շրջանում բորբոքում հակաօմայյական տրամադրություններ:

Խորը ժգնաժամի մեջ գտնվող, տարաբնույթ հակասություններից ծվես ծվեն լինող խալիֆայությունում Արքայանների տեսադրույթները պարարտ հող գտան: Նրանց շուրջը համախմբվեցին Օմայյաններից դժգոհ բոլոր քաղաքական ուժերը, չնայած նրանց միջև գոյություն ունեցող հակասություններին: Սակայն նրանց միավորող համընդհանուր ատելությունն էր Օմայյանների նկատմամբ և ամեն գնով նրանց տապալելու ձգությունը:

Ընդդիմադիր ուժերի համախմբումը Արքայանների շուրջը հնարավոր եղավ իրագործել նաև շնորհիվ Վերջիններիս թափականին ճկուն քաղաքականության: Նրանք տալիս էին մեծ խոստումներ ապստամբական շարժման մեջ ներգրավված տարբեր ուժերին: Այսպես, օրինակ, Արքայանները բնակչությանը խոստանում էին թերթացնել հարկերը, անգամ որոշ տեսակի հարկեր վերացնել: Մեծ խոստումներ էին տալիս ոչ արար հողատեր ֆեռավաններին նրանց կառավարության համակարգում ընդգրկելու վերաբերյալ:

Դրա հետ միասին նրանք խուսափում էին ճշտել իրենց դիրքորոշումն առանձին սուր հարցերի նկատմամբ, պատճառաբանելով, թե դրանց կարելի է անդրադառնալ Օմայյաններին տապալելուց և իշխանության գալուց հետո և այլն:

Նման հարցերի թվին էր պատկանում հարաբերությունները ալիականների՝ շիամների հետ, որոնք նույնպես հավակնում էին խալիֆայության գահին, ընգծելով, որ այդ իրավունքը պատկանում է միայն նրանց, քանի որ Ալին Սուլեյմանադի Արու Տալիբ հորեղբոր որդին էր և նրա Ֆարիմա դստեր ամուսինը:

Արքայանները մեծ համակիրներ ունեին Խորասանում և Սավարաննահրում, այդ թվում և պարսիկների մոտ:

Արքայաններն ապստամբության դրոշը բարձրացրին 747 թ. հունիսի 9-ին: Նրա կենտրոնը դարձավ Մերվի օազիսը: Ապստամբությունն Արքայանների հանճնարարությամբ, որոնց դեկավարն այդ ժամանակ իրեն ամբողջ մուսուլմանական ումնայի առաջնորդ հօչակած Իբրահիմ իրն Սուլեյմանին էր, անմիջականորեն դեկավարում էր ծագումով պար-

սիկ. Օմայյաների դեմ ատելությամբ լցված Աքու Մուսլիմը, որը որպես Աքքասյաների գաղտնի խմբավորման անդամ, 743 թ. ճերրակալվել էր իշխանությունների կողմից, սակայն հետագայում ազատ արձակվել:

Աքու Մուսլիմի հրամանով սև շորեր հագած ապստամբները հունիսի 9-ի վաղ առավոտյան վառեցին խարույկները և բարձրացրին սև դրոշները: Անը հենց այդ ժամանակվանից դառնում է Աքքասյանների պաշտոնական գույնը:

Աքու Մուսլիմը հաստատվել էր Մերվից ոչ հեռու գտնվող Սաֆիզանց գյուղում, որը վերածել էր մի ամառիկ ամրոցի: Ապստամբներին մեկը մյուսի հետևից միանում էին մարդիկ մոտակա և հեռավոր վայրերից, Դերաթից, Մերվից, Թուսից, Նիսից, Թամականից, Թոխարստանից և այլ վայրերից: Նրանց կողմն էին անցնում ամբողջ գյուղերը: Հետագայում Աքու Մուսլիմն իր նստավայրը հաստատեց Սահվանում, ապա Մերվում:

Խալիֆա Մրվան II, ստանալով ապստամբության լուրը, 748 թ. իր գործերն ուղարկեց ապստամբների դեմ: Սակայն նրա նիսկ հաջողություն այն եղավ, որ կարողացավ գերել Իբրահիմին և բանտում սպանել տալ նրան: Իբրահիմին փոխարինեց նրա կրտսեր եղբայրը՝ Աքու ալ-Աքքասը, որը ստանձնեց ապստամբության ընդհանուր ղեկավարությունը:

Ապստամբները ոչ միայն հաջողությամբ հետ էին մղում խալիֆային հավատարիմ գործերի հարձակումները, այլև 748 թ. անցան Վճռական գործողությունների: Նրանք գրավեցին Նիշապուր, Ռեյ, Նիհավանդ և այլ կարևոր քաղաքներ ու բնակավայրեր, ամբողջ Իրանը և առաջ շարժվելով արևմտյան ուղղությամբ, 749 թ. ներխուժեցին Իրաք և տիրեցին Կուֆային:

Վճռական ճակատամարտը ապստամբների և խալիֆայական գործերի միջև տեղի ունեցավ 750 թ., Միջագետքում, Մեծ Զար գետի ափին: Ապստամբական ուժերը, որ ղեկավարում էր Աքու ալ-Աքքասի հոռեղբայրը, տարան փայլուն հաղթանակ, գրավեցին Ջարրանը, որը խալիֆայի նստավայրն էր, և ապրիլի 26-ին մտան Ղամասկոս:

Նման պարտություններից հետո խալիֆա Մրվան II այլևս անկառող էր որևէ դիմադրություն ցույց տալ Աքքասյան գործերին, ուստի փախուստի դիմեց Եգիպտոս, հույս ունենալով այստեղ հաստատվել, նոր գորք հավաքել և ճնշել ապստամբներին: Սակայն նրա հույսերը չարդարացան: Նրա դեմ դուրս եկան դպտիները, որոնց միացան տեղական ա-

րաբական կայազորները: Նա հեռացավ Գիզա, բայց այստեղ 750 թ օգոստոսին բռնվեց նրան հետապնդող Աքքասյան զորքերի կողմից և սպանվեց: Օմայյան վերջին խալիֆա Մովսես II գլուխը որպես ընծառադրկան արդեն խալիֆա հռչակված Աբու ալ-Աքքասին: Աքքասյանների հաղթանակը կատարյալ էր:

Օմայյան դինաստիան, որ Արաբական խալիֆայությունը կառավարեց 90 տարի, տապալվեց:

Ավարտվեց արաբական պետության պատմության մի կարևոր փուլը:

## Գլուխ յոթերորդ

### **ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ (750–1258 թթ.)**

#### **I. ԱԲԲԱՍՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ**

##### **1. Աբու ալ-Աբբասը նոր դինաստիայի հիմնադիր և Աբբասյան առաջին խալիֆա (750–754 թթ.)**

Աբբասյանների իշխանության գլուխ գալով Արաբական խալիֆայությունում հաստատվեց երրորդ դինաստիան: Առաջինը ուղղափառ չորս խալիֆաներն էին, որոնք երկիրը կառավարեցին 632–660 թթ.: Սակայն նրանք դասական իմաստով դինաստիա չէին, քանի որ նրանց իշխանությունը չէր հիմնված հորից որդուն կամ եղբորը ժառանգելու սկզբունքի վրա, որը դինաստիական կառավարման կարևոր հատկանիշներից մեկն է: Նրանց ժամանակ գործում էր խալիֆաներին Մուհամմադ մարգարեի մերձավոր գինակիցներից ընտրելու կանոնը:

Երկրորդը Օմայյանների դինաստիան էր, որն խսկապես դասական դինաստիական կառավարում էր, շատ կողմերով ընդօրինակված Սասանյան Պարսկաստանում և Բյուզանդական կայսրությունում գործող համակարգերից: Այս դինաստիան խալիֆայությունը կառավարեց 661–750 թթ.:

Եվ, երրորդը, ինչպես նշվեց, Աբբասյանների դինաստիան էր, որը եղավ ամենաերկարակյացը: Եթե ուղղափառ խալիֆաները կառավարեցին ընդամենը 30 տարի, իսկ Օմայյանները՝ 90, ապա Աբբասյանները՝ 700 տարուց էլ ավելի:

Չետազայում կայսրության տարբեր մասերում հայտնված գանացան դիմաստիաները, ինչպես Ֆարիմյանները. Այլուրիները և այլն, բոլորն էլ ավելի կարճատև կյանք են ունեցել, քան Արքայանները:

Պատմական գրականության մեջ մինչև այսօր էլ վեճ է գնում այն հարցի շուրջը, թե ե՞ր են Արքայաններն եկել իշխանության գլուխ՝ 749, թե՝ 750 թվականին, ըստ այդ էլ Արքայանները կառավարել են 749, թե՝ 750 թվականից մինչև 1258 թ.: Ի՞նչն է հիմք հանդիսացել նման տարակարծության համար:

Երբ Արքայանները կազմակերպեցին ապստամբություն Օմայյաների դեմ, ապա նրանք, առանց սպասելու վերջնական հաղթանակին և Օմայյանների տապալմանը, 749 թ. Արու ալ-Արքասին հոչակեցին խալիֆա: Դա տեղի ունեցավ, երբ ապստամբները մտան Իրաքի Կուֆա քաղաքը: Չենց այստեղ, 749 թ. հոկտեմբերի 30-ին, Արու ալ-Արքասը նրա կողմնակիցների կողմից քաղաքի գլխավոր մզկիթում հոչակվեց խալիֆա: Ամենուր Օմայյանների սպիտակ դրոշներն իշեցվեցին և փոխարինվեցին Արքայանների սև դրոշներով:

Այսպիսով, ստեղծվեց յուրահատուկ իրավիճակ: Գոյություն ունեցող և գործող Օմայյան Մրգան և խալիֆայի կողքին, որը դեռևս համարվում էր երկրի օրինական, լեզիտիմ դեկապար, ասպարեզ իջավ երկրորդը, ապստամբ և որոշ ինաստով ինքնակոչ, խալիֆա Արու ալ-Արքասը:

Դարձ է նշել, որ դա առաջին դեպքը չէր Արաբական խալիֆայության պատմության մեջ: Նման իրադրություն ստեղծվեց նաև խալիֆա Ալիի կենդանության օրոք, երբ 660 թ. Երուսաղեմում իրեն խալիֆա հռչակեց Մուավիան Օմայյանների ընտանիքից: Եվ մինչև 661 թ., լեզիտիմ խալիֆա Ալիի սպանությունը, քաղաքական ասպարեզի վրա էին երկու խալիֆաներ: Այն և Սուլավիան, որը հետագայում հանդիսացավ Օմայյան դինաստիայի հիմնադիրը:

Պատմաբաններից ոմանք, հիմք ընդունելով Արու ալ-Արքասի 749 թ. խալիֆա հռչակվելու փաստը, հակված են Արքայան դիմաստիայի իշխանության գլուխ գալու տարեթիվն ընդունել այդ թվականը: Սակայն ուսումնասիրողների ճնշող մեծամասնությունը համաձայն չէ նման մոտեցման հետ: Նրանք իրավացիորեն գտնում են, որ այդ թվականին օրինական խալիֆան դեռևս Մրգան և էր, որը, ճիշտ է, հայտնվել էր ծանր վիճակում, սակայն շարունակում էր մնալ երկրի լեզիտիմ դեկապարը: Եվ միայն նրա սպանությունից, որը տեղի ունեցավ 750 թ. օգոստոսի 5-ին, և Օմայյան դինաստիայի տապալումից հետո, կարող է

խոսք լինել նոր, Աբբասյան դինաստիայի իշխանության գլուխ գալու մասին:

Ուստի ճիշտ է Աբբասյան դինաստիայի հաստատումն ընդունել 750 թ., երբ Աբբասյաններն այլևս նրանք չունեին, և նեկը մյուսի հետևից նրանց իրենց հավատարմությունը հայտնեցին խալիֆայության տարբեր շրջաններ:

Աբրու ալ-Աբբասը երկիրը կառավարեց 750–754 թթ. և մահացավ ծաղիկ հիվանդությունից, երիտասարդ հասակում, հազիվ բոլորած երեսունը:

## 2. Խալիֆաների միջաժառումները Աբբասյան դինաստիայի ամրապնդման ուղղությամբ

Աբրու ալ-Աբբասը, ինչպես նաև նրան հաջորդած ալ-Մանսուր, ալ-Մահդի, ալ-Շահի և Յարուն առ-Ռաշիդ խալիֆաները, դիմեցին վճռական քայլերի, որոնք երթեմն հասնում էին անասելի դաժանության, իրենց անձնական իշխանությունը և Աբբասյան դինաստիայի դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: Նրանք հետևողականորեն ասպարեզից վերացնում էին իրենց ակնհայտ և հնարավոր մրցակիցներին, բոլորին, թե բացահայտ թշնամիներին, և թե իրենց բարեկամներին, եթե դուզն ինչ կասկածում էին նրանց: Այդ ուղղությամբ առանձնակի դաժանությամբ և վրիժառութամբ աչքի եր ընկում առաջին խալիֆան՝ Աբրու ալ-Աբբասը:

Աբրու ալ-Աբբասը դառնալով խալիֆա, իրեն կոչեց «աս-Սաֆֆահ», որը նշանակում է «Առատածենոն»: Մասնագետները ննան անվանակոչումը կապում են այն բանի հետ, որ Աբրու ալ-Աբբասը դառնալով խալիֆա, Կուտիֆայի նզկիրում իր առաջին խուտքայի ժամանակ մեծ խոստումներ տվեց իր հպատակներին: Նա հրապարակավ հայտարարեց, որ նրանց կղարծնի ամենաերջանիկը, կթեթևացնի ծանր հարկերը, Դամասկոսն այլևս չի լինի խալիֆայության մայրաքաղաքը, նրա վիճարեն արոտանիստ քաղաքը կղառնա կուֆան և այլն:

Սակայն կա «աս-Սաֆֆահի» բացատրության այլ տարբերակ ևս: Նա բարգնանում են որպես «Արյունահեղ», նկատի ունենալով այն բազում սպանությունները, որ նա իրագործեց իր խալիֆա դառնալուց անմիջապես հետո:

Եվ, իրոք, Աբու ալ-Աբբասը իր իշխանությունը և Աբբասյան դինաստիան ամրապնդելու ուղղությամբ առաջին և ամենակարևոր քայլը համարեց Օմայյաների տոհմի բնածնօւմը: Սկսվեց մի խկական մարդարուս: Աբբասյան զորահրամանատարներից մեկը, Աբդալան, իր նոտ ճաշի հրավիրելով Օմայյան ընտանիքի 80 երսելի անդամների, խնջույքի թեժ պահին բոլորին, մինչև վերջին մարդը, կոտորեց: Զորահրամանատարը և նրա օգնականները սպանվածների և վիրավորների վրա կաշվե սփոռոցներ փուլով, նրանց հառաջանքների և տնքոցների «նվազակցությամբ», շարունակեցին իրենց վայրենի գինարդութը: Դավանարար դրա հետ է կապված Աբբասյան խալիֆաների գահի կողքին մշտապես կաշվե մորթի ունենալու սովորութը:

Խալիֆայի հրամանով խալիֆայության բոլոր շրջանները գործակալներ և լրտեսներ ուղարկվեցին, որոնց հիմնական նպատակը Օմայյան ընտանիքին պատկանող մարդկանց հայտնաբերելը և ոչնչացնելն էր: Եվ պետք է ասել, որ, իրոք, Աբբասյաններին հաջողվեց արմատախիլ անել Օմայյանների տոհմը: Անգամ չեին խնայում երեխաններին և կանանց:

Օմայյաններից միայն մեկին՝ Աբդ ալ-Ռահման իրն Սուլավիային հրաշքով հաջողվեց ճողովրել և ապաստան գտնել Խապանիայում (Անդրայուսիայում), որտեղ նա հետագայում, 756 թ. հիմնեց Կորորվայի Օմայյան խալիֆայությունը:

Աբբասյանների ատելությունը և անհանդուրժողականությունն Օմայյանների հանդեպ այն աստիճանի էր, որ նրանք չխնայեցին ոչ միայն կենդանի մնացածներին, այլև մահացած Օմայյաններին, այդ թվում և խալիֆաներին: Նրանք, եքսումացիայի ենթարկելով Օմայյան խալիֆաներից շատերի գերեզմանները, անարգանքի էին ենթարկում նրանց շիրիմները: Իսկ Օմայյան վերջին խալիֆաններից մեկի՝ Դիշամի (724–743 թթ.) աճյունը գերեզմանից հանելով, ութառն մտրակի հարված հասցրեցին, իսկ այնուհետև այրեցին և մոխիրը ցրեցին:

Օմայյանների տոհմի բնածնօւմը, սակայն, անդորրություն չբերեց Աբբասյան խալիֆայությանը: Աբբասյանները դեռևս չեին հասցրել ըմբոշինել Օմայյանների դեմ տարած հաղթանակը, երբ խալիֆայության տարրեր մասերում բարձրացավ նրանց դեմ ուղղված դժգոհության ալիքը:

Աբբասյանների դեմ ընդդեմ Սիրիան, որն ուներ իր պատճառները: Սիրիան Օմայյանների ժամանակ հանդիսանում էր խալիֆայության քաղաքական կենտրոնը և օգտվում էր որոշակի արտոնություններից և առավելություններից խալիֆայության կառավարման, հարկերի վճար-

ման, աշխատավարձերի և այլ հարցերում: Աբբասյանների ժամանակ խալիֆայության կենտրոնը տեղափոխվեց Իրաք և Սիրիան վերածվեց մի սովորական նահանգի Իրաքի կառավարման ներքո: Սիրիացիները չեն կարող հաշտվել իրենց դիրքերը կորցնելու, մանավանդ իրաքցիները տիրապետության տակ հայտնվելու իրավիճակի հետ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ գոյություն ունեին խոր հակասություններ նրանց միջև տարբեր ցեղախմբերի պատկանելու կապակցությամբ:

Սիրիացիները մի քանի անգամ գինված ելույթներ ունեցան Աբբասյանների դեմ, նպատակ ունենալով վերականգնել իրենց նախկին կարգավիճակը, քայլ հաջողության չհասան: Արու ալ-Աբբաս աս-Սաֆթահն այդ ելույթները ճնշեց ամենայն դաժանությամբ: Սիրիան առժամանակ հանդարտվեց և ենթարկվեց Իրաքում հաստատված Աբբասյաններին:

Լարվեցին, ապա քացահայտ թշնամանքի վերածվեցին հարաբերությունները Աբբասյանների և շիանների միջև:

Շիանները Օմայյաններ դեմ ուղղված Աբբասյանների շարժման սկզբում պաշտպանում էին վերջիններին, միամտորեն հավատալով, որ Օմայյանների տապալման դեպքում իրենք, որպես իման Ալիի հետնորդներ, կզան իշխանության գլուխ: Սակայն Աբբասյանները տանելով հաղթանակ, իրենց ծեղոցում կենտրոնացրին ամբողջ իշխանությունը, և շիանները հերթական անգամ մնացին խաղից դուրս: Աբբասյաններն անգամ չեն նտածում որևէ չափով խալիֆայության կառավարմանը մասնակից դարձնել Ալիի հետնորդերին:

Այս հոդի վրա 750 թ. վտանգավոր հակաբրասյան ելույթներ տեղի ունեցան Մավրաննահրում: Աբբասյանների դեմ ապստամբվեց Բուխարան: Ապստամբների գլուխն անցավ Շարիկ իրն ալ-Սահրին, որը շիա էր և գտնում էր, որ Աբբասյանները խալիֆայության գահը պետք է փոխանցեն նրա միակ օրինական հավակնորդներ Ալիի կողմնակից շիաններին:

Ապստամբների շարքերում միավորվել էին արաբները, պարսիկները, Մավրաննահրի այլ տեղաբնիկները, գյուղացիները, արիեստավորները, առևտրականները և այլ ուժեր:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ նրանց միավորողը ոչ միայն, և թերևս, ոչ այնքան իշխանությունը Մուհամմադ մարգարեի փեսա Ալիի հետնորդ շիաններին փոխանցելու պահանջն էր, որքան համընդահանուր դժգոհությունը Աբբասյաններից. նրանց կառավարման ներողներից և դաժանություններից: Այդ պատճառով էլ Շարիկի գլխավորած

ապստամբության դրոշի ներքո կանգնել էին տեղական քնակչության ամենալայն զանգվածները, մոտավորապես 30 հազար մարդ, որն այդ ժամանակների համար մեծ թիվ էր:

Նորընծա խալիֆա Արու ալ-Աբբասն ի վիճակի չեր սեփական ուժերով ճնշել Բուխարայի ապստամբությունը և նրան կրկին օգնության հասավ Արու Մուսլիմը, որն անգնահատելի դեր էր խաղացել Օմայյաների տապալման, Աբբասյանների հաղթանակի և իշխանության գլուխ գալու գործում: Խալիֆայությունում բոլորը հասկանում էին, թե ինչ մեծ վտանգ է ներկայացնում այդ ապստամբությունը:

Աբրու Մուսլիմը, որը Աբբասյան խալիֆայության արևելյան նահանգների կառավարիչն էր, տասհազարանոց մի զորաբանակ ուղարկեց Բուխարայի ապստամբների դեմ: Սակայն նա այս անգամ հաջողության չհասավ, ապստամբները հեշտությամբ հետ նղեցին Աբրու Մուսլիմի հարձակումը և պահպանեցին իրենց դիրքերը:

Դժվար է ասել, թե ինչ վախճան կունենար ապստամբությունը, եթե իշխանությունների կողմը չանցներ Բուխարայի կառավարիչ Կուտեյքան: Ապստամբներին դավաճանեցին և Աբբասյանների կողմն անցան նաև Բուխարայի առևտրականները, որոնք սկզբնական շրջանում միացել էին նրանց:

Ռազմական իրադրությունը հօգուտ Աբբասյանների փոխվելուց հետո, Աբրու Մուսլիմի զորքերը սկսեցին Բուխարայի գրոհը, որի ժամանակ զոհվեց ապստամբության ղեկավար Շարիկը: Սակայն Բուխարան անձնատուր չեղավ, այլ հերոսարք շարունակում էր մարտերը: Աբբասյան զորքերին հաջողվեց քաղաք ներխուժել միայն այն բանից հետո, երբ քաղաքի պաշտպանների մեծ մասը զոհվեց մարտական դիրքերում: Կենդանի մնացած ապստամբները կախաղան բարձրացվեցին Բուխարայի դարպասների վրա, իսկ քաղաքի մի մասն ավերվեց և հրկագվեց:

Ոտքի ելան նաև Կուֆայի շիաները, հիմասթափված Աբբասյաններից և իշխանության լծակներն իրենց ծեռքը վերցնելու անհնարինությունից: Նրանց գլխավորում էր Կուֆայի կառավարիչ Աբրու Սալամ ալ-Խալալը, որին այդ պաշտոնում նշանակել էին իրենք Աբբասյանները՝ Օմայյանների դեմ նղած պայքարում նրա ծառայությունների համար: Նա մասնակցել էր 749 թ. Կուֆայում Աբրու ալ-Աբբասին խալիֆա ընտրելուն: Սակայն Աբրու Սալամն ամենայն հավանականությամբ այդ քայ-

լը կատարել էր հարկադրված, համենայն դեպս ոչ սրտի կանչով, այլընտրանց չունենալու պատճառով։

Պետք է Ենթադրել, որ Արու ալ-Աբբասը, որը նրան նշանակել էր Կուֆայի կառավարիչ, նույնպես այդ քայլը կատարել էր պայմանների հարկադրանքով։ Յօգուտ դրա է խոսում այն պարագան, որ խալիֆան առաջին օրվանից մեծ կասկածներ ուներ Արու Սալամի նկատմամբ, մանավանդ, որ նա մեծ հեղինակություն էր վայելում, ոչ պակաս, քան Արու Մուսլիմը։ Արու ալ-Աբբասը նրան համարում էր իր ամենավտանգավոր մրցակիցներից մեկը։ Եվ նրա որոշումը եղավ մեկը՝ ազատվել իր վտանգավոր մրցակցից։

Խալիֆան լավ էր հասկանում, որ իր ծրագրի իրագործումը, այսինքն Արու Սալամի Ֆիզիկական ոչնչացումը, հղի էր ծանր հետևանքներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա Կուֆայում ուներ արտակարգ մեծ հեղինակություն և նրա սպանությունը կարող էր շիաների լայնածավալ շարժում առաջացնել, որը խիստ վտանգավոր էր դեռևս չամրապնդված խալիֆայության համար։ Դրությունը քարդանում էր նաև նրանով, որ Արու ալ-Աբբասը դեռևս չուներ հզոր և լավ կազմակերպված բանակ, ընդունակ ճնշելու ներքին լայնածավալ և վտանգավոր հակասարայան ելույթները։ Ուստի նա ընտրեց այլ ուղի։

Արու ալ-Աբբասի հածնարարությամբ նրա եղբայրը, Արու Զաֆարը, մեկնեց խորասան և բանակցություններ վարեց Արու Մուսլիմի հետ նրա ծեռօրվ կամ նրա օգնությամբ լուծելու Արու Սալամին մեջտեղից վերացնելու հարցը։ Արու Մուսլիմը հերթական անգամ իր պատրաստակամությունը հայտնեց օգնելու Աբբասյաններին։ Յավանաբար նա դա արեց այն պատճառով, որ նա նույնպես ի դեմս Արու Սալամի տեսնում էր վտանգավոր մրցակցի, որին վերացնելով ինքը կմնար Աբբասյաններին նվիրված միակ հզոր գործիչը, որի հետ Աբբասյաններն ավելի շատ հարկադրված կլինեն հաշվի նստել։

Արու Մուսլիմի հանճնարարությամբ նրա հավատարիմ մարդիկ սպանեցին Արու Սալամին, սակայն լուրեր տարածեցին, թե նրան սպանել են խարիզինները։ Նույնպիսի նենգությամբ սպանվեց շիաների մեկ այլ մեծ հեղինակություն վայելող դեկավար Սուլեյման Կասիրը, որին վտանգավոր էին հանարում ոչ միայն Աբբասյանները, այլև ինքը Արու Մուսլիմը։ Ուստի այս անգամ Արու Մուսլիմին համոզելու առանձակի հարկ չեղավ։

Առաջին Աբբասյան խալիֆաները լուրջ հիմնախնդիրներ ունեին նաև Հյուսիսային Աֆրիկայում, Օմանում, Սինորում, Խորասանում և այլ նահանգներում:

Այդուհանդերձ, Արու ալ-Աբբասյին հաջողվեց դիմակայել Աբբասյանների դեմ ուղղված առաջին ալիքը և զգալիորեն անրապնդել նոր դիմաստիայի դիրքերը:

### 3. Խալիֆա Արու Զաֆար ալ-Մանսուր (754–775 թթ.)

Արու ալ-Աբբաս աս-Սաֆֆահի մահից հետո խալիֆայության գահն անցավ նրա եղբօրը՝ Արու Զաֆարին:

Բերբեր ստրկուհուց ծնված Արու Զաֆարը բացառիկ կարևոր դեր է խաղացել Աբբասյան դիմաստիայի պատմության մեջ: Թես այդ դիմաստիայի հիմնադիրը պաշտոնապես հանրավուն է Արու ալ-Աբբասը, սակայն պատմագիտական գրականության մեջ ընդունված է դիմաստիայի իսկական հիմնադիր համարել նրա եղբօրը, Արու Զաֆարին, դրանով իսկ ծնական դերակատարում բոլոնելով Արու ալ-Աբբասին: Նման տեսակետի համար հիմք են հանդիսացել երկու հանգամանք:

Առաջին, Արու Զաֆարը հանդիսացավ հենց այն խալիֆան, որի ժամանակ քաղաքական և ռազմական առումով իրոք հաստատվեց և ամրապնդվեց Աբբասյան դիմաստիայի իշխանությունը խալիֆայությունում: Այդ իշխանությունն այլևս մագից չէր կախված, ինչպես Արու ալ-Աբբասի օրոք:

Երկրորդ, Արու Զաֆարին հաջորդած Աբբասյան բոլոր 35 խալիֆաներն անմիջապես սերել են նրանից: Դրանք եղել են Արու Զաֆարի տղաները, քուները, ծոռները և այլն:

Այս երկու պարագաներն առանձնահատուկ տեղ են ապահովել նրան պատմության մեջ և նպաստել նրա անվան շուրջը փառապսակի ստեղծմանը:

Արու Զաֆարը գոյություն ունեցող ավանդույթի համաձայն իր համար ընտրեց հատուկ մականուն: Նրա ընտրությունը կանգ առավ «ալ-Մանսուր» տիտղոսի վրա, որը նշանակում է «Դաղթական»: Կարելի է ասել, որ նա այդ իրավունքն ուներ, քանի որ հաղթանակով էր դուրս գալիս իր դեմ ուղղված դավերից և բացահայտ թշնամական գործողություններից: Դրան նպաստել էր նաև այն հանգամանքը, որ տիպարանո-

րեն նա պատկանում էր այն գործիչներին շարքին, որոնք քաղաքականության մեջ կոչվում են մաքիավելական:

Իր գահակալության առաջին օրվանից, ալ-Մանսուրը հարկադրված էր դիմակայել զանազան փորձությունների, որոնց մի մասը շատ լուրջ մարտահրավերներ էին նրա իշխանությանը: Առաջինը նրան որպես խալիֆայի գահի հավակնորդ ծեռնոց նետեց նրա հարազատ հորեղբայրը, Սիրիայի կառավարիչ Արդալլահ իբն Ալին, որը մեծ հեղինակություն էր Վայելում Արքայանների շրջանում: Դրան մասնավորապես նպաստել էր այն հանգամանքը, որ նա տարել էր վճռական հաղթանակը Օմայյան վերջին խալիֆա Մուևավիա II դեմ, Սեծ Զաք գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում:

Սակայն Արու Զաֆարը բնավ մտադիր չէր նրան գիծել իր գահը: Նա իր գահակալության օրինականության համար որպես փաստարկ փորձեց օգտագործել այն հանգամանքը, որ Արու ալ-Արքասը, իբր թե, մահվանից առաջ նրան է նշանակել խալիֆա:

Սակայն այդ փաստարկն ամենայն հավանականությամբ ազդեցություն չի գործել և Արու Զաֆարը հարկադրված էր դիմել ամենազորեղ փաստարկին՝ զենքին: Նա օգնության համար դիմեց խորասանի կառավարիչ Արու Մուևալիմին: Վերջինս հանդես եկավ ալ-Մանսուրի պաշտպանությամբ: Նրա գործերը 754 թ. նոյեմբերին տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնեցին Արդալլահին, որը գերի ընկավ և հետագայում տանջամահ արվեց:

Սակայն ճակատագրի ինչպիսի հեգնանք: Արու Մուևալիմի ծեռքը իր հորեղբոր, գահի գլխավոր հավակնորդի և գլխավոր ախոյանի հետ հաշվեհարդար տեսնելուց հետո, ալ-Մանսուրը իր գլխավոր խնդիրը համարեց ծերրազատվել հենց նրանից, Խորասանի ազդեցիկ կառավարչից: Նա իր մեծ հեղինակությամբ խիստ ազդեցիկ անձնավորություն էր դարձել, իր տրամադրության տակ ուներ լավ կազմակերպված քանակ և այլն: Ինչպես արդեն նշվել է, Արու Մուևալիմը դեկավարեց ապաստանրությունն Օմայյանների դեմ և բացառիկ ծառայություններ ուներ Արքայանների հաղթանակի և կառավարող դիմաստիա դառնալու գործում:

Գալուկ իշխանության, Արքայաններն առաջին օրվանից մեծագույն կասկածանքով էին վերաբերվում Արու Մուևալիմին, նրա մեջ տեսնելով խիստ վտանգավոր մրցակցի: Արու Զաֆարը իր եղբարը՝ Արու ալ-Արքասին անընդհատ հորդորում էր վերացնել Արու Մուևալիմին: Վեր-

զինս սկզբունքորեն համածայն էր եղբոր հետ, սակայն չղիմեց այդ քայլին, քանի որ իրեն բավարար չափով ուժեղ չէր գգում:

Ալ-Մանսուրը հորեղբոր դավադրությունից հետո վերջնականապես որոշեց լուժել Արու Մուսլիմի հարցը, սակայն ոչ թե բացահայտ ճակատանարտ տալով, այլ խորամանկությամբ: Այստեղ իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ լուրեր էին պտտվում, թե Արու Մուսլիմն իբր անուղղակիրորեն նասնակցություն է ունեցել Արդարակի դավադրությանը, թեև դրա համար չկային հավաստի ապացույցներ:

Ալ-Մանսուրն իր մոտ հրավիրեց Արու Մուսլիմին, որն ուխտագնացության էր մեկնում Մեքքա, համապատասխան հրահանգներ տալու պատրվակով: Արու Մուսլիմը, որն անսահման Վստահություն էր տածում Արքայանների նկատմամբ, իր ճանապարհը շեղեց և մեկնեց խալիֆայի մոտ: Ալ-Մանսուրն նրան ընդունեց մեծ պատիվներով, բացառիկ հարգանքի արժանացնելով նրան: Դաջորդ օրն առավոտյան Արու Մուսլիմը, շլացած փառահեղ ընդունելությունից և խալիֆայի հարգալի վերաբերնունքից, ոչինչ չկասկածելով, պալատ մեկնեց և ներկայացավ խալիֆային առանց գենքի և թիկնապահների, ակամայից հեշտացնելով ալ-Մանսուրի խնդիրը: Կերպին օգտվելով այդ հանգամանքից, հրամայեց Արու Մուսլիմին ծերբակալել և սպանել: Դա տեղի ունեցավ 755 թ.. Այսպիսով, Արքայանների համար մի վտանգավոր հակառակորդ և սպառեզից վերացվեց:

Արու Մուսլիմի սպանությունն աննկատ չանցավ և չէր էլ կարող անցնել: Նա մեծ հուզմունք առաջացրեց Պարսկաստանի շիաների մոտ, որը նույն 755 թ. վերածվեց ապստամբության Սուննբադի գլխավորությամբ: Ապստամբության դրոշը բարձրացվեց Նիշապուրում: Թեև ապստամբության դեկավար Սուննբադն առաջադրել էր «Վրեժ համուն Արու Մուսլիմ» կարգախոսը, սակայն ապստամբությունն ընդունեց շիաների Արքայանների դեմ ուղղված ելույթի բնույթը: Ապստամբների հսկողության տակ անցան բացի Նիշապուրից, նաև Ույ և Կումիս քաղաքներն իրեն շրջակացրով: Նրանց դիրքերը և նյութական վիճակը զգալիորեն ամրապնդվեց այն բանից հետո, երբ նրանց ծերզն ընկավ Արու Մուսլիմի գանձարանը:

Նիշապուրի ապստամբությունը զգալի վտանգ էր ներկայացնում ալ-Մանսուրի իշխանությանը: Լավ գիտակցելով դա, խալիֆան գործեց արագ և վճռականորեն: Նա ապստամբների դեմ ուղարկեց 10 հազարանոց լավ զինված մի գորարանակ: Վճռական ճակատամարտը, որը տե-

ոյ ունեցավ ապստամբների և բանակի միջև Դամադանի և Ռեյի միջև, ավարտվեց ապստամբների պարտությամբ: Նրանք գլխովին ջախջախվեցին: Բավական է նշել, որ պատերազմի դաշտում գոհվեց վեց հազար ապստամբ: Նրանց մեջ էր նաև Սունքադը:

Ալ-Մանսուրը նույնպիսի վճռականությամբ արյան մեջ խեղդեց դրան հաջորդած մեկ այլ ապստամբություն Մավարաննահրում: Ուշագրավ է, որ այս ապստամբության առաջնորդ Խսհակը, ինչպես և դրան նախորդած Նիշապուրի ապստամբության ղեկավար Սունքադը, գրադաշտական էին, որը խոսում է այն մասին, որ Աբբասյանների նկատմամբ դժգոհությունը համակել էր ոչ միայն շիաներին, այլև կրոնական այլ դավանանքի պատկանող լայն խավերին:

Անհանգիստ էր նաև Արարիան: Դրա պատճառը նույն էր, ինչ որ Օմայյանների պարագայում: Արարիայի երեխիները, որոնք իրենց համարում էին Սուլիհամմադ մարգարեթի ուղղակի հաջորդները, դժգոհ էին իրենց քաղաքական կարգավիճակից և տնտեսական դրությունից: Աբբասյանները, ինչպես և նրանց նախորդները՝ Օմայյանները, նրանց գրկել էին քաղաքական և իշխանական բոլոր տեսակի լծակներից, որոնց նկատմամբ նրանք մեծ հավակնություններ ունեին: Սակայն Աբբասյանները բոլորովին էլ տրամադրի չէին Արարիայի վերնախավի հետ, թեկուզ աննշան չափով, կիսել իշխանությունը:

Բացի դրանից, այդ վերնախավը դժգոհ էր իր տնտեսական վիճակից: Պետական գանձարանից նրանք շատ աննշան օգնություն էին ստանում, այն դեպքում, երբ Աբբասյաններին մոտ կանգնած կամ նրանց շրջապատող ուժերը, որոնց վրա հենվում էին խալիֆաները, առասպելական հարստություն էին դիզում:

Արարիայի վերնախավը, մարգարեթի հետևորդների բավականին հոծ զանգվածը և նրանց հաճակիրները կազմում էին Աբբասյանների դեմ ուղղված ընդդիմության կորիզն Արարիայում, պատրաստ օգնության ծեղոք մեկնելու և օժանդակելու բոլոր այն ուժերին, որոնք կարող էին հանես գալ Աբբասյանների դեմ: Խևկ այդպիսի գլխավոր ուժը շարունակում էին մնալ շիաները, մարգարեթի հորեղբորորդի Ալիի հետնորդները, որոնց զգալի մասը կենտրոնացել էր Արարիայում:

Նրանք, քաջալերված Արարիայի վերնախավի հակաաբբասյան դիրքորոշումից, 762 թ. ապստամբություն բարձրացրին ալ-Մանսուր խալիֆայի դեմ: Ապստամբության գլուխ անցան Ալիի որդի Դասանի ծոռները՝ Սուլիհամմադը, որը կրում էր «Մաքուր հոգի» տիտղոսը, և նրա

Եղբայր Իրրահիմը: Նրանց միացան Իրաքում և Դիօքազում բնակվող շիաները: Իսկ Դիօքազի բնակչությունը Յասանի ծոռներին սատարելու մեջ այնքան հեռուն գնացին, որ Մուհամմադին հոչակեցին խալիֆա:

Այսպիսով, դարձյալ ստեղծվեց երկու խալիֆայի ծանոթ պատմությունը:

Ալ-Մանսուրն ինքնակոչ խալիֆային պատժելու և նրա գլխավորած ապստամբությունը ճնշելու համար նախապատրաստական մեծ աշխատանք կատարեց: Վճռական ճակատամարտը ապստամբական ուժերի հետ տեղի ունեցավ 762 թ. դեկտեմբերի 8-ին: Ալ-Մանսուրը տարավ իր հերթական հաղթանակը: Ապստամբները պարտություն կրեցին, իսկ «խալիֆա» Մուհամմադն ընկավ մարտուն: Սակայն դա չփրկեց նրան ստորացումից: Նրա դիակը կախաղան հանվեց Մասինայուն:

Իսկ ի՞նչ էր անուն Մուհամմադի եղբայր Իրրահիմը: Նա այդ նույն ժամանակ ապստամբեց Իրաքում, որին միացան ոչ միայն Իրաքի, այլև Խուզիստանի շիաները: Այսպիսով, ալ-Մանսուրը հարկադրված էր կրվել երկու ճակատով, որը, անշուշտ, դժվար դրության մեջ էր դրել նրան: Սակայն Մուհամմադի դեմ 762 թ. դեկտեմբերին տարած հաղթանակից և Դիօքազում ապստամբությունը ճնշելուց հետո, ալ-Մանսուրը իր հիմնական ուժերը կենտրոնացրեց Իրրահիմի դեմ և 763 թ. փետրվարի 14-ին, Կուֆայի մոտ տեղի ունեցած Վճռական ճակատամարտուն, կարողացավ պարտության մատնել Յասանի մյուս ծոռին, Իրրահիմին նույնպես, որի գլուխը որպես ռազմական ավար ուղարկվեց ալ-Մանսուրին:

Դաժան պատժի արժանացան նաև բազմաթիվ այլ շիաներ, մանականդ նրանց վերնախավից: Նրանց գլխատելը և գլուխները որպես ընծա խալիֆային ուղարկելը դարձել էր ամենասովորական երևույթը, իսկ մարմնից անջատված այդ գլուխները մի տեղ հավաքելը և ցուցադրելը՝ ալ-Մանսուրի սիրած գքաղմունքներից մեկը:

Այսպիսով, ալ-Մանսուրին հաջողվեց իր սրի ներքո համախմբել Արաբական կայսրությունը, բացառությամբ Յուսիսային Աֆրիկայի, որտեղ խալիֆայի իշխանությունը չէր տարածվում Կայրավանից այն կողմ, և Խսպանիայի, որտեղ արդեն հաստատվել էր Օմայյան Արդ ալ-Ռահմանը:

#### 4. Դար աս-Սալամի՝ Բաղդադի հիմնադրությը 762 թ.

Ալ-Մանսուրի անվան հետ է կապված նաև Աբբասյան խալիֆայության նոր մայրաքաղաքի՝ Բաղդադի հիմնադրությը:

Մայրաքաղաքի հարցը մշտապես եղել է արաբական խալիֆաներին հույսոր հարցերից մեկը, որին նրանք բացառիկ տեղ են հատկացրել իրենց քաղաքականության մեջ: Եվ դա հասկանալի է, քանի որ պետության քաղաքական կենտրոնի, նրա տեղակայութիւնը, հարմար աշխարհագրական դիրքի հարցերը կարևոր պետական նշանակություն ունեն: Եվ այդ առումով արաբական խալիֆաները մեծ բժախսնդրությամբ են մտեցել նայրաքաղաք ընտրելու խնդրին:

Սակայն արաբական խալիֆաները, դրա հետ միասին, մայրաքաղաք ընտրելիս ղեկավարվել են նաև մեկ այլ կարևոր սկզբունքով. որքանով է անվտանգ տվյալ Վայրը իրենց համար: Երբեմն հարցի այս կողմը, խալիֆայի և նրա արքունիքի անվտանգության և ապահովության հարցը. առաջնային և գերակա է եղել մնացած բոլոր հարցերի նկատմամբ:

Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ խալիֆաները, Օմայյան, թե Աբբասյան, հաճախ են փոխել իրենց մայրաքաղաքները:

Նրանք կիրառել են նաև մեկ այլ տարրերակ: Մայրաքաղաքը քողել են նույնը, սակայն անվտանգության խնդրից ելնելով, իրենք տեղափոխել են իրենց նստոցն ավելի ապահով վայր: Անվտանգություն ասելով տվյալ պարագայում նկատի ունենք ոչ այնքան արտաքին վտանգը, որքան ներքին, երբ այս կամ այն խալիֆան իրեն ապահով չգույնով տվյալ քաղաքում, վախենալով իր դեմ հնարավոր թշնամական ելույթներից, իր նստոցը տեղափոխում էր այլ, իր համար ավելի ապահով վայր:

Այդ քաղաքականությունը լայնորեն կիրառում էին Օմայյան խալիֆաները: Օմայյան խալիֆայության ժամանակ քաղաքական կենտրոնը վերջնականացնելու տեղափոխվեց Արարիայից Սիրիա, Մեծքան և Մեղինան այլևս նայրաքաղաքներ չեին: Պետության պաշտոնական մայրաքաղաքը հոչակվել էր Դամասկոս: Սակայն խալիֆաները միշտ չե, որ մնում էին այնտեղ: Այսպես, օրինակ, խալիֆա Սուլեյմանն իր նստոցը Դամասկոսից տեղափոխեց Ռամալլահ, Պաղեստին, Յիշամն իր արքունիքը հաստատեց Ուուսաֆում, Եփրատի ափին, Կալիդ II, հեռանալով Դամասկոսից, բնակություն հաստատեց անապատում, հատուկ նրա համար կառուցված որսորդական տնակ-պալատում: Օմայյան վերջին

խալիֆա Մրվան II նույնպես հեռանալով Սիրիայից, հաստատվեց Հարբանում, Միջագետքում և այլն:

Նույն քաղաքականությանը հետևեցին նաև Արբասյան առաջին երկու խալիֆաները՝ Աբու ալ-Արբաս աս-Սաֆֆահը և Աբու Զաֆար ալ-Սանսուրը:

Աբու ալ-Արբասն Կուֆայում իր գահակալության ծիսակատարության ժամանակ ունեցած հենց առաջին ելույթում, ի շարս այլ պետական կարևորություն ունեցող հարցերի, անդրադարձավ նաև նայրաքաղաքի խնդրին: Նա բազմահազար անբոխի հավանության ներքո հայտարարեց, որ խալիֆայության նայրաքաղաքն այլևս Սիրիայում չի լինելու և վստահեցրեց իր հավատարիմ հետևողություններին, որ հետայսու մայրաքաղաքը լինելու է Կուֆան:

Փաստորեն դա առաջին պաշտոնական հայտարարությունն էր այն մասին, որ խալիֆայության քաղաքական կենտրոնը Սիրիայից տեղափոխվում է Իրաք: ԵՎ, իրոք, Կուֆան Աբու ալ-Արբասը հօչակեց Արբասյան խալիֆայության նայրաքաղաքը:

Սակայն շուտով պարզ դարձավ, որ Պարսկաստանի սահմաններից ոչ հեռու գտնվող Կուֆան դարձնելով նոր մայրաքաղաք, Արբասյանները սիսալ են թույլ տվել: Բացի այն հանգամանքից, որ նորա աշխարհագրական դիրքն այնքան էլ հարմար չէր ընդարձակ Արաբական կայսրությունը կառավարելու տեսանկյունից, կար նաև մեկ այլ, Արբասյանների համար կենսական նշանակություն ունեցող հանգամանք: Կուֆան Ալիի հետևողությունների, շիանների կենտրոնն էր, որոնք ավանդաբար խալիֆայության բոլոր կառավարողներին համարուն էին իշխանության բռնագավթիներ, եթե նա շիա չէր, և պայքարել են իշխանության գրավման համար:

Ինչպես նշել ենք, Օմայյանների դեմ ուղղված պայքարի սկզբունք Արբասյանները և Ալիականները հանդիսան էին զալիս միասնական ճակատով: Նրանց միավորողն ատելությունն էր Օմայյանների նկատմամբ և նրանց տապալելու ծգտումը: Ընդ որում, Ալիականները կամ շիանները ներքուստ հավատացած էին, որ Օմայյանների տապալումից հետո իշխանությունը կանցնի նրանց, կամ առնվազն նրանք կլինեն իշխանական կառուցներում:

Սակայն իրականում ստացվեց բոլորովին հակառակը: Արբասյաններն ամբողջ իշխանությունը կենտրոնացրին իրենց ծեռքում և շիանները ոչինչ չստացան: Այդ պահից սկսած նրանք գրավեցին հա-

կապքասյան դիրքորոշում և, ինչպես արդեն նշվել է, տեղի ունեցան շիաների մի քանի ելույթներ և գինված ապստամբություններ, ուղղված խալիֆայության նոր կառավարող դինաստիայի՝ Աբբասյանների դեմ:

Դրա հետևանքով Եփրատի ափին գտնվող Կուֆան դադարեց Արու ալ-Աբբասի համար ապահով մայրաքաղաք լինելուց: Նոր խալիֆան սկսեց լրջորեն նտածել նոր նստոց գտնելու մասին:

Դավանական թեկնածուների շարքում քննարկվում էր նաև Բասրայի հարցը: Սակայն նրա թեկնածությունը մերժվեց, ելնելով այն բանից, որ, առաջին, նա անմիջականորեն սահմանակից էր Պարսկաստանին և գտնվում էր խալիֆայության հարավային նասում, և այդ առումով որոշակի դժվարություններ էր ներկայացնում խալիֆայությունը կառավարելու տեսանկյունից, և, երկրորդ, Բասրայում նույնպես մեծ քանակությամբ շիաներ էին բնակվում: Խսկ դա նշանակում էր, որ մայրաքաղաքը Բասրա տեղափոխելով, չէր լուծվում Աբբասյանների անվտանգության հարցը, նրանք շարունակելու էին գտնվել ոչ բարեկամական, թշնամական միջավայրում:

Արու ալ-Աբբասի ընտրությունը կանգ առավ Անբարի Վրա, որի արվարձանում, որը գտնվում էր Կուֆայի և Ջիրայի միջև, նա կառուցեց իր նստոցը, կոչելով այն ալ-Դաշիմիյա՝ ի պատիվ իր ցեղի տոհմապետ Ջաշիմի, որին պատկանում էր նաև Սուհամմադ նարզարեն: Արու ալ-Աբբասն տեղափոխվեց այստեղ, իր հետ տանելով արքունիքը և կառավարական ամբողջ անձնակազմը: Յենց այստեղ էլ նա 754 թ. կնքեց իր նահկանացուն:

Ալ-Մանսուրը իր կառավարման առաջին տարիներին ամբողջովին կրանքած լինելով իր դեմ ուղղված քազմաթիվ դավադրությունները և վտանգավոր ելույթները ճնշելով, իր իշխանությունն ամրապնդելու և Աբբասյան դինաստիայի դիրքերն ամրապնդելու խնդրով, ժամանակ և հնարավորություն չուներ գրադվելու նոր նստավայր գտնելու հարցով: Նա շարունակում էր ապրել ալ-Ջաշիմիյայում:

Սակայն 750—ական թվականների վերջերին և 60—ական թվականների սկզբներին, դաժանորեն ճնշելով Երկրի տարբեր մասերում զանազան ուժերի իր դեմ ուղղված բոլոր տեսակի ելույթները և թշնամական գործողությունները, խալիֆայությունում հաստատելով հարաբերական կայունություն, ալ-Մանսուրը հնարավորություն ստացավ անդրադառնալ նոր մայրաքաղաքի խնդրին, որը նրան, գահակալության առաջին օրերից, մշտապես մտահոգել էր:

Բազմաթիվ վայրեր դիտարկելուց հետո, ալ-Մանսուրի ընտրությունը կանգ առավ Տիգրիս գետի արևմտյան ափին գլուխող, պարսիկների կողմից հիմնված մի հին, փոքրիկ գյուղի վրա, որը կոչվում էր Բաղդադ: Նա տեղադրված էր Պարթևական և Սասանյան Պարսկաստանի երբեմնի մայրաքաղաք Տիգրոնի ավերակներից ոչ հեռու, դեպի հյուսիս: Դենց այստեղ ալ-Մանսուրը 762 թ. դրեց իր նոր մայրաքաղաքի հիմքը, որը նա կոչեց Սաղինա աս-Սալամ՝ Խաղաղության քաղաք: Սակայն ավելի գործածական դարձավ Բաղդադ անունը, նույնիսկ այն աստիճանի, որ Արքայան խալիֆայությունը շատ հաճախ պատճական գրականության մեջ, գրավոր աղբյուրներում և բանավոր խոսքում անվանում էին Բաղդադի խալիֆայություն:

Իսկ ինչ վերաբերում է «Բաղդադի» իմաստային ծագումնաբանությանը, ապա դրա վերաբերյալ երկու տեսակետ կա: Մեկ տեսակետն այն է, որ դա պարսկական ծագում ունի և նշանակում է «Աստծո տրված», իսկ մյուսը, դարձյալ կապելով պարսկերեն «բաղդ» հետ, թարգմանվում է որպես «այգի»:

Իսկ ինչու ալ-Մանսուրն ընտրեց հենց այս, թեև հինավուրց, բայց աննշան պարսկական բնակատեղին: Այդ հարցի պատասխանը տվել է ինքը, խալիֆան: Ալ-Մանսուրը հիմնավորելով իր տեսակետը, նշում է հետևյալ հանգամանքները. «Դա հոյակապ ռազմական ճանքար է: Բացի այդ, այստեղ Տիգրիսն է, որը մեզ կարող է կապել այնպիսի հեռավոր երկրների հետ, ինչպես Չինաստանն է, մեզ բերել ծովային բարիեներ, ինչպես նաև սննդամբերքներ Միջազգետքից, Դայաստանից և շրջակա տարածքներից: Այնուհետև, կա Եփրատը, որը կարող է մեզ բերել այն ամենը, ինչ Սիրիան, առ-Ռաքքան և նրան հարակից երկրները կառաջարկեն մեզ»:

Այսպիսով, նոր մայրաքաղաքի ընտրությունը կապված էր նրա հարմար ռազմական և ստրատեգիական դիրքի, տրամադրությաին կարևոր հանգույց և խաչմերուկ լինելու, ինչպես նաև առևտրատնտեսական գործոնի հետ:

Բաղդադը կառուցվեց չորս տարվա ընթացքում, որի վրա ալ-Մանսուրը ծախսեց իր ժամանակի համար մի առասպելական գումար՝ 4 միլիոն 833 հազար դիրհամ: Կառուցվեցին հոյակերտ պալատներ, քաղաքացիական այլ շենքեր, մզկիթներ, շուկաներ և այլն: Նա իր չորս դարպասներով կապված էր խալիֆայության բոլոր շրջանների և աշխարհի չորս կողմերի հետ:

Քաղաքի կառուցման աշխատանքներում ներգրավված էին ավելի քան 100 հազար շինարար բանվորներ, արհեստավորներ, ճարտարապետներ Սիրիայից, Միջագետքից և հեռու ու մոտիկ այլ երկրներից: Շատ շինանյութեր բերվեցին Սասանյանների ավերակ դարձած մայրաքաղաք Տիգրոնից:

Նրա կենտրոնում այսպես կոչված Կլոր քաղաքն էր՝ ալ-Մուղավ-վարան, կրկնակի հաստ պատերով: Այստեղ կառուցվեց խալիֆա ալ-Մանսուրի պալատը: Նրանից ոչ հեռու կառուցվեց զիսավոր մզկիրը: Այս կառուցվեց ևս երկու արքայական պալատ: Մեկը խալիֆան անվանեց Կասր ալ-Խուլզ, Անմահության պալատ, իր սքանչելի պարտեզներով, որոնք միտում ունեին մրցել դրախտի այգիների հետ: Իսկ մյուս պալատը, որն անվանվեց ալ-Ռուսաֆահ, ալ-Մանսուրը կառուցեց հատուկ իր որդու, թագաժառանգ ալ-Մահմեդի համար:


Բաղդադն այնքան արագ էր կառուցապատվում, որ շուտով նա տարածվեց Տիգրիս գետի նաև մյուս ափի: Արած թափով աճում էր նաև նրա բնակչությունը: Այստեղ արաբների կողքին ապրում էին նաև պարսիկները, հրեաները, միջինասիացիները, հայերը, քրդերը, հույները և այլ ազգությունների և կրոնների ներկայացուցիչներ:

Բարյագը շատ շուտով մեծ հօշակ ծեռք բերեց և միջազգային լայն ճանաչում ստացավ, դառնալով իր ժամանակի ազդեցիկ միջազգային քաղաքական կենտրոններից մեկը:

Նա դարձավ նաև գիտության և մշակույթի կենտրոն, գիտունների, փիլիսոփանների, բանաստեղծների, երաժիշտների հավաքատեղի: Նա փառաբանվել է տարբեր ազգերի և ժողովուրդների բանաստեղծների կողմից, միջնադարյան անզուգական ասքերում. ինչպես «Յազար ու մի գիշերը» և այլն: Նրան անդրադարձել են անգամ այն ժամանակ, երբ վաղուց խանքել էր նրա փառքը: Եվ ոչ միայն արաբները, այլև հարեւան ժողովուրդների ներկայացուցիչները: Դրա ամենավառ վկայություններից մեկն է հայ հանճարեղ բանաստեղծ Ավետիք Խահակյանի «Արու Լալա Մահարի» պոեմը, որտեղ անգերազանցելի վարպետությամբ է տրված «խալիֆանների մայրաքաղաք Բաղդադի» սքանչելի պատկերը:

Բաղդադն իր նշանակությամբ և դերակատարումով դասվում է Առաջավոր Ասիայի կամ Մերձավոր և Միջին Արևելքի այնպիսի մայրաքաղաքների կողքին, ինչպես Տիգրոնը, Բաբելոնը, Նինվեն և շատ ուրիշներ: Սակայն այսօր նրանք կամ խապար անհետացել են կամ էլ նրանցից մնացել են միայն խղճուկ ավերակներ:

Mapa de la superficie del suelo en el distrito de Chimbote



Բաղդադն այդ մայրաքաղաքներից, բացի այլ հատկանիշներից, տարրերվում է իր հարատևությամբ: Թեև հետագայում, XIX դ. խալիֆայության վերջնական կործանումից հետո, նա կորցրեց իր երթեմնի միջազգային դերակատարությունը, սակայն երբեք չանհետացավ քաղաքական ասպարեզից և պատմության բնմից: Նա դարերի ընթացքում կարողացել է պահպանել քաղաքական կենտրոնի իր նշանակությունը, դառնալով Օսմանյան կայսրության համանուն վիլայեթի կենտրոն, ապա Իրաքի քաղաքական կենտրոն անգլիական մանդատի տիրապետության տարիներին: Եվ, վերջապես, նա մայրաքաղաքի իր կարգավիճակը կրկին վերահաստատեց XX դ. Իրաքի անկախ պետության առաջցումից հետո, դառնալով երթեմնի Աբրասյան լայնածավալ խալիֆայության մի բեկորի՝ Իրաքի մայրաքաղաքը:

Այսպիսով, Աբու Զաֆար ալ-Մանսուրը պատմության մեջ նույն է որպես Աբրասյան դինաստիայի իրական հիմնադիր:

Ծիշտ է, առաջին խալիֆան եղել է Աբու ալ-Աբբասը և նա, որպես առաջին խալիֆա, ծնականորեն մնում է Աբրասյան խալիֆայության հիմնադիր, սակայն ալ-Մանսուրը փաստորեն եղավ այն խալիֆան, որը, իրոք վերջնականապես հաստատեց Աբրասյան խալիֆայությունը: Նրա օրոք լուծվեց նաև նոր դինաստիայի ամրապնդման և նրա իշխանությունն Արաբական խալիֆայության հիմնական նահանգների վրա տարածելու խնդիրը:

Նրա պատմական ծառայություններից մեկն էլ նոր մայրաքաղաքի՝ Բաղդադի, միջնադարի կարևոր քաղաքական, տնտեսական և գիտական-մշակութային կենտրոններից մեկի հիմնումն է:

Նա ունի մեկ այլ ծառայություն ևս, կապված գահաժառանգության սկզբունքի և ավանդույթի հետ: Մուսուլմանական պետական իրավունքը, ինչպես արդեն նշել ենք, չի ընդունումը գահն ըստ ժառանգության, իորից որդուն կամ եղրորը և այլն, ժառանգելու օրենքը: Դա առիթ է տվել տվյալ դինաստիայի ներսում նշտական երկպառակությունների և գահի բազմաթիվ հավակնորդների հանդես գալու համար: Դրանից մեծապես տուժում էր Օմայյան դինաստիան, որտեղ ամեն մի խալիֆայի մահից հետո սկսվում էր անգիտում պայքար գահի հավակնորդների միջև:

Աբրասյանները նույնպես բախվեցին այդ դժվարության հետ: Ուստի ալ-Մանսուրը, զգտելով գահը փոխանցել իր որդուն, փորձեց հաստատել գահաժառանգության նոր սկզբունքն առ այն, որ խալիֆայի գահը պետք է մեկը մյուսին անցնի միայն հաշիմյան տոհմի շրջանակնե-

րում և այն էլ ալ-Աբբասի սերունդներից: Ղեկավարվելով այդ սկզբունքով, նրան հաջողվեց ստիհել մուսուլմանական աստվածարան ուշենքներին, ինչպես նաև Աբբասյան ընտանիքի ազդեցիկ անդամներին, հավատարմության երդում տալ իր որդուն, ալ-Մահմետին, որպես իրեն հաջորդող ապագա խալիֆայի:

Սակայն, հավանաբար, ալ-Մանսուրը այնքան էլ վստահ չի եղել տրված երդմանը, ուստի այն գաղտնի է պահեվել, նպատակ ունենալով կանխել հաշիմյան տոհմի այլ հավանական թեկնածուների ժամանակից շուտ պայքարի մեջ մտնելու հավանականությունը:

Խալիֆա ալ-Մանսուրը վախճանվեց 775 թ. հոկտեմբերի 7-ին, վարսուն տարեկան հասակում, սակայն ոչ իր հիմնած Բաղդադում, այլ Մեքքայի մոտ, հաջի՝ ուխտագնացության ժամանակ:

Հատ հետաքրքիր ձևով է կատարվել նրա թաղումը, որի լուսաբանությունը, կարծում ենք, կարող է լուս սփռել խալիֆայությունում, նրա վերնախավում տիրող բարքերի, սովորությունների և այն վախի մասին, թե ինչ կարող է պատահել մարդու հետ նրա մահից հետո:

Ալ-Մանսուրի թաղումը տեղի է ունեցել Մեքքայում: Այդ նպատակով փորձել է 100 գերեզման: Բայց խալիֆան չի թաղվել դրանցից և ոչ մեկում: Դա արվել է ապակողմնորոշելու համար: Նա թաղվել է մեկ այլ, ուրիշ գերեզմանում, որը հայտնի չէ: Դա արվել է այն նպատակով, որ նրա բազում թշնամիները երթեք չկարողանան գտնել նրա թաղման ծիշտ վայրը, բացեն գերեզմանը և պղծեն այն: Իսկ որ դա հնարավոր էր, կասկած չեր հարուցում: Դիշենք թեկուզ, թե ինչպիսի բարբարոսությամբ վարվեցին առաջին Աբբասյանները տապալված Օմայյան խալիֆաների գերեզմանների հետ, ծաղրուծանակի ենթարկելով և սրբապղծելով նրանց շիրմները:

Ուրեմն ստացվում է, որ որոշ խալիֆաներ նախընտրել են կորչել անհայտության մեջ, առանց հավակնության որևէ հուշարձանի, քան թե մահվանից հետո ենթարկվել վայրագ փորձության:

## II. ՊԵՏԱԿԱՆ-ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

### 1. Աքքասյան դինաստիայի դիրքերի հետագա ամրապնդումը

Ալ-Մանսուրին 775 թ. հաջորդեց նրա որդին՝ ալ-Մահրին, որի գահակալությունը տևեց մինչև 785 թ.: Նա ստացել էր իր ժամանակի համար լավ դաստիարակություն և կրթություն, շնորհիվ իր պարսկի դաստիարակի: Աքքասյան խալիֆայության կառավարման սկզբնական շրջանում չափազանց մեծ էր պարսկների դերը խալիֆայության կառավարման համակարգում, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:

Ալ-Մահրին շարունակեց իր նախորդների քաղաքականությունը դինաստիայի, իշխանության և պետության հետագա ամրապնդման ուղղությամբ:

Այդ նպատակով նա փորձեց նոր հիմնավորում տալ խալիֆայության գահի նկատմամբ Աքքասյանների իրավունքին: Այդ հարցն առաջացավ այն կապակցությամբ, որ շիա-ալիականներն առաջ քաշեցին և փորձեցին հիմնավորել նոր տեսադրույթ իմամության կամ իմամաթի վերաբերյալ, որը գտնում էր, որ Ալիի յուրաքնյուր հետևորդ իրավունք ունի հավակնել խալիֆայության գահին և դառնալ իմամ-խալիֆա, եթե նա ունի մեծ ծառայություններ նույնության կամ այլ համարական համար: Ըստ որում հատուկ ընդգծվում էր իմամ-խալիֆայի ընտրվելու և ոչ թե ժառանգարար այն ստանալու պարագան:

Դա վկայում էր այն մասին, որ վեճերը խալիֆայության ներսում խալիֆաների օրինական լինելու, իրավունքի, գահին բազմելու սկզբունքային հարցերի վերաբերյալ լուծված չէին, համենայն դեպք բոլորի կողմից ընդունելի ծնով:

Ալ-Մահրին հասկացավ, թե ինչպիսի վտանգ է ներկայացնում իր և իր հաջորդների համար ալիականների նոր տեսադրույթը: Եվ նա փորձեց շիաների տեսադրույթին հակառակ լիր տեսադրույթը: Մինչ այդ, Աքքասյանները խալիֆայական գահի նկատմամբ իրենց հավակնությունները հիմնավորում էին հենվելով այսպես կոչված Աբու Ջաշիմի կտակի վրա, որը, իբր, նրանց տալիս էր խալիֆայության իրավունք: Բայց հիմա պարզ էր դառնում, որ Ալիի հետևորդները նույնպես կարող էին օգտվել այդ կտակով տրվող իրավունքներից, քանի որ Ալին, Սուլամ-մադ մարգարեի հորեղբորորդին, նույն Ջաշիմի տոհմից էր, ինչպես Աբ-

քասյանները: Ուստի ալ-Մահդին առաջ քաշեց այն տեսադրութը, որ այդ իրավունքը կարող է տարածվել միայն Մուհամմադ մարգարեի մյուս հորեղբօր՝ ալ-Աբբասի ժառանգորդների վրա, քանի որ Ժամանակին հենց Մուհամմադ մարգարեն է իր ալ-Աբբաս հորեղբօրը ճանաչել ուղղափառ մուսուլմանների գլխավոր:

Այս հարցը շատ նորին հարց էր, որը շոշափում էր ոչ միայն զահակալության, այլև սուննի-շիա հիմնավորոց և հիվանդագին հարաբերությունները: Իր նոր քայլով ալ-Մահդին, անշուշտ, վերացրեց սուննիների մտավախությունը խալիֆայական գահը շիաներին անցնելու հնարավորության վերաբերյալ, որն անընդունելի էր նրանց համար: Դրանով իսկ, նա շահեց սուննիների աքակցությունը և ամրապնդեց իր դիրքերը:

Բայց, մյուս կողմից, ալ-Մահդին լավ էր հասկանում, որ իր նոր տեսադրութը փակում է ամեն մի հնարավորություն շիա-ալիհականների առջև երբնից խալիֆայական գահը խաղաղ և օրինական ճանապարհով գրավելու վերաբերյալ: Իսկ դա, բնականարար, պետք է խոր դժգոհություն առաջացներ շիաների մեջ և ուժեղացներ նրանց հակաաբբասյան տրամադրությունները: Ուստի նա դիմեց մի շարք քայլերի լարվածությունը մեղմացնելու և իր դեմ ուղղված հնարավոր ելույթները կանխելու ուղղությամբ: Դրանց մեջ ամենակարևորը իր՝ հոր՝ խալիֆա ալ-Մահդիի, դեմ Ալիի Հասան որդու ծոռներ Մուհամմադ և Իբրահիմ իրն Արդալլահ եղբայրների 762-763 թթ. բարձրացրած ապստամբության մասնակիցներին ներում շնորհելու էր: Դա զգալիորեն մեղմացրեց առաջացած լարվածությունը:

Ալ-Մահդիի այդ շատ նորին և լավ հաշվարկած քայլը կանխեց նոր ռազմական բախտումները շիաների և սուննիների միջև, ինչպես նաև հակաաբբասյան նոր ելույթները:

Դրան հակառակ, խիստ անհանգիստ էր դրությունը խալիֆայության արևելյան շրջաններում, մանավանդ Միջին Ասիայում, որտեղ մեկը մյուսին էին հաջորդում ժողովրդական զանգվածալին ելույթները: Դրանց մեջ առանձնանում է 776 թ. Մերվում բռնկված ապստամբությունը, որը գլխավորում էր Յաշիմ իրն Յաքիմը: Նա իրեն ներկայացնում էր որպես Աբու Մուսլիմի փոխանորդ: Յաշիմն ավելի շատ հայտնի է ալ-Մուկաննա անվանումով, որը նշանակում է «փակված ծածկոցով». քանի որ նա իր երեսը մշտապես փակում էր կանաչ գույնի կտորով: Նրա կողմնակիցները ալ-Մուկաննայի երեսը փակելու սովորությունը բացատրում էին նրանով, որ նա դրանով իր կողմնակիցներին խնայում է

անտանելի փայլից, իսկ նրա հակառակորդները գտնում էին, որ դրանով նա թաքցնում է իր երեսի այլանդակությունը:

Ալ-Մուկաննան աչքի էր ընկնում իր խոր ատելությամբ հանդեպ Արքայանները և լայնորեն օգտագործում Արու Մուսլիմի սպանության կապակցությամբ արևելյան շրջաններում, Իրանում և Սավարաննահրում, Արքայանների դեմ կուտակված խոր ատելությունը:

Նա հանդիսանում էր Աստծո մարդկանց մեջ անընդմեջ կերպարանափոխության տեսության զերմ ջատագով, ըստ որի, Աստված սկզբում կերպարանափոխվել է Աղամից մինչև Մուհամմադ եղած մարզարեների, իսկ ապա նաև առանձին անձանց մեջ, որոնց հատուկ առաքելություն ունեն:

Այս տեսությունը, որն իրենից ներկայացնում էր զրադաշտական, մաներեական և քրիստոնեական ուսմունքների մի խառնուրդ, բավականին լայն տարածում էր գտել այդ շրջանում խալիֆայության, հատկապես նրա արևելյան տարածքներում:

Ալ-Մուկաննան մի առիթով Սերվում իր շուրջը հավաքելով մարդկանց մի խմբի, ասում է նրանց. «Ես ձեր աստվածն եմ և ամբողջ աշխարհի աստվածը: Ես ինձ ինչպես ցանկանամ, այնպես ել կկոչեմ: Ես նա եմ, որ ժողովրոհին հայտնվել է Աղամի տեսքով, իսկ հետո Նոյի տեսքով, իսկ հետո Արքահամի տեսքով, իսկ հետո Մովսեսի տեսքով, հետո Շինուսի տեսքով, հետո Մուհամմադի տեսքով, հետո Արու Մուսլիմի տեսքով, Վերջապես, այն տեսքով, ինչպես որ դուք այժմ ինձ տեսնում եք»:

Նա բավականին մեծ աշխատանք ծավալեց խալիֆայության բնակչության, հատկապես գյուղացիության շրջանում այս ուսմունքը տարածելու և իրեն որպես Աստծո կերպարանափոխվածության մարմնացում ներկայացնելու ուղղությամբ: Եվ պետք է նշել, որ դա զգայիրեն բարձրացրեց նրա հեղինակությունը, մանավանդ Սերվում, Թեշում, Նահշերում և այլ վայրերում:

Ալ-Մուկաննայի ապստամբությունը տևեց մի քանի տարի, նրա գլխավոր կենտրոններն էին Սերվը, Սողոցը, Բուխարան և այլն: Ամբողջ գյուղեր հավատափոխ լինելով, ընդունում էին ալ-Մուկաննայի ուսմունքը: Բայց, ի վերջո, ալ-Մահդիին հաջողվեց այն ճնշել 783 թ., իսկ ալ-Մուկաննան ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին:

Խալիֆա ալ-Մահդին մահացավ 785 թ.: Նա ուներ երկու արու զավակ, Մուսա ալ-Շաղին, որը Զուրջանի կառավարիչն էր, և Ջարուն առ-Ռաշիդը, որ Դայաստանի և Աղվանքի կառավարիչն էր: Ալ-Մահդին

շատ մտահոգ էր, որ իր մահվանից հետո կարող է գահի հաճար արյունալի պայքար սկսվել. եթե ինքը չկարողանա կարգավորել գահաժառանգության խնդիրը:

Սկզբնական շրջանում նա հակված է եղել խալիֆայի գահը թողնել իր ավագ որդում՝ ալ-Շատիին, բայց հետագայում, հավանաբար կասկածելով նրա կարողությունների վրա, փոխում է իր մտադրությունը: Ուստի նա ճանապարհ է ընկնում Զուրջան, նպատակ ունենալով հանդիպել ալ-Շատիին և ինչ-որ ծնով փորձել համոզել նրան հրաժարվել գահից հօգուտ իր եղբայր Ջարուն առ-Ռաշիդի: Սակայն նրան չի հաջողվում իրականացնել իր մտադրությունը, քանի որ ճանապարհին, Զուրջան չհասած, մահանում է:

Դոր մահից հետո խալիֆայության գահին անմիջապես նստում է ալ-Շատին, որը կառավարում է շատ կարծ ժամանակ. 785–786 թվականներին: Նրա կրտսեր եղբայրը, Ջարուն առ-Ռաշիդը, խոհեմություն դրսնորելով, առերես չի վիճարկում ավագ եղբոր իրավունքները և նրան ճանաչում է խալիֆա, հայտնելով իր հպատակությունը:

Բայց պայքարը եղբայրների միջև չի դադարում: Նա ավելի է սրվում, երբ սկսվում են լուրեր շրջել, թե ալ-Շատին նախապատրաստվում է սպանել իր եղբորը և այդ ծնով վերացնել ասպարեզից իր մրցակցին և գահի գլխավոր հավակնորդին: Խալիֆայությունը կրկին կանգնած էր եղբայրասպանության և ներքին երկպառակության առջև, որը կարող էր թուլացնել Աքքասյան դինաստիայի և խալիֆայության դիրքերը:

Սակայն դեպքերի զարգացումն այլ ընթացք ստացավ: Գործին միջամտեց նրանց մայրը՝ Ջայզուրանը, որը մեծ կամքի տեր և իր որդիների վրա մեծ ազդեցություն ունեցող կին էր:

Նա ալ-Մահդիի հարճն էր, որին որպես ստրկուի գնել կեն շուկայում ստրկավաճառից: Ջայզուրանը, սակայն, շնորհիվ իր գեղեցկության, խելքի, խորամանկության և նրաին վարվեցողության շահել էր խալիֆայի սիրոց և արքունիքում նվաճել անառարկելի հեղինակություն: Նրա հրամանները և ցանկությունները կատարվում էին անվերապահորեն:

Մայրը որոշեց վերջ տալ եղբայրների միջև պայքարին և պահպանել խալիֆայության ներքին կայունությունը և խաղաղությունը: Բայց նա դա իրագործեց շատ յուրահատուկ ծնով, որը չի տեղափորվում «մայրություն» հասկացողության մեջ: Ջայզուրանը, ինչ-ինչ պատճառներով, նախապատվությունը տալով իր կրտսեր որդուն, Ջարուն

առ-Ռաշիդին, 786 թ. թունավորեց ավագ որդուն՝ ալ-Ջաղիջին (որոշ տեղեկությունների համաձայն նրան մոր իրամանով խօղրամահ են արել նրա ստրկուհիները):

Դրանից հետո սկսվում է Ջարուն առ-Ռաշիդի կառավարման շրջանը, որն ընդգրկում է 786–809 թթ.:

Աբբասյան առաջին իինգ խալիֆաների՝ Աբու ալ-Աբբասի, ալ-Մանսուրի, ալ-Մահիջի, ալ-Ջաղիջի և Ջարուն առ-Ռաշիդի կառավարման տարիները, որն ընդգրկում է մոտ 60–ամյա մի ժամանակաշրջան, Աբբասյան խալիֆայության վերելքի տարիներն են եղել: Նա հասավ իր հզորության և փառքի գագաթին Ջարուն առ-Ռաշիդի օրոք:

Ջարուն առ-Ռաշիդը շարունակեց իր նախորդների քաղաքականությունը Աբբասյան ղինաստիայի ղիոքերի պահպանման և ուժեղացման ուղղությամբ: Նա այդ քաղաքականությունն իրականացնում էր թե զենքի օգնությամբ, և թե խորանանկությամբ: Ու նենգությամբ:

Նրա անվան շուրջը ստեղծվել են առասպելներ, որպես իմաստուն և ժողովորի հոգսերով մտահոգ քագավորի: Դրանց մեջ կենտրոնական թեման առասպելն է այն մասին, որ Ջարուն առ-Ռաշիդը, իրու թե հասարակ արարի շորեր հագած ման էր գալիս Բաղդադի փողոցներով և քաղերով, ծանոթանում ժողովրդի ծամր վիճակին, իմանում կառավարողների կամայականությունների մասին, և համապատասխան քայլերի դիմում նրանց վիճակը բարելավելու և արդարություն հաստատելու համար:

Առասպելի ստեղծմանը նպաստել է նաև արքունիքում տեղ գտած և խալիֆայի նյութական և բարոյական հովանավորությունը վայելող բանաստեղծների, երաժիշտների և մտավորականության այլ ներկայացուցիչների ստվար բանակը, որը գրադարձ էր նրա անծի, խնձը, իմաստնության, ճաշակի, առատածեռնության անզուսպ գովերգությամբ և փառաբանությամբ, իսկ նրա նայրագաղաք Բաղդադը հոչակել էին աշխարհում իր ննանը չունեցող քաղաք:

Սակայն մասնագետ-պատմաբանների ուսումնասիրությունները վաղուց են ապացուցել, որ այդ բոլոր գեղեցիկ հեքիաթ է և իրականության հետ ոչ մի ընդհանուր բան չունի: Այդուհանդերձ, առասպելը շարունակում է փոխանցվել մի սերնդից մյուսին:

Իրականում Ջարուն առ-Ռաշիդը եղել է մի դաժան կառավարող, որի ժամանակ ավելացան հարկերը և խստացան նրանց գանձումը կայսրության ժողովուրդներից: Ժամանակակիցների վկայությամբ, նրա օրոց հարկատու խավերից բռնագանձված մեծաքանակ ուսկին և արծա-

թը, բնամթերքը և այլն, հեղեղի նման հոսում էին Բաղդադ, խալիֆայի տնօրինության տակ: Արջունիքը վեր էր ածվել մշտական խնջույքների և վայելքների մի կենտրոնատեղի:

Դարստությունը կենտրոնացված էր Դարուն առ-Ռաշիդի և նրա մերձավորագույն խորհրդականների ծեռքում: Դրանց մեջ աչքի էր ընկնում և նրա մայրը, Ջայզուրանը, որի տարեկան եկամուտը հասնում էր 160 միլիոն դիրհենի, որը ժամանակի համար մի վիթխարի գումար էր: Շույլությունը, անհմաստ նվիրատվությունները սովորական երևույթ էին Դարուն առ-Ռաշիդի արքունիքում: Խնճույքներից նեկի ժամանակ, Դարուն առ-Ռաշիդը շատ հավանելով երգիշներին, նրանց է նվիրում պետական գանձարանում տվյալ պահին գտնվող ամբողջ գումարը՝ 6 միլիոն դիրհեն: Նման նվիրատվությունները եզակի չեն:

Դրա հետ միասին, նա, անշուշտ, աչքարող չէր անում իր իշխանությունն ամրապնդելու և իր դեմ հնարավոր մարտահրավերները կանխելու հարցերը: Այդ նպատակով նա, թերևս, առաջին Աբբասյան խալիֆան էր, որ մեծ ուշադրություն դարձրեց մուսուլման հոգևոր առաջնորդների աջակցությունը և քաղաքական օժանդակությունը շահելուն: Նրանք խալիֆայից ստացան մեծ հոդաբաժններ, կալվածքներ և դրամական նվիրատվություններ: Ծարունակելով իր այլ գիծը, խալիֆան իր արքունիքում մեծ տեղ հատկացրեց աստվածաբան-ուլեմներին:

Ի դիմաց խալիֆայի նման բարեհած դիրքորոշման, մուսուլման հոգևոր առաջնորդները և ուլեմներն ամեն կերպ աջակցում էին Դարուն առ-Ռաշիդին ամրապնդելու իր իշխանությունը և Աբբասյան դինաստիայի տիրապետությունը խալիֆայության ամբողջ տարածքում: Եվ խալիֆան, ի դեմս մուսուլման հոգևորականության, կարողացավ ընդլայնել իր սոցիալական հենարանց:

Դարուն առ-Ռաշիդի քաղաքականության մյուս կարևոր գծերից մեկն էլ այն էր, որ նա ջանում էր զգույշ քաղաքականություն վարել շիաների նկատմամբ, չգրգռել նրանց, փոքր հարցերում ընդառաջներ և բավարարել նրանց պահանջները:

Բայց, այդուհանդեռծ, խալիֆայի ծեռնարկած քայլերը չկանխեցին և չեն էլ կարող կանխել ժողովրդական հուզումները: Դրանց հիմնական պատճառն անընդհատ անող հարկերն էին և դրանց գանձման դաժան մեթոդները: Այդ հոդի վրա ըմբռոտանում էին գյուղացիները, քաղաքի արիեստավորները և ընդհանրապես խալիֆայության աղքատ խավերը:

798 թ. ապստամբեցին Սիստանի գյուղացիությունը և արհեստավորությունը Դանզա իրն Աքրակի գլխավորությամբ: Ապստամբությունը ճնշելու համար ուղարկված խալիֆայի գործերը պարտություն կրեցին և ժամանակավորապես նահանգեցին: Աքրակի առաջին և ամենակարևոր քայլն եղավ այն, որ նա ընդիանրապես դադարեցրեց հարկերի գանձումը Սիստանի մուսուլման բնակչությունից: Սակայն այդ որոշումը չէր տարածվում ոչ մուսուլման բնակչության վրա, որը, բնականաբար, թուլացնում էր ապստամբների շարքերը: Խալիֆայական գործերին, ի վերջո, հաջողվեց ճնշել այդ ապստամբությունը:

Սակայն Դարուն առ-Ռաշիդի համար ավելի մեծ սպառնալիք էր 806 թ. Խորասանում քանկված ապստամբությունը, որը գլխավորում էր արաբական գորակամանատար Ռաֆի իրն Լայսը: Նա այդ տարածաշրջանի երթեմնի կառավարիչ Նասր իրն Սայյարի թոռն էր: Դարուն առ-Ռաշիդը, որ տեղյակ էր տեղի բնակչության դժգոհության մասին և ցանկանալով կանխել հնարավոր ելույթները, դեռևս 805 թ. այցելել էր Սավարաննահիր: Բայց այդ այցը դրական արդյունքներ չտվեց: 806 թ. Ռաֆի իրն Լայսը, այն բանից հետո, երբ նրան հաջողվեց իր հրամանատարության ներքո հավաքել տեղի պարսիկ և թուրք բնակչության գգալի զանգվածներ, քաղծրացրեց ապաստամբության դրոշը, որի կողիզը կազմում էին գյուղացիները և արհեստավորները իրենց սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու պահանջներով: Ապստամբների թիվը հասնում էր 100 հազարի:

Դարուն առ-Ռաշիդը նրանց դեմ ուղարկեց 20 հազարանոց մի գորախումբ, որը սակայն պարտություն կրեց: Ապստամբները 808 թ. գրավեցին Սամարղանդը, որը մեծ հաջողություն էր նրանց համար:

Սամարղանդի անկումը մեծ կորուստ էր խալիֆայության համար, որը կարող էր նպաստել ապստամբության հետագա ծավալմանը և նրա շարքերի համալրմանը նորանոր ուժերով: Այդ բանը լավ էր հասկանում Դարուն առ-Ռաշիդը: Ուստի նա որոշեց անձամբ դեկավարել ապստամբությունը ճնշելու գործողությունները: Խալիֆան մի մեծ բանակի գլուխ անցած շարժվեց ապստամբների դեմ: Սակայն ճանապարհին նա հիվանդացավ թուսում և հենց այստեղ էլ մահացավ 809 թ.:

## 2. Փոփոխություններ և նորամուծություններ խալիֆայության հայեցակարգում և պրակտիկայում

Աբբասյանների տիրապետության ժամանակաշրջանում տեղի ունեցան մի ամբողջ շարք կարևոր փոփոխություններ, այդ թվում և սկզբունքային բնույթի: Օմայյան խալիֆայությունից ժառանգելով որոշակի համակարգ, Աբբասյաններն, այնուամենայնիվ, մտցրեցին տարարնույթ փոփոխություններ, որոնք պայմանավորված էին նոր իրողություններով և բխում էին նրանց դինաստիական շահերից և ժամանակի ոգուց:

Օմայյաններին, ինչպես արդեն նշվել է, մուսուլմանական ավագանին և աստվածաբան—ուլեմները մեղադրում էին, որ նրանք պետական կարգի և նրա բնույթի հարցում հեռացել էին Մուհամմադ մարգարեի և առաջին ուղղափառ խալիֆաների կողմից հաստատված սկզբունքներից և խալիֆայությունն աստվածաբետությունից վերածել աշխարհիկ պետության: Նրանք Օմայյան վերջին խալիֆաներին անզամ մեղադրում էին անստվածության մեջ: Դա շատ ծանր մեղադրանք էր, որն իր դերը խաղաց Օմայյան խալիֆայության բացասական կերպարի ստեղծման, իսկ ապա նաև կործանման գործում:

Գալուկ իշխանության, Աբբասյանները հաշվի առան այդ հանգամանքը և առաջին օրվանից շեշտում էին հավատարմությունը մարգարեի հաստատած սկզբունքներին և ընդգծում իրենց խալիֆայության աստվածաբետությունը լինելու պարագան: Մասնավորապես ընդգծվում էր խալիֆայության կրոնական բնույթը: Խալիֆաներն ամեն մի առիթ օգտագործում էին հայտարարելու իրենց հավատարմությունը Մուհամմադ մարգարեի կողմից հոչակված և ալ-Կորանում ամրագրված աստվածաբետության սկզբունքներին:

Այս նոր մոտեցման արդյունք պետք է համարել խալիֆաների կողմից մուսուլման հոգևորականության նկատմամբ ցուցաբերած նյութական հոգատարությունը, մանավանդ Ջարուն առ-Ռաշիդի ժամանակ. երբ մուսուլման հոգևոր առաջնորդներն օժտվեցին հողային կալվածքներով:

Դրա արտահայտությունն էր նաև այն հանգամանքը, որ խալիֆաները իրենց շրջապատել էին մուսուլման աստվածաբան—ուլեմներով, որոնք պատվավոր տեղեր էին գրավում խալիֆայական արքունիքում:

Աստվածաբետությանը նվիրված և հավատարիմ լինելու հարցում Աբբասյաններն այնքան հեռու գնացին, որ փաստորեն փոփոխու-

թյան ենթարկեցին անգամ խալիֆաների վերաբերյալ բանաձևը, որ հաստատվել էր Մուհամմադ մարգարեին հաջորդած առաջին խալիֆա Աբու Բաքրի և նրա հետնորդների կողմից: Ըստ այդ բանաձևի, խալիֆան հանարվում էր մարգարեի փոխանորդ՝ «խալիֆա ռասուլ Ալլահ»:

Սակայն Աբբասյան խալիֆաների օրոք, մասնավորապես Մութաքարի խալիֆայից սկսած (847–861 թթ.), խալիֆաների անունն սկսվեց ուղղակիորեն կապվել Ալլահի անվան հետ: Նրանց սկսեցին կոչել «խալիֆա Ալլահ», այսինքն «Աստծո փոխանորդ»: Բայց կարծես թե սա ել բավական չէր, նրանց սկսեցին կոչել «Զիջ Ալլահ ալլա ալ-արդ», որը նշանակում է «Աստծո ստվերը Երկրի վրա»: Եվ Աբբասյան խալիֆաները մինչև վերջ, մինչև իրենց անկումը, որ տեղի ունեցավ 1258 թ. կրուն էին այդ տիտղոսը:

Այս հանգամանքը կարևոր դեր էր խաղում Աբբասյանների հեղինակության բարձրացնան և դիրքերի անրապնդան գործում ոչ միայն ամբողջ խալիֆայության տարածքում, այլև ամբողջ մուսուլմանական աշխարհում:

Աբբասյանների ժամանակ հստակություն մտցվեց նաև մի այնպիսի կարևոր հարցում, ինչպես իշխանության աղբյուրի հարցն է: Աբբասյան քարոզչությունը, ուշեմաները և Աբբասյան այլ գաղափարախոսներ անառարկելիորեն ընդգծում էին, որ իշխանության աղբյուրը, կամ, ինչպես իրենք էին նախընտրում կոչել, շատրվանը, քաղաքական, իրավական, ռազմական և հոգևոր–կրոնական իշխանությունների միակ աղբյուրը խալիֆան է: Եվ քանի որ խալիֆայի անունն ուղղակիորեն առնչվում էր Ալլահի հետ և նա հանարվում էր նրա փոխանորդը և ստվերը Երկրի վրա, ապա այդ աղբյուրը տրամաբանորեն դառնում էր աստվածային ծագում ունեցող երևույթ: Իսկ դրանից, իր հերթին, բխում էր, որ խալիֆայի դեմ ուղղված ամեն տեսակի ելույթներ և ընդգումներ անօրինական էին և ոչ աստվածահաճութեան:

Աբբասյանների օրոք, ինչպես արդեն նշվել է, խալիֆայության քաղաքական կենտրոնը Միրիայից տեղափոխվեց Միջագետք, Երաք: Սակայն սխալ կլիմեր դա դիտել սուկ աշխարհագրական տեղաշարժ: Նա ուներ խորքային դրդապատճառներ, որոնցից կարևորները երկուսն էին:

Առաջին, տեղաշարժը կապված էր արաբական իրականությանը բնորոշ միջցեղային հակամարտության և դիմակայության հետ, որոնք հաճախ վերածվում էին արյունալի բախումների: Աբբասյանները գենետիկորեն պատկանում էին արաբական հյուսիսային ցեղախմբին, որի

կենտրոններից էր Սիցագետք-Իրաքը, մինչդեռ Սիրիան հանդիսանում էր արաբական հարավային ցեղախմբի կենտրոններից մեկը: Տեղափոխվելով Իրաք և այստեղ հիմնելով Բաղդադը որպես խալիֆայության մայրաքաղաք, Աբբասյանները ոչ միայն ապահով միջավայր էին տեղաշրջում, այլև բացեիքաց հայտարարում, որ իրենց հենվում են իրենց հարազատ հյուսիսային ցեղախմբի վրա:

Դրանով Աբբասյանները գգալիրեն ամրապնդեցին իրենց սոցիալական հենարանը և իշխանությունը:

Եկրորդ, Սիրիան իրենց ախոյան Օմայյանների քաղաքական կենտրոնը և հենակետն էր: ճիշտ է, Օմայյանների տիրապետության վերջին տարիններին հարաբերությունները նրանց և սիրիացինների միջև միշտ չեր, որ հարթ էին, բայց, այդուհանդերձ, Սիրիան մնում էր Օմայյանների հենակետը:

Տապալելով Օմայյան դինաստիան, Աբբասյանները, բնականաբար, չին կարող Սիրիան դիտարկել իրենց համար հուսալի և ապահով տարածք: Նրանք դա լավ էին հասկանում և պատահականություն չեր, որ Աբրու ալ-Աբբասը իր խալիֆա հռչակվելու անքողջ ծիսակատարությունը կատարեց իրաքյան Կուֆա քաղաքում:

Ուրեմն այդ բոլորից կարելի է եզրակացնել, որ Աբբասյանների ժամանակ խալիֆայության կենտրոնի տեղափոխումը Սիրիայից Իրաք իրագործվել է ոչ թե պատահականորեն կամ քնահաճորեն, այլ գիտակցարար, քաղաքական նկատառումներից ելնելով, որի հիմքում ընկած էին ցեղային-գենետիկական պատկանելիության, սոցիալական հուսալի հենարանի և ապահովության առանցքային դրդապատճառները:

Աբբասյանների ժամանակ տեղի ունեցավ մի կարևոր փոփոխություն ևս, կապված նրանց սոցիալ-համայնքային կողմնորոշման հետ: Դաղթանակ տանելով տարատեսակ ուժերի նկատմամբ, այդ բվում և շիանների, նրանք որոշեցին, որ հասել է ժամը կողմնորոշվելու ոչ թե կոնկրետ այս կամ այն սոցիալական խավը, այլ ջամաան, այսինքն ամբողջ մուսուլմանական համայնքը, համենայն դեպք նրա բացարձակ մեծամասնությունը կազմող սուննիները: Զամաայի մեջ, անկասկած, մտնում էին նաև շիանները, որոնք Աբբասյանների հետ համագործակցելու ցանկության դեպքում, ըստ նոր մոտեցման, կարող էին ստանալ այդ հնարավորությունը:

Զանաայի սկզբունքը, որ հռչակեց խալիֆա ալ-Մանսուրը, հենարավորություն էր տալիս նրան իր կողմը գրավել սուննի մեծամասնությունը:

թյանը, որը կազմում էր նաև ընդհանրապես մուսուլմանների մեծամասնությունը: Ալ-Մանսուրի այդ հեռատես և լավ հաշվարկված քայլով, շիաները դրվեցին երկրնտրանքի առջև: Նրանք որպես ջամաայի, մուսուլմանական համայնքի անդամ, կամ պետք է ընդունեին Աբբասյանների օրինական, լեզիտիմ լինելու և այդ հողի վրա համագործակցեին նրանց հետ. կամ էլ մերժելով դա, իրենց հակադրեին ամբողջ ջամաային, մեկուսացվեին և գրկվեին մուսուլմանական այլ խմբավորությունների աջակցությունից: Շիաները գնացին երկրորդ ճանապարհով և իրենց դրեցին ծանր դրության մեջ, ավելի կոնկրետ, նրանք փաստորեն մեկուսացվեցին մուսուլմանական ջամաայից, մանավանդ Աբբասյանների դեմ մղվող պայքարում:

Դրա փոխարեն, ալ-Մանսուրը կարողացավ նվաճել սուննիների համակրանքը և աջակցությունը: Դեռ ավելին, նա հնարավորություն ստացավ իրեն ներկայացնել որպես ամբողջ մուսուլմանական ջամաա-համայնքի ներկայացուցիչ, որն, անշուշտ, Աբբասյանների նոր քաղաքականության կարևոր նվաճումներից նեկան էր:

Աբբասյանների տիրապետության շրջանում, մասնավորապես առաջին հիսունամյակում, տեղի ունեցավ սկզբունքային բնույթի մի կարևոր փոփոխություն ևս: Դա պարսիկների դերի աննախառեա մեծանալը էր խալիֆայության ներսում: Նրանք խալիֆաների բույլտվությամբ և հովանավորությամբ գրավեցին շատ կարևոր դիրքեր խալիֆայության պետական, քաղաքական, տնտեսական, կրոնական, ռազմական և մշակութային համակարգում:

Սասանյան Պարսկաստանի կառավարական համակարգը, պալտական նիստուկացը և արարողակարգը դարձան իդեալ Աբբասյան խալիֆաների համար, որոնք այդ ոգով համապատասխան փոփոխություններ մտցրին խալիֆայության մեջ: Նրանք պարսկական շահերի նման սկսեցին կառուցել շքեղ պալատներ, աստիճանաբար հրաժարվելով բեղմինական պարզունակ, ոչ հավակնութ ապրելածնից, անճնատուր եղան պերճանքին և ցոփությանը, շատ կողմերով անգամ գերազանցելով Սասանյան ինքնակալներին:

Չափազանց մեծացավ պարսկական ֆեոդալական արիստոկրատիայի դերը խալիֆայության պետական կառավարման համակարգում: Նրանց ներկայացուցիչները գրադեցնում էին ամենակարևոր պետական քարծր պաշտոնները:

Նրանց մեջ առանձնանում էր Բարմաքիների ընտանիքը, որը մոտ կես դար առաջնակարգ դերակատարում ունեցավ Արբայան խալիֆայության կառավարման գործում: Նրանց վերելքը սկսվեց խալիֆա Արու ալ-Արբասի, ապա ալ-Մանսուրի ժամանակ և իր հզորության գագարնակետին հասավ Դարուն առ-Ռաշիդի օրոք: Արբայան առաջին երկու խալիֆաները երախտապարտ էին նրանց այն օգնության համար, որ նրանց ցուցաբերել էին Արբայաններին Օմայյաների տապալման և իշխանության գալու համար:

Արբայաններին օգնության ծեղզ մեկնաժ առաջին Բարմաքը խալիդ իբն Բարմաքը էր, որի հայրը բուդյայական պագողայի՝ տաճարի քուրը էր (բարմակ կամ պարմակ նշանակում է հոգևորական, քուրը): Տաճարը կործանվել էր արաբների կողմից Խորասանը գրավելու ժամանակ և Բարմաքները տեղափոխվել էին Բասրա, որտեղ և ընդունել էին իսլամ, դառնալով մավալի:

Ալ-Մանսուրը ի հատուցումն Բարմաքիների իրենց ցուցաբերած օգնության, խալիդ իբն Բարմաքին նշանակում է Ֆարսի և Թաքարստանի կառավարիչ:

Խալիդի մահից հետո Բարմաքիների ընտանիքը գլխավորում է նրա որդին՝ Յահյա իբն Խալիդը, որին Դարուն առ-Ռաշիդը նշանակում է խալիֆայության ամենակարևոր նահանգներից մեկի, Արսեյան շրջանների կառավարիչ, որը սովորաբար խալիֆայությունում համարվում էր շատ կարևոր պաշտոն: Խալիֆաները սովորաբար Արսեյան շրջանների կառավարիչ նշանակում էին իրենց հավատարիմ և նվիրված մարդկանց:

Բարմաքիների ընտանիքի գլխավոր Յահյա իբն Խալիդը շուտով գրավում է ավելի բարձր պաշտոն: Դարուն առ-Ռաշիդը նրան նշանակում է վագիր և փաստորեն նրան վստահում երկրի կառավարումը: Պետական ոչ մի կարևոր քայլ չեղ կատարվում առանց նրա գիտության և հավանության: Դարուն առ-Ռաշիդը, որը նրան հայր էր անվանում, նրան էր վստահել անգամ իր անծնական կնիքը, որը չլսված բան էր: Յահյայի լայն լիազորությունների մասին է Վկայում նաև այն փաստը, որ նա էր ընդունում և լսում նրանց, ովքեր բողոքներ ունեին և դժգոհ էին ինչ-որ հարցերում: Սովորաբար դա խալիֆաների առանձնաշնորհն էր: Բացի այդ նա ակտիվ մասնակցություն ուներ լայնածավալ խալիֆայության տարբեր շրջանների տեղական կառավարիչներին՝ կուսակալնե-

որին նշանակելու և ազատ արձակելու գործում: Փաստորեն Յահյա Բար-մաքին խալիֆայի ոչ թե սովորական խորհրդատուն էր, այլ աջ ծեռը:

Կարևոր պաշտոններ էին գրավել և նշանակալի դերակատարում ունեին նաև Յահյա իրն Խալիֆի երկու որդիները՝ Ֆադլը և Զաֆարը:

Անուրանակի է Բարմաքիների և կառավարման մյուս օղակներում բարձր պաշտոններ գրաված այլ պարսիկ բարձրաստիճան պաշտոնյաների դերը Խալիֆայության կայացման, բարգավաճնան և պետական շինարարության բնագավառում:

Պարսիկները հմուտ էին ոչ միայն պետության կառավարման, այլև տնտեսական, անգամ ռազմական մարզերում: Նրանց թիվը զգալիորեն աճեց նաև բանակում, որի շարքերում նրանք ծառայում էին: Դեռ ավելին, Խալիֆայական թիկնապահ գորախումբը սկզբնական շրջանում կազմված էր, եթե ոչ բացառապես, ապա գլխավորապես խորասանցիներից:

Պարսիկ պետական պաշտոնյաների, զինվորականների, առևտրականների և ընդհանրապես պարսկական տարրի դերի աճման հետևանքով թուլացան արաբական տոհմիկ արիստոկրատիայի դիրքերը Խալիֆայության բոլոր օղակներում:

Յօգուտ պարսկական տարրի տեղի ունեցած փոփոխությունները հիմք են Խանդիսացել առաջ քաշելու այն տեսակետը, որ Խալիֆայությունը Արբասյանների ժամանակ կորցրել էր իր արաբական բնույթը կամ այդ բնույթը գույտ ծնական էր դարձել, և Խալիֆայությունը վերածվել էր հանախանական պետության՝ պարսկական որոշակի երանգով:

Այդ տեսակետն առավել ընդգծված ծևով է դրսնորպել արաբ պատմաբան Ֆիլիպ Շիթիի մոտ: Նրա կարծիքով այն բանից հետո, եթե պարսիկները գրավեցին գլխավոր պաշտոնները կառավարության մեջ, իսկ Խալիֆայական թիկնապահ գորախումբը դարձավ Խորասանի պարսիկների գորագունդը. «Արաբական տոհմիկ արիստոկրատիան փոխարինվեց պաշտոնյաների աստիճանակարգով, որոնք ներկայացնում էին Խալիֆայությունում բնակվող ռասաների ամբողջ գամման: Մուսուլմանները և օտարերկրյա նոր հավատափոխները (այսինքն իւլամը նոր ընդունածները — և. Դ.), սկսեցին սերտաճել և տարրալուծվել մեկը մյուսի մեջ: Արաբիզմն ընկավ, բայց Խալամը շարունակվեց և միջազգային Խալամի դեկավարության ներքո Իրանիզմը հաղթականորեն մտավ ներս»:

Այս տեսակետի մեջ, անշուշտ, կա ճշմարտության հատիկ: Պարսկական տարրը, իրոք, առաջին պլան էր Եկեղ և ստանձնել կարևոր ղերակատարում խալիֆայության պետական կյանքի համարյա բոլոր ոլորտներում: Սակայն արդյո՞ք դա այն աստծանի էր, որ իինք տար պնդելու արաբականության անկաման, խալիֆայության արաբական բնույթի կորսույան և, ըստ եւրեյան, հանահսլամական պետության վերածնան, պարսկական ընդգծված բնույթով: Կարծում ենք, որ այստեղ ակնհայտ է չափազանցությունը, քանի որ խալիֆայությունը, այդուհանդերձ, դեռևս շարունակում էր մնալ Արաբական:

Պարսկական տարրի առաջնակարգ ղերակատարումը դժկամությամբ էր ընդունվում արաբների, հատկապես ցեղային, տոհմիկ արիստոկրատիայի կողմից: Այդ հողի վրա խուլ դժգոհություն էր կուտակվել, որը պատեհ առիթի ղեպքում կարող էր պայթել և վտանգավոր հետևանքներ ունենալ խալիֆաների համար: Բացի դրանից, Բարմաքիները սկսեցին իրենց ինքնուրույն խաղը խաղալ Պարսկաստանում, որին նրանք, որպես պարաիկներ, մի առանձին հանակրանքով և գործանքով էին վերաբերվում, իսկ առանձին ղեպքերում ավելի մեղմ, քան թե խալիֆայության մյուս, ոչ պարսկական շրջաններին:

Այս բոլորը մտահոգում էր Զարուն առ-Ռաշիդին, որը տագնապով էր հետևում Բարմաքիների հզորացմանը: Նրա մեջ վախ էր առաջացնում նաև այն պարագան, որ մի ընտանիքի ծեռքում այդքան մեծ իշխանություն էր կենտրոնացված: Եվ նա որոշեց վերջ դնել այդ ամենին:

803 թ. Զարուն առ-Ռաշիդի հրամանով Յահյա իբն Խալիդը և նրա նաող որդին ծերբակալվեցին և բանտ նետվեցին, որտեղ երկուսն էլ մահացան: Իսկ Յահյայի մյուս որդին, Զաֆարը, որը Զարուն առ-Ռաշիդի կաթներբայրն էր և այդ պահին հանդիսանում էր նրա խորհրդականը, գլխատվեց: Նրա մարմնից անջատված գլուխը ցուցադրվեց Բաղրամի մի կամքջի վրա, իսկ երկու մասի բաժանված մարմինը Բաղրամի երկու այլ կամուրջների վրա:

Զարուն առ-Ռաշիդի այդ քայլով, որը շատերի համար անսպասելի էր, արմատախիլ արվեց Բարմաքիների ընտանիքը, որը միաժամանակ ծանր հարված էր պարսկականությանը Աբբասյան խալիֆայությունում:

Աբբասյան խալիֆայության կառավարման շրջանում, հատկապես սկսած խալիֆա Մամունի (833–842 թթ.) գահակալության տարիներից, ակտիվացավ, ապա բարձրացավ նաև մեկ այլ ոչ արաբական էր-

նիկական տարրի՝ թուրքերի դերը: Դա կապված էր առաջին հերթին խալիֆայական թուրքական գվարդիայի ծևավորման հետ:

Ինչպես հայտնվեցին նրանք խալիֆայական գվարդիայում:

Դրանք հիմնականում գերի թուրքեր էին, որոնց գերևարում էին խալիֆայական կուսակալները Անու Դարյայի և Սիր Դարյայի սահմանամերձ շրջաններում մղվող պատերազմների ժամանակ: Գերի ընկած թուրքերին անմիջապես ստրկացնում և վաճառում էին տարբեր շուկաներում, մասնավորապես Միջին Ասիայի և սահմանամերձ Երանի: Ահա այս գերիների մի մասը հայտնվեց խալիֆաների գվարդիայում: Դա բացատրվում է նրանով, որ գերևարված թուրքերը հնագանդորեն էին կատարում բոլոր իրամանները և աչքի էին ընկնում իրենց դաժանությամբ:

Նրանք դրսից բերված էին և ոչ մի կապ չունեին տեղական բնակչության հետ, հետևաբար խալիֆաների իրամանները կատարելիս նրանց կաշկանդող որևէ հանգամանք գոյություն չուներ: Տեղական բնակչության մեջ արմատներ չունեցող թուրքերը պատրաստ էին ամենայն դաժանությամբ արյան մեջ խեղիթ հակախալիֆայական ելությունները: Այս պարագան շատ վճռորոշ դեր խաղաց խալիֆայական գվարդիան թուրքերով կազմավորելու խնդրում:

Խալիֆաների հարաբերությունները պարբերաբար լարվում էին Բաղդադի բնակչների հետ, նույնիսկ այն աստիճանի, որ անվտանգության նկատառումներով նրանք երեմն հեռանում էին մայրաքաղաքից: Այդպես վարվեց, օրինակ, խալիֆա Սամունը, որը սարսափած բաղդադիցիների դժգոհությունից, հեռացավ Բաղդադից և հաստավեց Սամարրայում: Այստեղ նա իր պալատից ոչ հեռու կառուցեց նոր գորանոցներ, որտեղ տեղափորեց իր թուրքական գվարդիան: Այսպիսով, թուրք գվարդիականները դառան կլու հնագանդ, սակայն դաժան գործիք խալիֆաների ծեռցում:

Ահա այս ճանապարհով Բաղդադում սկսեց աստիճանաբար կուտակվել թուրքական երնիկական տարրը, որը այնքան հզորացավ, որ գորանոցներից դուրս գալով, արդեն միջանտում էր խալիֆայության ներքին գործերին:

ճակատագրի հեգնանքով խալիֆաներն իրենք խաղալիք դարձան թուրքական գվարդիայի և նրա թուրք գորահրամանատարների ծեռցում: Այս վերջիններս այնքան հզորացան, որ կարողանում էին տապալել իրենց համար անցանկալի խալիֆաներին, անգամ սպանել

նրանց, և գահի վրա նստեցնել իրենց ծեռնտու, թուլամորթ և կամագուլուկ Աբբասյաններից որևէ մեկին:

### **III. ՊԵՏԱԿԱՆ-ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ: ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Աբբասյանները Օմայյաններից ժառանգեցին պետական-կառավարական որոշակի համակարգ, որը գործել էր մոտ 90 տարի: Արդեն Օմայյանները զգում էին, որ այդ համակարգը հստակ չի գործում և չի ապահովում պետական մեքենայի անխափան գործունեությունը, մանավանդ իշխանության խիստ կենտրոնացման և հսկայածավալ կայսրության ներդաշնակ կառավարման ապահովման առումով: Սակայն նշտական երկպառակություններն Օմայյան ընտանիքում, գահի վրա խալիֆաների արագընթաց փոփոխությունները, ինչպես նաև ավելի շատ աշխարհիկ կյանքի հաճույքներին, քան թե երկրի կառավարմանը ժամանակ հատկացնելը և ուշադրություն դարձնելը, նրանց հնարավորություն չտվեց դիմել գործնական քայլերի:

Աբբասյանների առջև կանգնեց կառավարման համակարգում լուրջ փոփոխություններ նշցնելու խնդիրը, կանգ չառնելով անգամ նորամուծությունների անհրաժեշտության առջև:

Իհարկե, սրանից չպետք է եզրակացնել, թե Աբբասյանները իրաժարվեցին այն ամենից, ինչ ստեղծել էին Օմայյանները, և ամեն ինչ փոխարինեցին նորերով: Նրանք դեռ նետեցին միայն այն, ինչն այլևս չեր ծառայում իշխանության ամրապնդմանը և խալիֆայության կառավարման բարելավմանը: Ելնելով այդ հիմնախնդիրից, նրանք մի շարք ինստիտուտներ պահպանեցին, սակայն դրանք բարեփոխեցին, նրանց ֆունկցիաները կատարելագործեցին և հարստացրին նոր բովանդակությամբ, իսկ մի շարք ինստիտուտներ էլ բոլորովին նոր ստեղծեցին:

#### **1. ԽԱԼԻՖԱ**

Աբբասյանների, ինչպես և Օմայյանների ժամանակ, պետության գույքը համարվում էր խալիֆան: Սակայն Աբբասյանների օրոք ավելի էր ընդգծվում խալիֆայության աստվածապետություն լինելու պարագան: Նա իրենից ներկայացնում էր միջնադարին բնորոշ ֆեոդալական շահը:

աստվածապետական ինքնակալություն: Խալիֆայի իրավունքները և լիազորությունները ոչնչով չեն սահմանափակված:

Աբբասյան խալիֆաներն առաջին օրվանից ընդգծում էին իրենց իշխանության և խալիֆայության կրոնական բնույթը, այն դիտարկելով որպես մի իմանա՞՝ իմանություն: Դենց այս հանգամանքը հետագայում հիմք հանդիսացավ, որ Աբբասյան խալիֆաները, ի տարբերություն Օմայյանների, կոչվեն ոչ թե Ալլահի առաքյալ Սուհամմադի փոխանորդ-խալիֆա, այլ ուղղակի Ալլահի խալիֆա, իսկ ապա նաև Ալլահի ստվերը երկրի վրա:

Աբբասյան խալիֆաները, ըստ սուննիական պետական իրավունքի դրույթների, մարմնավորում էին և աշխարհիկ և հոգևոր իշխանությունը, նրա բոլոր ճյուղերը: Խալիֆան հանդիսանում էր իշխանության միակ աղբյուրը, սրբագրծված Կորանով և շարիաթով:

Նա լինելով իշխանության բոլոր չորս ճյուղերի՝ քաղաքական, դատական, ուսումնական և հոգևոր, մարմնավորող, կարող էր դրանց իրականացնելը, բացառությամբ հոգևոր-կրոնականի, փոխանցել-լիազորել կամ հանձնարարել, իր ընտրությամբ, համապատասխան բարձրաստիճան պաշտոնյայի: Աբբասյան խալիֆաներն աստիճանաբար քաղաքացիական իշխանության իրագործումը հանձնարարեցին վազիրին, դատականը՝ կատիին և ուսումնականը՝ ամիրին: Սակայն դա չէր նշանակում, որ իշխանությունն անցավ նրանց ծեռօքը, այլ լոկ դրա կատարումը, իրագործումը, քանի որ խալիֆան իր ծեռօքում էր պահում ամբողջ իշխանությունը, նրան էր պատկանում վերջին խոսքը և նա էր միակ գերազուն իրավաբարարը:

Իսկ ինչ վերաբերում է հոգևոր իշխանությանը, ապա այս հարցում խալիֆաները ոչ մի նորամուծության չփիմեցին, նրանք իրենց լիազորությունն այս բնագավառում չփոխանցեցին որևէ մեկին, այլ անբողջությամբ պահեցին իրենց ծեռօքում:

Աբբասյան խալիֆաները, ի տարբերություն Օմայյանների, չափազանց նեծ ուշադրություն էին դարձնում իշխանության կենտրոնացմանը և խալիֆայության տարբեր շրջանների վրա հսկողության ուժեղացմանը: Նրանք սկսեցին նրանից, որ սահմանափակեցին տեղական կառավարիչների և գորահրամանատարների իրավունքներն ու պարտականությունները, և ուժեղացրին նրանց կախվածությունը կենտրոնական իշխանությունից:

Եթե Օմայյանների ժամանակ տեղական կառավարիչները փաստորեն ինքնուրույն եին և տեր ու տնօրեն իրենց իշխանության ներքո գտնվող կուսակալություններում, ապա Աբբասյանները դրան վերջ տվեցին, հասնելով նրանց լիակատար ենթակայությանը խաղաղ ճանապարհով, իսկ ի հարկին նաև գենքի միջոցով։ Դրա շնորհիվ, հատկապես առաջին Աբբասյան խալիֆանների ժամանակ, անրապնդվեց ուղղածից իշխանությունը և նվաճվեց իշխանության կենտրոնացման նոր, ավելի բարձր մակարդակ։

Իշխանության կենտրոնացմանը միտված քաղաքականությունն անհնար էր իրականացնել և հասնել դրական արդյունքների առանց կառավարող նոր դասի՝ բյուրոկրատական խավի ծնավորման, որն ընդհանրապես մինչ այդ որպես այդպիսին բացակայում էր խալիֆայության կառավարման համակարգում։

Իշխանության կենտրոնացման և վերահսկողության պահանջից կյանքի կոչվեց ասյաթս կոչված «քաթիբների» ազդեցիկ դասը։ «Քաթիբ» արաբերեն նշանակում է գրող, սակայն այս դեպքում դա ծեռք բերեց նաև նոր՝ քարտուղարի իմաստ։ Նրանք նստած էին հատուկ ատյաններում և նարմիններում, որոնք կոչվում էին դիվաններ, և խստագույնս ամեն ինչ հաշվի էին առնում և վերահսկում ամբողջ խալիֆայության տարածքում և այդ մասին տեղյակ պահում խալիֆային կամ նրա խորհրդականներին։ Խալիֆան քաթիբներին սահմանափակ չափով փոխանցեց գործադիր իշխանությունը, նրանց, սակայն, պահելով խիստ հսկողության տակ։

Բյուրոկրատական ապարատի և դասի ծնավորումը մեծապես նպաստեց կենտրոնածիգ իշխանության ուժեղացմանը Աբբասյան խալիֆայությունում։

Քաթիբների մեծ մասը համարվեց մավալներից, այսինքն համեմատաբար նոր դավանափոխ եղած և իսլամ ընդունած խավերից, որոնց մեծամասնությունը կազմում էին իրանցիներ։ Դա բացատրվում է երկու հանգանքով։

Առաջին, Աբբասյան խալիֆանների համար պետական կառավարման տիպար էր հանդիսանում Սասանյան Պարսկաստանը, որն ուներ խիստ կենտրոնացված կառավարման համակարգ և փորձառու ու գրագետ բյուրոկրատահան։ Եվ նրանք շատ բան վերցրեցին Սասանյան պետական բյուրոկրատական մեքենայից։ Այդ պատճառով էլ Աբբասյան խալիֆաններն իրենց բյուրոկրատական ապարատը ստեղծելիս նախա-

պատվությունը տվեցին պարսիկներին, որոնք հմուտ էին վարչական կառավարման մարզում:

Երկրորդ, մավալները, չնայած այն հանգամանքին, որ մուսուլման էին համարվում, այդուհանդերձ, նրանք լավ էին հասկանում, որ իշխանական բարձր ոլորտները և շատ այլ ասպարեզներ նրանց մատչելի չեին և նրանք չեին կարող առանձին հավակնություններ ունենալ և պոտենցիալ վտանգ ներկայացնել խալիֆաների իշխանությանը: Այս հանգամանքը նկատի առնելով, խալիֆաները դռները լայնորեն բացեցին ծագումով պարսիկ մավալի գրագիրների, քարտուղարների և այլ կարգի միջին կարգի պաշտոնյաների առօս:

Եվ աետը է ընդունել, որ նրանք իրենց դրական դերը խաղացին նոր տիպի, կենտրոնացված պետական-վարչական ապարատի ստեղծման գործում Աբբասյան խալիֆայության կազմավորման և գոյության առաջին տարիներին:

Աբբասյանները Սասանյան կառավարման համակարգից ներմուծեցին նաև սենեկապետի՝ հաջիբի պաշտոնը: Նրա պարտականությունների մեջ նտում էր մեծապատիկ մարդկանց, օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաներին ու հյուրերին խալիֆային ներկայացնելը, նախօրոք նրա մասին և նրա առաքելության վերաբերյալ խալիֆային համապատասխան տեղեկություններ հաղորդելը և նրա համաձայնությունը ստանալը: Քանի որ սենեկապետն անընդհատ խալիֆայի կողքին էր և նաև պաշտոնական ընդունելություններին, ապա նա աստիճանաբար մեծ ազդեցություն ծեռք բերեց խալիֆայի վրա և արքունիքում, դառնալով կարևոր դեմքերից մեկը:

Աբբասյանները Սասանյան պետական պրակտիկայից ներմուծեցին նաև դահճի պաշտոնը, որն մինչ այդ անհայտ էր արարական իրականությանը, և որն ի կատար էր ածում Բաղրամի դատարանի որոշումները. ինչպես նաև աստղագուշակի պաշտոնը, որի ծառայություններից և կանխագուշակումներից սկսեցին լայնորեն օգտվել խալիֆաները:

## 2. Վագիր

Աբբասյան խալիֆայության կառավարման համակարգում կարևոր նորամուծություններից մեկը վագիրների ինստիտուտի հաստատումն էր:

Իր նախասկզբնական իմաստով վազիր տերմինը օգտագործվում էր որպես խալիֆայի օգնական, իսկ մեր օրերում նա համարժեք է եվոպական մինիստր հասկացողությանը:

Աբբասյան խալիֆայության ժամանակ ծևավորվեցին վարչական զանագան մարմիններ, գլխավորապես դիվաններ, որոնց ժամանակակից տերմինուգիայով կարելի է բնութագրել որպես գերատեսչություններ կամ մինիստրություններ: Առաջին խալիֆաների ժամանակ կառավարման ֆունկցիաները հստակ բաժանված չէին և դեռ չեր ծևավորվել բյուրոկրատական աստիճանավորների խավը: Այդ պատճառով էլ այդ մարմինները, համենայն դեպք նրանցից ամենակարևորները, դեկավարությունը կամ իրենք խալիֆաները: Սակայն հետագայում, նրանց զարգացմանը և գործառույթների բարդացմանը զուգահեռ, խալիֆաներն սկսեցին աստճանաբար նրանց դեկավարությունը հանձնել իրենց զանագան օգնականներին կամ խորհրդականներին: Նրանց մեջ առանձնացավ և արքունիքում հատուկ, կարելի է ասել անհասանելի դիրք գրավեց վազիրը, որպես խալիֆայի գլխավոր օգնական:

Օնայյանների ժամանակ վազիրների ինստիտուտ գոյություն չուներ: Խալիֆա ալ-Մանսուրը, որը Սասանյան Պարսկաստանի պետական համակարգի երկրպագուն էր, առաջինն ինքը մտցրեց վազիրի պաշտոնը:

Իհարկե, վազիրները միանգամից չհասան շատ բարձր դիրքի պետական կառավարման համակարգում: Սկզբնական շրջանում, օրինակ, ալ-Մանսուրը և ալ-Մահդի խալիֆաների ժամանակ, վազիրները նրանց անձնական քարտուղարներն էին: Նրանք երեք գլխավոր պարտականություն ունեին. իրականացնում էին խալիֆայի նամակագրությունը, այդ պատճառով էլ նրանք պարտադիր կերպով պետք է գրագետ լինեին, ուստի և մեծ նաև նշանակվում էին քաթիրների շարքերից, պետք է հետևեին խալիֆայի գույքին և ունեցվածքին, և, որ շատ կարսոր է, նրանց վրա էր դրվում թագաժառանգին դաստիարակելու և կոթելու պատասխանատու պարտականությունը: Այս վերջին հանգանքը մեծապես նպաստեց վազիրների դիրքերի ամրապնդմանը և հեղինակության աճին Աբբասյան արքունիքում: Նրանք առանձնացան խալիֆայի այլ օգնականներից և խորհրդատուններից:

Աստիճանաբար վազիրների լիազորությունները և իշխանությունը մեծանում է և նրանք դառնում են խալիֆաների գլխավոր օգնականը: Նրա խնդիրների մեջ մտնում է նաև և առաջ խալիֆային խորհուրդ-

Ներ տալը պետական առանց բացառության բոլոր հարցերի գծով: Եվ նրա քաղաքական, իսկ երբեմն նաև անծնական ճակատագիրը կախված էր այն բանից, թե որքանով էր նրան հաջողվուն կատարել իր այդ պարտականությունը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ խալիֆաները որպես կանոն լինում էին կասկածամիտ և քնահաճ բնավորության տեր մարդիկ: Խալիֆայի անծնական վստահությունը վազիրի նկատմամբ առանցքային խնդիր էր:

Այնուհետև վազիրի իշխանությունն այնքան է մեծանում, որ նա գլխավորում է ֆինանսական գործը, որը խալիֆայության համար ուներ արտակարգ նշանակություն, դառնում խալիֆայի լիազոր ներկայացուցիչը դատական համակարգում, այլ կերպ ասած նա փաստորեն գլխավորում է ամբողջ դատական համականքը, մասնակցում տեղական կառավարիչների նշանակմանը և ազատմանը, իսկ հաճախ նաև ինքն է նրանց նշանակում և ազատում այդ բարձր պաշտոններից, բավարարվելով այդ մասին խալիֆային տեղյակ պահելով:

Վազիրներին են խալիֆաները վստահում իրենց, որ նույնն է թե, պետական կնիքը: Թե դա ինչ է նշանակում, ասենք, որ այդ ժամանակ ընդունված չէր խալիֆայի անունից արծակված հրամանների և կարգադրությունների կամ պաշտոնական փաստաթղթերի տակ ոմնել նրա անծնական ստորագրությունը: Բավական էր միայն դրանք կնքել: Վազիրն ինքն էր ուղղակի կնքում այդ փաստաթղթերը, առանց անզամ նախօրոք համաձայնեցնելու դա խալիֆայի հետ: Դիարկե, հետո վազիրն իր խալիֆային տեղյակ էր պահում իր կողմից կնքված հրովարտակների, հրամանների և պաշտոնական այլ փաստաթղթերի մասին:

Վազիրներն ըստ եռթյան օժտված էին անսահմանափակ իշխանությամբ: Նրանց իշխանությունը միակ սահմանափակողը և նրանցից բարձր կանգնածը խալիֆան էր:

Վազիրը մի կարևոր պարտականություն էլ ուներ: Նա պետք է խալիֆային գրադեցներ հետաքրքիր գրույցներով և պատմություններով, մասնակցեր նրա կողմից կազմակերպվող հանդիսություններին, խրախնդանքներին ու այլ վայելքներին, միշտ փայլատակեր իր իմաստուն խորհուրդներով, սրամնություններով և այլն:

Ամենայն հավանականությանը վազիրի այս արտակարգ լիազորություններն ի նկատի ունի Ֆ. Շիբբին, եթե նշում է, որ «Վազիրը գործում էր որպես խալիֆայի alter ego (մյուս եսը — Ն. Գ.)»:

Մեզ է հասել Արքասյան Վերջին խալիֆաներից մեկի, խալիֆա ան-Սասիրի, որը կառավարել է 1180–1225 թթ., իրանան–Վկայագիրը ալ-Քումմին վագիր նշանակելու և նրա լիազորությունների մասին. «Մուհամմադ իրն Բարզ ալ-Քումմին մեր ներկայացուցիչն է ամբողջ երկրում և մեր հպատակների մեջ: Ուստի և նա, ով ենթարկվում է նրան, ենթարկվում է մեզ, իսկ նա, ով ենթարկվում է մեզ, ենթարկվում է Աստծուն և Աստված կկարգադրի նրան, ով ենթարկվում է իրեն, մտնել դրախտ: Իսկ մյուս կողմից, նա, ով չի ենթարկվի մեր վագիրին, նշանակում է նա չի ենթարկվում ինձ, և նա, ով ինձ չի ենթարկվում, նա չի ենթարկվում Աստծուն, և Աստված նրան, ով չի ենթարկվում իրեն, կուղարկի դժոխք»:

Խալիֆայի կողմից վագիրին տրված սույն Վկայագիրը աներկարյորեն հաստատում է վագիրի, իրոք, խալիֆայի մյուս եսը լինելու կարգավիճակը և վկայում նրա արտակարգ լիազորություններով և իշխանությանը օժտված լինելու փաստը:

Վագիրների մեջ մեծ թիվ էին կազմում ծագումով ոչ արաբները, մասնավորապես մավալինները և առաջին հերթին պարսկները: Մենք արդեն նշել ենք, որ մոտ կեսիարյուրամյակ Արքասյան խալիֆայությունում վագիրի պաշտոնը զբաղեցրել են պարսիկ Բարմաթինները: Նարուն առ-Ռաշիդի կողմից նրանց արնատախիլ անելուց հետո էլ վագիրների մեջ թիվ չեն կազմել դարձյալ պարսիկները:

### 3. Դիվան

Պետական մեքենայի կատարելագործությունը և կառավարական գործառույթների բարդացումն անհրաժեշտ էին դարձնում հանարժեք փոփոխություններ կիրառել Արքասյան խալիֆայությունում վարչական–կազմակերպական առումով: Նախկին ոչ հստակ և պարզունակ ծևով կիրառվող կառավարման հանակարգն այլևս սպառել էր իրեն և չեր կարող ապահովել պետական մեքենայի սահուն և անխափան գործունեությունը:

Խալիֆայությունում աշխատանքների կազմակերպման նոր մեթոդների կիրառման արտահայտություն հանդիսացավ դիվանների հիմնումը: Դա կապված էր նաև կառավարման բյուրոկրատական համակարգին անցնելու հետ, որի հիմքը դրեց խալիֆա ալ-Մանսուրը և որն

իր հետագա զարգացումն ստացավ նրան հաջորդած խալիֆաների կառավարման տարիներին:

Դիվանները կենտրոնական մարմիններ կամ գերատեսչություններ էին, ապագա նախարարությունների նախակարապետները, որոնց ստեղծման հիմքում, Վերևից ներքև, դրված էր իշխանական-կառավարական գործառույթների և աշխատանքների մասնագիտական բաժանման սկզբունքը:

Կառավարման նման բյուրոկրատական համակարգ առաջին անգամ էր կիրառվում Արաբական խալիֆայությունում, թեև նրանց առանձին տեսակներ սահմանային վիճակում գոյություն ունեցել են:

Դիվանները տիպարանորեն, ըստ իրենց գործառույթների կարևորության, բաժանվել են երեք խմբի: Առաջին խումը, որը հավաքականորեն կարելի է անվանել գրասենյակային (օֆիսային), ուղղակիորեն առնչվում էր խալիֆայի և արքունիքի իշխանության, նրանց ապահովության խնդիրների հետ: Երկրորդ խումը կազմում էին ֆինանսների, հարկերի և գանձարանի հետ առնչվող դիվանները, իսկ երրորդը՝ հիմնականում բանակի և ռազմական գործի հետ:

Դիվանների սահիբները՝ դեկավարները, մտնում էին խալիֆային կից գոյություն ունեցող խորհրդի մեջ, որի աշխատանքները գլխավորում էր վագիրը կամ ինչպես սկսել էին նրանց կոչել մեծ վագիրը: Վագիրներն էին նախագահում խորհրդի նիստերին:

Դիվանները ոչ բոլորն էին համարժեք իրենց կարևորությամբ և գործառույթների նշանակությամբ: Դրանց մեծ կային առավել կարևորները, որոնց գործունեությունից շատ բանով էր կախված խալիֆայության ներքին կյանքը, կայունությունը, տնտեսական զարգացումը և այլն, և, ընդհակառակը, այնպիսի դիվաններ, որոնք համեմատարար ավելի հանեստ դերակատարում ունեին խալիֆայական վարչա-կառավարական համակարգում:

Դրանց մեծ իր կարևորությամբ առանձնանում էր կապի և փոստի դիվանը՝ դիվան ալ-բարիդ: Այս ծառայությունը գոյություն ուներ նաև Օմայանների ժամանակ, սակայն նա հանդիսանում էր որպես սուրհանդակների ծառայություն: Իսկ Աքբայանների օրոք այն ավելի կատարելագործվեց և վերածվեց առանձին դիվանի:

Նրա խնդիրները շատ բազմազան էին: Այդ ծառայությունն ապահովում էր խալիֆայի թթակցությունը կուսակալությունների կառավարիչների և տեղական գորահրամանատարների հետ: Գլխավոր փոստա-

յին ուղիները մի քանիսն էին. որոնք մայրաքաղաք Բաղրադը կապում էին խալիֆայության տարրեր շրջանների և ծայրամասների հետ: Դրանցից էին Բաղրադը Չինաստանի հետ կապող ուղին, որն անցնում էր Չամադան-ալ-Ռեյ-Նիշապուր-Թուս-Մերվ-Բուխարա-Սամարդանդ երթուղով և դուրս գալիս Չինաստանի սահմանը: Կարևոր ուղիներից էին նաև Բաղրադ-Կուֆա-Բասրա-Մեքքա և Բաղրադ-Տիգրիս գետ-Կասիբ-Բասրա-Ալիքազ-Խուզիստան-Ֆարս երթուղիները և այլն: Այս երթուղիներով խալիֆայությունը դուրս էր գալիս նաև արտաքին աշխարհ:

Փոստային և կապի ծառայությունը տեղերում բավականին լավ էր կազմակերպված: ճանապարհների վրա ստեղծվել էին փոստակայաններ, որտեղ կային պատրաստ սուրհանդակներ, որոնք մեկը մյուսին էին փոխանցում թղթակցությունները և այլ կարևոր լուրեր: Այդ փոստակայաններն ապահովված էին անհրաժեշտ երիվարներով՝ ուղտերով, ծիերով և ավանակներով:

Սակայն թղթակցության ապահովումը դիվան ալ-բարիի միայն մի արտաքին երևացող կողմն էր: Նա կատարում էր ավելի կարևոր պարտականություններ, որը կարելի է ժամանակակից տերմիննալոգիայով բնութագրել որպես վերահսկողական-լրտեսական և հետախուզական: Դիվանի ծառայողների պարտականությունների մեջ էր մտնում գաղտնի վերահսկողությունը նահանգների կառավարիչների և զորահրամանատարների վրա. անհրաժեշտ տեղեկությունների հավաքումը նրանց գործունեության և տրամադրությունների վերաբերյալ:

Նրանց պարտականությունն էր տեղեկություններ հավաքել նաև կուսակալությունների բնակչության տրամադրությունների, նահանգային վարչության գործունեության, հողագործության և արհեստական ոռոգման վիճակի, հարկերի և տուրքերի հավաքման, տեղական կառավարիչների կողմից ոսկյա և արծաթյա դրամների հատման նախին և այլն: Այլ կարևոր խնդրի կատարումն դյուրացնելու նպատակով, դիվանի տեղական ծառայողները ենթարկվում էին ոչ թե նահանգային կառավարիչներին, այլ ուղղակի կենտրոնական կառավարությանը: Տեղական ծառայողները և սուրհանդակները համարվում էին խալիֆաների «աչքերը և ականջները տեղերում»: Նրանց իրավունք էր վերապահված նաև թղթակցությունների և նամակների զաղտնագերծումը, նրանց բացելը, բովանդակության հետ ծանոթանալը և այդտեղից քաղված լուրերը կենտրոն հաղորդելը: Նրանք ամեն օր խալիֆայության նահանգներից և շրջաններից մանրամասն հաղորդագրություն էին փոխանցում

Բաղդադ դիվանի պետին, որը կոչվում էր սահիբ ալ-բարիդ, իսկ վերջինս իր հերթին այդ բոլորի մասին գեկուցում էր վագիրին: Առանձին հարցերի կարևորության դեպքում սահիբ ադ-ալ բարիդն իրավունք ուներ, շրջանցելով վագիրին, անմիջապես գեկուցել խալիֆային:

Հետախուզական նպատակներով օգտագործվում էին ոչ միայն սուրիանդակները, այլև ուխտագնացները, վաճառականները և ճանապարհորդները: Նրանց հատկապես մեծ չափով էին օգտագործում Ալ-Մանսուրը և Դարուն ալ-Ռաշիդը և մյուս խալիֆաները: Մեծ դերակատարում ունեին այդ մարզում նաև կանայք: Խալիֆա ալ-Մանսուր Բաղդադի իր հետախուզական կենտրոնում ուներ 1700 կին հետախուզակներ, որոնք ամենատարբեր և պատասխանատու հանձնարարություններն էին կատարում:

Սուրիանդակների, վաճառականների, քիչկների և այլ մասնագիտությունների քողի տակ թաճնված հետախուզների գործունեությունը չէր սահմանափակվում միայն խալիֆայության սահմաններով: Նրանց գործունեությունը տարածվում էր նաև արտասահմանյան երկրների, առաջին հերթին Բյուզանդական կայսրության վրա, որտեղ գործում էր հետախուզական լավ կազմակերպված ցանց:

IX դ. սկզբներից խալիֆայությունում փոստային ծառայության մեջ սկսվեց աղավնիների օգտագործումը: Առաջին լուրը, որ այդ ուղիով, Սահի Սմբատյանի միջոցով ստացվել է, եղել է ապստամբ Բաքբին ծերբակալելու լուրը, որը պատահել է 837 թ., խալիֆա ալ-Մութասիմի օրոք:

Ահա այդ պատճառով սահիբ ալ-բարիդը կոչվում էր նաև սահիբ ալ-բարիդ վա ալ-ախբար, այսինքն փոստի և հետախուզության ծառայության պետ: Նա շատ կարող դիրք ուներ արքունիքում և համարվում էր խալիֆայության ազդեցիկ պաշտոնյաներից մեկը:

Աբբասյանների ժամանակ ստեղծվեց նաև ոստիկանության դիվան, դիվան ալ-շուրքա, որի պետը՝ սահիբ ալ-շուրքան, միաժամանակ համարվում էր խալիֆայի թիկնապահների պետ: Այս դիվանի պարտականությունների մեջ էր մտնում խալիֆայի կյանքի և անվտանգության ապահովումը, կարգուկանոնի պահպանումը խալիֆայությունում, վերահսկողությունը բնակչության վրա և այլն: Ուստի պատահականություն չէր, որ ոստիկանության դիվանապետն իր նշանակությամբ հավասար էր համարվում վագիրին և, իրոք, հետագայում սկսեց կոչվել վագիր:

Ոստիկանների պարտականությունների մեջ, բացի ներքին կարգուկանոնին հետևելուց, մտնում էր նաև բարոյական նորմերի պահպանելուն հետևելը երկու սեռերի միջև: Նրանք մեծ դերակատարություն ունեին այն վայրերում, որտեղ սովորաբար մեծ անբոլու էր հավաքվում, հատկապես շուկաներում: Նրանք պետք է հետևեին, որ հասարակական վայրերում, շուկաներում գինի չվաճառեն, որն արգելված էր Կորանով, արգելեն թղթախաղը, պատժեն նրանց, ովքեր շուկաներում առքուվաճառքի ժամանակ խախտում էին սահմանված չափն ու կշիռը և այլն:

Ոստիկանության պարտականությունների մեջ մտնում էին նաև այնպիսի խնդիրներ, որոնք այլ կերպ, քան զավեշտական, անհնար է անվանել: Օրինակ, ոստիկանները պետք է հետևեին, որ տարեց և ալեհեր մարդուկ չներկեն իրենց մորութքը սև գույնի, որը ոստիկանության կողմից համարվում էր կանանց դուր գալու և նրանց զայթակղեցնելու միտում, որը հավասարագոր էր անբարոյականության:

Աբբասյան խալիֆայության կառավարման համակարգում առանցքային դիվաններից էր Ֆինանսների դիվանը՝ դիվան ալ-մալ, որը հայտնի է նաև որպես հարկերի դիվան՝ դիվան ալ-խարաջ, անվանումով: Նրա պարտականությունների մեջ էր մտնում տարատեսակ հարկերի, տուրքերի և պետական եկամուտների հավաքումը:

Պետական եկամուտների գլխավոր ադյուրներից մեկը շարունակում էր մնալ հարկերի գանձումը: Դրա մեջ մտնում էր առաջին հերթին հարկի այն տեսակը, որը կոչվում էր զաքա կամ զաքաթ, որը գանձվում էր բոլոր մուտումաններից: Նա զանձվում էր Վարելահողերից, արոտավայրերից, առևտրական ապրանքներից, ուսկուց, արծաթից և սեփականության այլ տեսակներից: Սակայն այս հարկի զանձման մեջ կար մի նրբություն, կապված այն իրողության հետ, որ չկար հարկի արձանագրված կամ սահմանված կոնկրետ չափարարին: Դարկահավաքն ինքը դիտելով վարելահողը, արոտավայրերը և այլն, կարելի է ասել աշքայափուկ սահմանում էր հարկի քանակը: Իսկ ինչ վերաբերում էր մուսուլմանի ծեղը բերած ուսկուց և արծաթին, կամ առևտրական գործունեությունից նրա հարստության և եկամուտների աճին, ապա նրանից վճարվելիք հարկի չափը թողնվում էր նրա տիրոջ խղճին:

Այս հարկն ուներ մի առանձնահատկություն ևս: Նրանից գանձված եկամուտը պետական զանձարանը կարող էր օգտագործել միայն հավատացյալների, մուսուլմանների կարիքները հոգալու նպատակով, ի նաև ավելի աղքատների և որբերի կարիքների, սրբազն պատերազ-

մի կամավոր մասնակիցների, ստրուկների, գերի ընկած մուսուլմանների ազատման համար փրկագին վճարելու և նման այլ նպատակներով:

Այդ հարկից գանձված վիթխարի գումարներն իշխանություններն իրավունք չունեին ծախսել այլ նպատակների, ասենք արքունիքի պահանջների բավարարման, տնտեսական զանազան գործառույթների, ուղղական նպատակների համար և այլն:

Եկամուտների մյուս կարևոր աղբյուրներն էին հարկի երկու մյուս գլխավոր տեսակները, ինչպես հողային հարկը, խարածը, որը զանձվում էր մուսուլմաններից ու այդ հարկի անունով դիվանը կոչվում էր դիվան ալ-խարած, և գլխահարկը, ջիզիան, որ գանձվում էր միայն խալիֆայության ոչ մուսուլմաններից: Այս երկու հարկերը նոր չէին և գոյություն ունեին ու զանձվում էին նաև Օմայանների ժամանակ, որի մասին խոսվել է աշխատության նախորդ մասերում: Արքայաններն այս բնագավառում որևէ նոր բան չներմուծեցին և ամեն ինչ պահպանեցին նույնությամբ:

Խարած և ջիզիա հարկերից ստացվող եկամուտներն անհամեմատ մեծ էին, քան թե զաքարից ստացվող եկամուտները:

Խարածից և ջիզիայից ստացվող եկամուտները խալիֆանները սովորաբար ծախսում էին արքունիքը, քանակը, մզկիթները պահելու ու ազմավարական նշանակություն ունեցող ճանապարհներ և կամուրջներ կառուցելու և, բնականաբար, պատերազմական գործողությունների համար:

Սեծ կարևորություն ունեցող դիվանների շարքում պետք է նշել նաև զինվորական կամ ու ազմական դիվան՝ դիվան ալ-ջունդին: Նա, ինչպես և անունն է հուշում, պատասխանատու էր ու ազմական գործի, քանակի կազմակերպման և մարտունակության քարձրացման համար:

Այլ դիվաններից, թերևս, հիշատակության են արժանի նաև զինարանի, կնիքի, ստուգման և հաշվառման և այլ դիվանները:

Այսպիսով, կարելի է ասել, որ Արքայանների ժամանակ ավելի կատարելազործվեց և արդիականացվեց պետական մեթենան, տեղի ունեցավ իշխանական գործառույթների հստակ քաժանում ու մասնագիտացում, և դրան համապատասխան կազմակերպական վերակառուցումներ ու վարչական-կառավարչական մարմինների ստեղծում: Ինչպիսիք հանդիսացան դիվանները:

#### 4. Զինուժ

Աբրասյան խալիֆայությունում, ինչպես և բոլոր արևելյան քոնակալություններում, բացառիկ դերակատարություն էր վերապահված բանակին, ուազմական ուժերին՝ իր բոլոր տարատեսակներով:

Ուազմական ուժերը հիմնականում կատարում էին երկու պարտականություն, առաջին, ներքին, ժողովրդական, հակակառավարական ելույթները և ապստամբությունները Ճնշելու, և երկրորդ, երկրի պաշտպանություն արտաքին հարձակումներից ու նվաճողական պատերազմական գործողությունների մղում:

Աբրասյան խալիֆաների ժամանակ կարևոր փոփոխություններ կատարվեցին ուազմական ուժերում կառուցվածքային և երնիկական առումով:

Կառուցվածքային առումով ուազմական ուժերը կազմված էին երեք տեսակներից՝ բուն բանակից, խալիֆայության թիկնապահ զորքերից կամ զվարդիայից, և կամավորական զորամիավորումներից:

Ուազմական ուժերի կորիզը կազմում էր կանոնավոր բանակը՝ ջունոր, որը սովորաբար լինում էր լավ զինված և մարտունակ: Արաբական բանակի մարտունակության մասին շատ բարձր կարծիք ունեին բյուզանդական կայսրերը և զորահրամանատարները: Նրանց կարծիքն արժեքավոր է, քանի որ Արաբական խալիֆայության ծևավորումից անմիջապես հետո, նրանք դարեր շարունակ պատերազմներ են մղել միմյանց դեմ, բազմաթիվ հաղթանակներ տարել և պարտություններ կրել:

Աբրասյան խալիֆայությունում պետությունը սովորաբար իր վրա էր վերցնում բանակը միայն սննդամթերզով, իսկ հեծելազորը անասնակերով ապահովելու հոգսը: Ինչ վերաբերում է զենքին և զինվորական հանդերձանքին, ապա պետությունն այդ հարցում որևէ պարտականություն չուներ, քանի որ զինվորն ինքը պետք է իրեն ապահովեր զենքով և համապատասխան զինվորական հագուստով, իսկ եթե նա ծառայում էր հեծելազորում, ապա նաև ծիուզ կամ ուղտով:

Դասկանալի է, որ ամեն որ չէր կարող ծառայել հեծելազորում, որ համարվում էր ավելի հեղինակավոր: Դա իրենց կարող էին թույլ տալ համեմատաբար բարեկեցիկ ապրուստ ունեցողները, հարուստները, խոշոր և միջին հողատերերը, որոնք ի վիճակի էին տրամադրել ծի կամ ուղտ, և ծեռօք բերել համապատասխան զենք ու զրահ:

Բանակը բաժանվում էր երեք գորատեսակների՝ հետևակ՝ հարքի-յահ, հեծելազորի՝ ֆուլսան և նետածիզների՝ ռամիյահ։ Հետևակայինների հիմնական գենքերն էին կարճ նիզակը կամ տեզը, սուրը և վահանը, հեջալներինը՝ սաղավարտը, զրահը, երկար նիզակը և նարտական կացինը, իսկ նետածիզներինը՝ նետն ու աղեղն էր։

Աբբասյան բանակում լայնորեն կիրառվում էին պաշարված քաղաքների գրավման համար անհրաժեշտ բոլոր տեխնիկական միջոցները, մասնավորապես քարանետ սարցեր, բարաններ, աստիճաններ և այլն, որոնք մշտապես ուղեկցում էին բանակին նրա ռազմական արշավանքների ժամանակ։ Ուշագրավ է, որ կային քաղաքների պաշարումը և գրավումը կազմակերպող հատուկ մասնագետներ, որոնց ժամանակակից տերմինալոգիայով կարելի է անվանել ռազմական ինժեներներ։

Բանակում կար նաև թշկական ծառայություն, ի դեմք թշկական ռազմական դաշտային հիվանդանոցների և ամբուլատորիաների, որոնց տեղաշարժերն ապահովում էին ուղտերը։ Այդ նորամուծությունը և ընդհանրապես գիտության նվաճումները ռազմական գործում կիրառելը, սովորաբար կապում են խալիֆա Ջարուն առ-Ռաշիդի անվան և գործունեության հետ։

Բանակն ուներ հետևյալ կառուցվածքային և հրամանատարական ստորաբաժանումը, որը շատ նման էր հռոմեա-բյուզանդականին։

Նա բաժանվում էր տասնյակների, որի հրամանատարն էր առիֆը, հիսնյակների՝ խալիֆայի հրամանատարությամբ, և հարյուրակների, որի հրամանատարն էր կափիդը։ Այս վերջինը համապատասխանում էր հռոմեական կենտուրիոնին։

Բանակն ուներ նաև գնդեր և կորպուսներ։ Մի քանի գնդերի կամ կորպուսների միավորումը կազմում էր կուրուս, որը հռոմեական կոհորտայի համարժեքն էր։ Յուրաքանչյուր 10 հազար գինվորից կազմավորվում էր մեկ կորպուս, որի կազմի մեջ մտնում էին 10 գումարտակ, յուրաքանչյուրը կազմված 1000 մարդուց։ Կորպուսի հրամանատարը կրում էր ամիր ռազմական կոչումը, որը հավասար էր եպոպական գեներալին։

Բանակում շատ լավ էին վճարում, ընդորում, թե՛ մթերքով, թե՛ դրանով։ Դասարակ գինվորին տարեկան վճարում էին 960 դիրիան։ Թե դա ինչ էր իրենից ներկայացնում, նշենք, որ, օրինակ, խալիֆա ալ-Մանսուրը Բաղդադը կառուցելիս շինարար վարպետին վճարել է օրեկան

մեկ դիրհամ կամ տարին 360 դիրհամ. իսկ շինարար բանվորներին օրեկան մեկ երրորդական դիրհամ:

Արքայան ռազմական ուժերի մյուս բաղադրամասը հարասն էր, խալիֆայական թիկնապահ գործը. որը կանոնավոր գորատեսակ էր և միշտ գտնվում էր մարտական բարձր պատրաստականության վիճակում, ու շատ լավ վճարվում: Դա այն գորատեսակն էր, որը հանդիսանում էր խալիֆայի անմիջական հենարանը: Դարասը լրիվ պահպում էր պետական գանձարանի հաշվին:

Եվ, վերջապես, երրորդ գորատեսակը կամավորական գործն էր: Դա վարձու զինվորների համախմբությունն էր, որը հավաքագրվում էր քաղաքի բնակչության աղքատ խավերից, հողագուրկ գյուղացիներից, ինչպես նաև իրենց սոցիալական հենարանը և ապահովածությունը կորորած բեղվիններից: Զիշ չին նրանց մեջ զանազան արկածախնդիրները:

Նրանք որպես վարձու կամավորներ ծառայության մեջ էին մտնում նահանգների կառավարչների մոտ, այսինքն կամավորների գորագունդը գտնվում էր կուսակալների անմիջական տնօրինության տակ և նրանց էր ենթարկվում:

Վարձկան կամավորների հիմնական պարտականությունը սահմանների պաշտպանությունն էր: Իսկ ինչ վերաբերում է նրանց գոյության ապահովման և ծառայության դիմաց նրանց աշխատավարձ վճարելու աղբյուրներին, ապա կամավորականների պահպանման և վճարման երկու աղբյուր կար: Առաջին, նրանց պահպանելու թեոն արողջությամբ ընկնում էր տվյալ նահանգի տեղական բնակչության վրա: Պետական գանձարանից նրանց ֆինանսական ոչ մի հատկացում չէր կատարվում:

Երկրորդ աղբյուրը՝ ռազմական ավարն էր: Ռազմական գործողությունների ժամանակ ծեղոք բերած ամրող ավարը և բալանը նրանք էին տնօրինում: Այստեղից էլ կամավորական այդ ռազմագոկատների արտակարգ ռազմամոլությունը և թալաննելու անսպառ տենչը:

Արքայանների ժամանակ բանակում, ինչպես նշվեց, տեղի ունեցան նաև եթնիկական փոփոխություններ:

Օմայյանների օրոք բանակը հիմնականում կազմավորված էր արաբներից, նրանք էին տիրապետող եթնիկական տարրը: Եթե այդ ժամանակ խնդիրներ կային բանակում, ապա դրանք ոչ թե եթնիկական բնույթի էին, այլ ցեղային պատկանելության: Պայքարը գնում էր այն

հարցի շուրջը, թե որ տոհմացեղային խումբը պետք է տիրապետող լիներ, իյուսիսային՝ կայսիակա՞ն, թե՝ հարավային՝ կալրիական կամ յամանական:

Աբբասյանների ժամանակ, ինչպես նշվեց, խալիֆայությունում, նրա պետական, վարչա-կառավարական, քաղաքական, առևտությունների մասնական և այլ ոլորտներում խստ ուժեղացավ մավալիների, առաջին հերթին պարսիկների դերը: Դրանից անմասն չմնացին նաև խալիֆայության ռազմական ուժերը, առաջին հերթին բանակն ամրողցությամբ վերցրած, և խալիֆայի գվարդիան:

Պարսիկների դիրքերի ամրապնդումը կատարվեց ի հաշիվ ռազմական ուժերում արաբների դիրքերի թուլացման: Սավալիներին կան պարսիկներին ռազմական ուժերում ներգրավվելուն և նրանցում առաջատար դիրքեր տրամադրելուն նպաստեց այն հանգանանքը, որ Աբբասյան խալիֆաներն այլևս չեն ցանկանում պահել մի բանակ, որը խարսիված էր տոհմացեղային պատկանելության և դրանից բխող հատկանիշների վրա: Այդ սկզբունքները մշտական տարածայնությունների, դիմակայության և արյունալի բախումների աղբյուր էին հանդիսանում, որոնք մի կողմից բացասաբար էին անդրադառնում բանակի մարտունակության վրա, իսկ մյուս կողմից կախման մեջ էին գցում խալիֆային այս կամ այն տոհմացեղային միավորությունից:

Դրան նպաստեց մի հանգանանք ևս: Աբբասյան առաջին խալիֆաները առօսակատան մեջ էին զտնվում արաբական տոհմիկ արխստոկրատիայի տարրեր խմբավորումների, ոչ միայն շիաների, խարիզիականների, այլևս սուննիների հետ, ինչպես Սիրիայի, Սեքքայի, Սաղինայի և այլն, և մեկ անգամ չէ, որ դաժանորեն ճնշել և արյան մեջ խեղդել էին նրանց հակաարբասյան ելույթները և ապստամբությունները: Պարզ է, որ խալիֆաներն այլևս չեն կարող բանակը հավաքագրել գերազանցապես արաբներից, որոնց նրանք այլևս անվերապահորեն չեն կստահում: Այստեղից էլ բանակի եթուկական համալրման հարցում խալիֆաների նոր քաղաքականության որդեգրումը:

Դամաննան փոփոխություն տեղի ունեցավ նաև խալիֆայական հարասում՝ թիկնապահ գործերում, նույնիսկ ավելի վաղ, քան թե բանակում: Դենց առաջին խալիֆաներն իրենց թիկնապահ գործը, գվարդիան, որն Օմբայաների ժամանակ գերազանցապես կազմավորված էր արաբներից, վերոնշյալ պատճառներով հրաժարվեցին այդ սկզբուն-

քից, և սկսեցին կազմավորել բացառապես խորասանցիներից, իրանալեզու տարրեր էթնիկական տարրերից:

Սակայն հետագայում տեղի ունեցան նոր փոփոխություններ: Ալ-Մութասիմն եղավ առաջին խալիֆան, որը իր գվարդիայի մեջ ներգրավեց թուրքերին, որոնք շատ չանցած տիրապետող դարձան հարասում: Այդ թուրքերը խալիֆայի ստրուկներն էին, որոնց նա գերի էր վերցրել Միջին Ասիայում, մասնավորապես Ֆերգանայում: Խալիֆան հույս ուներ նրանց դարձնել իրեն հնազանդ և հուսալի հենարան: Սակայն նրանց իրենց շատ շուտով դրսնորեցին որպես անկազմակերպ, անկառավարելի և արյունախում նի ամբոխ, որը ահ ու սարսափ տարածեց Բաղդադում: Դրությունն այնքան լարվեց, որ ալ-Մութասիմն ստիպված էր կառուցել մի նոր քաղաք, Սամարրան, ուր նա 836 թ. տեղափոխվեց իր կառավարության հետ միասին: Թուրքական գվարդիան, ինչպես արդեն նշել ենք, հետագայում այնքան ուժեղացավ, որ դարձավ վճռական ուժ պետության մեջ:

Ահա այսպիսին էին այն կարևոր փոփոխությունները և նորամուծությունները, որոնք տեղի ունեցան Արքասյան խալիֆայության ժամանակ պետական-կառավարական համակարգում:

## Գլուխ ութերորդ

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԴՎՉՈՒՄՆԵՐՆ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ (VIII-IX ԴԱՐԵՐ)

## I. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՄՈՅԻԱՀԱԿԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

### 1. Դակաաբբասյան ելույթների բնույթը և պատճառները

Աբբասյան խալիֆայության պատմությունը շատ հարուստ է ժողովրդական լայն հակակառավարական, սոցիալական և ազատագրական շարժումներով, տարբեր բնույթի ելույթներով, հուզումներով, բավականին լավ կազմակերպված ու երկարատև ապստամքություններով։ Երբեմն դրանք այնքան հուժկու էին լինում, որ ցնցում էին ամբողջ խալիֆայությունը և սպառնում նրա ամբողջականությանը, անգամ գոյությանը։

Այս տեսակետից Աբբասյան խալիֆայության պատմությունը նույնքան հարուստ և ուսանելի է, եթե ոչ ավելին, որքան և Օմայյաների խալիֆայության պատմությունը։

Սոցիալական առումով այդ շարժումներն ընդգրկում էին հողագործ գյուղացիներին և անասնապահներին, նստակյացներին և քոչվոր բեղվիններին, նաև, երբեմն նաև միջին հողատերերին, արհեստավորներին, առևտրականներին, ստրուկներին և սոցիալական այլ խավերի։

Ազգային-եթնիկական առումով այդ ընդգրկումների մասնակիցներն էին խալիֆայության բնակչության բոլոր ներկայացուցչները՝ առարները, պարսիկները, աֆղանները, խորասանցիները և միջինասիա-

կան այլ, այդ թվում և թուրքական ծագում ունեցող ժողովուրդները, հայերը, վրացիները, աղվանները, դպրիները, օսերը և այլն:

Կրոնական առումով Արքայանների տիրապետության դեմ ուղղված ելույթներին ճամանակցել են մուսուլման սուննիները, բայց առաջին հերթին շիա-ալիականները, ինչպես նաև զրադաշտականները, քրիստոնյաները:

Եվ եթե անփոփելու լինենք, ապա կարելի է ասել, որ ժողովրդային տարաբնույթ շարժումներում ներկայացված էր խալիֆայության սոցիալական, ազգային-էթնիկական և կրոնական կառուցվածքը՝ իր անբողջական ներկապնակով:

Արքայան խալիֆայությունում ծավալված հակաաքրասյան շաժումների պատճառները բազմազան էին. միշտոնավոր մարդկանց տնտեսական անմխիթար վիճակը, ծայրահեղ աղքատությունը, գանձվող տարատեսակ հարկերի, ճամանակորապես հողահարկի՝ խարածի, և գլխահարկի՝ ջիզիայի, ծանր, կարելի է ասել անտանելի բեռը, բռնությունները և հայածանքները և՛ կրոնական և՛ էթնիկական հողի վրա, նախկինուս իրենց պետականությունն ունեցած և խալիֆայության տիրապետության տակ հայտնված տարբեր ժողովուրդների ազատությանը միտված ազատագրական նկուղումները արյան մեջ խեղբելու քաղաքականությունը, այդ ժողովուրդների վերնախավի, իշխանական տոհմերի ոչնչացման ծգտումը և այլն:

Ինչպես տեսնում ենք, այդ շարժումների պատճառները շատ հիմնավոր էին, ուստի և նրանք միանգամայն պատճառաբանված և արդարացված էին:

Տիպաբանորեն դրանք ոչ թե անիմաստ բունտեր էին, այլ սոցիալական և ազատագրական պայքար, նույնիսկ այն դեպքում, երբ այդ պայքարն ընթանում էր կրոնական քողի տակ կամ առաջնորդվում կրոնական կարգախոսների ներքո:

Այստեղից հետևում է, որ դրանց արմատները պետք է փնտրել Արքայան խալիֆայության պետական, քաղաքական, տնտեսական և կրոնական-դավանաբանական համակարգում: Իսկ այդ համակարգը, համեմատած Օմայյան խալիֆայության հետ, Արքայանների ժամանակ, ըստ Էության, տիպաբանորեն նույնն էր:

Թերևս ավելի էր խորացել տոհմաստիրական կարգերի քայքայումը, ավելի մեծ ծավալներ ծեռք բերել հասարակության ֆեռազականացումը, բեղվինների նստակյաց դառնալու գործընթացը, ավելի խս-

տացել հարկագանձումը. ինչպես նաև խալիֆայության մեծամասնություն կազմող ոչ արար ազգարնակչության հալածանքները և այլն:

Դակաարբասյան ընդվզումները զարգանում և ծավալվում էին ահա այս իիմքի վրա: Մենք արդեն մասամբ անդրադարձել ենք դրանց լուսաբանությանը Արքայանների իշխանության գլուխ գալուց հետո առաջին տարիներին, հատկապես սիրիացիների գինված ելույթներին ընդդեմ Արքայան առաջին խալիֆա Աբրու ալ-Արքասի, շիաների ապստամբությանը Շարիկ իրն ալ-Մահրիի գլխավորությամբ. Սեքքայի և Սադինայի տունների դժգոհություններին, ալ-Մոււկաննայի գլխավորած ապստամբությանը և քազմաթիվ այլ ելույթների, որոնք տեղի են ունեցել խալիֆայության ինչպես արաբական, այնպես էլ ոչ արաբական շրջաններում, մասնավորապես Իրանում. Միջին Ասիայում և այլն: Ուստի այստեղ մենք կանդրադառնանք մի քանի այլ հակաարբասյան սոցիալական և ազատագրական բնույթի ելույթների. որոնք կարևոր հետք են բողել Արքայան խալիֆայության պատմության մեջ:

## 2. Դակաարբասյան շարժումները Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում և Պաղեստինում

Արքայանների իշխանության դեմ ուղղված ընդվզումների վտանգավոր կենտրոն էր հանդիսանում Սիրիան: Այստեղ ընդհուած մինչև X դարը եղել են մի շարք գինված ելույթներ: Դրանց առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ նրանք ընթանում էին Օմայյանների իշխանությունը վերականգնելու լոգունգների ներքո: Առաջին հայցից դա կարող է ժամանակավորեալ կամ տարօրինակ թվակ. սակայն միայն առաջին հայցից: Իրականում, իրենց խորքում դրանք սոցիալական բնույթի ելույթներ էին:

Սիրիացինների սոցիալական և տնտեսական վիճակը Արքայանների տիրապետության տակ հայտնվելուց հետո կտրուկ վատացավ, համեմատած Օմայյանների շրջանի հետ. Եթե Սիրիան հանդիսանում էր Օմայյան խալիֆայության կենտրոնը և որպես նայրաքաղաքային նահանգ օգտվում որոշակի արտոնություններից: Ընկնելով Արքայան մամլիչի տակ և ավելի ծանր վիճակում, սիրիացինները. ինչպես հաճախ է պատահում պատմության մեջ, սկսեցին տառապել կարուտախտով և անհարկի իդեալականացնել Օմայյանների տիրապետության շրջանը.

թես Օմայյաներն էլ այնպիսի տիրաններն էին. ինչպես Աբբասյանները, և Սիրիացիները մեկ անգամ չեն, որ ընդվել էին նրանց դեմ:

Սիրիացիները սկսեցին իրենց հույսը կապել, մի կողմից, մի նոր սուֆիանականի, այսինքն Աբու Սուլֆիանի ժառանգորդի, որից սերում էին Օմայյանները, որպես փրկչի հանդես գալու հետ, իսկ մյուս կողմից, զենքը ծեռքերին պայքարել Աբբասյանների տիրապետությունը տապալելու համար:

VIII դ. 50-ական թվականներին գինված ապստամբություններ տեղի ունեցան Ղամասկոսում, Ղաուրամում և Սիրիայի այլ շրջաններում: Դրանք դեկավարում էին նախկին գինվորականները, որոնք ժամանակին ծառայել էին Օմայյանների քանակում: Դրանցից մեկը հայտարարեց, որ հայտնվել է սիրիացիների կողմից այնքան սպասվող «սուֆիանականը», որի անունից և նա գործում է, ու նա գալիս է փրկելու սիրիացիներին Աբբասյան չարիքից և տառապանքներից:

Ապստամբությունը թվականին լավ էր նախապատրաստված, հատկապես Ղամասկոսում: Ապստամբությունը հարձակվեցին Աբբասյանների կողմից Սիրիայում նշանակված կառավարչի զորքերի վրա և ջախջախեցին նրանց: Սակայն ի վերջո նրանք պարտություն կրեցին:

Չնայած այդ հանգամանքին, սիրիացիները չհաշտվեցին խալիֆայության նոր կառավարողների հետ և չինազանդվեցին նրանց: Նրանք կրկին ապստամբվեցին, երբ նրանց հասավ Աբբասյան առաջին խալիֆայի մահվան լուրը: Ոգնորված դրանից, ապստամբ սիրիացիները իրենց հավատարմությունը հայտնեցին Օմայյական Էմիրներից մեկին, որը պատահականորեն փրկվել էր Աբբասյանների դատաստանից. և ճգոտում էր վերականգնել իրենց «օրինական» գահը: Սակայն այս ապստամբությունը ևս պարտություն կրեց:

Սիրիացիների հակաաբբասյան ուրբորոշման մեջ դրանից հետո, ինչպես նշվեց, ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ: Նրանք երբեք պատեհ առիթը բաց չեն բողոքում ընդվելու Աբբասյանների դեմ: Դրանով պետք է բացատրել նաև այն հանգամանքը, որ Աբբասյաններն առաջին օրվանից իրենց նայրաքաղաքը Սիրիայից տեղափոխեցին Իրաք: Նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք իրենց ապահով չեն գտում նաև Բաղդադում և երբեմն հարկադրված էին լինում հեռանալ նայրաքաղաքից ու իրենց նստոցը հաստատել այլ վայրերում, ինչպես Անբարում, Սամարայում և այլուր, նույնիսկ այդ պարագաներում, նրանք երբեք չեն մտածում թեկուզ ժամանակավորապես հաստատվել Սիրիայում:

Սակայն Սիրիայում ծավալված շարժումներին, ինչպես միշտ, այս անգամ ևս խանգարում էին միջցեղային հակասությունները և արյունալի բախումները: Նույնիսկ Աքքասյանների դեմ միասնական ճակատով հանդես գալու անհրաժեշտությունը չկարողացավ ստիպել նրանց ժամանակավորապես նոռացության տալ ցեղային հակամարտությունները: Դրա մասին է Վկայում նաև այն փաստը, որ սիրիացիների հակաքրասյան ելույթների ժամանակ կրկին բորբոքվեց արյունալի պայքարը սիրիական տեղական հարավային կամ կալբիների, և հյուսիսային կամ կայսիների ցեղախնների միջև: Իսկ նման նիջցեղային բախումներից փայլուն կերպով օգտվում էին Աքքասյան խալիֆաները:

759–760 թթ. հակաքրասյան ապստամբական մի նոր կենտրոն ձևավորվեց, այս անգամ Լիբանանում: Գլխավոր պատճառը ծանր հարկերն էին և հարկահավաքների բռնություններն ու կամայականությունները: Նրանք լեռնաբնակ գյուղացիներից զանձվող հարկերի չափարաժնները սովորություն ունեին սահմանել կամայականորեն, ըստ իրենց հայեցողության: Լեռնալիբանանի գյուղացիները, որոնց համբերության բաժակը լցվել էր, հրաժարվեցին վճարել հարկերը և դուրս քշեցին հարկահավաքներին: Սակայն նրանք լավ էին հասկանում, որ սեփական ուժերով չեն կարող հասնել հաջողությունների և որ իրենց անհրաժեշտ են դաշնակիցներ: Այդ նպատակով նրանք իրենց լեռներից իջան Բեքաայի դաշտավայրը, որը Լիբանանի ամենաբերորդ շրջանն է, և որտեղ տուրար նեծ քանակությամբ գյուղական բնակչություն էր կենտրոնացված:

Բեքաայի գյուղացիները, որոնք տառապում էին հարկային նույն քաղաքականությունից, և որոնց մոտ նույնպես կուտակվել էր խոր դժգոհություն Աքքասյանների և նրանց տեղական կառավարիչների դեմ, միացան Շուֆի և Լեռնալիբանանի այլ շրջանների գյուղացիներին, որի հետևանքով ստվարացան ապստամբների շարքերը: Նրանք միացյալ ուժերով շարժվեցին դեպի Բաալաբաք, որը հանդիսանում էր Բեքաայի կենտրոնը:

Լիբանանի ապստամբ գյուղացիների դեմ դուրս եկան խալիֆայական կանոնավոր բանակի գորամիավորումները, որոնց ճնշնան տակ, գյուղացիները նահանջեցին իրենց լեռները, հուսալով, որ անմատչելի լեռները հուսալի վահան կդառնան իրենց համար: Սակայն խալիֆայական ուժերը փոխեցին իրենց մարտավարությունը: Նրանք լեռնալիբանանում ապաստան գտած ապստամբ գյուղացիների դեմ ուղարկեցին լեռնային պայմաններում գործելու վարժված պատժիչ քոկատների, ո-

րոնք ամենայն դաժանությամբ ճնշեցին գյուղացիական այդ ելույթը: Ապստամբության շատ մասնակիցներ ենթարկվեցին ամենածանր պատիճների: Ետոնալիբանանի գյուղացիներից շատերը լքեցին իրենց գյուղերը, և իեռանալով Լիբանանից, ապաստան գտան Սիրիայում:

IX դարի 10-ական թվականների հուգումներն ընդօրկեցին Եգիպտոսը: Ապստամբեց այնտեղ տեղակայված բանակը, որը դժգոհ էր իր վիճակից և խալիֆաների քաղաքականությունից:

Իր ները խաղաց հետևյալ հանգամանքը: Կորդովայում էմիր Ջաշիմ I դեմ խոռվություն էին բարձրացրել նրա հակառակորդները, որոնց պարտություն կրելով, փախուստ էին տվել և հաստատվել Եգիպտոսում: Այստեղ նրանք փորձում էին իրենց վերահսկողությունը սահմանել, իրակրությունը անկարգություններ, կիրառում բռնություններ և այլն:

Նման իրավիճակի ստեղծմանը նպաստեց նաև քաղաքական այն խառնաշփոթ իրավիճակը, որ առաջացավ խալիֆայությունում 809 թ. խալիֆա Ջարուն առ-Ռաշիդի մահվանից հետո, երբ նրա երկու որդիների միջև պայքար սկսվեց իշխանության համար: Դա վերածվեց խսկական քաղաքացիական պատերազմի:

Որությունն ավելի բարդացավ, երբ Եգիպտոսում սկսված ապստամբության հետ գուգահեռ ապստամբության նոր ալիք բարձրացավ Սիրիայում, որտեղ հայտնվեցին մի քանի նոր «սուֆիանականներ», որպես փրկիչներ: 811 թ. նրանցից երկուսը՝ Ղամասկուսում միաժամանակ իրենց հոչակեցին խալիֆաներ: Բնակչության մի մասը՝ կալրիականները, հավատարմություն հայտնեց մեկին, իսկ մյուս մասը՝ կայսիները, մյուսին: Նրանց «ընտրության» հիմքում ընկած էր ցեղային պատկանելությունը: Եվ ահա այդ իհմքի վրա դարձյալ սկսվեց միջցեղային արյունահեղ պայքարի մի նոր շրջան:

Ապստամբության տարածումը խալիֆայության երկու կարևոր շրջանների վրա խիստ բացասական հետևանքներ ունեցավ ոչ միայն նրանց, այլև Իրաքի բնակչության տնտեսական վիճակի վրա: Փակվեցին հաղորդակցության ուղիները և խզվեցին տնտեսական կապերը, դադարեց առևտուրը և ապրանքափոխանակությունը նրանց միջև: Շատ քաղաքներում և գյուղերում սով սկսվեց:

Ջարուն առ-Ռաշիդի երկու որդիների միջև բռնկված եղբայրասպան պատերազմում, ի վերջո, հաղթանակ տարավ ավագը՝ Մամունը, որն աստիճանաբար, մեկը մյուսի հետևից, ճնշեց խալիֆայության տար-

բեր մասերում բռնկված հակաաբբասյան ելույթները: Դեռքը հասավ նաև Եգիպտոսին և Սիրիային:

Խալիֆա Մամունը 821 թ. խալիֆայության մի մեծ մասի կառավարումը, որի մեջ մտնում էին նաև Եգիպտոսը և Սիրիան, հանձնարարեց իր երիտասարդ, քայլ եռանդում գորավարներից մեկին, Աբդալլահ իրն Թահիրին, իրամայելով նրան ամենակտրուկ միջոցներով ճնշել ապստամբությունները: Նրան հիմնականում հաջողվեց լուծել այդ խնդիրները: Նա սկզբում ճնշեց ապստամբությունները Սիրիայում, ապա Դալեպից շարժվեց Եգիպտոս: Այստեղ նույնպես նա հաջողության հասավ. կարողանալով 825 թ. ոչ միայն հնագանդեցնել գինվորականներին, այլև ստիպել նրանց հեռանալ Եգիպտոսից:

Չնայած դրան, Եգիպտոսը չհանդարտվեց: Նա իրենից մի եռացող կաթսա էր հիշեցնում: 831–832 թթ. ապստամբեցին Եգիպտոսի բնիկները՝ քրիստոնյա դպտինները: Նրանք առաջին անգամ չեն, որ ապստամբում էին: Դեռևս VIII դ. Վերջերից դպտինները բազմից, չղիմանալով ծանր հարկերին, անտանելի կեղեցումներին և նվաստացումներին կրոնական հողի վրա, ընդգել էին իշխանությունների դեմ, պահանջելով հարգելի իրենց իրավունքները. կրոնական ազատությունները և վերջ տալ տնտեսական հարստահարումներին: Բայց ապարդյուն, նրանք ոչ մի որևէ կանոնադրությունը չէին կարողանում հասնել: 831 թ. ապստամբության հիմքում ընկած էին նույն պատճառները:

Խալիֆա Մամունը ամենավայրագ ծևերով արյան մեջ խեղից դպտինների ապստամբությունը: Դպտինները տվեցին հազարավոր զոհեր, իսկ բոլոր գերի ընկած ապստամբները խալիֆայի իրամանով կախաղան բարձրացվեցին: Արդյունքում դպտինների շատ գյուղեր դատարկվեցին. որոնք բնակության հանար տրվեցին մուտումաններին: Վերջիններս իրենց նոր բնակավայրերում բոլոր եկեղեցինները վերածեցին մզկիթների:

Խալիֆաները հազիկ էին հասցնում ճնշել ապստամբությունը մի շրջանում, երբ ընդդեմ Աբբասյանների ոտքի էին ելնում մեկ այլ շրջանի բնակչինները: 840 թ. ապստամբեցին Պաղեստինի գյուղացինները Աբու Ջարրի գլխավորությամբ, որը ներկայանում էր որպես մի նոր սուֆիանական, մեսիա, որը կոչված էր վերջ տալ անարդարություններին և փրկել Պաղեստինի ժողովուրդին բռնություններից և հարկահավաքների կամայականություններից: Ապստամբության կենտրոնը դարձավ Ռամալլահը, որտեղ հակաքվեցին տասնյակ հազարավոր ապստամբներ:

Դրան նպաստեց, անշուշտ, Աքու Դարբի սուֆիանական լինելու հանգամանքը կամ իրեն որպես այդայիսին ներկայացնելու նրա փորձերը:

Սակայն ապստամբությունը վատ էր կազմակերպված և նրա մասնակիցները մինչև վերջ լավ չէին գիտակցում երկարատև, համբերատար և ինքնազոհ պայքարի անհրաժեշտությունը: Դրա մասին է վկայում այն փաստը, որ երբ սկսվեց գարնանային գյուղատնտեսական աշխատանքների, վարի և ցանքսի շրջանը, ապա ապստամբության մեջ ներգրավված հազարավոր հողագործ գյուղացիներ, ինքնազլուխ, առանց նախօրոք տեղյակ պահելու ապստամբության դեկավարությանը, լրեցին ապստամբների շարքերը և, մեկնելով իրենց գյուղերը, սկսեցին գրաղվել գյուղատնտեսական աշխատանքներով:

Դոգերանորեն գյուղացիների մտածելակերպը և վարքագիծը կարելի է հասկանալ: Նրանք ելնում էին այն բանից, որ եթե բարձիրող անեն գյուղատնտեսական աշխատանքները և ժամանակին չկատարեն դրանք, ապա նրանք սովոր կմատնվեն. իսկ անասուններն էլ կկոտորվեն:

Գյուղացիական հիմնական զանգվածի հեռանալուց հետո, Աքու Դարբի տրանադրության տակ մնաց ընդամենը 2000 ապստամբ, որը իրենից մեծ ուժ չէր ներկայացնում: Աքու Դարբը դատապարտված էր, և խալիքայի գողքերը հեշտությամբ ճնշեցին այդ ապստամբությունը ևս:

Ինչպես արդեն նշել ենք, ժողովրդական ընդվզումները և ապստամբությունները մեկը մյուսին էին հաջորդում իրանի տարբեր մասերում, Խորասանում, Մավարաննահրում, Խորեզմում, Սամարդանդում և այլ շրջաններում:

Վերջապես հակաաբբասյան ընդվզումներից անմասն չմնաց նաև Սաղորիքը, որտեղ արաքները և բերբերները, հաճախ համատեղ, երբեմն առանձին–առանձին, իրենց դժգոհությունն էին արտահայտում, այդ թվում և ապստամբությունների ծնով Աքրասյանների տիրապետության դեմ, առաջ քաշելով իրնց անկախ լինելու հարցը:

## II. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ 774-775 թթ. ԱՊԱՍՄԲՈՒԹՅՈՒՆԸ

### 1. Յակաաբբասյան դժգոհությունները և նրանց պատճառները

Յայաստանի համար Աբբասյանների իշխանության գլուխ գալը ժամանակի առումով տեղի ունեցավ ամենանբարենպաստ պայմաններում: Ղա հաջորդեց 747-750 թթ. ապստամբության ճնշմանը, երբ հայ ժողովուրդը և նախարարները դեռևս ուշքի չեն եկել ստացված հարվածներից: Թեև այդ ապստամբությունը տեղի էր ունեցել Օմայյանների ժամանակ և իիմնականում ճնշվել նրանց կողմից, բայց Աբբասյանները, այնուամենայնիվ, հասցրեցին մասնակցել նրա ավարտական փուլին և Յայաստանի վերջնական «խաղաղեցմանը»: Այդ պատճառով էլ հայերը ի վիճակի չեն դիմակայել Աբբասյանների քաղաքականության խստացմանը, որը դրսուրվեց խալիֆայության բոլոր նասերում, այդ թվուն և Յայաստանում:

Աբբասյանները և՝ ավելացրին և՝ սաստկացրին հարկերի հավաքը Յայաստանում, ինչպես նաև ամբողջ Արմինիայում: Աբբասյան առաջին խալիֆա Աբու ալ-Կրբասը իր եղբորը, Աբու Զաքարիին, ապագա խալիֆա ալ-Մանսուրին, նշանակեց կուսակալ խալիֆայության Քյուտիսխային շրջանի, որի մեջ մտնում էր նաև Յայաստանը, օժտելով նրան ամենալայն լիազորություններով: Նա սկսեց այցելել իր կուսակալության մեջ մտնող շրջանները, այդ թվուն և Յայաստան, ոչնչացնելով ապստամբության վերջին օջախները:

Եվ չնայած այն հանգանանքին, որ Յայաստանը 747-750 թթ. ապստամբությունը ճնշելուց հետո գտնվում էր տնտեսական ծանր վիճակում, իսկ բնակչությունը թշվառության էր մատնված, Աբու Զաքարը, որը տեղյակ էր այդ բոլորին, պահանջեց հարկերը գանձել ամբողջությամբ և առանց որևէ գիծման:

Նորահաստատ դինաստիան, որը կենաց և մահու պայքար էր նղում իր բազում հակառակորդների դեմ իշխանության պահպանման և ամրապնդման համար, որամի և նյութական միջոցների մեծ կարիք ուներ: Խոկ դրանց միակ աղբյուրը հարկերի ավելացումը և նրանց հավաքումն էր ամենայն դաժանությամբ: Աբբասյան այդ մամլիչից չխուսափեց և չէր էլ կարող խուսափել Յայաստանը:

Ահա թե ինչպես է նկարագրում հայերի ծանր վիճակը VIII դարի պատմիչ Ղևոնդը, առաջին Արքայան խալիֆաների և Դայաստանի կառավարչներ Յազիդի և Աբդալլայի օրոք: Նա նշում է, որ ի հրամանատարության Յազիդի և իշխանության Աբդալլայի «յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աշխարհիս Դայոց»: Նա նրանց ազահությունը անվանում է դժոխային, երբ մահացածների համար անգամ ևս պահանջում էին հարկ վճարել: Նա պատմում է, որ մարդիկ «ոչ գտանեին զգինս փրկանաց անձին իրեանց» և «չար կտտանք, զելարանօք և կախաղանօք և դառն տանջանօք կեղեին զկեանս մարդկան»: Այսպիսով, հարկապահանջության դժոխային լուծ, կախաղաններ, ամենաշար կտտանքներ, տանջանքներ և այլն, ահա Դայաստանում ստեղծված կյանքի բնորոշ պատկերը:

Այդ բոլորին պետք է ավելացնել երկու հանգամանք ևս:

Առաջին, ըստ ավանդույթի, Դայաստանում հարկերը հավաքելու իրավունքը պատկանում էր հայ նախարարներին և խալիֆաներն ընդհանուր առմանք պահպանում և հարգում էին նրանց այդ իրավունքը: Նրանք հարկերի մի մասը, նախօրոք սահմանված չափին համապատասխան, ուղարկում էին խալիֆաներին որպես հարկ, իսկ մնացած մասը տնօրինում էին իրենք: Այդ իրավունքը նրանցից խվալում և տրվում էր արաբներին այն դեպքում, երբ հարաբերությունները սրվում էին խալիֆայության և հայ նախարարության միջև: Նման իրադրությունների ժամանակ հայ նախարարները, որպես պատիժ գրկվում էին իրենց սեփական երկրում հարկերը հավաքելու իրավունքից: Ահա նման իրադրություն էր ստեղծվել 747–750 թթ. ապստամբության ժամանակ:

Ապստամբությունը ճնշելուց հետո, Արքայանները չվերականգնեցին հայ նախարարների հարկերը հավաքելու իրավունքը, որը առաջացրել էր հայ կառավարող վերնախավի խոր դժգոհությունը:

Երկրորդ, դեռևս Օմայյան խալիֆայության և Դայոց իշխանի միջև ծեռք բերված պայմանավորվածության համաձայն, Դայոց այրութին, որը խալիֆաների պահանջով մասնակցում էր նրանց ռազմական արշավանքներին, օգտվում էր մի շարք արտօնություններից: Խալիֆաները պարտավոր էին հոգալ նրա ռազմական ծախսերը, այդ բվում և աշխատավարձ վճարել հայ հեծյալներին:

Գալով իշխանության գլուխ, Արքայանները սկզբունքորեն պահպանեցին հաստատված կարգը: Սակայն, նրանք երկար ժամանակ իրենց խոստումը չէին կատարում և Դայոց այրութին իր ծառայության դի-

մաց աշխատավարձ չեր ստանում: Դասկանալի է, նման իրավիճակը դարձել էր լարվածության աղբյուր:

Այսպիսով, կարելի է ասել, որ Աքքասյան առաջին երկու խալիֆաների անհեռատես քաղաքականության հետևանքով հայ հասարակության բոլոր խավերին՝ հասարակ բնակչությանը, իշխող վերնախավին, նախարարական տներին, գինուրականությանը և հոգևորականությանը հաճակել էր բողոքի և զայրույթի գացմունքը:

Ալ-Մանսուրը խալիֆա դառնալուց հետո, Զագիրայի, Ատրապատականի և Արմինիայի կուսակալ նշանակեց իր որդուն՝ ալ-Ղադիին. որը 775 թ., հոր մահից հետո, ժառանգականության իրավունքով, քազմեց խալիֆայության օահին: Ալ-Մահդին, հոր կենդանության և Յոյւսիսային կուսակալության կուսակալը լինելու ժամանակ կարևոր դերակատարում չի ունեցել: Նրա հայրը, որը ուժեղ անձնավորություն էր և ամեն ինչ կենտրոնացրել էր իր ծեռքում, գործունեության ակտիվ դաշտ չեր թողել որդու համար ոչ միայն խալիֆայությունում, այլև նրան հանձնված կուսակալությունում: Նրա փոխարեն ավելի մեծ դերակատարում ունեին տեղական կառավարիչները, որոնց ծեռքում էր կենտրոնացված փաստական իշխանությունը: Դայաստանում դա Զագիրն էր. որը առաջացրել էր բնակչության հոր ատելությունը:

Զգտելով խաղաղ ճանապարհներով ելք գտնել ստեղծված ծանր կացությունից, հայոց իշխան Սահակ Բագրատունին և ամենայն հայոց կաթողիկոս Տրդատը բողոք են ներկայացնում խալիֆա ալ-Մանսուրին: Բողոքը հասնում է նրան, քայլ սպասված արդյունքը չի տալիս: Խալիֆան կոնկրետ ոչ մի քայլ չի ծեռնարկում բնակչության ծանր վիճակը գեր փոքր չափով քեթսացնելու համար. այլ բավարարվում է Զագիրին փոխարինելով մեկ այլ կառավարիչով. որի անունն էր Բակկարա Իբն ալ-Ուկայի: Նա այդ պաշտոնը զբաղեցրել էր դեռևս 769–771 թթ., ոչնչով աչքի չընկնելով:

771 թ. խալիֆան Դայաստանի նոր կառավարիչ է նշանակում Դասան իբն Կահտաբային, որը մինչ այդ պաշտոնն արդեն մեկ անգամ զբաղեցրել էր: Նա Դայաստան ժամանեց ոչ թե նոր գաղափարներով և բնակչության դրությունը թեթևացնելու մտադրությամբ, այլ խորասանցի մարտիկների գլուխն անցած, որոնք ամբողջ խալիֆայությունում հռչակվել էին իրենց դաժանություններով. անմարդկային վերաբերմունքով և արյուն թափելու հնտությամբ: Եվ շատ չանցած նրանք իրենց այդ

մարտական բարձր «որակները» փայլուն կերպով ցուցադրեցին Դայաստանում:

## 2. 774–775 թթ. հայերի մեծ ապստամբությունը

Դայերը կանգնած էին Երևնտրանքի առջև։ Կամ համակերպվել ստեղծված իրավիճակին, որը նշանակում էր դրության հետագա վատթարացում, ստորացում և աղքատացում։ Կամ պայքարի ելնել անձի և զույքի պաշտպանության և շատ թե քիչ տանելի պայմաններ ստեղծելու համար։ Դայերը ի վերջո ընտրեցին Երկրորդ ուղին, քանի որ համբերության համար այլևս տեղ չէր մնացել։

Դրա արտահայտությունը հանդիսացավ 774–775 թթ. ապստամբությունը, որը պատմության մեջ մտել է որպես հայերի մեծ ապստամբություն։

Ապստամբության առաջին դրսնորումը հանդիսացավ Արտավազդ Մամիկոնյանի հիանալի մտահղացման փայլուն իրականացումը 774 թ.։ Նա, ինչպես գրում է Ղնոնդ, մեկնում է Ղվին և իրեն մտերին ծնացնելով «զօրացն Խամայելի» և իրու թե պատրաստվում է պատերազմել իրենց ընդհանուր քննամուր դեմ։ Մտանում է տեղի արար կառավարչից մեծ քանակությամբ զենք, զինամթերք, սաղավարտներ, զրահ և այլն։ Արտավազդ Մամիկոնյանն իր շատ լավ զինված զորագնդով հեռանում է Ղվինց և «հասաներ ի գավառն Շիրակ ի զիւղն Կումայրի»։ Այդ պահին այս տեղ էին գտնվում ժողովրդին այնքան ատելի արար հարկահավաքներ։ Նա սպանում է նրանց Կումայրիում և վերցնում այն ամենը, ինչ որ այդ պահին կար նրանց մոտ՝ բռնազավթած հայերից։ Այդ բոլորից հետո նա յուրայինների հետ հեռանում է «ի կողմանս Վրաց աշխարհին»։

Կումայրիի դեպքերի մասին լուրջ հասնում է Ղվին, որը ցնցում է արար զորավար Սուհամնաղին։ Նա հավաքում է մեծացանակ զորք Արտավազդ Մամիկոնյանին և նրան միացած հայոց մյուս նախարարներին պատժելու համար։

Սակայն նախքան այդ, նա ստիպում է հայոց սպարապետին, Աշոտ Բագրատունու որդի Սմբատին, և այլ հայ նախարարներին, միանալ իրեն և միասնական ուժերով հետապնդել Մամիկոնյան իշխանին և նրան միացած ուժերին։ Արար զորավարը Վրաստանի Սամցիս զավարի մոտ հասնում է նրանց և վերջիններս հարկադրված հեռանում են Դայաստանից և նահանջում եզերաց աշխարհ։

Դայերի խիզախ գործողությունները մի կողմից մեծ տպավորություն են բողնում արարների և նրանց հրամանատարների ու կառավարիչների վրա, իսկ մյուս կողմից հարուցում նրանց զայրությը: Կումայրիի դեպքերը համարելով իրենց համար նվաստացուցիչ, Արմինիայի կառավարիչ Դասան իրն Կահտարան, որն իր դաժանությունների համար ստացել էր «Կատաղի» մականունը, հրամայում է ավելի խստացնել հարկերը և սաստկացնել բոնությունները հայ անզեն բնակչության նկատմամբ:

Դասանի այդ անմիտ և ոչ հեռատես քաղաքականությունը տալիս է հակառակ արդյունքը և նոր ապստամբության պատճառ հանդիսանում, որը գլխավորում է Մամիկոնյան մեկ այլ իշխան՝ Մուշեղը: Դասանի կարգադրությանը Դայաստանի բոլոր կողմերն էին ուղարկվել հարկահավաքներ, հրահանգ ստանալով ամենադաժան միջոցներով գանձել հարկերը և ոչ մեկին չխնայել կամ զիթել: Արարները նման հանձնակատարությանը ներկայանում են նաև Մուշեղ Մամիկոնյանին նրա հորենական տիրություն, Տարոնում, և պահանջում նրանից վճարել նաև Արտավազդ Մամիկոնյանի կողմից Կոսմայրիում սպանված արաբների արյան դիմաց: Մուշեղ Մամիկոնյանը ոչ միայն հրաժարվում է կատարել նրանց պահանջը, որը ստորացուցիչ էր նրա համար, այլև բոլորին սրի է քաշում: Դրանից հետո Մամիկոնյան իշխանը հեռանում է յուրայիններով ու ընտանիքով, և հաստատվում անառիկ համարվող Արտազերս ամրոցում:

Սակայն Մուշեղ Մամիկոնյանը չի փակվում ամրոցում և դիտում, թե ինչպես են արաբները դառնություն պատճառում հայ բնակչությանը: Նա իր զինախմբով դուրս է գալիս ամրոցից և մտնում Բագրևանդի գավառը, որտեղ արաբ հարկահավաքներն իրնց հերթական անօրինություններն էին կատարում բնակչության նկատմամբ: Նա բոլորին սրախողիսող է անում և, ինչպես Ղոնդըն է նշում «լուցուցաներ զահանգումն հարկին յերկրս»:

Այսպիսով, հարկերից ազատվելը դարձավ հայ ապստամբների առաջին և կարևոր հաղթանակը: Դա մեծ ոգնորություն առաջացրեց հայերի մոտ, որոնք խանդավառված Մուշեղ Մամիկոնյանի հաղթանակներով, հավաքվում են նրա շուրջը, ապավինելով նրա պաշտպանությանը:

Բայց նրա հաղթանակները առաջացրին արաբների զայրությը, որոնք Մուշեղ Մամիկոնյանի վրա հարձակում ծեռնարկեցին երկու կողմից, Կարինից և Բագրևանդից:

Կարինից հարձակում գործեց 200 հոգուց բաղկացած և շատ լավ զինված մի զորաջոկատ: Դայոց գործը Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարությամբ նրան դիմակայեց Խարս գյուղի մոտ և զիսովին ջախջախեց նրանց: Դայերի ծեռքն անցավ մեծ քանակությամբ զենք, ծիեր և այլ ավար: Մուշեղ Մամիկոնյանը, հերթական փայլուն հաղթանակից հետո, կրկին վերադառնում է Արտագերս ամրոցը:

Խարսում արաբների պարտության լուրջ հասնում է Դվին, արար զորավար Մուհամմադին, որը դա ընկալում է որպես աղետ: Տագնապահար զորավարը Դվինում կուտակում է մեծ քանակությամբ զորք, մոտ 4000 մարտիկ: Ս դրանք հանձնելով Արու Նաջիրին, հրամայում է հարձակվել Մուշեղ Մամիկոնյանի հայկական զորքի Վրա, Վրեժ լուծել և պատճել հայոց զորավարին: Նրա զորքերի կորիզը կազմում էին հեծյալները, որոնց միջտ աչքի են ընկել իրենց բարձր մարտունակությամբ: Արու Նաջիրի զորախումբը լավ սպառազինված լուրջ ուժ էր և մեծ վտանգ էր ներկայացնում հայերի համար: ճակատամարտը նման լավ նախապատրաստված և մեծաքանակ զորախմբի հետ մեծ փորձություն էր Մուշեղ Մամիկոնյանի և հայոց զորքի համար:

Մուշեղ Մամիկոնյանը որոշեց ոչ թե նատել ամրոցում, սպասել թշնամու հարձակմանը և պաշտպանվել ամրոցի պատերի հետևում, այլ դուրս եկավ ամրոցից և իր զորքն առաջնորդեց թշնամուն ընդառաջ: Դսկա արաբական զորքը Դվինից դուրս գալով և առաջ շարժվելով Բագրսանից գավառով: Կանգ առավ Բագավանում: Դենց այստեղ հայոց իշխանը հարձակվեց արաբական զորքերի Վրա և պարտության մատնեց նրանց: Արաբները տվեցին մեծ քանակությամբ զոհեր, իսկ կենդանի մնացածներն էլ փախուստի դիմեցին: Դայերը հետապնդելով նրանց, հասան Արուն ավանի մոտ և շատ շատերին սրահար արեցին, այդ թվում և Արու Նաջիրին:

Դայեկական զորքի հաղթանակը Մուշեղ Մամիկոնյանի զիսավորությամբ, կատարյալ էր:

Արաբական զորագնդից սակավ մարդկանց հաջողվեց կենդանի մնալ և վերադառնալ Դվին: Նրանց ընդառաջ եկավ Դվին քաղաքի արաբական բնակչությունը, տղամարդիկ և կանայք, ողբասացությամբ և ծիչներով, իրոն իրենց գլուխների Վրա ցանելով և օծիքները պատառութելով: Սիր պատել էր Դվինում գտնվող արաբական զորքին, որն այնքան էր վախեցած Բագավանի և Առունի պարտությունից, որ չէր համարձակվում քաղաքից դուրս գալ, ապավինելով նրա պատերի ամրությանը:

Սուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ հայ ապստամբների տպավորիչ հաղորանակները նոր իրադրություն ստեղծեցին Դայաստանում: Նրան միացան բազում նախարարներ, որոնք մինչ այդ չէին մասնակցում ապստամբությանը և պատրազմական գործողություններին: Նրանց միացավ սպարապետ Սմբատ Բագրատունին, որն ընդհանրապես գգույշ գործիչ էր: Նրա միանալը շատ մեծ նշանակություն ունեցավ ապստամբության հետագա ճակատագրում:

Ղոնդի Վկայությամբ «Եւ ժողովեալ ամենայն նախարարը Դայոց ի մի վայր», մինյանց երդում տալիս ապրել և մեռնել միասին: Նրանց են միանում և խառնվում ռամիկների բազմությունը:

Դամապատասխան փոփոխություն է տեղի ունենում նաև ապստամբության հիմնական նպատակների մեջ:

Ապստամբության սկզբում հիմնական նպատակը բնակչությանը ծանր հարկերից և սարսափելի բռնություններից ազատելն էր և հայ նախարարների օրինական իրավունքների վերականգնումը: Քաղաքական բնույթի պահանջներ, մասնավորապես արարական տիրապետությունը թոքափել և անկախություն նվաճել, չէին առաջադրվում:

Սակայն ծեռք թերած փայլուն հաղթանակների տպավորության տակ տեղի ունեցավ արմատական շրջադարձ հայ նախարարների վերնախավի, համենայն դեպք նրա առավել ազդեցիկ մասի, մտածելակերպի մեջ: Նրանք կանգնեցին Դայաստանը ազատագրելու և նրա անկախությունը վերականգնելու տեսակետի վրա:

**Նախարարների այդ թևը գլխավորում էին Սուշեղ Մամիկոնյանը և սպարապետ Սմբատ Բագրատունին:**

Սակայն ոչ բոլոր նախարարներն էին համակարծիք Սուշեղ Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու հետ: Դրանց մեջ էր Աշոտ Բագրատունին, որը հայ նախարարներին խոհեմության կոչ էր անում. Խալիֆայությունը համենատերով բազմագլուխ վիշապի հետ, նշերով. որ «հզոր է նրա զորությունը» և անշափ նրա բազմությունը, այսինքն զորքը:

Եվ ինչպես լինում է նման դեպքերում, կար նախարարների մի խումբ, որը տատանվում էր: Այդ նախարարներն ապստամբության ժամանակ ամեն մեկը մնաց իր նստոցում և իր գինական ուժը չմիավորեց ապստամբների արմատական թևի հետ: Դրանց մեջ էին Արքունյաց նախարարները՝ Դամապասպը և նրա եղբայրները, որոնք իրենց զորքով մնացին Կասպուրականում, Կասակ Բագրատունին, Ամատունի և Տրու-

նի նախարարները, որոնք գերադասեցին մնալ Դարույնք ամուր բերդում, Մակուշի կիրճում և Արագելտի ծորում:

Սիա այդպիսի պայմաններում հայոց ապստամբական զորքը շարժվեց դեպի Կարին, նպատակ ունենալով գրավել իր թիկունքում գտնվող այդ խիստ կարսոր քաղաքը: Նրանք հաջողությամբ պաշարեցին Կարինը, նրան պատճառեցին մեծ վնասներ, սակայն քաղաքը գրավել նրանց չհաջողվեց:

Իսկ ի՞նչ էր տեղի ունենում հակառակ ճամբարում: Արաբները դասեր քաղելով նախորդ պարտություններից, շատ լրջորեն էին պատրաստվում նոր հարձակմանը: Չուզահեռաբար, նրանք անքողջ ծմուան ընթացքում դուրս գալով Դվինից ասպատակում էին շրջակա տարածքները, գյուղերը և ավանները, զբաղելով ավարառությամբ և հեղեղով հայ բնակչության արյունը, ինչպես դա տեղի ունեցավ նրանց կողմից գրաված Պտղունք, Թմալին, Կողը և այլ գյուղերում:

775 թ. գարնանը արաբները կարողացան պատրաստել մի նոր ընտիր զորաբանակ, թվով 30 հազար մարդ, որի միջուկը կազմում էին խորասանցիների մարտունակ գնդերը: Բաղդադին, Խալիֆա ալ-Մանսուրին, խիստ անհանգստացնում էր իրավիճակը Հայաստանում և հայոց գորավար Մուշալի ալ-Արմանի՝ Դայ Մուշեղի հաղթանակները: Նա պատրաստվում էր վճռական հարվածով ճնշել ապստամբությունը Հայաստանում: Խալիֆայի հրամանով արաբական զորաբանակի հրամանատար նշանակվեց Ամրը:

Արաբական զորքը Ասորիքի կողմից մտավ Խլաթ քաղաքը: Աշոտ Բագրատունին, որ այդ պահին գտնվում էր քաղաքում, արաբական զորքի ներխուժման և թվաքանակի մասին լուր ուղարկեց հայ նախարարներին, կոչ անելով նրանց հավաքվել և միասին կովել արաբական այդ հզոր զորախմբի դեմ:

Սակայն Մուշեղ Մամիկոնյանը, Սմբատ Բագրատունին և նրանց համակիր մյուս հայ նախարարները վստահություն չցուցաբերեցին Աշոտ Բագրատունու և նրա հաղորդման նկատմամբ: Դավանաբար դրանում իր դերը խաղաց այն հանգանաքը, որ, ինչպես նշել ենք, Աշոտ Բագրատունին դեմ էր ապստամբությանը, չմիացավ այն նախարարների ուխտին, որոնք երդվեցին պայքարել արաբների դեմ Դայաստանն ազատագրելու համար: Ուստի նրանք շարունակեցին Կարինի պաշարունքը և պետք է ասել արդեն շատ մոտ էին նրա գրավնանք:

Նրանք որոշեցին հարծակվել Արծեշի արաբական կայազորի վրա: ճանապարհին, մասնավորապես Քերկորի քաղաքում, նրանց միացան տեղի, ինչպես նաև շրջակա գյուղերի և ավանների բազմաթիվ աշխարհականներ: Այսուհետև շարունակելով իրենց երթը, հայ զորաբանակը նույեցավ Արծեշին: Սակայն, ցավոք, նա ընկավ արարների պատրաստած դարանը: Արաբական մեծաքանակ զորքը, որը գլխավորում էր Ամրը, 775 թ. ապրիլի 15-ին հանկարծակի դուրս գալով թաքստոցից, հարծակվեց հայոց զորքի վրա և պարտության մատնեց նրան: Մեծ էր հայոց զոհերի թիվը, մոտ 1500 մարդ: Դրանք հիմնականում այն աշխարհականներն էին, որոնք խանդավառված միացել էին հայոց զորքին Արծեշի ճանապարհին: Նրանք բոլորովին պատրաստված չէին մարտի համար, շատերն անզամ գենց չունեին: Մարտի դաշտում ընկան նաև Տրունի ճախարարական տոհմի երեք իշխանազուններ:

Արաբական զորքը հետապնդելով ճահանջող հայոց զորաբանակին, հասավ Բագրևանդի գավառ և բանակեց Արծնի գյուղի մոտ:

Այդ պահին հայկական հիմնական զորքը գրադաւած էր Կարինի պաշարմամբ: Երբ նրա զորահրամանատարությանը, Մուշեղ Մամիկոնյանին և Սմբատ Բագրատունուն հասավ հայերի պարտության լուրը Արծեշի մոտ, նրանք դադարեցրին պաշարումը, թեև, ինչպես նշվեց, հայերը շատ մոտ էին հաղթանակին:

Հայկական զորաբանակը, կազմված 5000 մարդուց, միահամուռ կերպով, առանց վարանելու, ուղևորվեց թշնամուն ընդառաջ: Նա Կարինից անցնելով Բասեն, մտավ Բագրևանդ և կանգ առավ Արծնիի մոտ, որտեղ բանակել էին արարները:

Կովող ուժերը թվաքանակի առումով անհավասար էին: Մի կողմում 30 հազարանոց արաբական բանակն էր, իսկ մյուս կողմում Հայոց բանակը, որի շարքերում հաշվվում էր 5000 մարդ: Սակայն դա բնակ էր չվախեցրեց հայոց կտրիճներին:

Մարտը սկսվեց 775 թ. ապրիլի 25-ին, այգարացին: Դայոց զորքը համարձակործն մարտի նետվեց և ժամը հարվածներ հասցնելով ու մեծ զոհեր պատճառելով արարական զորքին, նրան փախուստի մատնեց: Ղևոնդը գրում է, որ «օրացեալ գունդն Դայոց հարկանեին հարուածս, և ի փախուստ դարձուցեալ զբշնամիսն սատակեին բազում»:

Սակայն արարները վերադասավորելով իրենց ուժերը, հակա-հարձակման են անցնում: Տեղի է ունենում մի իսկական արյունայի ճակատամարտ: Դայոց զորքը, չնայած հակառակորդի թվական բացարձակ գերակշռությանը, կովում էր հերոսաբար, արհանարիելով երկու-տությունն ու ճահճ: ճակատամարտն ավարտվեց արարական զորքերի հաղթանակով: Դայերը տվեցին մեծ կորուստներ, մարտի դաշտում հե-րոսաբար ընկան 3000 քաջամարտիկներ: Դերսուի մահով ընկան ապստամբության դեկավար հայ նախարարները, այդ թվում հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին, Մուշեղ Մամիկոնյանը, Սահակ Բագրա-տունին, Սամվել Մամիկոնյանը, Վահան Գնունին և ուրիշներ: Դեպքերի ժամանակակից, VIII դ. հայ պատմիչ Ղևոնդը, Արծնիի ճակատամար-տում ընկած հայ նախարարներին և ռամիկներին անվանում է «քաջա-հաղթ նահատակքն»:

Ապստամբության ճնշումը ծանր հետևանքներ ունեցավ Դայաս-տանի համար: Խորասանցիների ջոկատները դեռ երկար ժամանակ շա-րունակում էին իրենց պատժից Ղևոնդը, Արծնիի ճակատամար-տում ընկած հայ նախարարներին և ռամիկներին անվանում է «քաջա-հաղթ նահատակքն»:

Դրությունը փոխվեց խալիֆա ալ-Մանսուրի մահից հետո, որը տեղի ունեցավ 775 թ. հոկտեմբերին: Նրան փոխարինած խալիֆա ալ-Մահիմին ընդհանրապես ավելի մեղմ քաղաքականություն էր վա-րում, այդ թվում և Դայաստանում: Նրա օրոք հարկերը մի փոքր մեղմա-ցան, որոշ չափով վերականգնվեցին հայ նախարարների իրավունքնե-րը, մասնավորապես հարկերի հավաքման իրավունքը վերադարձվեց նրանց: Այդ բոլորի տրամաբանական ավարտը եղավ Դայաստանի ներ-քին ինքնավարության վերականգնումը, որը խալիֆայությունը նրան պարզեց IX դարի սկզբներին:

Տեղի ունեցավ մի կարևոր իրադարձություն ևս: 826 թ. Խալիֆա-յությունը Բագրատ Բագրատունուն ճանաչեց իշխանաց իշխան, իսկ նրա եղբայր Սմբատ Բագրատունուն՝ սպարապետ: Եվ, վերջապես, Բագրատունիների քաղաքական կշռի և ազդեցության բարձրացման

հետևանքով, խալիֆայությունը ստիպված ճանաչեց նրանց իշխանություն անբողջ Արմինիա վարչատարածքային միավորնան վլու:

Սկզբունքային բնույթի այս դրական տեղաշարժերի մեջ իր մեջ քաժինն ունեցան հայերի գինված ելույթները և ապստամբությունները VII դարում, ի մասնավորին 774–775 թթ. փառապանձ ապստամբությունը, առանց որոնց, հազիվ թե Աբբասյանները գնային գիջումների:

### III. ԲԱԲԵԿԻ ԵՎ ՍՏՐՈՒԿ-ԶԱՆՁԻՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 1. Բաբեկի ապստամբությունը (816–837 թթ.)

Աբբասյան խալիֆայության դեմ ուղղված ամենազանգվածային, երկարատև և թերևս ամենավտանգվոր ապստամբությունը 816 թ. Աստրապատականում ծավալված հակաաբբասյան, հակաարաբական շարժումն էր, որի գլուխ կանգնեց հասարակ ժողովրդի ծոցից դուրս ելած Բաբեկը:

Այդ ապստամբությունը կոչվում է նաև հուրեմիների ապստամբություն, ելնելով այն հանգամանքից, որ նա ընթանում էր հուրեմիական զաղափարախոսության ներքո: Նախ «հուրեմի» բառի մասին: Ենթադրվում է, որ նա իրանական ծագում ունի, որի հիմքում «հուր» արմատն է, որը նշանակում է «կրակ», «արև» կամ «հուրեմ» արմատը, որն ունի «պայծառ» իմաստ:

Իսկ ինչ վերաբերում է զաղափարախոսության արմատներին, ապա նա սերում է մազղակիզմի ուսմունքից, որի մեջ կենտրոնական տեղ է գրավում խավարի դեմ լույսի և չարի դեմ բարու պայքարի դուալիստական զաղափարը: Ընդ որում, այդ պայքարը հավերժական բնույթ ունի և խարսխված է, ի վերջո, լույսի և բարու հաղթանակի հավատի վրա:

Կոնկրետ այս դեպքում չարի և խավարի մարմնավորում համարվում էր Աբբասյան տիրակալությունը: Իսկ ինչ վերաբերում է լույսին և խավարին, ապա հուրեմիներն այն փորձում էին փնտրել արաբական տիրապետության և նրա ստեղծած համակարգի կործանման և համայնական կարգերին վերադառնալու մեջ: Միամտորեն իդեալականացնելով անցյալում գոյություն ունեցած համայնքը, հուրեմիները դա համարում էին արդարության և առատության ոսկե դար, երբ մարդիկ չեն տա-

ռապել իշխանությունների բռնությունից, հարստահարումից և հարկա-հավաքների կամայականությունից:

Ապստամբության մասնակիցներին անվանել են նաև «մուհամ-միրներ»՝ արաբական «ալ-համրա», կարմիր բարից, քանի որ նրանց հանդես էին գալիս կարմիր դրոշների ներքո և շատ հաճախ հազնում կարմիր գույնի շորեր: Կարմիրը խորհրդանշում էր արյունը և վկայում այն մասին, որ մուհամմիրները պատրաստ էին իրենց կյանքը գոհաբե-րել հուրեմիական գաղափարների համար, որը նրանց համար հանուն ազատության և հավասարության գոհվելու իմաստ ուներ:

Բարեկը, որի խնկական անունը Դասան էր, ուղիղ 20 տարի ղեկա-վարեց Արքայանների տիրապետության դեմ ուղղված ապստամբու-թյունը, որի կենտրոնն Աստրապատականն էր: Լա հարձակվեց Աստրա-տականում տեղակայված արաբական կայսրությունից վրա և ոչնչացրեց նրանց: Արաբները մնացին միայն առանձին ամրոցներում, հայտնվելով շրջափակման օդակում:

Ապստամբության դրոշի ներքո կանգնեցին ժողովրդական ամե-նալայն զանգվածները, գլխավորապես գյուղացիները, արհեստավոր-ները, ինչպես նաև միջին հողատերերը, որոնց թիվը հասնում էր հարյուր հազարների:

Բարեկը ցուցաբերեց կազմակերպչական, այդ թվում և ուզմա-կան մեծ հնտություն, և ստեղծեց ապստամբական լավ սպառազինված քանակ, կազմված հետևակից և հեծելազորից: Այդ բանակը հաղթանակ հաղթանակի հետևից էր տանում խալիֆայական բանակի նկատմամբ:

Խալիֆա Մամունը ջանք և միջոցներ չէր խնայում նորանոր խոշոր զորամիավորումներ հանել ապստամբների դեմ, բայց ապարդյուն, նրանց չէր հաջողվում բեկում առաջանել պայքարում:

Ապստամբները կարողացան ոչ միայն իրենց հսկողության տակ վերցնել Աստրապատականը, այլև Արևմտյան Երանը: Օրեցօր ծավալվող ապստամբական շարժումն իր ոլորտի մեջ առավ խորասանի մի մասը, Թաքարստանը, Զուրքանը, Դայլանը, Դամադանը և այլ տարածքներ, ընդուած մոտենալով Սպահանին:

Բարեկը կապեր հաստատեց արաբական խալիֆայության մշտա-կան ախոյանի՝ Բյուզանդական կայսրության, իետ, առաջարկելով կայսր Թեոֆիլին համատեղ գործողություններ ընդուն ընդհանուր թշ-նանու: Բարեկը նույնիսկ պատրաստ էր ընդունել քրիստոնեություն:

Նրանց միջև, իրոք, հաստատվեց համագործակցություն, սակայն նա լայն ծավալներ և մշտական բնույթ չընդունեց:

Եարունակելով իր հաղթարշավը, Բարեկը 830 թ. գրավեց Դամադանը և իր խկողության տակ Վերցորեց Բաղրադը Խալիֆայության արևելյան տարածքների հետ կապող ուղիները: Դա, ինչպես նաև Բարեկի մյուս հաղթանակները ցույց տվեցին, որ հուրեմիների ապստամբությունը ոչ թե տեղական բնույթի իրադարձություն էր, այլ լուրջ սպառնալիք Արքայան խալիֆայության գոյությանը:

Դա տագնապ առաջացրեց խալիֆայության արքունիքում: Բաղդադն սկսեց լուրջ նախապատրաստվել ապստամբությունը ճնշելու համար: Խալիֆա Մամունը չհասցրեց դա իրականացնել, նա մահացավ 833 թ., սակայն հասցրեց իր եղբորը, ալ-Մութասիմին, պատվիրել ամենակտորուկ միջոցներ ծեռք առնել և գտնել մի զորահրամանատար, որն ի վիճակի կիմի ճնշել Բարեկի ապստամբությունը:

Խալիֆա ալ-Մութասիմը կարողացավ փաստորեն ստեղծել նոր, մարտունակ և լավ սպառազինված քանակ և 833 թ. տանել առաջին խոշոր հաղթանակը Բարեկի նկատմամբ: Նակատամարտում սպանվեց ավելի քան 60 հազար ապստամբ:

Ալ-Մութասիմը գտավ նաև այն զորահրամանատարին, որը կարողացավ թեկում առաջացնել ռազմական գործողություններում: Այդպիսին հանդիսացավ Ջայրար իբն Կարուս Ափշինը, մարտերում կովկած և ռազմական մեծ փորձ ունեցող մի զորահրամանատար: Նա դանդաղ, բայց հաստատակամորեն ապստամբներից ազատագրեց նրանց գրաված տարածքները, ամենուր վերականգնելով Արքայան իշխանությունը:

Բարեկի վիճակն օրեցօր վատանում էր, պակասում էր համալրումը նոր մարդկանցով, նա չուներ սպառազիմության, պարենի և այլ անհրաժեշտ իրերի աղբյուր: Նա ամրացավ իր հայրենի Բաազ ամրոցում, որը վերածվեց ապստամբության ղեկավարման հրամանատարական կենտրոնի: Բայց նրա դրությունը դառնում էր օրիասական: Ափշինն ավելի ու ավելի էր սեղմում շրջափակման օդակը: Վերջապես նա, 837 թ. օգոստոսին, մեծ զորաքանակով, որի տրամադրության տակ կար ամրոցներ գրավելու ռազմական տեխնիկա, սկսեց Բաազ ամրոցի գրոհը, որը հանդիսացավ Վերջին ճակատամարտը: Արարական զորքերը, ճեղքելով ամրոցի պատերը, մեխուժեցին Բարեկի վերջին հենակետը: Սակայն նա չսպասեց ամրոցի վերջնական անկմանը, այլ գաղտնի ճանապարով դուրս եկավ ամրոցից:

Խալիֆա ալ-Մութասիմը խոստացավ 2 մլն դիրհեմ նրան, ով կենդանի կրօնի Բաբեկին, և 1 մլն դիրհեմ նրան, ով մեռած կիանձնի նրան: Դա իր դերը խաղաց և մի գյուղացի, որի մոտ փորձում էր ապաստան գտնել Բաբեկը, ճանաչեց նրան և մատնեց իշխանություններին, ստանալով խոստացված պարզեց:

Բաբեկը երկար չաշշարանքներից հետո մահապատժի ենթարկվեց:

Բաբեկի ապստամբության ծննդան շնորհիվ վերականգնվեց Արքայանների տիրապետությունը Ատրպատականում, Արևմտյան Իրանում և հարակից տարածքներում:

## 2. Ստրուկ—գանգիների ապստամբությունը (869–883 թթ.)

Երկրորդ խոշոր ապստամբությունը, որը ցնցեց Աբբասյան խալիֆայությունը, սևամորթ ստրուկների ապստամբությունն էր, որը տևեց 14 տարի:

Ստրուկությունը, ինչպես նշել ենք, արաբական խալիֆայության, այդ թվում և Աբբասյան, կացութածներից մեկն էր: Նա օգտագործվում էր արտադրության ոլորտում, տնտեսության մեջ, զինվորական գործում և այլ բնագավառներում:

Ստրուկության առաջացման հիմնական աղբյուրը պատերազմներն էին, երբ արաբները գերիներին վերածում էին ստրուկների: Մյուս գլխավոր աղբյուրը ստրուկների, եթե այդպես կարելի է ասել, համաշխարհային շուկան էր, որտեղ ամեն ոք, ով ֆինանսական հնարավորություններ և ցանկություն ուներ, կարող էր ստրուկ գնել և այնուհետև նրան օգտագործել ըստ իր հայեցողության:

Զգակի թիվ էին կազմում ստրուկները, որոնք սովորաբար նվաճված երկրների և պատերազմների ժամանակ գերեվարված կանայց էին: Դատկապես մեծ էր երիտասարդ և գեղեցիկ գերուհիների պահանջը, որոնք որպես հարճ համալրում էին արար մեծահարուստների, այդ թվում և խալիֆաների հարեմները:

Ստրուկների հատուկ խմբագրանակ էին կազմում սևամորթ ստրուկները՝ գանգիները: Այդ անունը նրանք ստացել են աֆրիկյան Զանգիբար կղզուց, որն արաբներն անվանում են Զանցի: Սակայն հետագայում զանցի անվանումը տրվեց ոչ միայն Զանգիբար կամ Զանցի կղզուց գերեվարված ստրուկներին, այլև արևելյան Աֆրիկայի, իսկ ապա նաև

ընդհանրապես Աֆրիկայի բնակչությոց գերի վերցված սևամորթ բոլոր սորուկներին:

Զանցիները իիմնականում կենտրոնացված էին Իրաքի հարավային շրջաններում և ապրում էին ճահճուտների դժոխային պայմաններում: Նրանք ապրում էին նրանց համար հատուկ հատկացված ճամբարներում, որոնցից յուրաքանչյուրում ստրուկների թիվը հասնում էր 500-ից մինչև 5000-ի: Նրանց կացարանները եղեգնից և արնավենու թիթրից պատրաստված թշվառ հյուղակներ էին, կառուցված կեղտի և ճահիճների հեղծուցիչ միջավայրում:

Զանցիներին օգտագործում էին շաքարեղեգնի և բամբակի պլանտացիաներում, աղակալված հողերի մաքրման մեջ, որը հանարվում էր տաժանակիր աշխատանք, և այլ ծանր ու կեղտոտ աշխատանքներում: Նրանք վարում էին կիսաքաղց կյանք, քավարարվելով մի քանի քուռ այուրով և մի քանի արնավով: Պատահական չեր, որ նրանց մեջ շատ բարձր էր մահացածությունը: Կյանքի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, դրան ավելացրած նաև ճահճուտների առողջության համար խիստ վտանգավոր պայմանները, զանցիների զանգվածային մահվան հիմնական պատճառներն էին:

Ահա չղիմանալով գոյության այսպիսի անմարդկային պայմաններին, զանցիները 869 թ. ապստամբվեցին:

Ապստամբները չունեին որևէ գաղափարախոսություն, ինչպես, ասենք, հուրեմիները: Նրանք պարզապես պայքարում էին կյանքի ամենատարական պահանջների բավարարման, իրենց գոյության համար, և աշխատանքային պայմանների բարելավման համար:

Սակայն ինչպես հաճախ է պատահում նման դեպքերում, միշտ հայտնվում է որևէ մեկը, որն օգտվելով ստեղծված իրավիճակից, փորձում է իր ծեռքը վերցնել այդ շարժումը. դառնալ նրա «առաջնորդը» և ժողովրդական ցասումն ուղղորդել իրեն ճենանու հունով: Նման դերակատարում ստանձնեց ոմն Ալի իր Մուհամմադ, մի արկածախնդիր, որն իրեն ներկայացնում էր Ալիից և Ֆարիմայից սերված շիա, անգամ «բաքնված իմամ», որը հայտնվել է մարդկությանը փրկելու համար: Դեռ ավելին, նա իրեն հայտարարեց խալիֆա և աստծո կերպարանափոխություն և այդ պատճառով իր երեսը միշտ ծածկած էր պահում:

Դիմելով զանցիներին, Ալի իր Մուհամմադը խոստանում էր բարելավել նրանց կյանքը և բոլոր ստրուկներին դարձնել ստրուկների և հարստության տեր: Նա դրա հետ միասին ներկայացնում էր խարիզմա-

կան ծայրահեղական հայացքները, որոնք զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող զանցիներն ի վիճակի չէին հասկանալ:

Այնուամենայնիվ, նրան հաջողվեց իր շուրջը հավաքել մոտ 15 հազար զանցիների և նրանց պայքարի կոչեց ընդդեմ իրենց տերերի:

Ապստամբ զանցիները Բասրայի շրջակայթում հարձակվեցին իրենց նախկին տերերի և նրանց համար հատկապես անտանելի վերակացուների վրա, սպանեցին նրանց և բռնագրավեցին նրանց ունեցվածքը: Շատ դեպքերում դա թալանի բնույթ էր կրում: 869 թ. նրանք հարձակվեցին Բասրայի վրա, բայց չկարողացան գրավել, որը բացատրվում է նրանով, որ նրանք վատ էին գինված, շատ ստրուկներ բացի իրենց ծեռքերից այլ գենք չունեին, ծանոթ չէին մարտավարության տարրական գիտելիքներին:

Սակայն Ալի իր Սուլիամմաղը ծեռնարկեց մի շարք կտրուկ քայլեր, որը որոշ չափով բարելավեց իրավիճակը: Նա արգելեց զանցիներին թալանել շրջակա արարական գյուղերի բնակչության ունեցվածքը: Դա շատ կարևոր քայլ էր, քանի որ Բասրայի և նրա շրջակա բնակչությունը, ի տես զանցիների կյանքի սոսկալի պայմանների, ընդհանուր առնամբ համակրանքով էր վերաբերվում նրանց:

Ային զանցիներին բաժանեց ջոկատների, որոնց հրամանաւար նշանակեց զինվորական գործից փորը ինչ հասկացող մարդկանց, և նտցրեց խիստ կարգապահություն: Դատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նա արգելեց գինու օգտագործումը, որով ապստամբ զանցիները զանգվածարար հրապուրվում էին ապստամբության սկզբում լայնորեն կիրառվող թալանի ժամանակ:

Իր դրական դերը խաղաց նաև այն պարագան, որ արարական բանակում ծառայող շատ սևամորթներ, անգամ նրանցից կազմված գորաջոկատներ, անցան զանցիների կողմը և իրենց մարտական փորձը և ունակությունն ի սպաս դրեցին զանցիների մարտունակության բարձրացնանք:

Եվ դա տվեց իր դրական արցունքները: Նրանք պարտության մատնեցին խալիֆայական գործերին և գրավեցին Ուրուլլու և Արաղան քաղաքները: 871 թ. նրանք երկրորդ անգամ հարձակվեցին Բասրայի վրա և այս անգամ գրավեցին այն:

Ապստամբությունը տարածվեց Խուզիստան, շուտով ընկավ նրա գլխավոր քաղաք Ահվազը: Այդ քաղաքների և այլ բնակավայրերի գրավումն ուղեկցվում էր թալանով, կողոպուտով, զանգվածային սպանու-

թյուններով, ամբողջ բնակավայրերի կամ քաղաքների առանձին մասերի հրկիզումով: Դրանից չխուսափեց նաև Բատրան, որը սարսափելի, ճնշիչ տպավորություն թողեց արար բնակչության վրա:

Ահա այդ պահից զանցիները և նրանց ապատամբության ղեկավարները թույլ տվեցին սխալներ, որը կարելի է համարել ճակատագրական: Իրենք լինելով ստրուկներ, վերածվեցին ստրկատերերի: Քաղաքները և բնակավայրերը գրավելիս, նրանք գերի ընկածներին դարձնում էին ստրուկներ և նրանց տեղափոխում իրենց ճահճուտ կացարանները: Յուրաքանչյուր զանցի ուներ մեկ տասնյակից ավել արար ստրուկներ, հատկապես ստրկուիդներ, որոնց պահում էին որպես հարճեր: Չբավարպելով դրանով, նրանք հարձակվում էին առևտրական քարավանների և նավերի վրա, գրավում և սեփականացնում նրանց պատկանող ամբողջ ունեցվածքը և գույքը:

Հատ զանցիներ վերածվեցին խոշոր սեփականատերերի, հողատերերի և ստրկատերերի: Փաստորեն նրանք իիմնեցին ստրկատիրական, բռնակալական մի նոր պետական կազմավորում, որտեղ երեկվա ստրուկները դարձան նոր ստրկատեր իշխողներ:

Այս իրն Մուհամմադը նման քաղաքականության շնորհիվ ավելի ամրապնդեց իր դիրքերը և հեղինակությունը: Նա իր նատօքը, ալ-Մուհամմադը, որը գտնվում էր Կոփայից հարավ-արևմուտք, վերածեց մի մեծ ամրոց-քաղաքի, զանցիների քաղաքական կենտրոնի:

Սակայն զանցիներն իրենց նման քաղաքականության հետևանքով կորցրեցին հարավային Իրաքի արար բնակչության համակրանքը և աջակցությունը: Քաղաքական մթնոլորտը փոխվեց և քաղաքական միջավայրը բարենպաստից դարձավ քշնամական, որը եղավ զանցիների ապստամբության պարտնակներից մեկը:

Բայց մինչև դա դեռ հեռու էր, և զանցիները շարունակում էին հաղթանակներ ծեռք բերել: 879 թ. նրանք գրավեցին Վասիտը և առաջ շարժվեցին ուղիղ դեպի Բաղդադ, խալիֆայության մայրաքաղաքը կտրուկ դեպի հարավ, Պարսից ծոց տանող ռազմավարական և առևտրական կենսականորեն անհրաժեշտ ուղիներից:

Ահա այդ պահից խալիֆայությունն սկսում է գործել ավելի եռանդուն, նպատակասլաց և կազմակերպված: Դրանում մեծ էր խալիֆա Մութամիդի եղբոր ալ-Մուվաֆֆակի դերը: Խալիֆա Մութամիդը (870–892 թթ.) բուլամորք անձնավորություն էր և երկրի փաստացի կառավարումն իր ծեռքը վերցրեց ալ-Մուվաֆֆակը:

Նա վճռական անծնավորություն էր, հասկանում էր ռազմական գործից, տիրապետում դիվանագիտական արվեստին և հմուտ էր քաղաքական խարդավանքների ասպարեզում: Ծնորհիվ էր այդ հատկանիշների, նուր քայլերի ու հաշվարկների, նա կարողացավ ստեղծել լավ սպառագինված և մարտունակ բանակ և բեկում առաջացնել ապստամբությունը ճնշելու գործում: Իսկ դա հեշտ գործ չէր, որովհետև այդ շրջանը խալիֆայության համար այնքան էլ լավ ժամանակներ չէին: Արդեն սկսել էին խալիֆայության թուլացումը և տրոհման գործընթացները:

Արդեն հաջորդ տարի, 880 թ., արարական գործերը, Արու ալ-Արբասի, ալ-Մուվաֆֆակի որդու, ապագա խալիֆա Մութադիհի հրամանատարությամբ, պարտության մատնեցին ապստամքներին և ազատագրեցին Կասիտը: Դա միայն սկիզբն էր: Արարական գործերը, որոնց գլխավորում էր անձանք ալ-Մուվաֆֆակը, դանդաղ, բայց հաստատականորեն առաջ էին շարժվում, գրավում ու վերացնում զանցիների բնակավայրերը և կացարանները: Նա շրջապատեց Ալի իր Սուհամնադի ամրոցը, ալ-Մուխտարան, և առաջարկեց նրան անձնատուր լինել, խոստանալով նրան ներումն շնորհել: Սակայն Վերօդինս մերժեց այդ առաջարկը և շարունակեց դիմադրությունը: Բայց նրա վիճակն օրեցօր ավելի հուսահատական էր դառնում: Սնունդի և ջրի պակասը, քաղցր և ծարավը, հյուծում էին պաշտպաններին և թուլացնում նրանց կամքը և դիմադրական կորովը: Զանցիների վերօդին պատվարը չղիմացավ արաքների գրոհին և 883 թ. ալ-Մուվաֆֆակի գործերը գրավեցին ալ-Մուխտարան, որի ժամանակ գոհվեց նաև Ալի իր Սուհամնադը: Նրա գլուխը որպես ռազմական պարզ նետվեց ալ-Մուվաֆֆակի ոտքերի առօն:

Ալ-Մուվաֆֆակն իր հաղթական գորքի գլուխն անցած, Վերադարձավ Բաղրադ: Խալիֆայության մայրաքաղաքը նրան դիմավորեց ցնծությամբ և նրան արժանացրեց «Նասիր լի-ղին Ալլահ» «Դանուն Ալլահի հավատի հաղթող» պատվավոր կոչմանը:

Այդ հաղթանակի հետևանքով վերացվեց խալիֆայության գոյությանը սպառնացող անջատողականության կենտրոններից մեկը և որոշ ժամանակով կանխվեց նրա վերջնական տրոհումը:

## Գլուխի իններորդ

### **ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (VIII-IX ԴԱՐԵՐ)**

#### **I. ԱԲԲԱՍՅԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

##### **1. Արտաքին քաղաքականության նոր ռազմավարությունը**

Աբբասյան խալիֆայության արտաքին քաղաքականությունը, ի տարրերություն Օմայյան խալիֆայության, պակաս ծավալապաշտական էր և միտքած չէր նվաճումների և տարածքային նոր գրավումների: Եվ ոչ ոչ այն պատճառով, որ Աբբասյաններն ավելի խաղաղասեր և պակաս մարտնչող էին, քան նրանց նախորդները:

Արաբական նորաստեղծ պետությունը հիմնականում Օմայյանների նվաճումների շնորհիվ վերածվեց կայսրության, որը ծգվում էր Հնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոս, ներառնելով տարածքներ և երկրներ երեք մայրցամաքներից՝ Ասիայից, Աֆրիկայից և Եվրոպայից: Նրանք գրավեցին այն ամենը, ինչ կարող էին: Եվ երբ նրանց փոխարիննելու եկան Աբբասյանները, ապա հիմնական գործն արդեն արվել էր:

Աբբասյանները գործում էին այլ պայմաններում և այլ դարաշրջանում: Նրանք ասպարեզ իջան այնպիսի ժամանակ երբ այլս չկային այսպես կոչված «ազատ» և «անտեր» տարածքներ գրավելու և խալիֆայությանը կցելու համար: Խալիֆայությունը շրջապատված էր արդեն կայացած և նրանից ոչ պակաս զորեղ պետություններով, որոնց հետ

մարտնչելը նոր նվաճումների համար հղի էր ծանր հետևանքներով, իսկ երբեմն էլ նրա ուժերից վեր էր:

Արևելքում նա սահմանակցում էր Դնդկաստանի և Չինաստանի հետ, որոնց հետ ծանր և երկարատև պատերազմի մեջ մտնելը խալի-ֆայության ուժերից վեր էր, Եվրոպայում ծնավորվել էր Ֆրանկների թագավորությունը, որը 800 թ. վերածվեց հզոր կայսրության: Նրա դեմ պատերազմնելը հավասար էր կործանարար արկածախնդրության: Իսկ ինչ վերաբերում է խալիֆայության անմշջական հարևան Բյուզանդական կայսրությանը, ապա այս երկու հավերժական ախոյան հարևանները իրենց ավելի քան մեկդարյա հակամարտության ընթացքում կարողացան միայն մի բան ապացուցել: Նրանցից ոչ մեկը չի կարող վերջնական հաղթանակ տանել մյուսի նկատմամբ և նրանք դատապարտված են համատեղ գոյակցության:

Այսպիսի պայմաններում Աբբասյանները հարկադրված էին որդեգրել նոր ռազմավարություն արտաքին քաղաքականության և հարևան երկրների հետ հարաբերությունների հաստատման ու պահպանման բնագավառում: Նոր ռազմավարությունը միտված էր Աբբասյան խալիֆայության տարածքային ամբողջականության պահպանմանը և դրան համապատասխան արտաքին քաղաքականության կիրառմանը, որը վտանգի տակ չդներ խալիֆայության գոյությունն այն տարածքային շրջանակներում, որ VIII դարի կեսերին նրանք ժառանգել էին իրենց նախորդներից:

Նման ռազմավարության որդեգրումը Աբբասյանների կողմից տեղի է ունեցել ոչ թե կամավոր ընտրությամբ, այլ հարկադրաբար, ստեղծված հանգամանքների բերումով:

Մեր կարծիքով այս հանգամանքներն են անտեսել Ե. Բելյաևը, երբ նա գրում է, թե «Աբբասյաններն ի տարբերություն Օմայյանների, նվաճողական քաղաքականություն չեն վարում», կամ երբ Ի. Ֆիլշտինսկին նշում է, որ «Աբբասյանների արտաքին քաղաքականությունն այնպես ակտիվ չէր, ինչպես Օմայյանների քաղաքականությունը: Ի տարբերություն իրենց նախորդների Աբբասյանները չեն ծեռնարկում մեծ նվաճումներ»:

Իհարկե, սա չէր նշանակում, որ եթե պատեհ առիթ և հնարավորություն լիներ, ապա Աբբասյան խալիֆաները չեն ցանկանա նոր նվաճումներ իրագործել:

## 2. Արաբա-չինական ռազմական բախումները

Արքասյանները նոր էին վերցրել իշխանությունը, երբ Ենթարկվեցին ծանր փորձության: Նրանց համար Վտանգը եկավ Արևելքից, Չինաստանից և նրա հետ դաշնակցող թուրքական ցեղերից: Խոսքը Սիցին Ասիայի մասին է, որն Արքասյան խալիֆայության համար ուներ ռազմակարական կարևոր նշանակություն և հանդիսանում էր հարստության կարևոր աղբյուրներից մեկը: Օնայանները մեծ ջանքերի գնով և արյունահեղ պատերազմների շնորհիվ կարողացել էին նվաճնել այդ կարևոր մարզը: Նրա պահպանումը խալիֆայության կազմում եղել է բոլոր խալիֆաների կարևոր խնդիրներից մեկը:

Չինաստանն իր կողմից մշտապես մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Միջին Ասիայի նկատմամբ, որն ավելի ածեց խալիֆայությունում կատարված դինաստիական փոփոխությունների ընթացքում: Արքասյան առաջին խալիֆա Արու ալ-Արքասը լավ էր հասկանում այդ վտանգը և դիմեց ռազմական ուժի կանխելու չինական ներթափանցումը Միջին Ասիա և նրա գրավումը Չինաստանի կողմից, որն այդ ժամանակ կառավարում էր Տանի դինաստիան:

Ուազմական բախումներն Արքասյան խալիֆայության և Տանական Չինաստանի ու նրա թուրք դաշնակիցների միջև վերածվեցին լայնածավալ գործողությունների: 751 թ. Տալաս գետի նոտ տեղի ունեցավ Վճուկան ճակատամարտը, որն ավարտվեց արաքական զորքերի հաղթանակով: Պարտություն կրած չինացիները և նրանց թուրքական դաշնակիցները հարկադրված էին իրաժեշտ տալ իրեն քաղաքական ծրագրին և հաշտվել Միջին Ասիան խալիֆայության կազմում մնալու իրության հետ:

Արաբներին հաջողվեց իրականացնել իրենց սահմանները պաշտպանելու ռազմավարական ծրագիրը:

Պատերազմի ընթացքում արաբները վերցրեցին մեծաքանակ չին գերիներ, որոնց մեջ կային իիհանալի արիեստավորներ, այդ թվում և թղթի պատրաստման հմուտ վարպետներ: Արիեստներին զարկ տալու նպատակով, գերեվարված չինացիները կենտրոնացվեցին միջինասիական Սամարդանդ քաղաքում, որը կարևոր վարչական և տնտեսական կենտրոն էր և մեծ դերակատարում ուներ տարածաշրջանում:

Ղենց այստեղ էլ նրանք հիմնեցին թղթի արտադրությունը, որն այնուհետև տարածվեց խալիֆայության մյուս շրջանները, իսկ 800 թ. սկզբներին նաև խալիֆայության մայրաքաղաք Բաղդադ:

Թղթի արտադրությունը և գործածությունը մեծ հեղաշրջում առաջացրեց Արքայան խալիֆայության մշակութային կյանքում և գործավարության մեջ: Մինչ այդ, գործավարության մեջ կիրառվում էր մագաղաքը, որը և թանկ էր, և ոչ այնքան հարմար լայն գործածության համար: Թղթի մուտք գործելու կարևորությունն ավելի ակնհայտ կդառնա, եթե հիշեցնենք, որ Արքայան խալիֆայությունում արդեն սկսվել էր վարչականացման ֆունկցիաների բաժանումը, դիվանների կազմավորումը, այսինքն բյուրոկրատական ապարատի ծնավորումը, որի հետևանքով ընդլայնվել էր գործավարությունը:

Այսպիսով, 751 թ. չինական գորքերի դեմ տարած հաղթանակի արդյունքում խալիֆայությունը կարողացավ կանխել չինացիների ներթափանցումը Սիրին Ասիա և պահպանել խալիֆայության սահմանների անխախտությունը: Դա թերևս Արքայանների առաջին կարևոր հաղթանակն էր արտաքին քաղաքականության ասպարեզում:

### 3. Արքայան խալիֆայության և Ֆրանկների կայսրության փոխհարաբերությունները

Ժամանակագրական առումով Արքայանների խալիֆայության հետ միասին Արևմտյան Եվրոպայում քաղաքական ասպարեզում հայտնվեց Կարողինագնների ֆրանկական պետությունը: 751 թ. Պիափին III Կարճահասակը Հոռմի պապի համաձայնությամբ օծվեց որպես թագավոր, իիմք դնելով Կարողինագնների դիմաստիայի կառավարմանը: Ֆրանկների պետությունն իր հզորության գագաթնակետին հասավ Կարլոս Սեծի ժամանակ, որը 768–800 թթ. կառավարում էր որպես թագավոր, իսկ 800–814 թթ. որպես կայսր, պաշտոնապես կրելով «Հոռմեացիների կայսր» տիտղոսը: Նա մի շարք փայլուն հաղթանակների շնորհիվ կարողացել էր միավորել մեկ պետական կազմավորման մեջ Արևմտյան Եվրոպայի ընդարձակ տարածքներ, որի վրա հետագայում ծնավորվեցին ֆրանսիական, գերմանական և իտալական պետությունները:

Կարլոս Սեծի կառավարման տարիները համընկան Արքայան խալիֆայությունում Դարուն առ–Ռաշիդի կառավարման տարիների հետ: Ընդ որում, Արքայան խալիֆայությունը նույնպես իր հզորության

փառքին հասավ Դարուն առ-Ռաշիդի գահակալության շրջանում: Ֆ. Շիրին նշում է, որ IX դարուն համաշխարհային գործերի վրա տիրապետում էին երկու կայսերական անուններ՝ Կարլոսը Արևմուտքում, Դարուն Արևելքում և «այդ երկուսից Դարունն անառարկելիորեն ավելի հզորն էր, որը ներկայացնում էր ավելի բարձր կուլտուրա»: Դանենայն դեպք, կարելի է ասել, որ VIII դարի վերջներին և IX դարի սկզբներին Արքայան խալիֆայությունը և Ֆրանկական պետությունը աշխարհի երկու ամենահզոր տերություններն էին:

Դարաբերություններն այս երկու պետությունների միջև ընդհանուր առմամբ եղել են բարեկամական: Միջազգային մի շարք հարցերում նրանց շահերը համընկնում էին և նրանց համարվում էին բնական դաշնակիցներ: Առաջին հերթին նկատի ունենք նրանց դիրքորոշումը Խապանիայում ստեղծված Կորդովայի Օմայյան խալիֆայության հանդեպ:

Արքայանները, որոնք իշխանության էին եկել Օմայյաններին տապալելու ճանապարհով, խիստ թշնամական վերաբերմունք ունեին Կորդովայի խալիֆայության նկատմամբ, որտեղ որպես կառավարող դինաստիա դարձյալ հաստատվել էին Արքայանների դաժան հալածանքներից հրաշքով փրկված Օմայյանները:

Կարողինաները և նրանց կայսր Կարլոս Մեծը նույնպես թշնամական դիրք էր գրավել Կորդովայի խալիֆայության նկատմամբ: Ֆրանկների կայսրությունը, որը ծգտում էր լինել Արևմտյան Եվրոպայի միակ հզոր տերությունը, Կորդովայի խալիֆայությունը դիտում էր որպես հնարավոր մրցակից: Ուստի այս երկու տերությունները, Արքայան խալիֆայությունը և Ֆրանկական կայսրությունը, ակնկալում էին, որ Կորդովայի խալիֆայության հետ բարդություններ առաջանալու պարագայում, կարող են օգնել միմյանց, կամ, նվազագույնը, ապավինել մեկը մյուսի բարյացակամ դիրքորոշմանը:

Նրանց քաղաքական շահերը նույնպես համընկնում էին Բյուզանդական կայսրության հարցում: Երկուսն էլ բյուզանդացիներին համարում էին իրենց Վտանգավոր ախոյանը, որի հետագա հզորացումը և նվաճումների քաղաքականությունը մեծ վտանգ էր ներկայացնում նրանց համար:

Այսպիսով, Կորդովայի խալիֆայության և Բյուզանդական կայսրության հարցում, Դարուն առ-Ռաշիդը և Կարլոս Մեծը միմյանց դիտում էին որպես հնարավոր դաշնակիցներ:

Երկու ամենահզորների միջև հաստատաված սերտ հարաբերությունների արտահայտություն է համարվում մի շարք ռեապանությունների փոխայցելությունները և թանկարժեք նվերների փոխանակությունը նրանց միջև։ Որը վկայված է արևմտյան աղբյուրներում, որի մասին, սակայն, լուս են արարական աղբյուրները։ Խալիֆայի կողմից ֆրանկների կայսրին ուղարկված նվերների մեջ հիշատակվում են կերպասը, համեմունքները և հատկապես փիղը։

Երկու տիրակալների մերձեցման արդյունքում Դարուն առ-Ռաշիդը որոշ առանձնաշնորհումներ տվեց հռոմեական եկեղեցուն Երուսաղեմում, նաև առաջարկեց Տիրոջ սուրբ գերեզմանի հարցում, որի հետևանքով զգալիորեն ամրապնդվեցին կաթոլիկ եկեղեցու դիրքերը Երուսաղեմում։

#### 4. Արարա-բյուզանդական հարաբերությունները

Արքայան խալիֆայության արտաքին քաղաքականության մեջ մշտապես առաջնային տեղ են գրավել հարաբերությունները Բյուզանդական կայսրության հետ։ Դրանք խալիֆայության համար ունեցել են կենսականորեն կարևոր նշանակություն և զգալիորեն ազդել նրա միջազգային դիրքերի վրա։ Եվ դա հասկանալի է։ Նրանց հարևան և ախոյան տերություններ էին, որոնք մրցակցության մեջ էին գտնվում Արաբական խալիֆայության կազմավորման հենց առաջին օրվանից։ Առաջավոր Սսիայում Բյուզանդական կայսրությանը նախկինում պատկանած շատ երկրներ, հաղթական պատերազմների հետևանքով, անցել էին խալիֆայության տիրապետության տակ։

Արարական խալիֆայությունը համար ջանքերով ծգտում էր այդ գրաված տարածքները և երկու երկրների միջև հաստատված սահմանները պահել անփոփոխ, չիրաժարվելով առաջին խսկ հնարավորության դեպքում նորանոր նվաճումներից։ Խսկ Բյուզանդական կայսրությունը, որը չէր մոռացել իր տարածքային կորուստների մասին, ծգտում էր գոնե մասամբ հետ բերել կորցրածը, թուլացնել խալիֆայությունը և նրան հետ շպրտել դեպի արևելք։

Արքայանների տիրապետության սկզբնական փուլում, առաջին երկու խալիֆաների՝ Արու ալ-Արքասի, ալ-Մանսուրի գահակալության շրջանում, արարա-բյուզանդական հարաբերությունները համեմատաբար հանգիստ էին և պակաս չարված վիճակում էին գտնվում։ Դա բա-

ցատրվում է նրանով, որ Աբբասյանները գրադված էին իրենց տիրապետությունը խալիֆայությունում ամրապնդելու խնդրով, որը նրանց համար ուներ առավել կարևոր նշանակություն, քան այլ հարցեր: Ուստի նրանք համեմատարար քիչ ուշադրություն էին դարձնում արտաքին քաղաքական խնդիրներին և ձգտում էին ամեն կերպ սառեցված վիճակում պահել այսպես կոչված թեժ կետերը:

Բյուզանդական կայսրությունը, որն ապրում էր ներքաղաքական ժամանակակից շրջան, նույնպես հնարավորություն չուներ վարել ակտիվ, առավել ևս թշնամական քաղաքականություն իր արևելյան հարևանի նկատմամբ, և հակված էր խալիֆայության հետ իր հարաբերություններն առանձնապես չափել:

Իհարկե, չպետք է կարծել, թե կատարյալ անդորր էր տիրում արարա-բյուզանդական սահմանի երկայնքով: Նրանց միջև լինում էին բախումներ և ընդհարումներ, բայց դրանք տեղական, սահմանային ընդհարումներից այն կողմ չէին անցնում:

Այսպես էր իրադրությունը մինչև երրորդ խալիֆա ալ-Մահդին, որն իր հորը, ալ-Մանսուրին, հաջորդեց 775 թ. և կառավարեց ուղիղ տաս տարի:

Անծայրածի խալիֆայության դեկին հայտնվելով այն ժամանակ, երբ Աբբասյան դինաստիայի ամրապնդման հարցերը հիմնականում լուծված էին, ալ-Մահդին անցավ ավելի ակտիվ քաղաքականության Բյուզանդական կայսրության նկատմամբ:

Նա վերսկսեց սրբազն պատերազմը և հարձակողական գործողությունները Բյուզանդական կայսրության դեմ, սակայն դրանք առանձնապես հաջողություն չբերեցին նրան: Թերևս ամենանշանակալի իրադարձությունն եղավ այն, որ 782 թ. արաբական գորախումբը ալ-Մահդիի որդու, ապագա խալիֆա Ջարուն առ-Ռաշիդի հրամանատարությամբ, հայտնվեց Բյուզանդական կայսրության մայրաքաղաքի մոտերքը: Բայց Կոնստանդնոպոլիսը գրավել արաբները չկարողացան: Բյուզանդական գահի խնամակալ Իրենը, որը կայսրությունը դեկավառում էր իր փոքրահասակ որդու, Կոնստանտին VI-ի անունից, կարողացավ հաշտություն կնքել, պարտավորվելով խալիֆայությանը վճարել 70–90 հազար դինար ռազմատուգանք: Ենշտ է, այդ պայմանագիրը ստորագրուցիչ էր բյուզանդացիների համար, բայց դրա շնորհիվ Իրենին հաջողվեց հասնել այն բանին, որ արաբները հեռանան կայսրության մայրաքաղաքի մատուցներից:

Չափազանց մեծ կարևորություն տալով Բյուզանդիայի հետ խալիքայության սահմանների ամրապնդանը, արաբները նրա երկայնքով կառուցեցին ամրությունների մի ամբողջ շղթա, որը Անտիոքից տարածվում էր մինչև Տարսուս, Մալաթիա, Մանթիջ, Ջիբերթա, Սամոսատ և այլն: Սահմանային պաշտպանական այդ գոտին կոչվում էր «ալ-Ավասիմ», որը նշանակում էր «պաշտպանող», «կանխող», «պահող»: Դարուն առ-Ռաշիդի հրամանով պաշտպանական այդ գոտին առանձնացվեց որպես ինքնուրույն վարչատարածքային միավոր, որը չէր ենթարկվում տեղական կառավարիչներին, և դրվեց հատուկ զորահրանատարների իշխանության ներքո:

Բյուզանդական նոր կայսր Սիկիփոր I, որը 802 թ. փոխարիենց իրենին, հրաժարվեց իր նախորդի կնքած պայմանագրից և նույնիսկ պահանջեց Յարուն առ-Ռաշիդից հետ Վերադարձնել նրան որպես ռազմատուգանց վճարած գումարը, որը խիստ զայրացրեց խալիֆային: Նա կազմակերպեց մի քանի արշավանքներ Ռաքքայից, որը նա դարձրել էր իր նստոցը, ներխուժեց Փոքր Ասիայի տարածքները, տիրացավ Յերակլես և Թիանա քաղաքներին և հասավ մինչև Անկիրա (Անկարա): Այդ հաջողությունների շնորհիվ առ-Ռաշիդը 806 թ. կարողացավ ստիպել Նիկիփորին ճանաչել Իրենի հետ կնքված պայմանագրով և, ի հավելումն, հատուկ հարկ դրեց կայսրի և նրա ընտանիքի անդամների վրա: Բայց ավելին անել Յարուն առ-Ռաշիդին այդպես էլ չհաջողվեց, որն իր մահկանացուն կնքեց Թուսում 809 թ.:

Նիկիփորն օգտվելով այդ հանգամանքից, կրկին հրաժարվեց արաբների հետ իր կնքած պայմանագրից և վերցրած պարտավորություններից, և վերսկսեց պատերազմական գործողություններն արաբների դեմ: Այս անգամ հիմնական գործողությունները ծավալվեցին Միջերկրական ծովի ջրերում: Արաբական նավատորմը տարավ մի շարք հաղթանակներ Կիպրոսի, Յոոդոսի և Լիկիայի ափերի մոտ, բայց ավելին անել չկարողացավ:

Արաբա-բյուզանդական հարաբերությունները սրվեցին IX դարի 10-ական թվականների վերջերից, Բաբեկի ապստամբության շրջանում: Բյուզանդական կայսր Թեոֆիլը, գտնելով, որ խալիֆայությունը հիմնական ուշադրությունը և ռազմական ուժերը կենտրոնացրել էր հուրեմների ապստամարությունը ճնշելու վրա, նախահարձակ եղավ և կարողացավ գրավել մի քանի քաղաքներ և բնակավայրեր, որոնք մտնում էին «ալ-Ավասիմ» պաշտպանական գոտու մեջ: Գրավելով Ջիբեր-

թան, Սամոսատը և Մալաթիան, Բյուզանդիան խալիֆայությանը հետ մղեց դեպի արևելք և ընդուակ մոտեցավ Դայաստանի սահմաններին:

Խալիֆա Սամունը, զգալով խալիֆայության գլխին կախված վտանգը, այնուամենայնիվ, ուժ գտավ և անհրաժեշտ համարեց 830–833 թթ. չորս ռազմական արշավանք կազմակերպել ընդդեմ Բյուզանդիայի, կանխել հուրեմների հետ Բյուզանդիայի հնարավոր դաշինքի հաստատումը և կասեցնել բյուզանդացիների հետագա ներթափանցումը Դայաստանի և ընդհանրապես խալիֆայության խորքերը:

Բարեկի ապստամբության ճնշումից հետո, եր խալիֆայության ծեղքերն ազատվեցին, խալիֆա Սուլթանիմը, որը 833 թ. հաջորդել էր խալիֆա Սամունին, ստեղծելով մի նոր և հզոր բանակ, որի մասին ար-Թարարին նշում է, որ «Նա այնպես էր զինված ինչպես ոչ մի խալիֆայի բանակ նախկինում», 838 թ. ինչը ներխուժեց Բյուզանդական կայսրության տարածքները: Նա տարավ մի քանի տպավորիչ հաղթանակներ և տիրացավ Անորի քաղաքին: Մութասինը ծրագրում էր արշավել Կոնստանդնուպոլիսի վրա:

Սարսափահար բյուզանդական կայսր Թեոֆիլը օգնության խնդրանքով դիմեց Վենետիկի դոժին, Ֆրանկների բազավորին և Կորորդվայի Օնայյան խալիֆային: Բայց այդ օգնության կարիքն անհրաժեշտ չեղավ. քանի որ խալիֆա Սուլթանիմը, տագնապալի լուրեր ստանալով իր դեմ նախապատրաստվող զինվորական դավադրության մասին, հարկադրված էր դադարեցնել ռազմական գործողությունները Բյուզանդիայի դեմ և վերադառնալ իր մայրաքաղաքը:

Դրանից հետո երկու տերությունների հարաբերություններում տեղի չեն ունեցել աչքի ընկնող իրադարձություններ: Արդեն սկսվել էր Աբբասյան խալիֆայության թուլացման ու տրոհման շրջանը և խալիֆայությունն այլևս անկարող էր լուրջ սպառնալիքներ ստեղծել Բյուզանդական կայսրությանը:

## 5. Կրետեի և Սիցիլիայի գրավումը: Ներխուժում Իտալիա

IX դարի առաջին կեսին արաբները այնուամենայնիվ որոշ տերիտորիալ ծեղքերումներ ունեցան Եվրոպայում, բայց դա արդեն ուղղակիորեն առնչություն չուներ Աբբասյան խալիֆայության հետ:

825 թ. արաբները գրավեցին Կրետե կղզին, որ մինչ այդ պատկանում էր Բյուզանդական կայսրությանը: Դրանց այն արաբներն էին, ո-

րոնք 814 թ. արտաքսվել էին Կորդովայի խալիֆայությունից, մոտ 15 հազար մարդ, և ապաստանել Եգիպտոսում: Բայց այստեղ նրանք 818 թ. խռովություն բարձրացրին Արքայան խալիֆա Մամունի դեմ: 825 թ. այդ խռովությունը ճնշվեց և Եգիպտոսի կառավարիչը նպատակահարմար գտավ նրանց արտաքսել խալիֆայության տարածքներից: Վերջիններս նավեր նստելով, հեռացան Նեղոսի ափերից, ներխուժեցին Կրետե կղզի և տիրացան նրան: Նրանք կղզին վերածեցին մի ամրոցի և ծովահենության կենտրոնի: Լուրջ սպառնալիք ստեղծելով ազատ և անվտանգ նավագնացությանը և առևտորին: Միայն 961 թ. բյուզանդացիներին հաջողվեց իրենց տիրապետությունը վերահաստատել Կրետե կղզու վրա:

Դերք հասավ Սիցիլիային: Նրա նվաճումն իրականացվեց Իֆրիկիյայում (Թունիսում) IX դարի սկզբներին հաստատված Աղլարիների դինաստիայի, երկրամասի կառավարիչ Զիյադաթ-Ալլահ I կողմից: Այդ դինաստիան Իֆրիկիյան փաստորեն կառավարում էր Աբբասյան խալիֆայությունից անկախ:

Արաբների կողմից Սիցիլիայի գրավման առիթ հանդիսացան Սիրակուլայում տեղի ունեցած իրադարձությունները: 827 թ. Եֆիմ անունով բյուզանդական մի ստրատեգ ապստամբվեց, իրեն հայտարարեց կայսր և օգնության խնդրանքով դիմեց Իֆրիկիայի կառավարիչ Զիյադաթ Ալլահ I: Վերջինս դրականորեն արծագանքեց այդ խնդրանքին և 827 թ. յոթհազարանոց մի զորախումբ ուղարկեց Սիցիլիա: Նրանց ափի իջան Մազարյայում, որը դարձավ կարևոր հենակետ արաբների հետագա գործողությունների համար:

Եֆիմը, որն այլևս արաբներին պետք չէր, սպանվում է բյուզանդացիների ծեղքով: Մակայն դա այլևս չէր կարող կասեցնել արաբների կողմից Սիցիլիայի գրավումը: 831 թ. նրանք գրավում են Պալերմոն, ապա Սեսսինան, իսկ 878 թ., իննամսյա պաշարումից հետո, վերջապես ընկնում է նաև Սիրակուլան: Սիցիլիայի ամբողջական գրավումն իրականացրեց Իբրահիմ II Աղլարին:

Արաբները չբավարարվեցին Սիցիլիայի գրավումով և սրբազն պատերազմը տարածեցին Խտալիայի վրա: Անցնելով Սիցիլիան Խտալիայից բաժանող նեղուցը, նրանք նեխուժեցին Ապենինյան թերակղզի, մտան Կալարրիա և գրավեցին Լանգորարդների հերցոգին պատկանող Տարենտո նավահանգստային քաղաքը: Կալարրիայում և նրան սահմանակից Ապալուլիայում արաբները գրավեցին Բյուզանդիային պատկա-

Առաջ մի քանի կարևոր բնակավայրեր և հենակետեր, որոնց մեջ առանձնահատուկ նշանակություն ունեցավ Բարիի գրավումը: Այստեղ տեղի ունեցած ծովային ճարտերում արաբական նավատորմը փայլուն հաղթանակ տարավ Բարիին օգնության եկած Վենետիկի նավատորմի նկատմամբ: Իսկ արաբական հետևակը և հեծելազորը պարտության մատնեց Լեռպոլդ II կայսրի բանակներին:

Տիրապետելով իտալական և սիցիլիական նավահանգիստներին, արաբները դրանք հենակետերի վերատեցին, որտեղից ծովահենական հարձակումներ էին գործում Իտալիայի, անգամ Հարավային Ֆրանսիայի ափերի, ինչպես նաև Սիցիլիական ծովի տարբեր կղզիների վրա:

Նրանք այնքան համարձակ դարձան, որ 846 թ. կարողացան սպառնալ Ջոռմին, երբ արաբական գորաջոկատները հայտնվեցին Հավրժական քաղաքի պարիսպների մոտ: Իտալացիները կարողացան արաբներին հետ շպրտել, բայց երեք տարի անց նրանք կրկին սպառնացին Ջոռմին: Այս անգամ իտալական նավատորմը կարողացավ պարտության մատնել արաբական նավատորմը և վերացնել Ջոռմի վրա կախված անմիջական վտանգը:

Բայց, այդուհանդերձ, արաբների տիրապետությունը դեռևս այնքան ամուր էր, որ Ջոռմի Յովիաննես VIII պապը (872–882 թթ.), ստիպված էր, ինչպես նշում է Ֆ. Դիբրին, «Երկու տարի հարկ վճարել» մուլտուլմաներին:

Աղլարիները 869 թ. գրավեցին նաև Մալթա կղզին:

## 6. Աբբասյան խալիֆայության արտաքին առևտրական կապերը

Արտաքին առևտուրը Աբբասյան խալիֆայության արտաքին քաղաքանության մի առանձին բնագավառն էր, որն ուներ իր որոշակի դերակատարումը: Խալիֆայությունը, որը գրավում էր կարևոր աշխարհագրական դիրք, տարածված էր ասիական և աֆրիկյան մայրաքանչերի վրա, ծգվում էր Յնդկական օվկիանոսից մինչև Ասլանտյան օվկիանոս, ուներ բազմատեսակ և հարուստ բնական ռեսուրսներ, անփոխարինելի գործընկեր էր աշխարհի շատ երկրների համար: Նրանք զգում էին արաբական տարատեսակ ապրանքների կարիքը, իսկ խալիֆայությունն էլ իր հերթին զգում էր ասիական, եվրոպական և աֆրիկյան արտադրանքի կարիքը:

Արտաքին առևտրից ստացված եկամուտները խալիֆայության գանձարանը հարստացնելու և ռազմական վիթխարի ծախսները հոգալու կարևոր աղբյուրներից մեկն էին:

Միջազգային տարանցիկ կարևոր կենտրոն էր Բաղդադը, որը գտնվելով ցամաքային-քարավանային և գետային-ծովային համաշխարհային մայրուղիների խաչմերուկում, մագնիսի պես իրեն էր զգուն տարբեր ազգությունների մանր և խոշոր վաճառականներին: Բաղդադը, Բարսան և այլ կարևոր առևտրական կենտրոնները և Իրաքի տարածքով անցնող առևտրական ուղիները Միջերկրական ծովի և Հարավային Եվրոպայի երկրները կապում էին Հնդկաստանի, Չինաստանի, Ինդոնեզիայի և Հեռավոր Արևելքի աշխարհագրական գոտու այլ երկրների հետ: Եվրոպական ապրանքները Հեռավոր Արևելք և հակառակ ուղղությամբ կարող էին հասնել իհմնականում խալիֆայության տարածքով անցնող մայրուղիներով: Եվ, ընդհակառակը, արևելյան արտադրության առարկաների համար Միջերկրածովյան երկրներ և նրանց միջոցով Դարավային Եվրոպա հասնելու ավելի կարճ և ավելի հարմարավետ ուղիներ, քան խալիֆայության տարածքով անցնող առևտրական ուղիներն էին, գոյություն չունեին:

Խալիֆայությունն իր հարմար աշխարհագրական դիրքի շնորհիվ իրար էր միացնում Միջերկրական, Կարմիր, Սև ծովերի և Պարսից ծոցի ավագանի երկրները, բարեբեր ու հարուստ տարածքները: Դրա շնորհիվ աշխարհի քարտեզի վրա որպես խոշոր առևտրական միջազգային կենտրոններ հայտնվեցին ոչ միայ Բաղդադը, Բասրան և Կուֆան Իրաքում, այլև Ֆուստարը և Ալեքսանդրիան Եգիպտոսում, Ղամասկոսը Սիրիայում, Կայրավանը և Ֆեսը Ջյուსիսային Աֆրիկայում, Ծիրազը, Սպահանը և Ուսյը Իրանում, Նիշապուրը և Մերվը Խորասանում, Սամարդանը և Բուխարան Մավրաննահրում և այլն: Առևտրական կարևոր կենտրոնի վերածվեց Պարսից ծոցի ափին գտնվող Միրաֆքը:

Միջազգային առևտրի բուռն և աշխույժ զարգացման շնորհիվ վաճառականը դառնում է կարևոր դեմք առևտրի և տնտեսության ոլորտում, որի ֆունկցիաները շատ հաճախ միահյուսվում էին դիվանագիտական առաքելության հետ, որն ավելի էր բարձրացնում նրա հասրակական կշիռը:

Միջազգային տարանցիկ առևտրի զարգացումը նպաստեց միջազգային և տեղական շուկաների ծնավորմանը: Վաճառականը՝ «քաջիր», իր ապրանքների արտահանման և ներմուծման համար օգտա-

գործում էր միջազգային առևտրական կենտրոնների շուկաներում հատուկ այդ նպատակների համար ստեղծված պահեստները իրենց ապրանքները երկար ժամանակով պահեստավորելու և գնորդների հետ գործարքներ կնքելու համար:

Ասիական, աֆրիկյան և եվրոպական շուկաներում կարելի էր գտնել եգիպտական վուշի կտորեղեն, սիրիական մետաքսյա և ապակյա ապրանքներ, մետաղյա իրեր, այդ բվում զենք, ամանեղեն և այլն, իրանական գործեր և նախշազարդ գործվածքներ, շաքար խուզիստանից և այլն: Խալիֆայությունն արտահանում էր բանքակ, որն աճում էր Կուֆայի շրջանում: Մեծ տեղ էր գրավում մետաղների արտահանությունը: Աբրասյան խալիֆայության տիրապետության տակ գտնվող Երկրներում արդյունահանվում էին զանազան մետաղներ, որոնք այնուհետև արտահանվում էին աշխարհի տարրեր կողմեր: Այսպես, օրինակ, պղինձ էր արդյունահանվում Իրանում, Հայաստանում, Սիցին Ասիայում, Ջյուսիսային Աֆրիկայում և Անդալուսիայում, կապար, արճիճ և սնդիկ Իրանում, նաև Ջյուսիսային Իրաքում և այլն: Արաբական արտաքին առևտրում զգալի տեղ էին գրավում նաև արհեստագործական զանազան իրեր, պատրաստված մետաղից, փայտից, կաշվից և այլն:

Արար ծովագնացները, որոնք աչքի էին ընկնում համարձակությամբ և հմտութ էին նավավարության մեջ, հասնում էին մինչև Հնդկաստան, Ցեյլոն, Ինդոնեզիա և Չինաստան: Եթե մինչև VIII դարը Հնդկական օվկիանոսում առևտրի բնագավառում առաջնությունը պատկանում էր չինական վաճառականներին, ապա VIII դարից սկսած նախածեռնությունն անցնում է Բասրայի ծովագնացներին: Նրանք այնքան են հմտանում նավաշինության և ծովագնացության ասպարեզում, որ գերազանցում են և հնդկացիներին, և չինացիներին և տիրապետող դիրքեր գրավում մի շարք ապրանքների առևտրի մեջ:

Հնդկաստանում և Չինաստանում ստեղծվում են արաբական առևտրական ֆակտորիաներ: Այդ երկրների առևտրական կենտրոններում, մասնավորապես Հնդկաստանի արևմտյան ափում, այնքան մեծ քանակության արաբներ և այլ մուսուլմանական ժողովուրդներ են կուտակվում, որ կառուցվում են բազմաթիվ մզկիթներ, սահմանվում է սեփական դատավարություն, հիմնված շարիհաթիվ սկզբունքների վրա, որն իրականացնում էին կաղիները: Չինաստանում արաբների համար գլխավոր կենտրոն դառնում է Կանտոնը, որտեղ ամբողջ թաղամասեր բնակեցված էին մուսուլմաններով: Ինչպես Հնդկաստանում, այստեղ

նույնպես կառուցվում են մզկիթներ և արդարադատությունն իրականացնում էին կաղիներն ըստ շարիաթի:

Երբեմն բախումներ էին լինում տեղական բնակչության և առևտրական նույնության մուսուլմանական բնակչության միջև: 758 թ. Չինաստանի Կան-Ֆու՝ Կանտոն քաղաքում տեղի ունեցան արյունալի բախումներ տեղացիների և արաբների միջև, որը վերածվեց ջարդերի: Նման դեպքերը, թեև հազվադեպ էին, սակայն բացասաբար էին ազդում առևտրի զարգացման վրա:

Արբայսան խալիֆայության և Չինաստանի միջև հաստատված ծովային առևտրական կապերը եկան լրացնելու «մետաքսյա ուղիով» հնուց ի վեր գործող քարավանային առևտուրը, որն ավելի հուսալի ու ապահով էր, ազատ ծովային արհավիրքներից և ծովահենների ավագակային հարձակումներից: «Մետաքսյա ուղին», բացի դրանից, ավելի լավ էր յուրացված և ուներ իր կայուն երթուղին, որից քարավանները սովորաբար չէին շեղվում: Նա անցնում էր Սամարդանով, Բուխարայով, Ույով, Ջամադանով և մտնում Բաղրադ:

Բաղրադից «Մետաքսյա ուղին» ճյուղավորվում էր և մի ճյուղը Դայաստանի Վրայով դուրս գալիս Տրապիզոն, Սև ծովի ափ, որտեղ Չինաստանից, Չնոկաստանից, Խնորնեզիայից, Ցեղյոնից և հեռավորարևեսան այլ երկրներից բերված ապրանքները, ինչպես և խալիֆայության ապրանքները, բարձում էին բյուզանդական առևտրական նավերի վրա և արտահանում եվրոպական երկրներ:

Մյուս ճյուղը դուրս էր գալիս Միջերկրական ծովի ափերին գտնվող Սիրիայի նավահանգիստներ և այդ ճանապարհով ապրանքները հասնում էին Ջուսիսային Աֆրիկայի երկրներ և Հարավային Եվրոպա, գլխավորապես Իտալիա, Ֆրանսիա, Իսպանիա և այլն:

Եվ, վերջապես, «Մետաքսյա ուղու» Բաղրադից սկիզբ առնող երրորդ ճյուղավորումը խալիֆայության մայրաքաղաք Կուֆայի, Մեքքայի և Մեդինայի միջոցով կապում էր Արաբիայի և Աֆրիկայի, ինչպես նաև Կարմիր ծովի նավահանգիստների հետ:

Ինչ վերաբերում է առևտրական հարաբերություններին Բյուզանդական կայսրության հետ, ապա դրանց կայուն և լայնածավալ զարգացմանը մեծապես խոչընդոտում էին հաճախակի կրկնվող պատերազմական գործողությունները, մշտական բախումները և ոչ բարյացական մթնոլորտը, որը բնորոշ էր երկու հարեւան պետությունների հարա-

բերություններին: Այդուհանդերձ, արարական ապրանքները հասնում էին Կոնստանտինոպոլիս և այնտեղից արտահանվում Եվրոպա:

Արքայան խալիֆայությունը առևտրական կապեր էր հաստատել նաև Կիևյան Ռուսիայի, ոռւսական տափաստանների թուրքական քոչվոր ցեղերի և Խազարական կազանարի հետ: Կիևյան Ռուսիայում արար առևտրականները գնում էին սաք, որ սլավոնները թերում էին Բալթիկայից: Խազարների հետ առևտրին նպաստում էր այն հանգամանքը, որ նրանց մայրաքաղաքում՝ Իրիում, ծնավորվել էր մուսուլմանական համայնք, որը առևտրական միջնորդի դեր էր կատարում: Այստեղ արարները գնում էին թանկարժեք նորթիներ:

Արքայան խալիֆայությունը Զինաստանից ներմուծում էր մետաքսյա կերպաս, հախճապակի, համեմունքներ, արհեստագործական ապրանքներ և այլն, Հնդկաստանից տեքստիլ ապրանքներ, մետաքսյա կտոր, համեմունքներ, Մալակկայի թթավաղուց ոսկի և կապար, Սումատրայից ոսկի, համեմունքներ, թշկական բույսեր, Ջյուսիսային Բոր-նեոյից մարգարիտ, Ֆիլիպպիններից ոսկի ու փղոսկր, և այլն:

Արար առևտրականները, որոնք չեն սահմանափակվում Աֆրիկայի հետ առափնյա առևտրով, թափանցում էին այդ մայրցամաքի խորքերը, հասնում մինչև հասարակածային գոտի և կատարում քավականին աշխույժ առևտուր: Այստեղ նրանք աղջ փոխանակում էին ոսկու հետ, ներմուծում թանկարժեք քարեր, փղոսկր, գունավոր արժեքավոր փայտ, տարաշխարիկ գազանների մորթիներ, ջայլամի փետուրներ և այլն: Սակայն Աֆրիկան արաբների համար հանդիսանում էր սեամորք ստրուկների գնման գլխավոր կենտրոնը, որտեղ էժան գնված ստրուկները հարյուրավոր նավերի վրա թեռնելով թերում էին խալիֆայություն կամ վերավաճառում այլ երկրներ: Արար առևտրականները ստրուկներին գնում էին դրա դիմաց հիմնականում աղ վճարելով:

Խալիֆայությունը ստրուկներ ներմուծում էր նաև Արևելյան Եվրոպայից և Միջին Ասիայից, հատկապես թուրք ստրուկներ: Արևելյան Եվրոպայում գնում էին սպիտակ գերիներ, ինչպես նաև մեղր, մեղրամոմ, որից մոմ էին պատրաստում և այլ ապրանքներ:

Արքայան խալիֆայությունը Եվրոպական երկրներից ներմուծում էր մետաղ՝ զենք և զրահ պատրաստելու համար, որի կարիքը շատ էր զգում խալիֆայական մեծաքանակ քանակը, մորթեղեն, կաշվեղեն, անտառանյութ նավաշինության համար և այլն:

Իսկ խալիֆայությունն աշխարհի տարբեր երկրներ արտահանում էր պերճանցի առարկաներ, զենց, մետաղյա արհեստագործական զանազան տեսակի, այդ թվում և կենցաղային առարկաներ, ամանեղեն, սննդանքերը, աղ, մրգեր, հատկապես արմավ, տեղական արտադրության կտորներն: Մեծ տեղ էր գրավում արարական հանրահոչքակ նժույգների արտահանումը: Միջնադարյան աղբյուրները վկայում են, որ յուրաքանչյուր տարի խալիֆայության Սիրաֆ նավահանգստից հարավ-արևնեան Դնդկաստան էր արտահանվում մի քանի տասնյակ հազար ծի: Դրանց պետք է ավելացնել տարատեսակ համեմունքները, քուսատեսակները և այլն:

Աբբասյանների ժամանակ արտաքին առևտորին բնորոշ էր մի առանձնահատկություն: Արտաքին առևտուրը չէր հանդիսանում որևէ մեկ էրենկական կամ կրոնական խմբի մենաշնորհը: Արտաքին առևտուրն իրականացնում էին խալիֆայությունում բնակվող բոլոր կրոնների ներկայացուցիչները՝ մուսուլմանները, քրիստոնյաները, հրեաները և զրադաշտականները: Նրանցից յուրաքանչյուրը նախապատվությունը տալիս էր կոնկրետ որևէ աշխարհագրական գոտու և ապրանքներ տեսականու:

Այսպես, օրինակ, Դնդկական օվկիանոսի ավագանում կատարվող առևտուրը հիմնականում գտնվում էր արաբների և պարսիկների ծեռքում, իսկ այդ օվկիանոսից այն կողմ ընկած շրջանի առևտորի մեջ տիրապետող դերակատարում ունեին քրիստոնյաները և հրեաները: Սակայն այստեղ կար մի յուրահատկություն: Հրեաները և քրիստոնյաներն իրենց առևտուրը կատարում էին ոչ թե սեփական, այլ մուսուլմաններին պատկանող նավերով, որը, հավանաբար, նրանց ապահովում էր խալիֆայության հովանավարությունը և պաշտպանությունը:

Իսկ Արևմուտքի հետ կատարվող առևտորի մեջ պատկերն այլ էր: Այստեղ գործնականում չկային արաբներ և պարսիկներ, այլ կերպ ասած մուսուլմաններ: Արևմուտքի հետ առևտորի մեջ գլխավոր դերը պատկանում էր հարավյային խոալացիներին և Վենետիկի վաճառականներին: Իրենց դերակատարումն ունեին նաև Խսպանիայի և Ֆարավային Ֆրանսիայի հրեաները: Հրեա վաճառականները մեծ դերակատարում ունեին նաև Արևելքի հետ Արևմուտքի առևտորի մեջ: Նրանք էին հանդիսանում Արևելքին ներքինիներ, ստրուկներ և ստրկուիկներ մատակարարողները:

Խալիֆայության առևտրականները, բացի ապրանքափոխանակությունից և առևտրական նոր ուղիների յուրացումից, մի կարևոր ծա-

ոայություն ևս են մատուցել մարդկությամբ։ Նրանց մեջ քիչ չեն եղել գրասեր և հետաքրքրասեր մարդիկ, որոնք ունեցել են նույր դիտողականություն և գրի են առել իրենց տեսածն ու լսածը։ Նրանք թողել են արժեքավոր գրառումներ իրենց այցելած երկրների և քաղաքների, ճանապարհների, առևտրական քարավանային և ծովային ուղիների մասին, տեղաբնիկների, նրանց կյանքի, ապրելածնի, նիստուկացի վերաբերյալ։

Այսօր դրանք ներկայացնում են որոշակի հետաքրքություն Արաբական խալիֆայության, նրա հարակից և հեռավոր երկրների միջնադարյան պատմության ուսումնասիրության տեսանկյունից։

## Գլուխ դրամներորդ

### **ԱԲՐԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՏՐՈՅՈՒՄԸ (IX-X ԴԱՐԵՐ)**

#### **I. ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՏՐՈՅՄԱՆԸ ՆՊԱՏՈՂ ԱԶԴԱԿՆԵՐԸ**

VIII դարի 50-ական թվականներից մինչև IX դարի 40-ական թվականների վերջը համարվում է Աբրասյան խալիֆայության ոսկե դարը: Նա ընդգրկում է մոտ հարյուրամյա մի դարաշրջան, Աբրասյան դինաստիայի հիմնադիր խալիֆա Աբու-ալ-Աբրասից մինչև խալիֆա ալ-Կասիկի գահակալության ժամանակահատվածը, երբ խալիֆայության գարգացումն ընդհանուր առմանք ընթանում էր վերընթաց ուղիով:

Նա իր հզորության և փառքի գագաբնակետին հասավ խալիֆա Հարուն առ-Ռաշիդի գահակալության տարիներին, 786-809 թվականներին:

Իսկ անկման շրջանն սկսվում է խալիֆա ալ-Կասիկից հետո, որը գահակալել է 842-847 թվականներին: Եվ դրանց հետո չեղավ մի ուժ, որն ի վիճակի լիներ կանխել խալիֆայության անկասելի գահավիժումը, որն ավարտվեց 1258 թ., երբ Չուլաղու խանի մոնղոլական հորդաները գրոհով վերցրեցին Աբրասյան խալիֆայության նայրաքաղաք Բաղդադը:

#### **1. Հարուն առ-Ռաշիդի ճակատագրական սխալը**

Հարուն առ-Ռաշիդին շատ էր մտահոգում իր ժառանգորդի հարցը: Շատ լավ ծանօթ լինելով խալիֆայությունում տիրող քաղաքական կուլտուրային ու բարքերին, որի ամենաեական նաև մեկը գահակալ

Խալիֆայի մահից հետո դաժան պայքարն էր գահի համար, նա որոշեց դիմել մի քայլի, որն, ըստ նրա, կարող էր կանխել երկապառակությունը և արյունալի պատերազմները գահի համար և համագործակցություն հաստատել տարբեր քաղաքական ուժերի միջև իր մահվանից հետո:

Դարուն առ-Ռաշիդն ուներ երկու որդի, որոնց տարբեր կանացից էին: Նրանցից մեծը Մամունն էր, որը ծնվել էր պարսկուիի հարմից, իսկ փոքրը՝ Ամինը, ծնվել էր Ջարունի Կոնոչից, Զուրբեղայից, որը սերում էր արարական հաշիմյան ընտանիքից: Իսկ հաշիմյան տոհմը մեծ հեղինակություն էր վայելուն արարական աշխարհում: 782 թ. Ջարուն առ-Ռաշիդը իր փոքր որդուն, Ամինին նշանակեց իր գահակալ ժառանգորդը, շրջանցելով ավագ որդուն: Այդ քայլն ուրախությանք ընդունեց արարական վերնախավը, սակայն, պետք է ենթադրել, դա հավանաբար առաջացրել է պարսկական ավագանու, որի դիրքերը դեռ բավականին ուժեղ էին արքունիքում, դգործությունը:

Այդ վարկածի օգտին է խոսում այն հանգամանքը, որ յոթ տարի անց, 799 թ. Ջարուն առ-Ռաշիդը փոփոխություն մտցրեց իր որոշնան մեջ, քայլ բավականին տարօրինակ կերպով: Նա Սամունին նշանակեց գահի երկրորդ ժառանգորդ Ամինից հետո:

Այսպիսով, պաշտոնապես խալիֆայության գահի երկու ժառանգորդ հաստատվեց: Դրան 802 թ. հաջորդեց մի նոր, ոչ պակաս տարօրինակ քայլ: Ջարուն առ-Ռաշիդը Ամինին նշանակելով գահի առաջին ժառանգորդ, միաժամանակ նրան նշանակեց իրաքի, Սիրիայի, Արաբիայի, Եգիպտոսի և Ջուսիսային Աֆրիկայի կառավարող, կուսակալ: Այլ կերպ ասած նա իր արաք կոնոչից ունեցած որդուն տվեց հիմնականում այն երկրները և շրջանները, որոնք համարվում էին արարական:

Իսկ գահի երկրորդ ժառանգորդ Մամունին նշանակեց խալիֆայության արևելյան շրջանների՝ Խորասանի կառավարող: Այդ շրջաններում գերակայում էին պարսիկները և նրանց մշակույթն ու ազդեցությունը: Ամինն իրավունք չուներ Մամունին երբնից զրկել այդ պաշտոնից:

Ջարուն առ-Ռաշիդը հավանաբար այնքան է մտահոգված եղել խալիֆայության գահի ժառանգորդի հարցում, որ, չբավարարվելով այդ բոլորով, իր որոշումը հավաստի և հուսալի դարձնելու նպատակով 802 թ. իր երկու որդիների հետ ուխտագնացություն կատարեց Մեքքա, որտեղ սուրբ Կաարայի մոտ եղբայրները հանդիսավոր երդում տվեցին հարգել իրենց հոր որոշումը: Իսկ այդ որոշումը կան խալիֆայական հատուկ հրովարտակը ազդարարում էր, որ Մամունը պարտավորվում էր

հավատարիմ մնալ իր եղբորը, Ամինին, նրա խալիֆա դառնալուց հետո: Նոյն իրովաստակն արգելում էր Ամինին ոտնահարել իր եղբոր, Մամունի իրավունքները, և պարտավորեցնում էր նրան խստիվ հետևել իր հոր պատգամներին:

Այսպիսով, Դարուն առ-Ռաշիդը կատարեց խալիֆայության պատճության մեջ աննախադեպ մի քայլ: Նա նշանակեց գահի միաժամանակ երկու ժառանգորդ և խալիֆայությունը փաստորեն բաժանեց երկու մասի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր օրինական կառավարողը: Կրտաքրության խալիֆայությունը մնում էր միասնական պետություն, քանի որ նա ուներ մեկ խալիֆա: Բայց քանի որ նա իրավունք չուներ զրկել իր եղբորը, խալիֆայության երկորդ մասի կառավարողին, իր ժառանգական իրավունքներից խալիֆայության մի կեսի նկատմամբ, ապա ստացվում էր, որ խալիֆայությունը դեռ ֆակտո բաժանվում էր իրար հավասար մասերի: Ամեն մասն ուներ իր մայրաքաղաքը: Ամինին բաժին ընկած մասում մայրաքաղաքը շարունակում էր մնալ Բաղդադը, իսկ Մամունին տրված արևելյան մասի մայրաքաղաքը դարձավ Սերվը:

\* Իր այս անհետատես քայլով Դարուն առ-Ռաշիդը, անկախ այն բանից, նա ցանկանում էր, թե ոչ, խալիֆայության քաղաքական իրողության, քաղաքական կուլտուրայի մեջ ներդրեց խալիֆայության բաժանման կամ տրոհման գաղափարը և այդ գաղափարը գործնականում կենսագործելու հնարավորությունը:

Դարուն առ-Ռաշիդի այս ճակատագրական սխալը շատ թանկ նստեց խալիֆայության քաղաքական հետագա ճակատագրի վրա: Դետագյուտ մեկ անգամ չէ, որ այդ պարադիգման օգտագործվելու է խալիֆայության տրոհման կողմնակիցների կողմից իրենց անջատողական գործողությունների արդարացման համար:

Դարուն առ-Ռաշիդը, ինչպես նշվել է, մահացավ 809 թ. Թուսում: Երկու եղբայրներն էլ մեկնեցին Թուս և այստեղ Մամունը, համաձայն իր հոր կամքի, Ամինին ընդունեց որպես խալիֆա և նրան հավատարմության երդում տվեց:

Թվում էր, թե ամեն ինչ կընթանա Դարուն առ-Ռաշիդի կամքին և եղբայրների կողմից Սեքքայում տրված հանդիսավոր երդմանը համապատասխան: Բայց դեպքերի արագ գարգացումները եկան հաստատելու այն իրողությունը, որը պետությունը չի կարող ունենալ երկու ժառանգորդ և երկու պոտենցիալ կառավարող:

Եղբայրների միջև, նրանց հոր մահից շատ չանցած, սկսվեց հակամարտություն, որն այնուհետև վերածվեց բացահայտ պատերազմի: Ամինը, խախտելով բոլոր պայմանավորվածությունները, 810 թ. գահի ժառանգորդ նշանակեց իր որդուն: Խսկ դա նշանակում էր, որ նրանից հետո գահին բազմելու էր ոչ թե Սամունը, այլ Ամինի որդին:

Մամունը, բնականաբար, իր անհամածայնությունը հայտնեց Եղբոր որոշման դեմ, այն համարելով ընդունված որոշումների խախտում և իր իրավունքների ոտնահարում: Ի պատասխան, Ամինը 811 թ. արձակեց մի իրովարտակ ևս՝ Մամունին արևելյան շրջանների փոխարքայի պաշտոնից գրկելու մասին:

Այսպիսով, Ամինը միանգամից խախտեց Հարուն առ-Ռաշիդի կողմից սահմանված երկու կարուղո նախապայմանները:

Մամունը չենթարկվեց Ամինի կամքին, նրա ընդունած երկու որոշումն էլ համարելով անօրինական: Եվ ի հաստատումն իր իրավունքների, նա Մերվում սկսեց սեփական դրամ հատել, որը տվյալ պարագայում նշանակում էր երկու բան. նախ, որ ինքն ունի գահի նկատմամբ այնպիսի հավակնություններ, ինչպես Ամինը, և, երկրորդ, որ նա հանդիսանում է պետության դեկավար. որը գտնվում է Ամինի իրավասության շրջանակներից դուրս:

Հարաբերությունները երկու եղբայրների միջև խզվեցին և Արբասյան խալիֆայության բաժանումը երկու նասերի ավելի խորացավ:

Դասկանալի է, որ նճան վիճակը երկար չէր կարող պահպանվել, դա լավ էր հասկանում առաջին հերթին խալիֆա Ամինը, որին ծեռնոտու չէր ստեղծված վիճակը: Եվ նա եղավ եղբոր դեմ պատերազմի նախաձեռնողը: 811 թ. նրա գործերը հարձակվեցին Սամունի գործերի վրա:

Չենց սկզբից Ամինը քաղաքական և բարոյական առունով հայտնվեց ավելի անբարենպաստ վիճակում, քանի որ նա դարձավ իր հոր, Հարուն առ-Ռաշիդի կամքի և Մերվայում ծեռք բերված համածայնության խախտողը:

Ամինի գործերի հարձակումը, որի շարքերում գտնվում էին դեռևս առ-Ռաշիդի ժամանակ կազմավորված թուրքական զորաջոկատներ, անակնկալ չէր Սամունի համար: Վերջինիս գործերը 811 թ., խորասանցի թակիրի և Հարսամի գլխավորությանք պարտության նատնեցին Ամինի գործերին Ույի և Համադանի մոտ: Սամունի գործերը տանում էին հաղթանակներ և գրավելով Արևմտյան Իրանը, 812 թ. նոտեցան Բաղդադին և շրջապատեցին այն: Ամինի շատ կողմնակիցներ անցան Մամունի

կողմը: Դասկանալով, որ նա չի կարող երկար ժամանակ պաշտպանել Բաղրադը, Ամինը եղրորդ տեղյակ պահեց, որ պատրաստ է հրաժարվել գահից հօգուտ նրա, պայմանով, որ խնայեն նրա և նրա ընտանիքի անդամների կյանքը: Երբ Մամունին փոխանցեցին Ամինի այս առաջարկությունը, ապա նա բանբերին լուսայն տվեց մի շապիկ, որն ելուստ չուներ գլխի համար: Արաբական ավանդույթի համաձայն դա նշանակում էր մահ և որ Մամունին պետք էր Ամինի գլուխը:

813 թ. սեպտեմբերին Բաղրադն ընկավ և խորասանցիները թափիրի գլխավորությամբ ներխուժեցին խալիֆայության մայրաքաղաքը: Ամինը փորձ կատարեց նավակով աննկատ հեռանալ Բաղրադից: Բայց դա նրան չհաջողվեց: Նա սպանվեց Թափիրի գինվորների կողմից: Արքայան խալիֆայության գահն անցավ Մամունին, որը դարձավ այդ դինաստիայի յոթերորդ խալիֆան և գահն իր ծեռում պահեց մինչև 833 թ.:

Այսպիսի վախճան ունեցավ Դարուն առ-Ռաշիդի քաղաքական նախաձեռնությունը, որը լրիվ ծախողում կրեց: Սակայն նրանց մնաց միասնական խալիֆայության հնարավոր բաժանման գաղափարը, որը հետագայում ունեցավ իր անկանխատեսելի բացասական հետևանքները:

Կարելի է ասել, որ խալիֆայության տրոհման առաջին քարը դրեց Դարուն առ-Ռաշիդը:

## 2. Կենտրոնախույս ուժերի դիրքերի ամրապնդումը: Բաղրամական, էրնիկական և կրոնական հակասությունների սրումը խալիֆայությունում

Արաբական խալիֆայությունն մի ընդարձակ կայսրություն էր, որը միավորում էր բազմաթիվ և տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների, որոնք տարբեր մշակույթների կրողներ էին, դավանում էին տարբեր կրոններ և ունեին միմյանց հակադիր քաղաքական հավատամք:

Այսպիսի խայտարդետ ուժերը, որոնք մեծամասամբ ընդհանուր ոչինչ չունեին միմյանց հետ, միավորվել էին մեկ պետության մեջ ոչ թե կամավոր կերպով, այլ ուժի միջոցով. նվաճումների և բռնության ճանապարհով: Այլ կերպ ասած, խալիֆայությունը բռնապետություն էր: Իսկ բռնապետությունը, ինչպես վկայում է պատմական փորձը, կարող է իր գոյությունը պահպանել այնքան ժամանակ, քանի դեռ ի զորու են նրա ստեղծման իմբնական գործոնները՝ ուժը և բռնությունները, և քանի դեռ կենտրոնական կառավարությունն ի վիճակի է վերահսկել իրադրությու-

նը, բոլորին հավաքել իր թօի մեջ, և այնքան հզոր է, որ կարող է իրականացնել կենտրոնաձիգ ուժի իր ամենազիստը՝ ֆունկցիան: Եթե խախտվում է այս համամասնությունը և թուլանում համակարգի որևէ օդակ, ապա այդ կայսրությունն ի վերջո դատապարտված է կործաննան:

Արարական խալիֆայության հետ հենց դա պատահեց Աբբասյան դինաստիայի տիրապետության ժամանակաշրջանում:

Թուլացումն ու քայրայումն սկսվեց գլխից, վերսից, արքունիքում ծայր առաջ առաջ ներդինաստիական պատերազմներից, որի սկիզբը դուեցին Դարուն առ-Շաշիդի երկու որդիները՝ Ամինը և Մամունը: Կարելի է ասել, որ նրանց պատմական այդ «նախաճենությունն» ունեցավ իր հետևորդների մի ամբողջ բանակ: Եղբայրասպան հակամարտությունները և արյունակի բախումները վերածվեցին սովորական երևոյթի Աբբասյան խալիֆայությունում և դարձան նրա կառավարման համակարգի և քաղաքական կուլտուրայի անբաժան մասը: Դա հանգեցրեց կենտրոնական իշխանության ու արքունիքի և դրանց մարմնակորումն հանդիսացող խալիֆայի դիրքերի թուլացմանը և հեղինակագրկմանը: Իսկ դա նշանակում է մահագուշակ դողանց ուզած բռնապետության, մանավանդ արևելյան տիպի բռնապետության համար:

Արքունիքի և խալիֆայի դիրքերի թուլացումը նշանակում էր կենտրոնաձիգ ուժերի դիրքերի թուլացում, հսկողության թուլացում խալիֆայության ծայրամասերի վրա, որը գործունեության լայն ասպարեզ բացեց տարատեսակ կենտրոնախույս ուժերի գործունեության համար:

Այս բնագավառում իր ներդրումն ունեցավ նաև հակամարտությունն արարական և պարսկական վերնախավի միջև, որոնք առաջատար դերակատարում ունեին Աբբասյան խալիֆայությունում: Դակամարտությունը նրանց միջև ծագել էր դեռևս Աբբասյան դինաստիայի կառավարման առաջին խել տարիներից: Այդ հակամարտությունը կամ պայքարը գնում էր այն բանի շուրջը, թե նրանցից ով պետք է տիրապետող լինի խալիֆայության կառավարման համակարգում և ունենա վճռորոշ ազդեցություն խալիֆայի վրա:

Աբբասյան խալիֆաների կառավարման սկզբնական փուլում, երբ նրանք բավականին հզոր էին, նրանք կարողանում էին արարա-պարսկական հակամարտությունը պահել իրենց հսկողության ներքո և դնել որոշակի շրջանակների մեջ: Նրանց հաջողվում էր արարական և պարսկական վերնախավի ներուժը ծառայեցնել իրենց իշխանության և խալիֆայության ամրապնդման շահերին:

Արաբական և պարսկական վերնախավի հակամարտության դրսերում էր հանդիսանում նաև Ամին-Մամուն հակամարտությունը: Արար մորից ծնված Ամինին գահի թիվ մեկ ժառանգորդ նշանակելը, իսկ ապա նաև խալիֆայության գահին նրա բազմելը, արաբական արիստոկրատիան համարեց իր հաղբանակը և ցնծությամբ ընդունեց այդ իրադարձությունը:

Պարսկական վերնախավը, որը մեկ անգամ չէ, որ առաջնային դերակատարում էր ունեցել խալիֆայության կառավարման համակարգում, նույնիսկ խալիֆաների կրթության և դաստիարակության գործում, իիշենք թեկուզ Բարսմաքիներին, Ամինի հաղբանակն ընդունեց որպես իր պարտությունը, որի հետ ոչ մի կերպ չէր ցանկանաում հաշտվել: Նա իրեն մխիթարում էր նրանով, որ Յարում առ-Շաշիդը, խալիֆայությունը երկու մասի բաժանելով, կայսրության արևելյան մասի, որը հիմնականում բնակեցված էր պարսիկներով և պարսկական մշակույթի ոլորտում գտնվող ժողովուրդներով, փոխարքա նշանակեց պարսկուիի հարճից ծնված Մամունին: Եվ նա հետագայում Ամինի նկատմամբ Մամունի հաղբանակը, որը կոնկուրսում մեծ դեր խաղաց, ցնծությամբ ընդունեց որպես իր հաղբանակ և վերադարձ կառավարման դեկի մոտ:

Իսկ արարական վերնախավը, ընդիհակառակը, Ամինի տապալումն ընկալեց որպես իր պարտությունը, որի հետ այս անգամ արդեն նա չէր ցանկանում հաշտվել:

Սիհ այս մողելը, հակամարտությունը խալիֆայության ամենաազդեցիկ երկու էրնիկական խմբերի միջև, մշտապես գործում էր խալիֆայության համակարգում նաև հետագա տարիներին, Ամինին և Մամունին հաջորդած մյուս խալիֆաների գահակալության շրջանում: Արաբական և պարսկական վերնախավի բացահայտ պայքարը, ինչպես որդը, ներսից վնասեց խալիֆայության կայունությանը, ջատեց նրա ուժերը և իր վճռորոշ դերակատարումն ունեցավ նրա տկարացման մեջ: Դրանով իսկ նա դարձավ խալիֆայության տրոհմանը նպաստող գործոն:

Խալիֆայության տրոհումը նախապատրաստող գործոն եղավ կրոնա-դավանական հակամարտությունը: Մենք առաջին հերթին նկատի ունենք կրոնական դիմակայությունը խլամի, որպես տիրապետող կրոնի, շրջանակներում, ներիսլամական հակասությունները և հականարտությունները:

Իսլամն այդպես էլ չդարձավ միասնական կրոն: Նա ի սկզբանե պառակտված կրոն էր, որի երկու հիմնական ուղղություններն էին սուն-

նիզնը և շիհզնը: Սակայն նրանք որպես ուղղություններ նույնպես սիաթարո չեն, քանի որ նուանցում առկա էին տարրեր հոսանքներ, որոնք նույնպես բաժանարարական բեռ էին կրում:

Սուննիների և շիաների միջև ընթացող անընդեջ պայքարը, որը շատ հաճախ վերածվում էր արյունալի բախումների, անգամ պատերազմական գործողությունների, շիական «ինքնակոչ» խալիֆաների հաճախակի ասպարեզում հայտնվելը և այլն, ներսից հյուծում էին խալիֆայությունը և սասանում նրա գոյության իհմքերը: Այլ կերպ ասած, իսլամը չէր ծառայում միամնությանը կամ չէր կարողանում իրականացնել արաբների և մուսուլմանների համախմբումը համայն խալիֆայության մասշտարով: Եթե նա համախմբում էր, ապա համախմբում էր սուննիներին, շիաներին, խսայիլականներին, գեյդականներին, խարիդականներին և կրոնական այլ ուղղություններին առանձին—առանձին, բայց ոչ մինչամաց հետ:

Դրությունն ավելի էր բարդանում նրանով, որ կրոնական—յավանական դիմակայությունը մաքուր կրոնական դիմակայություն չէր: Նա որպես կանոն ստանում էր քաղաքական իմաստ և վերածվում պայքարի իշխանության համար: Ուստի սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ պայմաններում կրոնական հակամարտությունն ըստ եւթյան քաղաքական հակամարտություն էր: Քօգուտ այդ տեսակետի է խոսում այն հանգամանքը, որ շիաներն այդպես էլ սուննի Աբբասյաններին ջճանաչեցին խալիֆայության լեզիտիմ կառավարողներ, նրանց համարելով իշխանության բռնազարդողներ, գտնելով, որ խալիֆայության միակ օդինական կառավարողներ կարող են լինել միայն շիաները կամ Ալիի հետնորդները:

Աբբասյան խալիֆաները, իհարկե, հասկանում էին շիաների կրոնա—քաղաքական դիրքորոշման վտանգավորությունը խալիֆայության միասնականության և գոյության համար: Այդ պատճառով նրանցից հեռատեսներն առանձին դեպքերում փորձում էին համաձայնության եցրեր գտնել շիաների հետ: Սակայն այդ փորձերը, սակավ բացառությամբ, ավարտվում էին անհաջողությամբ և խալիֆաները մեկ անգամ չեն, որ շիաների անհնազանդությունը խեղդել են արյան ծովի մեջ: Այսպիսով, կարելի է ասել, որ ներիսլամական հակասությունները հանգեցրին իսլամական ումայի տրոիծանը, որն իր հերթին դարձավ զորեղ ազդակ խալիֆայության տրոիծան գործընթացում:

Խոսելով խալիֆայության տրոհման մեջ կրոնա-դավանական գործոնի մասին, ճիշտ չէր լինի սահմանափակվել միայն ներիսլամական շրջանակներով։ Պետք է հաշվի առնել նաև այլ կրոնների առկայությունը և նրանց դիրքորոշումը։

Խալիֆայությունում խալամի հետ միասին գոյություն ունեին զրադաշտականությունը, քրիստոնեությունը, հրեականությունը և այլն։ Նրանք դավանող ժողովուրդները դժգոհ էին իրենց կարգավիճակից։ Նրանք ենթակա ժողովուրդներ էին, ոչ լիիրավ քաղաքացիներ, ռայաներ, որոնց իրավունքները մշտապես ուժնահարկում էին խալիֆայական իշխանությունների կողմից։ Խալիֆա Մութքավաքիլի արձակած հրահանգներով, քրիստոնյաները և հրեաները, որոնք որպես «գրի ժողովուրդներ» հանարվում էին մուսուլմանների գիմնիներ, դրվեցին անհավասար վիճակում, համեմատած սունինների հետ։ Դալածանքները և բռնությունները նրանց նկատմամբ սովորական երևություններ էին Արքայան խալիֆայությունում։ Եսկ նման քաղաքականությունը մշտապես սնում էր սեպարատիզմ՝ ոչ արար ժողովուրդների մոտ և պարարտ հող հանդիսանում նրանց ազատատենչական ձգտությունների համար։ Ուստի կարելի է հավատել, որ նրանց ոչ մի կերպ չի կարելի դասել խալիֆայության տարածքային ամբողջականության պահպանման ուժերի շարքը։

Արքայան խալիֆայության պատմությունը որոշ իմաստով կարելի է ասել ժողովորդական ընդզգումների և ապստամբությունների պատմություն էր։ Դակարքասյան ելույթների մեջ ներգրավված էին առանց քացառության բոլոր ժողովուրդները՝ արաբները, պարսկները, հայերը, վրացիները, Միջին Ասիայի տարրեր ժողովուրդները։ Նրանց հնագանդության մեջ պահելը և նրանց գինված ելույթները ճնշելը մեծ ժամանակ, եռանդ և նյութական ուժեր էին կլանում իշխանություններից։ Անվարան կարելի է ասել, որ ժողովորդական զանգվածային ելույթները ցնցեցին խալիֆայության հիմքերը և սասանեցին նրա պետական և կառավարման համակարգը։

Դրանով նրանք, ակամայից դարձան կենտրոնախույս ուժեր և խալիֆայության տրոհման համար նախապայմաններ ստեղծող ազդակներից մեկը։

Արքայան խալիֆայության տրոհման գործում կարևոր դերակատարում ունեցան խալիֆայության ռազմական ուժերը։ Բանակին միշտ էլ արտակարգ դեր է պատկանել արևելյան բռնատիրությունների կայացման, ուժեղացման և պահպանման հարցում։ Խալիֆաներն իրենց

ծրագրերի, և ոչ միայն նվաճողական, իրականացման մեջ առաջին հերթին ապավինել են բանակին, այն համարելով իրենց ամենահուսալի հենարանը: Եվ երբ նա կորցնում էր այդ հենարանը և բանակը նրանից երես էր թերում, ապա նա դատապարտված էր կործաննան:

Տարիների ընթացքում խալիֆայական միասնական բանակը սկսեց կոտորակվել: Տեղական կառավարիչները ստեղծում էին իրենց սեփական զինված ուժերը: Նրանք էին հոգում նրանց ծախսերը և կարիքները, որի հետևանքով տեղական զորամիավորումների դառնում էին հակատարին և նվիրված առաջին հերթին տեղական կառավարիչներին և զորահրամանատարներին, և ոչ թե խալիֆային:

Երբեմն տեղական կառավարողները, որոնք միաժամանակ զորահրամանատարներ էին, այնքան էին հզորանում, որ նրանցից վախենում էին անգամ իրենք, խալիֆաները: Դեռ ավելին, խալիֆաներն իրենց հակառակորդներին ասպարեզից հեռացնելու կամ նրանց ընդգումները սանձահարելու համար, շատ հաճախ դիմում էին տեղական այս կամ այն հզոր կառավարիչ-զորահրամանատարի օգնությանը: Դիշենք, թեկուզ, Արու Մուսլիմին, Ավշշինին և բազմաթիվ այլ ազդեցիկ զորահրամանատարների: Դա հանգեցրեց նրան, որ բանակն աստիճանաբար դադարում էր միասնական լինելուց և ուժեղանում խալիֆայի կախվածությունը տեղական կառավարիչներից: Իսկ վերջիններս դառնում էին ավելի ու ավելի անկախ և ավելի քիչ էին հաշվի նստում արքունիքի և խալիֆայի հետ:

Դրությունն ավելի սրվեց և քասի վերածվեց, երբ խալիֆաները, սկսած Յարուն առ-Ռաշիդից և հատկապես խալիֆա Մամունից, թուրքերից կազմավորեցին իրենց պահապան զորաբանակը, գվարդիան, որն աստիճանաբար դարձավ կարևոր ռազմական ուժ: Նրանք այդ քայլին դիմեցին ի հակակշիռ խալիֆայական զորքերի, որոնց նրանք սկսել էին չվստահել:

Իր նշանակությունն ունեցավ նաև այն հաշվարկը, որ թուրքական գվարդիան, որը կազմավորվում էր գերի վերցված միջինասիական թուրքերից և ստրկավաճառության շուկաներում գնված թուրք ստրուկներից, արմատներ չուներ իր ծառայության նոր կայրում և այդ պատճառով կլիներ ավելի կախված և նվիրված խալիֆային: Խալիֆաներն էլ իրենց հերթին արտոնյալ պայմաններ էին ստեղծել այդ զորախնբերի համար, արտակարգ հոգածություն ցուցաբերելով նրանց նյութական կարիքների նկատմամբ:

Սակայն շուտով թուրքական գվարդիան այնքան ուժեղացավ, որ խալիֆաներն իրենց կախման մեջ ընկան նրանից, իսկ ապա նաև խաղալիք դարձան նրա հրամանատարների ծեռքում: Վերջիններիս համար սովորական երևույթ դարձավ իրենց ոչ հաճելի խալիֆային տապալել. սպանել և գահի վրա նատեցնել իրենց համար ծեռնոտու մեկ ուրիշին, որը դառնում էր նրանց խամածիկը: Այսպես, օրինակ, 847 թ., խալիֆա Կասիկի մահից հետո, թուրքական գվարդիայի հրամանատարները, անտեսելով նրա որոշումն իր մահից հետո գահը փոխանցել իր որդուն, խալիֆա «դարձրեցին» Կասիկի եղբորը, Մութավաքիին: Սակայն հակասությունները նոր խալիֆայի և նրա գվարդիայի միջև չհարթվեցին և 861 թ. Մութավաքիլը սպանվեց իր գվարդիայի երկու հրամանատարների ծեռքով, իր ավագ որդու, Սունթասիրի գիտությամբ և հավանությամբ, որոնց այնուհետև գահի վրա նատեցրին նրան: Սունթասիրը գահակալեց ընդամենը մոտ կես տարի, 861–862 թ., ապա թունավորվեց:

Խալիֆաներ տապալելու և սպանելու գործում հմտացած թուրքական գվարդիայի «անխոնջ» հրամանատարներն այնքան էին լկութացել, որ բացեիքաց արհամարհում էին խալիֆաներին, նրանց ծաղր ու ծանակի ենթարկում: Երբ խալիֆա Մութավազը (865–869 թթ.) թույլ փորձ կատարեց ծերբազատվել թուրքական հրամանատարների խնամակալությունից և գանձարանի դատարկ լինելու պատճառով չկարողացավ ժամանակին վճարել նրանց աշխատավարձը, ապա գվարդիայի հրամանատարի կարգադրությամբ նրան վայրենաբար ծեծեցին, նետեցին բանտ, այնուհետև արգելեցին նրան հաց ու ջուր տալ, որի հետևանքով նա սովոր և ծարավից մահացավ բանտում: Իսկ 870 թ. հարբած թուրք գվարդիականները գիշերով ներխուժեցին խալիֆա Մուհամեդի ննջարանը և հոչուտեցին նրան:

Նման օրինակները շատ–շատ են: Եվ պետք է ընդգծել, որ թուրքական գվարդիայի խժիժությունները ծանր հարված հասցրեցին խալիֆաների հեղինակությանը:

Այս բոլոր գործոնները միասին հանգեցրին նրան, որ երկրի ներսում ստեղծվեցին քաղաքական, սոցիալական, տնտեսական, կրոնական–դավանական և ռազմական համապատասխան նախադրյալներ Բաղդադից տեղական կառավարողների կախվածության թուլացման, նրանց իրավասությունների ընդլայնման՝ ի հաշիվ խալիֆաների հրավասությունների, և, ի վերջո, Աբբասյան խալիֆայության տրոհման:

Այս երևույթի պատճառները քննարկելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ տրոհումն ընթացավ Արբասյան խալիքայությունուն ավատատիրական հարաբերությունների զարգացման և խորացման պայմաններուն: Իսկ ավատատիրությունն ինքնին իր բնույթով անխուսափելիորեն ծնում է անջատողականություն և սնում կենտրոնախուս ծգություններ: Դա է հաստատում համաշխարհային պատմական փորձը, որը հաստատվում է նաև Արբասյան խալիքայության օրինակով:

## **II. ԱՐԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՔԱՅՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՈՒՄԸ**

Արբասյան խալիքայությունն իր տրոհման գործընթացով թևակոխեց զարգացման նոր փուլ, որը կարելի է ասել դարձավ նախապատրաստական նրա մայրանուտի համար:

Թուլացած խալիքաները և խալիքայական արքունիքը հարկադրված էին իշխանությունը կիսել իրենց լայնածավալ կայսրության օրեցօր հզորացող տեղական կառավարողների և նրանց շուրջը համախմբված տեղական վերնախավի հետ: Չատ շրջաններում ստեղծվեց յուրահատուկ իրադրություն: Տեղական կառավարողները հրաժարվում էին ճանաչել խալիքաների աշխարհիկ իշխանությունը, ընդունելով նրանց որպես միայն հոգևոր առաջնորդ: Իսկ այն շրջաններում, որտեղ տեղական կառավարողներն իրենց բավականին ուժեղ էին զգում, նրանք հրաժարվում էին խալիքային ճանաչել նաև որպես հոգևոր առաջնորդ:

Խալիքայության տարածքում կազմավորվեցին բազմաթիվ մեծ և փոքր անկախ կամ կիսանկախ պետություններ, որոնք այլևս հաշվի չեն նստում Բաղդադի հետ: Այնպիսի տպավորություն էր ստացվում, կարծես թե վերականգնվում էր այն իրավիճակը, որը գոյություն ուներ նախան Արարական խալիքայության կազմավորումը:

### **1. Իդրիսների շիական Էմիրությունը Մաղրիբում (Մարոկկոյում)**

Արբասյան խալիքայության տրոհման առաջին ծիծեռնակները եղան Հյուսիսային Աֆրիկայի երկրները, որտեղ կազմավորվեցին առաջին անկախ էմիրությունները:

Դա, բացի մեր կողմից նախորդ էջերում նշված հանգամանքները, բացատրվում է նաև նրանով, որ նրանք հանդիսանում են խալիֆայության ծայրամասերը, որտեղ Բաղդադի վերահսկողությունը միշտ էլ համեմատաբար թույլ է եղել: Այստեղ իսլամը ավելի ուշ տարածվեց և խոր արմատներ չգտեց: Տեղաբնիկների արաբացումը և իսլամացումը չեր ավարտվել, նրանք ավելի շատ են կառչած իրենց նախկին պատկերացումներին, հավատալիքներին և ապրելաձնին: Նրանց մոտ ավելի ուժեղ են հակաաբրայան տրամադրությունները: Ուստի և դյուրավագո նյութն այստեղ ավելի նկատելի էր, որի մեջ իր որոշակի դերակատարումն ունեցավ այն հանգամանքը, որ տեղաբնիկները, գլխավորապես բերբերները, հարեցին շիհզմին, իսկ որոշ խավեր նրա ավելի երստեմիստական ուղղությանը՝ խարիժիականությանը: Դա կանխորոշեց նրանց քշնամական վերաբերմունքը Բաղդադի իշխանությունների նկատմամբ:

Կար նաև մեկ այլ կարևոր հանգամանք: Դեռևս Օմայյան խալիֆաների ժամանակներից սկսած, որը շարունակվեց նաև Արքայանների օրոք, շատ ալիականներ կամ շիաներ, խալիֆայության կենտրոնական մասերից փախուստ տալով հալածանքներից, ապաստան էին գտնում և հաստատվում Յայուսիսային Աֆրիկայում: Դենց նրանց շարքերից դուրս եկան ապագա տեղական էմիրները:

Դրանց թվին էր պատկանում Մաորիկում (Մարոկկոյում) Իդրիսների դինաստիայի հիմնադիր Իդրիս 1 իբր Արդալլահը: Նա Ալիի որդի Ջասանի ծոռն էր, որը 785 թ. մասնակցել էր Արքայանների դեմ ուղղված շիական հեղաշրջման փորձին Մաղինայում: Դիջազում:

Յեղաշրջման ծախոտումից հետո, նա փախչում է Եգիպտոս, ապա հաստատվում Մարոկկոյում: Այստեղ նրան հաջողվեց նվաճել բերբերական ցեղաբետերի համակրանքը և, օգտագործելով իր ծագումնաբանական կապը Ալիի տոհմի հետ, համոզեց նրանց, որպեսզի վերջիններս ճանաչեն նրան որպես իրենց առաջնորդ: 788 թ. նա հիմնեց անկախ էմիրություն, դառնալով նրա առաջին էմիրը, որի կառավարող դինաստիան նրա անունով կոչվեց Իդրիսների դինաստիա: Նա եղավ առաջին շիական դինաստիան պատմության մեջ:

Այս էմիրությունն ունեցավ իր սեփական մայրաքաղաքը՝ Ֆեսը, որտեղ հավաքվեցին հայտնի շիական առաջնորդներ: Նորաստեղծ մայրաքաղաքը դարձավ Իդրիսների էմիրության քաղաքական և տնտեսա-

կան, ապա նաև հոգևոր կենտրոնը, շիաների կողմից պաշտվող սրբազն քաղաք:

Իդրիսների Եմիրությունը, Արքայանների թուլության և հեռու գտնվելու պատճառով, համեմատաբար ազատ էր Բաղդադի սպառնալիքներից: Սակայն նրա համար վտանգավոր հակառակորդներ հանդիսացան Նգիտուսում կառավարման ղեկն իրենց ծեռքը վերցրած Զաքիմյան Եգիտուսը, որի մասին կխոսվի ստորև, և Կորդովայի Օմայյանների խալիֆայությունը: Եմիրությունն իր անկախության համար մաքառում էր նրանց դեմ: X դարի սկզբներին նա վասալական կախման մեջ է ընկնում Զաքիմյաններոց և պարտավորվում նրան հարկ վճարել:

Իդրիսների Եմիրությունը գոյություն ունեցավ մինչև X դարի 60-ականների վերջը:

## 2. Աղլարինների Եմիրությունն Իֆրիկիյայում

Այս Եմիրությունը ստեղծվեց Իֆրիկիյայում՝ Թունիսում: Նրա հիմնադիրը եղավ Իբրահիմ իբն ալ-Աղլարը 800 թ., որը Խորասանում Արքայան խալիֆայի կողմից նշանակված զորահրամանատարի որդին էր: Դարուն առ-Ռաշիդը նրան նշանակեց Իֆրիկիյայի կառավարիչ, բայց բավականին յուրօրինակ պայմաններով: Իբրահիմը պարտավորվեց այնտեղ գտնվող արաբական կայազորներոց պահել առանց Բաղդադի նյութական օգնության, տեղական միջոցների հաշվին: Ներ ավելին, նա Դարուն առ-Ռաշիդի առջև պարտավորություն վերցրեց ավելացնել Արքայան գանձարան մուտքող հարկերը:

Այսպիսի պայմաններով ստանալով այդ նահանգի կառավարումը, ալ-Աղլարին կարողացավ շատ կարճ ժամանակամիջոցում Իֆրիկիյան վերածել Բաղդադից անկախ Եմիրության, որտեղ բոլոր հարցերը լուծվում էին առանց Բաղդադի կարծիքն հաշվի առնելու: Աղլարինները հատում էին սեփական դրամ, որի վրա անգամ խալիֆայի անունը որպես հոգևոր սյուզերեն, չեղ նշվում:

Եմիրության մայրաքաղաքն էր Կայրավանը, որը կառուցվել էր Կարթագենի տեղում: Աղլարինների ժամանակ տեղի ունեցավ մի կարևոր փոփոխություն, կապված տեղական բնակչության հետ: Նա մինչ այդ լատինախոս էր և քրիստոնեադավան: Ալ-Աղլարինների քաղաքականության արդյունքում Իֆրիկիյայի բնակչությունը դարձավ արաբախոս և իսլամադավան:

Աղլարիների էմիրությունը գոյատևեց մեկ դարից մի փոքր ավելի, 800–909 թթ., երբ նա ընկապ Ֆարխմյանների հարվածների տակ:

777 թ. Ալժիրում առաջացավ մեկ այլ էմիրություն ևս, որտեղ հաստատվեց Ուստամների դինաստիան: Նրա երկու հարևան էնիրություններն էի, արևմուտքից Իորիսների, իսկ արևելքից Աղլարիների, ոչ բարեկամական դիրքորոշում էին գրավել Ուստամինների դինաստիայի նկատմամբ և վերջինները հարկադրված փորձում էին ապավինել Կորդովայի խալիֆայությանը, նրանից ակնկալելով ռազմական օգնություն:

Սակայն այս էնիրությունը ևս, ինչպես նախորդ երկու կյուսիսաֆրիկյան էնիրությունները, 909 թ. զոհ գնաց Եգիպտոսի Ֆարխմյանների նվաճողական քաղաքականությանը:

Ինչպես տեսնում ենք, երեք էնիրությունների վերացման գործում Արբասյանները ոչ մի դերակատարում չեն ունեցել, քանի որ նրանք այլևս ի վիճակի չեն վերականգնել իրենց իրական իշխանությունը աֆրիկյան այդ նահանգների վրա:

### 3. Թուլունիների պետության հիմնումը Եգիպտոսում (868–905 թթ.)

Տրոհման գործընթացն իր մեջ ներառակ նաև Արբասյան խալիֆայության արարական և արևելյան նահանգները:

Արբասյան խալիֆայության համար մեծ հարված եղավ իշխանության կորուստը ռազմավարական և տնտեսական մեծ նշանակություն ունեցող մի այնպիսի կարևոր շրջանի վրա, որպիսին Եգիպտոսն էր:

Եգիպտոսում Բաղդադից անկախ պետության հիմնումը կապված է Ահմադ իբն Թուլունի անվան հետ: Նրա հայրը, ֆերգանացի մի թուրք, և խորք հայրը, 817 թ. որպես գերիներ Բուխարայի կառավարողի կողմից նվեր ուղարկվեցին խալիֆա Մամունին: Նրանք նտան զինվորական ծառայության մեջ խալիֆայի քանակում և աշքի ընկան իրենց ունակություններով, պարտաճանաչությամբ և խալիֆային նվիրվածությամբ: Արբասյան խալիֆա Մութագգան (866–869 թթ.) Ահմադի խորք հորը նշանակեց Եգիպտոսի փոխարքա, որը եղել է հավանաբար 868 թ.: Այդ նույն թվականին Ահմադ իբն Թուլունը մեկնում է Եգիպտոս և դառնում փոխարքայի օգնականը:

Խալիֆան նրա վրա դրել էր Եգիպտոսում խալիֆայի ֆինանսական շահերը ներկայացնելու և պաշտպանելու շատ կարևոր պարտականությունը: Այդ եռանդրում և փառասեր թուրքը Ֆերգանայից, կարողա-

ցավ շատ կարճ ժամանակամիջոցում իր Վերահսկողությունը հաստատել ամբողջ Եգիպտոսի վրա, դարձնալ նրա փոխարքան և 868 թ. հոչակել Եգիպտոսի անկախությունը: Թուլունիները հաստատվեցին որպես կառավարող դինաստիա:

Սիմառ իրն Թուլունի գլխապտույտ հաջողությունն անակնկայի բերեց անգամ խալիֆային, որը ոչինչ չկարողացավ անել կանխելու Եգիպտոսի կորուստը: Նրա առաջին քայլերից մեկը եղավ ցույց տալ խալիֆային, որ ինքն այլևս ենթակա չէ նրան: Եվ երբ նոր խալիֆա Մութամիդը, որը գրադարձ էր զանջիների ապստանքությունը ճնշելով և այդ կապակցությամբ ֆինանսական նեղ որության մեջ էր հայտնվել, 877 թ. դիմեց Սիմառին ավելացնել խալիֆայության գանձարանը մուծվող հարկերի չափարաժինը. Սիմառը մերժեց խալիֆայի այդ օրինական պահանջը և հավաքվող հարկերը նմ պահեց իր գանձարանում: Դեռ ավելին, նա Եգիպտոսից Վտարեց խալիֆայական ֆինանսական պաշտոնյային: Դա կարևոր քայլ էր Եգիպտոսի անկախության ճանապարհին, որն ավելի ամրապնդվեց, երբ Սիմառն սկսեց սեփական դրամ հատել:

Խալիֆայի եղբայր Մուվաֆֆակը, որը խալիֆայության փաստացի դեկավարն էր, 877 թ. հատուկ զորաբանակ ուղարկեց Սիմառի դեմ, նպատակ ունենալով նրան պատժել և հեռացնել իր գրադեցրած պաշտոնից: Սակայն դա նրան չհաջողվեց, նրա զորքերը պարտություն կրեցին: Խոկ Սիմառը, օգտվելով իր ռազմական հաջողությունից, այդ նույն թվականին գրավեց Սիրիան և Պաղեստինը: Միրիայում իր տիրապետությունն ամրապնդելու նպատակով, նա Ակրում կառուցեց ռազմածովային բազա և ուժեղացրեց իր դիրքերը Միջերկրական ծովի արևելյան ափերում:

Սիմառ իրն Թուլունը, որը կառավարեց մոտ 14 տարի, 868–884 թթ., ընդհանրապես մեծ ուշադրություն էր դարձնում ռազմական գործին, նույնիսկ այն աստիճանի, որ որոշ մասնագետներ նրա պետությունը համարում են խիստ ռազմականացված կազմավորում: Նա ստեղծեց մոտ հարյուրհազարանոց լավ գինված և կարգապահ բանակ, որի կորիգը կազմում էին թուրքերը և սևամորթները, որոնք ծառայության մեջ մտնելով, հավատարմության երդում էին տալիս ոչ թե պետությանը, այլ անձանք Սիմառին:

Ռազմական գործի հետ միասին նա մեծ ուշադրություն էր դարձնում գյուղատնտեսությանը, նաև ավագությանը, մասնավորապես ոռոգման համակարգին, ինչպես նաև արգեստների և մշակույթի զարգացմանը:

884 թ. Ահմաղին փոխարինեց նրա որդին՝ Խումարավայիը, որը կառավարեց մինչև 995 թ.: Ի տարրերություն իր հորը, նա վարում էր ցոփ ու շոայլ կյանք, որի համար նրան ուղղափառները կոչել են «անհավատ»:

Ալ-Մուվաֆֆակը, առնելով Ահմադ իրն Թուլունի մահվան լուրը, իր գորաբանակը շարժեց Եգիպտոս, ենթադրելով, որ նրա որդին, Խումարավային ավելի թույլ կլինի և հնարավոր կլինի վերականգնել Արբասյան խալիֆայության իշխանությունը Եգիպտոսում: Սկզբյ նա սխալ-վեց: Խալիֆայական բանակը կրկին պարտություն կրեց և Մուվաֆֆակը ստիպված եղավ ճանաչել Թուլունիների ժառանգական իրավունքը Եգիպտոսում և Սիրիայում: Դրա դիմաց Թուլունիները պարտավորվում էին ոչ մեծ հարկ վճարել խալիֆային և ուրբաթօրյա աղոթքի ժամանակ հիշատակել նրա անունը:

Սակայն Ահմադ իրն Թուլունի չորրորդ հաջորդի, Շայքանի ժամանակ (904–905 թթ.) Եգիպտոսը կրկին հայտնվեց Արբասյանների տիրապետության ներքո:

935–969 թթ. Եգիպտոսն ունեցավ նոր կառավարողներ, ի դեմս Իխշիդների («իխշիդ» պարսկերեն նշանակում է «իշխան»): Արբասյան խալիֆա առ-Ռադին 935 թ. Եգիպտոսի կառավարիչ նշանակեց Մուհամմադ ալ-Թուղթին: Նա նույնպես թուրք էր Ֆերգանայից, որի հայրը ժամանակին ծառայել էր Թուլունիների բանակում: Խալիֆայի կողմից նման քայլը պատճառաբանվում էր նրա մտավախությամբ, որ Ֆարիխյանները կարող էին ներխուժել Եգիպտոս, իսկ Արբասյանները չեին կարող կանխել դա: Նրանց պետք էր ուժեղ անձնավորություն, որը կարողանար կանխել այդ ներխուժումը: Մուհամմադ իրն Թուղթ ալ-Իխշիդը ստեղծեց հզոր բանակ, որը մոտ 30 տարի կարողանում էր հաջողությանը դիմագրավել Ֆարիխյանների ոտնձգությունները Եգիպտոսի հանդեպ:

Դրա գինը եղավ այն, որ Իխշիդները նվաճեցին ինքնուրույնություն Եգիպտոսի կառավարման հարցերում: Նրանց տիրապետության տակ անցան նաև Սիրիան և Պաղեստինը: 940 թ. Մերքան և Սադիհան նույնպես անցան Իխշիդների տիրապետության տակ: Այդ ժամանակներից ի վեր Շիջազը նի քանի դար մնաց կապված Եգիպտոսին:

Թե՛ Թուլունիները, և թե՛ Իխշիդները, ծեռք բերելով փաստական անկախություն և ինքնուրույնություն, այդուհանդերձ, չեին ցանկանում դրւու գալ Արբասյան խալիֆայության կազմից: Նրանց նպատակն էր ի-

րենց հանձնված տարածքներում հաստատել իրենց անձնական և դի-նաստիական իշխանությունը:

#### 4. Թահիրիների Եմիրությունը Խորասանում

Տրոհման գործընթացն իր յուրահատկությունն ունեցավ Աբբասյան խալիֆայության արևելյան նահանգներում, որն արտահայտվեց նախ և առաջ նրա արմատական բնույթի մեջ: Այստեղ ծևափորված է մի-րությունները, ի տարրերություն մի շարք այլ շրջաններում հայտնված է-միրությունների, հանդես էին գալիս հօգուտ լրիվ անկախության և չեխ ցանկանում Աբբասյան խալիֆայության հետ պահպանել որնէ, անզան հոգսոր-կրոնական կապեր:

Այստեղ կար նաև մեկ այլ յուրահատկություն: Եթե Թուլունիների և Իխշիդների Եմիրությունները հիմնվում էին եկվոր թուրք վերնախավի կողմից, որոնք արմատներ չունեին տեղական բնակչության մեջ, և նրանց հենարանը հանդիսացող ռազմական ուժերի կորիգօք կազմում էին վարձկանները՝ թուրքերը, սևամորթները, անգամ հույները և այլն, ապա արևելյան նահանգներում կազմավորված Եմիրություններն իրենց էթնիկական պատկանելությամբ հանդիսանում էին իրանական:

Նման բնույթի էր 821 թ. Խորասանում հիմնված Թահիրիների Եմի-րությունը: Իրանական մավալ Թահիր իրն ալ-Ճուսեյն Խորասանին քա-ղաքական ասպարեզում հայտնվեց 810–ական թվականներին, երբ նա անցավ Մամունի կողմը, Ամինի դեմ Վերջինիս պայքարի ժամանակ: Միացքանի Թահիրը պատերազմական գործողությունների ժամանակ իրեն դրսնորեց փայլուն կերպով, արժանանալով խալիֆա Մամունի ու-շարությանը, որը 820 թ. նրան նշանակեց Բաղրամից արևելք ընկած խալիֆայական բոլոր նահանգների կառավարիչ: Նրա քաղաքական կենտրոնը դարձավ Խորասանը՝ Մերք քաղաքով: Խալիֆան նրան տվեց ամենալայն լիազորություններ Խորասանում և Մավրաննահրում, իսկ նրա որդուն, Արդալլահ իրն Թահիրին օժտեց համանման իշխանու-թյամբ Եգիպտոսում և Սիրիայում:

Թահիր իրն ալ-Ճուսեյնը, երկու տարի անց դրսնորեց անհնա-զանդություն Մամունի հանդեպ: 822 թ. նրա իրամանով առաջին անգամ ուրաքարյա խուստայում, աղոթքի ժամանակ, չիշշատակվեց խալիֆա Մամունի անունը, որը համարվում է քաղաքական մարտահրավեր խա-լիֆային և ծանր հանցանք նրա դեմ: Թահիրը դրա համար վճարեց իր

կյանքով։ Նրան գտան խեղամահ արված իր անկողնում, որի հետքերը տանում էին Բաղրամ։ Այդուհանդերձ, Մամունը չկարողացավ Թահիրիներին հեռացնել Խորասանի կառավարումից։

Թահիրի և նրա ավագ որդու մահից հետո, իշխանությունն անցավ նրա մյուս որդուն, Արդալյահ իրն Թահիրին (828–845 թթ.): Նրա և նրա հաջորդների օրոք Եմիրությունն ավելի զորացավ և ընդարձակվեց։ Նրա սահմանները հասան մինչև Ճաղկաստան և նրա կազմի մեջ մտան Թարարստանը և Իրանի այլ շրջաններ։ Այդ պատճառով Եմիրության նայրածաղաքը Մերվից տեղափոխվեց Նիշապուր։

Թահիրիները մեծ նշանակություն էին տալիս տնտեսության, հատկապես գյուղատնտեսության զարգացմանը, հովանավորում էին մշակույթը, գրականությունը և գիտությունը։ Նրանք հենվում էին պարսկական և արաբական հողատերերի՝ Վերնախավի վրա, որի զարգացման համար Թահիրիները ստեղծում էին բարենպաստ պայմաններ։ Սակայն նրանք շատ խիստ և անհանդուրժող էին շիաների, մասնավորապես նրանց գաղափարախոսների և քարոզիչների նկատմամբ։

Թահիրիները խորհրդանշական հարկ վճարելով Բաղդադին, մնացած բոլոր հարցերում լրիվ անկախ էին խալիֆայությունից։

Թահիրիների դինաստիան ընկավ 873 թ., և Վերջին Եփի Մոլիամադը հեռացավ Նիշապուրից, բարձրացող Սաֆֆարիների հարվածների տակ, որի տիրապետության ներքո հայտնվեցին ընդարձակ տարածքներ, այդ թվում և Խորասանը։

## 5. Սաֆֆարիների Եմիրությունը

Դերթական Եմիրությունն Աբբասյան խալիֆայության տարածքում հայտնվեց Սիստանում, որը Թահիրիների տիրությունների մի մասն էր կազմում։ Նրա հիմնադիրը Եղավ Յակուբ իրն ալ-Լայս աս-Սաֆֆարը, որն արհեստով պղնձագործ էր՝ «Սաֆֆար», և այդ անունով էլ կոչվեց նոր Եմիրությունը և կառավարող դինաստիան։

Սիստանում խալիֆայության զանազան մասերից փախել և կենտրոնացել էին տարբեր աղանդներին, հատկապես խարիֆիներին պատկանող և իր վիճակից դժգոհ մեծաքանակ մի ամբոխ, տարբեր տեսակի արկածախնդիրներ, ավագակներ և նութ անցյալ ունեցող այլ նարդիկ։ Նրանցից կազմվել էին ավագակային խմբեր, որոնք գրավվում էին կողոպուտով, առաջացնելով տեղական բնակչության, առաջին հեր-

թին հողագործների, արիեստավորների, առևտրականների և արդար վաստակով ապրող այլ խավերի խոր դժգոհությունը, որոնք պահանջում էին վերջ տալ ավազակային խմբակային հարձակումներին և հաստատել օրինականություն:

Յակուբ իրն այլ-Լայսը շատ արագ հասկացավ, թե ինչ մեծ ներուժ ունի կուտակված դժգոհությունը, որը ճիշտ օգտագործելու դեպքում կարելի է հասնել քաղաքական փառասիրական մեծ նվաճումների: Եվ նա դիմեց վճռական քայլերի: Նա սկսեց նրանից, որ իր շուրջը հավաքելով դժգոհների մեծ զանգված, կամավորության սկզբունքով ստեղծեց զինված ջոկատներ, որոնց նպատակն էր կարգ ու կանոնի հաստատումը և ավազակային խմբերի սանձահարումը: Սակայն շատ շուտով ի հայտ եկավ, որ նրանց կարողագույն պահանջները եր նաև պաշտպանել ուղղափառ սուննիզմը, որն անմիջականորեն ուղղված էր խարիզիների դեմ: Ինչպես հայտնի է, սուննիզմը խարիզիականությունը դասում է հերձվածության շարքը, դիտելով այն Վտանգավոր և ծայրահեղական մոլորություն: Յակուբը ընդհանուր առմամբ այդ խնդիրը լուծեց հաջողությանք, նահանգում հաստատվեց կարգ ու կանոն, որը բարձրացրեց նրա հերինակությունը:

Այնուհետև նա սկսեց իր տարածքների ընդարձակումը: Սիստանի անմիջական հարևաններն էին Մակրանը հարավում, Քերմանը և Ֆարսը արևմուտքում, Խորասանը հյուսիսում և Աֆղանստանն արևելքում: Յակուբը նախ գրավեց Քերմանը և Ֆարսը, ապա նաև Աֆղանստանը:

873 թ. նրա գործերը ներխուժեցին Խորասան և կանգ առան նրա մայրաքաղաք Նիշապուրի մոտ: Աս-Սաֆֆարը պահանջեց էմիր Մուհամմադ ար-Շահիրիից անձնատուր լինել և իրեն փոխանցել իշխանությունը: Մուհամմադը նրան տվեց հետևյալ պատասխանը. «Եթե դու եկել ես ուղղահավատների վեհապետի հրամանով, ապա ցույց տուր քո փաստաթուղթը, որպեսզի ես թեզ զիցեմ փոխարքայությունը, եթե ոչ՝ հեռացիր»: Ծառ հետաքրքիր է աս-Սաֆֆարիի պատասխանը Թահիրիների վերջին էմիրին: Նա ծեռքը դնելով իր սրի վրա ասում է. «Ահա ին փաստաթուղթը ս դրոշը»: Նիշապուրն ընկավ և Խորասանը նույնպես անցավ նրա տիրապետության ներքո:

Ծուտով նրա գործերը դարձան Թաքարստանը և Շիրազը: Այս բոլոր հարուստ նահանգներից նա մեծ ավար էր վերցնում, որով զինում էր իր բանակը և հոգում այլ ծախսեր:

Խալիֆա ալ-Մութամիդը և նրա եղբայր Մուվաֆֆակը, որը խալիֆայության փաստացի ղեկավարն էր, սկզբնական շրջանում առանձնապես բանի տեղ չէին դնում Յակուբ աս-Սաֆֆարին, իսկ նրա բանակը համարում էին կիսաավագակային, անկարգապահ մի խառնամբոխ: Սակայն Յակուբի կողմից Թահիրիների դինաստիայի տապալումը և ընդարձակ տարածքների նվաճումը ստիպեց նրանց փոխել իրենց դիրքորոշումը և հաշվի նստել նրա հետ: 875 թ. խալիֆա ալ-Մութամիդը Յակուբ իրն ալ-Լայս աս-Սաֆֆարին պաշտոնացն ճանաչեց Սիստանի Էմիր, որով օրինականացվում էր Սիստան Էմիրության ստեղծումը, իսկ Սաֆֆարիները հաստատվում էին որպես կառավարող դինաստիա:

Դրանով իսկ Աբբասյան խալիֆայությունը մեկ անգամ ևս ցուցադրեց իր քաղաքական քուլությունը և խալիֆայությունը որպես մեկ կենտրոնացված պետություն պահպանելու անկարողությունը:

Բայց հարցը միայն դրանով չսահմանափակվեց: Աս-Սաֆֆարիին խալիֆան ճանաչեց նաև Խորասանի, Թարբարստանի, Քերմանի և Ֆարսի Էմիր: Փաստորեն նա դարձավ համարյա ամբողջ Պարսկաստանի տիրակալը: Սարսափահար խալիֆան և նրա եղբայրը պատրաստ էին նրան առաջարկել նաև Բաղդադի ուսումնական հրամանատարությունը, սակայն աս-Սաֆֆարը մերժեց: Նա չէր ցանկանում լինել ուազմական հրամանատար խալիֆայի, հատկապես նրա եղբայր Մուվաֆֆակի, որը համարվում էր ուժեղ անծնավորություն, աչքի տակ: Աս-Սաֆֆարը ավելի հեռու էր նայում և փայփայում ավելի մեծ և փառասիրական ծրագրեր: Նա ճգտում էր գրավել Բաղդադը և դառնալ խալիֆայության տիրակալը:

876 թ. աս-Սաֆֆարը շարժվեց Բաղդադի վրա և ճանապարհին գրավեց Կասիտը: Հարձակման պահը պատահական չէր ընտրված: Այդ ժամանակ խալիֆայության գործերը կենտրոնացված էին Երաքի հարավում և զրադակած էին զանցիների ապստամբությունը ճնշելով: Բաղդադի գլխին լուրջ սպասնալիք էր կախված: Յաշվի առնելով այդ հանգամանքը, Մուվաֆֆակը գործեց արագ և վերականորեն: Նա զանցիների ղեն կռվող խալիֆայական բանակը շտապ հետ կանչեց և այդ լավ զինված և մարզված բանակը նետեց աս-Սաֆֆարի գործերի ղեն: Նրանք պարտության մատնեցին աս-Սաֆֆարին և հետ վերցրեցին Կասիտը, Վերացնելով Բաղդադին սպասնացող վտանգը:

Աս-Սաֆֆարը մահացավ 879 թ. և նրան փոխարինեց նրա եղբայր Ամրը (879-901 թթ.): Նա նույնացն կիսում էր Երաքին տիրանալու իր եղ-

բոր փառասիրական նկրտումները: Բայց դա չհաջողվեց և նա ստիպված հաշտություն կնքեց խալիֆայի հետ և ոժկամությամբ իրաժարվեց Իրաքը և Բաղդադը գրավելու մտքից:

Այդ անհաջողությունը Անր աս-Մաֆֆարը ցանկացավ փոխհատուցել արևելքում նոր նվաճումներով: Նա 90-ականներին երկու անգամ փորձեց գրավել Մավարանահրը, սակայն երկու անգամ էլ պարտություն կրեց Սամանիների Էմիր Խամադից, ինկ վերջին անգամ զերի ընկավ: Դրանից հետո Սաֆֆարիների պետությունը քայլվեց և դադարեց գոյություն ունենալուց:

## 6. Սամանիները

**874 թվականից խալիֆայության արևելյան մասում, Մավարանահրում սկսեց բարձրանալ մի նոր էմիրություն, որն այնուհետև վերածվեց մի ընդարձակ պետության և գոյություն ունեցավ մինչև 999 թ.: Խոսք Սամանիների պետության մասին է:**

Սամանը կամ Սաման-խուղան, տոհմի նահապետը, որի անունով կոչվեց Էմիրությունը և դինաստիան, զրադաշտական մի ազնվական տածիկ էր Բալիսից, որն ընդունել էր խալամ: Խվամ ընդունելը լայն հնարավորություններ բացեց նրա թուների առջև, որոնք խորասանում զինվորական ծառայության անցան խալիֆա ալ-Մամունի մոտ: Սաման-խուղայի չորս թուները, խալիֆային նվիրվածության համար, 819 թ. ստացան չորս կարևոր քաղաքների՝ Սամարդանի, Ֆերգանայի, Շաշի և Կերաքի կառավարումը: Սակայն Սամանիների դինաստիայի հիմնադիրը 874 թ. եղավ Նասր իրն Ահմադը, որը 875 թ. միավորեց Սամանիներին պատկանող տիրույթները Սավարաննահրում և Խորասանում, ստեղծելով Սամանիների էմիրությունը: Խալիֆա ալ-Մութամիդը Նասր և իրն Ահմադին նշանակեց Էմիր, որը կառավարեց մինչև 892 թ.:

Սամանիներն անընդհատ ընդարձակում են իրենց տիրույթները և Նասր II իրն Ահմադի ժամանակ (913–943 թթ.) Սամանիների էմիրության մեջ, ի հավելումն Սավարաննահրի և Խորասանի, արդեն մտնում էին Միստանը, Ջերմանը, Զուրջանը, Ուեյը և Թաբարստանը:

Սամանիները վարում էին շատ հաշվենկատ և զգույշ քաղաքականություն: Նրանք արտաքսապես ցուցադրում էին լոյալություն Աքքասյանների հանդեպ, բայց իրականում նրանց հետ հաշվի չէին նստում և էմիրության սահմաններում ու ներքին հարցերում լրիվ անկախ էին:

Նրանց մայրաքաղաքը Բուխարան էր, սակայն մեծ դերակատարում ուներ նաև Սամարդանը:

Սամանիները հովանավորում էին գիտության, գրականության և մշակույթի զարգացումը, որոնք կարելի է ասել մեծ ծաղկում ապրեցին: Նրանց օրոք նոր դարաշրջան սկսվեց պարսկական գրականության զարգացման մեջ: Սամանիների դարաշրջանում, X դարում էին ստեղծագործում Ֆիրդուսին, որը գրեց իր սքանչելի «Շահ-Նամեն», Ղակիկին, Ուլդակին և պարսկական պոեզիայի այլ աստղերը: Սամանիների հրավերով և հովանավորությամբ Բուխարայում հաստատվեց երիտասարդ Իրն Սինան, միջնադարի բժշկապետերից մեկը, որը լայն հնարավորություն ստացավ Բուխարայի արքայական հարուստ գրադարանում ծանոթանալ համաշխարհային գիտության նվաճումների հետև բժշկության բնագավառում անել հայտնագործություններ, որոնք մինչև օրս չեն կորցրել իրենց նշանակությունը և գիտական արժեքը: Մեծ զարգացում ապրեց նաև թարգմանչական գործունեությունը: Արաբական շատ աղբյուրներ, այդ թվում և պատմագիտական բնույթի, թարգմանվեցին պարսկերեն, ինչպես ար-Թարարիի «Պատմություն», որն իրականացրեց Բալամին:

Սակայն Սամանիների վերելքը երկար չտևեց և X դարի երկրորդ կեսից սկսվում է նրա թուլացումը, ապա և անկումը: Դրանուն իր դերը խաղացին հակասությունների սրումը երկրի ներսում, կենտրոնախույս ուժերի հակադրվելը էմիրների կենտրոնաձիգ քաղաքականությանը, ներդինաստիճական խարդավանքներն ու երկպառակությունները և այլն: Դրան զուգահեռ ուժեղանում են թուրքական տարրի դիրքերը էմիրությունում, այդ թվում և արքունիքում:

Էմիրության համար մեծ սպառնալիք են ստեղծում թուրքական քոչոր ցեղերը կյուսիսից: Միջին Ասիայի սահմանները դաշնում են Իրանի և Թուրքանի միջև պայքարի սահմանագիծ: Ինչպես ճիշտ նշում է Ֆ. Շիբթին, «Պայքարը իրանականության և թուրանականության միջև խլամի սահմանամերծ տարածքներին տիրապետելու համար խլամի չորրորդ դարում (X դ. — Ն. Դ.), լոկ նախերգանքն էր ավելի մոայլ զարգացումների: Այդ պահից ի վեր մենք տեսնում ենք, որ այս թուրքերը խաղում են ավելի ու ավելի կարևոր դեր համաշխարհային գործերում, մինչև որ նրանք վերջնականապես կլանեցին Բաղդադի խալիֆայի իշխանության մեծ մասը, իրականում մինչև որ նրանք իիմնեցին իրենց սե-

փական, Օսմանյան, խալիֆայությունը «Բոսֆորի ափերին գտնվող Բաղրադրում»:

## 7. Կարախանները և Ղազնիները

Թուլացած Սամանիների ենիրությունը սկսում են կտցահարել մի կողմից Կարախանները, իսկ մյուս կողմից Ղազնիները: Երկուսն էլ ներկայացնում են բուրքական քոչվոր էթնոսը:

Կարախանները որպես դինաստիա ներկայացնում են բուրքական կարլուկ քոչվորներին, որոնք միայն X դարի կեսերին են իսլամ ընդունել: Տափաստանային այդ քոչվորները 992 թ. բուդրա խանի գիշավորությամբ ներխուժեցին Մավարաննահր և տիրացան Բուխարային: 999 թ. Կարախանները Ղազնիների հետ միասին կիսեցին Սամանիների տիրույթները: Նրանց անցավ Մավարաննահրը, իսկ Ղազնիներին՝ Խորասանը:

Կարախանների պետությունը գոյատևեց 992 թ. մինչև 1211 թ., և ընկավ բարձրացող խորեզմշահերի հարվածների տակ:

Իսկ ինչ վերաբերում է Ղազնիներին, ապա Աֆղանստանում հիմնված այդ պետությունը, որի մայութագործն էր Ղազնահր, որի անունով էլ կոչվեց դինաստիան և պետությունը, զգայի դերակատարում ունեցած տարածաշրջանում X–XII դարերում: Նրանց առաջնորդ Մահմուդը (998–1030 թթ.) դադարեց ենթարկվել Սամանիներին, նրանցից խեց Խորասանը և սկսեց կառավարել որպես անկախ սուլթան, մի տիտղոս, որն աստիճանաբար մուտք գործեց հատկապես ծագումով թուրք առաջնորդների տիտղոսացանկում:

Ղազնիները բացի Խորասանից նվաճեցին Ռեյը և Սպահանը Իրանում, թուխարստանը Բալխով հանդերձ, Անու Ղարյայի շրջակա տարածքների մի մասը և Սիստանը: Սահմուղն ընդհանուր առմամբ 17 արշավանք ծեռնարկեց Յնոկաստանի դեմ, որի արդյունքում նա գրավեց Փենջարը, Մուլթանը և Սինդի մի մասը: Այսպիսով, Ղազնիները ստեղծեցին մի ընդարձակ և հզոր պետություն:

Ինչ վերաբերում է նրանց փոխարաբերություններին Աբբասյան խալիֆայի հետ, ապա Մահմուդը ծնականորեն ճանաչում էր խալիֆա ալ-Կատիրին որպես իր սյուլտերնը, որի համար խալիֆան նրան շնորհեց «Յանան աղ-Ղավլա», այսինքն «Պետության աջ ծեռօք» տիտղոսը: Դրանով էլ սահմանափակվեց նրանց հարաբերությունների ոլորտը:

Ղազնևիները մնացած թուրո հարցերում ինքնուրուցն էին և գործում էին խալիֆայությունից լրիվ անկախ:

Մահմուդը և նրա հաջորդները հատում էին իրենց սեփական դրամը: Նրանք իրենց մայրաքաղաքը կառուցապատճել էին հոյակերտ շինություններով և զանց չեն խնայում այն վերածել գրական և գիտական կենտրոնի, իրենց շուրջը համախմբելով ժամանակի շատ երևելի դեմքերի: Նրանց մեջ էին պատմիչներ ալ-Ռոտրին, հօջակավոր ալ-Բիրուլին և այլ կորպած և գիտուն մարդիկ: Ղազնահ տեղափոխվեց և շարունակեց «Չահ-նամեթ» վրա իր աշխատանքները Ֆիրոզուսին:

Մահմուդի մահից հետո, որը տեղի ունեցավ 1030 թ., Ղազնևիների պետությունն սկսեց թուրանալ և տարածեներ կորցնել: Առաջին և լուրջ հարվածը հասցրեցին սելջուկները, որոնք գրավեցին Խորասանը և Խորեզմը, ապա նաև Նիշապուրը, որտեղ թուրիլը 1038 թ. իրեն հռչակեց սուլթան և դրեց սելջուկյան պետության հիմքերը: Ամբողջ XI դարին անցավ կատաղի պայքարով Ղազնևիների և սելջուկների միջև: Պայքարն ընթանում էր հիմնականում Արևմտյան Աֆղանստանի և Սիստանի համար: Բայց, այդուհանդերձ, մահացու հարվածը Ղազնևիների պետությանը հասցրեցին ոչ թե սելջուկները, այլ Դուրիները, որոնք հաստակել էին Կենտրոնական Աֆղանստանում: Նրանք 1186 թ. գրավեցին Ղազնևիների մայրաքաղաք Ղազնահը և վերջ տվեցին այդ պետության գոյությանը:

### III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

#### 1. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆՎԱճՄԱՆ ԱՐՄԱՔԻՆ և ՆԵՐՔԻՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Արքայան խալիֆայության թուրացումը արտաքին բարենպաստ պայմաններ ստեղծեց Պայաստանի համար վերանվանելու իր անկախությունը և վերականգնելու իր պետականությունը:

Խալիֆայության տրոհումն առանձին էմիրությունների, որի մասին խոսվեց վերևում, նրա տնտեսական և ռազմական տկարացումը, կենտրոնական իշխանության թուրացումը, որոշ դեպքերում անգամ անդամալույթ վիճակը, նրան հնարավորություն չեն տալիս արագործն արձագանքելու անծայրածիր կայսրություն զանազան մասերում տեղի

ունեցող իրադարձություններին և համարժեք վճռական քայլերի դիմելու տրոհման գործընթացը կանխելու համար: Խալիֆան և արքունիքը, չնայած համար դիմադրությանը և հակառակ իրենց ցանկությանը, հարկադրված էին նահանջել և զիջումներ անել վարչատարածքային կազմավորումներին, էմիրություններին, նրանց «շնորհելով» տարրեր աստիճանի ինքնուրույնություն:

Այդպիսի իրադրությունը մեծապես բարենպաստ եղավ Շայաստանի համար, որը կարողացավ մեծ հնտությամբ օգտագործել արտաքին նպաստավոր իրադրությունը և դրսորելով քաղաքական կամք, բարոյական մեծ ոգի ու վճռականություն, անկախության վերականգնումը դարձնել օրակարգի հարց:

Արտաքին բարենպաստ գործոնների մեջ հարկ է հիշատակել նաև Բյուզանդիայի հարաբերական հզորացումը, որն ավելի ակտիվ քաղաքականություն էր վարուժ Աքքասյան խալիֆայության նկատմամբ, խրախուսում խալիֆայության տրոհման գործընթացը և օգնում խալիֆայության դեմ հանդես եկող ուժերին: Խսկ դա նշանակում էր, որ հայ նախարարներն անհրաժեշտության դեպքուն կարող էին ակնկալել բյուզանդացիների օգնությունը և խաղալ արարա-բյուզանդական հակասությունների վրա:

Բարենպաստ դասավորվեցին նաև ներքին պայմանները: Դրանց մեջ առաջին հերթին պետք է ընդուն անկախության գաղափարի համակումը Շայաստանի բոլոր խավերին՝ նախարարներին, շինականներին, զինվորականներին և հոգևորականներին: Դայ հասարակության բոլոր դասերը համամիտ էին արաբական տիրապետության թոքափման և Շայաստանի անկախ պետականության վերականգնման հարցում և պատրաստ էին ամենայն գոկողության:

Խալիֆայության անընդհատ թուլացմանը գուգահեռ ուժեղանում էին հայ նախարարների դիրքերը, նրանց տնտեսական և ուսումնական ուժը: Անկախության վերականգնման շարժումը գիտակցարար, և ոչ թե ակամայից, գլխավորում էին հայ նախարարները: Դայ ժողովրդի պատմության մեջ դա այն երջանիկ պահերից մեկն էր, երբ հայերը ազգովին միակամ էին, ունեին պայքարի համար պատրաստ դեկավարություն և, որ պակաս կարևոր չէ, պատրաստ էին մինչև վերջ գնալու նրա հետևից:

Իր դերը խաղաց նաև հայ նախարարների աստիճանակարգում և կազմում բնական ճանապարհով տեղի ունեցած մի էական փոփոխություն: Դայ ժողովրդի պատմության մեջ դարեր շարունակ առաջնակարգ

դերակատարում է ունեցել Մամիկոնյան նախարարական տունը, որին պատկանում էր սպարապետի իրավունքը: Նա Ծշտապես ազնվորեն ծառայել է հայոց թագավորներին ու պետականությանը և անջնջելի հետք բողել հայ ժողովրդի պատմության մեջ: Մամիկոնյանները միշտ առաջինն են իրենց Վրա վերցող հարվածները և կյանքը զոհել Դայաստանի համար: Այդ երկարատև պայքարում նրանք արյունաքամ եղան և, ի վերջո, IX դարի կեսերին թուլացան և իրենց տեղը, ինչպես և Կամսարական նախարարական և այլ տները, գիծեցին հայ նախարարական մյուս բարձրացող տոհմերին, առաջին հերթին Բագրատունիներին:

Բագրատունիները իրենց խիզախությամբ բնավ չեն գիծում Մամիկոնյաններին: Ի դեմս այդ հինավուրց հայկական նախարարական տոհմի, հայ ժողովուրդը գտավ արժանավոր դեկավար ուժ, որը հաջողությամբ խիզախությունը զուգակցում էր հաշվեմկատ, սթափ և հեռատես քաղաքականության և նրբին դիվանագիտության հետ: Ընորիկվ այդ հատկանիշների, Բագրատունյաց նախարարական տունը դարձավ հայ իրականության դեկավար քաղաքական և ռազմական ուժը, որը և գլխավորեց հայերի պայքարը խալիֆայության դեմ, իրականացնելով հայոց հողի Վրա անկախ պետություն ունենալու հայ ժողովրդի իդծերը:

Մեծացավ նաև հայ նախարարական այլ տների, հատկապես Արծրունիների և Սյունյաց իշխանների քաղաքական կշիռը, որոնք սատարեցին Բագրատունիներին Դայաստանի անկախության համար պայքարում:

Կարելի է ասել, որ անկախության համար պայքարի պատրաստ հայ ժողովուրդը պատմական այդ բախտորոշ պահին ունեցավ արժանի դեկավարություն:

Եվ, վերջապես, խոսելով ներքին գործուների մասին, անհրաժեշտ է շեշտել հայերի անկուտրում կամքը: Նրանք մեկ անգամ չեն, որ ապստամբել էին Աբբասյան խալիֆայության տիրապետության դեմ, և խալիֆաները մեկ անգամ չեն, որ ճնշել էին հայերի ապստամբությունները: Դիշենք, թեկուզ, 703, 747–750 և 774–775 թթ. ապստամբությունները, որոնք հայոց միջնադարյան պատմության ամենափայլուն հերոսական էքերից էին: Եվ չնայած նրանց պարտություններին, դրանք սասանում էին Աբբասյանների տիրապետությունը Դայաստանում, հայերի մարտական ոգին մնում էր անկուտրում, իսկ օտարի տիրապետության վերացումը հայոց աշխարհից՝ հայերի նվիրական նպատակը:

Դրա նոր հաստատումը հանդիսացավ հայերի 850–852 թթ. ապստամբությունը, որը գլխավորեցին հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու երկու որդիները՝ Աշոտն ու Դավիթը և Սասունի ու Խուրի հայ լեռնականների առաջնորդ Խութեցի Դովնանը: Ապստամբները հարծակվեցին Մուշը գրաված արարական ոստիկան Յուսուֆի վրա, ջախջախեցին նրա զորքերը, ազատագրեցին Մուշը և սպանեցին Յուսուֆին, որը կալանավորել և Սամարրա էր ուղարկել հայոց իշխանաց իշխանին:

Մուշում տարած հաղթանակի լուրը տարածվեց ամբողջ Հայաստանով մեկ: Ապստամբներին միացան հայկական նոր շրջաններ, որը թույլ է տալիս ասելու, որ ապստամբությունը համընդհանուր բնույթ ընդունեց:

Ապստամբվեցին նաև Քարթին և Կախեթը: Վրաց ապստամբները կապերի մեջ էին հայ ապստամբների հետ: Հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին հորդորել էր Վրացիներին դիմադրել արաբներին և թույլ չտալ արարական պատժի ջոկատներին մտնել իրենց երկիրը:

Խալիֆա Մութավաքրիլը, առնելով արաբների պարտության և Յուսուֆի սպանության բոթը, 852 թ. հավաքեց մեծաքանակ զորք հայերին և վրացիներին պատժելու համար: Արաբները Բուղա գորակրամանատարի գլխավորությամբ ներխուժեցին Հայաստան, առաջին հարվածը հասցնելով Սասունին և Խուրին, մեծ ավերածություններ գործելով այդ և հայկական այլ շրջաններում: Հայերը կարողացան կրկին միավորվել և դուրս գալ Բուղայի գորքերի դեմ: Հայկական զորքը, որը թվաքանակով գիշում էր Բուղայի 15 հազարանոց զորքին, ինչպես նշում է Թովմա Արծրունին, Արյան լճի մոտ տված ճակատամարտում հասավ փայլուն հաղթանակի և թշնամուն հայածեց մինչև Ալտրպատականի սահմանները:

Սակայն նոր գորախմբով Բուղան 853 թ. վերսկսեց հարծակումները հայկական շրջանների վրա, ապա անցավ Քարթի, գրավեց և հրկիցեց Տփիլիսը:

Բայց դրանք արաբների վերջին լուրը ուազմական ասպատակություններն էին, որոնք մահամերձի ջղագություններ էին հիշեցնում: Նրանք այդպես էլ չկարողացան մինչև վերջ և հիմնովին ճնշել ապստամբական շարժումները Հայաստանում: Նրանց տիրապետությունը Հայաստանում անկասելիորեն նոտենում էր իր վախճանին:

## 2. Իշխանաց իշխանից մինչև թագավոր: Դայաստանն անկախ պետություն

Դայերի համառ դիմադրությունը, չնայած Բուղայի գործած դաժանություններին և ասպատակություններին, ստիպեց Մութավաքիլ խալիֆային փոխել իր քաղաքականությունը Դայաստանի նկատմամբ և գնալ որոշ գիծումների:

Նրա հրամանով Բուղան 855 թ. հետ կանչվեց Դայաստանից: Վերադառնալով Սամարրա, նա իր հետ տարավ մի շարք հայ նախարարների, այդ թվում և սպարապետ Սմբատ Բագրատունուն, որոնք փաստորնեն գտնվում էին զերու կարգավիճակում: Նույն թվականին խալիֆայի հրամանով Դայոց իշխան և սպարապետ նշանակվեց սպարապետ Սմբատ Բագրատունու որդի Աշոտը, որը պատկանում էր Բագրատունների շիրակյան ճյուղին: Նա արդեն այդ ժամանակ մեծ հեղինակություն էր վայելում Դայաստանում և առանձնանում հայ իշխանների մեջ իր խելքով, վարվեցրությամբ, դրսնորելով զեկավարի բարձր հատկանիշներ: Այդ մասին IX-X դարերի պատմիչ Շովիաննես կաթողիկոս Դրասխանակերտցին գրում է. «Խակ երբ իր հոր՝ Սմբատի փոխարեն (Աշոտն) է տիրում Դայոց սպարապետությանը, իրենից առաջ եղողներից գրեթե ամենաբարձր ինքն է ճանաչվում, քանի որ ընդունելով մեծարանքներ՝ արհամարհում էր անարգանքը և միշտ իրեն վարժեցնում էր բարի կրության ու ուսման մեջ»:

Հարունակելով գիծումների և հայերին սիրաշահելու քաղաքականությունը, Աբբասյան հաջորդ խալիֆա ալ-Մուսթահնը Աշոտ Բագրատունուն 862 թ. շնորհում է «Բատրիկ ալ-բատրիկա»՝ «Իշխանաց իշխան» տիտղոսը, որն իրավական առումով մի նոր բարձր աստիճանակարգ էր սահմանում Աշոտ Բագրատանու համար, օժտելով նրան ավելի լայն լիազորություններով և էլ ավելի ընդգծելով նրա առաջատար դիրքը Դայաստանում:

Խալիֆայի այդ որոշումը Դայաստան է բերում և Աշոտ Բագրատունուն հանձնում խալիֆայությունում հայտնի զորահրամանտարներից մեկը, Ալի իբն Յահյա ալ-Արմանին: Ահա թե ինչ է գրում այդ մասին Շովիաննես Դրասխանակերտցին. «Ապա Դայաստան ուղարկված Ալի Արմանի անունով մի ոստիկան՝ ամիրապետի հրամանով նրան (Աշոտին) կարգում է Դայոց իշխանաց իշխան՝ զարդարելով բազում զգեստներով և արքունական պատվով, նրան վստահելով Դայոց հարկերն ու

արքունի ամբողջ տուրքը»: Շարունակելով այդ կարևոր իրադարձության նկարագրությունը, հայ պատմիչն ավելացնում է. «Այսպիսով նա եղավ առաջինն ու ավելի պատվականը, քան Դայոց բոլոր նախարարությունները և բոլորը դաշինք էին կնքում նրա՝ որպես բուն թագավորական ժառանգի հետ»:

Աշոտ Բագրատունու կարգավիճակի բարձրացումը նշանակում էր համապատասխանաբար Դայաստանի կարգավիճակի բարձրացում: Նա դառնում էր ինքնուրույն ներքին հարցերում: Ներքին տնտեսական, կառավարման, հարկային, անվտանգության պահպանման և քազում այլ հարցեր անցնում են Դայոց իշխանաց իշխանի իրավասությանը: Նա կարողացավ իրեն ենթարկել ինչպես հայ նախարարներին, այնպես էլ Դայաստանի տարածքում հաստատված արարական ենթիրերին, որոնք նույնպես պարտավոր էին հարկ վճարել և. իրոք, վճարում էին հայոց իշխանաց իշխանին:

Աշոտ Բագրատունին երկրում հաստատեց կարգ ու կանոն, ամրապնեց հայկական ռազմական ուժերը, հայոց պահապան բանակի թիվը հասցնելով 40 հազարի: Դայկական ռազմական ուժերը գլխավորում էին հայ զորահրամանատարները, իսկ բանակի ընդհանուր իրամանատարությունը նա հանձնեց իր եղբորը՝ Աբբաս Բագրատունում: Ինչպես վկայում է Դովիաննես Դրասխանակերտցին, «Դայոց մեծ սպարապետությունը Աշոտը տալիս է իր եղբայր Աբբասին, որը քաջազուն, թիկնավետ, զորեղ, վայելչակազմ, պատերազմի մեջ կորովի ու ճարպիկ տղամարդ էր: Աջակցելով իր եղբայր Աշոտին՝ բոլորին հնագանիցնում է ու գցում նրա լծի տակ: Հատ տեղերում բազմիցս արիություն ցուցաբերելով՝ նա շատերի աչքում հոչակավոր և հոյակապ էր երևում»:

Դայաստանը գտնվում էր լրիվ անկախության նախաշեմին: Նրան ընդամենը մեկ քայլ էր պակասում մինչև թագավորությունը: Եվ այդ քայլը կատարեցին հայոց եկեղեցին և նախարարները: Դովիաննես Դրասխանակերտցու վկայությամբ, հայոց նախարարներն ու իշխանները, բարձր գնահատելով Աշոտ Բագրատունու արժանիքները, «բոլոր միաբերան խորհուրդ են անում, նրան թագավոր նշանակել իրենց վրա»: Ամենայն հավանականությամբ դա տեղի է ունեցել 869 թ., Զաքարիա կաթողիկոսի գումարած ժողովում, որին նախարարների հետ միասին նաև նակացել են նաև հոգևոր առաջնորդները, որտեղ և Աշոտ Բագրատունին հոչակավել է հայոց թագավոր:

Խալիֆայությունն անմիջապես չի արձագանքել այդ փաստին և շարունակել է Աշոտ Բագրատունուն ղիտել որպես Բատրիկ ալ-բատրիկա: Այդուհանդերձ, խալիֆա Մութամիդը ստիպված է լինում հաշտվել կատարված իրողության հետ, Աշոտ Բագրատունուն պաշտոնապես ճանաչել Շայաստանի թագավոր և 885 թ. նրան թագ ուղարկել: Թագի հետ միասին, խալիֆան նրան ուղարկում է արքաներին վայել թանկարժեք նվերներ՝ թագավորական զգեստներ, պարզներ, ընծաներ և հրեցեն երիվարներ, գենքեր ու զարդեր:

885 թ., Գևորգ Գառնեցի հայրապետը, որին կաթողիկոս ծեռնադրելու գործում վճռական դեր էր խաղացել իշխանաց իշխանը, Բագրատուն Աշոտ Բագրատունուն հայոց նախարարների ներկայությամբ, ինչպես նշում է Շովիաննես Դրասխանակերտցին, «կատարելով աստվածային հոգևոր օրինությունը՝ նրան թագավոր են կարգում Ասքանացան ազգի Վրա»: Նա օծվում է հայոց թագավոր՝ Աշոտ I անվամբ, իսկ Բագրատունիները հաստատվում են որպես կառավարող թագավորական դիմաստիա:

Այսպիսով, Արշակունիների անկումից 457 տարի և արաբական նվաճումից մոտ 200 տարի անց, Շայաստանը վերականգնեց իր անկախ պետականությունը:

## Գլուխ պասմնեկներորդ

### **ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱՆԻՔԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ (Հ դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – 1258 թ.)**

#### **I. ԽԱՆԻՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԻՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՁՈ (945–1055 թթ.)**

##### **1. Բուիները**

Խալիֆայության տրոհումը, որին անդրադառնք նախորդ գլխում, թեև թուլացնում էր նրան քաղաքականապես, տնտեսապես և ռազմական առումով, այդուհանդերձ, դեռևս չեր նշանակում նրա վերացում կամ անկախության կորուստ: Խալիֆայության շրջանակներում ինքնավարություն, իսկ առանձին դեպքերում ավելի բարձր աստիճանակարգ ծեռք բերած պետական կազմավորումները հիմնականում բավարարվում էին իրենց նոր կարգավիճակով և չեին խորհում Բաղդադը գրոհելու, խալիֆայի հրավասությունները խելու կամ խալիֆայության վրա քաղաքական իշխանություն հաստատելու մասին:

Սակայն այդպես երկար շարունակվել չեր կարող և վաղ թե ուշ հայտնվելու էին այնպիսի ուժեր, որոնք արդեն մարտահրավեր էին նետելու խալիֆայության բուն գոյությանը և նրանք էին սահմանելու խալիֆայության համար նոր կարգավիճակ՝ ըստ նոր քաղաքական իրողությունների և ուժերի հավասարակշռության, որն արդեն հօգուտ խալիֆայության չեր:

Բաղդադին անմիջականորեն առաջին ծեռնոց նետողները եղան Բուիները: Իսկ ո՞վեր էին նրանք, ե՞րբ և ի՞նչպես հայտնվեցին քաղաքական ասպարեզում:

Բուիները կամ Բուվայիները Կասպից ծովի հարավ–արևմտյան մասում գտնվող Դալյամ լեռնային շրջանի իրանական ծագում ունեցող ռազմատենչ ժողովուրդների ազդեցիկ կլաններից մեկն էին: Նրանց մարտունակ լինելը նրանց դարձրել էր ցանկալի գինվորներ տարածաշրջանի տեղական զանազան կառավարողների համար, որոնց վարձում էին նրանց և օգտագործում իրենց ռազմաքաղաքական նպատակների համար: Նրանցից շատերը, որոնց անվանում էին նաև դմիկներ, ծառայության մեջ էին մտնում անգամ խալիֆաների մոտ: Դմիկ գորարանանատրներից մեկը, Մարուակից իրն Զիյարը, որը ստեղծել էր ուժեղ բանակ, կարողացավ X դ. 20–30–ական թվականներին գրավել Թարարստանը, Գիլանն ու Զիբալը և Իրանի մի շարք քաղաքներ, այդ թվում Ույը, Սպահանը և Յամադանը: Նրա հեռակա ծրագրերի մեջ մտնում էր արշավանքը Բաղդադի վրա, նրա գրավումը և Արքայան խալիֆաներին իրեն ենթարկելը: Սակայն նա չհասցրեց իրագործել իր նվաճողական ծրագրերը: 935 թ. նա սպանվեց իր գործերում ծառայող բուրզ վարձկանների մեջքով:

Այն, ինչ նրան չհաջողվեց իրագործել, նրա սպանությունից հետո իրագործեցին Բուիները:

Բուիների տոհմի հիմնադիրն է համարվում Արու Շաքա Բուվային, որը, իր հեղինակությունը բարձրացնելու համար, փորձում էր հավատացնել, թե ինքը, իբրև թե, սերում էր Սասանյան արքայական տոհմից: Նա մի ռազմատենչ զորագնդի հրամանատարն էր, որը հիմնականում կազմված էր դայլամի լեօնեցիներից, և մի ժամանակ ծառայության մեջ է գտնվել Սամանիների մոտ:

Արու Շաքան ուներ երեք որդի՝ Ահմադը, Ալին և Յասանը, որոնք սկզբում, որպես զորակրամանատարներ, ծառայության մեջ էին գտնվում իրն Զիյարի մոտ: Բայց հետո նրանցից յուրաքանչյուրը կազմում է իր գորաքանակը, որը բաղկացած էր նրանց ազգական դայլամցիներից, և սկսում են իրենց ինքնուրույն քաղաքականությունը վարել: Նրանք իրենց նվաճումներն իրականացնում են Արևմտյան Իրանի ուղղությամբ: Եղայրներից ավագը՝ Ալին, գրավում է Ֆարսը, Յասանը՝ Զիբալը, իսկ Ահմադը՝ Քերմանը և Ահվազը (Խուզխստանը): Բուիների տիրապետության տակ անցան Իրանի արևմտյան և հարավային քոլոր նահանգները: 934 թ. Բուիները գրավեցին Սպահանը, Շիրազը համանուն նահանգի հետ միասին, Ույը և Յամադանը:

Այսպես ստեղծվեց Բուհների պետությունը, որը մոտ մեկ հարյուրամյակ առաջնակարգ դերակատարություն ունեցավ տարածաշրջանում: Բուհների մայրաքաղաքը դարձավ Շիրազը:

Երեք եղբայրներն էլ իրենց իրենց շնորհեցին համապատասխան տիտղոսներ: Ավագ եղբայր՝ Ալին, իրեն անվանեց Ինադ աղ-Դավլա՝ «Պետության հենարան», Դասանը՝ Ուուկն աղ-Դավլա՝ «Պետության սյունը», իսկ Սիմանը՝ Մուհիզ աղ-Դավլա՝ «Պետությունը հզոր դարձնող»: Այս երեք ինքնանվանումներն էլ հաստատվեցին խալիֆա ալ-Մուստաքիի (944–946) կողմից:

## 2. Բաղդադի գրավումը և խալիֆայության անցումը Բուհների տիրապետության ներքո

Կարճ ժամանակամիջոցում հասնելով այսպիսի փայլուն ռազմական հաղթանակների, ստեղծելով իրենց պետությունը և հաստատվելով գահի վրա որպես կառավարող դիմաստիա, Բուհները դիմեցին հաջորդ քայլին, որն ունեցավ քաղաքական և պատմական մեծ հետևանքներ:

945 թ. Բուհների գործը Սիմանի գլխավորությամբ նտավ Աբբասյան խալիֆաների մայրաքաղաք Բաղդադը: Մայրաքաղաքի գրավումը նա իրականացրեց բավականին արագ և հեշտությամբ, քանի որ խալիֆայության մայրաքաղաքում չգտնվեցին ուժեր, որոնք ի վիճակի լինեին լուրջ դիմադրություն ցույց տալ նրա գործերին: Միակ ուժը, որը կարող էր ինչ-որ չափով դիմադրել նոր նվաճողներին, թուրքական զվարդիան էր: Բայց թուրք գինվորականները տեսնելով, որ Մուհիզ աղ-Դավլայի գործերը մոտենում են մայրաքաղաքին, լքեցին խալիֆային և փախան Քաղդարից:

Խալիֆա ալ-Մուստաքիին ընդունեց Սիմանին մեծ հանդիսավորությամբ և նրան շնորհեց «Էմիր ալ-ումարի»՝ «Էմիրների Էմիր» տիտղոսը, ճանաչելով նաև նրա, ինչպես նշվեց, Մուհիզ աղ-Դավլա՝ «Պետությունը հզոր դարձնող» տիտղոսը:

Քաղդարի գրավումով և Բուհների տիրապետության հաստատումով, ստեղծվեց յուրահատուկ վիճակ: Պաշտոնապես խալիֆայությունը չվերացվեց և պահպանվեց խալիֆայի ինստիտուտը: Սակայն Բուհները խալիֆային զրկեցին աշխարհիկ քաղաքական ամբողջ իշխանությունից և նրան ծնականորեն թողեցին միայն մուսուլմանների հոգնոր առաջնորդի ֆունկցիաները: Դա էլ արտահայտվում էր միայն այն բանում,

որ Բուհները թույլատրեցին խալիքայի անունը հիշատակել միայն ուրբաթօրյա աղոթքի ժամանակ, բայց... իրենց անվան հիշատակման հետ միասին, որն աննախաղեա երևույթ էր: Դա նշանակում էր, որ Բուհ սուրբանը կամ Եմիրների Եմիրը, Աքբասյան խալիքայի հետ համահավասար հանդես էր գալիս որպես հոգնոր առաջնորդ:

Այդպիսին էր հաղթողների կամքը և անզոր խալիքաները ստիպված համակերպվեցին իրենց նոր կարգավիճակի հետ:

Սակայն այս հարցում կար մի կարևոր նրբություն: Բուհները սահմանափակեցին խալիքայի հոգնոր առաջնորդ լինելու շրջանակները: Նրանք խալիքային դիտեցին որպես միայն ու միայն սուսնի մուսուլմանների հոգնոր զեկավար, նրա իրավասության ոլորտից հանելով շիաներին և մյուս ոչ ուղղափառ աղանդները: Դա բացատրվում է նրանով, որ Բուհներն իրենց շիաներ էին և նրանց տիրապետության տարիներին արտակարգ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին շիհզի ծաղկման և դիրքերի ամրապնդման համար: Ահմադն սկսեց իր անունով դրան հատել:

Բուհները իրաքը, Աքբասյան խալիքայության քաղաքական կենտրոնը, Բաղդադի հետ միասին նտցրեցին իրենց պետության կազմի մեջ որպես մի սովորական նահանգ: Նրանք Շիրազը շարունակեցին պահել որպես իրենց պետության մայրաքաղաք, Բաղդադին թողնելով ոչ մայրաքաղաքային, գավառական քաղաքի վիճակում: Անբողջ խալիքայությունն անցավ նրանց կառավարման և վերահսկողության տակ:

Այսպիսով, ինչպես իրավացիորեն նշում են Ի. Ֆիլչտինսկին և այլ հետագոտողներ, «Արաբական կայսրությունը փաստորեն դադարեցրեց իր գոյությունը»: Խոկ Ֆ. Ֆիրբին 945 թ. զեկտեմբերը, երբ Բուհները գրավեցին Բաղդադը, համարում է «խալիքայության պատմության ամենամոյլ էջը»:

Բոլոր իրավունքներից գրկված խալիքաները դարձան տիկնիկներ Բուհների ծեռքում, որոնց նրանք պահում էին լոկ նրանց անունից հանդես գալու համար: Պատահականություն չէ, որ ալ-Մուստաքիին հաջորդած խալիքա Մուտին (946–974 թթ.), ինչպես վկայում է արաբական X–XI դարերի պատմաբան և փիլիսոփա Միսկավայիր, իր «զահակալության» անբողջ շրջանում տրտնջում էր, որ Բուհներն իրեն գրկել են ամեն ինչից, իրեն չեն թողել ոչ իշխանություն, ոչ դրամ և ոչ էլ աշխարհիկ գործերը տնօրինելու հնարավորություն: Դեռ նրա բախտը բերել էր: Նա չունեցավ իր անմիջական նախորդի, խալիքա ալ-Մուստաք-

Ֆիլ ողբերգական ճակատագիրը: Ահմադը կամ Մուհամ աղ-Դավլան, որը խալիֆա ալ-Մուստակֆիի ծեռքից էր ստացել էնիրմերի էնիր տիտղոսը, 946 թ. նրան կուրացրեց, գահընկց արեց և արդեն իմաստազուրկ դարձած խալիֆայի պաշտոնին նստեցրեց ալ-Մուտիլին:

Ընդհանրապես Մուհամ աղ-Դավլան աչքի էր ընկնում իր կոպտությամբ և դաժանությամբ, այդ թվում և իր մնջավոր խորհրդականների և վազիրների նկատմամբ: Նա շատ հաճախ ծնծում էր իր պաշտոնաներին, այդ թվում և վազիրին, և վերջինս անգան չէր հանդգնում ծպտուն հանել: Շատ լավ ինձնալով, թե դա ինչպիսի շարունակություն կարող է ունենալ:

Բուհների պետությունն իր հզորության գագաթնակետին հասավ Դասան Ռուկն աղ-Դավլայի որդու՝ Աղուտ աղ-Դավլայի գահակալության տարիներին (949–983 թթ.), որը հաղթող դուրս եկավ զահի համար մղվող պայքարում: Նա ամենամեծ, ամենախելացի և ամենահզոր Բուհ սուլթանը եղավ: Նրա օրոք Բուհների պետությունը նվաճեց նորանոր տարածքներ, իրեն միացրեց մի քանի փոքր «թագավորություններ», որոնք կազմավորվել են Պարսկաստանի և Իրաքի տարածքներում, և Վերածվեց մի ընդարձակ կայսրության, որն իր չափերով համարյա հավասար էր Չարուն աղ-Շաշիի կայսրությանը:

Աղուտ աղ-Դավլան ամուսնացավ խալիֆա աթ-Թամիի աղջկա հետ, իսկ խալիֆան նրա աղջկա հետ, հագուրդ տալով խալիֆայից ժառանգորդ ունենալու իր հեռուն գնացող փառասիրական նկրտումներին:

Աղուտ աղ-Դավլան էնիրների էնիր իր տիտղոսին պելացրեց նաև շահնշահ՝ արքայից արքա տիտղոսը, որը բնորոշ էր իրանական թագավորական տիտղոսացանկին: Նա եղավ առաջին իսլամ կառավարողը, որը կրեց այդ բարձր տիտղոսը, և որը շարունակեցին կրել նաև նրա հաջորդները:

Աղուտ աղ-Դավլան նվաճողական քաղաքականության հետ միասին, մեծ ուշադրություն էր դարձնում տնտեսությանը, մշակույթին, գրականությանը և այլն: Դատկապես նա մեծ կարևորություն էր տալիս հարկահավաքությանը: Այդ բնագավառում կարգապահություն հաստատելու նպատակով, նա նտցրեց գյուղացիներից գանձվող հարկերի սահմանված չափաբաժնին: Դա մի կողմից գյուղացիներին ազատեց հարկահավաքների կամայականություններից, իսկ մյուս կողմից ավելացրեց գանձարանի մուտքերը:

Գյուղատնտեսությունը խթանելու նպատակով, նա զարգացրեց ողոգման համակարգը, կառուցեց նոր ջրանցքներ, ամբարտակներ և ջրանբարներ, վերանորոգեց հները և այլն: Նա անվտանգ դարձրեց ճանապարհները, քարավանները և ուխտագնացիներն ազատվեցին ավազակային հարձակումներից:

Աղուդա ադ-Դավլան կառուցապատեց և գեղեցկացրեց նոր շինություններով իր մայրաքաղաքը Շիրազը: Դրանց մեջ հիշատակության է արժանի գրադարանի կառուցումը, որը ժամանակի ամենահարուստ գրադարաններից մեկը եղավ: Նա պարունակում էր 10 հազար գիրք և ծեռագիր: Իսկ Բաղրամում կառուցեց հիվանդանոց, որն այնուհետև նրան մեծ հոչակ թերեց: Դիվանդանոցն ուներ իր կայուն թշշկական կազմը, բաղկացած 24 թշշկներից, որին կից գործում էր թշշկական դպրոց:

Նա հովանափորում էր գիտնականներին, փիլիսոփաներին, բանաստեղծներին, երաժիշտներին և մտավորական այլ մարդկանց, որոնց միշտ հարգարժան ընդունելություն էին գտնում արքունիքում, ստանում հոգևոր և նյութական լայն աջակցություն: Բանաստեղծները, որոնց մեջ էր նաև Մութանարին, գովերգում և փառարանում էին իրենց բարերարին:

Աղուդա ադ-Դավլայի մահից հետո ծայր են առնում երկպառակությունները, երայրասպան պայքարը գահի համար և սկսվում է Բուհների պետության աստիճանական թուլացումը, ապա և անկումը:

Սակայն վճռական հարվածը հասցնողները եղան սելջուկները, որոնք 1055 թ. Թուղրիլ թեկի գլխավորությամբ մտան Բաղրամ, և վերջ տվեցին Բուհների պետությանը:

## II. ՖԱԹԻՄՅԱՆ ԽԱԼԻՖԱՑՈՒԹՅՈՒՆԸ (909-1171 թթ.)

### 1. ԽԱՄԱՀԻԼԱԿԱՆ ԱԴԱՆԴԻ Առաջացումը

Խսլամը, բացի սուննի-շիա բաժանումից, որը հիմնականն էր և շարունակում է մնալ այդպիսին նաև օրերում, ժամանակի ընթացքում ունեցավ նաև աղանդավորական բնույթի այլ բաժանումներ: Ասկածը հատկապես վերաբերում է շիհազմին:

Շիհազմի ներսում նոր ուղղությունների ծնավորումը կամ հերթական բաժանումը տեղի ունեցավ VIII դարի կեսերին, երբ ասպարեզ իջակ խսմահիլականությունը, որը, դուրս գալով կրոնական աղանդավո-

րական, դավանաբանական շրջանակներից, ծեռք բերեց քաղաքական բովանդակություն, ցնցելով ամբողջ մուսուլմանական աշխարհը: Սակայն նրա, որպես առանձին կրոնագաղաքարախոսություն, վերջնական ծևավորումը տեղի է ունեցել IX դարի վերջերին:

Եիհզմը, ինչպես նշել ենք, խարսխված է իմամի և իմամության սկզբունքի վրա, որը հանդիսանում է իմանական տարածայնություններից մեկը ուղղափառ սուննիզմի հետ: Բայց շիամերի մոտ ևս չկա միանական կարծիք այդ հարցի վերաբերյալ, որի ցայտուն օրինակն է հանդիսանում իսմահլականությունը:

Իսմահլականությունը ծագել է շիական վեցերորդ իմամ Զաֆար աս-Սադիկի, որը նահացել է 765 թ., մի վիճահարուց քայլի հետևանքով: Իմամ Զաֆար աս-Սադիկն ինքը իմանական շիականության ամենահետևողական և ջեմեռանդ կողմնակիցն էր և ճանաչում էր այդ ուղղության գլխավոր դոգման՝ իմամների հետևողական հաջորդայնությունը: Այդ հերթականությունը կամ իմամների մեկը մյուսին հաջորդելու կարգի խախտումը, համարվում է մեծագույն նահանջ շիականության իմանադրույթներից, որը, սովորաբար դառնում է պառակտման ադրյուր:

Վեցերորդ իմամ Զաֆար աս-Սադիկը դեռևս իր կենդանության օրոց յոթերորդ իմամ նշանակեց իր կրտսեր որորուն՝ Մուսա ալ-Կազիմին, իմամությունից գրկելով մինչ այդ իմամ նշանակված իր ավագ որդուն՝ Խսմահլին, որը նահացել էր 760 թ.: Իմամ Զաֆարի կողմնակիցները և հետնորդները նրա այդ որոշումը համարեցին օրինական և որպես իմամ ճանաչեցին Մուսա ալ-Կազիմին և նրա հետնորդներին, մինչև տասներկուերորդ իմամ Մուլիմմադը, որն անհետացել էր 874 թ.: Այդ պատճառով էլ այն շիամերը, որոնց ճանաչում են 12 իմամներին, համարվում են իմանականներ կամ տասներկուականներ:

Սակայն շիամերի մի մասը հրաժարվեց ճանաչել Զաֆարի այդ որոշումը, գտնելով, որ նա իրավունք չուներ իր ավագ որդուն, Խսմահլին, գրկել իմամությունից: Նրանց փաստարկները հանգում էին հետևյալին:

Առաջին, յուրաքանչյուր հաջորդ իմամի նշանակումը չի կարող տեղի ունենալ նրա նախորդի կամայական որոշումով, քանի որ իմամ նշանակվելը աստվածային բարեհաճություն է և Ամենաբարձրյալի իմաստնության դրսորում: Խակ աստվածային բարեհաճությունը և իմաստնությունը դրսորվում է միայն մեկ անգամ: Եվ քանի որ իմամ Զաֆար աս-Սադիկն արդեն մեկ անգամ Խսմահլին, համաձայն հերթական հաջորդայնության սկզբունքի, արդեն հոչակել էր իմամ, ապա նա իրա-

վունք չուներ նրան զրկել իմամությունից, եթե նույնիսկ նա արդեն մահացել էր:

Երկրորդ, Իսմահիլի ջերմեռանդ կողմնակիցները հայտարարեցին, որ իրենք չեն հավատում Իսմահիլի մահվանը, գտնում են, որ նա կենդանի է, և նույնիսկ եղան ականատեսներ, ովքեր հավաստում էին, թե նրան տեսել են 760 թ. հետո, որը համարվում է նրա մահվան տարեթիվը:

Դյուրահավատ շիաները վստահություն ընծայեցին այդ լուրերին, որը ծանր դրության մեջ դրեց իման Զաֆարին ու նրա կողմնակիցներին, և սուր լարվածություն ստեղծեց շիա համանցի ներսում:

Երրորդ, իման Զաֆարի կողմնակիցները, իրենց դիրքերն ամրապնդելու միտումով, սկսեցին այն վարկածը տարածել, թե Իսմահիլն իմամության ժառանգական իրավունքներից հայրը զրկել է այն պատճառով, որ նա գինենոլության հակումներ ուներ, իսկ Կորանն արգելում է գինին և դատապարտում գինենոլությունը:

Իսմահիլի կողմնակիցները զգնացին այդ տեսակետը, այսինքն Իսմահիլ կողմից գինի խնելը ժխտելու ուղիով: Նրանք առաջ քաշեցին մի թեզ, որի համաձայն Ալիի սերունդներին պատկանող իմամների տոհմի ոչ մի արարք, այդ թվում և գինենոլությունը, չի կարող մեղք համարվել:

Իսմահիլն իմամությունից զրկելու պատճառների հարցում ավելի հավանական է համարվում այն տեսակետը, որ իման Զաֆարը կողմնակից էր ավելի մեղմ քաղաքականության, այդ թվում և Աբբասյանների հետ փոխհարաբերություններում, որն առաջացնում էր շատ շիաների դժգոհությունը, որոնք հանդես էին գալիս ավելի արմատական քաղաքականություն, ընդհուպ մինչև բռնություններ կիրառելու պահանջով: Իսկ Իսմահիլը ավելի եռամդրուն, կոշտ և նույնիսկ ծայրահեղական քաղաքականության կողմնակից էր և, ըստ երևութին, արտահայտում էր շիաների արմատական թեսի տրամադրությունները և շահերը: Այս թեսի հաղթանակը կանխելու միտումով իման Զաֆարը զրկում է Իսմահիլն իմամության իր ժառանգական իրավունքից:

Ահա այս հորի վրա տեղի ունեցավ շիաների պառակտումը իմամականների և իսմահիլականների:

Այն շիաները, ովքեր կողմնակից էին իմամների նշանակմանն ըստ դիմաստիական սկզբունքի և, ելնելով դրանից, գտնում էին, որ օրինական իման պետք է ճանաչել Իսմահիլն, իսկ նրա որդուն, Մուհամմադ իբն Իսմահիլն պետք է ընդունել որպես յոթերորդ իման, կոչվեցին իսմահիլականներ:

Իսկ նրանք, ովքեր ճանաչեցին իմամ նրա նախորդի կամոք նշանակելու սկզբունքը և այդ հիման վրա օրինական ճանաչեցին Մուսա ալ-Կազիմին և նրան հաջորդած նս հինգ իմամներին, որոնց ընդհանուր թիվը կազմում է 12, նրանք համարվում են շիա իմամականներ:

Բայց դա դեռ բոլորը չեր: Նետագայում պառակտում առաջացավ արդեն իսմահլականների շարքերում:

Իսմահլականների մի մասը գտնում էր, որ Մուհամմադ իբն Իսմահլը շիաների վերջին ու յոթերորդ իմամն է, և նրանով ավարտվում է իմամների պարագիծը: Միաժամանակ նրանք գտնում էին, որ այդ յոթերորդ իմամը գտնվում է ինչ-որ տեղ թաքստոցում, և վաղ թե ուշ դուրս է գալու իր թաքստոցից և մարդկությանց երգանակություն է թբելու: Այն շիաները, ովքեր կողմնակից էին իմամների թիվը սահմանափակել յոթով և վերջին իմամ ընդունել Մուհամմադ իբն Իսմահլին, նրանք կոչեցին յոթականներ:

Իսմահլական շիաների մյուս խումբն այլ դիրք գրավեց: Նրանք ընդունում էին Մուհամմադ իբն Իսմահլի տղաներից մեկի և նրա հաջորդների իմամությունը. նրանց համարելով «ծպտյալ իմամներ»: Դրա հետ մեկտեղ, նրանք գտնում էին, որ իրենց կողմնակիցների մեջ կա ընտրյալների մի խումբ, որին հայտնի է այդ «ծպտյալ իմամների» անունները և նրանց գտնվելու վայրը:

Նետագայում, Հ դարի սկզբներից, իսմահլականների այս թևի հետևորդները կոչվեցին «Ֆաթիմյան իսմահլականներ» Մուհամմադ մարգարեի աղջկա և Ալիի կնոջ՝ Ֆաթիմայի անունով: Դրանով նրանք ընդգծում էին իրենց ուղղակի կապը մարգարեի տոհմի և Ալիի հետ:

## 2. Կարմաթները և Բահրեյնի կարմաթական խալիֆայությունը

Եռթական իսմահլականները հայտնի են նաև կարմաթներ անվամբ: Իսմահլական այս աղանդն իր կարմաթ անվանակոչումը ստացել է Դամդան Կարմաթի անունից: Նա Կուֆայի մերձակայքում բնակվող մի հասարակ գյուղացի էր, որը ջերմեռանդորեն սկսեց քարոզել յոթական իմամության գաղափարները և կարողացավ իր շուրջը հավաքել հավատացյալների հոժ զանգված: Դա տեղի ունեցավ IX դարի վերջերին:

Կարմաթների շարժումը շուտով զուտ կրոնական աղանդավորական շարժումից վերածվեց սոցիալ-քաղաքական շարժման: Նրա հիմնական պահանջը դարձավ սոցիալական արդարության և հավասարու-

թյան հաստատումը, հավասարության վրա հիմնված մի նոր հասարակության կառուցումը, որը երգանկություն կրերի բոլոր նրանց, ովքեր կիավատան կարմաթների ուսմունքին և կիետնեն նրանց:

Կարմաթները երկրի վրա արդարության և հավասարության հաստատումը կապում էին իմաս Մոլիամմադ իբն Խսմահիլի նոր հայտնության, թաքստոցից դուրս գալու հետ, որը պետք է տեղի ունենար շուտով: Ելնելով Մոլիամմադ իբն Խսմահիլի մոտալուտ գալուստի տեսադրույթից, կարմաթները իսլամական օրենքները հայտարարեցին չեղյալ:

Բնակչության ամենալայն խավերը՝ գյուղացիները, արիեստավորները և բեղվինները, խանդակառությամբ էին ընդունում կարմաթների նման հայտնությունները:

Կարմաթների համայնքներ առաջացան Վասիտի և Կուֆայի շրջաններում և հարավային Երաքի այլ վայրերում, սարսափի մեջ գցելով Աբբասյաններին, որոնք, սակայն, անզոր էին որևէ բան անել:

Կարմաթները մեծ հաջողության հասան Բահրեյնում, որտեղ 899 թ. նրանք իիմնեցին իրենց պետությունը, որը նույնպես կոչվում էր խալիֆայություն: Նրա նայրաքաղաքը դարձավ Շաջար ամրոց քաղաքը: Այս նորաստեղծ պետության ղեկավար դարձավ Աբրու Սահիդ ալ-Զաննաբին, որը Շամդան Կարմաթի մերձավոր գինակիցներից մեկն էր:

Կարմաթները Բահրեյնը վերածելով իրենց հենակետի, անընդհատ արշավանքներ էին ծեռնարկում իեռու և մոտիկ հարևան շրջանների վրա և չեն խուսափում ճակատամարտ տալուց իրենց հակառակորդներին: 902 թ. Կուֆայի մոտ նրանք պարտության նատնեցին Բաղդադից ուղարկված գորքերին և ամրապնդեցին իրենց դիրքերը Շարավային Երացում:

Լինելով Ֆարիհյան խմահիլական խմանության անզիջող հակառակորդներ, կարմաթները 903 թ. ներխուժեցին Սիրիայի տարածքում գտնվող Սալամիյա ոչ մեծ քաղաքը, որտեղ թաքնված էր ինքնակոչ իմաս Ուբայդալլահը և փորձեցին սպանել նրան և նրա ընտանիքը, քայլ իմանը կարողացավ փախչել և փրկել իր կյանքը, սակայն նրա ամբողջ ընտանիքը ոչնչացվեց: Այդ նույն թվականին նրանք պաշարեցին Ղամասկոսը, որը գրավել նրանց չիհաջողվեց: 923 թ. նրանք գրավեցին Բասրան և ընդհուպ նոտեցան Բաղդադին:

Կարմաթներն ակտիվ գործողություններ էին ծավալել նաև Արաբիայում: 930 թ. նրանք հարձակվեցին Մեքքայի վրա: Այս հարձակումը նշանավոր էր նրանով, որ կարմաթները Կաաբայից տարան «Սև քարը».

մուսուլմանների սրբության ամենակարևոր խորհրդանշական մեջ մեկը, որը կրկին Մեքքայում հանգրվանեց միայն 951 թ.:

Կարմաթական շարժման հաջողությունների մասին է վկայում այն համգամանքը, որ այն ընդգրկում էր Աբրասյան խալիֆայության համարյա ամբողջ տարածքը, Յյուսիսային Աֆրիկայից մինչև Հնդկաստանի սահմանները:

Բարենքնում հաստատված կարմաթների խալիֆայությունը յուրատեսակ համայնք-պետություն էր, որը գլխավորում էր 6 հոգուց կազմված ավագների՝ շեյխների, խորհուրդը: Նա իրավասու էր ընդունել համայնքին վերաբերող բոլոր տեսակի որոշումները՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, դատական և այլն: Կարմաթների խալիֆայությունը իրականում իրենից ներկայացնում էր գյուղացիական-արհեստավորական համայնք, որը հիմնված էր համայնքային ստրկատիրության վրա: Ստրուկների թիվը հասնում էր 30 հազարի, որոնց օգտագործում էին գլխավորապես հանրային աշխատանքների ոլորտում: Թիշ չեն նաև այն ստրուկները, որոնք օգտագործվում էին կարմաթների անձնական տնտեսության մեջ:

Կարմաթները ծգտում էին համայնքային արդարության և հավասարության սկզբունքների վրա խարսխված իրենց երազած համայնքը ստեղծել ստրուկների համայնքային տիրապետության հիմքի վրա: Բայց նրանք, ինչպես և պետք էր սպասել, նատնվեցին անհաջողության: Անհաջողություններն սկսեցին նրանց հետապնդել նաև արտաքին ասպարեզում: Կարմաթներին ծանր հարվածներ հասցրեցին Ղազնիները, նրանց դեմ հաջող էին գործում Սամանիները և այլն:

Կարմաթների հեղինակությանը մեծ հարված հասցրեց նրանց ֆանատիզմը և դաժանությունը, որի պատճառով նրանց շուրջը ստեղծվեց թշնամական մթնոլորտ և շատերը սկսեցին հեռանալ նրանցից: Կարմաթների շարժերը պառակտվեցին և առաջացան առանձին, փոքրիկ աղանդներ: Սկսվեց նրանց պատմության վայրընթաց շրջանը, որն ավարտին հասցրեցին սելջուկները XI դ. կեսերին:

### 3. Ֆարիմյան խալիֆայության հաստատումը

Ֆարիմյան խսմահլականների հաղթարշավը սկսվեց Յյուսիսային Աֆրիկայից, որտեղ 909 թ. կազմավորվեց Ֆարիմյան խալիֆայությունը,

հետագայում ընդարձակվելով և իր մեջ ներգրավելով նորանոր տարածաշրջաններ:

Պատահականություն չէր Ֆարիմյան խալիֆայության առաջացումը հենց Ջյուսիսային Աֆրիկայում: Արդեն նշել ենք, որ խալիֆայության այս ծայրամասում իր դիրքերը կորցրել էին Աբբասյանները: Աբբասյան խալիֆայության տրոհման հետևանքով Ջյուսիսային Աֆրիկայում առաջացել էին ինքնավար, ըստ եռթյան անկախ, պետական կազմավորումներ, իրենց համապատասխան կառավարող դինաստիաներով, ինչպես Աղլարինները Իֆրիկյայում, Ույաստամինները Ալժիրում, Իդրիսները Մաղրիբում և այլն: Ինչպես կյանքը ցույց տվեց, այս կազմավորումները կենսունակ դուրս չեկան: Նրանցում ծայր առան ներքին երկպատճերությունները, ուժեղացավ տեղական բնակչության, առաջին հերթին թերթերի դժգոհությունը, որը շատ հաճախ վերածվում էր զինված ելույթների, ապա և սկսվեց նրանց թուլացման գործընթացը: X դարի սկզբներին հյուսիսաֆրիկյան պետական կազմավորումներն այլևս ի վճակի չեն լուրջ դիմադրություն ցույց տալ որևէ հզոր և կազմակերպված ուժի, եթե այդախին հայտնվեր ասպարեզում:

Սիա այս առունով Ջյուսիսային Աֆրիկայի երկրները հարմար պատառ էին Ֆարիմյանների համար:

Ֆարիմյանների ընտրությունն ընկավ Ջյուսիսային Աֆրիկայի վրա նաև այն պատճառով, որ նրանք չեն կարող նվաճողական ծրագրեր իրականացնել և իշխանություն գրավել Աբբասյան խալիֆայության այլ մասերում: Կենտրոնական մասում՝ Իրաքում, Աբբասյաններն ինչքան էլ, որ թուլացած լինեին, այնուհանդերձ, դեռ ի վիճակի էին պահպանել իրենց դիրքերը: Բացի դրանից, այդտեղ օրեցօր ուժեղանում էր իսմայիլականների մյուս թևը՝ կարմաթերը, որոնց հետ բախումներից Ֆարիմյանները նախընտրում էին խուափել:

Ֆարիմյանների հաճար դժվար էր ազդեցություն ունենալ և իշխանություն գրավել նաև խալիֆայության արևելյան շրջաններում, որոնք բնակեցված էին թուրքերով և որտեղ գոյություն ունեցող պետական ինքնավար կազմավորումները՝ Սամանինները, Ղազնինները և այլն, դեռևս բավականին հզոր էին:

Ֆարիմյանների հաջողություններում մեծ դեր խաղաց քարոզչությունը, որը հզոր գենք դարձավ նրանց ծեռցում: Կարելի է ասել, որ Մուհամմադ մարգարեից հետո ոչ մի կրոնական կամ քաղաքական հոսանքի արարական աշխարհում դեռևս չէր հաջողվել այդախի լայն ծավալ-

ներով, նպատակառուղղված, մեծ հմտությամբ և վարպետությամբ օգտագործել քարոզությունը և դրա օգնությամբ հասնել այնպիսի տպավորիչ հաղթանակների, ինչպես դա հաջողվեց Ֆարփիմյաններին: Զարողիչները՝ դուաթ, դարձան իսմահլական շարժման և քարոզական մեծնայի օլխավոր դերակատարները:

Դենց նրանց IX դարի վերջերին և X դարի սկզբներին հող նախապատրաստեցին մեր կողմից արդեն նշված Ուրայդալլահի, որպես իմանի, թագստոցից դուրս գալու և փրկիչ՝ մահի ներկայանալու համար: Դուաթները իսլամական աշխարհի համարյա քոյր մասերում եռանդուն կերպով նրա գովքն էին անում և ջանք չին խնայում ապացուցելու, որ հենց նա է «ծպտյալ հնամը», որը փրկելու է մարդկությանը: Նրանց մեջ հատկապես աչքի ընկավ Ուրայդալլահի կողմնակից Աբու Աբդալլահը, որը 893 թ. ուղարկվեց Դյուլսային Աֆրիկա իսմահլականության գաղափարները տեղական բերքերական բնակչության մեջ քարոզելու և տարածելու համար: Նա զարմանալիորեն արած կերպով հասավ մեծ հաջողության: Նրա կողմնակիցների թիվն արագործն աճում էր:

Ուրայդալլահը, 902 թ., կարնաթեների ապստամբությունը ճնշելուց հետ, որին նա միացել էր, փախավ եգիպտոս, իսկ այնտեղից անցավ Իֆրիկիյա, ապա Սաուրիք, Ալյասի շրջանը: Սակայն այստեղ նրա բախտը չբերեց: Նա ընկավ բերքեր խարիժականների ծեռքը, որոնք նրան թշնամաբար էին վերքերվում: Նրան ծերբակալեցին և բանտ նետեցին:

Իսկ Իֆրիկիյայում իր դիրքերն էր շարունակում ամրապնդել Աբու Աբդալլահը: Նրա նոր կազմավորած իսմահլական բանակը բերքերական ցեղերի և Իֆրիկիյայի մայրաքաղաք Կայրավանի արաբական կայազորի աջակցությամբ 909 թ. ամրողապես տիրացավ Իֆրիկիյային: Ալյարիների դինաստիան տապալվեց և իշխանությունն անցավ Ֆարփիմյան իսմահլականների ծեռքը: Բանտից ազատվեց Ուրայդալլահը, որն այդ նույն բվականին ժամանեց Կայրավան և պաշտոնապես հոչակեց իմամ-խալիֆա և ուղղահավատների վեհապետ:

Այսպես, 909 թ. պատմության մեջ հայտնվեց մի նոր խալիֆայություն, որը ստացավ Ֆարփիմյան խալիֆայություն անունը: Դա շիական-իսմահլական խալիֆայություն էր, որն իր անվանակոչության մեջ նշունելով «Ֆարփիմյան» անունը, դրանով ուզում էր շեշտել իր ուղղակի կազմ մարզարե Մուհամմադի դստեր՝ Ֆարփիմյայի, և եղբորորդի՝ Ալիի հետ, որը, ինչպես նշվել է, Ֆարփիմյայի ամուսինն էր:

Ուրայդալլահը իրեն պաշտոնապես անվանեց ալ-Մահդի, մուլսուլմանների փրկիչ, որը բացատոցից հայտնվել և բացահայտվել է մուլսուլմաններին փրկելու և երջանկացնելու համար: Նա խալիֆայությունը կառավարեց մինչև իր մահը՝ 934 թ.:

Սակայն մինչ այդ, նա հասցրեց Ֆարիմյան խալիֆայությունում հաստատել կառավարման դիմաստիական սկզբունքը և իրեն ժառանգորդ նշանակեց իր որդուն՝ Աբու ալ-Կասիմին, նրան տալով «ալ-Կահիմ» տիտղոսը, որը նշանակում է «հարության իման»:

Ալ-Մահդին իր տիրապետությանը միացրեց նաև Ալֆիրը, իսկ Մահդիը կառավարող Իդրիխները ընկան նրանից վասալական կախման մեջ: Նա դարձավ համարյա ամբողջ Ջյուսիսային Աֆրիկայի տիրակալը:

Ֆարիմյան խալիֆայության կազմավորումով ավելի խորացավ խալանական աշխարհի պառակտումը: Այդ պահից քաղաքական ասպարեզում գոյություն ունեին երեք ինքնուրույն խալիֆայություններ՝ Աբբասյան, Ֆարիմյան և Կորդովայի Օմայյան խալիֆայությունները: Նրանց համար ընդհանուրը «խալիֆայություն» բառն էր, իսկ մնացած բոլոր հիմնական հարցերում նրանք անհաշտ հակառակորդներ էին:

Ուրայդալլահի մահդի հօչքակվելուց հետո խզումը խսմահլական երկու թների՝ Ֆարիմյան խսմահլականների և կարմաթների միջև, դարձավ վերջնական: Ֆարիմյան խսմահլականները ճանաչում և ընդունում էին Ուրայդալլահի իմանությունը, կարմաթները չճանաչեցին Ֆարիմյաններին ոչ որպես իմաններ, և ոչ էլ որպես խալիֆաններ: Նրանք մնացին հավատարիմ յոթերորդ իմամ Մուհամմադի իրն Խսմահլին, սպասելով նրա հայտնվելուն: Կարմաթները նախկինի պես նրա հետ էին կապում իմանության ամբողջացումը և նրա ծնավորման ավարտը, որը նշանակում էր, որ Ֆարիմյան իմաններին այդ պատմական կարևոր առաջելությունը չէր տրված:

Նրանց միջև հարաբերություններն ավելի սրվեցին, երբ Ֆարիմյանները, ի տարրերություն կարմաթների, չվերացրին շարիաթի օրենքները և նրանց գործադրումը, և դադարեցրին հօչքակել «մահդիի» հարություն առնելը, բավարարվելով կառավարել որպես խալիֆաններ և իմաններ:

Սակայն ալ-Մահդին և նրա հաջորդները չէին ցանկանում բավարարվել միայն Ջյուսիսային Աֆրիկայով: Իրենց հանարելով Ֆարիմյայի և Ալիի ուղղակի ժառանգորդները, նրանք գտնում էին, որ իրավունք ունեն

տապալել Աքբասյաններին և դառնալ մուսուլմանական աշխարհի միակ լեգիտիմ կառավարողները:

Ֆարիմյաններն իրենց հայացքն ուղղեցին նախ և առաջ Եգիպտոսին, շատ լավ հասկանալով, որ այդ քաղաքական, տնտեսական և ռազմավարական մեծ կշիռ ունեցող և հարուստ երկրի նվաճումը շրջադարձային կարող էր լինել նորաստեղծ խալիֆայության հանար:

Ֆարիմյանները Եգիպտոսը գրավելու առաջին փորձը կատարեցին 914 թ.: Նրանց զորքերը թագաժառանգ ալ-Կասիմի գլխավորությամբ ներխուժեցին Եգիպտոս, բավականին խորացան և անգամ գրավեցին Ալեքսանդրիան: Սակայն Աքբասյան զորքերը կարողացան պարտության մատնել Նրանց և դուրս շպրտել Եգիպտոսի սահմաններից: Նույնպիսի անհաջողությամբ ավարտվեց 919 թ. Եգիպտոսը գրավելու ալ-Մահդիի երկրորդ փորձը: Դրան հաջորդեց քավականին երկար դադար, որը կապված էր Եֆրիկիյայուն ներքին խառնակությունների հետ: Ֆարիմյաններից դժգոհ բերբերական ցեղերը և սուննիները 943 թ. ապստամբվեցին, գրավեցին Կայրավանը և 945 թ. պաշարեցին Ֆարիմյանների մայրաքաղաք ալ-Մահդիյան:

Ալ-Կահմին, որը 934 թ. հաջորդել էր իր հորը և խալիֆայությունը կառավարել մինչև 946 թ., այդ ապստամբությունը ճնշել չհաջողվեց: Դա վիճակված էր կատարելու խալիֆա ալ-Մանսուրին (946–953 թթ.):

ճնշելով ներքին խռովությունները և հաստատելով հարաբերական կայունություն երկրի ներսում, Ֆարիմյաններն ավելի լավ սկսեցին նախապատրաստվել Եգիպտոսը գրավելու համար: Դա իրագործեց խալիֆա ալ-Մուհամմադ 969 թ.: Նրա հարյուրհազարանոց բանակը տաղանդավոր գորահրամանատար Զաուհարի գլխավորությամբ այդ նույն տարվա գարնանը ներխուժեց Եգիպտոս և Գիզայի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում ջախջախնեց Եգիպտական բանակը ու մտավ նրա մայրաքաղաք Ֆուստարը:

Ֆարիմյանները որոշեցին մայրաքաղաքը տեղափոխել Ֆուստատից և Զաուհարիի հրամանով 969 թ. դրվեցին նոր մայրաքաղաքի հիմքերը, որը կոչվեց ալ-Կահիրա՝ «Դաղթող»: Այսպիսով, Եգիպտոսը դուրս եկավ Բաղդադի տիրապետությունից և դարձավ Ֆարիմյան խալիֆայության ամենազլիսավոր շրջանը:

971 թ. Կահիրեան հիմնվեց ալ-Ազիար մզկիթը, որը հետագայում դարձավ մուսուլմանական աշխարհի ամենահեղինակավոր գիտական և կրթական կենտրոններից մեկը:

Խալիֆա ալ-Մուհամմադ ծեղնարկեց մի կարևոր, թեև անսովոր, քայլ: Նա 972 թ., տեղափոխվելով Իֆրիկիյայից Եգիպտոս, իր հետ նոր մայրաքաղաք Կահիրե տեղափոխեց նաև իր բոլոր նախնիների աճյունները:

Այսպիսով, Ֆարհանյաններին հաջողվեց նվաճել կամ իրենց ենթարկել, Իֆրիկիյան, Ալժիրը, Մաղրիբը, Եգիպտոսը, Սիրիան, Արաբիան, Իրաքի որոշ շրջաններ. Դիօքազը Մերքայով և Մաղինայով, և այլ տարածքներ: Նա Վերածվեց մի հզոր և ընդարձակ կայսրության, որը ծգվում էր Ասլանյան օվկիանոսից մինչև Կարմիր ծովի ափերը:

Ֆարհանյան խալիֆայության գոյության առաջին հարյուրամյակը եղել է նրա վերընթաց զարգացման և քաղաքական ու տնտեսական հզորության շրջանը: Ամրապնդվեցին նրա միջազգային դիրքերը: Նա ակտիվ առևտրական կապեր էր պահպանում աշխարհի տարրեր երկրների հետ: Ֆարհանյանները հավասարակշռված քաղաքականություն էին վարում ներքին լյանքում: Այդ ուղղությամբ հատկապես աչքի էր զննում խալիֆա Ազիզը (975–996 թթ.) նրա ներքին քաղաքականությանը բնորոշ էր հանդուրժողականությունը այլադավանների՝ քրիստոնյանների և հրեաների նկատմամբ: Նրանք օգտվում էին ազատությամբ կրոնական հարցերում, զբաղեցնում էին կարևոր պաշտոններ պետական կառավարման համակարգում, տնտեսության մեջ և այլ բնագավառներում:

Սակայն ամեն ինչ փոխվեց խալիֆա Ֆարհանի զահակալության շրջանում (996–1021 թթ.), մասնավորապես ներքին քաղաքականության մեջ: Խալիֆա Ազիզի տոլերանտ քաղաքականությանը փոխարինելու եկավ այլադավանների նկատմամբ Դաքիմի անհանդուրժողականության քաղաքականությունը, որն ընդունեց ամենաբիրու ծները: Դրա սկիզբը դրվեց 1003 թ., երբ քանդվեցին կամ ավերվեցին քրիստոնյաններին պատկանող բազմաթիվ եկեղեցիներ: Չբավարարվելով դրանով, մոլեռանդ Ֆարհանյան–խմահլականները եկեղեցիների տեղերում մզկիթներ էին կառուցում: Սրբապղծվում էին քրիստոնյանների գերեզմանները: Բարբարոսական արարքներն այն ասիճանի հասան, որ 1009 թ. քանդվեցին Տիրոջ գերեզմանը Երուսաղեմում և ալ-Կուտայր վանքը Կահիրեում: Արգելվեցին քրիստոնեական հրապարակային տոնահանդեսները, քրիստոնյաններին պարտադրվեց վզից մշտապես կախել ծանր փայտյա խաչ, իսկ հրեաններին՝ ծանր գնդեր:

Երկրում քաղաքական և բարոյական մթնոլորտը խիստ սրվել էր: Ահա այսպիսի պայմաններում 1021 թ. անհայտացավ խալիֆա ալ-Ղազիմը, թեև մինչև հիմա հրապարակի վլա և այն վարկածը, որ նրան սպա-

Եթե են նրա քրոջ գիտությամբ և մասնակցությամբ, որը դարձավ «անհետացած» խալիֆայի անշափահաս որորու խմանակալը, բայց փաստորեն խալիֆայության իսկական տիրություն: Ահա այս շրջանից սկսվում է Ֆաթիմյան խալիֆայության քաղաքական և տնտեսական թուլացման ժամանակաշրջանը, որը հատկապես դրսորվեց ալ-Մուսթանսիրի խալիֆայության (1036–1094 թթ.) և դրան հաջորդած շրջանում:

#### **4. Ֆաթիմյան խալիֆայության հայ կառավարիչները՝ Բաղր ալ Գամալի և Աֆոալ**

Ֆաթիմյան խալիֆաների հետ պատահեց այն, ինչ պատահել էր Աբրասյանների հետ՝ երբ նրանք խաղալիք դարձան երնիկական տարրեր խմբերից կազմավորված իրենց զվարդիայի, առաջին հերթին թուրքերի ծեռքում: Ֆաթիմյան խալիֆաների, այդ թվում և ալ-Մուսթանսիրի, զինված ուժերը և թիկնապահ գնդերը կազմված էին թերթերների, սուդանցինների և թուրքերի գումարտակներից: Նրանք ոչ միայն հաշտ չեին միմյանց հետ, այլև բացահայտ թշնամանք էին տածում միմյանց նկատմամբ: Նրանք եգիպտոսը բաժնել էին յուրատեսակ ազդեցության գոտիների և նրանցից յուրաքանչյուրը տիրապետող դիրքեր ուներ համապատասխան գոտում: Պայքարն այդ երեք ռազմական խմբավորումների միջև իսկական քառային վիճակի մեջ դրեց խալիֆայությունը: Առանձնապես ծանր էր դրությունը մայրաքաղաք Կահիրեում, որտեղ տեր ու տնօրեն էին թուրքական զվարդիականները: Նրանք չեին ենթարկվում խալիֆային և իրենց գորահրամանատարների գլխավորությամբ ահ ու սարսափ էին տարածել մայրաքաղաքում:

Անելանելի դրության մեջ հայտնված խալիֆա ալ-Մուսթանսիրը, 1073 թ. հարկադրված դիմեց Ալիք կառավարիչ հայազգի Բաղր ալ-Գամալի (Զամալի) ալ-Արմանիի օգնությանը, հրավիրելով նրան և նրա հայկական գնդերին Կահիրե, անհնազանդ թուրքական զվարդիականներին սանձահարելու և երկրում կարգ ու կանոն հաստատել համար: Բաղրն ընդունեց խալիֆայի հրավերը և հայերից կազմված իր զորքերով 1074 թ. մտավ Կահիրե: Նա շատ արագ և փայլուն կերպով իրականացրեց իր առաքելությունը, ջախջախեց թուրքական զորքերին, պատժեց նրանց հրամանատարներին և նրանց հետ համագործակցած եղիպտական պաշտոնյաներին:

Ալ-Մուսթանսիրը Բաղր ալ-Գամալիին օժտեց ամենալայն պետական և ուգամական լիազորություններով։ Նա նշանակվեց վազիր և խալիֆայական գործերի ընդհանուր հրամանատր՝ Եմիր ալ-Չույուշ, ինչպես նաև հսմահլական միսիոներական կորպուսի ղեկավար։ Նրա ծեղքում կենտրոնացվեց ամբողջ իշխանությունը և նա 20 տարի՝ 1074–1094 թթ., մինչև իր մահը, եղավ երկրի փաստական և անսահմանական իշխողը։ Նա կարողացավ երկիրը դուրս բերել քառային վիճակից, հաստատել օրինականություն ու կարգապահություն և նոր շունչ փշել հոգևարքի մեջ հայտնված Ֆարիմյան խալիֆայությանը։

Երկրում հաստատված խաղաղությունը և կարգապահությունը նպաստեց տնտեսական վերելքին, որին Բաղրը և նրան հաջորդած որդին, մեծ նշանակություն էին տալիս։ Բաղրը, իրեն զգալով բավականին ուժեղ, հարություն տվեց ամբողջ մուսուլմանական աշխարհի առաջնորդը լինելու Ֆարիմյանների հավակնություններին։ Նրա մեծագույն հաջորդությունների շարքը պետք է դասել նաև այն, որ նա, ստեղծելով լակ կազմակերպված և կարգապահ զինված ուժեր, որոնց միջուկը կազմում էին նրան նվիրված հայկական գորագոները, և հիանալի կերպով օգտագործելով իսմահլականների քարոզական արվեստը, կարողացավ ամրապնդել Կահիրեթի իշխանությունը և ազդեցությունը Խալիֆայության ծայրամասերի վրա, մի կողմից, և հաջորդությանը դիմակայել սելջուկներին, մյուս կողմից։

Բաղր ալ-Գամալի ալ-Արմանիի դիրքերն այն աստիճանի ուժեղ էին, որ նրա մահից հետո, որը տեղի ունեցավ 1094 թ., ոչ ոք չէր կասկածում, որ նրան փոխարինելու էր նրա որդին, որն իր խելքով և զենքով առաջին օրվանից եղել էր իր հոր՝ Բաղրի, անփոխարինելի աջակիցը։ Եվ, իրոք, Խալիֆա ալ-Մուսթանսիրը 1094 թ. վազիրի և գործերի հրամանատարի՝ Եմիր ալ-Չույուշի պաշտոնում նշանակեց Բաղրի որդուն՝ Մալիք ալ-Աֆղալին, որը հայտնի է նաև ալ-Աֆղալ Շահնշահ անունով։ Նա իր ծեղքում կենտրոնացրեց ամրող բարձրագույն իշխանությունը և դարձավ Ֆարիմյան խալիֆայության իրական կառավարողը, ծնական դարձնելով Խալիֆայի պաշտոնը։

Աֆղալն ամեն բանում եղավ Բաղր ալ-Գամալիի գործի հաջող շարունակողը։ Եղավ մի պահ, երբ ոչ միայն խալիֆա ալ-Մուսթանսիրը, այլև նրան հաջորդած խալիֆաներ Մուսթալին (1094–1101 թթ.) և Ամիրը (1101–1130 թթ.), լրիվ կախման մեջ էին գտնվում Աֆղալից, չհամարձակվելով հակառակվել նրա կամքին։

1094 թ., Բաղրի մահից քիչ անց, Վախճանվեց նաև ալ-Մուսթամ-սիրը: Նա գահաժառանգ էր նշանակել իր ավագ որդի Նիզարին, որը ճանաչել և հաստատել էին իսմահլական հեղինակավոր առաջնորդները: Սակայն ալ-Աֆդալը, անտեսելով այդ բոլոր, խալիֆա նշանակեց նրա կրտսեր որդուն՝ ալ-Մուսթամիին: Դա համարձակ էր ոչ իհանդուգն քայլ էր Աֆդալի կողմից, քանի որ նա մարտահրավեր նետեց և խախտեց իսմահլական մի շատ կարսոր իհմնադրույթը: Ըստ այդ իհմնադրույթի, խալիֆայի կողմից իր հաջորդին ընտրելու համարվում էր աստվածային կամքի իրականացում և որպես այդպիսին կարող էր տեղի ունենալ միայն մեկ անգամ: Հետևապես, այդ որոշումն անհնար էր փոփոխության ենթարկել:

Աֆդալի այդ քայլը ծանր դրության մեջ դրեց իսմահլական ավանդույթներն անհարաժ պահելու կողմնակիցներին: Նրանք կամ պետք է ընդունեին Աֆդալի որոշումը, կամ ընթուանային դրա դեմ: Իսմահլականների մի ազդեցիկ խումբ, իհմնականում խալիֆայության արևնյան շրջաններում, իրաժարվեց օրինական ճանաչել Աֆդալի որոշումը: Իսկ ոմանք, այդուհանդերձ, ընդունեցին այն և այդ հոդի վրա պառակտում առաջացավ Ֆաթիմյանների շարքերում: Սակայն ամենազոր Աֆդալը անտեսեց այդ բոլորը և շարունակեց իր քաղաքականությունը:

Մուսթամիին խալիֆա դարձնելը պետք է բացատրել նրանով, որ նա թույլ անձնավորություն էր և չուներ որևէ հուսալի քաղաքական և սոցիալական հենարան: Նման խալիֆայի դեպքում, Աֆդալը պահպանում էր խալիֆայության փաստացի դեկավարի իր դիրքերը:

Մուսթամիի մահից հետո, Աֆդալը խալիֆա հռչակեց նրա իհնգամյա որդուն, որին հենց ինքը՝ Աֆդալը, շնորհեց Ամիր տիտղոսը: Աֆդալը դարձավ անչափահաս խալիֆայի խնամակալը, որն ավելի ամրապնեց նրա անսահմանափակ իշխանությունը: Եվ Ֆաթիմյանների խալիֆայությունում Աֆդալ Շահնշահը իր այդ կարգավիճակը պահպանեց մինչև իր մահը, որը տեղի ունեցավ 1121 թ.:

Այսպիսով, մոտ կես դար Ֆաթիմյան խալիֆայության փաստացի կառավարողները եղան երկու հայագիտ ականավոր պետական, քաղաքական և ռազմական գործիչներ, հայր և որդի Բաղր ալ-Գամալին և Աֆդալ Շահնշահը, որոնք անջնջելի հետք են թողել Ֆաթիմյան խալիֆայության, ի մասնավորին, Եգիպտոսի պատմության մեջ: Նրանց դերը հենց այդպես է գնահատվում պատմագրության մեջ, ժամանակի արար պատմիչների Մաքրիզիի, Իբն Խալիֆանի, Ելրոպական պատմաքանների,

ինչպես Ա. Մյուլլեր, ոռւս հետազոտողներ Բ. Տուրանի, Ի. Ֆիլշտինսկու, արարական պատմության հմուտ գիտակ Ֆ. Շիթրի և այլոց կողմից:

Սաքրիգին և Իրն Խալիքանը շեշտում են, որ խալիֆա ալ-Մուսթանսիրը Բաղր ալ-Գամալիին իր հայոց գորագնդով Կահիրե կանչեց մի այնպիսի ծանր պահի, երբ Եգիպտոսում սաստիկ սով էր, տարրեր երնիկական խնբերից կազմված զորքերը խռովություններ էին բարձրացնում, վազիրների հրամանները չէին գործադրվում, երբ սևամորքները գրավել էին Վերին Եգիպտոսը և այլն, «որպեսզի իր պետությունը կարգի դնելու պաշտոնը ստանձնե»։ Եվ նա, ընդունելով խալիֆայի առաջարկությունը, փայլուն կերպով է կատարում այդ գործը, նայրաքաջացում և զավառներում «բնացինք է անում բոլոր կենտրոնախույս տարրերին»։ Դատուկ նշվում է Բաղրի բարյացակամ վերաբերնունքը գյուղացիության հանդեպ, որոնց նա երեք տարի ազատում է բոլոր տեսակի հարկերից, որը վճռական նշանակություն ունեցավ երկրի տնտեսական դրության բարելավման համար։

Ա. Մյուլլերը ալ-Մուսթանսիրի կողմից հայագգի Բաղրին Կահիրե հրավիրելը և նրան իշխանական լայն լիազորություններով օժտելը համարում է «խելացի միտոք»։ Նշելով, որ 60-ամյա Բաղրը եռանդուն անձնավորություն էր, որը չիրապուրվեց դատարկ բաներով, Ա. Մյուլլերն ընդգծում է, որ նա խաղաղություն հաստատեց Եգիպտոսում, որն սկսեց ուժի կանգնել և ծաղկել, ավելացնելով, որ նա այդպիսի վիճակում Եգիպտոսի կառավարումը փոխանցեց իր որդուն, որն «ընդունեց ալ-Մալիք ալ-Աֆդալ՝ «Ամենակատարյալ թագավոր» տիտղոսը։ Նա հենց այդպիսին էլ էր երկիրը կառավարելիս»։

Արաք հայտնի պատմաբան Ֆ. Շիթրին Բաղր ալ-Գամալիի անվան հետ է կապում ծանր դրության մեջ հայտնված «Ֆաթիմյան խալիֆայությանը կյանքի նոր շուրջ տալը»։ Նա Բաղրի ամենամեծ ծառայություններից մեկն է համարում այն, որ նա կարողացավ երկրությունը դուրս բերել։

Բաղր ալ-Գամալիի և Աֆդալի գործունեությունը շատ քարձր գնահատականի է արժանացել Արաբական խալիֆայության պատմության լավագույն մասնագետներց մեկի, Ի Ֆիլշտինսկու կողմից։ «Նրանց ժամանակ,— գրում է պատմաբանը, — Եգիպտոսում հաստատվեց խաղաղություն և կարգ ու կանոն։ Նրանք կարողացան բարելավել երկրի տնտեսական դրությունը և փաստորեն կասեցրին Ֆաթիմյան խալիֆայության կործանումը մի ամբողջ հարյուրամյակ»։

## 5. Ֆարիմյան խալիֆայության կործանումը

Աֆղալի մահից հետո, վիճակը խալիֆայությունում աստիճանաբար սկսեց վատանալ: Բանսարկությունները, նախանձը և թշնամությունը XII դարի 40-ական թվականների վերջերից դարձան արքունիքում տիրող հիմնական բարեերը: Դավադրությունների գոհ էին դառնում ոչ միայն վազիրները, այլև խալիֆան, ինչպես խալիֆա ալ-Զաֆիրը, որը սպանվեց 1154 թ.: Կենտրոնական իշխանության վերահսկողությունը ծայրանասերի վրա թուլացավ, դարձյալ գլուխ բարձրացրեցին զինվորական տարբեր խմբավորումներ, որոնք պատկանում էին հակադիր ճամբարների: Նրանց մտահոգությունն այլևս պետության ամրապնդան հոգսերը չէին, այլ սեփական իշխանության և դիրքերի ամրապնդումը: Ֆարիմյան վերջին երկու խալիֆաները երեխաններ էին: Սպանված Զաֆիրի որդին խալիֆա հռչակվեց, երբ նա ընդամենը չորս տարեկան էր, իսկ նրան հաջորդած ալ-Աղիջը՝ ինը տարեկան: Երկիրը նրանց անունից կառավարում էին մարդիկ, ովքեր հոգ էին տանում միայն իրենց և իրենց խմբավորումների բարեկեցության, հարստություն կուտակելու և հնարավոր մրցակիցներին ասպարեզից վերացնելու մասին:

Վատացավ նաև Ֆարիմյան խալիֆայության միջազգային դրությունը: Նա թուլանում էր օրեցօր և կորցնում իր դիրքերը: Նրան դժվար էր պայքարել ասպարեզում հայտնված Սելջուկյան մեծ սուլթանության հետ, որն իր տիրապետություն էր հաստատել Իրաքում և Իրանում, արդեն ներթափանցել Փոքր Ասիա և այլն: Խալիֆայությունը շոշափելի հարվածներ ստացավ խաչակիրներից, մասնավորապես նրանց կողմից հիմնված Երուսաղեմի թագավորությունից: Ֆարիմյանները կորցրեցին իրենց տիրապետությունը Հյուսիսային Աֆրիկայում և այլն:

Այսպիսի քաղաքական հեղեղուկ պայմաններում շատ բան կախված էր այն բանից, թե ով է տվյալ պահին երկրի ուժեղ անձնավորությունը, որը իր ծեռքում էր պահում երկրի ղեկը: 1169 թ. Ֆարիմյան խալիֆայության վազիր դարձավ Սալլահ աղ-Ղինը: Նա 1171 թ. տապալեց Ֆարիմյան վերջին խալիֆա ալ-Աղիջին և իշխանությունը վերցրեց իր ծեռքը: Ֆարիմյաններին փոխարինելու եկան Այյուբինները:

### III. ՍԵԼՁՈՒԿՆԵՐԸ ԵՎ ՄՈՆՂՈԼՆԵՐԸ

#### 1. Արքասյան խալիֆայությունը սելջուկյան տիրապետության ներքո

Սելջուկների պետությունը պատմության թատերաբնույթ հայտնվեց XI դարի 30-ական թվականներին, և մեծ դերակատարում ունեցավ Միջին Ասիայի և Մերձավոր ու Միջին Արևելքի պատմության մեջ:

Նրա անվանումը կապված է թուրքական օղուզ ցեղի ցեղապետներից մեկի՝ Սելջուկի անվան հետ: Օղուզների քոչվորական ցեղախումբը, շարժվելով դրդական տափաստաններից, հաստատվեց Բուխարայի շրջակա տարածքներում, որտեղ և ընդունեց խլամը որպես կրոն, հարենով սուննիզմին: Սելջուկը և նրա տղաներն աստիճանաբար գրավեցին նորանոր տարածքներ: Սակայն Սելջուկի երկու թոռներին՝ Չաղրի-թեկին և Տուղրիլ-թեկի և եր վիճակված Սելջուկյան պետությունը հիմնելու առաջելությունը: Եղբայրները նվաճեցին Ղազանիների տիրապետության տակ գտնվող Խորասանը, Սերվը և Նիշապուրը: 1038 թ. Չաղրի-թեկը սուլթան հօչակվեց Սերվում, իսկ Տուղրիլ-թեկի և Նիշապուրում: Նրանք իրենց տիրույթներին միացրին Բալխը, Գուրգանը, Թաքրարանը, Խորեզմը, Ջամադանը, Ուեյը և Սպահանը: Դիմնվեց Սելջուկների Սեծ պետությունը:

Տուղրիլ-թեկի և քոչվորներից կազմված իր բանակը շարժեց դեպի Բաղդադ, որը գրավելը շարունակում էր մնալ ամեն մի նվաճողի գլխավոր նպատակներից մեկը: 1055 թ. դեկտեմբերի 18-ին նա իր բանակի գլուխն անցած հայտնվեց Բաղդադի մասույցներում: Ակնկալվող մեծ ճակատամարտը տեղի չունեցավ: Օղուզական բանակի Բաղդադին մոտենալու պահին, Բաղդադի գինվորական կառավարիչ, թուրքական գորահրամանատար ալ-Քասսասիրը, հապճապորեն հեռացավ Արքասյանների նայրաքաղաքից, անպաշտպան թողմելով խալիֆային և բնակչությանը: Բուհների տիրապետությունը Արքասյան խալիֆայության վրա վերացվեց: Սակայն նա ընկավ նոր տիրապետողների՝ Սելջուկների լծի տակ:

Արքասյան խալիֆա ալ-Կահին իր պալատում մեծ պատիվներով ընդունեց Տուղրիլ-թեկի, նրա գլխին դրեց երկեղջյուր թագ, իսկ մեջքին կապեց գոտի՝ երկու թուրով: Խալիֆան նրան շնորհեց «Արևելքի և Արևմուտքի թագավորի» տիտղոս, սակայն Տուղրիլ-թեկի և պաշտոնա-

պես կրում էր «ալ-սուլթան» կոչումը: Նա դարձավ ամբողջ խալիֆայության խնամակալը:

Եվ, այսպես, ինչպես Բուհների ժամանակ, այժմ ևս, Սելջուկների տիրապետության օրոք, խալիֆայի պաշտոնը չվերացավ: Խալիֆան մնաց իր գահին, բայց լրիվ իշխանազուրկ: Նա մնաց այսպես կոչված հոգևոր առաջնորդ, այն էլ ոչ լիարժեք: Դրա մասին է վկայում այն փաստը, որ ուրբաթօրյա խուտբայի ժամանակ Աբբասյան խալիֆայի անվան հետ միասին հիշատակվում էր Սելջուկյան սուլթանի անունը:

Տուղրիլ-բեկ I Բաղդադից շարժվեց հյուսիս, իր պետությանը նորանոր տարածքներ միացնելու նպատակով և ժամանակավորապես բացակայեց Բաղդադից: Դրանից օգտվեց Բասսասիրը, որը կապեր էր հաստատել Ֆարիմյանների հետ և պայքարում էր ի շահ նրանց: Նա 1058 թ., հենվելով իր դայլամիական զորքերի վրա, վերագրավեց Բաղդադը: Բասսասիրի ճնշման տակ Աբբասյան խալիֆա ալ-Կահմը ստորագրեց մի փաստաթուղթ, որով ինքը և բոլոր Աբբասյանները հրաժարվում էին իրենց իրավունքներից հօգուտ Ֆարիմյան խալիֆա ալ-Մուսթանսիրի: Ալ-Կահմը Մուսթանսիրին Կահիրե ուղարկեց խալիֆայության բոլոր խորհրդանշները, այդ թվում և խալիֆայական թիկնոցը:

Իմանալով այդ մասին, ահեղ Տուղրիլ-բեկ I իր հզոր բանակով վերադարձավ և կրկին գրավեց Բաղդադը, ցրեց դայլամինների բանակը, ծերթակալեց և մահապատժի ենթարկեց Բասսասիրին և վերջնականապես ու անվերադարձ կերպով կործանեց Բուհների իշխանությունը: Նա ալ-Կահմին վերահստատեց խալիֆայի իր իրավունքների մեջ և չեղյալ հայտարարեց խալիֆայական իրավունքները Ֆարիմյաններին փոխանցելու հարկադրական որոշումը:

Սելջուկյան պետությունն իր հզորության գագաթնակետին հասավ Տուղրիլ-բեկ I (1037–1063 թթ.), Ալի Արսլանի (1063–1072 թթ.) և Մալիք շահի (1072–1092 թթ.) օրոք:

Ալի Արսլանը, որը Չաղրի-բեկի որդին և Տուղրիլ բեկ I եղբորորդին էր, շարունակելով իր նախորդների նվաճողական քաղաքականությունը, ընդարձակեց Սելջուկյան պետության սահմանները, որի մեջ մտան ամբողջ Իրանը, Իրաքը, Սիրիայի մեծ մասը, Անդրկովկասը և այլն: Նա 1065 թ. գրավեց Անին, իսկ 1071 թ. Մանազկերտի մոտ տեղի ունեցած ճակատամարտում գլխովին ջախջախեց բյուզանդական մեծաքանակ բանակը և գերի վերցրեց բյուզանդական կայսր Ումանոս Դիոգենեսին: Սելջուկները նտան Փոքր Ասիա, որտեղ նրանք հիմնեցին

իրենց երկրորդ պետությունը, Ռումի կամ Իկոնիայի սուլթանությունը: Ինչպես ճիշտ նկատել է Ֆ. Յիթրին, այդ պահից սկսվեց Փոքր Ասիայի թուրքացումը միջինասիական տափաստաններից ներխուժած քոչվոր թուրքական-օղուզական ցեղերի կողմից:

Սելջուկյան սուլթանները աստիճանաբար սկսեցին յուրացնել կառավարման Արքայան և պարսկական ձևերն ու մեթոդները: Նրանց մոտ ևս մեծ դերակատարում ուներ վազիրը, որոնց մեջ աչքի է ընկել Մալիք շահի վազիր Նիզամ ալ-Մուլքը, որը կենտրոնացված պետության ջատագով էր և գտնում էր, որ սուլթանները պետք է ունենան հզոր բանակ՝ զանազան էմիրների և տեղական կառավարողների կենտրոնախույս գգտումները զսպելու, Սելջուկների սուլթանության հզորությունն ապահովելու և տարածքային ամրողագականությունը պահպանելու համար: Մեծ տեղ հատկացնելով կրթությանը և մշակույթին, Նիզամ ալ-Մուլքը 1065–1067 թթ. Բաղդադում հիմնեց բարձրագույն դպրոց, որը նրա անունով կոչվեց «Նիզամիյա»: Նրա հորդորներով Մալիք շահը հիմնեց աստղադիտարան և նոր բացված այդ աստղադիտարանում 1074–1075 թթ. գումարեց ժամանակի ականավոր աստղագետների ժողով, առաջարկելով նրանց բարեփոխել պարսկական տոնարը և ընդունել նորը: Նրանք սուլթանի այդ հանճնարարությունը կատարեցին հաջողությամբ և ստեղծեցին նոր տոմար, որը կոչվեց Զալալի:

Ալփ Արսլանին հաջորդած նրա որդին նույնպես հրապուրվեց արարա-պարսկական մշակույթով և տուրք տալով դրան, հրաժարվեց թուրքական անունից և գահ բարձրացավ Մալիք շահ անունով, ստեղծելով մի նոր անուն, բաղկացած արաբական «մալիք» և պարսկական «շահ» տիտղոսների համադրումից, որոնցից երկուսն էլ նշանակում են «թագավոր»:

Մալիք շահը հաջողությամբ իրականացնում էր կենտրոնացված հզոր սուլթանություն ստեղծելու իր վազիրի ծրագիրները: Նրա զահակալության տարիներին Սելջուկների Մեծ պետությունը վերածվել էր մի հսկայածավալ կայսրության, որն լայնությամբ տարածվում էր հնդկական սահմաններից, Կաշգարից մինչև Երուսաղեմ, իսկ Երկարությամբ Կոնստանտինոպոլսից մինչև Կասպից ծով: Նրա մայրաքաղաքը Սպահանն էր: Խսկ Ալփ Արսլանը երթեք էլ չեղավ Բաղդադում: Միայն Մալիք շահը իր մահվանից քիչ առաջ կառավարության նստոցը տեղափոխեց Բաղդադ:

Մալիք շահի մահվանից հետո սկսվեց Մեծ Սելջուկների աստիճանական թուլացումը, մրցակցությունը բազաժառանգների, եղբայրների և ազգականների, զանազան մեծ ու փոքր էմիրների միջև և տրոհումը մի քանի կիսանկախ պետությունների, որը, ի վերջո, 1194 հանգեցրեց նրա տիրապետության վերացնանը Արքայան խալիֆայության վրա:

Այդ խառնաշփոթ վիճակից օգտվեցին երկու գլխավոր ուժեր՝ Խորեզմը և Արքայան խալիֆայությունը:

Խորեզմը գրադարձնում էր Անու Դարյայի ստորին հոսանքի բարեբեր տարածքները և հաջողությամբ կարողանում էր դիմագրավել տարբեր քննամական հարձակումները և պահպանել իր անկախությունը: Ղեոս 995 թ. Խորեզմի կառավարող Մամունիների դիմաստիան ընդունեց «Խորեզմշահ» տիտղոսը: Սակայն 1041 թ. նա ընկավ Սելջուկների տիրապետության տակ, թեև հարկ է նշել, որ սելջուկյան տիրապետությունը երբեք էլ ամուր չի եղել Խորեզմում և իրականում կրել է ծևական բնույթ: Այս հանգանքը վճռական դեր խաղաց Խորեզմի պետական և քաղաքական դիրքերի վերականգնման գործում, երբ Սելջուկյան պետությունը թուլացավ: XII դարի վերջերին Խորեզմշահերն ընդարձակեցին իրենց տիրությունները և արդեն XIII դարի սկզբներին նրանց տիրապետությունը տարածվում էր Սավարաննահրի, Արևմտյան Իրամի, Աֆղանստանի և Անդրկովկասի մի մասի վրա:

Սելջուկյան պետության թուլացումից փորձեց օգտվել նաև Արքայան խալիֆա ան-Նասիրը (1180–1225 թթ.): Նրա նոր դիրքորոշման վրա աղդեցություն ունեցավ ոչ միայն սելջուկների թուլացումը, այլև Ֆարինյան խալիֆայությունը 1171 թ. տապալած և Եգիպտոսի ու Սիրիայի սուլթան դարձած Սալահ ադ-Դինի հանդես գալն ի պաշտպանություն Արքայան խալիֆաների: Նրա հրամանով խուտրայի ժամանակ նորից սկսվեց իշխատակվել Արքայան խալիֆայի անունը: Խև դա նշանակում էր, որ ամենազոր Սալահ ադ-Դինը վերականգնում էր Արքայանների գերակայությունը արաբական աշխարհի այդ երկու կարևոր երկրներում:

Ան-Նասիրը կապերի մեջ մտավ Խորեզմշահերի հետ և դրդեց Խորեզմշահ Թակաշին (1172–1200 թթ.) հարձակվել սելջուկների վրա: Խորեզմշահերը, որոնք իրենց սեփական նպատակներն էին հետապնդում, որի մասին անտեղյակ էր ան-Նասիրը, իրոք, պատերազմ սկսեցին սելջուկների դեմ: Վճռական ճակատամարտը Թակաշի և Սելջուկյան սուլթան Տուղրիլ II միջև տեղի ունեցավ 1194 թ., որն ավարտվեց Սելջուկյան

սուլթանի կատարյալ պարտությամբ: Դրանով վերացավ Սեղուկյան այդ ճյուղի տիրապետությունը Իրաքում և Թրուտանում:

Խալիֆա ան-Նասիրը հավատացած էր, թե Թակաշը նրան կիանձնի հաղթանակով ծեռք բերած տարածքները: Սակայն Թակաշը միանգամայն այլ կերպ վարվեց, ավելի ճիշտ վարվեց այնպես, ինչպես Բաղդադ ներխուժած մյուս նվաճողները: Նա իր անունով դրան հատեց և իր ծեռքում կենտրոնացրեց ամբողջ աշխարհիկ իշխանությունը: Խալիֆա ան-Նասիրին, ինչպես նրա նախորդներին, բաժին հասավ հոգևոր «ղեկավարությունը»:

Բայց Խորեզմշահերը դրանով չբավարարվեցին: Թակաշին հաջորդած նրա որդին, Ալա աղ-Ղին Մուհամմադը (1200–1220 թթ.), որը տանելով մի շարք հաղթանակներ, Խորեզմշահերի պետությանը կցցեց Պարսկաստանի մեծ մասը, Բուխարան, Սամարղանդը և Ղազնահը, ծրագրում էր տապալել Աքբասյաններին և Վերջնականապես լուծել շիաների հարյուրամյակներ տևող պայքարը իշխանության համար: Նրա նպատակն էր Աքբասյանների դիմաստիայի տապալումից հետո խալիֆայության գահին նստեցնել Ալիի հետևորդներից որևէ մեկին: Բայց Խորեզմշահերի այս ծրագրերին վիճակված չէր իրականություն դառնալ:

Ասպարեզ իջավ մի նոր քաղաքական ուժը, որը խառնեց բոլորի քաղաքական ծրագրերը:

Խոսքը Չինգիզ խանի և մոնղոլների մասին է:

## 2. Մոնղոլները և Աքբասյան խալիֆայության կործանումը

Մոնղոլները քաղաքական ասպարեզ իջան դեռևս XI դարի վերջերին, Ալբայի և Կենտրոնական Ասիայի իրենց հարևան ժողովուրդներին և Երկրներին անհանգստացնելով մշտական հարձակումներով, որոնց հիմնական նպատակը թալան ու կողոպուտն էր: XIII դարի սկզբներին մոնղոլական տարբեր ցեղեր միավորվում են մեկ միության մեջ, որը գլխավորում է ցեղապետներից մեկը՝ Թենուչինը: 1206 թ. ցեղերի ներկայացուցիչների համաժողովը՝ կուրուլտայը, նրան ընտրում է քաջավոր և կոչվում Չինգիզ խան: Նա մի եռանդուն, դաժան, խելացի և նենգ գորահրամանատար էր, որը շատ կարճ ժամանակամիջոցում կարողացավ մոնղոլական ցեղերի միությունը վերածել մի հզոր ու ազմական պետության, որն ահ ու սարսափ էր տարածում ամբողջ աշխարհում:

Չինգիզ խանը իր տիրապետության տարիներին (1206–1227 թթ.) կարողացավ նվաճել և իր խանությանը միացնել Յուսիսային Չինաստանը, Խորեզմշահերի տարածքների մեծ մասը (սարսափահար Ալա աղ-Դին Խորեզմշահը փախավ և երկար դեգերումներից հետո ապատանեց Կասպից ծովի կղզիներից մեկում, որտեղ և մահացավ 1220 թ.), Միջին Ասիան և այլն: Մոնղոլական հորդաները ամեն ինչ ավերում, հող ու նոխիր էին դարձնում իրենց ճանապարհին, անողոք կերպով սրի մատնում մարդկանց, չինայելով ոչ կանանց և ոչ էլ մանուկներին: Գրավելով Չերաբը, նրա 100 հազար բնակչիներից մոնղոլների սրից փրկվեց միայն 40 հազար մարդ: Զանգվածային կոտորածներ տեղի ունեցան Սամարդանում և Բալխում, իսկ Խորեզմը հիմնահատակ կործանվեց: Կոտորելով Բուխարայի բնակչիներին (1219 թ.), Չինգիզ խանը նրա հռչակավոր մզկիթը վերածեց ախորի: Ընդհանրապես մոնղոլները, որոնց պատերազմական գործողություններում և նվաճողական քաղաքականության մեջ մեծ դեր եր էր խաղում հեծելազորը, չափազանց «հոգատար էին» ծիերի նկատմամբ և նվաճված Վայրերում լավագույն շինությունները շատ հաճախ էին վերածում ախոռների: Փորձելով արդարացնել իր անլուր դաժանությունը, Չինգիզ խանը Բուխարան ավերածությունների ենթակելուց և զանգվածային մոլոր կազմակերպելուց հետո, հայտարարում է: «Ես Աստծո մտրակն եմ, որն ինձ ուղարկել է մարդկանց պատժելու նրանց մեղքերի համար»:

Չինգիզ խանի մահից հետո, նույն քաղաքականությունը նույն դաժանությամբ վարեցին նրան հաջորդած Մեծ խաները՝ Ուգեղեյը, Գյույքը և մյուսները: Նրանք նորանոր տարածքներ գրավելով և առաջ շարժվելով դեպի արևմուտք ու ընդարձակելով իրենց կայսրության սահմանները, աստիճանաբար մոտենում էին Բաղդադին: Արքայան վերջին չորս խալիֆաները՝ ալ-Սասիրը, ալ-Զահիրը, ալ-Մուսթանիրը և ալ-Մուսթահինը, փակված Բաղդադում, ահ ու դոդի մեջ էին, ի վիճակի չիննելով որևէ քայլ ծեռնարկել պաշտպանվելու համար:

1251 թ. Չինգիզ խանի գահին է նստում որպես մեծ խան նրա քոռ՝ Մունզքեն: Նա իր առջև կոնկրետ խնդիր դրեց գրավել Բաղդադը և վերացնել Արքայանների խալիֆայությունը: Այդ դժվար խնդիրը նա հանձնարարեց իր եղբօրք՝ Յուլաղու խանին, որը 1253 թ. մի մեծ գորաբանակի գլուխ անցած, դուրս եկավ Մոնղոլայից և շարժվեց Բաղդադի ուղղությամբ: Նրա նպատակը ոչ միայն Արքայան խալիֆայության, այլև այսպես կոչված ասսամինների վերացումն էր: Ասսամինները իս-

մահլական-շիական մի աղանդ էին, որոնք իրենց նպատակներին հասնելու գիշավոր միջոցը համարում էին իրենց հակառակորդների սպանությունը, որը նրանք նախապատրաստում էին մեծ զաղտնապահությամբ և խնամքով: Նրանք համարվում էին շատ վտանգավոր ծայրահեղականներ և ամենուր ստեղծել էին վախի մթնոլորտ:

Յուլաղուն նախքան ասսասինների դեմ գործողություններ սկսելը, առաջարկեց Աքքասյան Վերջին խալիֆա Մուսթափիմին (1242–1258 թ.) միանալ իրեն և համատեղ ուժերով վերացնել մարդասպան ասսասիններին: Սակայն խալիֆան չքարեհանեց պատասխանի արժանացնել Յուլաղուն, մոնղոլների ահեղ ղեկավարներից մեկին: Յուլաղուն գործեց միայնակ և 1256 թ. կարողացավ գրավել ասսասինների բոլոր կենտրոնները, այդ թվում նրանց միջնաբերդը հանդիսացող Ալամութը, մահացու հարված հասցնել և վերացնել նրանց: Յուլաղուն այնքան անողոք էր, որ մորթեց բոլոր երեխաններին ու նանուկներին, ասսասինների օրդենն արմատախիլ անելու համար:

Յուլաղուն, լուծելով ասսասինների հարցը, 1257 թ. սեպտեմբերին վերջնագիր ուղարկեց խալիֆա Մուսթափիմին, պահանջելով նրանց անձնատուր լինել: Դա բոլորովին նոր իրավիճակ ստեղծեց: Սա արդեն նման չէր նախկին նվաճողներին, որոնք մտնելով Բաղրատ, խալիֆային գահընկեց չեին անում, ընդհակառակը, նրա իրովարտակով ամրապնում էին իրենց կարգավիճակը, խալիֆային թողնելով հոգնոր առաջնորդի ֆունկցիանները: Մոնղոլական զորահրամանատարը խալիֆայից պահանջեց նաև քանդել Բաղրատի արտաքին պատերը:

Խալիֆայի պատասխանը Յուլաղունին խուսափողական էր, որը, սակայն վերջինիս կողմից ընկալվեց որպես վերջնագրի մերժում:

1258 թ. հունվարին Յուլաղուի մոնղոլական գործերն արդեն կանգնած էին Աքքասյան խալիֆայության նայրաքաղաք Բաղրատի դարպասների մոտ: Միայն այդ ժամանակ, գիտակցելով կախված ահեղ վտանգի իրական և մոտայլու լինելը, խալիֆան և նրա խորհրդատունները վերջապես փորձեցին բանակցությունների մեջ մտնել մոնղոլական խանի հետ: Բաղրատի արտաքին պատերի աշտարակներից մեկի դոները բացվեցին և վազիր էրն ալ-Կամին և նեստորական կաթողիկոսը դիմեցին Յուլաղուին հարցումով, թե որոնք են նրա պայմանները: Վազիրը քրիստոնյա նեստորական կաթողիկոսին իր հետ որպես ուղեկից էր վերցրել այն նկատառումով, որ Յուլաղուի կինը քրիստոնյա էր, և նրանք հույս ուներին, որ դա իր ներգործությունը կրւնենա Յուլաղուի

պայմանների վրա: Բայց արդեն ուշ էր և, բացի դրանից, խալիֆայական կողմը վատ էր ճանաչում մոնղոլներին: Չուլաղուն մերժեց նրանց ընդունել և որևէ բանակցություններ վարել նրանց հետ:

Աքքասյանները փորձեցին զանազան փաստարկներով բարոյական ճնշում գործադրել մոնղոլական խանի վրա: Նրա կողմնակիցները զգուշացրեցին, որ մարտահրավեր կլինի բոլորի ճակատագրին, ովքեր կոտնահարեն «խաղաղության քաղաքը», այսինքն Բաղրադը, և «Աքքասյան խալիֆայությունը»: Նրանք «բացատրեցին» Չուլաղուին, որ «Եթե խալիֆան սպանվի, ապա անբողջ տիեզերքը կկազմակուծվի, արևն իր դեմքը կբաքցնի, անծրսները կդադարեն և բուսականությունն այլև չի աճի»:

Չուլաղուն անտեսեց սպառնալիքների բնույթ կրող այդ կանխագուշակումները, մանավանդ, որ նա ևս խորհրդակցել էր իր աստղագուշակների հետ և նրանք որևէ նման բան չեն կանխագուշակել: Ընդհակառակը, նրանք գուշակել էին Չուլաղուին լրիվ հաղթանակ:

1258 թ. փետրվարի 10-ին մոնղոլական գործերը ներխուժեցին Բաղրադ: Քաղաքն ավերվեց և հրկիզվեց: Չուլաղուն իինգ օր Բաղրադը հանձնեց իր զորքերի թալանին և կողոպուտին: Թալանը նրա հրամանով դադարեցվեց հինգերորդ օրը, երբ այլևս բան չեր մնացել թալանելու: Գերի ընկած խալիֆային Չուլաղուն ստիպեց ցույց տալ իր քաքցրած զանձերը, որը նա հնազանդորեն կատարեց: Ականատեսները ցնցված էին խալիֆայի անհամար ոսկեղենից և քանիքարժեք քարերից, որոնք բոլորն անցան մոնղոլական խանի տրամադրության տակ: Փետրվարի 20-ին Աքքասյան վերջին խալիֆա ալ-Մուսթաքիմը մահապատճի ենթարկվեց: Նրա հետ սպանվեցին Աքքասյան ընտանիքի բոլոր արու անդամները, պաշտոնյաները, կադիները և այլն, թվով 300 մարդ:

Բաղրադի թաղերը և փողոցները ծածկված էին անհամար ոլիակներով, որոնք թաղող չկար: Դիակների նեխումից տարածված զարշահոտությունը պատել էր քաղաքը և Չուլաղու խանը ստիպված էր մի քանի օրով հեռանալ Բաղրադից: Ավերակների վերածված, հրկիզված, քալանված և ամայացած Բաղրադը դադարեց մայրաքաղաք լինելուց, և հետագա դարերում նա զավառական մակարդակի քաղաքից այն կողմ չկարողացավ բարձրանալ:

Դինգ հարյուր հիսունութ տարի գոյատևած Աքքասյան խալիֆայությունը դադարեց գոյություն ունենալ: Նրա կործանումը դարձավ պատմական իրողություն:

## Գլուխ դասմէրկուերորդ

### **ԽԱՉԱԿԻՐՆԵՐԸ, ԱՅՅՈՒԹԻՆԵՐԸ ԵՎ ՄԱՍԼՈՒՁՆԵՐԸ**

#### **I. ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐԾԱՎԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՌՃԱԿԱՏՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ-ԻՍՂԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ**

##### **1. Խաչակիրների հայտնվելն Առաջավոր Ասիայում**

Խ ղարի վերջերից Առաջավոր Ասիայում կամ Մերձավոր ու Միջին Արևելքում տեղի ունեցան այնպիսի իրադարձություններ, որոնց, թեև ընթանում էին վերոնշյալ տարածաշրջանում, սակայն իրենց նշանակությամբ դուրս եկան նրա սահմաններից և կազմեցին համաշխարհային պատմության ամենակարևոր էջերից մեկը: Խոսքը խաչակրաց արշավանքների և պատերազմների մասին է:

Նրա նախածեռնողները եղան Չոռմի կաթոլիկ եկեղեցին և Եվրոպական միապետները, որոնց առաջին շարժերում գտնվում էին Գերմանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի թագավորները, Եվրոպական գանազան իշխաններ, ինչպես նաև Խոտայիայի նենովա, Կեննետիկ և Պիզա քաղաքները, որոնց ամենաակտիվ աջակցություն էր ցույց տալիս Բյուզանդական կայսրությունը, իսկ պատմական օրոշ ժամանակաշրջանում նաև Կիլիկիայի Դայկական թագավորությունը:

Խաչակրաց պատերազմների սկիզբը դրվեց 1095 թ., երբ Չոռմի պապ Ուրբան II Կիերմոնտում գումարված կաթոլիկական եկեղեցական ժողովում հանդիս եկավ Տիրող՝ Շիսուսի գերեզմանը անհավատների՝ մուսուլմանների ծեղքից ազատագրելու կոչով: Պոնտիֆիկի ելույթը և առաջարկությունը խուռներամ ժողովոյի և Եվրոպական միապետների

ու նրանց արքունիքների կողմից ընդունվեց մեծ խանդավառությամբ, առաջացնելով խևական էֆորիա:

Առաջին արշավանքը տեղի ունեցավ 1096 թ. Վերջերին: Նրա մասնակիցները կոչվեցին խաչակիրներ, որովհետև նրանք իրենց աջ թևին կարում էին կարմիր կտորից խաչ:

Կրոնական պատերազմի քողի տակ ընթացող, իրականում տարբեր նպատակներ էին հետապնդում: Չբացառելով քարեպաշտ քրիստոնյաների առկայությունը նրանց շարքերում, որոնք, իրոք, մտահոգ էին Դիսուահի գերեզմանի ճակատագրով, և Արևելք շարժվեցին զուտ կրոնական մղումներով, այնուամենայնիվ, պետք է նշել, որ այդ արշավանքներն ավելի շատ քաղաքական և նվաճողական բնույթ էին կրում:

Եվրոպական միապետական վերնախավը ծարավի էր նոր նվաճումների, հուսալով տիրանալ, իրենց կարծիքով և ըստ չափազանցված լուրերի, Արևելքի առասպելական հարստություններին: Տարածքային նոր ծեռքբերումները և Արևելքի երկրների հարստություններին տիրանալը, որից իր մասնաբաժինն ուներ Հռոմեական եկեղեցին, դարձավ նրանց համար գլխավոր մղիչ ուժը:

Իրենց ուրույն նպատակներն էին հետապնդում մանր ազնվականները, նրանց ծոցից դուրս ելած ասպետները, որոնք հողագուրկ էին, քանի որ Եվրոպայի երկրների մեծ մասում հաստատված կարգի համաձայն դուքսի, կոմսի, դերկոմսի կամ մարքիզի լիիրավ ժառանգորդը նրա ավագ որդին էր, իսկ մնացած զավակները չեն ստանում որևէ հողարաժին: Ահա այս հողագուրկ ազնվականությունը Տիրոջ գերեզմանը փրկելու պատրվակով նետվեց Արևելք, հույս ունենալով արաբական երկրներում լուծել իր համար կարսոր կենսական խնդիրները:

Խաչակիրների շարքերը զանգվածարար համալրեցին գյուղացիները, որոնք տնքում էին ֆեոդալական հարկերի տակ, հոգնած ու օգված էին ավատատերների կամայականություններից ու բռնություններից, ինչպես նաև քաղաքային աղքատ խավը: Նրանք, տեղյակ չլինելով արաբական և արևելյան մյուս երկրներում տիրող իրական վիճակին, միամտորեն կարծում էին, թե այնտեղ նրանք կարող են գտնել ազատություն և գոյության ավելի տանելի պայմաններ:

Եվ, վերջապես, քիչ չեն զանազան քախտախնդիրներ, ավազակներ, գողեր ու ավարառուներ, որոնք Արևելք էին զնում թալանի ու կողոպուտի, իեշտ ուղիով հարստություն դիզելու համար:

## 2. Եղեսիայի կոմսության, Անտիոքի իշխանապետության և Երուսաղեմի թագավորության հիմնումը

Այս այս խաօնիճաղանճ ամբոխը, թագակիր առաջնորդների գլխավորությամբ, վարարուն և պղտոր գետի նման հորդեց դեպի Սիրիա և այն տարածքները, որոնք տարբեր ժամանակներ կազմել են Արաբական խալիֆայության բաղկացուցիչ մասերը:

Նրանք առաջին արշավանքի ժամանակ հասան թագականին լուրջ հաջողությունների և կարողացան կարճ ժամանակամիջոցում ստեղծել երեք պետական կազմավորում, որը դարձավ նրանց հենարանը հետագա գործողությունների համար:

Խաչակիրների գլխավոր նպատակն էր նվաճել նախ և առաջ Սիրիան, Պաղեստինը և Եգիպտոսը՝ իրենց հարակից տարածքներով: Այդ ճանապարհին առաջին խոշոր հաղթանակը եղավ ալ-Ռահայի՝ Եղեսիայի գրավումը 1097 թ. կոնս Բոլղվինի կողմից և Եղեսիայի կոմսության հիմնումը: Դա դարձավ Լատին առաջին իշխանապետությունը:

Հարունակելով առաջանալ և խորանալ Սիրիայի ու Պաղեստինի ուղղությամբ, խաչակիրների հիմնական ուժերը 1097 թ. հոկտեմբերին պաշարեցին Անտիոքը: Սակայն նա եղավ շատ ամուր ընկույզ խաչակիրների համար: Պաշարվածները ենիր Յահյա Սիյանի գլխավորությամբ, որին ենիր էր Նշանակել դեռևս սելջուկյան սուլթան Մալիք շահը, համառ դիմադրություն էին ցույց տալիս խաչակիրներին: Թաղաքն ընկավ նրանց ծեռքը միայն 1098 թ. հունիսին, և այն էլ քաղաքի աշտարակներից մեկի հրամանատարի դավաճանության պատճառով: Խաչակիրները շատ դաժան գտնվեցին քաղաքի բնակիչների նկատմամբ, որոնց սպանությունը և չարչարանքների ենթարկելով զանգվածային բնույթ էր կրում:

Անտիոքը գրավելուց հետո, խաչակիրները հիմնեցին իրենց երկրորդ պետական կազմավորումը՝ Անտիոքի իշխանապետությունը, որը գլխավորեց Բոհեմունդը:

Խաչակիրների մի գորաբանակ Ռայմոն Տուլուգեցու հրամանատարությամբ, Անտիոքից, որը դարձավ նորաստեղծ հանանուն իշխանապետության մայրաքաղաքը, շարժվեց դեպի հարավ և մտավ Մաարաբ ալ-Շուման, որը արաբական հոչակավոր բանաստեղծ և փիլիսոփա Աբրու ալ-Ալա ալ-Մաարիի ծննդավայրուն էր: Այդուղի մի առժամանակ մնալուց հետո, նա 1099 թ. հունվարի 13-ին հեռացավ, կոտորելով բնակչու-

թյան մեջ մասին և իրի մատնելով քաղաքը: Այնուհետև գրավելով մի շարք այլ բնակավայրեր, կոնս Ռայմոնդի գործերը նուան Հյուսիսային Լիքանան և առանց դիմադրության գրավեցին Անտարտոսաը: Լիքանանի մարտոնի քրիստոնյաները լավ ընդունելություն ցուցաբերեցին խաչակիրներին, նրանցից շատերը նույնիսկ համալրեցին խաչակիրների շարքերը: Այնուհետև Ռայմոնդ միացավ խաչակիրների հիմնական ուժերին, որոնք նախապատրաստվում էին գրավել Երուսաղեմը, որն, ի վերջո, հանդիսանում էր խաչակրաց արշավանքների գլխավոր նպատակը:

Խաչակիրների 40 հազարանոց բանակը, որն արդեն գրավել էր պաղեստինյան ալ-Ռամալլահ քաղաքը, 1099 թ. հունիսի 7-ին արդեն Երուսաղեմի դարպասների մոտ էր: Քաղաքը պաշտպանում էր ոչ մեծաթիվ, ընդամենը մեկ հազարանոց եգիպտական կայազորը: Դասկանալի է, որ նա երկար ժամանակ չէր կարող դիմադրել, և խաչակիրները հուլիսի 15-ին գրոհով գրավեցին Երուսաղեմը: Նրանք սարսափելի ջարդ կազմակերպեցին: Դեպքերի ականատեսը վկայում է, որ որ Երուսաղեմի փողոցներում և հրապարակներում կարելի էր տեսնել մարդկանց գլուխներից, ծեղքերից և ոտքերից առաջացած բլուրներ: Արար պատմէ Իբն ալ-Վսիրը նշում է, որ միայն ալ-Աքսա նզկիթում մորթվել է մոտ 75 հազար մարդ:

Խաչակիրները հաղթանակ տարան եգիպտացիների դեմ նաև Աշկելոնի մոտ, բայց Ֆարիյան վազիր, հայազգի Մալիք ալ-Աֆղալը կարողացավ հակահարված տալ խաչակիրներին և Աշկելոնը պահել իր ծեղքում որպես եգիպտական նավատորմի հենակետ: Դեռ ավելին, պահպանելով իր դիրքերն Աշկելոնում, ալ-Աֆղալը անընդհատ սպառնալիքներ էր ստեղծում և մեծ տիհաճություններ պատճառում խաչակիրներին:

Երուսաղեմի գրավումով, խաչակիրները 1099 թ. հիմնեցին Երուսաղեմի թագավորությունը, որը ներառնում էր Պաղեստինը և Հարավային Սիրիան: Նրա առաջին թագավորը դարձավ Գոդֆրեյ Բուլիոնը, որը, սակայն, պաշտոնապես կրում էր «Սուրբ գերեզմանի բարոն և պաշտպան» տիտղոսը:

Այնուհետև, խաչակիրները գրավեցին Յայֆան, Նարլուսը և այլ բնակավայրեր:

Խաչակիրների երեք հենակետերի միջև գլխավորը Երուսաղեմի թագավորությունն էր: Եղեսչայի կոմսությունը և Անտիոքի իշխանապետությունն ընդունում էին նրա գերակայությունը և փաստորեն գտնվում էին վասալական կախման մեջ նրանից: Ավելի ուշ նման կարգավիճա-

Կում հայտնվեց նաև 1109 թ. հիմնված Տրիպոլիի կոմսությունը: Ծագում-նարանական պատկանելության առումով, Եղեսիան և Եղուսաղեմը Բուրգունդական, Անտիոքը Նորմանդական, իսկ Տրիպոլին՝ Պրովանսալական իշխանապետություններ էին: Այս չորս կազմավորումները պատմության մեջ, արարական աշխարհում, անկլավների ծնով առաջին և վերջին անգամ կազմավորված քրիստոնեական-կաթոլիկական, կամ ինչպես ընդունված էր ասել, Լատին պետություններ էին:

### 3. Արարա-իսլամական պետական կազմավորումների դիրքորոշումը խաչակիրների նկատմամբ

Խաչակիրների արշավանքները և նրանց հայտնվելը Արևելքում ուղղակի տակնուվրա արեցին արարա-մուսուլմանական աշխարհը: Սիրիայի, Պաղեստինի, Եգիպտոսի բնակիչներն առաջին անգամ ընդհարվեցին քրիստոնյա ուժերի հետ, որոնք գալիս էին ոչ թե Բյուզանդական կայսրությունից, որին նրանք լավ ծանոթ էին և որի հետ նրանք մարտնչում էին արդեն մի քանի հարյուրամյակ, այլ հեռուներից եկած, ինչպես նրանք էին անվանում, «ֆրանկների» հետ: Դասարակ բնակչությունը կամ բոլորովին անտեղյակ էր նրանց մասին, կամ ուներ շատ աղոտ պատկերացումներ: Եվ, որ ամենագլխավորն է, նրանք չեին հասկանում, թե խաչակիրներն ինչ են ուզում իրենցից, ինչու համար են ներխուժել իրենց երկիրը և որն է նրանց նպատակը: Այս հարցերն առանձնապես սուր բնույթ էին կրում խաչակիրների կողմից նվաճված մի շարք քաղաքների բնակչության նկատմամբ կիրառված բռնություններից ու զանգվածային սպանություններից հետո:

Թվում էր, թե խաչակիրների արշավանքները կստիպեն մուսուլմանական պետություններին միավորվել և միասնական ուժերով դիմագրավել արտաքին Վտանգը, որն ուղղված էր ոչ թե առանձին պետությունների, սուլթանությունների և էմիրությունների, այլ նրանց բոլորի դեմ: Խոսքն առաջին հերթին Արքասյան խալիֆայության, Սելջուկյան Մեծ սուլթանության, Ումինի կամ Իկոնիայի Սելջուկյան սուլթանության և Ֆարիմյան խալիֆայության մասին է: Մակայն դա տեղի չունեցավ: Նրանց կողմից դրսնորվել է անբացատրելի անտարբերություն և կրավորական վերաբերմունք: Դամենայն դեպս, այդպիսին է պատմական իրողությունը:

Արքայան խալիֆայության պարագայում դա կարելի է, եթե ոչ արդարացնել, ապա բացատրել: Արդեն նշվել է, որ Արքայան խալիֆայությունն անցել էր Սելջուկյան Մեծ սուլթանության տիրապետության տակ, որը թեև ծևականորեն պահպանել էր նրա գոյությունը, սակայն զոկել էր խալիֆաներին իշխանական, քաղաքական և ռազմական լծակներից, բողնելով նրանց լոկ հոգնոր—կրօնական գործառությությունը բայց նրանք զարմանալիորեն իրենց բողնված այդ իրավունքից էլ չօգտվեցին, ցուցաբերելով իրենց կատարյալ անկարողությունը համահսլանական առաջնորդ հանդես գալու և հանայն նույնության մուտքամբ աշխարհը խաչակիրների դեմ ուժի հանելու համար:

Տարօրինակ կերպով Արքայանները, Սելջուկները, դեռ ավելին, մուսուլմանների հիմնական զանգվածը, խաչակիրների ներխուժումը համարել են «հեռումներում տեղի ունեցող իրադարձություններ» և «անկարենոր էպիզոդ»: Նրանք նույնիսկ չսթափվեցին, երբ խաչակիրները հասան տպավորիչ հաղթանակների:

Խաչակիրները, ինչպես նշվեց, 1099 թ. գրավեցին Երուսաղեմը: Նրա անկումից հետո քաղաքի մուսուլմանների մի պատվիրակություն է գալիս Բաղդադ, և Մուստաքիր խալիֆայից օգնություն խնդրում: Վերջինս առատ արցունքներ քափելով և ցավ հայտնելով կատարվածի կապակցությամբ, Երուսաղեմի պատվիրակությանը խորհրդուր է տալիս օգնության հաճար դիմել Սելջուկյան սուլթան Բարկիյարուքին, որը նույնպես որևէ գործնական քայլ չծեռնարկեց, ուստի և քանակցություններն ավարտվեցին անարդյունք: Նույն քախտին արժանացավ խաչակիրներից պաշարված Տրիփոլիի պատվիրակության առաքելությունը 1108 թ.:

Խաչակիրների դեմ ավելի վճռական գտնվեցին Զանգիները: Այդ դիմաստիայի հիմնադիրը եղավ Իմադ աղ-Դին Զանգին, մի թուր ստրուկի որդի, որը դարձել էր գորակարամանատար և ծառայության մեջ էր գտնվում սելջուկյան սուլթանի մոտ որպես նրա երկու որդիների արքեկ: Աթարեկները (աթարեկ թուրքերեն բառ է, որը նշանակում է բեկի հայր), սուլթանների կողմից նշանակված նրանց որդիների դաստիարակները և պահպաններն էին, որը լայն տարածում էր գտել հատկապես Սելջուկյանների ժամանակներում: Դա շատ ազդեցիկ պաշտոն էր, որը նրանց առջև մեծ հեռանկարներ էր բացում: Սելջուկյան սուլթանը ահա այդ աթարեկ Իմադ աղ-Դին Զանգին 1127 թ. նշանակում է Մոսուլի էմիր և այդ բվականին էլ հաստատվում է Զանգիների դիմաստիան (1127–1262 թթ.): Այդ կապուտայա աթարեկն իրեն դրսնորեց որպես ե-

ռանդուն, իսելացի և վճռական գործողությունների ընդունակ գործիչ: Նա իր իշխանությունը տարածեց նաև Մօքինի, Դարրանի, իսկ ապա նաև Դալերի և Սիրիայի այլ քաղաքների և բնակավայրերի վրա: Նա գրավեց նաև Բաալբաքը Լիբանանում, որի կառավարիչ նշանակեց իր օգնականներից մեկին, ծագումով քուրդ Նաջմ ադ-Ղին Այյութիին, որը շատ չանցած մեծ ղերակատարում ունեցավ ոչ միայն Սիրիայում, այլև Եգիպտոսում:

Իմադ ադ-Ղին Զանգին, ամրապնդելով իր իշխանությունը Մոսուլում, և ընդարձակելով իր տիրույթները Սիրիայի որոշ մասերում, անխուսափելիորեն պետք է բախվեր Ֆրանկների, այսինքն խաչակիրների հետ: Այդ բախումը տեղի ունեցավ 1144 թ., որն ավարտվեց Զանգիի հաղթանակով: Նա գրավեց Եղեսիան, որը համարվում է մուսուլմանների առաջին հաղթանակը խաչակիրների նկատմամբ: Ահա այս պահին ասպարեզում հայտնվեց Աբբասյան խալիֆան, որը Զանգիին շնորհեց միանգամից երկու շատ պատվավոր տիտղոս՝ «Խոլամի զարդ» և «Ուղղահավատների վեհապետի օգնական»:

Սակայն Զանգին երկար չվայելեց իր հաղթանակի պտուղները, որը նրան բերել էր մեծ փառք և հեղինակություն մուսուլմանական աշխարհում: 1146 թ. նա դավադրաբար սպանվեց: Նրա եմիրությունը բաժանվեց երկու որդիների միջև: Մուսուլի և Զագիրայի կառավարումը ստացավ նրա ավագ որդին, Սայֆ ադ-Ղին Դազին, իսկ Դալերը և մնացած տարածքներն անցան կրոտսեր որդու՝ Նուր ադ-Ղինի տնօրինության տակ: Այս երկու եղբայրներից առավել կարևոր ղերակատարում ունեցավ և պատմության մեջ հետք բռնեց կրոտսեր որդին, որն իրեն դրսնորեց իսլամին Ծվիրված և նրա շահերի հետևողական պաշտպան: Նուր ադ-Ղինի առջև կանգնած էին երկու կարևոր խնդիրներ, առաջին, իր իշխանության ներքո միավորել Սիրիայի բոլոր այն տարածքները, որոնք գտնվում էին մուսուլմանական առանձին իշխանավորների տիրապետության տակ, և, երկրորդ, հակահարված հասցնել խաչակիրներին և հնարավորին ազատագրել նրանց տիրապետության տակ անցած հողերը: Կարելի է ասել, որ երկու բնագավառներում էլ նա հասավ շոշափելի հաջողությունների:

Եղեսիայի կորուստը և խաչակիրների նոր պարտությունը շատ ծանր տպավորություն գործեց Ֆրանկների ղեկավարների վրա: Երուսաղեմի թագավորը և Անտիոքի ու Տիրապոլիի իշխանները լուրջ տագնաապ էին ապրում: Դականալով, որ եղած ուժերով դժվար է հասնել հա-

ջողությունների, Երուսաղեմի թագավորը դիմեց Յօնմի պապին Եվրոպայից լրացուցիչ ուժեր ուղարկել: Վերջինս դրականորեն արձագանքեց Երուսաղեմի թագավորի աղերսանքին և նախածեռնեց խաչակրաց երկրորդ արշավանքը, որը տեղի ունեցավ 1147–1149 թթ.: Եվրոպայից Արևելք նետվեց ասպետների նոր հոսանք գերմանական կայսր Կոնրադ III և ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս VII գլխավորությամբ:

Նրանք փորձեցին գրավել Դամասկոսը և պաշարեցին այն: Սակայն պաշարվածներին օգնության գնաց Նուր աղ-Ղինը մեծ զորաբանակով: Խաչակիրները, խուսափելով Նուր աղ-Ղինի զորքերի հետ բախումից, վերացրին Սիրիայի մայրաքաղաքի պաշարումը և հեռացան: Սիրիայից հեռացան և իրենց երկրները վերադարձան, մեծ կորուստներից հետո, նաև Կոնրադ III և Լյուդովիկոս VII:

Իսկ Նուր աղ-Ղինը տարավ մի նոր և շատ կարևոր հաղթանակ: Նա 1151 թ. պարտության մատնեց խաչակիրներին, որոնք փորձեցին հետ գրավել Եղեսիան: Դա նրանց ոչ միայն չիազդողվեց, այլև նրանք կորցրեցին ամբողջ կոմսությունը, որն անցավ Նուր աղ-Ղինի իշխանության ներքո: Իսկ Եղեսիայի կոմս Զոսելին II գերի ընկավ, որին Նուր աղ-Ղինը շղթայակապ նետեց բանտ:

Նուր աղ-Ղինը 1164 թ. տարավ նոր հաղթանակ, այս անգամ Անտիոքի իշխան Ռայմոնի դեմ: Նրա տիրապետության տակ անցավ Անտիոքի իշխանապետության մի մասը: Նրա երիտասարդ իշխանը՝ Բոհեմոնդ III իր դաշնակից, Տրիփոլիտ իշխան Ռայմոն III հետ միասին գերի ընկան:

Նուր աղ-Ղինը մեծ հաջողություններ ունեցավ նաև Սիրիայի ճակատում: 1154 թ. նրան անձնատուր Եղավ Դամասկոսը, որով նրա տիրապետության տակ անցավ ամբողջ Սիրիան իր այն մասով, որը գտնվում էր նուսուլմանների ծեռքում:

Այսպիսով, Նուր աղ-Ղինը դարձավ մուսուլմանական աշխարհի ամենահզորներց մեկը, թեև ծևականորեն նա շարունակում էր մնալ ծառայության մեջ Սելջուկյան սուլթանին և համարվում նրա վասալը:

## II. ԱՅՅՈՒԹԻՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ՄԻՐԻԱՅՈՒՄ (1169–1252 թթ.)

### 1. Յայաստանից արտագաղբած քուրդ Այյութիները: Սալլահ ադ-Դին ալ-Այյութին

Խաչակիրների անհաջողությունները և տարածքների կորուստը Սիրիայում և Պաղեստինում, ստիպեցին նրանց փոխել իրենց հարվածի ուղղությունը և քաղաքականության ծանրության կենտրոնը տեղափոխել Եգիպտոս։ Նրանք հույս ունեին հասնել հաջողության այստեղ, նկատի ունենալով Ֆարինյանների օրեցօր թռվացող դիրքերը և անկայուն վիճակը, որ հաստատվել էր Եգիպտոսում։ Նրանք միաժամանակ ակնկալուն էին այդ հարուստ երկրամասի գրավումով բարելավել իրենց վատրարացող տնտեսական և ֆինանսական վիճակը։

Խաչակիրների առաջին քայլերն այս ուղղությամբ թվում էին հոլոսադրություն։ Նրանք տարան մի շարք հաղթանակներ, իսկ 1143 թ. Երուսաղեմի բագավոր Բոլդվին III գրավեց Եգիպտոսին պատկանող Աշկելոն քաղաքը։ Նրա այդ քաղաքականությունը, նրա մահից հետո (1163 թ.), փորձեց շարունակել նրա եղբայրը՝ Ամալրիկ I։ Երուսաղեմի այդ նոր թագավորը ուներ կառավարման որոշ փորձ, քանի որ մինչև թագավորական գահին նստելը նա Յայֆայի և Աշկելոնի կառավարիչն էր եղել։

Խաչակիրների այս հաջողություններից վախեցած Ֆարինյանները, որպեսզի կանխեն Ամալրիկի հետագա ներքափանցումը Եգիպտոսի խորքերը, հանաձայն Վեցին հարկ վճարել Երուսաղեմի թագավորությանը։ Նրանք հույս ունեին այդպիսի նվաստացման ուղիով պահպանել իրենց իշխանությունը։ Սակայն նրանք սխալվեցին իրենց հաշիվներում։

Ամալրիկ I, որն ուշի ուշով հետևում էր Եգիպտոսի ներքաղաքական գարգացումներին և լավատեղյակ էր Ֆարինյանների ծանր վիճակին, 1163 թ. ներխուժեց Եգիպտոս և շատ արագ մոտեցավ Կահիրեին, լուրջ սպառնալիք ստեղծելով նրան։ Կահիրեի պաշտպանները հույս չունենալով, որ գենքի ուժով կկարողանան պաշտպանել իրենց քաղաքը և կանխել նրա անցումը Քրամկների ծեռքը, ընդունեցին մի հուսահատական որոշում, որը, սակայն, արդարացրեց իրեն։ Նրանք քանդեցին նեղոսի ամբարտակները և ջրի տակ թռիղեցին Վերին Եգիպտոսը։ Նման պայմաններում, երբ խաչակիրների գործերը, մասնավանդ հեծե-

լազորը, այլևս չէին կարող ազատ գործել, նրանց այլ բան չէր մնում, քան նահանջել և վերադառնալ իրենց ելման դիրքերը:

Եգիպտոսում ծավալված դեպքերի սկզբնական փուլում Նուր ադ-Դինը ցուցաբերոց զգուշավորություն և մեծ ցանկություն չուներ միջամտել այդ դեպքերին: Այստեղ իր դերն ունեցավ այն պարագան, որ մինչ այդ նա զինադադար էր Կնքել Երուսաղեմի թագավոր Բոլովին III հետ և մտադրություն չուներ ինքը դաշնալ Ֆրանկների հետ Կնքված հաշտության պայմանագրի խախտողը: Սակայն Երուսաղեմի նոր գահակալ Ամալրիկ I հարձակումը Եգիպտոսի վրա արմատականորեն փոխեց իրադրությունը: Նուր ադ-Դինը 1164 թ. որոշեց Եգիպտոս ուղարկել մի զորաբանակ իր վասալներից մեկի, ուրող զորահրանատար Շիրկուտիի գլխավորությամբ: Այդ արշավանքի ժամանակ նրան ուղեկցում էր իր եղբոր՝ Նազմ ադ-Դին Այյուբիի որդին, երիտասարդ Սալահ ադ-Դինը, որին պատմությունը նախապատրաստել էր Վճռական դերակատարում արաբական երկրների կյանքում և խաչակիրների դեմ մղված պատերազմներում:

Եգիպտոսում Շիրկուտիի զորաբանակի հայտնվելու արդյունքը եղավ այն, որ Ամալրիկը հեռացավ Եգիպտոսից: Նրանց միջև ստորագրվեց պայմանագիր, որով երկու կողմերը պարտավորվելում էին իրենց զորքերը դուրս բերել Եգիպտոսից: Ուստի Ամալրիկ I զորքերի հետ միասին Եգիպտոսից դուրս եկան նաև Շիրկուտի զորքերը: Բայց երբ Ամալրիկ I 1167 թ. խախտեց պայմանագիրը, Ֆարիյան վերջին խալիֆա ալ-Աղջիդի խնդրանքով նրան օգնության եկավ Շիրկուտի և իր զորքերը մտցրեց Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրե, և կրկին դուրս շպրտեց խաչակիրներին Եգիպտոսից: Խալիֆա ալ-Աղջիդը Շիրկուտին նշանակեց Եգիպտոսի վագիր: Բայց նա այդ պաշտոնում մնաց շատ կարծ ժամանակամիջոց: Նա մահացավ 1169 թ. և վագիրի պաշտոնում նրան հաջորդեց Սալահ ադ-Դինը:

Եգիպտոսում հաստավեց նոր դինաստիա, Այյուբիների քրոջական դինաստիան:

Ո՞վեր էին նրանք, այդ քրոջերը, որոնք հասան այդպիսի բարձունքների, ո՞րտեղից և ինչպես էին նրանք հայտնվել արաբական աշխարհում:

Սալահ ադ-Դինի պապը՝ Շագին ծնվել էր Դայաստանում, Դվին քաղաքի մերձակա լեռնային գյուղերից մեկում: Այստեղ են ծնվել նաև նրա երկու որդիները՝ Նազմ ադ-Դին Այյուբին և Ասադ ադ-Դին Շիրկու-

ից: Շագին, հետամուտ իր համար հեռանկարային գործունեություն ապահովելու խնդրով, Վերցնում է իր երկու որդիներին և ամբողջ ընտանիքով հեռանում Դայաստանից, ուղղություն Վերցնելով դեպի արաբական երկրները: Ի վերջո նա հաստատվում է Իրաքում, ծառայության մտնում սելջուկների մոտ և նշանակվում Բաղդադից հյուսիս գտնվող Թիկրիթ քաղաքի ամրոցի պարետ: Դորն այդ պաշտոնում փոխարինում է Շագին ավագ որդին, երիտասարդ Նաջմ ադ-Դին ալ-Այյուբին: Դետագյում նրա անունով էլ կոչվում է Եգիպտոսում հաստատված դինաստիան: Բայց այդ ժամանակը դեռ հեռու էր և նա շատ երկար ճանապարհ ուներ անցնելու:

Թիկրիթում 1138 թ. ծնվում է Նաջմ ադ-Դին Այյուբիի որդին՝ Սալահ ադ-Դինը: Մեկ տարի անց Նաջմ ադ-Դինին արաբեկ Զանգին նշանակում է Բաալբակում տեղակայված գործերի հրամանատար և կառավարիչ: Իսկ Զանգին մահից հետո, Սալահ ադ-Դինի հայրն անցնում է նրա որդու Նուր ադ-Դինի կողմը, հավատարմորեն ծառայում նրան և վայելում նրա վստահությունը:

Ահա ասյափիսի միջավայրում էր ծնվել և մեծացել Սալահ ադ-Դին իբն Այյուբը, որը 1171 թ. դարձավ Եգիպտոսի տիրակալը:

## 2. Սալահ ադ-Դին ալ-Այյուբին Եգիպտոսի և Սիրիայի տիրակալ

Արաբական և Եվրոպական պատմագրության մեջ այն տեսակետն է տիրապետում, որ XII դարում իսլամական աշխարհն ունեցել է երեք նշանավոր քաղաքական և ռազմական դեմքեր՝ Մոսուլի կառավարիչ, արաբեկ Խնադ ադ-Դին Զանգին, նրա որդին, արաբեկ Նուր ադ-Դինը, և Սալահ ադ-Դին ալ-Այյուբին: Դամաձայն լինելով նման տեսակետի հետ, բայց կարծում ենք, որ նրանց մեջ իր դերակատարումով առանձնանում է Սալահ ադ-Դինը, որն անջնջելի հետք է բողել արաբների և բոլոր մուսուլմանների պատմության մեջ, և իր տրամաչափով գերազանցում է Վերոնշյալ երկու գործիչներին:

Սալահ ադ-Դինը լինելով խիզախ անծնավորություն, դրա հետ միասին գործում էր շատ հաշվենկատ և համբերատարությամբ, դիվանագիտությունը զուգակցելով քաղաքական համարձակ քայլերին և ռազմական գործողություններին: Այդ հատկանիշներին տիրապետելը հատկապես անհրաժեշտ էր նրա իշխանության գլուխ գալու սկզբնական շրջանում, երբ նա դեռևս չէր աամրապնել իր ոկրքեղջ Եգիպտոսում:

Եթ 1171 թ. մահացավ Ֆաթիմյան վերջին խալիֆա ալ-Աղիջը, ապա Սալահ աղ-Դինը նրա փոխարեն չըռղեց, որ որևէ մեկը գահ բարձրանա: Դա համարձակ քայլ էր նրա կողմից, որն ուղեկցվեց մեկ այլ համարձակ քայլով: Երկար դադարից հետո, առաջին անգամ նրա հրամանով ուրբաթօրյա խուտքայում, Կահիրեթ մզկիթում, հիշատակվեց Արբասյան խալիֆայի՝ ալ-Մուսթաղիի անունը: Դա նշանակում էր Ֆաթիմյանների վերջնական տապալում և հեռացում քաղաքական ասպարեզից, մի կողմից, և Եգիպտոսի վերադարձ սուննիզմին, մյուս կողմից: Այս քայլով նա նվաճեց Արբասյան խալիֆայի, բոլոր Արբասյանների և սուննիների համակրանքն ու աջակցությունը: Խալիֆա ալ-Մուսթաղին ըստ արժանվույն զնահատեց Սալահ աղ-Դինի խօզախ քայլը և նրան ուղարկեց նրա աստիճանակարգին վայել թանկարժեք հագուստներ:

Սակայն Սալահ աղ-Դինը դեռևս շարունակում էր մնալ Նուր աղ-Դինի վասալը: Թեև դա ծնական բնույթ էր կրուն, այդուհանդերձ, Սալահ աղ-Դինը հարկադրված էր հաշվի առել այդ հանգամանքը և զգույշ լինել դեռևս հզոր և ազդեցիկ իր սյուլքերների նկատմամբ: Նա լավ էր հասկանում, որ հարաբերությունների սրումը Նուր աղ-Դինի հետ իրեն ծեռնտու չէր: Այդ պատճառով նա շարունակում էր Եգիպտոսում հավաքած հարկերի մի մասն ուղարկել Նուր աղ-Դինին, եղթեմն իր զորքերով մասնակցել Նուր աղ-Դինի միջոցառումներին և այլն:

Բայց Նուր աղ-Դինն ինքը կասկածանքով էր վերաբերվում Սալահ աղ-Դինին, որի դիրքերի ամրապնդումը նրան անհանգստացնում էր: Դարաբերությունների հետազա սրումը և խզումը նրանց միջև կանխելու գործում դրական դերակատարում ունեցավ Սալահ աղ-Դինի հայրը՝ Նաջմ աղ-Դին ալ-Այյուրին, որը Երկար տարիներ ծառայել էր Նուր աղ-Դինի մոտ, և որին վերջինս շատ էր վստահում: Նրա հանճնարարությամբ Նաջմ աղ-Դինը գնաց Եգիպտոս, հանդիպեց օրդուն, և, ի վերջո, կարողացավ կանխել խզումը Սալահ աղ-Դինի և Նուր աղ-Դինի միջև: Սակայն ինչպես պարզվեց, դա ժամանակավոր բնույթ էր կրում: Նուր աղ-Դինը լրջորեն պատրաստվում էր հարձակվել Սալահ աղ-Դինի վրա և նրան զրկել իշխանությունից: Այդ ծրագիրը մնաց անկատար, քանի որ 1174 թ. Նուր աղ-Դինը մահացավ:

Նուր աղ-Դինի մահից հետո նոր իրավիճակ ստեղծվեց, որը բարենպատ էր Սալահ աղ-Դինի համար, և նա չհապաղեց օգտվել դրանից: 1174 թ. նա Եգիպտոսը հայտարարեց անկախ: Այնուհետև նա իր հայացքն ուղղեց դեպի Սիրիա: Նա կարողացավ Սիրիան, այսպես ա-

սած, ուղղակի խլել Նուր աղ-Ղինի որդուց, 11-ամյա Խսմահիկց և կցել իր տիրութեներին: Սալահ աղ-Ղինի եղբայրը, Թուրան Շահը Այյութիների տիրապետությունը հաստատեց Եմենում: Եգիպտոսին միացավ նաև Քիջազը՝ իր երկու սուրբ քաղաքներով, Մեքքայով և Սաղինայով:

Այսպիսով, Այյութիների տիրապետության ներքո պատմության թատերաբեմի վրա հայտնվեց մի նոր, բավականին հզոր պետություն, որի կազմում մտնում էին Եգիպտոսը, Սաղրիբը, Նուրիան, Կենտրոնական Սիրիան Դամասկոս, Դալեթ և այլ քաղաքներով, Արևմտյան Արարիան, Եմենը և Պաղեստինը: 1175 թ. Արքայան խալիֆան Սալահ աղ-Ղինին տվեց համապատասխան հրովարտակագիր, որով նրան ճանաչում էր նշյալ տարածքների տիրակալ: Դա Սալահ աղ-Ղինի կարևոր քաղաքական հաղթանակն էր:

Հարունակելով արաբական տարածքներն իր տիրապետության ներք միավորելու քաղաքականությունը, Սալահ աղ-Ղինը 1185 թ. գրավեց Մուսուլի Ե-միրությունը և Միջագետքի այլ մեջ ու փոքր իշխանապետությունները, դառնալով տարածաշրջանի ամենահզոր պետությունը:

Սակայն, բոլորին չէ, որ դուր էր գալիս Սալահ աղ-Ղինի հաջողությունները և հզորացումը: Նրա Վտանգավոր հակառակորդների թվում էին ասսասինները, խսմահիական ծայրահեղականները, որոնց դժգոհ էին, որ Սալահ աղ-Ղինը տապալել էր նույնպես խսմահիալական Ֆաթիմյաններին և Եգիպտոսը վերադարձրել սուննիների գիրկը: Եվ նրանք գործի որեցին իրենց հիմնական զենքը՝ մահափորձի տակտիկան, որի գոհն էին դարձել մի շարք նշանակալի մուսուլման և քրիստոնյա գործիչներ: Նրանք երկու անգամ նահափորձ կատարեցին Սալահ աղ-Ղինի դեմ, բայց անահաջող: 1176 թ. Սալահ աղ-Ղինը դիմեց վճռական գործողությունների ասսասինների դեմ, պաշարեց լեռներում գտնվող Սայսաղը, որը նրանց կենտրոնն էր, որտեղ և գտնվում էր նրանց առաջնորդ Ուշշի աղ-Ղին Սինանը: Բայց վեճը լուծվեց խաղաղությամբ: Ասսասինների առաջնորդը խոստացավ այլևս մահափորձ չկատարել Սալահ աղ-Ղինի դեմ, իսկ Վերջինս վերացրեց Մասյահի պաշարումը:

Սալահ աղ-Ղինը սկսեց կրել «ալ-Մալիք ան-Նասիր աս-Սուլթան» տիտղոսը, որը նշանակում էր «Դաղբական թագավոր, սուլթան»: Նա իր տիտղոսակարգի մեջ նիացրեց թագավոր՝ «մալիք», և սուլթան տիտղոսները, դրանով ընդգծելով իր առանձնահատուկ կարգավիճակը և բոլորից իր բարձր լինելու հանգանքը:

### 3. Սալահ աղ-Ղինը և Խաչակիրները

Մալիք ան-Նասիր աս-սուլթան Սալահ աղ-Ղինը իր տիրապետության ներքո միավորելով արաբական հիմնական երկրները, անրազմնություն իր դիրքերը իր սուլթանության սահմաններում, որը նրա քաղաքական ճակատագրի համար ուներ հանգուցային նշանակություն, կարգավորելով իր հարաբերությունները վտանգավոր ասսասինների հետ, իր քաղաքականության հիմնական խնդիրը համարեց պայքարը խաչակիրների դեմ, մուտումանական գրավյալ տարածքների ազտագրումը և իր պետության հետագա հզորացումը: Եվ այս բնագավառում ևս նա հասավ փայլուն հաղթանակների:

Նրա լայնածավալ և երկարատև պայքարը ֆրանկների դեմ սկսվեց 1187 թ. և շարունակվեց մինչև նրա մահը: Դուլսի 1-ին Սալահ աղ-Ղինի գործերը վեցօրյա պաշարումից հետո գրավեցին Տիբրիան, իսկ երեք օր անց՝ Շիթթինը: Շիթթինի մոտ տեղի ունեցած ճակատամարտը սուլթանի կարևոր հաղթանակներց մեջն էր: Գերի ընկավ խաչակիրների 20 հազարանոց բանակը երուսաղեմի բազավոր Գի Լուգինյանի գլխավորությամբ: Դա միանգամից վատրարացրեց խաչակիրների վիճակը և դուրս բացեց երուսաղեմի առջև: 1187 թ. հոկտեմբերի 2-ին երուսաղեմն անձնատուր եղավ Սալահ աղ-Ղինին: Դա նշանակում էր երուսաղեմի կամ Լատինների թագավորության կործանում, որը ցնցեց խաչակիրներին և բարոյացրեց նրանց:

Երուսաղեմի անկումից հետո Սալահ աղ-Ղինը առանց դժվարությունների գրավեց Սիրիայում և Պաղեստինում խաչակիրների տիրապետության տակ գտնվող բազմաթիվ բնակավայրեր, և երկու տարվա ընթացքում ազտագրեց Լաբաթիան, Զաբալահը, ալ-Կարակը, Շաքի Արնունը, Սաֆադը և բազմաթիվ այլ քաղաքներ ու գյուղեր:

Երուսաղեմի անկումը խթանեց խաչակիրների երրորդ արշավանքը 1189–1192 թթ., որը գլխավորեցին Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսը, Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Ավգուստը և Անգլիայի թագավոր Ուչչարդ Առյուծասիրութը: Բայց նրանցից ոչ բոլորը հասան Արևելք: ճանապարհին Կիլիկիայում, գետն անցնելիս խեղդվեց գերմանական կայսրը և նրա հետ արշավանքի դուրս եկած գերմանական ասպետների մեծ մասը վերադարձավ Գերմանիա:

Դասնելով Պաղեստին, խաչակիրներն իրենց գլխավոր խնդիրը համարեցին Ակրի գրավումը, որը, ինչպես նրանք հավատացած էին, ու-

դի կիարթեր դեպի Երուսաղեմ: Նրանք կարողացան շրջապատել այն, որի համար մարտերը գնում էին ծովում և ցանցում: Ֆրանկների գրոհն առաջնորդեց Գի Լուգինյանը, որին գերությունից բաց էր թողել Սալահ ադ-Դինը. ստանալով թագավորի երդումն առ այն, որ նա երբեք իր կյանքում զենք չի բարձրացնի սուլթանի դեմ: Սակայն, ինչպես տեսնում ենք, նա դրժեց իր թագավորական երդումը:

Առնելով Ակրի պաշարման լուրը, Սալահ ադ-Դինը շտապեց օգնության իր պաշարված կայազորին, որը հերոսարար հետ էր մղում խաչակիրների գրոհը: Պատերազմը Ակրի համար տևեց մոտ երկու տարի: Սալահ ադ-Դինը օգնություն խնդրեց խալիֆայից, բայց չստացավ նրանից ոչ մի բան: Ստեղծված պայմաններում Ակրի կայազորը 1191 թ. հունիսի 12-ին հարկադրված անձնատուր եղավ:

Այս հակամարտությունն ունեցավ շատ հետաքրքիր վերջազորություն: Անզլիական թագավոր Ուչարդ Արյուծափրատն առաջարկեց իր քրոջ Կնության Սալահ ադ-Դինի եղբորը՝ Մալիք ալ-Ասիլին: Սիածանանակ նա առաջարկեց նորապսակներին որպես հարսանեկան նվեր տալ Երուսաղեմը և այդ կերպ վերացնել հակամարտությունը քրիստոնյաների և մուսուլմանների միջև: Նրա այդ առաջարկությունն ընդունվեց և 1192 թ. մայիսի 29-ին կայացավ նրանց ամսւանությունը:

Իսկ նոյեմբերի 2-ին ստորագրվեց հաշտության պայմանագիրը: Կողմերը համաձայնության եկան, որ առավիճայ մասերն անցնում են խաչակիրների, իսկ ներքին, ցամացային մասերը մուսուլմանների տնօրինության տակ: Սուրբ քաղաք, այսինքն Երուսաղեմ ուխտագնացության եկողների առջև չպետք է ստեղծվեին խոչընդուններ և այլն:

Դա եղավ Սալահ ադ-Դինի վերջին ծառայությունը մուսուլմաններին: Նա հիվանդացավ և 1193 թ. նոյեմբերի 19-ին մահացավ Դամասկոսում, որտեղ և թաղված է:

#### 4. Այյութիների սոցիալ-տնտեսական քաղաքականությունը

Սալահ ադ-Դինը և նրան հաջորդած սուլթանները խաչակիրների դեմ անընդեմ պատերազմների և նրանց ուժներություններից խլամական աշխարհը պաշտապանելու գերազույն խնդրի հետ միասին, հարկադրված էին մեծ ուշադրություն դարձնել նաև պետական կառուցվածքի կատարելագործման, տնտեսական զարգացման, սոցիալական և այլ հարցերի:

Պետական կառավարման և քաղաքական հաճակարգի բնագավառում նրանք շատ բան վերցրեցին Սելջուկներից, ինչպես նաև Ֆարփյանների կողմից Եգիպտոսում հաստատված կառուցվածքներից: Այյուբինները Սելջուկյան Մեծ սուլթանությունից վերցրեցին նախ և առաջ պետության կառավարման ընտանեկան հաճակարգը, երբ բոլոր պաշտոնները կարող էին գրավել միայն տվյալ դինաստիայի, այսինքն ընտանիքի գլխավոր անդամները: Դրա հետևանքով երկրի կառավարումը նմանվում էր մի տեսակ մի մեծ ընտանիքի կառավարմանը, որն ուներ իր գլխավորը, տվյալ պարագայում սուլթանը, և նրան լսող ու ենթակա ընտանիքի անդամները՝ պաշտոնյանները: Թե՛ Սելջուկները, թե՛ Այյուբինները այդ կերպ ցանկանում էին պետության կառավարմանը տալ ընտանեկան բնույթ, չցանականալով իշխանությունը կիսել ընտանիքին չպատկանող ուժերի հետ ու այդ ուղիով պահպանել միասնությունը կառավարման վերին կառուցվածքներում: Նրանք հույս ունեին այդ ուղիով ամրապնդել իրենց իշխանությունը և իրենց ապահովագրել հնարավոր մարտահրավերներից:

Նեկավարվելով այդ սկզբունքներով, Սալահ աղ-Դինն իր հորը՝ Նազմ աղ-Դին Այյուբին տվեց Ալեքսանդրիա ու Ղամիյաթ նավահանգիստներից և Բուհայրա նահանգից հարկերը հավաքելու պաշտոնը, իսկ իր եղբորը՝ Շամս աղ-Դին Թուրան Շահին, նշանակեց Վերին Եգիպտոսի կառավարիչ և այլն: Կառավարման ներընտանեկան սկզբունքը պահպանվեց նաև Սալահ աղ-Դինի մահից հետո: Նրա ստեղծած սուլթանությունը, որը ծգվում էր Տիգրիսից մինչև Նեղոս, բաժանվեց նրա ժառանգորդների, որդինների և եղբայրների միջև: Նրա որդիններից Մալիթ ալ-Աֆղալը ստացավ Ղամասկոսը, ալ-Ազիզը՝ Կահիրեն, ալ-Զահիրը՝ Ջալերը, իսկ նրա կրտսեր եղբայրը, Սալիհը, ստացավ ալ-Կարակը և ալ-Շոքակը: Արտաքուստ նրանք այդ երկրամասերը կառավարում էին որպես մի ընտանիքի անդամներ:

Սալահ աղ-Դին վերացրեց Ֆարփյանների ժամանակ ծնավորված վիթխարի արքունիքն իր բազմաթիվ պաշտոնյաներով, թողնելով միայն այն պաշտոնները, որոնք ամենահարածեցտն էին: Դրանց թվում առաջին հերթին պետք է նշել հարկերի հավաքման դիվանի պահպանումը:

Այյուբինների ժամանակ ավելի զարգացան ավատափական հարաբերությունները, որին նպաստեցին նաև խաչակիրներն իրենց նվաճած շրջաններում: Նրանք ամենուր ներդնում էին Եվրոպայից իրենց հետ բերած տնտեսական կացութածները, առաջին հերթին ավատափ-

րական հարաբերությունները: Ավելի լայնորեն սկսվեց կիրառվել իկուայի՝ ծառայության (պետական, ռազմական և այլն) ոդմաց ժամանակավոր հողօգտագործման սկզբունքը:

Այյուբինները փոփոխություններ մտցրեցին դատական համակարգում: Նրանք վերացրեցին խմախլական սկզբունքներով դատական գործերի քննարկումն ու դատավճիռների ընդունումը և դատական գործերը հանձնեցին սուննի իրավաբաններին, մասնավորապես նրանց, ովքեր պատկանում էին շաֆհական մազհարին:

Այյուբիական առաջին սուլթանների հաջողությունները նպաստեցին տնտեսական վերելքին: Սալահ ադ-Դինն իր քաղաքականությամբ խրախուսում էր գյուղատնտեսության զարգացմանը: Նա կառուցում էր ամրարտակներ, փորում քրանցքներ և այլն: Զարգացավ առևտուրը: Առևտրական աշխույժ հարաբերություններ հաստատվեցին եվրոպական երկրների, հատկապես Իտալիայի, Ֆրանսիայի և Կատալոնիայի առևտրականների հետ: Սուլթան ալ-Աղջիլի (1199–1218 թթ.) թույլտվությամբ Վենետիկի վաճառականները, որոնք առաջնակարգ դիրքեր ունեին Եգիպտոսի հետ առևտուի մեջ, Ալեքսանդրիայում ստեղծեցին իրենց առանձին առևտրական գտտինները: Ըստ Երևույթին առևտուրն այնպիսի մեծ ծավալների է եղել, որ այնտեղ նրանք անգամ պանդոկներ են ունեցել: Իսկ իտալացինները Պիզայից թերևս առաջինն էին, որ Միջերկրականի ափերին գտնվող և Եգիպտոսի ծովային ու առևտրական դարպանները համարվող Ալեքսանդրիայում բացեցին իրենց հյուպատոսությունը առևտրական գործարքները կանոնակարգելու և պիզացի առևտրականների իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար: Եգիպտական շատ ապրանքներ արտահանվում էին աշխարհի տարրեր երկրներ: Եգիպտոսն իր հերթին ներմուծում էր օտարերկրյա զանազան ապրանքներ և դրանից, մասնավորապես մաքսային տուրքերից ստացված եկամուտներով համալրում սուլթանական գանձարանը: Վուլքանության տարածքում հաստատված ապահովությունը նպաստեց նաև տարանցիկ առևտրին: Եգիպտական վաճառականները հասնում էին մինչև Չնոկաստան և Չեռավոր Արևելքի երկրներ:

Սալահ ադ-Դինը, լինելով իսլամի համոզված հետևորդ և պաշտպան, մեծ ուշադրություն էր դարձնում իր սուլթանության մեջ սունիզմի, նրա գաղափարների և դրույթների տարածմանը: Այդ նպատակով նա և նրա հաջորդները կառուցում էին դպրոցներ, որտեղ հիմնականում դասավանդում էին կրոնին նվիրված առարկաներ: Առաջնական քաղաքակա-

նությունն էր վարում նաև ալ-Աղիլը, որի Դամասկոսում կառուցած դպրոցներից մեկը մինչև օրս կրում է նրա անունը և կոչվում է ալ-Աղիլիա:

Մեծ քափ ստացավ Կահիրենում և անբողջ սուլթանությունում մզկիրների կառուցումը: Կառուցվում էին նաև քաղաքացիական շինություններ, որոնց մեջ հիշատակության է արժանի Կահիրենի միջնաբերդի կառուցումը XII դարի վերջերին:

## 5. Այլուրիների տապալումը

Սալահ ադ-Դինի մահից հետո, ինչպես հաճախ է լինում արևելյան միապետություններում, երբ ուժեղ և հեռատես ղեկավարը մահանում է և նրան համարժեք փոխարինող չի գտնվում, սկսվեց Այյուրիների սուլթանության թուլացումը: Եվ, ինչպես պարզվեց, Եերջնտանեկան կառավարման համակարգն ի վիճակի չեղավ կանխել այդ գործընթացը:

Սալահ ադ-Դինը, ինչպես նշվեց, մնալով Այյուրյան սուլթանության գերազույն սյուլգերենը, սուլթանության տարբեր մասերի կառավարիչներ նշանակեց իր մերձավորագույն հարազատներին: Նրանց միջև, Սալահ ադ-Դինի մահից հետ, ծայր առավ, սկզբում խուլ մրցակցություն, որն այնուհետև վերածվեց բացահայտ պայքարի սուլթանության առաջին դեմքը լինելու համար: Այդ պայքարում հաջողակ գտնվեց նրա եղբայր ալ-Աղիլ I, որը կարողացավ իր գերիշխանությունը հաստատել Եգիպտոսի և Սիրիայի մեջ մասի վրա, իսկ 1200 թ. Միջազների կառավարիչ նշանակել իր որդուն:

Պայքարը իշխանության համար Այյուրիների դինաստիայի անդամների միջև ավելի մեծ քափ առավ ալ-Աղիլի մահից հետո: Արդյունքն եղավ այն, որ Այյուրիները բաժանվեցին մի քանի ճյուղերի: Ալ-Աղիլի անմիջական շառավիղներն իշխում էին Եգիպտոսում, Միջագետքում և Դամասկոսում, իսկ Այյուրիների ընտանիքի մյուս անդամներն իշխում էին Եղենում, Ջուլիսային Սիրիայում՝ Հիմսում, Ջամայում և այլն: Այյուրիների իշխանությունը Ջուլիսային Սիրիայում պահպանվեց մինչև 1260 թ., երբ մոնղոլները Դուլաղու խանի գլխավորությամբ գրավեցին այդ շրջանը:

Անմիաբանությունը և ներդինաստիական պայքարը Այյուրիների սուլթանությունում, նպաստավոր եղավ Խաչակրաների համար, որոնց կարողացան Այյուրիներից հետ նվաճել մի շարք տարածքներ և քաղաքներ, ինչպես Բեյրութը, Աշկելոնը, Սաֆարը, Տիբերիան և այլն: Իսկ

1229 թ. Ֆրանկները կարողացան գրավել նաև Երուսաղեմը: Դետագայում, 1244 թ. Խորեզմշահերի օգնությամբ հնարավոր եղավ Երուսաղեմը հետ նվաճել խաչակիրներից, բայց ընդհանուր առմամբ դա արդեն որևէ նշանակություն չէր կարող ունենալ, քանի որ Այյութիների թուլացման գործընթացը շատ էր խորացել:

XIII դարի 40-ական թվականների վերջերին Այյութիների սուլթանությունն արդեն հոգևարքի մեջ էր: 1249 թ. մահացավ սուլթան Սալիհը և այդ պահից քաղաքական դեպքերը զարգացան շատ արագ և որոշ հմաստով ամսովոր կերպով: Սալիհի մահը նրա այրին՝ Շաջար ադ-Շուլուզ, որը, ինչպես նշում է Ֆ. Դիբերին «Ճագումով թուրք կամ հայ ստրկուհի» էր, երեք ամիս գաղտնի պահեց, սպասելով հանգուցյալ սուլթանի որդու՝ ալ-Մուազզամ Թուրան Շահի վերադարձին Միջազգետքից, որի կարավարիչն էր նա: Այդ ընթացքում նա էր հրամաններ տալիս Սալիհի անունից, կեղծելով նրա ստորագրությունը: Նա այդ քայլին դիմեց, որ պեսզի գործը պահեր հնազանդության մեջ: Ալ-Մուազզամ Թուրան Շահը վերադարձնալով Եգիպտոս, ստանձնեց Այյութիների սուլթանի պարտականությունները: Սակայն նա չկարողացավ ճիշտ հաշվարկել ուժեղի դասավորությունը, որ ստեղծվել էր սուլթանությունում, և հակասությունների մեջ մտավ իր հոր գվարոփայի հետ, որը կազմված էր թուրք, այսպես կոչված բահրի մամլութերից: Նա բախման մեջ մտավ նաև իր, այսպես ասած, խորթ մոր՝ Շաջար ադ-Շուլուզի հետ, անտեսելով վերջինիս քաղաքական հավակնությունները:

Ալ-Մուազզամ Թուրան Շահը, որ չէր կատարում թուրք մամլութերին, նրանց վիրօնեց հետին պլան մղել և բանակի ու պետության բարձր պաշտոններում նշանակեց իր կողմնակիցներին, հեռացնելով մամլութերին և Շաջար ադ-Շուլուզին հավատարին մարդկանց: Եվ սկսվեց բացահայտ պայքար նրանց միջև իշխանության համար: Ալ-Մուազզամը հայտնվեց ծանր դրության մեջ, որն ավելի վատացավ, եթե նրան պաշտպանող մամլութերի մի մասը, բահրիները, իրենց գորահրամանատար Բայրարսի գլխավորությամբ, ապստամբվեցին ալ-Մուազզամի դեմ և անցան Շաջարի կողմը: Սուլթան ալ-Մուազզամ Թուրան Շահը Շաջար ադ-Շուլուզի համաձայնությամբ 1250 թ. տապալվեց և Բայրարսի հրամանով գլխատվեց:

Սակայն դեպքերի հետագա զարգացումն ունեցավ աննախաղեապ վախճան: Սպանված սուլթանի փոխարեն սուլթան հոչակվեց Շաջար

աղ-Ղուրը, կին, նախկին ստրկուհի և հարծ: Նա իրեն հօչակեց «Մուսուլմանների քաջուհի»:

Այսուբերի իշխանությունը տապալվեց և 1250 թ. հաստատվեց մամլուքների դիկտատուրան:

### **III. ԵԳԻՊՏՈՍԸ ԵՎ ՍԻՐԻԱ ՄԱՄԼՈՒՔՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ (1250-1517 թթ.)**

#### **1. Մամլուքները**

Դեռևս Արքայաններն իրենց գահակալության առաջին տարիներին զգալի փոփոխություններ մտցրեցին իրենց ռազմական ուժերում. մասնավորապես իրենց գվարդիայում: Նրանց բանակը, որ մինչ այդ հիմնականում կազմված էր արաբներից, ավելի ճիշտ արաբ ջոշվորների աշխարհազորից, աստիճանաբար իր տեղը գիշեց վարձու բանակին. որն ուներ մի շարք առավելություններ: Նախ, նա ավելի լավ էր կազմակերպված և բեղվին աշխարհազորականներին գերազանցում էր իր մարտունակությամբ, և, երկրորդ, նրանք օտարներ էին, որսից բերվածներ, որոնք արաբական երկրներում չունեին արմատներ և ամբողջապես կախված էին խալիֆաներից: Խակ հետագայում արտակարգ կերպով բարձրացավ գվարդիայի դեր՝ ի հաշիվ բանակի:

Սկզբնական շրջանում գվարդիականները հիմնականում գերի ընկած կամ ստրկավաճառական շուկաներում զնված ստրուկներ էին, մասնավորապես Միջին Ասիայից՝ Մավարաննահրից, Զայկունից, Գիլանից, ինչպես նաև Իրանից: Դետագայում նրանց ծեռքբերման աշխարհագրությունն ընդլայնվեց:

Ահա այս ստրուկ գերիները կոչվում էին մամլուքներ կամ գուլամներ, որն իմաստային առումով հաճախ թարգմանվում է «պատանիներ» և «ծառաներ»: Դետագայում նրանց ծեռք էին բերում գլխավորապես պատանի հասակում թուրքերից, դիշաներից, քրդերից, հույներից, սլավոններից, մասամբ վրացիներից և այլ ազգություններից: Այս պահուկան Արքայաններից անցավ Ֆարինյաններին, Այյուբիններին և մեծ ու փոքր այլ դինաստիաների, որոնցից յուրաքանչյուրն ստեղծում էր մամլուքյան իր գվարդիան, անգամ զորաբանակը: Օրինակ, Ֆարինյաններն իրենց մամլուքներին հավաքագրում էին եվրոպացիներից՝ ի-

տալացիներից, իուներից և սլավոններից, և միայն խալիֆա Ազիզի ժամանակ սկսվեց թուրք մամլուքների զանգվածային հավաքագրումը: Ահա այս պատճառով մամլուքներին համարում են սպիտակ կամ սպիտակամորթ ստրուկներ:

Սովորաբար մամլուքներին հավաքագրում էին երեխա կամ պատանի հասակում՝ նվաճված երկրների բնակչւներից, նրանց գերի վերցնելով, գնելով կամ ստանալով հարկի դիմաց որպես դնշիրմեն: Այդ մանկահասակներին անջատում էին նրանց ծնողներից և հարազատ ազգային միջավայրից ու տանում խալիֆաների, սուլթանների, էմիրների մոտ ծառայության: Նրանց նախ և առաջ թվահատում և հսկամացնում էին, ապա սկսում դաստիարակել խալիֆային կամ սուլթանին անծնական անսահման նվիրվածությամբ ծառայելու ոգով. վարժեցնում ուղագմական գործին և նրանցից պատրաստում հիմնալի, սակայն դաժան ու արյունահում զինվորական: Միայն այդպիսի պատրաստությունից հետո մամլուքին վերցնում էին ծառայության մամլուքյան բանակում, որի մասին նրանց տրվում էր հատուկ վկայական: Նա ստանում էր նաև ծի, ռազմական հանդերձանք և զինվորական ծառայության համար անհրաժշտ այլ պարագաներ: Ահա այսպիսիներից էր կազմվում խալիֆայի և սուլթանի պահակագունող կամ անծնական գվարդիան:

Մի յուրահատուկ կողմի վրա նս հարկ է ուշադրություն դարձնել: Մամլուքները մտնելով խալիֆայի և սուլթանի գվարդիան, ազատություն էին ծեղոք բերում և նրանց առջև գործունեության մեջ հեռանկարներ էին բացվում: Նրանք արդեն որպես նախկին ստրուկներ, կարող էին դառնալ և, իրոք, դառնում էին գորահրամանատարներ, էմիրներ, նահանգների կառավարիչներ, բարձր դիրքեր գրավել արքունիքում և անգամ դառնալ սուլթաններ: Նրանք անուսմանալու իրավունք ունեին և նրանց զավակները համարվում էին ազատ մուտքամաններ: Մամլուքները դառնում էին այն աստիճանի ազդեցիկ, որ շատ հաճախ, ինչպես նշել ենք, խալիֆաները և սուլթանները գործիք կամ խաղալիք էին դառնում նրանց ծեղոքում, նրանք էին տնօրինում այս կամ այն գահակալի ծակատագիրը:

Այս նույն ուղիով ընթացան Այյուբիները: Բայց եթե Սալահ ադ-Դինի և նրան հաջորդած մի շարք սուլթանների ժամանակ մամլուքների տեսակարար կշիռը մեծ չէր, կային մամլուքներից կազմված միայն ոչ մեծ զորագուատներ, ապա սուլթան ալ-Սալիհ Նաջմ ադ-Դինի ժամանակ (1240–1249 թթ.), մամլուքների թիվը կտրուկ աճեց և դրան համա-

պատասխան խիստ մեծացավ նրանց դերը ոչ միայն Այյուբիների սուլ-թանության ուզմական, այլև քաղաքական կյանքում: Դենց նրանք էին, ինչպես ցույց տրվեց, որ տապալեցին և սպանեցին Այյուբիների սուլ-թան ալ-Մուսազզան Թուրան Շահին և գրավեցին իշխանությունը Եգիպտոսում:

Այսպիսին է ընդիանուր գծերով մամլուքների ինստիտուտի Էռեյունը:

## 2. Մամլուքյան Բահրիների կառավարումը (1250–1382 թթ.)

Հաջար աղ-Դուրրի մուսուլմանների թագուհի հօչակվելուց հետո, ինչպես նշվեց, տապալվեց Այյուբիների տիրապետությունը և արաբների, հավասարապես նաև մուսուլմանների պատմության մեջ սկսվեց մի նոր շրջան, մամլուքների տիրապետության շրջանը:

Սակայն մամլուքներն իրենց էթնիկական ծագումով միատարր չեն և կազմված էին տարբեր խմբավորումներից: Այյուբիներին տապալեց և Հաջար աղ-Դուրրին թիկունք կանգնեց մամլուքների այն խմբավորումը, որը հայտնի էր «Բահրի մամլուքներ» հորդորջումով: Անվան ծագումը գալիս է այն հանգամանքից, որ նրանց կենտրոնատեղին կան նստոցը Նեղոս գետի՝ արաբերեն Բահր ալ-Նիլի, կղզիներից մեկն էր: Իսկ էթնիկական առումով, Բահրի մամլուքները թուրքեր և մոնղոլներ էին: Նրանց ամենաականավոր զորահրամանատարներից մեկը մեր կողմից արդեն հիշատակաված Բայրասն էր, որն իրականացրեց Այյուբիների դինաստիայի տապալումը և մամլուքների տիրապետության հաստատումը Եգիպտոսում և Սիրիայում:

Հաջար աղ-Դուրրի թագուհի հօչակվելը դժգոհությամբ ընդունվեց արաբների և ընդիանուրապես մուսուլմանների ղեկավարների կողմից:

Իր դժգոհությունը հայտնեց Աբբասյան խալիֆա ալ-Մուսթափիմը, որը Ֆարիյանների անկումից հետո բավականին ակտիվացել էր: Նա դեմ էր, որ պետության ղեկավարը կին լինի, և այն էլ իր հարեմի հարճությունը մեկը, որին նա որպես հարճ ժամանակին նվիրել էր սուլթան աս-Սալիհին: Ուստի նա պահանջեց մամլուքներից հեռացնել նրան և պետության նոր ղեկավար ընտրել տղամարդու:

Այյուբիների տապալումը Կահիրենում և Հաջար աղ-Դուրրի թագուհի դառնալը խիստ անհանգատացրեց Այյուբիների սիրիական ճյուղին, առաջին հերթին Դամասկոսի Այյուբիներին: Նրանց հիմնական կորիզը կազմող քրոական կայսրարիյա ցեղը, զայրացած թահրիական

մամլուքների գործողություններից Եզիպտոսում, գրկեց Սիրիայում գտնվող բահրիհական մամլուքներին Դամասկոսի նահանգում ունեցած իշխանությունից, և Դամասկոսում ու նրա նահանգում իշխանությունը հանձնեց Հալեբի Այյուբիական կառավարիչ Նասիր Յուսուֆին: Սիրիական Այյուբիների դիրքորոշումը և գործողությունները լրիվ աջակցություն գտան Արքայայն խալիֆա ալ-Մուսաթիմի կողմից:

Ստեղծված յուրահատուկ իրադրությունն առաջացրեց քաղաքական ճգնաժամ և բահրիներ որոշեցին երկրի ղեկավարի հարցում գնալ գիշման, իշխանությունից գրկել Շաջարին որպես կին, և պետության ղեկավար ընտրել տղամարդու:

Շաջարը միանձնյա կառավարեց մոտ երեք ամիս, որի ընթացքում նա սկսեց անգամ իր անունով և պատկերով դրամ հատել: Նա հարկադրված իրաժարվեց գահից և մամլուքները՝ 1250 թ. Եզիպտոսի նոր սուլթան ընտրեցին իրենց հայտնի գորավարներից մեկին՝ Իզզ աղ-Դին Այրակին: Այրակը հանդիսացավ Բահրիների դինաստիայի հիմնադիրը: Սակայն Շաջարն իրեն չկորցրեց և ամուսնացավ Այրակի հետ և սկսեց նրանց այսպես կոչված համատեղ կառավարումը:

Բայց ոչ բոլոր մամլուք ղեկավարներն ընդունեցին ճգնաժամից դուրս գալու այս տարբերակը: Մամլուքների մի խումբ, որի մեջ մտնում էին այնպիսի ազդեցիկ գորահրամանատարներ, ինչպես Բայբրասը, Ակտայը և ուրիշներ, պնդում էին անգամ սուլթանությունը հանձնել Այյուբիներին: Այրակը հարկադրված գիշեց և 1250 թ. սուլթանական գահին նստեցրեց Այյուբի սուլթան Քանջլ Մուհամմադի ծոռին, տասնամյա ալ-Աշրաֆ Մուսային: Բայց դա ծեսական էր և ժամանակավոր բնույթ էր կրում: Այրակը կարողացավ դառնալ անշափահաս սուլթանի աթաբեկը՝ դաստիարակը և խնամակալը, և իր ծեռօքում պահել գլխավոր հրամանատարի շատ կարևոր պաշտոնը: Նա շարունակում էր մնալ Եզիպտոսի իրական կառավարողը:

1252 թ. նա գահընկեց արեց Ալ-Աշրաֆ Մուսային և նրան արտաքսեց Եզիպտոսից: Այդ պահից Այրակը Եզիպտոսը կառավարում էր արդեն որպես միանձնյա սուլթան: Սակայն նա դա երկար չվայելեց:

Հարունակում էին նրա հարաբերությունները լարված մնալ Բահրի մամլուքների մի շարք առաջնորդների հետ: Դիմակայությունը սիրիական Այյուբիների հետ չհարրպվեց, անգամ Արքայայն խալիֆայի միջանտությունից հետո: Մրգեցին նրա հարաբերություններն իր կողը, Շաջարի հետ, մանականդ այն բանից հետո, երբ Վերջինիս հայտնի դար-

ծավ, որ Այբակն ուզում է ամուսնանալ ուրիշ կնոջ հետ: Շաջարը, հավատարին իր բնավորությանը, անցավ վճռական գործողությունների: Նրա ստրկուիիները 1257 թ., Կահիրեի միջնաբերդում, բաղնիքում, իրենց փայտե Կոչիկներով սպանեցին Այբակին և դիակը վայր նետեցին միջնաբերդի աշտարակից:

Բահրի մամլուքների ամենաականավոր սուլթանը Եղավ Բայբարսը (1260–1277 թթ.): Ունանց նույնիսկ նրան են համարում Բահրիների դինաստիայի խևական հիմնադիրը:

Բահրի մամլուքները կարողացան մոտ 140 տարի իրենց ծեռօքում պահել ոչ միայն Եգիպտոսը, այլև փոքր ընդմիջումներով իրենց իշխանությունը տարածել նաև Սիրիայի, Պաղեստինի և Հիջազի ու հարակից այլ տարածքների վրա:

Նրանց մեծ ծառայություններից մեկը կայանում է նրանում, որ նրանք հետևողականորեն կարողացան խաչակիրներից հետ նվաճել Վիաստորեն բոլոր այն տարածքները, քաղաքները և բնակավայրերը, որ գտնվում էին նրանց տիրապետության տակ: Այդ գործում հատկապես հաջողակ Եղավ սուլթան Բայբարսը, որի քաղաքական և անձնական երազանքն էր լինել երկրորդ Սալահ ադ-Դինը և պատմության մեջ մտնել որպես մուսուլմանական տարածքները քրիստոնյա խաչակիրներից ազատագրող:

Բահրի մամլուքների մյուս ծառայությունը կայանում է նրանում, որ նրանք կարողացան հակահարված տալ մոնղոլներին և կանխել Եգիպտոսի նվաճումը նրանց կողմից: Այդ առումով սկզբունքային նշանակություն ունեցավ 1260 թ. Այն Զալուտի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, որն ավարտվեց մոնղոլների պարտությամբ: Այդ հաղթանակի շնորհիվ մամլուքների տիրապետությունը տարածվեց Սիրիայի վրա:

Այս ճակատամարտում աչքի ընկավ Բայբարսը, որը շատ չանցած դարձավ սուլթան, դավադրաբար իր սրով կտրելով իր նախորդի, սուլթան Կուտուզի գլուխը:

Բահրի մամլուքներն իրենց հեղինակությունը բարձրացնելու և դիրքերը մուսուլմանական աշխարհում ամրապնդելու համար, պատսպարեցին Բաղդադը գրաված և Շուլաղու խանի սրից պատահականորեն ճողովրած Արբասյան ընտանիքի անդամներից մեկին: Բայբարսը նրան, որը Վերջին Արբասյան խալիֆայի հորեղբայրն էր, Սիրիայից հրավիրեց Կահիրե և 1261 թ. հունիսին մեծ հանդիսությամբ օժեց որպես խալիֆա ալ-Մուստանշիր: Այս խալիֆան, ինչպես և նրա բոլոր հաջորդ-

ները իհարկե, գուրկ էին որևէ իշխանությունից և ամբողջովին կախված էին մամլուք սուլթաններից: Նրանց նույնիսկ անվանում էին «բոշակառու խալիֆաներ»:

Բայց հաշվենկատ Բայրարսը մեծապես օգտվում էր խալիֆայի ծառայություններից որն իր հատուկ հրովարտակով Բայրարսին հաստատեց Եգիպտոսի, Սիրիայի, Դիյար Բաքրի, Դիջազի, Եմենի և Մերձեփրատյան տարածքների սուլթան: Դեռ ավելին, խալիֆայի հրովարտակում նշված էր, որ Բայրարսը «կլինի բոլոր այն տարածքների սուլթանը, որոնք նա ապագայում կգրավի»:

Խալիֆաները որպես մուսուլմանական աշխարհի հոգևոր առաջնորդներ, որոնք այդ ժամանակ միայն մի իրավունք ունեին՝ այս կամ այն սուլթանին հրովարտակներ շնորհել և հաստատել սուլթանական պաշտոններում, Կահիրենում մնացին մինչև XVI դարի սկիզբները, մինչև թուրք օսմանների կողմից Եգիպտոսի և արաբական մյուս երկրների գրավումը:

Մամլուքների տիրապետությունը հարատևեց 267 տարի: Այդ ժամանակաշրջանում կառավարել են Երկու մամլուքյան դինաստիաներ: Առաջինը Բահրիների դինաստիան էր, որը, ինչպես նշել ենք, կազմված էր թուրքերից և մոնղոլներից, և կառավարեց 1250–1390 թթ., ունենալով 24 մամլուք սուլթան: Վերջին Բահրի սուլթանը եղավ Իբր Շաարանը, որին 1390 թ. Վերջնականապես տապալեց Բուրջի չերքեզական մամլուք զորահրամանատար Բարքութը, որը և դարձավ Երկրորդ մամլուքյան դինաստիայի՝ Բուրջիների դինաստիայի հիմնադիրը:

### 3. Բահրի մամլուքները և Կիլիկյան Հայաստանը

Կիլիկիայում հայկական պետությունը կազմավորվել է 1080 թ., Ուլուեն իշխանի կողմից, որը Բագրատունի Վերջին թագավոր Գագիկ II մերձավորներից էր: Սկզբում դա իշխանապետություն էր, իսկ 1198 թ. նա Վերջնական թագավորության, որի առաջին թագակիրը եղավ Լևոն I Ուլքինյանը:

Կիլիկիայի հայկական պետությունը գոյություն է ունեցել նրա համար շատ քարոշ միջազգային իրադրության պայմաններում: Նա շրջապատված էր տարրեր պետություններով, որոնցից յուրաքանչյուրը գտում էր տիրանալ Կիլիկիային: Դրանց մեջ էին Բյուզանդական կայսրությունը, Ուլմի կամ Խկոնիայի Սելջուկյան սուլթանությունը, Զառմի պա-

աը, որը գործում էր կաթոլիկ եկեղեցուն նիանալու կողմնակիցների՝ ունիթորակաների միջոցով, ապա նաև մննողները և եզիստուական մամլութները: Չայ թագավորները ստիպված էին մեծ խիզախություն և դիվանագիտական քարձր հմտություն ցուցաբերել հայկական պետական նավի համար անվտանգ նավարկություն ապահովելու համար: Եվ, ի պատիվ նրանց, պետք է նշել, որ նրանց երկար ժամանակ հիմնականում հաջողվում էր լուծել այդ խնդիրը, որի փայլուն ապացույցն է Կիլիկիայում հայկական պետության մոտ երեքարյա գոյությունը:

Կիլիկիայի հայկական պետությանը մեծ վտանգ էին ներկայացնում Բահրի մամլութները, մանավանդ այն բանից հետո, երբ նրանց սուլթաններն իրենց գլխավոր խնդիրներից մեկը հանարեցին խաչակիրներին վերջնակնապես դուրս մղել և ազատագրել նրանց տիրապետության տակ գտնվող մուսուլմանական տարածքները:

Նրանց կողմից այդ հիմնախնդիրը հաջողությամբ լուծելուց հետո, երբ նրանք գրավեցին Եղեսիայի և Տրիալիի կոմսությունները, Անտիոքի իշխանապետությունը, Երուսաղեմի թագավորությունը, միջերկրածովյան առափնյա բոլոր մեծ ու փոքր քաղաքները, ամրոցները և բնակավայրերը, ինչպես Քեյրութը, Սայդան, Տյուրոսը, Ակրը և այլն, նրանց անմիջական հարևանությամբ մնաց մեկ քրիստոնեական պետություն՝ Կիլիկիայի հայկական թագավորությունը: Խնդիրը բարդանում էր նաև նրանով, որ մամլութների աչքում հայկական պետությունը ներկայանում էր որպես մի պետություն, որը ժամանակին օժանդակել էր խաչակիրներին մուսուլմանների դեմ ուղղված արշավանքների ժամանակ: Դարձ է նկատի առնել մի կարևոր հանգամանք ևս:

Սերծավոր ու Սիրին Արևելյում մոնղոլների հայտնվելուց հետո, Կիլիկիայի հայ թագավորներին հաջողվել էր կարգավորել իրենց հարաբերությունները նրանց հետ և կանխել ահարկու մոնղոլների ներխուժումը Կիլիկիա: Այդ հարկադրյալ դաշնակցության պայմաններում, հայ զորաբանակը 1299–1303 թթ. մասնակցել էր մամլութների դեմ ուղղված մոնղոլների արշավանքներին:

Սիհա այս պատճառներն էին ընկած հայ–մամլության հարաբերությունների լարվածության հիմքում և եզիստուական մամլութներին երբեմն հաջողվում էր ներխուժել Կիլիկիա և ավերածություններ գործել:

Սակայն հայ գահակալները գիտակցում էին Եզիստոսի հետ հարաբերությունները կարգավորելու և խաղաղ գոյակցելու անհրաժեշտությունը և այդ ուղղությամբ ծեռնարկում համապատասխան քայլեր:

Դրանում շահագրգոված էին նաև Եգիպտոսի մամլուքները, որովհետև նրանց վիճակը նույնպես ծանր էր և նրանք շատ հաճախ էին հայտնվում անելանելի դրության մեջ: Դետևաբար, պատմական որոշակի ժամանակահատվածներում նրանց շահերը խաղաղության հարցում համընկնում էին և նրանք գնում էին մեկը մյուսին ընդառաջ:

Այդ տեսակետից բարձր գնահատականի են արժանի Եգիպտոսի Բահրիական իններորդ սուլթան ալ-Խասիրի (1298–1308, 1309–1340 թթ.) և հայոց գահի խնամակալ, իշխան Օշին Պայլի գործադրած ջանքերը, որի արդյունքում Եգիպտոսի և Կիլիկիայի հայոց թագավորության միջև 1323 թ. կնքվեց պայմանագիր հաշտության և համագործակցության վերաբերյալ: Այդ պայմանագրով երկու պետությունների միջև հաստատվում էր խաղաղություն: Հայոց պետությունը պարտավորվում էր Եգիպտոսին տարեկան վճարել 120 հազար դիրիհամ հարկ: Եգիպտական սուլթանը պարտավորվում էր վերականգնել մամլուք գործերի կողմից ավերված բոլոր հայկական քաղաքներն ու ամրոցները: Պայմանագիրը պարունակում էր մի կարևոր կետ ևս, որը վերաբերում էր հարաբերություններին եվրոպական երկրների հետ: Նրանում արձանագրված էր, որ եվրոպական պետությունների հետ Կիլիկյան Հայաստանի ամեն մի քանակցություն կրիտվի որպես Եգիպտա-հայկական պայմանագրի խախտում և Եգիպտոսի դեմ ուղղված թշնամական գործողություն:

Հայ-Եգիպտական պայմանագիրը որոշ ժամանակ խաղաղություն բերեց Կիլիկիային և նպաստեց նրա անվտանգության ապահովմանը: Նա միաժամանակ անհանգուացրեց Հռոմի պապին և նրա կողմնակիցներին Հայաստանի ներսում, որոնց շահերին հակասում էր հայ-Եգիպտական հարաբերությունների նորմալացումը: Հռոմի պապը ծրագրում էր նոր խաչակրաց արշավանքի կազմակերպում, նրանում ներգրավելով նաև հայերին: Սակայն Կիլիկյան Հայաստանի բնակչության մեծ մասը դեմ էր նաև ակցելու խաչակրաց պատերազմներին և ցանկանում էր հաշտ ապրել իր նույնուվանական հարևանների հետ: Հռոմի պապը և նրա համակիրները կազմակերպեցին դավադրություն Օշին Պայլի և Եգիպտոսի հետ համագործակցության կողմնակիցների դեմ: Դավադրությունը ժամանակին բացահայտվեց և նրա կատարողները մահապատճի ենթարկվեցին: Բայց հետազոտում այդ ուժերին հաջողվեց ի վերջո սպանել Օշին Պայլին: Նույն ճակատագրին արժանացավ նաև հայոց թագավոր Լևոն IV այն բանից հետո, երբ նա հրաժարվելով եվրոպական կողմնորոշումից, սկսեց վարել Եգիպտոսի հետ մեր-

ծեցման քաղաքականություն և Եգիպտոսի հետ կնքեց գաղտնի պայմանագիր:

Դարաբերությունները Եգիպտոսի և Կիլիկյան Հայաստանի միջն կրկին սրվեցին: Մամլուքները ներխուժեցին Կիլիկիա, գրավեցին Դաշտավայրային Կիլիկիան, որը Կիլիկյան Հայաստանի կարևոր տնտեսական և մշակութային կենտրոնն էր, այնուհետև, 1375 թ., համառ դիմադրությունից հետո գրավեցին նայրաքաղաք Սիսը:

Այդ թվականը հանդիսանում է Կիլիկիայի Հայկական թագավորության անկնան տարեթիվը:

#### 4. Բուրջիների մամլուքյան դիմաատիան և մամլուքների տիրապետության վերջը

Բարիներին փոխարինելու եկած Բուրջի մամլուքները, կենտրոնացված էին Կահիրեի ամրոցում՝ Բուրջում: Այստեղից է նրանց անվանումը: Այս դիմաատիան մինչև 1517 թ., մինչև իր անկումը, ունեցավ 23 սուլթան, որոնք շատ վատ հիշողություն են թողել պատմության մեջ իրենց դաժանությամբ և քստմնելի արարքներով: Դաշված է, որ այդ 23 սուլթաններից մի քանիսն աչքի են ընկել իրենց նենգությամբ և ուխտադրությամբ, ոմանք տառապել են մտավոր թերզարգացությամբ, իսկ ոմանք՝ լուրջ հոգեկան արատներով, շատ քշերն են գրել և կարդալ իմացել: Մեծ մասն անգամ Կորանի որևէ սուրահ չի կարողացել անսխալ արտասանել, իսկ համարյա բոլորը, սակավ բացառությամբ, եղել են անկիրը և անկուլտուրական մարդիկ:

Անկայուն էր Բուրջիների կառավարման համակարգը: Սուլթանները գահի վրա արագործն փոխարինում էին մեկը մյուսին: Ամենաերկար՝ վեց տարի, կառավարել է Թախտրայը, մնացածները մեկ, երկու կամ երեք՝չորս տարուց ոչ ավել, իսկ 1412 թ. գահի վրա միմյանց փոխարինել են երեք սուլթան: Գահընկեց անելու և գահին նստելու հիմնական միջոցը եղել է դավադրությունը և սպանությունը:

Սուլթանները կարծես թե միմյանց հետ նրգում էին դաժանության և աննարդկային լինելու մեջ: Սուլթան Բարսբայ (1422–1438 թթ.) իր երկու անձնական թժշկներին գլխատեց, մեղադրելով նրանց, որ նրանք չեն կարողանում նրա ցավերը թեթևացնել: Իսկ սուլթան Թախտրայը իր ալքիմիկոս Խըն ալ-Մարշուշին կուրացրեց և լեզուն կտրեց այն բանի համար, որ նա խարամը չէր կարողանում ուսկու վերածել:

Երևի ոչ մի անգամ այնպես չէր ծաղկել կաշառակերությունը, ինչպես Բուրջի մամլուքների ժամանակ: Դուամաշորթությունը, կաշառակերությունը և զանձագողությունը համակել եր ոչ միայն սուլթաններին, այլև ամբողջ նամլուցյան վերնախավին, որոնք այդ նպատակներով միավորվել էին առանձին, միմյանց հակառակ խմբավորումների մեջ:

Ավելի արատավոր և ահավոր էր Բուրջիների տնտեսական քաղաքականությունը, որը ժողովրդին հասցրել էր հուսահատության: Սուլթան Բարսրայն արգելեց համեմունքների ներմուծումը Դնդկաստանից, որի հետևանքով բարձրացավ Եգիպտոսում արտադրվող և նրա մենաշնորհի տակ գտնվող մթերքների գինը: Նրա մենաշնորհն էր նաև շաքարի արտադրությունը: Կուտակված շաքարի գինը բարձրացնելու և շաքարից ստացվող իր շահույթները մեծացնելու համար, նա երկար ժամանակով արգելեց շաքարեղեզնի նշակումը Եգիպտոսում: Այդ բոլորից մեծապես տուժում էր ժողովուրդը: Սուլթանները շատ հաճախ պակասեցնուն էին դրամների արժեքի պարունակությունը, սակայն վաճառքը և փոխանակումը կատարում էին բարձր գներով:

Դրամ ծեռք բերելու նույնըցըով տարված, Բուրջի սուլթանները և նրանց մերձավորները խլում էին հարստացած մարդկանց ունեցվածքը:

Տնտեսական ծանր Վիճակում հայտնված բեղվիմները հարձակվում էին հողագործ ֆելլահների վրա, խլում նրանցից գյուղատնտեսական մթերքները և ամայացնում նրանց հողերը: Սովորական երևույթ էր դարձել հարկերի բարձրացումը սննդամթերքների, մասնավորապես եգիպտացորնի վրա, որը նահացու հարված էր թշվառության եզրին հասած հասարակ ժողովողի համար: Սովոր, հատկապես սուլթան Ֆարաջի և սուլթան Շայխի ժամանակ, դարձել էր սովորական երևույթ:

Նման աղետալի տնտեսական քաղաքականության և անհրաժեշտ բժշկական ծառայության բացակայության հետևանքով, տնտեսագետների և դեմոգրաֆների հաշվարկներով, նամլուքների տիրապետության ժամանակաշրջանում Եգիպտոսի և Միջիայի թնակչությունը կրճատվել էր երկու երրորդով:

Բուրջիները որևէ նշանակալի հաջողություն չունեցան նաև արտաքին հարաբերություններում: Նրանք չկարողացան շատ թե քիչ դիմակայել Լենկ Թեմուրին, որի հորդամերը 1380 թ. գրավեցին Բաղդադը, ապա Միջազգետքը: Թիվրիթում Լենկ Թեմուրը մարդկանց զանգերից կառուցեց բուրգ, այդպես վարվեց նաև Դամասկոսում: Միայն նրա մա-

ից 1404 թ. կանխեց նրա հորդաների ներխուժումը Եգիպտոս, որն, անկասկած, արժանանալու էր նույն ճակատագրին:

Շուտով ասպարեզում հայտնվեցին օսմանյան թուրքերը, որոնք իրենց նվաճողական քաղաքականությամբ, XVI դարի սկզբներին ընդհուած մոտեցան արարական Երկրներին: 1516 թ. հոկտեմբերի 24-ին Յալեքից հյուսիս, Մարզ Դաբիթի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ սուլթան Քանսոյի մամլուքների և օսմանյան բանակի միջև, որը զիսավորում էր սուլթան Սալիմը: ճակատամարտն ավարտվեց մամլուքների քանակի պարտությամբ, որի ժամանակ զոհվեց նաև սուլթան Քանսոն: Սուլթան Սալիմը գրավելով Սիրիան, 1517 թ. ներխուժեց Եգիպտոս: Նրա դեմ դուրս եկավ մամլուքյան քանակը, սուլթան Թուման-բեյի գլխավորությամբ: Նա սուլթան էր դարձել Քանսոյի մահից հետո: 1517 թ. հունվարի 22-ին, Կահիրեხից ոչ հեռու տեղի ունեցած վճռական մարտուն դարձյալ հաղթեցին օսմանցիները:

Դա մամլուքների սուլթանության կործանումն էր: Դրանով փակվեց արարական Երկրների պատմության մի կարևոր էջը և սկսվեց նոր ժամանակաշրջան, Օսմանյան տիրապետության շրջանը, որը տևեց 400 տարի:

Այդ հարցերի լուսաբանությանը կանոքադառնանք սույն աշխատության Երկրորդ հատորում:

## Գլուխ դրասներներորդ

### **ԱՐԱԲԱ-ՄՈՒՍՈՒԼԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ**

#### **I. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

##### **1. Արաբա-մուսուլմանական մշակույթ հասկացողությունը**

Հետօնայան դարաշրջանում նոր փուլ սկսվեց մշակույթի, արքեստների և գիտության զարգացման բնագավառում, որն ընդունված է անվանել արաբա-մուսուլմանական մշակույթ:

Եթե մինչ այդ խոսքը գնում էր արաբական մշակույթի ծնավորման և զարգացման մասին, ապա սկսած Արբասյան խալիֆայությունից, նրա հետ զուգահեռաբար գոյություն ունեցած կամ նրան հաջորդած խալիֆայություններից, սուլթանություններից, եմիրություններից և այլ իշխանական պետություններից, ի հայտ է գալիս մշակութային մի նոր երևույթ, որն ստացել է «Արաբա-մուսուլմանական մշակույթ» անվանումը: Դա ծնական անվանափոխություն չէր, այլ խորքային, իր նախադեպը և զուգահեռները չունեցող վերին աստիճանի հետաքրքիր երևույթ:

Մուհամմադ մարգարեի, առաջին չորս ուղղադավան խալիֆաների, ինչպես նաև Օմայյան խալիֆայության շրջանում, երբ նոր էր ծնավորվում իսլամը, երբ նա նոր էր ամրապնդում իր ողբերդը արաբական աշխարհում, ոչ միայն քաղաքականության, այլև մշակույթի բնագավառում հիմնական գործող անձն ինքը արաբն էր: Մարգարեի կողմից հիմնադրված իսլամական ուսման ըստ եռթյան արաբական ուսման էր, քանի որ նա երնիկական առումով հիմնականում կազմված էր արաբներից: Դուսորդ կյանքի, մշակույթի գաղափարական և հայեցակարգային ըմբռնումների և պատկերացումների հիմքում ընկած էին արաբների ստեղծած կորանը, նրա հիմնադրույթները և դրանմաները: Եվ դա ոչ միայն

աստվածաբանության և փիլիսոփայության, այլև պատմագրության, էթիկայի, ասքի, պոեզիայի և այլ բնագավառներում:

Արաբները մարդկությանը պարզեցին իրենց սեփական գիրը՝ արաբերները, որի հիման վրա զարգանում էին կրթությունը, գիտությունը և ընդհանրապես մշակույթը իր բոլոր բաղադրամասերով:

Այսպիսով, թե՛ կատարողների, թե՛ բովանդակության և թե՛ ձևի առումով, Սուհամանա նարգարեի, առաջին չորս ուղղադավան խալիֆաների, ինչպես նաև Օմայյան խալիֆայության շրջանում ստեղծված մշակույթը և մշակութային համակարգը, ըստ եւթյան, արաբական մշակույթը:

Այս գնահատականը վերաբերում է նաև պետական և քաղաքական իրողություններին, և այդ պատճառով այդ դարաշրջանում գոյություն ունեցած պետությունն իրավացիորեն կոչվել է «Արաբական խալիֆայություն», իսկ մշակույթը «Արաբական մշակույթ»:

Իրաղրությունը փոխվում է Օմայյան խալիֆայության կործանումից (750 թ.) հետո: Արաբական խալիֆայությունը վերածվում է Արաբա-իսլամական կամ ուղղակի Խսլամական խալիֆայության: Նիշտ է, նա շարունակում էր կրել արաբական անուններ՝ Աքբասյան, Ֆարիյյան և այլն, բայց դա ավելի շատ տուրք էր ավանդույթին, որով ընգծվում էր նրա գենետիկական կապը արաբական արմատների հետ:

Արաբական նվաճումները, հսլամի տարածումը և ոչ եթենիկ բազում ժողովուրդների հսլամադավան դառնալը, որակական փոփոխություններ առաջացրին խալիֆայության քաղաքական, եթենիկական և մշակութային համակարգում:

Առաջինը փոփոխության ենթարկվեց մուսուլմանական ումնան եթենիկական կազմի տեսակետից: Խսլամի ընդունումն իրանական ժողովուրդների, թուրքերի, թերթերների, քրդերի, չերեզմերի, ապա նաև դիշաղների, մոնղոլների, Միջին Ասիայի, Փոքր Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի, Կովկասի, Մերձվոլգյան տափաստանների, Չարակ-Արևելյան Ասիայի, անգամ եվրոպական զանազան ժողովուրդների կողմից, հիմնականորեն փոխեց խսլամական ումնայի եթենիկական պատկանելությունը: Նա դադարեց մաքուր արաբական լինելուց և վերածվեց խսլամական ումնայի, որտեղ արաբներն այլևս մենաշնորհ դիրքեր չունեին, թվական առումով մեծամասնություն չեին կազմում և դադարեցին գլխավոր դերակատարները լինելուց: Արաբներն իրենց դիրքերը գիրեցին նույնական այլ ժողովուրդների: Չափազանց մեծացավ իրանական ժողովուրդների, առաջին հերթին պարսիկների, որոնց բոլոր բնագավառնե-

րում, այդ թվում նաև մշակույթի ոլորտում, իսկ հետագայում նաև թուրքական և այլ ժողովուրդների դերը:

Նոր, ոչ արաք ժողովուրդներն իրենց ուսերի վրա վերցրեցին մշակույթի և գիտության գարզացման ամբողջ բեռը: Նրանք արաքների հետ միասին մեծ ներդրում ունեն պատճական նոր պայմաններում մշակութային նոր համակարգի ստեղծման մեջ, որն արդեն ոչ թե զուտ արաքական, այլ համախմանական էր: Այդ ժողովուրդներից յուրաքանչյուրն իր հետ բերեց և մշակույթի ընդհանուր գանձարանը ներմուծեց իր ազգային ավանդությունները, պատկերացումները և նախասիրությունները:

Իր մեծ դերը խաղաց նաև «հյալամական ազգի» հայեցակարգը, որի համաձայն իսլամը չի ընդունում առանձին ազգությունների գոյությունը և արիեստական պատճենները չի ստեղծում նրանց միջև: Նա գտնում է, որ բոլոր ժողովուրդները, որոնք իսլամադավան են, կազմում են մեկ ազգ՝ իսլամական ումնա կամ իսլամական ազգ: Նրանց կողմից ստեղծված արժեքները համարվում են համախմանական և բոլոր մուսուլմանների սեփականությունը: Ուստի այն, ինչ ստեղծել և ստեղծում են արաքները, պարսիկները, աֆղանները, տաջիկները, և մուսուլման այլ ժողովուրդներ, մտնում է «մուսուլմանական մշակույթ» հասկացողության մեջ:

Այսպես է ծնավորվել «Արաքա-մուսուլմանական մշակույթ» քանաձնի «մուսուլմանական» քաղաքութարրը:

Իսկ ինչ վերաբերում է քանաձնի «արաքական» մասին, ապա նա պահպանվեց նաև հետօնայան դարաշրջանում: Նրա գոյությունն արդարացված էր ոչ միայն այն պատճառով, որ արաքները շարունակում էին մնալ այդ մշակույթի ակտիվ ստեղծողներից մեկը: Գլխավոր պատճառներից մեկն էլ այն էր, որ իսլամական մշակույթի և գիտության գրավոր արտահայտության միակ միջոցը շարունակում էր մնալ արաքերեն լեզուն: Արաքերեն լեզվով էին գրվում և տարածվում մուսուլմանական բոլոր գիտնականների՝ պատմաքանակների, աստվածաբանների, փիլիսոփանների, թժիշկների, մաթեմատիկոսների, աստղագետների, իրավաբանների տրակտատները, քանաստեղծների ստեղծագործությունները և այլն: Նրանք մեզ են հասել արաքերեն լեզվով, որն անգնահատելի հարստություն է: Իսլամական միջնադարյան գիտության կարկառուն դեմքերից մեկը, ծագումով պարսիկ ալ-Քիրունին (973–1048 թթ.), որը բնակվում էր Աֆղանստանի Ղազնահ քաղաքում, նշել է, որ արաքերեն լեզուն հանդիսանում է գիտական նպատակների համար միակ պիտա-

Այլ լեզուն: Նա հիմք և իրավունք ուներ նման կատեգորիկ հայտարարության համար, քանի որ նա ոչ միայն արաբերեն լեզվով գրված բազմաթիվ գիտական տրակտատների հեղինակ էր, այլև իսկական պոլիգլոտ, ազտորեն տիրապետում էր արաբերենին, պարսկերենին, թուրքերենին, երաբերենին, սանսկրիտին և ասորերենին:

Անբողջ խալիֆայության սահմաններուն արաբերեն լեզվով էր կատարվում պաշտօնական գրագրությունը և նամակագրությունը:

Արաբերեն լեզվով էին գնում նաև գիտնականների բանավոր վեճերը, գիտական քննարկումները և պրետների ու աշուղների մոցությունը: Մի խոսքով, արաբերենի միջոցով էին էթնիկական տարրեր ծագում ունեցող գիտնականները միմյանց հետ հաղորդակցվում և կապ պահպանում:

Միջնադարում ընդունված էր, որ մարդ չէր կարող գարգացած համարվել, եթե նա չէր տիրապետում արաբերենին, չէր օգտվում արաբերեն գրավոր և բանավոր խոսքից: Պատահականություն չէր, որ բոլոր մադրասաններում ուսուցում տարվում էր արաբերեն լեզվով:

Ուստի սխալված չենք լինի, եթե ասենք. հանիր ասպարեզից արաբերենը և դու չսե ունենա համախւանական մշակույթ:

«Արարա-մուսուլմանական» բանաձևի «արաբերեն» մյուս, կարելի է ասել առանցքային բաղադրատարրը, խարսխված էր Կորանի և նրանից բխող հիմնադրույթների վրա: Եթշտ է, հետօմայյան շրջանուն մեծ զարգացում ապրեց աստվածաբանությունը, Կորանի դրույթների մեկնությունը, գոյացան զանազան աստվածաբանական դպրոցներ, գրվեցին բազում տրակտատներ և այլն, բայց, այդուհանիերձ, նրանց համար ելակետայինը մնում էր Կորանը, նրանք ներծծված էին կորանական հիմնարար սկզբունքներով: Ցուրաքանչյուր շեղում նրանցից, այդ թվում և մշակույթի բնագավառում, համարվում էր նահանջ իսլամից, անգամ հերենտիկոսություն, և անվերապահորեն մերժվում:

Ահա այս երկու տարրերի՝ արաբերենի և իսլամի մինթեզը տվել է այն, ինչ գոյություն ունի, և որը միանգամայն օրինաչափորեն կոչվում է «Արարա-մուսուլմանական» մշակույթ:

## **2. Սուսուլմանական վերածնունդ (ռենեսանս), թե՝ մշակույթի ժաղկում**

IX և հատկապես X դարից սկսվում է արաբա-իսլամական մշակույթի բուռն զարգացումը, որի շուրջը մինչև օրս լուրջ գիտական վեճեր

Են գնում արևելագիտության մեջ: Վիճաբանության հիմնական առարկա է հանդիսանում այն հարցը, թե ինչպես բնութագրել այդ վերելքը, արդյոք դա ռենեսա՞ն էր, թե՝ պարզապես զարգացման մի նոր, մինչ այդ չտեսնված որակ և նակարդակ:

Վիճաբանությունը հարուցել և խթանել է շվեյցարական արևելագետ Աղամ Մեցի (1869–1917 թթ.) «Մուսուլմանական ռենեսանս» վերին աստիճանի արժեքավոր և ինքնատիպ աշխատությունը, որը լույս է տեսել նրա մահից հետո, 1922 թ. Յայդելքերգում, գերմաներեն լեզվով: Նա անմիջապես իր վրա սնենեց ժամանակի ականավոր արևելագետների ուշադրությունը և թարգմանվեց աշխարհի տարբեր լեզուներով, այդ թվում անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն, իսպաներեն, ուստերեն, թուրքերեն և այլն: Գիրքը հեղինակն անվանել է «Խոլամի Ռենեսանս», սակայն մի շարք թարգմանություններում, այդ թվում և ռուսերեն (թարգմ. Դ. Բերտելս), այն դարձել է «Մուսուլմանական Ռենեսանս», և այժմ երկուսն էլ հավասար չափով կիրառվում են:

Արևելագետ գիտնականները քննարկվող հարցի վերաբերյալ արտահայտում են հակառակ կարծիքներ և չունեն միասնական տեսակետ:

Նրանց մի մասը գտնում է, որ «Վերածնունդ» կամ «Ռենեսանս» հասկացությունը կապված է Եվրոպայի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության, հելլենիզմի դարաշրջանին հաջորդած միջնադարի խավարի և վանդալիզմի տիրապետության հետ, որը հագիկ թե կիրառելի լինի Արևելքի համար: Վերածնունդի դարաշրջանով Եվրոպայում Վերադարձ է տեղի ունենում դեպի կորցրածը, դասական կամ անտիկ հելլենական կուլտուրան ու արվեստը, որի վրա հենվելով Եվրոպական մշակույթը և արվեստը նոր թօփչք է կատարում: Ելնելով այդ տեսադրույթից մի շարք արևելագետներ՝ Կ. Բեկվերը, Ռ. Գարտմանը, Դ. Սարգովիուսը, Վ. Բարտոլդը, Վ. Շտեյնը և ուրիշներ, մերժում կամ կասկածի տակ են վերցնում Ա. Մեցի կողմից առաջ քաշված «Մուսուլմանական վերածնունդ» հասկացողության օրինաչափությունը: Նրանք գտնում են, որ խալամի, մուսուլմանական մշակույթի մեջ ընդմիջում, անկում կամ խավարամոլության թագավորություն չի եղել, և խոսք չի կարող լինել խոլամի կամ մուսուլմանական վերածնունդի մասին: Այդ տեսակետը շատ հստակ է արտահայտված Վ. Շտեյնի մոտ, որի կարծիքը Արևելքում ռենեսանս չէր կարող լինել, «որովհետև այնտեղ անկում չի եղել, չի եղել անկենդանություն, կապված միշուաստիկայի հետ»: Ուստի և «Վերածնունդ ինչի՞ց և ո՞ւր» հարցի պատասխանը մոլ-

սուլմանական միջավայրի համար, ըստ այդ տեսակետի կողմնակիցների, մնում է օրից կախված:

Նրանց փաստարկներում կարևոր տեղ է գրավում հունա-լատինական, հելլենիստական արմատներին վերադարձի հարցը, որն առանցքային է «Ունեսան» հասկացողության հայեցակարգում, և որը, ըստ նրանց, բացակայում է մուսուլմանական ունեսանսում:

Դժվար չէ կոահել, որ դա Արևուտքի մոտեցումն է Վերածնունդի հիմնախնդրին և այդ պրիզմայով են եվրոպական հեղինակները դիտարկում ունեսանսի հարցերը արարա-մուսուլմանական նշակութային համակարգում:

Դարկ է նշել, որ Ա. Մեծի աշխատության մեջ կա հղում հունական արմատներին: Նրա «Աշխարհագրություն» գիտում ուղղակի ասվում է, որ «Աշխարհագրությունը III–IX դարի (III դ. հիջրիի, արարական թվագրության) Ունեսանսի արդյունք է: Նրա զարգացման ակունքների մոտ կանգնած են 200–800 թ. վերաբերող ալ-Կինդիի աշխատությունները, որոնք հունական գիտության գլխավոր փոխանցողներից մեկն էին»: Բայց ամենայն հավանականությամբ դա, ըստ եվրոպական չափանիշների, բավարար չէ, որի համար մեղքը շվեյցարական գիտնականինը չէ: Դա արտացոլումն է այն իրողության, որը գոյություն է ունեցել տվյալ պատմական դարաշրջանում:

Արևելագետների մի ուրիշ, համեմատաբար ավելի փոքրաթիվ խուճք, համամիտ է, կամ հիմնականում կիսում է Մեծի «Մուսուլմանական ունեսանս» սահմանումը: Դրանց շարքում պետք է առանձնացնել գիտական աշխարհում մեծ հեղինակություն վայելող արարագետ Ի. Կրաչկովսկուն, որը գրում է, որ «Անժմանակ մահացած Ա. Մեծի հետմահու ստեղծագործությունը տալիս է հիջրայի IV դարի (մ.թ. X դ. — Ն. 7.) ընդհանուր պատկերը, որը հեղինակը լրիվ հրավունքով անվանել է «իսլամի վերածնունդ»: Թեև հետազայում Ի. Կրաչկովսկին մի փոքր փոխում է իր մոտեցումը և Ա. Մեծի կողմից «Իսլամի Ունեսանս» անվանումը կոչում է «հակասական անվանում», այդուհանդերձ, նա սկզբունքութեն չի ժխտում այդ ֆենոմենը: Որոշ վերապահումներով և փորձելով բացատրել, թե ինչու է Աղամ Մեծը նման վերնազիր ընտրել, «Մուսուլմանական վերածնունդ» սահմանումն ընդունում են Իոգան Ֆյուլկը և այլ արևելագետներ:

Արևելքի վերածնունդի վերաբերյալ կցանկանայինք ավելացնել, որ անցյալ դարի կեսերին գիտությունը կարևոր նվաճումներ արձանագ-

բեց այս բնագավառում: Ծնորհիվ մի շարք գիտնականների՝ Ն. Կոնրադի, Վ. Չալոյանի, Շ. Նուցուրիմիծի, Վ. Ժիրմունսկու, Ռ. Ֆրայի և այլոց աշխատությունների, քաղաքացիական իրավունք ծեռք բերեց «Վերածունդն Արևելքում» հասկացողությունը:

Չնայած այս տարրերակումներին, անգամ նրանք, ովքեր չեն ընդունում մուսուլմանական վերածնունդը, համաձայն են, որ այն ֆենոմենը, որը տեղի ունեցավ սկսած IX-X դարերից, մշակութային աննախադեալ վերելք էր: Վ. Բարտոլդը դա համարում է «մուսուլմանական կոլտուրայի ծաղկում», որը շատ մոտ է Ի. Կրաչկովսկու տված սահմանումին առ այն, որ «X դարը խալիֆայության վերջնական փլուզման դարաշրջանն է, որը միաժամանակ արաբական մշակույթի բարձրագույն ծաղկման՝ «Խոլամի Ունեսանսի» դարաշրջանն է»:

Կարծում ենք, որ այս բնութագրումն առավել նոտ է ճշմարտությանը: Եվ եթե դա վերածնունդ էր, ապա ուներ իր յուրահատկությունները, որոնք նրան տարրերակում էին եվրոպական դասական մողելից: Խոկ եթե ոչ, ապա միևնույն է, դա մշակությային որակական նոր երևույթ էր, արաբա-մուսուլմանական մշակույթի բարձրագույն ծաղկում, որով նա ընդհուպ մոտենում է Ունեսանս-Վերածնունդ կատեգորիային, նրա թե՛ Արևմտյան, և թե՛ Արևելյան ըմբռնումներով:

## II.ՄԸԱԿՈՒԹԱՅԻՆ-ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ԿԹԱՆՔԸ

### 1. Կրթություն և կիրք մարդ

Ինչպես ամեն մի մշակույթի, այնպես էլ արաբա-մուսուլմանական մշակույթի հիմքը կրթական համակարգն է տվյալ պատմական դարաշրջանում: Նրանով է պայմանավորված մշակույթի, արվեստի և գիտության զարգացման մակարդակը:

Կրթությունը և կրթական համակարգը VIII-XV դարերում Աբբասյան և Ֆաթիմյան խալիֆայություններում, նրանց հաջորդած մուսուլմանական սուլթանություններում (Սելջուկների, Այյուբիների, Մամլութերի և այլն), հակառակ քաղաքական խառնաշփոթ իրավիճակներին, անվերջ և ավերիչ պատերազմներին ու արշավանքներին, չնայած տնտեսական դժվարություններին, զարգանում ու կատարելազործվում էր: Դա, մի կողմից, ծնողի և ընդհանրապես հասարակության գիտակցու-

բյան ամի ու նրանց կողմից կրթության կարևորությունն ըմբռնելու, իսկ մյուս կողմից, խալիֆաների և սուլթանների կրթությունը խրախուսելու և հովանավորելու քաղաքականության արդյունք էր: Դաժան ու արյունաբրու, ցոփ ու անառակ կյանքի սիրահար սուլթանների կողքին եղել են բազմարիվ թագակիր կառավարողներ, որոնք խրախուսել ու հովանավորել են մշակույթը, իրենց և իրենց արքունիքը շրջապատել գիտուններով, պոետներով և կրթակած մարդկանցով: Տրանք հիմնել են դպրոցներ, բացել գրադարաններ և նյութապես աջակցել մտավորականներին:

Երեխայի ուսուցումը սկսվել է վեց տարեկանից, եթե նա արդեն կարող էր ծիսական աղոթքներ սովորել, դրանց միտքը պահել և արտասանել: Այդ պահից սկսվում էր նրա, ժամանակակից տերմինալոգիայով ասած, տարրական կրթություն ստանալը, որն իրագործվում էր զգիթում մոլալիմի՝ ուսուցչի, ղեկավարությամբ: Սկզբնական փուլում հիմնական աօարկան Կորանն էր և երեխաները դասերը մկանում և ավարտում էին Կորանն ընթերցելով: Ընթերցանության հետ մրասին նրանց սովորեցնում էին նաև գրել: Աստիճանաբար ընդլացնում էր աօարկաների ուսուցման ցանկը: Կորանի, գրել-կարդալու հետ միասին, աշակերտներին սովորեցնում և դասավանդում էին Մուհամմադ մարզարենի վերաբերող պատմությունները՝ հայիսները, արաբերն լեզվի թուականություն, տարրական թվաբանության հիմունքներ, բանաստեղծություններ: Այս փուլում հասուն ուշադրություն էր դարձվում աշակերտների հիշողության զարգացմանը և նյութը անզիր անելում: Հայ անզիր անելը, Կորանից և հայության մեջ հատվածներ անզիր արտասանելը համարվում էր աշակերտի աօարդինության չափանիշներից մեկը: Եվ Բարդադի տարրական դպրոցներում ընդունված է եղել, որ բարձր աօարդինություն ցուցաբերած աշակերտներին, որպես պարզաբանություն, ուղղերին նաև առաջարկություն էր աշակերտներուն: Իսկ ամրություն, ասինանված ավանդույթի համաձայն, նրանց վրա, որպես գոհունակության նշան և քաջալերանց, նույն էր ներություն:

Տարրական կրթությունը հասանելի է եղել նաև աղջիկների համար: Այդ տարիքում նրանք սահմանափակվում չեն ունեցել: Սահմանափակումները սկսվել են հետո, այնինի հասուն տարիքում, եթե այլևս նապատակահարմար չի համարվել նրանց հետագա դպրոցական ուսուցումը:

Ուսուցումը որպես կանոն եղել է նոր, թեև եղել են նաև վճարովի դպրոցներ:

Իսկ խալիքաները, արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաները և ընդհանրապես հարուստոներն իրենց զավակների համար պահել են մասնավոր ուսուցիչներ, որոնք սովորաբար եղել են օտարերկրացիներ: Նրանք իրենց սաներին դասավանդել են կրոն, նրբաճաշակ գրականություն և գեղեցիկ արվեստներ, մասնավորապես երգ և պար:

Աբբասյան խալիքայության ժամանակ իհմք դրվեց կրթական ավելի բարձր մակարդակի: Կարում բացվեցին ավելի բարձր կարգավիճակ ունեցող դպրոցներ, մադրասաներ, որը ունանք անգամ անվանում են բարձրագույն դպրոցներ: Նրանցում ավելի մեծ տեղ էին գրավում աշխարհիկ առարկաները: Կրոնի և աստվածաբանության հետ միասին նրանցում դասավանդում էին մաթեմատիկա, աստղաբաշխություն, աշխարհագրություն, պատմություն, գրականություն և այլ առարկաներ: Իսկ մեծ անուն ունեցող ուսուցիչները, որոնց մեջ թիզ չեն հեղինակավոր գիտնականներ, իրենց աշակերտների հետ պարապում էին տանը: Առաջին անգամ Աբբասյանների ժամանակ սկսվում է կիրառվել աշակերտներին ավարտական վկայական՝ իջազա, տալը:

Այդ նոր տիպի հաստատությունները կոչվում էին հատուկ ուսումնական հաստատություններ: Նրանցից պետք է նշել Բայք ալ-Ճիբման՝ «Իմաստության տունը», որը հիմնել է խալիքա Մամուլը 830 թ. Բաղդադում: Այստեղ կատարվում էին բարգնանություններ, ուսումնասիրվում աշխարհիկ առարկաներ, նրանց կից գործում էր աստղադիտարան և այլն: Ֆ. Շիբրին այդ հաստատությունն անգամ անվանում է ակադեմիա: Նմանաբնույթ հաստատությունները թիզ չեն: Երբ IX–X դարերից սկսած հիմնվում են հիվանդանոցներ, ապա նրանք ոչ միայն բուժական կենտրոններ էին, այլև դառնում են թժշկական ուսումնական կենտրոններ, որը նորություն էր իր ժամանակների համար:

Սակայն այս նոր՝ բարձրագույն և մասնագիտական հաստատութունների մեջ, առանձնանում է Նիզամիյա անունը կրող դպրոցը, որը հիմնվել է 1065–1067 թթ. Վազիր Նիզամ ալ-Մուլքի կողմից: Այս լուսամիտ պարսիկը եղել է Սելջուկյան սուլթաններ Ալփ Արսլանի և Մալիք շահի վազիրը: Նա հայտնի է նաև նրանով, որ երկար ժամանակ հովանավորել է միջնադարի ամենափայլուն պոետներից մեկին՝ Օմար Խայյամին:

Մեծանուն գրողներին, փիլիսոփաներին, արվեստագետներին, աստվածաբաններին և այլ իմաստուններին հովանավորելը կազմել է դարաշրջանի սուլթանների, իշխանների և էմիրների քաղաքականությունը:

թյան բաղկացուցիչ մասը և կրթական-մշակութային կյանքի ամենաեւական տարրերից մեկը: Սուլթանները ձգուում էին փառք նվաճել ոչ միայն ուազմական հաղթանակներով, այլև կրթությունը, մշակույթը և գիտությունը հովանավորելով:

Նիզամիյան պաշտոնապես ճանաչվում էր պետության կողմից: Նա դարձել էր նմուշ նմանատիպ մադրասանների համար, որոնք աստիճանաբար հիմնվել են նաև Իրանում, Խորասանում, Իրաքում, Միջիայում և խալիֆայության այլ երկրամասերում: Արար ճանապարհորդ իրն Զուրայրի Վայությանը Բաղդադում գործել է այդպիսի 30, Դամասկոսում՝ 20, Սոսուլում՝ 6 և Դիմսում՝ 1 դպրոց:

Արքայանների գահակալության սկզբնական փուլում կրթական համակարգում հայտնվեց մի կարևոր նորություն ևս՝ հիմնվեցին գրադարաններ: Նրանք գործում էին մզկիթներին առընթեր: Մեծ և հարուստ գրադարանը նպաստում էր տվյալ մզկիթի հեղինակության բարձրացմանը: Հատ գրադարաններում ծեռագրերը և գրքերը կանոնավոր կերպով մշակվում էին ըստ մասնագիտությունների, անգամ կազմվում էին քարտարաններ: Այդպիսին էր, օրինակ, Շիրազում Բուհ սուլթան Աղուդադ-Դավթակի (977–982 թթ.) հիմնած գրադարանը, որը նույնիսկ ուներ հատուկ աշխատակազմ, ընթերցողներին սպասարկելու համար:

Այդ շրջանում, երբ թուղթը նոր էր Չինաստանից մուտք գործել խալիֆայություն և դեռևս մատչելի չէր շատերի համար, որոշ գրադարաններում, ինչպես Սոսուլ քաղաքի գրադարանում, որն իր անծնական միջոցներով կառուցել էր մի մոտուղյօն մեծահարուստ և նվիրել իր հարազատ քաղաքին, այդտեղ թուղթը ծորի էր տրվում ընթերցողներին:

Գրադարաններն ունեին մի կարևոր յուրահատկություն ևս: Նրանք միայն ընթերցատեղիներ չին, այլև հանդիպումների, գիտական քննարկումների, բանավեճերի, անգամ ուսուցման կենտրոններ: Գրադարաններ կային ոչ միայն մզկիթներին կից: Իրենց անծնական գրադարաններն ունեին նաև մեծահարուստները, հասարակության վերնախավը և Մաջալիս ալ-աղարները, այսպես կոչված Մշակութային ընկերությունները, որոնք հանդիսանում էին մտավորական նարդկանց հավաքածեղի: Այդ գրադարաններում հավաքված ծեռագրերը և գրքերն իրենց բնույթով տարբերվում էին մզկիթապատկան գրադարաններց: Եթե մզկիթների գրադարաններում գերակշռողը կրոնական և աստվածաբանական գրականությունն էր, ապա անհատների, մասնավորապես Մաջալիս ալ-աղարների գրադարաններում, հավաքված էին գլխավո-

րապես փիլիսոփայության, աստղաբաշխության, տրամաբանության, թշուկության, մաքեմատիկայի և այլ գիտություններին վերաբերող գրականություն:

Այդ բոլոր գրադարանները, ներառյալ անհատներին պատկանող ները, միանգամայն մատչելի էին գրասեր և ուսումնասեր մարդկանց համար:

Գրադարանները, ինչպես մարդիկ, ունեցել են իրենց սեփական ճակատագիրը: Միջնադարում, երբ ոչինչ կայուն ու ապահով չէր, երբ ավերիչ արշավանքները հաջորդում էին մեկը մյուսին, որոնք շատ հաճախ կործանում և հրկիգում էին ամբողջ քաղաքներ, նրանց առաջին զոհերը դառնում էին մշակույրի կենտրոնները և արվեստի հուշարձանները: Նրանք նաև խոռվությունների զոհ էին դառնում, երբ պալատները գրոհող ամբոխը թալանում, կողոպտում կամ ոչնչացնում էր, ինչ որ կարողանում էր:

Այդպես պատահեց Ֆաթիմյան խալիֆա ալ-Ազիջի (975–996 թթ.) հիմնած գրադարանի հետ խալիֆա ալ-Մուսաբանսիրի տիրապետության օրոք: Մաքրիզին նշում է, որ 1068 թ. խոռվության ժամանակ կողոպտվեցին պալատի թանկարժեք գանձերը: Սակայն նա ավելի մեծ կորուստ է համարում արքայական գրադարանի ոչնչացումը, որը պարունակում էր 200 հազար կտոր գիրք, որոնց մեջ թիւ չէին գիտական մեծ արժեք ներկայացնող և հազվադեպ գրքերը: Նա հաղորդում է, որ «Բանհինգ ուղղութեր բարձած տանում էին գրքերը: Արժեքավոր ծեռագրերը օգտագործվում էին թուրք սպանների տանը կրակ վառելու համար և գրքերի հիանալի կազմերն օգտագործվում էին նրանց ստրուկների կոչիկները կարկատելու համար»:

Այդպիսին էր դարը, այդպիսին էին բարքերը:

Այբայանների ժամանակ հայտնվեցին և հետագա դարերում տարածվեցին գրախանութեները կամ գրավաճառատունները: Դա բոլորին նոր երևուս էր մուսուլմանական աշխարհում, որը վկայում էր գրաճանաչության բավականին լայն տարածման և կրթական գործի զարգացման մասին: Ալ-Յակուբին, որը 890–ական թվականներին եղել է Բաղդադում, վկայում է, որ գրախանութեներն այնքան շատ են եղել, որ կենտրոնացված են եղել մի տեղ և գրադեցրել մի ամրող փողոց: Նրա հաշվումներով նրանց թիվը անցել է հարյուրից: Դետագայում, բացի Բաղդադից, նման գրախանութեներ են բացվել Ղանակոսում, Կահիրենում և այլ քաղաքներում:

Գրավաճառը չէր գրադաւում միայն գրքերի վաճառքով: Նա միաժամանակ պատմենահամող էր, որը պատվերով և հանապատասխան վճարով կրկնօրինակում էր ծեռագիրը: Նա միաժամանակ գեղագիր էր (կալիգրաֆ), որը պատվերով պատրաստում էր զանազան գրություններ, այդ բվում և փաստաթրդեր: Եվ գրախանութեները, զարմանալիորեն, ինչպես գրադարանները, հանդիսանում էին նաև գրական քննարկումների վայր, անգամ կենտրոններ:

Այսպիսով, հեռու լինելով այդ ամենը գերազահատելուց, առավել ևս իդեալականացնելու նորից, չենք կարող շընդունել, որ Աքքասյան և հետաքրասյան շրջանում գոյություն ուներ որոշակի գրական մթնոլորտ և կրթական միջավայր, որի պայմաններում ծնավորվում և ասպարեզ է իշխում աղիքը՝ կիրք մարդո:

Աղիք հասկացողությունը բարդ հասկացողություն է, որի հիմքում ընկած է արաբերեն «աղաք»՝ գրականություն, բառը: Նա ներառնում է հասկացությունների մի քանի շերտ: Նա, նախ և առաջ, աշխարհիկ գիտությունների՝ արաբերեն գրական լեզվի, քերականության, Մուհամմադ մարզարեի կյանքի և գործունեության հետ կապված իրադարձությունների և արաբական հերոսապատումների հմուտ գիտակ էր: Այդ բոլորը միասին կազմում էր «արաբական գիտելիքներ» հասկացողության շերտը:

Աղիք հասկացողության հաջորդ շերտը, որը գոյանում է VIII դարից սկսած, հիմնված էր հնդկական, իրանական, հունական և հելենական, այսինքն ոչ արաբական գիտելիքների վրա: Դրանք հիմնականում խրատական, ուսուցողական, քարոյա-փիլիսոփայական բնույթի գիտելիքներ էին, որ աղիքը ծեղզ էր բերում ծանոթանալով մարդկային պատմության անտիկ դարաշրջանում ոչ արաբ փիլիսոփաների, պատմիչների, բարոյախոսների, գրողների ստեղծած գործերի հետ:

Եթե տվյալ անձնապորությունը գիտակ էր արաբական և անտիկ շրջանի գիտելիքներին, ապա նա հանարկում էր զարգացած մարդ:

Եվ, վերջապես, աղիքը նա էր, որը, վերոնշյալ հատկանիշների հետ մեկտեղ, օժտված էր հոգևոր բարձր հատկանիշներով, աչքի էր ընկնում իր արժանավայել պահվածքով հասարակության մեջ ու կենցաղում, հարգանքով էր վերաբերվում մարդկանց, չեր վիրավորում նրանց արժանապատվությունը, իրեն բարձր չեր դասում մյուսներից և այլն:

Դավանարար այս հատկանիշներն են նկատի ունեցել Ա. Սեցը, եթե նա գրում է, որ «III–IX դարը շարունակեց բարձրացնել ասպետականութեն և կիրք դաստիարակված մարդու (աղիքի) կրթական մակարդակը»:

Ահա այսպիսին էր աղիքը, որը հանդիսանում էր միջնադարյան մուսուլմանական աշխարհի կիրթ մարդու և մտավորականի տիպար:

## 2. Գիտություն և գիտնական

IX դարից մեծ վերելք ապրեց գիտությունը: Տեղի ունեցավ գիտական ուղղությունների անջատում և սահմանազատում, առաջացան նոր գիտական ուղղություններ, փոխվեցին նրանց տեղերն առաջնայնության առումով և ավելի հստակ դարձավ յուրաքանչյուր գիտության ուսումնասիրության և հետազոտության առարկան: Ընդարձակվեց և կոնկրետացվեց «գիտություն» հասկացողությունը, որը հիմք է տալիս խոսելու գիտության զարգացման փուլերի մասին:

Առաջին փուլն ընդգրկում է վաղ իսլամի շրջանը, երբ գլխավոր խնդիրը հալամի, որպես նոր կրոնի օրինաչափ լինելու հիմնավորումն էր, երբ անհրաժեշտ էր առաջին, նախնական գիտելիքները տարածել իսլամի, միաստվածության, նարգարեի, նրա հրաշագործությունների, Կորանի, սուննայի, հաղիսների մասին և այլն: Պատմականորեն միանգամայն հիմնավորված այդ պահանջն ինքն էր թելադրում գիտության խնդիրները և ուղղությունները: Ըստ այսն, այդ փուլում, այսինքն վաղ իսլամի շրջանում, գիտությունը դա գրագիտությունը, Կորանն իմանալը և այնուիետև թեոլոգիան՝ աստվածաբանությունն էր: Եվ եթե շոշափվում կամ անդրադառնում էին այլ առարկաների և երևույթների, որոնք չեին տեղափորվում վերոնշյալ շրջանակներում, ապա դա արվում էր միայն մի նպատակով: Ժառանգեցնել դրանք վաղ իսլամի, ավելի ճիշտ, իսլամագիտության շահերին:

Բայց այդպես երկար շարունակվել չէր կարող: Կյանքն առաջ էր գնում, նոր խնդիրներ էին առաջ քաշվում, որոնք պահանջում էին իրենց պատասխանները և լուծումները: Մարդկային պրատուն միտքը, այդ թվում և նույնության աշխարհում, թափանցում էր առարկաների և երևույթների խորքը և հայտնաբերում նոր օրինաչափությունները: Առաջին փուլում ծնավորված սկզբունքները և դոգմաները ներ էին գալիս և համապատասխանաբար ազատ տարածություն չէին ստեղծում գիտական մտքի զարգացման համար: Անհրաժեշտ էր գիտության բնագավառում կատարել նոր և համարձակ քայլ: Եվ այլ քայլը կատարվեց:

Դա արտահայտվեց, նախ և առաջ նրանում, որ VIII դարից, հատկապես նրա երկրորդ կեսից, «գիտություն» հասկացողությունը հարս-

տանում է նոր ծեզբերումներով, որի շնորհիվ ընդլայնվում են նրա շրջանակները և բովանդակությունը: Պահպանելով և կատարելագործելով նախորդ փուլի ուղղությունները, առաջին հերթին աստվածաբանությունը, արարա-իսլամական գիտությունը հարստանում է նոր առարկաներով և ուղղություններով, որոնք հետազայում ստացան բնական գիտություններ անվանումը: Արարա-մուսուլմանական միջավայրում հատկապես զարգացում ստացան նարենատիկան, ֆիզիկան, օպտիկան, աստղաբաշխությունը, բժշկագիտությունը, փիլիսոփայությունը և այլն:

Նշված պատմական դարաշրջանում տեղի է ունենում գիտությունների տարանջատում, մի կողմից, և գիտական ուղղությունների սահմանների ճշգրտում և հստակեցում, մյուս կողմից: Դավանաբար առաջինը տարանջատվեցին աստվածաբանությունը և նույնության հրավունքը: Եթե նախկինում մուսուլմանական իրավունքն աստվածաբանության աղախինն էր, ապա այժմ, առանձնանալով, նա դառնում է ինքնուրույն գիտական ուղղություն: Առանց դրա մուսուլմանական իրավագիտությունը հազիվ թե կարողանար համընթաց քայլել ժամանակի պահանջների հետ և կանգնել իր սեփական ոտքերի վրա: Մյուս կողմից ավելի հստակ դարձան աստվածաբանության առարկան և սահմանները: Այդ առումով նա նույնպես շահեց զարգացման հեռանկարների տեսակետից:

IX դարից որպես առանձին և ձևավորված գիտություն է հանդիս գալիս աշխարհագրությունը, որի հիմքում ընկած էին արար մեծ գիտնական ալ-Կինդիի աշխատությունները: Որոշակի սահմանազատում է տեղի ունենում նաև բանասիրության և պատմագիտության միջև՝ հետազոտվող նյութի առումով: Նման երևույթներ են տեղի ունենում նաև բնական գիտությունների բնագավառում, մասնավորապես սահմանակից գիտությունների ոլորտում:

Խոսելով գիտության զարգացման մասին, հարկ է կանգ առնել գիտական մեթոդի հարցի վրա: Արարա-մուսուլմանական գիտության մեջ այս բնագավառում ևս տեղի են ունենում կարևոր փոփոխություններ: Գիտական յուրաքանչյուր ուղղություն՝ մարենատիկան, աստղաբաշխությունը, բժշկագիտությունը, պատմագիտությունը և այլն, մշակում է իր մեթոդը, որի հետևանքով ստացված արդյունքները դառնում են ավելի համոզիչ ու հավաստի: Այսպես, օրինակ, պատմաբանները և բանասիրներն այլևս նախապատվությունը չեն տալիս զվարճալի պատմություններին, հերիաթմերին, կամ նրանք այլևս չեն ծգտում ներառնել:

տարբեր, մինչանց հետ չկապված հարցերի լուսաբանությունը: Դրաժարվելով այդ մերողից, արաբա-մուսուլմանական պատմագործությունը և բանասիրությունը, ինչպես նաև փիլիսոփայությունը, որդեգրում են մասնագիտացման, գիտելիքների համակարգման և վերլուծության մեթոդը: Մեծ տեղ է հատկացվում գիտական տերմինաբանության ստեղծմանը: Այդ առումով հիշատակության է արժանի ծագումով ասորի, փիլիսոփա Կոստա իբն Լուկան, որն իր ուսումնասիրությունների հիմքում դրել էր գիտական վերլուծության մեթոդը, որին նա ծանոթ էր շնորհիվ հունական փիլիսոփաների աշխատությունների:

Գիտական վերլուծական մեթոդն արաք և մուսուլման գիտնականները՝ ալ-Կինդին (IX դ.), ալ-Ֆարարին (X դ.), Իբն Սինան (X-XI դդ.), Իբն Ուչզին (XII դ.) և մյուսները, հաջողությամբ կիրառում էին հատկապես հունական դասական փիլիսոփաների աշխատությունների իրենց մեկնություններում:

Արաբա-մուսուլմանական գիտնականների մոտ մեծ տեղ էր գրավում գիտությունների դասակարգման խնդիրը: Այդ հարցում, սակայն, նրանք միասնական տեսակետ չունեին և առաջարկվում էի տարրեր մողելներ:

Սողեներից մեկը ժամանակի համաշխարհային գիտությունը երկու խմբի դասակարգելն էր: Առաջին խումքը կազմում էին այսպես կոչված արաբա-մուսուլմանական գիտությունները, որի մեջ մտնում էին մուսուլմանական իրավունքը, բանասիրությունը, արաբերեն լեզուն ու քերականությունը, Կորանի, սուննայի և հաղիսների ուսումնասիրությունը, նրանց մեկնությունը և այլն: Երկրորդ խմբի մեջ մտնում էին այսպես կոչված օտարերկրյա գիտությունները, որոնք ստեղծվել էին այլ կրոնի պատկանող ժողովուրդների կողմից և փոխառնվել էին արաբների, պարսիկների և այլ նուսուլման ժողովուրդների կողմից: Դրանց մեջ մտնում էին անտիկ շրջանի դասական փիլիսոփայությունը, թշկագիտությունը, բնական գիտությունները, ինչպես նաև պատմագիտությունը:

Գիտությունների դասակարգման իր մողելն էր առաջադրել միջնադարյան արաք խոշոր գիտնական Իբն Խալդունը (1332-1406 թթ.): Նա նույնպես գիտությունը բաժանում էր ավանդական արաբական և օտարերկրյա գիտությունների, սակայն դրանք այլ կերպ էր խմբավորում: Արաբական գիտությունների մեջ նա Կորանի, սուննայի, հաղիսների և մուսուլմանական իրավունքի հետ մտցնում էր նաև կալամը՝ աստվածաբանությունը, բասավունքը՝ մուսուլմանական միստիցիզմը, բանա-

սիրությունը՝ արաբերեն լեզվի ու պոեզիայի հետ միասին, և երազների մեկնությունը:

Իսկ ինչ վերաբերում է օտարերկրյա գիտություններին, ապա իբ Խալդունը, նախ և առաջ, դրանք բոլորը կոչում է փիլիսոփայություն, ապա ստորաբաժանում է ըստ մասնագիտական ուղղությունների: Ահա դրանք – տրամաբանություն, որը հիմնված էր Արիստոտելի «Օրգանոնի» վրա, ֆիզիկա, որի բաղադրամասերն էին թշկագիտությունը, մոգությունը կամ հմայիլությունը, զյուղատնտեսական գիտությունը, աճպարարությունն ու ալքիմիան, մետաֆիզիկա, մաթեմատիկա, որի մեջ նա մտցնում էր նաև առևտուրը և ժառանգությունը, օպտիկա, աստղաբաշխական աղյուսակների կազմում, աստղագուշակություն և, վերջապես, երաժշտություն:

Ինչպես տեսնում ենք, Իրն Խալդունի կազմած գիտությունների ցանկն ավելի հարուստ է ու բազմազան, թեն որոշ ուղղություններ հազիվ թե կարելի է գիտական անվանել: Սակայն դա տուրք էր իր ժամանակին և գիտության վերաբերյալ տիրապետող պատկերացումներին, որից չի կարողացել խուսափել և չէր էլ կարող խուսափել նույնիսկ մի այնպիսի գիտնական, ինչպիսին Իրն Խալդունն էր:

VIII–XV դարերում հրապարակ իջան բազմաթիվ ականավոր գիտնականներ գիտությունների տարբեր բնագավառներում, որոնք մեծապես նպաստել են գիտության զարգացմանը, իսկ ոմանք ծեղզ բերել համաշխարհային հոչակ:

Նոր մակարդակի վրա բարձրացավ թշկագիտությունը, որն առաջին հերթին կապված էր երեք մեծ, ծագումով պարսիկ, թշկապետեղի՝ Ալի ար-Թաքարիի, Արու Բակր առ-Ռազիի և Իրն Մինայի գործունեության հետ, որոնք իրենց ստեղծագործությունները գրել են արաբերեն լեզվով:

Ար-Թաքարին, նախկին քրիստոնյա, Մութավաքիլ Խալիֆայի անծնական թժիշկն էր: Նրա հիմնական աշխատություններից մեկն էր «Ֆիրդաուս ալ-Շիբմա»՝ «Խմաստության դրախտը», որը նա ավարտել է 850 թ., և որը համարվում է արաբերեն լեզվով գրված առաջին թշկական համառոտ տեղեկատուն:

Ար-Ռազին (865–925 թթ.), մասնագետների վկայությամբ «Բոլոր մուսուլմանական թժիշկներից ամենամեծը և ամենահնգընատիպը», եղել է Բաղդադի հիվանդանոցի գլխավոր թժիշկը: Նա հայտնի է որպես ծաղկախտ և կարմրուկ հիվանդությունների մասնագետ: Այդ հիվանդու-

թյունների և նրանց բուժման վերաբերյալ նրա տրակտատները համարվում են արաբական բժշկական գրականության զարդը: Նրա այդ և այլ տրակտատներ միջնադարում թարգմանվել են լատիներեն և մեծ տարածում գտել եվրոպական գործնական բժշկագիտության մեջ:

Առաջնահատուկ տեղ է գրավում Աքրու Ալի ալ-Դուսայն Իբն Սինան (980–1037 թթ.), մեծագույն բժշկագետներից մեկը, որին արաբեները կոչել են «աշ-շեյխ առ-ուախս», այսինքն՝ գլխավոր շեյխ կամ շեյխ և իշխան: Նա ծնվել է Բուխարայում, որտեղ կար Սամանիների սուլթանի հարուստ գրադարանը, որից նա օգտվել է ազատորեն, քանի որ նա բուժել էր սուլթանին և այդ պատճառով նրա առջև բաց էին բոլոր դրները: Նրա իիմնարար բնույթի գլխավոր բժշկագիտական աշխատությունն էր «Կանուն ֆիլ-միրի»՝ «Բժշկության կանոն» տրակտատը, որտեղ ի մի են բերված և կանոնակարգված բժշկագիտության նվաճումները: Այս համրացիտական բնույթի աշխատությունը արաբերենից լատիներեն է թարգմանվում դեռևս XII դարում:

Սակայն Իբն Սինան, ի տարբերություն իր շատ նախորդների և հաջորդների, միայն բժշկագետ չէր: Նա լայնապրոֆիլ գիտնական էր, որը բնորոշ էր միջնադարի շատ գիտնականներին: Իբն Սինան նաև հայտնի փիլիսոփա, մաթեմատիկոս, աստվածաբան, աստղագետ, բանասեր և երաժշտագետ էր:

Արաբ և այլ մուսուլման գիտնականները մեծ ներդրում են ունեցել նաև բնական գիտությունների, առաջին հերթին մաթեմատիկայի, աստղաբաշխության և քիմիայի (աթբիմիայի) բնագավառներում: Գիտության այդ մարգերում մեծ ճանաչում էին ծեղոք բերել ալ-Խորեզմին (780–850 թթ.), իսլամական աշխարհի մեծագույն մաթեմատիկոսը, որի անվան հետ է կապված «ալգեբրա» և «ալգորիթմ» տերմինների ստեղծումը, IX դարի հոչակավոր ստղաբաշխներ Ահմադ Ֆերգանին Ֆերգանայից և Աքրու Աբդուլլահ ալ-Բատանին Դարրանից, որոնց ուսումնասիրել են Լուսնի, մի շարք նոյորակների և Երկնային այլ լուսատուների ուղեծրերը, կազմել համապատասխան առյուսակներ և այլն: Բնական գիտությունների բնագավառում կատարած իր ինքնատիպ ուսումնամիրություններով առանձնանում է Աքրու առ-Ռայհան ալ-Քիրունին (973–1048 թթ.): Նա հեղինակն է Երկրաչափության, թվաբանության, աստղաբաշխության և աստղագուշակության կարելիգիսի և տոռարային բնույթի աշխատությունների:

Որակական փոփոխություններ կրեց արաբա–մուսուլմանական փիլիսոփայությունը: Եթե նախորդ դարաշրջաններում արաբները հիմ-

նականում քարգմանում էին հույն փիլիսոփաներին և հաճախ նաև տալիս իրենց մեկնությունները, ապա IX դարից սկսած, արար և այլ մուսուլման փիլիսոփաները, շարունակելով իրենց նախորդների քարգմանչական գործունեությունը, միաժամանակ կատարում են ինքնուրույն ուսումնասիրություններ:

Այստեղ հարկ է առաջին հերթին նշել ալ-Կինդիին (Մահ. 873 թ.), որը համարվում է արաբական փիլիսոփայության հիմնադիրը: Ընդհանրապես պետք է նշել, որ արարա-մուսուլմանական փիլիսոփայության ծնավորումը սերտորեն կապված է հունական դասական փիլիսոփայության հետ, որից նա մեծապես ազդվել է: Նրանց համար Արիստոտելը եղել է յուրատեսակ կուօք: Այդ առումով բացառություն չեն նաև ալ-Կինդին: Սակայն տուրք տալով նեռալատոնիզմին, նա փորձել է սինթեզել և միավորել Արիստոտելի և Պլատոնի փիլիսոփայական հայացքները: Ալ-Կինդին համոզված էր, որ բոլոր գիտությունների հիմքում ընկած են նեռայութագործոյան մաթեմատիկոսների դրույթները:

Ալ-Կինդիի ծառայությունները գիտությանը միայն փիլիսոփայությամբ չեն սահմանափակվում: Նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերել իր ժամանակի այնպիսի գիտական ուղղությունների նկատմամբ, ինչպես օպերիկան, աստղագուշակությունը, ալյումիան, երաժշտագիտությունը և այլն:

Արարա-մուսուլմանական փիլիսոփայության առջև կանգնած կարևորագույն խնդիրներից մեկը հունական դասական փիլիսոփայությունը իսլամի, նրա հիմնարար դրույթների հետ ներդաշնակելու էր, փորձել գտնել նրանց միավորող կամ համագրող եզրեր: Այդ գործը սկսել էր դեռևս ալ-Կինդին, որի պատճառով նրա շատ փիլիսոփայական աշխատություններ իրենց վրա կրում են էկլեկտիզմի կնիքը: Նրա գործն ավելի մեծ ծավալներով ու խորությամբ շարունակեց ծագումով թուրք (Միջին Ասիայից), Սուլեյմանադ Արու և ասար ալ-Ֆարաբին (X դ.): Նա ուսանել էր Բաղրամում, քրիստոնյա ուսուցչի նոտ, որը մասնագիտացել էր քարգմանությունների մեջ: Բաղրամում ծանոթանալով հունական փիլիսոփայական տարրեր ուղղություններին, ապա նաև սուֆիզմին ՝ ալ-Ֆարաբին փորձում է իր երկար ու ծիգ կյանքի ընթացքում (նա մահացել է 80 տարեկան հասակում), ստեղծել իր փիլիսոփայական սիստեմը, որն իր բնույթով սինկրոետիկ էր, հիմնված պլատոնիզմի, արիստոտելիզմի և սուֆիզմի դրույթների համադրման վրա: Նա այնքան ոգեշնչված է եղել հունական այդ երկու հսկաներով, որ Պլատոնի «Դան-

րապետություն» և Արիստոտելի «Քաղաքականություն» աշխատությունների ազդեցության տակ և ընդօրինակությամբ, ստեղծել է պոլիս-քաղաքի իր իդեալը: Նա այդ քաղաքը դիտում էր որպես մարդկային մի ներդաշնակ օրգանիզմ՝ հիմնված հիերարխիայի սկզբունքի վրա: Նրա գագաթում գտնվում էր վեհապետը (այուզերենը), որը համընկնում էր մարդկային օրգանիզմի սրտի հետ, որին սպասարկում էին կամ ծառայում ֆունկցիոններները. իսկ սրանց էլ ավելի ստորին աստիճանի վրա գտնվող ֆունկցիոններները և այլն: Ալ-Ֆարաբիի համոզմունքով, վեհապետը բարոյական և մտավոր առումով պետք է լիներ կատարյալ, իսկ այդ իդեալական քաղաքի բնակչներին միավորող պետք է լիներ նրանց երջանկությունը:

Ալ-Ֆարաբիի հետաքրքրվել է նաև բժշկագիտությամբ, մաթեմատիկայով, երաժշտությամբ և այլն, և այդ բնագավառներում ևս զգալի հետք թողել: Նրա հոչակն այնքան բարձր է եղել, որ նրան դասել են երկրորդ ուսուցիչ՝ Արիստոտելից հետո:

Փիլիսոփայության բնագավառում իրենց ուրույն խոսքն են ասել նաև Իբն Ռուշդ (1126–1198 թթ.) Կորորվայից, որը հայտնի է նաև Ավերրուս անվամբ, Իբն Թուֆայլը (մահ. 1186 թ.) և ուրիշներ:

Ուսումնասիրվող դարաշրջանում տպավորիչ էին նաև արաբա-մուսուլմանական պատմագրության նվաճումները: Դարկ է նշել, որ պատմիչներից շատերը միաժամանակ աշխարհագրագետներ և ազգագրագետներ էին, որի շնորհիվ նրանց աշխատություններն աչքի էին ընկնում հարցերի ավելի լայն ընդգրկումով:


Հիմնախնդիրների բննարկման առումով, արաբա-մուսուլմանական պատմագրությունը կարելի բաժանել երեք խմբի:

Առաջին խումբը կազմում են այն աշխատությունները, որոնք նվիրված են խալիֆայության բուն պատմությանը, Մուտամադ մարգարեին, արաբական նվաճումներին, դինաստիաներին և այլն: Այդ հարցերն են լուսաբանված արաբական պատմագրության հիմնադիր Բայազիթի (մահ. 892 թ.), IX դարի պատմիչներ Ահմադ իբն Թայֆուրի, «Քիթար ալ-Սաարիֆ»՝ «Գիտելիքների գիրը» արժեքավոր ուսումնասիրության հեղինակ Իբն Շուբայրահի, X դարի հեղինակ աս-Սուլիմ «Աբրասյանների պատմությունը» և այլոց աշխատություններում:

Երկրորդ խումբը ներառում է այն պատմիչներին, որոնց գործերը նվիրված են հանաշխարհային պատմությանը: Դրանց մեջ՝ իր կարևորությամբ առանձնանում է ար-Թարարիի (838–923 թթ.) «Թարիխ



Ալ-Մազալին, պարուրածն մինարեթ, Սամարրա, IX դ.



Օմարի գմբեթավոր մզկիթը, Երուսաղեմ, VII դ.



Ընթերցանություն գրադարանում, մանրանկար, 1237 թ.



Մզկիթ Կաղիմայնում. Բաղդադի արվարձան, XVI դ.



Յալեթի ամրոցը, 1210 թ.



Արաբական անապատում (Սիրիա) կառուցված պալատի մուտքը. 730 թ.



Մասկուլա, գյուղ՝ Դամակուսի մերձակայքում, որի բնակիչները  
խոսում են արամեակեն

ԴՐԱՄԱԿԱՊՈՅ (ՊԱԿԱՎՈՒԹ)







Օճայյաների մզկիթը, Դամասկոս, VIII դ.



Կալաա Շուսն, XII դ.

ալ-Ռուսով վա ալ-Մուլութ»՝ «Մարզարեների և բազավորների պատմությունը» մեծարժեք աշխատությունը։ Այստեղ ար-Թաքարին ներկայացնում է համաշխարհային պատմությունը աշխարհի ստեղծումից և հասցնում է մինչև 915 թ.։ Դանաշխարհային պատմության հարցերն են լուսաբանության առարկա եղել նաև ար-Թաքարիի հետնորդներ ալ-Յակութիի (IX դ.). Իբն ալ-Ասիրի (1160–1234 թթ.) և այլոց թողած պատմագիտական աշխատություններում, որոնք մեծապես օգտվել են ար-Թաքարիից։

Երրորդ խումբն ընդգրկում է այն պատմիչներին, որոնք գրի են առել խալիֆայության պատմությունը նրա տրոհման շրջանում։ Ուստի նրանց մոտ գերակայում է ոչ թե խալիֆայության ամբողջական, այլ նրա առանձին մասերի տեղական պատմության ուսումնասիրությունը։ Այս ուղղության ամենափայլուն ներկայացուցիչը X–XI դարերի պարսիկ պատմաբան Միհկավային է, որը հայտնի է իր «Գիրք ժողովուրդների փորձի» աշխատությամբ։

Ար-Թաքարիի և նրա հետնորդների մեջ մասի համար բնորոշ էր պատմության, պատմական դեպքերի և իրադարձությունների շարադրման ժամանակագրական մեթոդը։ Խրոնոլոգիան նրա համար առաջնային նշանակություն ուներ և կազմում էր նրա գրի առած պատմության առանցքը։

Իսկ աղբյուրների առունով ար-Թաքարին օգտագործել է գրավոր աղբյուրներ, առաջին հերթին իր նախորդների՝ Իբն Խոհակի, ալ-Կալրիի, Իբն Սաադի և այլոց գրած պատմությունները, և բանավոր աղբյուրներ։ Դրանք իր բազմաթիվ ճանապարհորդությունների ժամանակ գրի առած պատմություններն էին։

Արարա–մուսուլմանական պատմագրության մեջ ար-Թաքարիի հետ միասին առանձնահատուկ տեղ է գրավում Ալի ալ-Մասուդին (մահ. 956 թ.), որին հանարում են «Արարների Ներողոտոս»։ Նա հեղինակն է «Ուսկերեր հանքաշերտեր և փայլաճարերի հանքեր» հետաքրքիր աշխատության, որն իր բնույթով հանրագիտարանային է։

Ալ-Մասուդին, ի տարբերություն ար-Թաքարիի, որն օգտագործում էր խրոնոլոգիական մեթոդը, արաբական պատմագրության մեջ առաջինը մտցրեց, այսպես կոչված, «օրախնդրական կամ հրատապ մեթոդ» («Topical method»)։ Դրա եղանակը կայանում է հետևյալում։ Եթե ժամանակագրական մեթոդի ջատագովները պատմական դեպքերը խմբավորում և պատմությունը շարադրում էին ըստ տարիների, ապա հրա-

տապ մեթոդի հետևորդները պատմական դեպքերի և իրադարձությունների առանցքը դարձնում էին դինաստիաները, թագավորները և ականավոր մարդկանց, որոնց շուրջը պտտվում են պատմական դեպքերը: Այս պարագայում խրոնոլոգիայի խստագույն պահպանումը կամ նրան հետևելո պարտադիր չէ, քանի որ առաջնայինը ոչ թե դեպքերի ժամանակագրական շարանն է, այլ տվյալ դինաստիայի և նրա թագավորների գործունեությունը, որը միշտ չէ, որ պարտադիր է դարձնում ժամանակագրության պահպանումը:

Ալ-Մասուդի այս մեթոդ հետազայում որդեգրեց XIV–XV դարերի խոշորագույն պատմաբան և մտածող Իբն Խալդունը:

IX դարից սկսվում է արաբա–մուսուլմանական աշխարհագրության որպես առանձին ուղղության զարգացումը: Աշխարհագրությունը հետաքրքրում էր բոլորին և նրանով գրադպում էին նաև աստղաբաշխները, մաթեմատիկոսները, պատմաբանները և այլ նաև ազգեաներ:

Ալ-Կինդին հավանաբար ասորերենից արաբերենի և թարգմանում Պտղոմեոսի «Աշխարհագրությունը», որը մեծ ազդեցություն է գործում արաբա–մուսուլմանական հեղինակների վրա: Դենց այդ աշխատության ազդեցության տակ ալ–Խորեզմին գրում է իր «Սուրաք ալ–Արտ»՝ «Երկրի պատկերը» աշխատությունը, որն իր հերթին մեծապես խթանեց աշխարհագրության զարգացմանը:

Ալ–Խորեզմին իր մեծաքանակ աշախակերտների հետ միասին կազմեց նաև Երկրի և Երկնքի քարտեզը խալիֆա Սամունի հանճնարարությամբ, որը համարվում է առաջին նմանատիպ քարտեզը, կատարված իսլամական իրականության մեջ: Արաբական աշխարհագրագետները սովորեցին հաշվել Երկրի միջօրեականները, լայնությունը և Երկարությունը, և, տուրք տալով Պտղոմեոսին, առաջին միջօրեականը համարում էին Կանարյան Կղզիների վրայով անցնող միջօրեականը:

Նրանք թողել են հարուստ ժառանգություն, որը կարելի է բաժանել Երկու մասի: Մի մասը Ըփիրված է արաբա–մուսուլմանական աշխարհի, խալիֆայությունների և սուլթանությունների նկարագրությանը, իսկ մյուսը՝ ոչ մուսուլմանական աշխարհի:

Դրանց հիմքում մեծ մասամբ ընկած են ճանապարհորդական դիտարկումները, մանավանդ նրանք սիրել են Երկար ժամանակով բնակվել տարբեր Երկրներում, ժամոթանալ նրանց պատմությանը, բնությունը, կլիմային, սովորություններին, տնտեսությանը և այլն, որը նրանք բարեխործորեն գրի են առել և հետո հանձնել թղթին: Այդպես է լույս աշ-

խարի եկել ականավոր աշխարհագրագետ Իբն Կաղի ալ-Յակուբիի «Քիրար ալ-Բուլղան»՝ «Երկրների գիրքը», որը, ինչպես հաստատում են Ֆ. Շիբին և Ա. Մեծը, գրված է հիմնականում 891–892 թթ. Դայաստանում և Խորասանում գտնվելու ընթացքում:

Նրա ծառայությունը կայանում է նաև նրանում, որ նա, ինչպես նշում է Ա. Մեծը, «Եղավ առաջինը, ով արաբական երկրագիտությունը դրեց սեփական ոտքերի վրա»: Աշխարհագրական այդ ուղղությունն են զարգացնում X դարի հեղինակներ Իբն Ջաուֆալը, ալ-Մուկադասին և ուրիշներ: Արժեքավոր է Վերջինիս քսանամյա տքնաջան աշխատանքի արդյունքը՝ ուսումնասիրությունը. Նվիրված խալիֆայության մեջ մտնող երկրամասների աշխարհագրական նկարագրությանը:

Ալ-Մուկադասին և Իբն Ջաուֆալը տվել են Խսլամական կայսրության աշխարհագրական սահմանները, որոնց հիմնականում համընկնում են, թեև Իբն Ջաուֆալն ավելի մանրամասն նկարագրում հարևան պետություններին և ժողովուրդներին, որոնց հետ սահմանակցել է Խսլամական կայսրությունը:

Ալ-Մուկադասին նշում է, որ Խսլամական կայսրությունը ձգվում էր Արևելքից Կաշգարից, մինչև Սուս, Աստղանտյան օվկիանոս, Արևմուտքում: Նրա արևելյան մի ծայրից մինչև արևմտյան ծայրը տաս ամսվա ճանապարհ էր:

Իսկ զատ Իբն Ջաուֆալի, Խսլամական կայրությունը Արևելքում սահմանափակվում էր Հնդկաստանով և Պարսից ծոցով, Արևմուտքում՝ Սուլանի ժողովուրդներով, որոնց բնակվում էին Աստղանտյան օվկիանոսի ափերում, Ջուլսիստում նա սահմանակցում էր ռումների, այսինքն հույների երկրի, Դայաստանի, ալանների, Ջարրանի, Խազարների, ռուսների, բուղարների, սլավոնների, բուրքերի և Չինաստանի հետ, իսկ հարավում սահման էր ծառայում Պարսկական ծովը:

Արաբա–մուսուլմանական աշխարհագրագետները հատուկ ուշադրություն էին դարձնում ճանապարհների նկարագրությանը. որը կարևոր էր առևտրական կապերի և ուխտագնացության առումով: Նկարագրվում էին ինչպես խալիֆայության ամբողջ տարածքում, այնպես էլ նրանից դուրս գտնվող կարևորագույն ճանապարհներն ու ուղիները, նրանց ոելյեֆային առնաձնահատկությունները, ապահովության նակարդակը և այլն: Նման բնույթի աշխատություն է Իբն Խուրդադրիի (մահ. 912 թ.) «ճանապարհորդությունների և պետությունների գիրքը»: Նույն վերնագրով, հականարար այդպիսի մատենաշար է գոյություն ու-

նեցել, 950 թ. իր աշխատությունն է ավարտում ալ-Խստախրին: Սակայն ի տարբերություն իրն Խուրոյադրիի աշխատության, այս վերջինը յուրաքանչյուր երկրի համար պարունակում էր համապատասխան քարտեզ, և այն էլ գունավոր:

Գրվում էին նաև հատուկ աշխատություններ խալիֆայության հարևան երկրների մասին, ինչպես Բիրունիի գրքին պատկանող «Ղնդկաստան» ուսումնասիրությունը: Այս վերջինը թելաղոված էր Ղնդկաստանի դեմ դազնեսիների նախապատրաստվող հարձակումով, որի համար անհրաժեշտ էին համապատասխան գիտելիքներ և տեղեկություններ Ղնդկաստանի մասին:

Եվ, վերջապես, չենք կարող չիշշատակել արաբական ամենահեղինակավոր աշխարհագրագետներից մեկին, ծագումով հույն Յակուտ ալ-Յամագիին (1179–1229 թթ.) Նա հեղինակն է «Մուաջամ ալ-Բուլղան»՝ «Երկրների բառարան» (կամ Յանրագիտարան) աշխատության: Նրա արժեքը կայանում է նրանում, որ նա պարունակում է աշխարհագրության վերաբերյալ մինչև XIII դարի սկիզբները հայտնի գիտելիքները, մի կողմից, և նրա հավաստի լինելը, մյուս կողմից:

«Մուաջամ ալ-Բուլղան» բազմաթիվ էջեր նվիրված են Յայատանին, ուր այցելել էր նրա հեղինակը և տեսածը գրի առել: Այդ հատվածները բարզմանվել և հրատարակվել են հայերեն լեզվով:

Միջնադարում, արաբա-մուսուլմանական միջավայրում, ծևավորվեց գիտնականի հավաքական կերպարը, նրա աշխատանքին, մտածելակերպին և անճնական կյանքին բնորոշ վեհ և վսես գծերը: X դարի պատմաբան և աշխարհագրագետ ալ-Մուկաղասին ահա թե ինչպես է գծել գիտնականի պատկերը և գիտնական դառնալու ուղին: «Գիտությունն իր դեմքը բացում է միայն նրան, ով իրեն ամբողջապես նվիրում է նրան մաքուր բանականությամբ և հստակ հասկացողությամբ, և, աղերսելով Ալլահի օգնությունն իրեն, ի մի է հավաքում իր բանականության ամրող ուժը, նա, ով քշտելով քենը, աղթուն է մնում ամրող գիշերը հոգնարեկ քուն ծգուումից, նա, ով իր նպատակին է հասնում, քայլ առ քայլ բարձրանում գիտելիքների գագաթին, ով չի բռնաբարում գիտությունն աննպատակ նահանջներով և անմիտ գրոհներով ով չի բափառում գիտության մեջ բախտաբերի, ինչպես կույր ուղտը խավարի մեջ: Նա իրավունք չունի իրեն քույլ տալ վատ սովորություններ և քույլ տալ իր բնակորությանը գայթակղեցնել իրեն, պետք է խուսափի հասարակությունից, հրաժարվի վեճերից և չլինի կովարար, հայացը չթեքի

ծշմարտության խորքերից, տարբերի կասկածելին հավաստիից, իսկականը կեղծից և մշտապես պահպանի առողջ բանականությունը»:

Կարծում ենք իիանալի է ասված: Գիտնականի այս կողեքսը, սահմանված տասնմեկ դար առաջ, միանգամայն ընդունելի և կիրառելի է նաև մեր օրերի համար:

Արևելքի պատմական փորձը վկայում է, որ բնակ էլ սակավ բացառություն չեն եղել նրանք, ովքեր խստագույնս հետևել են այս կողեքսին և հավատարին մնացել նրա պահանջներին, որը գիտնականից պահնջում էր մեծ զոհողություններ:

Արարական տարեգրություններում նշվում է, որ X դարի խոշորագույն պատմաբան արթարարին մեկ անգամ ստիպված է լինում «Վաճառել իր շապիկի թեսքը հաց գնելու և իր գոյությունը պահպանելու համար»: Եակուտ ալ-Դամավին գրի է առել և մեզ հասցել մի հուզիչ պատմություն այն մասին, թե ինչպես Բաղդադում բնակվող մի գիտնական, որը քաղցում էր և որի դուստրն, ի հավելում, հիվանդանում է, սակայն նա տատանվում է վաճառել իր հարուստ գրադարանի գրքերից անգամ մեկը:

Գիտնականները խալիֆայությունում ունեցել են մեծ հեղինակություն, վայելել են մեծ հարգանք և սեր, այդ թվում և հասարակ ժողովունից կողմից: Ի հաստատումն այս տեսակետի, արժե մեջբերել Ա. Մեցի «Սուսուլմանական վերածնունդը» գրքից մի հատված, որը բնորոշ է եղել մուսուլմանական Արևելքին, որը շվեյցարացի արևելագետը համարում է «դրախտ գիտնականների համար»:

Թեև այդտեղ կա չափազանցություն, այդուհանդերձ, արտակարծ հարգալից վերաբերունքը Արևելքում գիտնականի նկատմամբ կասկածից դուրս է: Ա. Մեցը, հենվելով արարական մի աղբյուրի վրա, նշում է, որ XI դարում մի հայտնի ուլեմ-աստվածաբանի՝ Պարսկաստան ուղևորության ընթացքում, ամենուր մարդիկ իրենց կանանց և երեխաների հետ միասին դուրս էին գալիս ընդառաջ, կպնում նրա հագուստի թևերին և իրենց հետ տանում էին նրա մաշիկների փոշին որպես դեղ: Վաճառականները և արհեստավորները նրան ուղեկցող ամբոխին նետում էին քաղցրավենիքներ, մրգեր, հագուստներ, մորթիներ, իսկ կոշկակարները ամբոխի գլխին թափում էին կոշիկներ: Իսկ սուֆի կամայք նրան նետում էին վարդի պսակներ, որպեսզի ուղեմը ծեռք տար նրանց և իրենք երանություն ստանային:

## III. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ

### 1. Գրականություն. պոեզիա և արձակ

Զգալի փոփոխություններ և նորամուծություններ տեղի ունեցան նաև գրականության ասպարեզում, մասնավորապես պոեզիայի: Եթե մինչև VII դարը, մինչև իսլամի ընդունումը, գրականության մեջ տիրապետող բանավոր պոեզիան էր, որը դեռ որոշ ժամանակ ևս պահպանեց իր դիրքերը, ապա Աբբասյանների շրջանում, VIII դարից սկսած, նա իր տեղը զիջում է գրավոր պոեզիային:

Տեղի է ունենում մի կարևոր փոփոխություն ևս: Մինչև Աբբասյանները, գրականությունն իրոք արարական էր, քանի որ նրա մեջ տիրապետում էին ծագումով արար հեղինակները: Աբբասյանների տիրապետության շրջանում, ինչպես նշվել է, խալիֆայությունն արարականից վերածվեց իսլամականի: Անեց եթիկապես ոչ արարների դերը պետական, քաղաքական, տնտեսական և ռազմական կյանքում: Նույնպիսի փոփոխություն տեղի ունեցավ նաև գրականության և արվեստի բնագավառում: Արաբների հետ միասին արվեստը զարգացնում են նաև ծագումով պարսիկ, հույն, հայ, ասորի և այլ հեղինակները: Նրանք իրենց մշակույթն են ներմուծում արվեստի ընդհանուր գանձարանը, որի հետևանքով արարական մշակույթը դադարում է գուտ արարական լինելուց, և վերածվում է արարա-իսլամականի:

Սակայն տեղի է ունենում մի հետաքրքիր երևույթ: Բանավորից գրավոր պոեզիային անցնելուց և արարական պոեզիան իսլամականի վերածվելուց հետո էլ, ընդհուպ մինչև XVIII դարը, պահպանվում են նախահսլամական կամ ջահիլիյայի շրջանի պոեզիայի կանոնները, որին հավատարիմ են մնում մուսուլմանական աշխարհի քանաստեղծները: Արար թեղվինների ստեղծած ասքերը, հերոսապատումները, հանգավորված և չափածոյի վերածված հետաքրքրաշարժ պատմությունները, որոնք աչքի էին ընկնում իրենց անկեղծությամբ և աննիշականությամբ, ծննդի հղկվածությամբ, իսլամական գրականության ծնավորումից հետո դառնում են մուսուլմանական մշակույթի տարրերից մեկը և զգալի ազդեցություն գործում պոետների մի քանի սերունդների, նրանց ստեղծած պոեզիայի վրա, որը մասնագետ-գրականագետների կարծիքով, դարեր շարունակ շնչում էր անապատի ոգով:

Բոլորը չէին, իհարկե, որ իհացած էին ջահիլիյայի շրջանի պոեմիայի ներխուժումից համահայանական մշակույթը: Իրենց դժգոհությունը չէին թաքցնում մասնավորապես պարսիկ բանաստեղծները: Զահիլիյայի շրջանի պոեզիան, նրա արխայիկ ծննդը ու պատկերները մերժելու և ծաղրելու մեջ հատկապես աչքի էր ընկնում պարսիկ բանաստեղծ Բաշշահը իրն Բուրդը (714–783 թթ.), որը չէր խորշում ծանակել «Վայրենի թեղվիններին» և նրանց ստեղծած բանաստեղծությունները, և, հավանաբար այդ պատճառով 783 թ. Արքասյան խալիֆա ալ-Մահդիի կողմից դատապարտվեց մահվան: Նա կույր էր և ընդհանրապես ցածր կարծիքի էր արարական արվեստի մասին, փառաբանելով այն ամենը, ինչ որ իրանական էր, այդ թվում և քաղաքականության ասպարեզում: Նրան է պատկանում թևավոր այն արտահայտությունը, որ ինքը փառք է տալիս Ալլահին, որ կույր է «և այդպիսով ես կարիք չունեմ տեսնելու այն, ինչ ես ատում եմ»:

Իբն Բուրդը համարվում է պոետական նոր ոճի և, այսպես կոչված, «նոր դպրոցի» առաջին խոշոր ներկայացուցիչը: Այդ դպրոցի մյուս ներկայացուցիչն էր ծագումով կիսապարսիկ-կիսաարաբ բանաստեղծ Արու Նուվասը (մահ. 810 թ), որը գովերգում էր կյանքի վայելքները գեղոնատական ընկալումներով, և որի պոեզիան սահմանակցում էր էրոտիկային: Նա խալիֆաներ Դարուն առ-Ռաշիդի և ալ-Մահմինի կազմակերպած գիշերային խնջույքների և գինարբուքների մշտական մասնակիցն ու փառաբանողն էր: Պատահական չէ, որ նրա գագելները, կարծ պոեմները ծոներգներ էին, նվիրված գինուն և սիրո գգացմունքներին:

Արու Նուվասը միակը չէր, որ գովերգում էր արքունիքի ցոփի կյանքը, աշխարհիկ վայելքները, քաղաքային կյանքի հրապուրանքները, մարդու մարմնական հաճույքներին հագուրդ տալու պահանջը: Սակայն հարցը դա չէ, այլ այն, որ այդ, այսպես կոչված, «նորացված» պոեզիան ավելի ու ավելի էր թեմատիկ առումով գրականությունից դուրս մղում անապատի, թեղվինական կյանքի, նրան բնորոշ ասկետիզմի նկարագրությունը, առաջացնելով կարոտախտ անցած-գնացած «փառավոր» ու «հերոսական» օրերի համար: Դենց նման զգացմունքների արտահայտիչը դարձավ Աթայիահը (748–828 թթ.): Նա պատկանում էր արարական հայտնի անազահ ցեղին, մեծացել և դաստիարակվել էր թեղվիններին բնորոշ խիստ ու պարզ միջավայրում: Դայտնվելով Բաղդադում, Դարուն առ-Ռաշիդի արքունիքում, տեսնելով արքունիքի բարքերը, ամրող հոգով ընդգառում է որա դեմ և դատապարտում Բաղդադում տիրող

շվայտ կյանքը: Նա իր պոեմներում ասկետիզմի կոչ էր անում, անծնական կյանքում ցույց տալով նման ապրելակերա:

Մեծ գարգացում է ստանում ջատագովական պոեզիան, որն իր գագաթնակետին է հասնում X դարի արաբական խոշոր բանաստեղծ Սուլթանարիի բանաստեղծական արվեստում: Ընդունված կարգի և սովորույթի համաձայն, բոլոր մեծ ու փոքր տիրակալներն իրենց շրջապատել էին բանաստեղծներով, որոնք փառաբանում էին իրենց հովանավորներին, նրանց առատաձեռնությունը, մեծահոգությունը, արարների հերոսական անցյալը, սիրանքները, հաղթանակները և այլն: Մութանաբին, ինչպես նաև Արու Թամնամը, Իբն ալ-Մութազզան և ուրիշներ, գովերգելով արաբների անցյալի փառքը և հերոսությունները, հմայվելով բեղվինական կյանքով և սովորություններով, իրենց ջատագովական պոեզիայով, կարծես թե, յուրահատուկ ծնով հակադրվում էին արաբների կողմից նվաճված ու իսլամ ընդունած ժողովուրդներին, նրանց կողմից ներմուծածին, և փորձում ցույց տալ արաբների ու արաբականի գերազանցությունը նրանց նկատմամբ:

Իր արվեստով ու փիլիսոփայությամբ, կյանքի ու արվեստի նկատմամբ իր հայացքներով, իր ժամանակակիցներից տարբերվում էր համճարեն Արու Ալա ալ-Մաարին (973–1057 թթ.): Նա իր ստեղծագործություններում փորձում էր ըմբռնել կյանքի և մահվան իմաստը, բացահայտել նրանց գաղտնիքը, մտորում էր հավերժական այնպիսի կատեգորիաների մասին, ինչպես չարն ու բարին, մարդկային բարոյական արժեքները: Նա իրեն տանջող այդ հարցերը քննարկում էր տարբեր կրոնա-փիլիսոփայական համակարգերի համատեքստում, չղանալով, սակայն, ոչ մեկի պատանդը: Այդ բոլորի արդյունքը լինում է այն, որ ալ-Մաարին չի կարողանում համակերպվել հասարակությունուն տիրող բարոյական, հոգեբանական իրավիճակի հետ, որը փակուղի էր դարձել մարդու համար: Նա հանգում է այն եզրակացության, որ նարդուն շրջապատող աշխարհը թշնամի է նրան: Մեծ բանաստեղծն ըստ էլության ելք չի տեսնում: Այստեղից էլ հիմասթափության և հուսահատության այն խորը զգացումը, որ համակել էր նրան, նրա արվեստին ու փիլիսոփայական մտորումներին:

Գրական բազմազան ուղղությունների կողքին, X դարից հայտնվում և իր ուրուց տեղում է գրավում սուֆիական պոեզիան, որը ներծծված էր միստիցիզմով: Այդ պոեզիայի յուրահատուկ գծերից մեկը ենթատեքստին մեծ տեղ հատկացնելը էր: Անգամ քնարական-սիրային բա-

նաստեղծությունները կառուցված էին միստիկական ենթատեքստի վրա և պարունակում էին միստիկական խորհրդանշ—սիմվոլներ: Սուֆի պետք տառապում էր Աստծուն միանալու, նրա հետ ծուլվելու մտատանջությամբ: Ուստի սիրո արթեցումը, որ գովերգում էին սուֆիական պուտները, դա արթեցում էր ոչ թե սովորական իմաստով, այլ սիրո արթեցում առ Աստված: Այս ուղղության հայտնի ներկայացուցիչներն էին XII–XIII դարերի սուֆիներ Իրն ալ–Ֆարիդը և Իրն ալ–Արարին:

Արարների, ընդհանրապես Արևելքի ժողովուրդների մոտ, պոեզիան մշտապես զարգացման ավելի բարձր մակարդակի վրա է գտնվել, քան արծակը: Դա, հավանաբար, ունի իր բացատրությունը: Բայց չցանկանալով խորանալ դրա պատճառների մեջ, այստեղ ցանկանում ենք նշել, որ VIII–IX դարերից զգալի զարգացում է ապրում նաև արծակը: Ինչպես և պոեզիայի դեպքում, բանավոր արծակին փոխարինելու է զալիս գրավոր արծակը, որտեղ տիրապետող էր հանդիսանում պատմավածքի, նովելի, առակի, իմաստաբանական ու բարոյականացման ասացվածքի ժամանքը: Լայն տարածում են ստանում քաղաքային կյանքի տարբեր կողմերին նվիրված, շատ հաճախ երգիծական կամ զվարճալի բնույթի պատմությունները:

Զգալի տեղ է հատկացվում թարգմանչական գրականությանը: Արաբերենի են թարգմանվում այլ ժողովուրդների արծակ գրականության լավագույն նմուշները: Նշենք դրանցից «Կալիլա և Դիմնա» հենդկական թարոյախոսական պատմվածքների թարգմանությունը՝ պարսկերենից, որ իրագործեց արաբ գրող Իրն ալ–Մուկաֆան VIII դարում: Նա այդ թարգմանությունը կատարել էր այնպիսի վարպետությամբ, որ արաբալեզու ընթերցողն այն ընկալում էր որպես իր սեփականը:

Արծակ գրականությունը, բացի գեղարվեստականից, հետապնդում էր նաև կոնկրետ այլ նպատակներ, առաջին հերթին դաստիարակչական և խորհրդատվական: Նրանցում խորհուրդ էր տրվում, երեսն այլարանորեն, խալիֆային, սուլթանին կամ եմիրին, այսինքն բոլոր նրանց, ում ծեռօքում էր կենտրոնացված իշխանությունը, և ովքեր տնօրինում էին միլիոնավոր մարդկանց ճակատագիրը, լինել իմաստուն, արդարամիտ, բարի և մարդասեր: Նրանցում խարազանվում և ծաղրի էին ենթարկվում մարդկային բնավորության բացասական գծերը՝ ազահությունը, ժլատությունը, ստախոսությունը, խարերայությունը, նախանձը և այլն: Այդ առումով հարկ է նշել ալ–Զահիդի (775–868 թթ.) «Գիրք Ժլատության մասին» հիմնալի ժողովածում, որը հետաքրքրա-

շարժ պատմվածքներ և անեկդոտներ է պարունակում Խորասանի, Բասրայի և խալիֆայության այլ շրջանների բնակչության կյանքից: Նա ուներ նաև հատուկ ենթատեքստ: Ալ-Զահիզը քննադատում էր իրանցիների ժլատությունը և նրանց բացասական վերաբերմունքը արար թեղվինների առատաձեռնության նկատմամբ, կանգնելով վերջիններիս պաշտպանության դիրքերում, չհամաձայնվելով թեղվինական առատաձեռնության և հյուրընկալության մեջ բարբարոսության դրսերում տեսնելու իրանցինների միտումնավորության հետ:

Նույն բնույթի էր Աբրու Ալի աթ-Մահունիի (940–994 թթ.) «Զվարճալի պատմություններ»—ի շարքը, որտեղ տրված էին խալիֆաների, բարձրաստիճան պաշտոնյաների, հասարակության ցածր խավերի կյանքից վերցրած իրական պատմություններ, ինչպես նաև եզիզուական հեղինակ աս-Սույութի (1445–1505 թթ.) պատմվածքները:

Այս շրջանում ծնավորվում է մաքանահի ժանրը, որը հանդիսանում էր գրական նորություն: Դա իրենից ներկայացնում էր դրամատիկական էպիգոնների և պատմվածքների հավաքածու, որի ժանանակ հեղինակը պատմվածքի սուբստանցիան ենթարկում էր ծեփն և անում ամեն ինչ իր տաղանդը դրսողելու համար: Շատերը մաքանահի բնորոշ գիծը համարում էին նրբաճաշակ ծնը և հոխորական անեկորությունը: Սակայն ոչ բոլորն են համաձայն ննան բնորոշման հետ: Այս վերջիններս առանձնացնում են ալ-Ճարիրի (1054–1122 թթ.) մաքանահների ժողովածուն, Մաքանաթը, որը համարվում էր արաբական լեզվի գանձարանը և դարեր շարունակ ամենաընթերցվող գրքերից մեկը:

Ժանրային առումով արծակի մեջ նորություն էր նաև վարզագրությունը՝ սիրան, որը մտնում էր ժողովրդական գրականություն հասկացողության մեջ: Այդ ժանրի երևան գալը ծնունդ տվեց ասմունքողների մի ամբողջ դասի, որոնք ցաղաքների իրապարակներում արտասանում էին սիրաններից ընտիր հատվածներ, շատ հաճախ երաժշտության ուղեկցությամբ:

Շետագա զարգացում է ստանում աշխարհական «Ճազար ու մի գիշեր» պատմվածաշարը, իր մեջ ներառնելով նորանոր շերտեր, հարստանալով նորանոր դրվագներով: Նրա արաբական տարբերակը հիմնականում ծնավորվում է X դարում: Եվ քանի որ դա տեղի է ունենում Իրաքում, ուստի և նրա գործողությունները կատարվում են Բաղդադում և իրաքյան այլ քաղաքներում, որի մասնակիցներից է նաև խալիֆա Ճարուն առ-Ռաշիդը: XII դարից «Ճազար ու մի գիշերը» հարստանում է ե-

գիպտական նյութի հաշվին, իսկ XIV–XVI դարերում արդեն նրա հիմնական գործող անձերն են դառնում եզիպտացի հասարակ մարդիկ, որոնք շնորհիվ իրենց հմտության, խորամանկության և ճարպկության, հաղթահարում են կյանքի դժվարությունները, հաջողությամբ դուրս գալիս անելանելի բվացող իրադրություններից և, ի վերջո հասնում բաղձալի նպատակի՝ կամ հարստության, կամ էլ բարձր պաշտոնի, հաճախ նաև թե՛ մեկին, և թե՛ մյուսին:

## 2. Արվեստ

Արվեստը, ի տարբերություն կրթության, գիտության և գրականության, մեծ վերեւը չապրեց:

Եթե վերցնելու լինենք ճարտարապետությունը, ապա այդ դարչորանից համարյա ոչինչ չի հասել, թեն գրավոր աղբյուրների համաձայն կառուցվել են խալիֆայական և սուլթանական պալատներ, մզկիթներ և այլ շինություններ: Կերցնենք թեկուզ Բաղրամյա, որտեղ Աբրասյան խալիֆաները, ըստ գրավոր աղբյուրների, կառուցել են ժամանակին մեծ արձագանք գտած Աննահության (կամ Յավերժության) պալատը, Բաղրամյի Ոսկյա դարպասը, պալատական կառուցեներ Սամարդյայում, Բաղրամյաների պալատները ալ–Ճամանաշիյայում և այլն, որոնց հետքն անգամ չի մնացել, կամ մեզ են հասել միայն նրանց փլատակները:

Դայտնի է, որ դրանք կառուցվել են ասիական ոճով, փոխառնված պարսիկներից, երբեմն նաև հնդկացիներից, ի տարբերություն Օմայյան շրջանի կառուցեների, որոնք ակնհայտորեն կրուն էին բյուզանդական, մասսամբ նաև սիրիական ճարտարապետական արվեստի ակնհայտ ազդեցությունը: Նրանցում կիրառվել է Սասանյան Իրանում ծնավորված և այդ դարաշրջանի մուսուլմանական աշխարհի համար դասական դարձած ոճ՝ ծավածիր զմբեթ, կիսաշրջանաձև կամար, պարուրագիծ աշտարակներ, ատամնավոր պարիսպներ, ջնարակված կղմինդր, մետաղապատ հատակ և այլն: Սասնագետների կարծիքով Աբրասյան ճարտարապետությունը խարսխված է եղել այդ սկզբունքների վրա:

Միջնադարյան արաբա–մուսուլմանական արվեստում նկատելի տեղ է գրավել քանդակագործությունը և գեղանկարչությունը: Բաղրամի հիմնադիր խալիֆա ալ–Սանսուրի կառուցած պալատի գմբեթի վրա դրվել էր հեծյալի քանդակը: Քանդակներով իրենց պալատները, անգամ նավերը զարդարելով իրապուրված էին համարյա բոլոր խալիֆաները:

Այսպես, օրինակ, խալիֆա ալ-Ամինը, որը սիրում էր նավարկել Տիգրիսի, իր նավակներին տալիս էր առյուծի, արծվի և կամ ղելֆինի կերպարանք: Երբեմն դիմում էին զարմանահրաշ քայլերի, կանգ չառնելով անգամ ֆանտաստիկ ծախսերի առջև: Դրա վառ օրինակն է հանդիսանում խալիֆա Մութափիրի պալատում ուսկուց և արծաթից պատրաստված ծառը: Դրան բնականություն հաղորդելու նպատակով, խալիֆան ծառը դրել էր դրա համար հատուկ պատրաստված մի մեծ ջրամբարում, որի շուրջը գտնվում էին տասնհինգ զինված հեծյալների արձանները:

Ինչ վերաբերում է նկարչությանը, ապա նա ևս ուներ իր դերակատարումը պալատների գեղարվեստական ծնավորման մեջ: Խալիֆա Մութափիրը (IX դար) Սանարրայի իր պալատի պատերը նկարազարդել էր մերկ կանանց և որսի տեսարաններ պատկերող որմնանկարներով: Իրավացիորեն ենթադրվում է, որ դրա կատարողը կամ կատարողները եղել են քրիստոնյաներ: Ընդհանրապես ընդունված է եղել շատ հաճախ գեղարվեստական գործերի կատարումը հանձնարարել քրիստոնյաների: Նրանց իրավիրելով հատկապես Բյուզանդիայից: Օրինակ, Մութափիրի խալիֆայի պալատը նրա իրավերով նկարազարդել են բյուզանդական վարպետները, որոնք այնքան ազատ են իրենց զգացել, որ իրենց նկարների մեջ մտցրել են անգամ քրիստոնեական եկեղեցիների և հոգևորականների պատկերներ:

Ուշագրավ է, որ նկարիչները փորձել են տալ Մուհամմադ մարգարեի դիմապատկերը: Դրանք թեև հազվադեպ են, բայց, այդուհանեղեք, վկայված են: Դա հաստատում է մի արաք ճանապարհորդ IX դարի վերջերին, որը, իբր, տեսել է մարգարեի նկարը չինական արքունիքում: Շատ նկարիչներ պատկերել են Բուրակին, մարգարեի ծիռուն, որի վրա նստած նա համբարձվել է առ Ալլահ: Դրանց վրա ոճաբանական առումով խիստ զգացվում է պարսկական, բյուզանդական և ասորական նկարչական արվեստի ազդեցությունը:

XIII դարից սկսվում է զարգանալ արարա-մուսուլմանական մանրանկարչությունը: Սուսուլման մանրանկարիչները նկարազարդում են ծեռագրերը: Դայտնի են «Կալիլա և Դիմնայի», «Մաքամաթի», «ալ-Աղանիի» և այլ ծեռագրերի նկարազարդումները, որոնք, անկասկած, կրում են քրիստոնեական մանրանկարչության ազդեցությունը: Մուսուլման մանրանկարիչների մեջ իրենց բարձր արվեստով առանձնանում էին պարսիկ մանրանկարիչները:

Զգալի առաջընթաց է ապրել դեկորատիվ-կիրառական արվեստը, հատկապես զորգագործությունը, իյուսվածքեղենի և կտորեղենի արտադրությունը, խեցեղենը, մետաղյա իրերի պատրաստումը և այլն:

VIII–IX դարերից արվեստի ինքնուրույն ճյուղ է դառնում գեղագրություն՝ կալիգրաֆիան, որը խրախուսվում էր Կորանի կողմից, քանի որ նա գեղագարդում էր Ալլահի խոսքը: Ոչ միայն խալիֆաները և սուլթանները, այլև յուրաքանչյուր մեծ թե փոքր իշխող իր համար պատիվ և պարտադիր էր համարուն ունենալ գեղագրի կողմից պատճենավորված Կորան, առանց որի նա չէր կարող ակնկալել կրոնական բարձր հեղինակություն:

Արվեստի այս ճյուղը, քարերախտաբար, ունեցել է մի կարևոր յուրահատկություն: Նրանում նշված են կատարողների, կրոնական, պատճենական և գրական երկերի գրագիրների կամ պատճենահանների անունները, ուստի և մենք գիտենք, թե ովքեր են եղել գեղագիր հեղինակները: Դայտնի են, օրինակ, ալ-Ռայհանի (մահ. 834 թ.), Իբն Սուլյահի (886–940 թթ.), Ֆակուտ ալ-Մուստահմիի (մահ. 1032 թ.) և այլոց անունները, ինչը, ցավոք սրտի, չի կարելի ասել ճարտարապետների և նկարիչների մասին:


Մեզ մնում է ավելացնել, որ հետագայում, գրքի գործի և գեղագրության զարգացումը առաջ բերեց գրքի արվեստի կատարելագործում, կապված նրա ծնավորման, գույնների օգտագործման, նախշազարդման, երեսապատման և կազմի հետ: Հատ հաճախ գրքերը կազմելիս, օգտագործում էին թանկարժեք մետաղներ, ոսկեզօծում կամ արծաթապատում էին նրանք, որոնք իսկական արվեստի գործեր էին դառնում:

Արբայան և հետաքրասյան միջնադարյան գրականությունը և արվեստն իր ժամրային քազմազանությամբ, հանդիսանում է արաբա-մուսուլմանական մշակութի ամենահնգնատիպ դրսնորումներից մեկը և իր ուրույն տեղը գրավում համաշխարհային քաղաքակրթության մեջ:

### Վերջ առաջին հակոռի

## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

### I. ՄՈՒՋԱՍՏԱԴԻ ՏՈՂՄԱԾԱՂԸ



### II. ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ԲԱՐԵՊԱՀԸ (ՌԴԴԱՓԱՌ) ԽԱԼԻՖԱՆՆԵՐԸ

1. Արօւ Բաքր	.632–634
2. Օմար	.634–644
3. Օսման	.644–654
4. Ալի	.654–661

### III. ՕՄԱՅՅԱՆ ԽԱԼԻՖԱՆՆԵՐԸ

**661–750 թթ.**

1. Մուավիա I	. . . . . 661–680
2. Յազիդ I . . .	. . . . . 680–683
3. Մուավիա II	. . . . . 683

4. Մարգան I . . . . .	683-685
5. Արդ ալ-Մալիք	685-705
6. Ալ-Կալիդ I	705-715
7. Սուլեյման . . . . .	715-717
8. Օմար II	717-720
9. Յազիդ II	720-724
10. Յիշամ . . . . .	724-743
11. Ալ-Կալիդ II	743-744
12. Յազիդ III	744
13. Իբրահիմ	744
14. Մարգան II	744-750

#### IV. ԱՊՐԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՆԵՐԸ

750-1258 թթ.

1. Արու ալ-Արրաս աս-Սաֆահ	750-754
2. Արու Յաֆար ալ-Մանսուր	754-775
3. Ալ-Սահիդ . . . . .	775-785
4. Ալ-Յաղի . . . . .	785-786
5. Դարուլ առ-Ռաշիդ . . . . .	786-809
6. Ալ-Ամին . . . . .	809-813
7. Ալ-Մամուն . . . . .	813-833
8. Ալ-Սուլթան	833-842
9. Ալ-Կասիկ . . . . .	842-847
10. Ալ-Մութավաքիլ	847-861
11. Ալ-Մումբասիր	861-862
12. Ալ-Սուլթան	862-886
13. Ալ-Մութազա	886-889
14. Ալ-Սուլթանի	889-870
15. Ալ-Մութամիդ	870-892
16. Ալ-Մութատիդ	892-902
17. Ալ-Մուկրաֆի	902-908
18. Ալ-Մուկրատիր	908-932
19. Ալ-Կահիր	932-934
20. Աբ-Ռադի . . . . .	934-940
21. Ալ-Մութթակի . . . . .	940-944
22. Ալ-Մուսալակի	944-946
23. Ալ-Մուտի	946-974
24. Աբ-Թափ	974-991
25. Ալ-Կաղիր . . . . .	991-1031
26. Ալ-Կահմ	1031-1075

27. Ալ-Մուստաքի	.1075-1094
28. Ալ-Մուստազհիր	.1094-1118
29. Ալ-Մուսթաշիդ . . . . .	.1118-1135
30. Ալ-Ռաշիդ . . . . .	.1135-1136
31. Ալ-Մուկտաֆի	.1136-1160
32. Ալ-Մուստանցիդ	.1160-1170
33. Ալ-Մուստաղի	.1170-1180
34. Ան-Խասիր	.1180-1225
35. Ազ-Զահիր	.1225-1226
36. Ալ-Մուսթանսիր	.1226-1242
37. Ալ-Մուսթասիմ	.1242-1258

**V. ՏԱԱՆԵՐԿՈՒՄ ԱԼԻԱԿԱՆ-ԾԻՎԿԱՆ ԽԱԱՆԵՐԸ  
661-878 թթ.**

1. Ալի . . . . .	(մահ. 661 թ.)
2. Ալ-Ճասան . . . . .	(մահ. 669 թ.)
3. Ալ-Շուսեյն . . . . .	(մահ. 680 թ.)
4. Ալի Զայն ալ-Աբիդին . . . . .	(մահ. 712 թ.)
5. Մուհամմադ ալ-Քակիր . . . . .	(մահ. 731 թ.)
6. Զաֆար աս-Սադիկ համարլ . . . . .	(մահ. 765 թ.) (մահ. 760 թ.)
7. Մուսա ալ-Կազին . . . . .	(մահ. 799 թ.)
8. Ալի ալ-Ռիզա . . . . .	(մահ. 818 թ.)
9. Մուհամմադ ալ-Զավլադ . . . . .	(մահ. 835 թ.)
10. Ալի ալ-Ճաղի . . . . .	(մահ. 868 թ.)
11. Ալ-Ճասան ալ-Ասկարի . . . . .	(մահ. 874 թ.)
12. Մուհամմադ ալ-Մունթազար (ալ-Մահեդի) . . . . .	(անհայտացել է 878 թ.)

**VI. VII-IX ԴԱՐՅՈՒ ՀԱՅ ՊԱՏՐԻԿ-ԻՇԽԱԱՆԵՐԸ  
639-885 թթ.**

1. Թեոդորոս Ռշտունի . . . . .	.639-654
2. Ջամազասպ Մամիկոնյան . . . . .	.654-661
3. Գրիգոր Մամիկոնյան . . . . .	.661-685
4. Աշոտ Բագրատունի . . . . .	.685-689
5. Ներսեհ Կամսարական . . . . .	.689-693
6. Սմբատ Բագրատունի (առաջին անագամ) . . . . .	.693-701
7. Սմբատ Բագրատունի . . . . .	.701/703-726
8. Աշոտ Բագրատունի . . . . .	.732-749

9. Մուշեղ Սամիկոնյան	. . . . . 749-753
10. Սահակ Բագրատունի	. . . . . 753-770
11. Սմբատ Բագրատունի	. . . . . 770-775
12. Աշոտ Բագրատունի	. . . . . 775-781
13. Տաճատ Անձեսացի	. . . . . 781-785
14. Աշոտ Մսակիք Բագրատունի	. . . . . 790-826
15. Բագրարատ Բագրատունի, իշխանաց իշխան	. . . . . 826-851
16. Սմբատ Բագրատունի	. . . . . 851-855
17. Աշոտ Բագրատունի	. . . . . 855-862
Աշոտ Բագրատունի, իշխանաց իշխան	. . . . . 862-885
Աշոտ Բագրատունի, Դայաստանի թագավոր	. . . . . 885-890

## VII. ՖԱԹԻՒՑԱՆ ԽԱՄԻՆԱՍԵՐԸ 909-1171

1. Ուրայդուլլահ ալ-Մահդի	. . . . . 909-934
2. Ալ-Կախմ . . .	. . . . . 934-946
3. Ալ-Մանսուր	. . . . . 946-952
4. Ալ-Մուլիզ	. . . . . 952-975
5. Ալ-Ազիզ . . . . .	. . . . . 975-996
6. Ալ-Դաքիմ . . . . .	. . . . . 996-1021
7. Ազ-Զահիր . . . . .	. . . . . 1021-1035
8. Ալ-Սուսրանսիր	. . . . . 1035-1094
9. Ալ-Սուսրալի	. . . . . 1094-1101
10. Ալ-Ամիր	. . . . . 1101-1130
11. Ալ-Ջաֆիզ	. . . . . 1130-1149
12. Ազ-Զահիր	. . . . . 1149-1154
13. Ալ-Ֆահիզ . . . . .	. . . . . 1154-1160
14. Ալ-Աղիդ	. . . . . 1160-1171

## VIII. ԱՅՅՈՒԹԱՆ ՍՈՒԼԱՄԱՆՆԵՐԸ 1169-1252

1. Սալահ ադ-Դին . . . . .	. . . . . 1169-1193
2. Ալ-Ազիզ Իմադ ադ-Դին . . . . .	. . . . . 1193-1198
3. Ալ-Մանսուր Սուլեյման . . . . .	. . . . . 1198-1199
4. Ալ-Աղջիլ I Սայֆ ադ-Դին	. . . . . 1199-1218
5. Ալ-Քամիլ Սուլեյման	. . . . . 1218-1238
6. Ալ-Աղջիլ II . . . . .	. . . . . 1238-1240
7. Աս-Սալիհ Նաջմ ադ-Դին	. . . . . 1240-1249+

Հաջար աղ-Դուր	.....	1249-1250
8. Ալ-Սուլազզամ Թուրան-Շահ	.....	1250
9. Ալ-Աշրաֆ ալ-Մուսա	.....	1250-1252

**IX. ԱՐԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՆԵՐԸ, ՈՐՈՆՉ ԴԱՏԱՑՎԵՑԻՆ  
ԿԱՐԻՔԵՐՈՒՄ ԽԱԼԻՖԱՑՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԻՑ ՀԵՏԸ  
1261-1517**

1. Ալ-Սուլաբանսիր	.....	1261
2. Ալ-Դաքիմ I	.....	1261-1302
3. Ալ-Սուլաբակչի I	.....	1302-1340
4. Ալ-Կասիկ I	.....	1340-1341
5. Ալ-Դաքիմ II	.....	1341-1352
6. Ալ-Սուլթադիդ I	.....	1352-1362
7. Ալ-Սուլթավակիլ I	.....	1362-1377
8. Ալ-Սուլթասիմ	.....	1377
9. Ալ-Սուլթավակիլ I	.....	1377-1383 (2-րդ անգամ)
10. Ալ-Կասիկ II	.....	1383-1386
11. Ալ-Սուլթասիմ	.....	1386-1389
12. Ալ-Մութավակիլ I	.....	1389-1406 (3-րդ անգամ)
13. Ալ-Սուլթահն	.....	1406-1414
14. Ալ-Մութադիդ II	.....	1414-1441
15. Ալ-Սուլթակչի II	.....	1441-1451
16. Ալ-Կահն	.....	1451-1455
17. Ալ-Սուլթանջիդ	.....	1455-1479
18. Ալ-Մութավակիլ II	.....	1479-1497
19. Ալ-Մութամսիկ	.....	1497-1508
20. Ալ-Մութավակիլ III	.....	1508-1516
21. Ալ-Մութամսիկ	.....	1516-1517 (2-րդ անգամ)
22. Ալ-Մութավակիլ III	.....	1517 (2-րդ անգամ)

**X. ՄԱՍՏՈՒԹ ՍՈՒԼԹԱՆՆԵՐԸ  
1250-1517**

**Ա ԲԱՐԲԻ ՄԱՍՏՈՒԹ ՍՈՒԼԹԱՆՆԵՐԸ  
1250-1362**

1. Այբակ	.....	1250-1257
2. Նուր աղ-Դին Ալի	.....	1257-1259
3. Կուտուզ	.....	1259-1260

4. Բայրարս .	.....	1260–1277
5. Բարակահ .	.....	1277–1279
6. Սալամիշ .	.....	1279
7. Կալավուն .	.....	1279–1290
8. Խալիլ ալ-Աշրաֆ .	.....	1290–1293
9. Ան-Նասիր .	.....	1293–1294, 1298–1308, 1309–1340
10. Կիտրուդա .	.....	1294–1296
11. Լաջին .	.....	1296–1298
12. Բայրարս II .	.....	1308–1309
13. Արու Բակր .	.....	1340–1341
14. Կուբուկ .	.....	1341–1342
15. Սիմադ .	.....	1342
16. Խամահիլ .	.....	1342–1345
17. Ալ-Զամիլ Շաքան .	.....	1345–1346
18. Ալ-Մոււզաֆֆար Ջաջի .	.....	1346–1347
19. Ալ-Ջասան .	.....	1347–1351, 1354–1361
20. Աս-Սալիհ .	.....	1351–1354
21. Մուհամմադ .	.....	1361–1363
22. Ալ-Աշրաֆ Շաքան .	.....	1363–1376
23. Ալա աղ-Դին Ալի .	.....	1376–1381
24. Աս-Սալիհ Ջաջի .	.....	1381–1382, 1389–1390

Բ. ԲՈՒՐԳԻ ՄԱՍԼՈՒՔ ՍՈՒԼԱՎԱՆԵՐԸ  
1382–1517

1. Ազ-Զահիր Սայֆ աղ-Դին Բարկուկ .	.....	1382–1398 (ընդհատվել է Բահրի Դայիի կողմից 1389–1390 թթ.):
2. Ան-Նասիր Նասիր աղ-Դին Ֆառազ .	.....	1398–1405
3. Ան-Նասիր Իզզադին Արդ ալ-Ազիզ .	.....	1405–1406
Ան-Նասիր Ֆառազ (Կրկին) .	.....	1406–1412
4. Կալիֆ ալ-Աղիլ ալ-Մուսբահն .	.....	1412
5. Ալ-Մուսայյադ Շեյխ .	.....	1412–1421
6. Ալ-Մոււզաֆֆար Սիմադ .	.....	1421
7. Ազ-Զահիր Սայֆ աղ-Դին Թաքար .	.....	1421
8. Աս-Սալիհ Նասիր աղ-Դին Մուհամմադ .	.....	1421–1422
9. Ալ-Աշրաֆ Սայֆ աղ-Դին Բարսրայ .	.....	1422–1438
10. Ալ-Ազիզ Ֆաֆար աղ-Դին Յուսուփ .	.....	1438
11. Ազ-Զահիր Սայֆ աղ-Դին Զակնակ .	.....	1438–1453
12. Ալ-Սամուլը Խախր աղ-Դին Օսման .	.....	1453
13. Ալ-Աշրաֆ Սայֆ աղ-Դին Ինալ .	.....	1453–1460

14. Ալ-Մուայյադ Ծիհար աղ-Դին Ահմադ . . . . .	.1460-1461
15. Ազ-Զահիր Սայֆ աղ-Դին Խուշկաղամ . . . . .	.1461-1467
16. Ազ-Զահիր Սայֆ աղ-Դին Յալբայ . . . . .	.1467
17. Ազ-Զահիր Թիմուրրուղա . . . . .	.1467-1468
18. Ալ-Աշրաֆ Սայֆ աղ-Դին Կախտ-քայ . . . . .	.1468-1495
19. Ան-Նասիր Մուհամմադ . . . . .	.1495-1498
20. Ազ-Զահիր Կանսոհ . . . . .	.1498-1499
21. Ալ-Աշրաֆ Զանբալատ . . . . .	.1499-1500
22. Ալ-Աշրաֆ Կանսոհ ալ-Ղաուրի . . . . .	.1500-1516
23. Ալ-Աշրաֆ Թուման-քեյ . . . . .	.1516-1517

## ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

### ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐ

- Արգար Դինգերող 72  
 Արդ ալ-Սալիք 98, 99, 105,  
     112, 115, 116, 123, 125,  
     136, 138, 139, 142, 144,  
     148  
 Արդ իրն Սարայակի 143  
 Արդ ալ-Ազիզ 118  
 Արդ ալ-Ռահման 169, 177  
 Արդ ալ-Ռուտաւիր. (Սու-  
     համնադի պապը) 26  
 Արդալլահ, (Սուհամմադի  
     հայրը) 25, 162, 382  
 Արդալլահ, (ռստիկան) 113,  
     114  
 Արդուլլա իրն Զուբեյր  
     96–99  
 Արդալա 169  
 Արդալլահ իրն Ալի 174  
 Արդալլահ իրն Թահիրի  
     223, 277, 278  
 Արրահամ 33, 69, 187  
 Արու Արդալլահ 303  
 Արու Արդալլահ ալ-Բատա-  
     նի 366  
 Արու Արդալլահ Սուհա-  
     մադ իրն Իրդիս աշ-  
     Ծաֆի 44  
 Արու ալ-Արրաս աս-Խաֆ-  
     ֆահ, Արու ալ-Արրաս  
     164–174, 179, 180, 183,  
     189, 194, 196, 219, 225,  
     242, 245, 248  
 Արու ալ-Ալա ալ-Մաարի  
     322

- Արու ալ-Կասիմ 26  
 Արու ալ-Կասիմ, (Ուրայդալ-  
     լահի որդի) 304  
 Արու Ալի ալ-Շուսայն Իրն  
     Սինա, նաև՝ Իրն Սինա,  
     366  
 Արու Ալի ար-Թակունի 378  
 Արու ալ-Ռույհան ալ-Քիրու-  
     նի, նաև՝ Քիրունի 366  
 Արու Բակր առ-Ռազի, 365  
 Արու Բարը, 26, 37, 51–54,  
     56, 91, 94, 139, 192  
 Արու Թանմամ, 376  
 Արու Դանիֆա, 43  
 Արու Դաշիմ, 185  
 Արու Ջարը, 223, 224  
 Արու Սուսա, 57  
 Արու Սուլյմ, 162, 164,  
     171, 172, 174, 175, 186,  
     187, 269  
 Արու Խաջիր, 230  
 Արու Խասր ալ-Ֆարարի,  
     նաև՝ Ֆարարի, 367  
 Արու Նուկսա, 375  
 Արու Շաքր Բուվայիի, 292  
 Արու Զաֆար. Արու Զաֆար  
     ալ-Սանութ, նաև՝ Սամ-  
     սուլ, 168, 172–186,  
     189, 194–196, 204, 206,  
     209, 213, 225, 227, 232,  
     234, 248, 249, 305, 379  
 Արու Սովիան, 27, 89, 98,  
     162, 220  
 Արու Սալամ ալ-Խալալ,  
     171

- Արու Սահի ալ-Զաննարի,  
     300  
 Արու Տայիր, 26, 162, 163  
 Արու Ֆիդա, 70  
 Սիամ, 12, 187  
 Սիիդ, 311, 329, 331  
 Սիրամելիք, 66  
 Սիրու ադ-Դավլա, 295, 296,  
     359  
 Ազարիյա Վիկոտր, 87, 88  
 Ազիզ, 306, 335, 340, 360  
 Աքայիա, 375  
 Ալա աղ-Դին Սուհամմադ,  
     318, 317  
 Աղավեյսան, 78  
 Ալի, նաև՝ Ալի իրն Արի Տա-  
     լիր, 38–40, 52, 55–57,  
     62, 89–92, 94, 96, 101,  
     102, 143, 157, 162, 163,  
     167, 170, 174, 176, 179,  
     185, 186, 239, 240, 267,  
     272, 292, 293, 298, 303,  
     304, 316  
 Ալի ալ-Աստուդ, 369  
 Ալի ար-Թարարի, թժկա-  
     պետ, 364, 369, 370  
 Ալի իրն Սուհամմադ, 288  
 Ալի իրն Թակիա ալ-Արծանի,  
     288  
 Ալի Արսլան, 313, 314, 358  
 Ախսուլ, 94, 141, 142  
 Ալյուա, 342  
 Ահմադ իրն Թայֆուրի, 368  
 Ահմադ իրն Թուլուն,  
     274–276  
 Ահմադ իրն Քանբալ, 45

- Ահմադ Սուլիկ աղ-Դավթա, 293, 295  
 Ահմադ Ներզանի, 366  
 Աղյարիներ, 252, 253, 273, 274, 302  
 Ամալդիկ I, 328, 329  
 Ամառունի Ծաղկու, 78  
 Ամատունիներ, 78, 117, 231, 233  
 Ամին, 261–266, 277, 375, 380  
 Ամինա, 25  
 Ամիր, 308, 309  
 Ամք. 61  
 Ամր աս-Սաֆֆար, 381  
 Ամր իրն ալ-Աս, 61  
 Այրակ 342, 343  
 Այուրիներ, 162, 311, 328, 329, 332, 334–342, 356  
 Այշա, 26, 52, 56  
 Անատօս, 87  
 Աշորաֆ Մուսա, 342  
 Ասքանազամ, 290  
 Ասսա աղ-Դին Ծիրկու, 329  
 Աստիկա, 139  
 Արա Գեղեցիկ, 66  
 Արիստոներ, 365, 367, 368  
 Արշակունի, 73, 74, 290  
 Արքունի Թովմա, 66, 287  
 Արքունի Համազասա, 231, 233  
 Արքունիներ, 117, 286  
 Արտ. 22  
 Աֆրայ Ծահնջահ, 307–311, 323, 335  
 Բաբեկ, 209, 235–238, 250, 251  
 Բագարատ, գորավար, 72  
 Բագրատունի Արքաս, 289  
 Բագրատունի Աշոտ, 114, 228, 231–233, 288–290  
 Բագրատունի Բագարատ, 234, 287  
 Բագրատունի Դավիթ, 287  
 Բագրատունի Սահակ, 227, 234  
 Բագրատունի Սմբատ, 114–116, 118, 231, 232, 234, 287  
 Բագրատունի Վասակ, 231, 233  
 Բագրատունիներ, 86, 117, 160, 234, 286, 288, 290, 344  
 Բայր ալ-Գամալ (Յամալ), 307–310  
 Բալագուրի, 69, 368  
 Բալամի, 282  
 Բալկարա Իրն ալ-Ուկայլ, 227  
 Բահիկի, 118  
 Բահիրա, 26, 27, 68  
 Բահրիներ, 341–347  
 Բաղդասար, 66  
 Բայրաս, 338, 341–344  
 Բաշշահը իրն Բուրդ, 375  
 Բասսասիր, 312, 313  
 Բարգուր, 344  
 Բարսրայ, 347, 348  
 Բարմար. 196–198, 206, 266, 379  
 Բարկիյարուր, 325  
 Բարմացիներ, 196–198, 206, 266, 379  
 Բարսուլը Կ., 354, 356  
 Բել, 68  
 Բելյան Ե., 128, 244  
 Բեկկիր Կ., 354  
 Բերտես Դ., 354  
 Բիրունի, նաև՝ Արու առ-Ռայհան ալ-Բիրունի, 284, 352, 366, 372  
 Բոլյախն, 322, 328, 329  
 Բոհեմունդ, 322  
 Բուլի, 291–296, 312, 313, 359  
 Բուլա. 287, 288  
 Բուլյա, 283  
 Բուրակ. 144, 380  
 Բուրժիներ, 344, 347, 348, 402  
 Գաօիկ II, 344
- Գարսնան Ռ., 354  
 Գի Լուզինյան, 333, 334  
 Գյուղ. 316  
 Գնումի Կահան, 234  
 Գործիրեյ Բուլին, 323  
 Գրիգոր Տաթևացի, 67  
 Գուրեկ, 109  
 Դակիի, 282  
 Դահիր, 110  
 Դահհակ իրն Մուլզահիմ, 147  
 Եֆիմ, 252  
 Զահիր, 317, 335  
 Զայնար, 26  
 Զայդ իրն Մարիտ, 37  
 Զանգիներ, 325  
 Զաքարիա, 289  
 Զափիր, 311  
 Զիյադաբ-Ալլահ I, 252  
 Զիյադ իրն Արիհ, 143  
 Զուբեյդա, 261  
 Թաի, 295  
 Թաքարի, պատմիչ, 69, 250, 282, 373  
 Թահիր իրն ալ-Շուսեյն Խորասանի, 277  
 Թարիք, 106  
 Թենժիլ, 236, 250, 251  
 Թուլյուններ, 274–277  
 Թահիրիներ, 222, 262, 264, 277–280  
 Թուղրիլ, 284, 296  
 Թեմուզին, նաև՝ Շինօհի Խան, 316  
 Թուման-քեյ, 349  
 Ժիրմունսկի Վ., 356  
 Իրն ալ-Ասիր, 70, 323, 369  
 Իրն ալ-Արարի, 377  
 Իրն ալ-Կամի, 318  
 Իրն ալ-Մարշուշ, 347  
 Իրն ալ-Մուլզաֆֆա, 377

- Իրն ալ-Ֆարիդ, 377  
 Իրն Բասուտա, 70  
 Իրն Թուֆայլ, 368  
 Իրն Խահակ, 24, 369  
 Իրն Խալդուն, 149, 364,  
     365, 370  
 Իրն Խալիքան, 309, 310  
 Իրն Խուրդարիդ, 371, 372  
 Իրն Ջաւթար, 70, 371  
 Իրն Սուրբահի, 381  
 Իրն Շարդաղ, 70  
 Իրն Չուրայր, 359  
 Իրն Ուուշ, Ավելործս, 364,  
     368  
 Իրն Սևադի, 368  
 Իրն Սինա, նաև՝ Արու Արի  
     ալ-Դուսեյն իրն Սինա,  
     282, 364–366  
 Իրն Վաղիի ալ-Ֆակուրի,  
     371  
 Իրն Թուրայրահ, 368  
 Իրրահիմ, 32, 157, 164,  
     176, 177  
 Իրրահիմ իրն Արդալահ,  
     186  
 Իրրահիմ իրն Սուհամմադ,  
     163  
 Իրրահիմ II Ալյարի, 252  
 Իրրահիմ իրն ալ-Ալյար,  
     273  
 Իրդիս I իրն Արդալահ, 272  
 Իրդիսներ, 270, 272–274,  
     302, 304  
 Իզզ ադ-Դին Այրակ, 342  
 Իխշիդներ, 276, 277  
 Իմադ ադ-Շակիա, 293  
 Իմադ ադ-Դին Զանգի, 325,  
     326, 330  
 Իյադ իրն Դամճ, 76  
 Իսա, 68  
 Իսահակ, 69  
 Իսահակյան Ավետիք, 182  
 Իսրայիլ, 70, 372  
 Իսիակ, 176  
 Իսմաիլ, 296–298, 332  
 Իսմայիլ իրն Ահմադ, 281
- Իրեն, բյուզ. Կայսրութի,  
     249, 250  
 Լանգորարդներ, 252  
 Լենկ Թեմուր, 46, 348  
 Լեռպղու ԻI, 252  
 Լյուդվիկոս VII, 327  
 Լուն I Ուրիմյան, 344  
 Լուն IV, 346  
 Խաղիքա, Խաղիքա թիստ  
     Խուվայիդ, 26, 27  
 Խազրաք, 22  
 Խալդի, 98, 150  
 Խալիդ իրն Բարձաք, 196  
 Խալիդ իրն Վալիդ, 60  
 Խաշամ, 78  
 Խափսա, 26  
 Խիլֆ ալ-Ֆուլու, 26  
 Խորեզմի, 366, 370  
 Խորեզմշահ Թակաչ, 315  
 Խորեզմշահեր, 315–317,  
     338  
 Խութեցի Յովնան, 287  
 Խումարավայի, 276  
 Կաարա իրն Զուբեյր, 141  
 Կաղիր, 283  
 Կախմ, 312, 313  
 Կալրի, 154, 369  
 Կամսարական, 115, 286  
 Կասիմ, Սուհամմադի  
     որդին, 26  
 Կասիմ, Յարիմյան  
     թագաժառանց, 305  
 Կարախաններ, 283  
 Կարլ Սարտելլ, 107  
 Կարլոս Սեծ, 246, 247  
 Կարմաթներ, 299–301, 304  
 Կարոլինանցներ, 248, 247  
 Կիմոհ, 355, 363, 364, 367,  
     370  
 Կյուրոս, 61  
 Կլեոպար, 71  
 Կոնսուլութին VI, 103, 249  
 Կոնդրան III, 327  
 Կոնդրան Ն., 356
- Կոստա իրն Լուկա, 364  
 Կոստանդ II, 79–81, 84, 85  
 Կուտեյր, 157  
 Կուտեյրա, 171  
 Կրաչկովսկի Ի., 355  
 Կուտուզ, 343  
 Կուրայշ, 22, 23, 25, 27, 89,  
     100, 382  
 Հազար, 89  
 Հաղի, 168, 188, 189, 227  
 Հազկերտ III, 60  
 Համբան Կարսաք, 298, 300  
 Համզա իրն Աբրակի, 191  
 Հայդար իրն Կարուս Ափ-  
     շին, 237  
 Հայգուսան, 188, 190  
 Հայկ, 86  
 Հաշիմ I, 25, 89, 222  
 Հաշիմ իրն Հաջիմ, 186  
 Հաշիմի, 185  
 Հաջջազ, 110  
 Հասան, 92, 96, 176, 177,  
     186, 236, 272, 292  
 Հասան իրն Սարիս, 141  
 Հասան ալ-Բասիր, 144  
 Հասան իրն Կահտարա,  
     227, 229  
 Հասան Ուուշ ադ-Դավիա,  
     293, 295  
 Հարիս իրն ալ-Խալադահ,  
     149  
 Հարիրի, 378  
 Հարիսա իրն Սուլեյմ, 158  
 Հարսան, 263  
 Հարուն առ-Ռաշիդ, 168,  
     187–192, 196, 198, 206,  
     213, 222, 246–250,  
     260–266, 269, 273, 295,  
     375, 378  
 Հարիմ, 98, 306  
 Հերակլես, կայսր, 59, 61  
 Հիերի Ֆիլիպ, 91, 128, 197,  
     205, 247, 253, 282, 294,  
     310, 314, 338, 358, 371  
 Հիմյարի, 125

- Յիշամ, 107, 119, 133, 138,  
     154, 161, 169, 178  
 Եիսուս Քրիստոս, 30, 68,  
     187, 320, 321  
 Յովհաննես VIII պապ, 253  
 Յովհաննես Դիասխանա-  
     կենցի, 67, 68, 72, 77,  
     115, 288–290  
 Յովհաննես Սկրիժ, 145  
 Յովհաննես Օձնցի, 118  
 Յովսեփիոս Փալավիոս, 71  
 Յովի պապ, 246, 327, 344,  
     346  
 Յուգայան, 26  
 Յուլադու Խան, 260,  
     317–319, 337, 343  
 Յուսեյն, 40, 92, 94, 96, 97  
 Յուստինիանոս, կայսր, 75  
 Յուստինիանոս, պատմիչ,  
     71  
 Ղազնիներ, 283, 284, 301,  
     302, 312  
 Ղասանիներ, 15  
 Ղուրիներ, 284  
 Ղևոն, 66, 88, 89, 115, 226,  
     228, 229, 231, 234  
 Սալիք ալ-Աղի, 334  
 Սալիք ալ-Աֆուալ, ալ-Աֆ-  
     դալ Շահնշահ, 308,  
     310, 323, 335  
 Սալիք իրն Անաս, 44  
 Սալիք շահ, 313–315, 322,  
     358  
 Սահիդ, 168, 182, 184–189,  
     204, 227, 234, 249, 304,  
     305, 375  
 Սահնուղ, 283, 284  
 Սամիկոնյան, 74, 86, 160,  
     229, 288  
 Սամիկոնյան Արտավազու,  
     228, 229  
 Սամիկոնյան Գրիգոր, 111  
 Սամիկոնյան Մուշեղ, տես  
     նաև՝ Սուշահի ալ-Ար-  
     մանի, 160, 229–234
- Սամիկոնյան Սամվել, 234  
 Սամիկոնյան Տիրան, 77  
 Սամուն, 198, 199, 209, 222,  
     223, 236, 237, 251, 252,  
     261–268, 269, 274, 277,  
     278, 281, 315, 358, 370  
 Սատուղի, 69, 369, 370  
 Սավիանոս, 85  
 Սարգովիոս Դ., 354  
 Սարդարավոր իրն Զիյար, 292  
 Սեց Ա., 354, 355, 361, 371,  
     373  
 Սիհրուս Պոնտացի, 71  
 Սիսկավայի, 294, 369  
 Սիսիքար Անցի, 67  
 Սյուլեն Ա., 310  
 Սովսես, 30, 187  
 Սովսես Խորենացի, 66  
 Սովսես Կաղանկատվացի,  
     67  
 Սրվան I, 98  
 Սրվան II, 126, 154, 157,  
     158, 164, 165, 167, 179  
 Սրվան իրն ալ-Պացիմ, 98  
 Սրվանյան ճյուղ, 98  
 Սուազզամ Թուրան Շահ,  
     338, 341  
 Սուալիհ, 56, 62, 81–86,  
     89–96, 99, 100, 103,  
     108, 121, 122, 124, 136,  
     139, 142, 167  
 Սուալիհ I, 89, 91, 98, 102,  
     104, 111, 112, 138, 143,  
     147, 154, 162  
 Սուալիհ II, 98, 174  
 Սութազզ, 270, 274  
 Սութաղի, 242  
 Սութամիդ, 240, 241, 275,  
     280, 281, 290  
 Սութանարի, 296, 376  
 Սութասիդ, 209, 216, 237,  
     238, 251, 380  
 Սութավացի, 193, 268,  
     270, 287, 288, 365, 380  
 Սուլհզ, 305, 306  
 Սուլաղասի, 371, 372  
 Սուլիմնա, 186, 187, 219
- Սուհամմադ, մարզաբ, 12,  
     25, 28, 32, 35, 37–39,  
     46, 49, 51, 56, 68, 88,  
     89, 92, 96, 101, 139,  
     144, 148, 156, 160, 162,  
     166, 170, 176, 180, 185,  
     186, 192, 193, 299, 302,  
     350, 351, 357, 361, 368,  
     380  
 Սուհամմադ աթ-Թահիրի,  
     279  
 Սուհամմադ ալ-Թուղ, 276  
 Սուհամմադ իրն ալ-Կասիմ,  
     110, 117  
 Սուհամմադ իրն Մրվան,  
     112–116  
 Մուհամմադ իրն Բարզ ալ-  
     Քուսիդ, 206  
 Սուհամմադ իրն Թուղը ալ-  
     Իսչիդ, 276  
 Մուհամմադ իրն Խանիլի,  
     298–300, 304  
 Սունգը, 317  
 Մունթասիր, 270  
 Մուշահ ալ-Արմանի, տես  
     Մուշեղ Սամիկոնյան,  
     232  
 Մուսս, 157  
 Մուսս ալ-Կազիմի, 297,  
     299  
 Մուսս ալ-Քաջին, 187  
 Մուսս իրն Նոււեյրի, 105,  
     106  
 Մուսթադի, 331  
 Մուսրահն, 288  
 Մուսրալ, 308, 309  
 Մուսթանսիր, 307–310,  
     313, 317, 380  
 Մուսրասիմ, 317–319, 341,  
     342  
 Մուստագիր, 325  
 Մուստակի, 293–295  
 Մուվաֆֆակ, 241, 242, 275,  
     276, 280  
 Մուտի, 294, 295

- Յազիդ**, 91, 94–98, 112, 136, 138, 142, 226, 227  
**Յազիդ I**, 104, 138, 147  
**Յազիդ III**, 157  
**Յակուբ իր իր ալ-Հայս աս-Սանժար**, 278–280  
**Յակուբի**, 280, 360, 369  
**Յակուտ ալ-Դամավի**, 70, 372, 373  
**Յակուտ ալ-Մուստահմի**, 381  
**Յահյա Բարմաքի**, 197  
**Յահյա իր իր Խալիֆ**, 196–198  
**Յահյա Սիյան**, 322  
**Յուսուֆ**, 287  
  
**Նահիահ**, 90  
**Նարմ աղ-Դին ալ-Այուրի**, 326, 329–331, 335  
**Նասիր**, 206, 315–317, 346  
**Նասիր Յուսուֆ**, 342  
**Նասր իր Սիմառ**, 281  
**Նասր իր Սայյար**, 191  
**Ներսես Տայքի**, 79  
**Նիզամ ալ-Այուրի**, 314, 358  
**Նիկոփոր**, 250  
**Նոյ**, 187  
**Նուր աղ-Դին**, 326, 327, 329–332  
**Նուցուրիձ Ը.**, 356  
  
**Շաման**, 344  
**Շազի**, 329, 330  
**Շամիրամ**, 66  
**Շամս աղ-Դին Թուրան Ծահ**, 335  
**Շայրամ**, 276  
**Շայխ**, 348  
**Շաշար աղ-Դուրի**, 338, 341  
**Շարիկ**, 170, 171  
**Շարիկ իր ալ-Մահրի**, 170, 219  
**Շիրկուհ**, 329  
**Ծովյան Վ.**, 354  
**Ծովանիկ**, 115  
  
**Չակոյան Վ.**, 356  
**Չաղրի-թեկ**, 312, 313  
**Չինգիզ խան, նաև՝ Թեմուլյան**, 316, 317  
  
**Պիափին Կարճահասակ**, 107, 246  
**Պլատոն**, 367  
**Պոլյուսոս**, 71, 370  
**Պրոկոպիոս**, 79, 80  
  
**Չարք իր Յայյան**, 151  
**Չահիզ**, 377, 378  
**Չարիր**, 141  
**Չառիար**, 305  
**Չափար**, 197, 198, 297, 298  
**Չափար աս-Սաուկի**, 297  
**Չունչին II**, 327  
  
**Ուազի**, 365  
**Ուադի**, 276  
**Ուայիամի**, 381  
**Ուայոն Տուլուզեցի**, 322, 323, 327  
**Ուաշի աղ-Դին Սինան**, 332  
**Ուֆի իր Լայս**, 191  
**Ուզաս**, 40  
**Ուչարդ Ալյուծահրու**, 333, 334  
**Ոշտուի Թեոդորոս**, 76, 78–82, 84–86  
**Ոշտուի Կարոյ**, 114  
**Ոշտումինեն**, 86  
**Ողորդոն**, 106  
**Ողմանոս Դիոգենես**, 313  
**Ոււրեն**, 344  
**Ոււրակի**, 282  
**Ոււկայա**, 26, 54  
**Ոււստամիներ**, 274, 302  
  
**Սակիֆ**, 22, 23  
**Սահակ**, 113, 114, 116  
**Սալահ աղ-Դին ալ-Այուրի**, 88, 315, 329–337, 340, 343  
**Սալիհ**, 335, 338, 340, 341  
**Սալիմ**, 349
- Սաման**, Սաման-խուդա, 281  
**Սամանիներ**, 281–283, 292, 301, 302, 366  
**Սայֆ աղ-Դին Ղազի**, 326  
**Սանասար**, 66  
**Սառա**, 69  
**Սասանյաններ**, 182, 195, 203, 292  
**Սաֆիարիներ**, 278, 280, 281  
**Մերենս**, 66, 67, 77, 82  
**Մելենս**, 71, 72  
**Մելքոնի**, 312  
**Մելքոնկեր**, 312, 313, 315, 316, 325, 335, 356  
**Մենեքերին**, 66  
**Մյունյաց Խշաններ**, 286  
**Մորարոն**, 71, 72  
**Մուլեյման**, 104, 145, 154, 157, 178  
**Մուլեյման Կասիր**, 172  
**Մուլի**, 368  
**Մույոք**, 378  
**Մունքադ**, 175, 176  
  
**Վահենուի Թեոդորոս**, 78  
**Վայիդ**, 59, 60, 112, 116–118  
**Վայիդ I**, 109, 123, 137, 138, 145, 149, 152  
**Վայիդ II**, 138, 139, 156, 157, 178  
**Վասիկ**, 260, 270  
**Վարդան Արևելցի**, 67  
  
**Տան**, 245  
**Տիգրան Սեծ**, 70–72  
**Տրումի**, 231, 232  
**Տրդատ**, 227  
**Տրուդի-թեկ**, 312, 313  
**Տրուդի II**, 315  
**Տուրան Բ.**, 310  
  
**Ուրայդալլահ**, 300, 303, 304  
**Ուրեյդուլլա իր Զիյյադ**, 108

- Ուզենյ, 317  
 Ուկրա, 81  
 Ումմ Կուզում, 25, 54  
 Ուտրի, 284  
 Ուրբան II, 320  
  
 Քահիտրայ, 347  
 Քամիլ Սուհամմադ, 342  
 Քանս, 349  
 Քինշահներ, 15  
 Քեօթ Թորոս, (Թևա Թորոս), 86  
 Քուրամի, 22  
 Քուտներ իրն Սուլյանի, 109  
  
 Օկրա, 104, 105  
 Օմայյա, 27, 56  
 Օմայյաներ, Օմայյաների ղենաստիա, 22, 28, 29, 89, 91–94, 97–99, 102, 111, 119, 121, 127, 135, 136, 138, 140–145, 148–150  
 Օման, 52  
 Օմար, 26, 31, 53, 54, 59, 60, 76, 80, 88, 91, 94, 95, 118, 125, 137, 144, 147, 150  
 Օմար իրն Արի Ռարիհա, 142  
 Օմար Խայյամ, 358  
 Օշին Պայլ, 346  
 Օսման, 37, 52, 54–57, 80, 88, 90, 91, 94  
 Օսման իրն ալ-Աքբա, 54  
  
 Զառը, 197, 198  
 Զարիմա, 26, 39, 55, 92, 96, 163, 239, 299, 303, 304  
 Զարարի, 364, 367, 368  
 Զարամակ, 141  
 Զարաք, 348  
 Զեկիլիս Ավգուստ, 333  
 Զելչունսկի Ի., 244, 294  
 Զերոլուսի, 282, 284  
 Զյուկ Ի., 355  
 Զրայ Ռ., 356
- Յոհորիխ Ծիկամորուս, 333  
 Յոււաղ Դասան Դաֆիզ, 72  
  
**ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**  
  
 Արադան, 240  
 Արքայան Խալիֆայություն, 92, 109, 135, 149, 169, 171, 173, 178, 179, 181, 183, 185, 189, 190, 193, 195, 196, 198, 201–206, 210, 212, 215, 218–221, 228, 235, 237, 238, 243, 244–273  
  
 Աղիարեն, 71  
 Աղրբեան, 47  
 Ալամուք, 318  
 Ալանաց դռներ, 119  
 Ալանաց լեռներ, 80  
 Ալբանիա, 48  
 Ալեքսանդրիա, 61, 150, 254, 305, 335, 336  
 Ալբայ, 316  
 Ալժիր, 8, 44, 274, 302, 304, 306  
 Ալիսեփիանս, 106  
 Ալիքամար, 77, 84  
 Ակոսի, 114  
 Ակվիտանիա, 106  
 Ալր, 275, 307, 333, 334, 345  
 Ալվագ, 208, 240, 292  
 Աղիովիտ, 85  
 Աղլարիների էմիրություն, 273, 274  
 Աղձնիք, 77  
 Աղվանք, 81, 85, 86, 111, 112, 117, 119, 121, 160, 187  
 Ամերիկա, 46  
 Ամիո, 77  
 Ամորի, 251  
 Անու Ռարյա, 61, 108, 109, 199, 283, 315  
 Այուրիների սուլթանություն, 337, 338, 341
- Այն Զալուտ, 343  
 Այրարատ, 77  
 Անքար, 180, 220  
 Անգիա, 6, 320, 333, 334  
 Անդալուս, 106, 161, 169, 255  
 Անդրկովկաս, 62, 313, 315  
 Աճի, 313  
 Անկարա, Անկիրա, 250  
 Անտարտիդ, 323  
 Անտիոք, 59, 70, 81, 150, 250, 322, 324, 326, 327  
 Անտիոքի իշխանապետություն, 322, 323  
 Աշկենզ, 323, 328, 337  
 Ասկենզյան թերակղզի, 252  
 Ասպաւլիա, 252  
 Աշճառայ, 58  
 Առան, 112  
 Առուճ, 230  
 Ասիա, 5, 46, 47, 246  
 Ասիա Առաջավոր, 67, 70, 72, 182, 248, 320  
 Ասիա Արևելյան, 47  
 Ասիա Կենտրոնական, 316  
 Ասիա Դարավ-արևելյան, 351  
 Ասիա Միջին, 47, 108, 110, 157, 159, 186, 199, 216, 219, 244, 245, 247, 255, 268, 282, 312, 317, 339, 351, 366  
 Ասիա Փոքր, 121, 250, 311, 313, 314, 351  
 Ասիր, 11  
 Ասիրի, 11  
 Ասորեստան, 66  
 Ասորիք, 22, 71, 76, 79, 82, 83, 85, 89, 118, 232  
 Ատլանտյան օվկիանոս, 5, 7, 105, 111, 121, 243, 253, 306, 371  
 Աւղաս, 303  
 Ասորական, 71, 80, 81, 112, 113, 227, 235, 236, 238, 287

- Արարական Արևելք (ալ-**  
**Սաշրիկ), 7, 8, 105**  
**Արարական Արևմուտց (ալ-**  
**Սաղոյիր), 7, 8, 45, 105,**  
**224, 271, 272, 302–304,**  
**306, 332**  
**Արարական Խալիֆայու-**  
**թուն, 5, 7–9, 15, 47, 61,**  
**62, 67, 68, 83, 84, 86,**  
**93, 94, 96, 99, 102–104,**  
**109, 111, 112, 118,**  
**165–167, 183, 207, 212,**  
**248, 259, 264, 265, 271,**  
**310, 322, 351**  
**Արարական Միացյալ Ենի-**  
**րություններ, 9, 47**  
**Արարական թրավարդի, 10,**  
**11**  
**Արարական ծով, 10**  
**Արարիա, 10–15, 19, 20, 22,**  
**23, 44, 50–53, 58, 60,**  
**65, 93, 94, 96, 97, 99,**  
**102, 109, 121, 128, 131,**  
**142, 143, 155, 156, 159,**  
**176, 178, 256, 261, 300,**  
**306, 332**  
**Արագելու, 232**  
**Արարատ լեռ, 114**  
**Արաքս, 115**  
**Արզակ, 77**  
**Արձակ, 81**  
**Արծնի, 233, 234**  
**Արծեց, 233**  
**Արմենիա, 112–114,**  
**117–121, 160, 225, 227,**  
**229, 235,**  
**Արյան լիճ, 287**  
**Արտազերս, 229, 230**  
**Արտաշատ, 72**  
**Արևելք Յեռավոր, 254, 336**  
**Արևելք Մերձավոր, 7, 29**  
**Արևելք Միջին, 58, 182, 312,**  
**320, 345**  
**Աֆրանտան, 47, 110, 279,**  
**283, 284, 315, 352, 396**  
**Աֆրիկա, 5, 45–48, 61, 105,**  
**121, 238, 243, 257**  
**Աֆրիկա Արևելյան, 44, 238**  
**Աֆրիկա Ելուսիսային, 8,**  
**102, 104–106, 157, 160,**  
**161, 173, 177, 254–256,**  
**261, 271, 272, 301–304,**  
**311, 351**  
**Բազգ. 237**  
**Բայարար, 326**  
**Բար ալ Արվար, 112**  
**Բար Ալան, 119**  
**Բարելոն, ամրոց, 61, 182**  
**Բազական, 230**  
**Բազարան, 290**  
**Բագրիան, 229, 230, 233**  
**Բաղր, 27, 28**  
**Բայթիկա, 257**  
**Բային, 109, 281, 283, 312,**  
**317**  
**Բակուրա, 109**  
**Բահր ալ-Խիլ, 341**  
**Բահրեյն, 9, 40, 44, 121,**  
**299–301**  
**Բաղրադ, 44, 178, 181–184,**  
**189, 190, 194, 198, 199,**  
**203, 208, 212, 216, 220,**  
**232, 237, 241, 242, 246,**  
**254, 256, 260, 262–264,**  
**270–274, 277, 278,**  
**280–282, 291–294, 296,**  
**300, 305, 312–319, 325,**  
**330, 343, 348, 356,**  
**358–360, 364, 366, 367,**  
**373, 375, 378, 379, 397**  
**Բախեց, 77, 85**  
**Բանգլադեշ, 47**  
**Բասեն, 233**  
**Բասրա, 56, 93, 121, 127,**  
**147, 180, 196, 208, 240,**  
**241, 254, 255, 300, 378**  
**Բատնա-Մարուզ, 79**  
**Բարբար գետ, 106**  
**Բարիկ, 253**  
**Բարկա, 62**  
**Բեյրութ, 72, 337, 345**  
**Բեկուժստան, 110**  
**Բերիք, 72**  
**Բերկի, 77, 233**  
**Բերա, 221**  
**Բգնունյաց երկիր, 77**  
**Բգնունյիր, 85**  
**Բիլբայ, 61**  
**Բյուզանդական կայսրու-**  
**թյուն, 58, 62, 63, 76, 79,**  
**82, 84, 86, 88, 103, 104,**  
**111, 118, 120, 166, 209,**  
**236, 244, 247–251, 258,**  
**320, 324, 344**  
**Բյուզանդիա, 58–61, 63, 74,**  
**75, 81–87, 102–104,**  
**114, 118, 126, 250–252,**  
**285, 380**  
**Բոսնիա և Հերցեգովինա,**  
**48**  
**Բուֆոր, 283**  
**Բորդո, 107**  
**Բուխարա, 44, 108, 109,**  
**170, 171, 187, 208, 254,**  
**256, 274, 282, 283, 312,**  
**318, 317, 366**  
**Բուհայրա, 335**  
**Գալիա, 107**  
**Գամբիա, 47**  
**Գանա, 46**  
**Գառնի Կասպուրականի, 80**  
**Գարուննա, գետ, 107**  
**Գերմանիա, 320, 333**  
**Գիրուալտար, 106**  
**Գիզա, 165, 305**  
**Գիլան, 292, 339**  
**Գողթն, 80**  
**Գվինեա, 47**  
**Գրգուռ, 77**  
**Գուրգան, 312**  
**Ղանիա, 10**  
**Ղաղափան, 118, 119, 160**  
**Ղամակոս, 58–60, 71, 72,**  
**85, 90, 93, 97, 99, 102,**  
**113, 118, 122, 125, 132,**  
**145, 154, 164, 168, 178,**  
**220, 222, 254, 300, 327,**  
**395**

- 332, 334, 335, 337, 341,  
 342, 348, 359, 360  
**Դամիշտը.** 335  
**Դայրով.** 110  
**Դայլան.** 236, 292  
**Դարբանդ.** 119  
**Դարույնը.** 114, 232  
**Դերենի.** 112, 119, 127  
**Դերզան.** 84  
**Դիյար Բագր.** 344  
**Դվին.** 76, 78, 113, 118, 127,  
 228, 230, 232, 329  
**Եպերաց աշխարհ.** 328  
**Եղիպատուս.** 8, 9, 13, 22, 44,  
 47, 55, 61, 71, 72, 92,  
 98, 105, 121, 123, 164,  
 219, 222, 223, 252, 254,  
 261, 272–277, 303,  
 305–307, 309, 310, 315,  
 322, 324, 326, 328–332,  
 335–338, 341–349, 391  
**Եղեփան.** 59, 72, 76, 324,  
 326, 327, 345  
**Եղեսչայի.** կոմսություն,  
 322, 323  
**Եմեն.** 8, 11–13, 20–23, 40,  
 121, 143, 332, 337, 344  
**Եվրոպա.** 13, 17, 46, 48,  
 101, 102, 106–108, 111,  
 242, 244, 246, 247, 251,  
 254, 256, 257, 321, 327,  
 335, 354  
**Երասխ.** 80  
**Երևանաբեմ.** 31, 32, 54, 59,  
 87, 88, 90, 144, 145,  
 167, 248, 306, 314, 324,  
 325–329, 333, 338  
**Երևանաբեմի քաջավորու-**  
**թյուն.** 311, 322, 323,  
 328, 345  
**Եփառատ.** 56, 65, 71, 76,  
 121, 154, 178, 180, 181  
**Զազդրոս.** 61  
**Զամգամ.** 33  
**Զանգիրայ.** 238  
**Զանցի.** 238  
**Զիթերքա.** 250, 251  
**Զարարաստան.** 196, 236,  
 278–281, 292, 312  
**Զարմնոր.** 15  
**Զահիֆ.** 15, 22, 149  
**Զահիմիների էմիրություն.**  
 277  
**Զային.** 232  
**Զանական.** 164  
**Զերիկանի.** 62, 127  
**Զիհանն.** 250  
**Զիհանմ.** 11  
**Զիկորիթ.** 330, 348  
**Զոխարաստան.** 164  
**Յուզունիների էմիրություն.**  
 274, 277  
**Յուխարաստան.** 108, 109,  
 283  
**Յումանշահ.** 119  
**Յումին.** 8, 9, 45, 47, 104,  
 252, 273  
**Յուս.** 184, 191, 208, 250,  
 262  
**Յուր Արդին.** 77  
**Յուրան.** 108, 282  
**Յուրդիա.** 47, 48  
**Իորիսների էմիրություն.**  
 272, 273  
**Իրիլ.** 257  
**Ինչինիների էմիրություն.**  
 277  
**Իկոնիայի տիրապետու-**  
**թյուն.** 276  
**Ինդրնեղիա.** 44, 47, 254,  
 255, 256  
**Իսպահան.** 13, 45, 106,  
 107, 161, 169, 177, 247,  
 256, 258  
**Իտալիա.** 251–253, 256,  
 320, 336  
**Իրան.** 40, 46, 47, 58, 108,  
 110, 120, 121, 164, 187,  
 199, 219, 224, 236, 238,  
 254, 255, 263, 278, 282,  
 292, 311, 313, 315, 339,  
 359, 379  
**Իրազ.** 8, 9, 40, 43, 47, 55,  
 56, 60, 90, 92, 94,  
 96–99, 102, 108, 121,  
 123, 158, 159, 164, 167,  
 170, 177, 179, 183, 193,  
 194, 220, 222, 239, 241,  
 254, 255, 261, 280, 294,  
 295, 300, 302, 306, 311,  
 313, 316, 330, 359, 378  
**Իդրիկիա.** 104, 121, 252,  
 273, 302, 303, 305, 306  
**Լաթակիա.** 72  
**Լախմի.** 15  
**Լառոյիկան.** 72  
**Լատին** իշխանապետու-  
 թյուն, քաջավորու-  
 թյուն, 322, 324, 333  
**Լազգ.** 118  
**Լեռնայիրանան.** 221, 222  
**Լիրանան.** 8, 9, 40, 58, 59,  
 219, 221, 222, 323, 326  
**Լիրիա.** 8, 9, 47  
**Լիկիա.** 250  
**Լիոն.** 107  
**Խազանական կազանաթ.**  
 257  
**Խարս.** 230  
**Խլաթ.** 76, 232  
**Խորասան.** 43, 108, 109,  
 121, 159, 160, 163,  
 172–174, 191, 196, 197,  
 224, 234, 236, 254, 261,  
 273, 277–284, 312, 359,  
 371, 378  
**Խորեզմ.** 108, 109, 224,  
 284, 312, 315–317  
**Խործի.** 117, 118  
**Խուզիստան.** 61, 92, 177,  
 208, 240, 255, 292  
**Խուր.** 287  
**Կապրա.** 22, 31–33, 95, 97,  
 141, 145, 261, 300

- Կաղիսիա, 60  
 Կալարիա, 252  
 Կախեթ, 287  
 Կահիրե, 127, 305–308,  
     310, 313, 328, 329, 331,  
     335, 337, 341, 343, 344,  
     347, 349, 360  
 Կայրավան, 105, 145, 161,  
     177, 254, 273, 303, 305  
 Կասարյան կղզիներ, 370  
 Կամտոն, 255, 256  
 Կամ-ֆու, 256  
 Կաշզար, 314, 371  
 Կասայից ծով, 292, 314, 317  
 Կառար, 9  
 Կառալութիա, 336  
 Կարակ, 333, 335  
 Կարբագեն, 105, 272  
 Կարին, 74, 77, 84, 229,  
     230, 232, 233  
 Կարմիր ծով, 10, 11, 256,  
     306  
 Կեսարիա, 59  
 Կիլիկիա, 333, 344,  
     345–347  
 Կիլիկիայի Դայկական քա-  
     զավորություն, 320,  
     344–347  
 Կիպրոս, 62, 250  
 Կիսյան Ուսիխա, 257  
 Կլերմոն, 320  
 Կոգովիտ, 77, 78, 81  
 Կոլոր, 232  
 Կոնստանտինուպոլիս, 81,  
     103, 104, 249, 251, 257,  
     314  
 Կովկաս, 76, 86, 110, 112,  
     119, 361  
 Կորովա, 106, 127, 222,  
     368  
 Կորովայի Խալիֆայու-  
     թյուն, 92, 189, 247, 251,  
     252, 273, 274, 304  
 Կորոնը, 71  
 Կրտսե, 251, 252  
 Կումայրի, 228, 229  
 Կումիս, 175  
 Կուսայր, 306  
 Կուփա, 56, 57, 90, 96, 102,  
     121, 127, 147, 164, 187,  
     188, 171, 172, 176, 179,  
     180, 194, 208, 241,  
     254–256, 299, 300  
 Դաբեշտան, 12  
 Դարդամառը, 11, 20  
 Դալեր, 59, 326, 332, 335,  
     342, 348, 366  
 Դամա, 337  
 Դամադան, 176, 208, 236,  
     237, 256, 263, 292, 312  
 Դայաստան, 8, 9, 62,  
     66–86, 111–119, 180,  
     181, 187, 225–234, 251,  
     255, 256, 284–290, 329,  
     330, 348, 371, 372  
 Դայդարաքաղ, 110  
 Դայելքերոց, 354  
 Դայկական լեռնաշխարհ,  
     65  
 Դայոց իշխանապետու-  
     թյուն, 83, 86  
 Դայխա, 323, 328  
 Դաշիմյա, 180  
 Դաջօնը, 300  
 Դարրան, 76, 116, 150, 154,  
     158, 164, 179, 326, 366,  
     371  
 Դատուրան, 220  
 Դերաք, 164, 281, 317  
 Դերակես, քաղաք, 250  
 Դիմ, նաև՝ Դոն, 158, 337,  
     359  
 Դիմորս, 110  
 Դիգազ, 11, 12, 15, 23, 28,  
     45, 46, 97, 121, 177,  
     272, 278, 308, 332, 343,  
     344  
 Դիրա, սար, 26, 27  
 Դիրա, քաղաք, 60, 180  
 Դյուսիսային Բորմեն, 257  
 Դնդկական օվկիանոս, 5, 7,  
     243, 253, 255, 256  
 Դնդկաստան, 110, 111, 121,  
     244, 254–258, 278, 283,  
     301, 336, 348, 371, 372  
 Դոն, 59, 158  
 Դորդանան, 8, 9, 47  
 Դորդանան, գետ, 59  
 Դոռդոս, 250  
 Դոռմ, 72, 253  
 Դրեսաստան, 72  
 Դուլուան, 61  
 Դունաստան, 150  
 Եղորա պահակ, 77, 78  
 Ղազմահ, 283, 284, 316,  
     352  
 Ծենովա, 320  
 ճորա երկիր, 112  
 ճորա պահակ, 86  
 Մասրաք պլ-Նումա, 322  
 Մադինա ան-Լարի, 28  
 Մազարա, 252  
 Մալայզիա, 47  
 Մայի, 47  
 Մակարիա, 250, 251  
 Մալքա, 253  
 Մալակայի թերակղզի, 257  
 Մալյան, 279  
 Մակվան, 164  
 Մաղրիբ, 7, 8, 45, 105, 224,  
     271, 272, 302–304, 306,  
     332  
 Մայսադ, 332  
 Մանրիզ, 250  
 Մանակերտ, 313  
 Մաշրիկ, 7, 8, 105  
 Մավրուսանիա, 8, 9, 105  
 Մավրաննահր, 43, 106,  
     109, 159, 163, 170, 176,  
     187, 191, 224, 254, 277,  
     281, 283, 315, 339  
 Մարոկո, 8, 9, 45, 47, 241,  
     272  
 Մարդին, 77  
 Մարդ Դարիք, 349

- Սակուրի կիրճ**, 232  
**Սեծ Զաք**, 164, 174  
**Սեսամոր**, 78  
**Սեռալ ծով**, 58  
**Մեսահնա**, 252  
**Մերձվոլգյան տափաս-  
տամներ**, 351  
**Մերկ**, 164, 186, 187, 208,  
254, 262, 263, 277, 278,  
312  
**Մերք**, 15, 22–33, 40, 44,  
49, 50, 55, 88, 93,  
95–100, 136, 145, 155,  
156, 162, 175, 178, 184,  
208, 215, 219, 256,  
261–263, 276, 300, 301,  
306, 332  
**Միջազգոց**, 14, 22, 60, 65,  
71, 72, 76, 78, 81, 85,  
89, 112, 154, 158, 164,  
179, 181, 182, 193, 194,  
332, 337, 338, 340  
**Միջերկրական ծով**, 72,  
250, 253, 254, 256, 275  
**Մօքն**, 77, 326  
**Մոնղոլիա**, 317  
**Մոսկվ**, 325, 326, 330, 332,  
359  
**Մուլտան**, 110, 127  
**Մուխտարխ**, 241, 242  
**Մուկրան**, 110  
**Մուլան**, 80  
**Մուշ**, 287  
**Յամանահ**, 121  
**Յասդիր**, 15, 22, 23, 28, 29  
**Յարմուկ**, 59  
**Նաբաթեա**, 15  
**Նաբրոս**, 323  
**Նախիջևան**, 78, 80, 115,  
117, 118, 127  
**Նահշեր**, 187  
**Նաքաֆ**, 40  
**Նազդ**, 10, 46, 121  
**Նարուննա**, 107  
**Նաֆուլ**, 10
- Նեղոս**, 61, 252, 328, 335,  
341  
**Նիզեր**, 48  
**Նիհականդ**, 61, 79, 164  
**Նինվե**, 182  
**Նիշապուր**, 164, 175, 176,  
208, 254, 278, 279, 284,  
312  
**Նիս**, 164  
**Նիրուն**, 110  
**Նուրիսա**, 332  
**Նվրիկիրտ**, 77  
**Ծանմաշիյա**, 379  
**Ծաշ**, 109, 159, 281  
**Ծառ ալ-Արար**, 65  
**Ծարիթ Արնուն**, 333  
**Ծիրազ**, 254, 279, 292–294,  
296, 359  
**Ծիրակ**, 228  
**Ծիրվան**, 112  
**Ծորակ**, 335  
**Ծուփ**, 221  
**Ծաղ**, 48  
**Ծինաստան**, 181, 208, 244,  
245, 254–257, 317, 359,  
371  
**Ծողա**, նաև՝ ճորա երկիր,  
112  
**Պահատին**, 22, 48, 58, 59,  
72, 121, 127, 145, 154,  
178, 219, 223, 275, 276,  
322, 323, 324, 328, 332,  
333, 343  
**Պալերմո**, 252  
**Պալմիրա**, 15  
**Պակստան**, 47  
**Պարսից ծոց**, 10, 241, 254,  
371  
**Պարսկաստան**, 47, 60–63,  
70, 73, 75, 76, 80, 123,  
166, 175, 179–181, 195,  
198, 202, 204, 280, 295,  
318, 373, 395  
**Պետրա**, 15
- Պարս**, 61  
**Պիզա**, 320, 336  
**Պիրօնյան թերակղզի**, 106  
**Պուղունը**, 232  
**Պուտառին**, 106, 107  
**Զարալ ար-Թարիք**, 106  
**Զարալան**, 333  
**Զազիռան**, 89, 112, 113, 121,  
227, 326  
**Զայինուն**, 339  
**Զիբալ**, 292  
**Զիրուտի**, 47  
**Զուրգան**, 112  
**Զուրջան**, 187, 188, 236,  
281  
**Ուանալլան**, 144, 154, 178,  
223, 323  
**Ուավար**, 110  
**Ուաքա**, 181, 250  
**Ոյե**, 164, 175, 176, 208,  
254, 256, 263, 281, 283,  
292, 312  
**Ուուր ալ-Խայխ**, 10, 11  
**Ուումի սուլթանություն**, 314,  
324, 344  
**Ուուսաթ**, 154, 178  
**Սալամիյա**, 300  
**Սամանիների էսիրություն**,  
281, 283, 366  
**Սամարդան**, 109, 127,  
160, 191, 208, 224, 245,  
254, 256, 281, 282, 316,  
317  
**Սամարրա**, 199, 216, 220,  
287, 288, 379, 380  
**Սամսուան**, 76, 250, 251  
**Սամցին**, 228  
**Սայդա**, 345  
**Սասուն**, 287  
**Սատույան Արարիս**, 9, 42,  
46, 47  
**Սաֆահ**, 333, 337  
**Սաֆիզանց**, 184

- Սաֆֆարիների թմիրություն,** 278, 281  
**Սելցուկյան մեծ սուլթանություն,** 311, 324, 325, 335  
**Սելյյան թագավորություն,** 71  
**Սենեգալ,** 47  
**Սեպտիմիանա,** 107  
**Սին,** 110, 173, 283  
**Սիս,** 347  
**Սիստան,** 121, 191, 278–280, 283, 284  
**Սիր Դարյա,** 108, 109, 199  
**Սիրա,** 121, 158, 159  
**Սիրակուզա,** 252  
**Սիրոս,** 254, 258  
**Սիրիա,** 8, 9, 26, 44, 46, 47, 56, 58, 59, 71, 72, 89, 90, 93, 96, 98, 114, 127, 154, 158, 159, 161, 169, 170, 174, 178, 179, 181, 182, 193, 194, 215, 219–223, 254, 256, 261, 275–277, 300, 306, 313, 315, 322–328, 330–333, 337, 341–344, 348, 349, 359  
**Սիրիական անապատ,** 10, 147  
**Սիցիլիա,** 251, 252  
**Սիժիս,** 56  
**Սյունիք,** 81, 85  
**Սողո,** 108, 109, 159, 160, 187  
**Սոմալի,** 47  
**Սապհիան,** 44, 236, 254, 283, 292, 312, 314  
**Սումատրա,** 257  
**Սունան,** 8, 9, 370  
**Սուս,** 371  
**Սև ծով,** 254, 256  
**Սևիլիա,** 106  
**Վարդի Արարի,** 58  
**Վանա լիճ,** 77, 84, 85, 113  
**Վանանդ,** 115  
**Վասիլ,** 241, 242, 280, 300  
**Վասպուրական,** 80, 81, 114, 115, 231  
**Վարդանակերտ,** 113, 115, 116  
**Վենտոնիկ,** 251, 253, 258, 320, 336  
**Վեստոռերի թագավորություն,** 106  
**Վիրո,** 85, 86, 111, 112, 117, 119, 180  
**Վոլգա,** 119  
**Վրաստան,** 62, 86, 228  
**Տայաս,** 245  
**Տայր,** 114, 115  
**Տանժեր,** 105  
**Տաշքեն,** 109, 159  
**Տարոն,** 77, 229  
**Տարսուս,** 250  
**Տիբերիա,** 333, 337  
**Տիգրիս,** 65, 120, 181, 182, 208, 335, 380  
**Տիգրն,** 60, 181, 182  
**Տյուրոս,** 345  
**Տոլեռո,** 106  
**Տարենոն,** 252  
**Տրափիզոն,** 256  
**Տրիպոլի,** 324–327  
**Տրիպոլիի կոմսություն,** 324, 345  
**Տրիպոլիտանիա,** 62  
**Տուլուզ,** 107  
**Տուր,** 107  
**Տիղիս,** 80, 287  
**Ցեյլոն,** 255, 256  
**Ուբուլլու,** 240  
**Ուկազա,** 26  
**Ունուդ,** 28
- Ուրֆա,** 72  
**Փենջար,** 110, 282  
**Փյունիկիա,** 71, 72  
**Փոքի,** 118  
**Փույթ,** 118  
**Քարուց, 110**  
**Քարիի,** 129, 287  
**Քերելա,** 40, 96  
**Քերման,** 44, 110, 121, 279–281, 292  
**Քեչ,** 187  
**Քրդաստան,** 316  
**Քուվեյթ,** 9, 47  
**Օմայյան խալիֆայություն,** 92, 103, 105, 111, 119, 120, 122, 123, 126, 129, 130, 132, 134, 138, 140, 143, 145–147, 152, 158, 169, 178, 192, 218, 219, 226, 243, 247, 304, 350, 351  
**Օման,** 9, 52, 121, 173  
**Օսմանյան կայսրություն,** 6, 43, 46, 47, 183  
**Ֆարիմյան խալիֆայություն,** 92, 301–311, 315, 324, 356  
**Ֆարամա,** 61  
**Ֆարս,** 196, 208, 279, 280, 292  
**Ֆես,** 254, 272  
**Ֆերգանա,** 108, 109, 159, 216, 274, 276, 281, 366  
**Ֆիլիպակիններ,** 257  
**Ֆրանկոների թագավորություն,** 107  
**Ֆրանսիա,** 6, 107, 253, 256, 258, 320, 333, 336  
**Ֆուստան,** 127, 254, 305

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արարական աղբյուրները Դայաստանի և հարևան երկրների մասին (Յակուտ ալ-Դամավի, Արու-Ղ-Ֆիդա, Իրն Շադդաղ): Կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1985:
2. Արևելագիտական ժողովածու II, Երևան, 1964:
3. Արևելյան աղբյուրագիրություն, հ. I, Երևան, 1988:
4. Թովմայի վարդապետի Արքունու Պատմութիւն տաճն Արքունեաց, ի լոյս Էած Ք. Պատկանեան, Ս. Պետերովոց, 1887:
5. Իրն ալ-Ասիր. Լիակատար պատմություն (Ալ-Քամիլ Ֆի-Ղ-Տարիխ), Թարգմանություն բնագրից, Արաբարան և ծանոքագրություններ Ա. Ա. Տեր-Ղևոնդյան, Երևան, 1981:
6. Իրն-ի Բատուտա, Բաղեց և թարգմանեց Վ. Ամազյան, Երևան, 1940:
7. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Դայոց, Երևան, 1961:
8. Դայաստանի հարակից Երկրների պատմություն (Խեղ. Կոյեկոյիլ), Երևան, 1992:
9. Դայ ժողովոյի պատմություն (Ց Խատորով), հ. II, Երևան, 1984, հ. III, Երևան, 1976:
10. Դովիճաններ կաթողիկոս Դիաքոսանակերպոցի, Դայոց պատմություն: Աշխարհաբար բարգմանությունը և ծանոքագրություններ Գ. Բ. Թուտենյանի, Երևան, 1996:
11. Դովիճաններից առ Ն. Դ. Սարգսյան թ. Ա. Միրիման անկախության համար մոլով պայքարում, Երևան, 1975:
12. Մանանդյան Վ., Զօնական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Ա, Երևան, ՌԴՀՆԴ:
13. Մելիք-Բախչյան Ա. Տ., Դայաստանը 7-9 դարերում, Երևան, 1988:
14. Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ, III, Արարական Երկրներ, Երևան, 1967:
15. Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ, VI, Արարական Երկրներ, Երևան, 1974:
16. Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ, IX, Արարական Երկրներ, Երևան, 1978:
17. Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ, XVI, Երևան, 1996:
18. Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ, XVII, Երևան, 1996:
19. Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ, XVIII, Երևան, 1999:
20. Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ, XIX, Երևան, 2000:
21. Սարգսեան Գ. Ականավոր Դայեր Եգիպտոսի մեջ, Գահիրե, 1947:
22. Պատմություն: Դայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեստում, Երևան, 2001:
23. Պատմութիւն Ղեւնդեայ Սեծի վարդապետի Դայոց, Ս. Պետերովոց, 1887:
24. Մերեսոսի եայսիկոպսի Պատմութիւն ի ծեռն Ստ. Սալխասեանց, Երևան, 1939:
25. Աստվածուսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերովով, 1885:

26. Степ-Цимбетян И. Խ.. Արաքական ամիրայությունները Բագրատունյաց Դաշնություն, Երևան, 1985:
27. Степ-Цимбетян И. Խ.. Ազգանվեղոսի արաքական նոր խմբագրությունը, Երևան, 1968:
28. Степ-Цимбетян И. Խ.. Դաշնություն VI-VIII դարերում, Երևան, 1996:
29. Фոլադյան Շ. Պ. Քրոնիկ Արքայան խալիֆայության ժամանակաշրջանում (X-XI դդ.), Երևան, 1999:
30. Абурейхан Бируні. Избранные произведения. I. Памятники минувших поколений (Пер. и примеч. М. А. Салье). Ташкент, 1957.
31. Амми аль-Холи. Связь между Нилом и Волгой в XIII—XIVвв. М., 1962.
32. Базилянц А. П. Лазаревский институт восточных языков. М., 1959.
33. Бартольд В. В. Работы по истории ислама и Арабского Халифата. Сочинения. Т. 6. М., 1966.
34. Бартольд В. В. История изучения Востока в Европе и России. М., 1925.
35. Балеев Е. А. Арабы, ислам и Арабский халифат в раннем средневековье. М., 1965.
36. Большаков О. Г. История Халифата. Т. 1. Ислам и Аравия (570—633). М., 1989.
37. Большаков О. Г. История Халифата. Т. 2. Эпоха великих завоеваний (633—656). М., 1993.
38. Васильев Л. С. История Востока. Т. 1. М., 2001.
39. Гатауллин М. Ф. Сирия. М., 1956.
40. Гореликов С. Г. Ирак. Экономико-географическая характеристика. М., 1963.
41. Грюнебаум Г. Э. Классический ислам. М., 1986.
42. Данциг Б. М. Ирак в прошлом и настоящем, М., 1960.
43. Джадар Хайят. Иракская деревня. М., 1953.
44. Заходер Б. Н. История Восточного Средневековья (Халифат и Ближний Восток). М., 1944.
45. Иби ал-Факих. Ахбар ал-Булдан. Введение, перевод и комментарий Жамкоччана А. С. Ереван, 1979.
46. Ислам. Краткий справочник. М., 1983.
47. История стран Азии и Африки в средние века. М., 1968.
48. История стран зарубежной Азии в средние века. М., 1970.
49. Коран. Перевод и комментарий И. Ю. Крачковского. Издание второе. М., 1986.
50. Конрад Н. Запад и Восток. М., 1966.
51. Крачковский И. Ю. Избранные сочинения. Т. IV. М.—Л..., 1957.
52. Масц А. Мусульманский Ренессанс. М., 1966.
53. Нассэ А. Ислам. очерки истории. Пер. с французского. М., 1982.
54. Оганесян Н. О. Национально-освободительное движение в Ираке. Ереван, 1976.
55. Оганесян Н. О., Абгарян Е. А., Сараджян П. А., Кондакян Р. П., Еганин Г. М. Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока. Ереван, 1986.
56. Оганесян Н. О. Становление и развитие востоковедения в советской Армении. В кн. Востоковедные центры в СССР (Азербайджан, Армения, Грузия, Украина). М., 1988.
57. Панова В. Ф., Вахтин Ю. Б. Жизнь Мухаммеда. М., 1991.
58. Пиотровский М. Б. Южная Аравия в раннее средневековье: Становление средневекового общества. М., 1985.

59. Саркисян Гагик, Худавордян Константин, Юзбашян Карен. Потомки Хайка. Ереван, 1998.
60. Семенова Л. А. Салах ад-Дин и мамлюки в Египте. М., 1966.
61. Семенова Л. А. Из истории фатимидского Египта. М., 1974.
62. Тер-Гевондян А. Н. Армения и Арабский Халифат. Ереван. 1977.
63. Уоррингер Д. Земельная реформа в странах Ближнего Востока (Египет, Сирия, Ирак). Пер. с англ. М., 1958.
64. Фильшинский И. М. История арабов и Халифата (750–1517 гг.). М., 2001.
65. Шумовский Т. А. У моря арабистики. М., 1975.
66. Abu Salih. Churches and Monasteries of Egypt and Some Neighbouring Countries. Transl. by B. T. A. Everts, Oxford, 1895.
67. Adams D. Iraq's People and Resources. Los Angeles, 1958.
68. Azarya Viktor. The Armenian Quarter of Jerusalem. Urban Life Behind Monastery Walls. London, 1984.
69. Gibb H. A. R. Studies on the Civilization of Islam. London, 1962.
70. Castle W. Syrian Pageant. The History of Syria and Palestine 1000 B. C. to A. D. 1954. London.
71. Coke R. Baghdad: the City of Peace. London, 1927.
72. Edmonds C. Kurds, Turks, Arabs. London, 1957.
73. Fedden R. Syria. A Historical Appreciation. London., 1956.
74. Glitzaume A. The Life of Mohammad: A Translation of Ibn Ishak's "Sirat Rasul Allah". London, 1955.
75. Hitti Ph. History of the Arabs. From the Earliest Times to the Present. London, 1951.
76. Hitti Ph. History of Syria, including Lebanon and Palestine. London, 1951.
77. Hitti Ph. Lebanon in History. London, 1957.
78. Hitti Ph. Syria. A Short History. New York., 1959.
79. Hourani A. Syria and Lebanon. London, 1946.
80. Longrigg S., Stoaks F. Iraq. London, 1958.
81. Majid Khadduri. Independent Iraq. London, 1958.
82. Middle East. From Libya to Iran. London, 2000.
83. Syria. Geography and History. Damascus, 1955.
84. Vincent M. Les Arabes. Paris., 1959.
85. Zladek N. A. Syria and Lebanon. London, 1957.
86. Zladek N. A. Urban Life in Syria under the Early Mamluks. Beirut, 1953.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱՐԱՄ	5
----------	---

Գլուխ առաջին ԱՐՄԵՆԻՑ ՀԱՍԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՆԵՐԻՑ ՄԻՒՉԵԿ ՎԻ ԴԱՐԸ		
I.	ԱՐՄԵՆԻՑ ԲՆՕՐՈՎԱԾ . . . . .	10
1.	Արարական թերակղզին և նրա բնակչինայական պայմանները . . . . .	10
2.	Բուսական աշխարհը . . . . .	11
3.	Կենդանական աշխարհը: Ուղտը . . . . .	13
II.	ԱՐՄԵՆԻՑ . . . . .	14
1.	Ինքնանգանումը և կազմավորումը . . . . .	14
2.	Արարերեն լեզուն և արարական գիրը . . . . .	15
III.	ԱՐՄԵՆԻՑ ՄԻՒՉԻՌԱՎԱԿԱՆ ՄՊԵՐԱԼ-ՏԱՏԵԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆ	18
1.	Տոհմ, ցեղ և ցեղային միուրյուն	18
2.	Կաչկատուն քոչվորներ	19
3.	Նստակյացներ	20
4.	Առևտուրը	22
5.	Կրոնը	23

Գլուխ երկրորդ ՀԱՄԱՉԽՐԱՅԻՆ ՆՈՐ ԿՐՈՆԻ — ԻՆՎԱՄԻ ԱՌԱՋԱԹՈՒԾ		
I.	ՍՈՒՐԱՍՍԱԴ ՄԱՐԳԱՐԵՏԵ . . . . .	25
1.	Սուհամանադի կյանքը և գործունեությունը	25
2.	Սուհամանադի իսլամի հիմնադիր . . . . .	27
II.	ԻՆՎԱՄԻ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՈԳՄԱՆԵՐԸ	29
1.	Իսլամի հինգ գլխավոր հենասյուները	30
III.	ՍՈՒՄՈՒԼՍԱՆՆԵՐԻ ՍՈՒՐԲ ԳԻՐՁԸ-ԿՈՐԱՆԸ	34
1.	Ալ-Կորան ալ-Քարիմ	34
2.	Կորանի կառուցվածքը . . . . .	34
3.	Կորանի կանոնակարգումը	36
IV.	ՍՈՒՆՆԻԶՄ ԵՎ ԾԻՒԶՄ	37
1.	Սուննիզմ	37
2.	Ծիփզմ	39

V. ԸԱՐԻԱԹ ԵՎ ՄԱԶՐԱԲ	40
1. Ծարիաթ	41
2. Մազհաթ	42
3. Դանաֆիական մազհաթ	43
4. Ծաֆիական մազհաթ	44
5. Մալիթիական մազհաթ	44
6. Դանբալիական մազհաթ	45
VI. ԽՈԼԱՄԻՇ ՏԱՐՍԾՈՒՄԸ	46
1. Իսլամի վերածումը համաշխարհային կրոնի	46
2. Իսլամի պետական կազմավորումները	47

### Գլուխ երրորդ

#### ՄՐՎԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՑՈՒԹՅՈՒՆԸ

I. ԱՐԱԲԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՍԹՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ	49
1. Մուհամմադը և արաքական ուժնայի վերաբումը արաքական իսլամական աստվածապետության	49
2. Առաջին չորս քարեպաշտ խալիֆաները	51
II. ԱՐՄԲԱԿԱՆ ՆՎԱճՈՒՄՆԵՐԸ VII ՂԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ	57
1. Բյուզանդիայի պարտությունը և Սիրիայի, Պաղեստինի ու Լիբանանի միացումը խալիֆայությանը	58
2. Սասանյան Պարսկաստանի նվաճումը	60
3. Եգիպտոսը խալիֆայության կազմում	61
4. Արաբների հետագա նվաճումները	61
5. Արաբների հաղթանակների պատճառները	62

### Գլուխ յորրորդ

#### ՄՐԱԲՆԵՐԻ ՆԵՐՆՈՒԺՈՒՄԸ ԴԱՅԱՍՏԱՆ (640-650-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ)

I. ԱՐՄԲԱ-ԴԱՅԱԿԱՆ ՎԱՂԻԶԱԿԱՆ ԸՓՈՒՄՆԵՐԸ	65
1. Ըփման ոլորտները	65
2. Դայէկական և արաքական պատմագրությունը	66
3. Արաքական երկրոները Տիգրան Սեծի հայէկական կայսրության կազմում	70
4. Ուրժայի (Եղեսիայի) հայ-արաքական թագավորությունը	72
II. ԴԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՄԲԱԿԱՆ ՆԵՐՆՈՒԺՈՒՄԸ ՆԱԽՕՐԵՒՆ	73
1. Դայաստանը մասնատված երկիր	73
2. Արևելյան Դայաստանի կարգավիճակը	73
3. Արևմտյան Դայաստանի կարգավիճակը	74
III. ԱՐՄԲՆԵՐԻ ՆԵՐՆՈՒԺՈՒՄԸ ԴԱՅԱՍՏԱՆ	76
1. Արաքական առաջին արշավանքները	76
2. Դվինի պաշարումը և գրավումը	78
3. Թեոդորոս II շտունին Դայաստանի իշխան	79
4. Արաքա-հայէկական 652 թ. պայմանագիրը	81

## Գլուխ հինգերորդ

## ՕՄԱՅՅԱՆ ԽԱՆԻՖՈՒԹՅՈՒՆԸ (661-750 թթ.)

I. ԳՄՐԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱԿԱՆ-ԺԱՌԱՎԱԿԱՆ ՍԿՂԲՈՒՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ	89
1. Մուտավիա   Օմայյան դինաստիայի հիմնադիր	89
2. Երկպատակություն արարական վերնախավում դինաստիական կառավարման հարցի շուրջը	92
3. Խալիֆայի կրոնական և աշխարհիկ կառավարման գործառույթների ճշգրտումը և կրօնկիուացումը	99
II. ԱՐՄԲՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԿՑՈՒՄԸ	102
1. Արևմտյան ուղղությունը	102
2. 732 թ. Պուատիեյի ճակատամարտը	106
3. Արևելյան ուղղությունը: Միջին Ասիայի նվաճումը	108
4. Ներխուժում Աֆղանստան և Ճնդկաստան	110
5. Ջյուսիսային ուղղությունը	111
6. Արմինիա վարչական միավորի ստեղծումը	112
7. Դայերի 703 թ. ապստամբությունը և Վարդանակերտի ճակատամարտը	113
8. Արաբական տիրապետության անրապնդումն Արմինիայում	117
III. ԽԱՆԻՖՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ-ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍՎԱՐՁԸ	120
1. Պետական կառավարման համակարգը և ապարատը	120
2. Արաբերեն լեզվի պետական կարգավիճակը	123
3. Ազգային արաբական դրամի ստեղծումը	125
4. Արաբական ազգային գինված ուժերը	126
5. Ազրարային հարաբերությունները	130
6. Օմայյան արքունիքը	134
IV. ՄՏՍՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԿՅԱՍՔԸ	140
1. Արաբերեն լեզվի խնդիրը	140
2. Գրականությունը	141
3. Յոթուրությունը	143
4. ճարտարապետությունը	144
5. Այլ արվեստներ	145
6. Կրթությունը	146
7. Գիտությունը	148

## Գլուխ վեցերորդ

## ՕՄԱՅՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԱԼԿՈՒՄԸ (750 թ.)

I. ԽԱՆԻՖՈՒԹՅԱՆ ՀԱՍՎԱՐՁՎԱՅԻՆ ԾԱՆՍՃԱՍՏԸ	152
1. Դակասությունների հանգույցը	153
	405

2. Դակաօնայյական ապստամբությունները և ելույթները . . . . .	158
3. Արու Մուսլիմի ապստամբությունը և Օմայյան դինաստիայի տապալումը	162
 <b>Գլուխ յոթերորդ</b>	
<b>ԱՓբասթև ԽԱԼԻՖԱՑՈՒԹՅՈՒՆ (750–1258 թթ.)</b>	
I. ԱԲԲԱՍՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԴԱՍՏԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՂՈՒՄԸ . . . . .	166
1. Արու ալ-Աբբասը նոր դինաստիայի հիմնադիր և Աբբասյան առաջին խալիֆա (750–754 թթ.) . . . . .	166
2. Խալիֆաների միջոցառումները Աբբասյան դինաստիայի ամրապնդման ուղղությամբ . . . . .	168
3. Խալիֆա Արու Զաֆար ալ-Մանսուր (754–775 թթ.) . . . . .	173
4. Դար աս-Սալամի՝ Բաղրամի հիմնադրումը 762 թ.	178
II. ՊԵՏՍԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԱՍՏԱՑՈՒՄԸ . . . . .	185
1. Աբբասյան դինաստիայի դիբերի հետագա ամրապնդումը	185
2. Փոփոխություններ և նորամուծություններ խալիֆայության հայեցակարգում և պրակտիկայում . . . . .	192
III. ՊԵՏՍԿԱՆ-ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԱՍՏԱՑՈՒՄԸ: ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ	200
1. Խալիֆա	200
2. Կազիր . . .	203
3. Դիվան	206
4. Զինուժ	212

 <b>Գլուխ ութերորդ</b>	
<b>ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԴԿՑՈՒՄՆԵՐԻ ԱՓբասթև ԽԱԼԻՖԱՑՈՒԹՅՈՒՆ (VIII–IX ՀԱՐՅԵՐ)</b>	
I. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐՄԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ	217
1. Դակաօրբասյան ելույթների բնույթը և պատճառները	217
2. Դակաօրբասյան շարժումները Սիրիայում, Լիանանում,	
Եգիպտոսում և Պաղեստինում . . . . .	219
II. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՅԱՄԱՍԱՍՈՒՄ ԵՎ 774–775 թթ. ՄՈԱՏԱՄՐՈՒԹՅՈՒՆ . . . . .	225
1. Դակաօրբասյան դժգոհությունները և նրանց պատճառները	225
2. 774–775 թթ. հայերի մեծ ապստամբությունը . . . . .	235
III. ԲԱԲԵԿԻ ԵՎ ՍՏՐՈՒԿ-ԶԱՍՁԻՆԵՐԻ ՊԴԱՏԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	235
1. Բաբեկի ապստամբությունը (816–837 թթ.) . . . . .	235
2. Ստրուկ-Զանգիների ապստամբությունը (869–883 թթ.)	238

**Գլուխ իններորդ  
ԱՐՔԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅԻԹՅԱՆ ՄՐՏՎԵԼԻ ԶԱՂԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
(VIII-IX դարեր)**

I.	ԱՐՔԱՍՅԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՋՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՍ ԴԻՄՈՒՄԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	243
1.	Արտաքին քաղաքականության նոր ռազմավարությունը	243
2.	Արաբա-չինական ռազմական բախումները	245
3.	Արքայան խալիֆայության և Ֆարանիների կայսրության փոխհարաբերությունները	246
4.	Արաբա-քյուզանդական հարաբերությունները	248
5.	Կրծերի և Սիցիլիայի գրավումը: Ներխուժում Խոալիա	251
6.	Արքայան խալիֆայության արտաքին առևտրական կապերը	253

**Գլուխ տասներորդ**

**ԱՐՔԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅԻԹՅԱՆ ՏՐՈՂՈՒՄԸ (IX-X ԴԱՐԵՐ)**

I.	ԽԱԼԻՖԱՅԻԹՅԱՆ ՏՐՈՂՈՒՄԸ ՆՊԱՍՏՈՂ ԱԶԴԱԿՆԵՐԸ	260
1.	Հարուն առ-Ռաշիդի ճակատագրական սխալը	260
2.	Կենորինախուս ուժերի դիրքերի ամրապնդումը: Բաղաքական, երիկական և կրոնական հակասությունների պրոմք խալիֆայությունում	264
II.	ԱՐՔԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅԻԹՅԱՆ ՏՐՈՂՈՒՄԸ	271
1.	Իղրիսների շիական էմիրությունը Մաղրիբում (Մարոկկոյում)	271
2.	Աղլարիների էմիրությունն Իֆրիկիյայում	272
3.	Թուլունիների պետության հիմնումը Եգիպտոսում (868-905 թթ.)	274
4.	Թահիրիների պետությունը Խորասանում	277
5.	Սաֆֆարիների պետությունը	278
6.	Սամանիները	281
7.	Կարախանները և Ղազնիները	283
III.	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԾԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐՍԿԱՆՎԱԾՈՒՄԸ	284
1.	Անկախության նվաճման արտաքին և ներքին նախապայմանները	284
2.	Իշխանաց իշխանից մինչև թագավոր: Հայաստանն անկախ պետություն	288

**Գլուխ տասնմեկերորդ**

**ԱՐՔԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅԻԹՅԱՆ ՄԱՅՐԱՍՈՒՏԸ**

(X դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ - 1258 թ.)

I.	ԽԱԼԻՖԱՅԻԹՅՈՒՆԸ ԲՈՒԻՆԵՐԻ ՏԻՐՄՈՒՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԾՈ (945-1055 թթ.)	291
1.	Բուիները	291
2.	Բաղրամի գրավումը և խալիֆայության անցումը Բուիների տիրապետության ներքո	293
II.	ՖԱԹԻՄԱՅԱՆՆԵՐԻ ԽԱԼԻՖԱՅԻԹՅՈՒՆԸ (909-1171 թթ.)	296
1.	Իսմահլական աղանդի առաջացումը	296
2.	Կարմաքանները և Բահրեյնի կարմաքական խալիֆայությունը	299

3. Ֆարիմյան խալիֆայության հաստատումը	301
4. Ֆարիմյան խալիֆայության հայ կառավարիչները՝ Բաղր ալ-Գամալի և Աֆդալ	307
5. Ֆարիմյան խալիֆայության կործանումը	311
<b>III. ՄԵԼԶՈՒԿՆԵՐԸ ԵՎ ՍՈՂՈՎԼՆԵՐԸ</b>	312
1. Աքբարյան խալիֆայությունը տեղապահության ներոց	312
2. Մոնղոլները և Աքբարյան խալիֆայության կործանումը	316

#### **Գլուխ տասներկուերրորդ**

#### **ԽԱՅԱԿԻՐՄԱՆԵՐԸ, ԱՅՅՈՒՔԻՆԵՐԸ ԵՎ ՄԱՍԼՈՒԹՆԵՐԸ**

I. ԽԱՅԱԿԻՐՄԱՆ ԱՐԾԱԿԱՆԱԲԵՐԸ ԵՎ ԱՊԵԽԱՏՈՒՄ ԱՐԱՐԱԿԱ-ԽԱՍԱՍԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՏ	320
1. Խաչակիրների հայտնվելն Առաջավոր Սսիհայում	320
2. Եղեսչիայի կոմսության, Անտիօքի իշխանապետության և Երուսաղեմի թագավորության հիմնումը	322
3. Արարա-խալամական պետական կազմավորումների դիրքորոշումը խաչակիրների նկատմար	324
<b>II. ԱՅՅՈՒՔԻՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԱՏՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ՍԻՐԻԱՅՈՒՄ (1169-1252 թթ.)</b>	328
1. Դայաստանից արտագաղթած քուրդ Այյուքիները: Սալահ ադ-Դին ալ-Այյուքի	328
2. Սալահ ադ-Դին ալ-Այյուքին Եգիպտոսի և Սիրիայի տիրակալ	330
3. Սալահ ադ-Դինը և խաչակիրները	333
4. Այյուքիների սոցիալ-տնտեսական քաղաքականությունը	334
5. Այյուքիների տապալումը	337
<b>III. ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ՍԻՐԻԱՆ ՄԱՍԼՈՒԹՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՁՈ (1250-1517 թթ.)</b>	339
1. Մամլուքները	339
2. Մամլուքյան Բահրիների կառավարումը (1250-1382 թթ.)	341
3. Բահրի մամլուքները և Կիլիկյան Դայաստանը	344
4. Բուրջիների մամլուքյան դինաստիան և մամլուքների տիրապետության վերջը	347

#### **Գլուխ տասներեքերրորդ**

#### **ԱՐԱԲԱ-ՄՈՒՄՈՒ-ԼԱՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅԸ**

I. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ԻՐՈՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	350
1. Արաբա-մուսուլմանական մշակույթ հասկացողությունը	350
2. Սուսուլմանական վերածնունդ (թենեսան), թե՞ մշակույթի ծաղկում	353
<b>II. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ՄՏՏԿՈՐ ԿՅԱՍՆԸ</b>	356
1. Կրթություն և կիրք մարդ	356
2. Գիտություն և գիտնական	362

<b>III. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍ</b>	<b>374</b>
1. Գրականություն. պոեզիա և արձակ	374
2. Արվեստ	379
<b>ԱՂՋՈՒՄԱԿՆԵՐ</b>	<b>382</b>
1. Մուհամմադ մարգարեի տոհմածառը	382
2. Ասաղին ցորս քարեպաշտ (ուղակատ) խալիֆաները (632–661 թթ.)	382
3. Օմայյան խալիֆաները (661–750 թթ.)	382
4. Աբբասյան խալիֆաները (750–1258 թթ.)	383
5. Տասներկու ալիական–շիական իմամները (661–878 թթ.)	384
6. VII–IX դարերի հայ պատրիկ–իշխանները (639–885 թթ.)	384
7. Ֆարիմյան խալիֆաները (909–1171 թթ.)	385
8. Այյուբյան սուլթանները (1169–1252 թթ.)	385
9. Աբբասյան խալիֆաները, որոնց հաստատվեցին Կահիրենում Աբբասյան խալիֆայության կործանումից հետո (1261–1517 թթ.)	386
10. Մամլուք սուլթանները (1250–1517 թթ.)	386
Ա. Բահրի մամլուք սուլթանները (1250–1382 թթ.)	386
Բ. Բուրջի մամլուք սուլթանները (1382–1517 թթ.)	387
<b>ԱՆՁԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ</b>	<b>389</b>
<b>ԶԱՐՑԵՑՆԵՐ</b>	
1. Դի՛ն Արարիան	12-13
2. Արարական նվաճումները	58-59
3. Օմայյան խալիֆայությունը	104-105
4. Աբբասյան խալիֆայությունը	182-183
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>400</b>

## **CONTENTS**

<b>FOREWORD</b>	<b>5</b>	
<b>CHAPTER I</b>		
<b>THE ARABS FROM ANCIENT TIMES TO VII CENTURY</b>		
I.	<b>THE ARABS' CRADLE</b>	<b>10</b>
1.	The Arabic Peninsula and its Natural and Climate Conditions .	10
2.	Vegetation	11
3.	Fauna. The Camel	13
II.	<b>THE ARABS</b>	<b>14</b>
1.	Self–Name and Formation	14
2.	The Arabic Language and Arabic Writing .....	15
III.	<b>PRE-ISLAMIC SOCIO-ECONOMIC SYSTEM</b>	<b>18</b>
1.	Clan, Tribe and Tribal Union	18
2.	Bedouin–Nomads	19
3.	Settleds	20
4.	Commerce	22
5.	Religion	23
<b>CHAPTER II</b>		
<b>THE ORIGIN OF A NEW WORLD RELIGION – ISLAM</b>		
I.	<b>THE PROPHET MUHAMMAD</b>	<b>25</b>
1.	The Muhammad's Life and Activity	25
2.	Muhammad–Founder of Islam	27
II.	<b>ISLAM AND ITS BASIC DOGMAS</b>	<b>29</b>
1.	Five Main Pillars of Islam .....	30
III.	<b>HOLY BOOK OF MUSLIMS – KORAN</b>	<b>34</b>
1.	Al-Koran al-Qarim	34
2.	The Koran Structure	34
3.	Canonization of Koran	36
IV.	<b>SUNNISM AND SHIISM</b>	<b>37</b>
1.	Sunnism	37
2.	Shiism	39
V	<b>SHARIAH AND MAZHAB</b>	<b>40</b>

1. Shariah	41
2. Mazhab . . . . .	42
3. Hanafite Mazhab	43
4. Malikite Mazhab	44
5. Shafite Mazhab .	44
6. Hanbalite Mazhab	45
<b>VI. THE EXPANSION OF ISLAM . . . . .</b>	<b>46</b>
1. The Turning of Islam into a World Religion	46
2. The Islamic State Entities	47

### CHAPTER III THE ARAB CALIPHATE

<b>I. ESTABLISHMENT OF A CENTRALIZED ARABIC STATE ..</b>	<b>49</b>
1. Muhammad and Turning of Arabic Umma into an Arabic Islamic Theocratic State . . . . .	49
2. The First Four Orthodox Caliphs	51
<b>II. THE ARABIC CONQUESTS IN 30s OF VII CENTURY</b>	<b>57</b>
1. Defeat of Byzantine Empire and joining of Syria, Palestine and Lebanon to the Caliphate	58
2. Conquest of the Sasanide Persia	60
3. Egypt – a Part of Caliphate	61
4. The Further Conquests of Arabs	61
5. Reasons of the Arab Victories	62

### CHAPTER IV INVASION OF ARABS IN ARMENIA (640–650s)

<b>I. THE EARLY ARAB-ARMENIAN CONTACTS</b>	<b>65</b>
1. The Contacting Spheres . . . . .	65
2. Armenian and Arab Historiography . . . . .	66
3. Arab Countries within the Armenian Empire of the Tigran the Great	70
4. Armenian-Arab Kingdom of Ruha (Edessa)	72
<b>II. ARMENIA ON THE EVE OF ARAB INVASION</b>	<b>73</b>
1. Armenia a Divided Country	73
2. Status of Eastern Armenia	73
3. Status of Western Armenia . . . . .	74
<b>III. INVASION OF ARABS IN ARMENIA</b>	<b>76</b>
1. The First Arab Invasions . . . . .	76
2. The Siege of Dvin and its Occupation . . . . .	78
3. Theodoros Rishtuni-prince (Governor) of Armenia	79
4. The Arab-Armenian Treaty of 652	81
5. Armenians in Jerusalem	87

**CHAPTER V**  
**THE UMAYYAD CALIPHATE**  
**(661-750)**

I.	ESTABLISHMENT OF DYNASTIC-HEREDITARY PRINCIPLE	89
1.	Muawiyah I Founder of Umayyad Dynasty . . . . .	89
2.	Intellective within the Arabic Governing Elite on the Dynastic Question	92
3.	Correction and Concretizing of Caliphs' Religious and Lay Functions	99
II.	RESTARTING OF THE ARABIC CONQUESTS	102
1.	Western Direction	102
2.	Poitiers Battle of 732 . . . . .	106
3.	Eastern Direction. Conquest of Central Asia . . . . .	108
4.	Invasion in Afghanistan and India	110
5.	Northern Direction . . . . .	111
6.	Formation of the Administrative Unit of Armenia	112
7.	Armenian Rebellion in 703 and the Battle of Vardanakert	113
8.	Strengthening of the Arab Domination in Armenia. . . . .	117
III.	THE STATE-GOVERNING AND ECONOMIC SYSTEM OF CALIPHATE	120
1.	The State Governing System and Machinery	120
2.	The State Status of the Arab Language	123
3.	Creation of the Arab National Currency	125
4.	Arab Military Forces	126
5.	Agrarian Relations	130
6.	The Umayyad Court . . . . .	134
IV.	INTELLECTUAL-CULTURAL LIFE	140
1.	The Task of the Arab Language	140
2.	Literature	141
3.	Rhetoric	143
4.	Architecture . . .	144
5.	Other Arts	145
6.	Education	146
7.	Science	148

**CHAPTER VI**  
**THE FALL OF THE UMAYYAD CALIPHATE**  
**(750)**

I.	THE COMPLETE CRISIS OF CALIPHATE	152
1.	Knot of Contradictions	152
2.	Anti-Umayyad Rebellions . . . . .	158
3.	Abu Muslim's Rebellion and Downfall of the Umayyad Dynasty	162

**CHAPTER VII**  
**THE ABBASID CALIPHATE**  
**(750–1258)**

I.	ESTABLISHMENT AND STRENGTHENING OF THE ABBASID DYNASTY	166
1.	Abu al Abbas the Founder of New Dynasty and the First Abbasid Caliph (750–754) . . . . .	166
2.	The Measurements of the Caliphs in Favour of Strengthening of the Abbasid Caliphate . . . . .	168
3.	Caliph Abu Jafar al-Mansur (754–775) . . . . .	173
4.	Foundation of Dar as-Salam–Baghdad, 762	178
II.	STATE-GOVERNMENTAL SYSTEM . . . . .	185
1.	Further Strengthening of the Abbasid Dynasty	185
2.	Changes and Innovations in the Theory and Practice of Caliphate	192
III.	STATE-GOVERNMENTAL SYSTEM: INNOVATIONS AND CHANGES	200
1.	Caliph	200
2.	Vizir	203
3.	Divan	206
4.	Army	212

**CHAPTER VIII**  
**PEOPLES' UPRISINGS IN THE ABBASID CALIPHATE**  
**(VIII–IX centuries)**

I.	POLITICAL, SOCIAL AND LIBERATION MOVEMENTS	217
1.	The Character and Reasons of Anti–Abbasid Movements	217
2.	Anti–Abbasid Movements in Syria, Lebanon, Egypt and Palestine	219
II.	SITUATION IN ARMENIA AND THE UPRISING OF 774–775	225
1.	Dissatisfaction with the Abbasids and its Causes	225
2.	Uprising in 774–775	228
III.	REBELLIONS OF BABIK (Babak) AND ZAND SLAVES	235
1.	Rebellion of Babik (816–837) . . . . .	235
2.	Zanj Slaves Rebellion (869–883)	238

**CHAPTER IX**  
**FOREIGN POLICY OF THE ABBASID CALIPHATE**  
**(VIII–IN centuries)**

I.	MAIN DIRECTIONS OF FOREIGN POLICY OF THE ABBASID CALIPHATE	243
1.	New Strategy of Foreign Policy	243
2.	The Arab–Chinese Military Clashes	245
3.	Relations Between the Abbasid Caliphate and the Empire of Franks	246
4.	Arab–Byzantine Relations	248
5.	Conquest of Crete and Sicily. Invasion in Italy	251
6.	Foreign Trade Relations of the Abbasid Caliphate	253

**CHAPTER X**  
**THE BREAK DOWN OF THE ABBASID CALIPHATE**  
**(IX–X centuries)**

I.	FACTORS FACILITATING THE DISMEMBERSHIP	260
1.	The Fatal Mistake by Harun ar-Rashid . . . . .	260
2.	Strengthening of Centrifugal Forces. Aggravation of Political, Ethnic and Religious Contradictions in Caliphate . . . . .	264
II.	THE BREAK DOWN OF THE ABBASID CALIPHATE	271
1.	The Idrisid Shiit Kingdom in Al-Maghrib (Morocco) . . . . .	271
2.	The Aghlabid Amirate in Ifriqiyah . . . . .	273
3.	The Tulunids State in Egypt (868–905) . . . . .	274
4.	The Tahirids State in Khurasan . . . . .	277
5.	The Saffarids State . . . . .	278
6.	The Samanids . . . . .	281
7.	The Karakhans and Ghaznavids . . . . .	283
III.	RESTORATION OF INDEPENDENCE OF ARMENIA	284
1.	External and Internal Conditions of Gaining Independence . . . . .	284
2.	From Patric al-Patriciya to King. Armenia an Independent State. . . . .	288

**CHAPTER XI**  
**DECLINE OF THE ABBASID CALIPHATE**  
**(Second half of X century–1258)**

I.	THE CALIPHATE UNDER THE DOMINATION OF BUWAYHIDS (945–1055)	291
1.	The Buwayhids . . . . .	291
2.	Conquer of Baghdad and Establishment of the Buwayhids' Domination over Caliphate . . . . .	293
II.	THE FATIMIDS CALIPHATE (909–1171)	296
1.	Origin of the Ismailite Sect . . . . .	296
2.	Qarmatians and the Qarmatin Caliphate in Bahrain . . . . .	299
3.	Establishment of the Fatimid Caliphate . . . . .	301
4.	The Armenian Governors of the Fatimid Caliphate—Badr al-Gamali and Afdal . . . . .	307
5.	The Fall of the Fatimid Caliphate . . . . .	311
III.	THE SALJUQS AND MONGOLS . . . . .	312
1.	The Abbasid Caliphate under the Saljuq Domination . . . . .	312
2.	The Mongols and Collaps of the Abbasid Caliphate . . . . .	316

**CHAPTER XII**  
**THE CRUSADES, AYYUBIDS AND MAMLUKS**

I.	THE CAMPAIGN OF CRUSADES AND CONFRONTATION WITH THE ARAB-ISLAMIC STATES . . . . .	320
1.	Appearance of Crusades in the Middle East . . . . .	320

2. Establishment of the County of Edessa, Principality of Antioch, Kingdom of Jerusalem and County of Tripoly	322
3. Attitude of the Arab-Islamic State Entities Towards the Crusades	324
<b>II. ESTABLISHMENT OF THE AYYUBIDS' DOMINATION OVER EGYPT AND SYRIA (1169–1252)</b>	328
1. The Kurd Ayyubids – Emigrants from Armenia. Salah ad-Din al-Ayyub	328
2. Salah ad-Din al-Ayyub – Ruler of Egypt and Syria	330
3. Salah ad-Din and the Crusades	333
4. Socio-economic Policy of Ayyubids	334
5. Fall of Ayyubids	337
<b>III. EGYPT AND SYRIA UNDER THE DOMINATION OF MAMLUKS (1250–1517)</b>	339
1. The Mamluks	339
2. The Bahri Mamluks in Power (1250–1382)	341
3. The Bahri Mamluks and the Cilician Armenia	344
4. Dynasty of Burji Mamluks and the End of the Mamluk Domination	347

### CHAPTER XIII ARAB-ISLAMIC CULTURE

<b>I. NEW CULTURAL REALITIES</b>	350
1. The Idea of Arab-Islamic Culture	350
2. Islamic Renaissance or Blossoming Forth of Culture?	353
<b>II. THE CULTURAL-INTELLECTUAL LIFE</b>	356
1. Education and Educated Man	356
2. Science and Scientist	362
<b>III. LITERATURE AND ART</b>	374
1. Literature: Poetry and Prose	374
2. Art	379

### TABLES

1. Genealogical Table of Prophet Muhammad	382
2. The First Four Orthodox Caliphs (632–661) . . . . .	382
3. Umayyad Caliphs (661–750)	382
4. Abbasid Caliphs (750–1258) . . . . .	383
5. Twelve Alid-Shia Imams (661–878) . . . . .	384
6. Armenian Patriarchs-Princes of VII–IX centuries (639–885)	384
7. Fatimid Caliphs (909–1171)	385
8. Ayyubid Sultans (1169–1252) . . . . .	385
9. Abbasid Caliphs in Cairo after the Fall of Abbasid Caliphate (1261–1517)	386
10. Mamluk Sultans (1250–1517) . . . . .	386
A. The Bahri Mamluk Sultans (1250–1382)	386
B. The Burji Mamluk Sultans (1382–1517)	387

## MAPS

1. Ancient Arabia	12-13
2. The Arabian Conquests	58-59
3. Umayyad Caliphate	104-105
4. Abbasid Caliphate	182-183

## LITERATURE . .

**Սիկոլայ Շովհաննիսյան  
ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
<աղյութ 1. Արաբական 7-րդ դարից մինչև 1516 թ.**

**Nikolay Hovhannisyan  
HISTORY OF THE ARAB COUNTRIES**

*Volume I: From VII century to 1516*

(In Armenian)

"Zangak-97" Press, Yerevan, Armenia, 2003

**Николай Оганесян  
ИСТОРИЯ АРАБСКИХ СТРАН  
Том I: Арабы с VII века до 1516 г.**

[на армянском языке]

Изд. "Зангак-97", Ереван, 2003 г.

Հրատարակութ. տնօրեն՝	Ս. Վ.	Ս Ե ա շ ց ա կ ա ն յ ա ն
Գեղ. խմբագիր՝	Ս. Ա.	Բ ա ղ դ ա ս ս ա ր յ ա ն
Դամակարաց՝ Ընկույտումը՝	Գ. Ա.	Յ ա ր ո ւ ր յ ո ւ ն յ ա ն յ ի
Ներլիդի նկարների մշակումը՝	Ս. Գ.	Ս ի ր ա յ ե լ յ ա ն յ ի
Թարտօնների պատրաստումը՝	Գ. Ա.	Բ ե զ ւ ա ր յ ա ն յ ի
Հասպիկի համակարգ՝ մշակումը՝	Ա. Տ.	Յ ա կ ո ր յ ա ն յ ի

Ցուցույթը կազմված է Հայաստանի Հանրապետության պատրաստությամբ:  
Օպերատոր՝ Հայաստանի Հանրապետության պատրաստությամբ:  
Տարբերակը կազմված է Հայաստանի Հանրապետության պատրաստությամբ:



ԶԱՆԳԱԿ-97 ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ

375012, Երևան, Կոմիտասի պող. 48/2, Խն.՝ (+3741) 23-26-48, 23-25-28,  
Ֆաքտ. (+3741) 54-06-07, Էլ. փոստ՝ zangak@arminco.com, URL: www.zangak.am